



“ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ”  
Հայ Մշակութային Ընկերակցություն

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր Ք Ի Ի 7



ԱԼ. ԽԱՏԻՍԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԾԱԳՈՒՄՆ  
ՈՒ  
ՉԱՐԳԱՅՈՒՄԸ

Ո. ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ

1968

ՏԳԱՐԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

## Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն

Մեր նորագոյն պատմութեան ամէնէն հետաքրքրական եւ լուսաւոր մէկ շրջանի հետ կապուած այս գիրքին վերհրատարակութիւնը գովելի աշխատանք է. պատմագրութենէ աւելի յուշագրութիւն մըն է այս հատորը. գրուած մարդու մը կողմէ որ դարձաւ ամէնէն տիրական դէմքերէն մէկը մեր վերջին շրջանի պատմութեան, թերեւ ամէնէն իրապաշտը մեր քաղաքական ղեկավարութեան շարքերուն մէջ. Չարական Ռուսաստանի վարչամեթենային մէջ մարզուած պետական մարդ, ան իր այս հատորով փաստը կու տայ քաղաքական լրջութեան, իրապաշտութեան եւ անկեղծութեան: Ահա թէ ինչու իր յուշագրութիւնը, որպէս հում նիւք ապագայ պատմաբանին համար, կը գրաւէ կարեւոր տեղ:

Այս հատորին կցուած է նաեւ, յաւելուածի ձեւին տակ Լօզանի խորհրդածողովի րնթացքին Այ. հատիսեանի կազմէ գրի առնուած խիստ շահեկան օրագիր – գեկուցումները. վերջուած Վահան Փափագեանի «Իմ Յուշեր»ու երրորդ հատորէն:

Հայաստանի Հանրապետութիւնը անուանեցինք մեր նորագոյն պատմութեան ամէնէն հետաքրքրական եւ լուսաւոր շրջանը, գիտնալով հանդերձ որ այդ եղաւ սովի, համահարակի, սահմանափէներու, ներքին կռիւներու եւ պատերազմներու շրջան: Հայ ժողովուրդը, իր երկար քմբիրէն ետք, կ'ունենար պետականութիւն: Ազգութեան եւ պետականութեան գաղափարին այս վերահաստատումը անկիւնադարձը պէտք է նկատել մեր արդի պատմութեան: Պետականութեան իրականացումը Սարգարսպատեան անեղ ճակատամարտերու ճամբով եւ անոր յաջորդող ազգային գիտակցութեան ամրապնդումը հայ ժողովուրդին մէջ կարեւոր եւ վնասկան դէպք է մեր պատմութեան մէջ. եւ, ո՛վ գիտէ, թերեւս ապագայ պատմաբանը, երբ վերջնական հաշուեկշիռը ներկայացնէ մեր քսաներորդ դարու պատմութեան, հակասակ մեր եղեռնի անզնուատելի վնասներուն. վերջին հաշուով շահ մը ապահովուած տեսնէ հայ ժողովուրդին համար՝ հայ պետականութեան կերտումովը:

Այսօրուան մեր հանրապետութիւնն ալ, եւ անոր կարգ մը լուսաւոր երեսները, իրենց ջուրը կը խմեն Անկախ Հանրապետութեան ակունքէն:

Անկախ Հանրապետութիւնը ըսինք, նախ նանչցուած *ու ֆուրքիօ* Դաշնակիցներուն կողմէ եւ այսա իրաւական նամաչում գտած Սեւրի դաշնագրով: Եւ եթէ անկախութիւնը շեշտեցինք, զգացական կամ անտեղի ու ծայրայեղ ազգայնականութեան մը արտայայտութիւնը չէ: Գերիշխան պետութեան գաղափարը իր յստակ սահմանումը ստացաւ Պատէնով եւ որդեգրուեցաւ Եւրոպայի կողմէ արդէն իսկ տասնեօթներորդ դարուն: Միջազգային իրաւունքը որ ուրիշ բան չէր քան Եւրոպական պետութիւններու սովորոյթին արդիւնք եղող օրէնքներուն սահմանումը եւ որդեգրումը, կարեւոր տեղ տուաւ քաղաքական անկախութեան եւ զայն վերածեց ազգի մը միակ հիմնական յատկանիշին՝ տեղ գրաւելու համար միջազգային քնտանիքէն ներս: Այսօր գիտեմք որ միջազգային օրէնքի աչքին իրաւական անձ (personne juridique) ըլլալու, այսինքն այդ օրէնքին հիման վրայ իրաւունքներ և պարտաւորութիւններ ունենալու համար, քաղաքական անկախութիւնը անհրաժեշտ է: Այս սլայմաններու մէջ մասնաւոր, երբ վերջին քան տարիներու անկախ պետութիւններուն քիւր աշխարհի երեսին աւելի քան կրկնապատուեցաւ, եւ երբ շատերը այդ անկախացած ազգերէն ետ կը մնան հայ ժողովուրդի բաղաձայնութեան մակարդակէն, կարելի չէ պահանջել հայ ժողովուրդէն, որ ան մէկդի ջնջէ անկախութեան գաղափարը: Եւ երէ միջազգային կարգուսարքը այդպէս կարեւոր տեղ տուած է անկախութեան եւ ժողովուրդները այդքան պայքար մղած են անոր, ինչպէս և համար, պատճառը այն է, որ ազգերուն համար իրենց նակատագիրը իրենց ձեռքով վարելու անհրաժեշտութիւնը բնազդային պահանջ է: Ինչպէս անհատին համար, նոյնպէս եւ ազգերուն համար, ինքզինք ազատօրէն արտայայտելու պահանջը պատմական եւ ընկերային անհրաժեշտութիւն է: Անհատը — գերագոյն արժէք իմաստասիրական սրբել ըմբռնումով — իր անձնական արտայայտութեան կողքին ունի ուրիշ dimension մը, որ կ'արտայայտուի իր հաւաքականութեան մը մասնակցութեամբ: Եւ անհատի հաւաքական արտայայտութիւնն է ազգը:

Կեանքի դժբախտ պայմանները սակայն վերջ տուին մեր նւարատեղծ անկախ հանրապետութեան կեանքին, երկուեւուկէս տարի ետք: Թրքահայաստանի ամայացումը, Ռուսաստանի վերադարձը կովկաս եւ Եւրոպայի ու Ամերիկայի անտարբերութիւնը անխուսափելի կը դարձնէին մեր անկախութեան կորուստը: Ու երբ յետագարձ ակնարկ մը կը նետենք մեր պատմութեան վրայ, կարելի է քերեւս ըսել, որ նախատեսելով մեր նակատագրի անխուսափելի հոլովոյթը, աւելի կանուխէն պէտք էր համաձայնիլ մեր հիւսիսի դրաքիին հետ եւ այսպէսով խուսափիլ 1920 Սեպտեմբեր—Դեկտեմբերի հայ—թրքական պատերազմէն եւ Ռուսահայաստանի կարեւոր մէկ մասի կորուստէն: Կամ ըսել, որ պէտք էր մեկնիլ բաղաձայնի իրապաշտութենէ, նանչնալ Քեմալական ոյժը եւ լեզու գտնել անոր հետ

շատ աւելի համեստ սահմաններու շուրջ, քան հետագային Ռիլսըն-եան սահմանները: Այս բոլորը դիւրին է ըսել այսօր: Բայց քաղաքական դեկլարէի կարելի՞ է սպասել որ ան նախատեսէ անհաւանականը, անարամաբանականը, անիրականը: Պէտք է փոխադրուիլ 1918-20ի ժամանակաշրջանին մէջ և տեսնել թէ ի՞նչ էին քաղաքական հասկանալիները: Ռուսաստան դատերազմէն դուրս եկած էր որպէս պարտուած պետութիւն եւ կլանուած էր իր ներքին ճաղաքային կոլուններով: Օսմանեան կայսրութիւնը ջախջախուած էր Դաշնակիցներու ուժին ներքեւ եւ 1920ի առաջին կիսուն Պոլիսը գրաւուած էր Դաշնակիցներու կողմէ, Իգմիրէն Աֆիոն Դարահիսար Յոյներու կողմէ. Ատայիան Խաղաղցիներէն եւ կիլիկիան Յրանսացիներէն: Հայաստանը, «փոքր դաշնակիցը» այնքա՞ն արիւն քափած էր Դաշնակիցներու համար եւ ստացած այնքա՞ն խոստումներ: Արդար էր Հայական Դատար եւ քաղաքական իրար կողմէ մարդկութեան համար խղճի պարտք: Բարեկամներ ունէինք ամէն տեղ, ընկերվարական կուսակցութիւններու պարագլուխներէն մինչեւ պետական ղեմաբեր, որոնք յայտարարութիւններ ըրած էին ի նպաստ մեզի: Դաշնակիցները, պատեարձակ ատեն թէ անկէ ետք, յստակ կերպով ըսած էին, թէ Հայաստանի ազատագրումը իրենց հիմնական նպատակներէն մէկն էր: Եւ սնու պարտուած էր Թուրքիան եւ յաղթական ու ամենագոր Դաշնակիցներուն համար իրենց կամքը Թուրքիոյ պարտադրելի դժուար չէր: Դաշնակիցներու յայտարարութիւնները ձեւ ստացան Սան-Ռեմոյի մէջ եւ վերջապէս ստորագրուեցաւ Սեյրի դաշնակցի 10 Օգոստոս 1920ին: Այդ օրերու ակնոցով՝ սխալ չէր մեր նակատագիրը Դաշնակիցներուն կապել:

Բայց ղեպքերը այլ ընթացք ստացան: Պարտուած Թուրքիան ստիկ կանգնեցա՞ւ՝ օգտուելով Դաշնակիցներու հակամարտութիւններէն եւ կարմիր Ռուսաստանի օժանդակութեամբ, մէջտեղէն վերցուց «հայկական սեպը» Դաշնակիցներու աչքին առջեւ, գործակցութեամբ Ռուսաստանի, զոր աւելի կը հետաքրքրէր Միջազգային Յեղափոխութիւնը, քան հայութեան փրկութիւնը: Եւ վերջ տրուեցաւ Անկախ Հանրապետութեան, մնացած հոգամասի խորիւրդայնացումով:

Երկու հիմնական պատճառներ կային ղեպքերու այս ընթացքին համար: Նախ՝ Մուտրոսի 30 Հոկտեմբեր 1918ի զինադադարը անգլիացի ծովակալին եւ Օսմանեան կայսրութեան միջեւ ազիտայի եղաւ հայ ժողովուրդին համար: Թրքական ուժերու զինաքափման եւ հայկական նահանգներու գրաւման շուրջ ոչ մէկ արամադրութիւն կար այդ զինադադարի պայմաններուն մէջ: Յետոյ՝ Թուրքիոյ հետ խաղաղութեան դաշնագրի կնքման անտեղի ուղացումը առիթ պիտի ընծայէր, որ Թուրքիան օգտուէր Դաշնակիցներու միջեւ անող տարակարծութիւններէն եւ համակարտութիւններէն: Որքան ժամանակ կ'անցնէր, այնքան դաշնակից երկիրներէն ներս կը շեշտուէր պատերազմէն եկող յաղմածութիւնը, ներքին տնտեսական եւ ընկերային տագնապները: «Հայերու բարեկամ» Ռիլսընն ալ քիչ դէր չունեցաւ խաղաղութեան դաշնագրի ձգձգման մէջ իր հայկական մասնաշի

կապակցութեամբ արթնցուցած յայտնով: Այսպէս՝ մինչ 1918ին կամ 1919ին Դաշնակիցները կրնային որեւէ պայման պարտադրել Թուրքիոյ, 1923ին, Լօզանի մէջ, այդ կարելի չէր այլեւս: Յետոյ, պէտք է ընդունիլ նաեւ որ հիմնական շահեր չունէին Դաշնակիցները Հայաստանի մէջ եւ հայկական մանտայի մերժումն ալ Ամերիկեան Քանկրէսի կողմէ՝ Հարպըրտի տեղեկագրի մատնանշած այս իրողութենէն թելադրուած էր արդէն:

Լօզանի դաշնագիրը խօսք չունի Հայկական Հարցի մասին: Վերջին Միջազգային աճառք, որ ձեւակերպեց Հայկական Հարցի լուծումը, Սեւրի Դաշնագիրը եղաւ: Ճիշդ է որ այս դաշնագիրը չվաւերացուեցաւ ստորագրող պետութիւններու կողմէ եւ ուրեմն իրական մշտ չունի: Բայց միջազգային հաւաքականութեան կողմէ ստորագրուած վերջին ճանաչումն է մեր Դատին եւ անոր արդար լուծման վերջին ձեւաորումը: Անկէ ետք ստորագրուած Ալեքսանդրապոլի Դաշնագիրը — 2 Դեկտեմբեր 1920 — եւ Կարսի Դաշնագիրը — 13 Հոկտեմբեր 1921 — Հայաստանի Հանրապետութեան վրայ պարտադրուած դաշնագրեր են Թուրքիոյ կողմէ:

Լօզանը լուծում չբերաւ Հայկական Հարցին, այլ բազում գայն անլոյծ հարցերու կարգին: Ուրեմն Հայկական Հարցի անկիւնէն դիտած, Լօզանը չփոխարինեց Սեւրը եւ այս վերջինը կը մնայ միջազգային համաձայնութեան արժանացած Հայկական Հարցի լուծման միակ բանաձեւը:

Անկէ ասդին շատ քուր անցաւ կառուրջին տակէն: Անկախ Ազատական Հանրապետութիւնը մայս միացաւ Անդրկովկասեան Դաշնակցութեան եւ այդ ճամբով մաս կազմեց Սովետական Միութեան, ապա ուղղակիօրէն մասնակցեցաւ Սովետական Միութեան սրբալինեան (1930ի) սահմանադրութեամբ:

Այսօր՝ Հայաստանի Սովետական Հանրապետութիւնը իրականացած անձ չէ եւ չի կրնար անդամակցիլ միջազգային կազմակերպութիւններու, դիւանագիտական ներկայացուցիչներ չի պահեր օտար երկիրներու մէջ, չի կրնար դաշնագրեր ստորագրել իր անունով, չի կրնար ներկայանալ Լա Հէյի Միջազգային Ատեանին, եւայլն: Ուրիշ խօսքով, միջազգային օրէնքի սահմանումով, պետութիւն չէ եւ չի կրնար ունենալ այդ օրէնքով ո՛չ իրաւունքներ եւ ո՛չ ալ պարտաւորութիւններ: Սովետական Հայաստանի իրական անձը մաս կը կազմէ Սովետական իրաւական անձին եւ կրնայ արտայայտուիլ միջազգային երապարակի վրայ միայն այս վերջինի համբով:

Այս դրութիւնը անշուշտ մեծապէս կը դժուարացնէ Հայաստանի հանրապետութեան կողմէ Հայ Դատի հետապնդման գործը:

Ճիշդ սառ իմաստ սփիւտահայութիւնը պէտք ունի կազմակերպուելու՝ լուսապէս հետապնդելու իմաստը Հայ Դատը: Այն փորձերը, որ եղան Սան-Ֆրանսիսկոյէն ասդին տարտամ ճիգեր են այս աւղաւթեամբ: Եղեռնի Յիսնամեակը եկաւ քիչ մը եւս շեշտելու այս պահանջը մեր մէջ: Եւ եղան օգտակար արտայայտութիւններ ամէն կողմ, մեր Դատի ծանօթացման գծով: Բայց կ'արժէ որ այս աշխատանքը ասկէ ետք տարուէր աւելի կազմակերպուած եւ հետեւ-

դական ձեռով, միացեալ ճիգերով: Այս ձեռի աշխատանքն Գրեթե կան լայն միջոցներու կր կարօտի եւ պետականօրէն կազմակերպուած մե-  
քննանքնու յատուկ է առհասարակ: Համահայկական գործ է այս իր  
տարողութեամբ: Բայց դժբախտաբար կարելի չեղաւ միացնել ճի-  
գերը մինչեւ այսօր:

Սփիւռֆահայտութեան մէջ անհաւանածայնութիւնները կը ծագին  
գլխաւորաբար Հայ Գատի լուծման բանաձեւին շուրջ: Բայց քիչ մը  
իրապաշտութեամբ սլտի տեսնենք, որ աւելորդ է վիճիլ գործնական  
լուծման տարազին շուրջ, երբ շատ հեռու են տակաւին լուծման կա-  
րելիութիւնները: Սփիւռֆահայտութեան գլխաւոր աշխատանքը պէտք  
է ըլլայ ծանօթացնել մեր հարցը քէ՛ օտարներուն. քէ՛ ժողովուր-  
դին, այսինքն մատնանշել այն մեծ սնարդարութիւնը, որ կատար-  
ուեցաւ մեր ժողովուրդին հանդէպ, իր բոլոր երեսներով. — իրաւա-  
կան, ընկերային, մշակութային. — եւ արդարութիւն պահանջել:  
Ի՞նչ այդ արդարութիւնը ի՞նչ գործնական արտայայտութիւն պէտք է  
ունենայ, ատիկա ապագայի գործ է եւ այդ մասին կը մտածուի իր  
տոնին: Մինչ այդ սակայն հոկայական աշխատանք կայ տանելիք:  
Կ'արժէ. օրինակ, վերհարատարակել Լեւոն Եղեռնի շուրջ գրուած ամ-  
բողջ օտար գրականութիւնը, որ կա՛մ ապառաժ է եւ կա՛մ գաղափար  
միջոցներով հաւաքուած եւ փնտրուած: Կ'արժէ նոր ուսումնասիրու-  
թիւններ հրատարակել. մեր հարցի պատմական եւ իրաւական երես-  
ները ներկայացնող: Պէտք է խաւսափիլ անցեալի սխալներէն, այ-  
սինքն գուք հայցել՝ հայ ժողովուրդի ստատականները նկարագրե-  
լով: Գուրը ինքնաբերաբար գերակայութեան եւ ստորակայութեան  
յարաբերութիւն մը կը ստեղծէ ստացողին եւ ստուղին միջեւ. ինչ  
որ օգտակար չէ: Պէտք է ընդունիլ որ դժբախտաբար մեր միջազգա-  
յին ընկերութիւնը ղեկավարուած է ոյժով եւ փոխադարձ շահերով:  
Չկան յաւիտեական բարեկամներ եւ յաւիտեական բշխամիներ, այլ  
կան շահեր: Այդ շահերը կը հետապնդուին ոյժով: Տիգրիական ոյժի  
չգոյութեան պարագային անոր ամէնէն աւելի մօտեցող ազգակները  
կը դառնան իրաւական ոյժը եւ միջազգային հանրային կարծիքը:  
Այս երկու ուղղութեամբ ալ շատ բան կայ ընելիք:

Ըսինքն նաեւ որ պէտք է ծանօթացնել մեր Գատի բոլոր երես-  
ները մեր ժողովուրդին, արտփեսեւ պայման է որ նախ պահանջա-  
տէրը ինք համոզուած ըլլայ իր դատի արդարութեան եւ անոր լուծ-  
ման կարելիութիւններուն:

Այս բոլոր աշխատանքներու ընթացքին կարեւոր է իրապաշտ  
եւ մանազիտացած գործը, առանց երազատեսութեան եւ ժողովրդ-  
դական աւելորդ խանդավառութիւններու: Քաղաքական իմաստուն  
ղեկավարութիւնը ճազաքական կարելիութիւններ կը հետապնդէ  
միայն:

Տակաւին կայ Սփիւռֆահայտութեան կազմակերպման հարցը:  
Ինչ ալ ըլլան հայրենիքի պայմանները, Սփիւռքը այլեւս կոչուած է  
մնալու եւ, երէ կ'ուղէ դիմաւալ, պէտք է կազմակերպուի: Այս  
կազմակերպման աշխատանքին մէջ հիմնական է արդիականացնել եւ  
նոր օրերու պայմաններուն պատշանցնել շատ մը կարծրացած երե-



ւոյրները մեր կեանքէն հերք: Նկատուած է պատմութեան րնրաց-  
փին, որ ժողովուրդները իրենց վերջալոյսին է որ կը կառչին ձեռն,  
եքք բովանդակութիւնը կորսուած է արդէն: Ատեն է որ Սփիւտքը ու-  
նենայ իր հարագատ արտաշայտութիւնը եւ չվարանի պէտք եղած  
պարագային փոխելու ձեռք՝ անոր տալու համար նոր բովանդակու-  
թիւն: Ապրող ժողովուրդի մը հիմնական յատկանիշն է այս: Դեռ  
կայ նաեւ սփիւտահայութիւնը տնտեսապէս կազմակերպելու տշխա-  
տանքը: Մեր բազմազան ղեկավարութիւնը առհասարակ գտրկ է  
եղած տնտեսական մտածողութենէ:

Այս աշխատանքները յաջող կերպով գլուխ հանելու համար  
կարեւոր է հոգեկան միութիւնը, ոչ միայն սփիւտահայութեան մէջ,  
այլեւ սփիւտահայութեան եւ Հայաստանի միջեւ: Ազգը կազմող ան-  
հատներուն գլխաւոր յատկանիշը այն է որ զիրենց հետաքրքրող հիմ-  
նական հարցերու շուրջ նայն ձեռով կը մտածեն:

Այս հոգեկան միութեան համար հիմնական է նախ մեր վեր-  
ջին հարիւր տարուան պատմութիւնը, այսինքն մեր անմիջական անց-  
եալը տալ գիտականօրէն եւ քննականօրէն: Գազափարսկան տարբե-  
ութիւնները դժբախտաբար գումարեցին պատմական մեկնաբան-  
ութիւնները, տեղ-տեղ նշանակ խեղաքիւրեցին պատմական ղէպ-  
քերը: Անցեալի նշգրիտ նախաշումովն է որ միայն կրնանք ծրագրել  
ապագան՝ ազգովին եւ իմաստութեամբ:

Այս ուղղութեամբ, պէտք է ընդունիլ որ միջիարական նշան-  
ներ կան: Սկիզբը կարծէք Հայաստանի Անկախ Գաշնակցական Հան-  
րապետութիւնը եւ Սովետական Հայաստանը երկու տարբեր աշ-  
խարհներ էին, բաժնուած իրարմէ, առանց փոխադարձ նախաշումի:  
Վիճակ մը՝ որ իր դժբախտ անդրադարձը ունեցաւ նաեւ մեր սփիւտ-  
ահայութեան կեանքին վրայ: Բայց մշուշը կը փարատի տակաւ,  
ղէմքերը եւ դէպքերը կը պայծառանան, պատմութիւնը կու գայ իր  
արդար խօսքը ըսելու Սարդարապատներու եւ այլ դէպքերու կապակ-  
ցութեամբ: Պէտք է կարողանանք այլեւս նշգրիտ պատմութիւնը տալ  
այդ շրջանին, յիսուն տարի ետք: Պատմութեան մեկնաբանութիւնը  
արդար իրաւունքն է պատմաբանին: Բայց պատմութեան դէպքերն ու  
ղէմքերը պէտք է տրուին առանց խեղաքիւրումի: Պէտք է ընդուն-  
ուին պատմական իրողութիւնները:

Կը յուսանք որ այս գործի վերհրատարակութեամբ Համագա-  
լին Մշակութային Ընկերակցութիւնը իր նպատակը բերած կ'ըլլայ  
նշմարիտ պատմագրութեան վերահաստատման գործին, կամ առնը-  
ւազն հիւր- հայրաշայթած՝ այդ տշխատանքին համար:

ՇԱԽԱՐՇ ԹՈՐԻԿԵԱՆ

Պէյրուսի, 20-11-68

## Ա Լ Ե Վ Ս Ա Ն Գ Բ Խ Ա Տ Ի Ս Ե Ա Ն

Ալեքսանդր Խաախեսանը միայն ռուսական յեղափոխութիւնից յետոյ, 1917ին, մտաւ Դաշնակցութեան շարքերը, բայց դրանից առաջ էլ զադափարնեթով ու համակրանքներով Դաշնակցութեան հետ էր: Դեռ 1905ին նա ուզում էր անդամագրուել Դաշնակցութեան, բայց Ռոստոմի, Հաֆօ Օհանջանեանի եւ ուրիշ ընկերների խորհրդով մնաց դուրսը. որպէս անկուսակցական, համագգային շէտք կարող էր աւելի ծառայութիւն մատուցանել հայ ժողովրդին եւ Դաշնակցութեան: Եւ իբ կեանքով աւ գործով նա արդարացրեց այդ կարծիքը:

Ալեքսանդրը Թիֆլիսի Խաախեսան համբուստուր բնտանիքի գաւառէկ էր: Նրա հայրը պետական բարձր պաշտօնեայ էր՝ յարգուած հեղինակաւոր Հայ եւ օտար շքեաններում: Մայրը կրթուած, հասարակական ջիղի տէր Հայուհի էր: Սիրում էր հայ մշակոյթը եւ Մաքիսեան ծածկանունով վէպեր ունի հրատարակած: Մեծ եղբայրը՝ Կոստանախը Դաշնակցութեան հիմնադիրներից էր: Այսպիսի բնտանիքում ծնուեց Ալեքսանդրը 1874 թ. փետրուար 17ին: Իր մանկութիւնն ու սլատանեկութիւնը անցաւ կիրք, հայաստիական միջավայրում: Աւարտելով Թիֆլիսի պետական Գիմնազիան՝ նա բժշկական կրթութիւն ստացաւ Մոսկուայի — 3 տարի — եւ հարկովի — 2 տարի — համալսարաններում. ապա մասնագիտութիւնը զարգացրեց Գերմանիայում եւ վերադառնալով Թիֆլիս՝ նա իրանց բժշկութեան:

Բժշկական ասպարէզը, սակայն, նեղ էր Խաախեսանի կարողութեան ու խառնուածքի տէր մի անհատի համար. նա բնածին եւ-

սարակական գործիչ էր՝ բարձր բռնիչներով եւ բազմաթիւները վարելու ձգտումներով: Պերճախօս հոետոր, բազմազան հետաքրքրութիւններ ու ծրագրեր հետապնդող, արտասովոր կերպով աշխատանակ, ցոյց ու ժողովրդականութիւն սիրող, ազատասիրտ եւ լայն իմաստով պատեհապաշտ, կենդանի գործը վերացական տեսութիւններից զերազատող, հասարակական բոլոր խաւերի լեզուն հասկացող, համրութեան ծառայելու պատրաստակամ, դիւրահաղորդ եւ ամէնփն մտաչելի, ազնիւ ու նկարագրի տէր՝ հասարակական ստեղծուած էր հասարակական-հաղտական գործունէութեան համար: Եւ զարմանալի չէ, որ հա շուտով լքեց այնպէս փայլուն կերպով սկսուած բժշկական ասպարէզը եւ ամբողջապէս նուիրուեց հասարակական գործունէութեան:

1902ին հատիսեսներ ընտրուեց Թիֆլիսի Քաղաքային հորհրդի անդամ: 1906ին հա արդէն Թիֆլիսի քաղաքային օգնական էր: 1909ից մինչեւ 1917՝ Թիֆլիսի քաղաքացուխ: 1914 17ին՝ Կովկասեան 44 քաղաքների միութեան նախագահ: Ազդեցիկ եւ յարգուած դէմք հասեւ պետական շրջանակներում, մանաւանդ, փոխարքայ Վրոնցսկի-Գաշկուի օրով: Քաղաքային գարծերին գուրերաց՝ հա կենդանի կերպով մասնակցում էր եւ համակովկասեան կեանքի զանազան ասպարէզներում: Սիրուած ժողովրդական դասախօս էր: Յօդուածներ էր գրում քերքերում: Հրատարակեց զանազան զբոյններ հանրային առողջապահութեան, տեղական ինքնավարութեան, տրտեսական ու մշակութային հարցերի մասին: Թարգմանութիւններ էր անում հայ գրականութիւնից:

Ինչհամ համակովկասեան ու համառուսական, նոյնիսն եւ հայ կեանքում հատիսեսներ լայն ու գործօն դեր էր կատարում: Հայ-քաքարական կոիւնների շրջանում, օրինակ, ամէն միջոցով օգնեց Դաշնակցութեան՝ ինքնուպաշտպանութիւնը յաջողութեամբ տանելու եւ վեռական դեր կատարեց կոիւններին վերջ տալու գործում: Երբ ցարական կառավարութիւնը հայաժամակ սկսեց Դաշնակցութեան դէմ, հատիսեսներ ոգի ի բռին աշխատեց բերեւացնելու ձերբակալուածների վիճակը: Առհասարակ, անիրատուածների պաշտպան էր հա կառավարութեան մօտ: Իր խորհուրդներով եւ միջամտութիւններով օգնում էր Էջմիածնին՝ կառավարութեան հետ ունեցած դժուարութիւնների ժամանակ: Անդամ էր եւ փոխ-նախագահ Ազգային Բիւրոյի եւ կամաւորական գումղերի կազմութեան նախաձեռնողներից

մէկը: Իբրեւ քաղաքների միության մասնակցի՝ անգամահատելի եղաւ նրա դերը պատերազմից աղէտուած հայ զաղչակազմների խնամատարութեան գործում:

Յարական վարչաձեւի խորտակումից յետոյ, հատիսեանի հասարակական կեանքը տարբեր ընթացք ստացաւ: Ինքնուրույն անցաւ Վրացիների ձեռքը: Անդրկովկասը փաստօրէն անջատուեց Ռուսաստանից: Եւ հաստիսեանը ամբողջ էութեամբ նետուեց հայ ազգային գործունէութեան մէջ: Այլեւս իրագործելի էր նրա վաղեմի փափաքը՝ մտնել Դաշնակցութեան շարքերը: 1917-18ին նա Ալեքսանդրապոլի քաղաքացիական է: 1917 թ. աշնանը մասնակցում է Ազգային Համագումարին: Անդրկովկասի անջատումից յետոյ՝ Սէյմի անդամ է եւ ելեւնական մարտար Դաշնակցութեան կողմից: 1918 թ. Փետրուարին՝ Տրապիզոնի, եւ Մայիսին Բարուսի հաշտարար պատուիրակութիւնների անդամ: Հայաստանի անկախութիւնից յետոյ՝ Գաջազմունիի հետ ստորագրեց հաշտութեան դաշնագիրը Թուրքերի հետ: Ապա՝ Ահարոնեանի հետ Հայաստանի հանրապետութեան կողմից մեկնեց Պոլիս՝ նոր դաշինք կնքելու համար:

Ընդհանուր զինադադարից յետոյ, հատիսեանը վերադարձաւ Հայաստան եւ ստանձնեց արտաքին գործաց մարտարութեան պաշտօնը: 1919 Փետրուար — 1920 Մայիս՝ վարեց Հայաստանի վարչապետութիւնը: 1920 թ. ամառը կառավարութեան կողմից ուղարկուեց արտասահման փոխտուրքեան ու «Ռսկու Տոնտ»ի կազմակերպութեան համար: Այցելեց Պոլիս, Եգիպտոս, Ֆրանսա, Անգլիա, Բելգիա, Յունաստան, Ռումանիա, Բուլղարիա, Իւգոսլաւիա՝ ամէն տեղ հայութեան մէջ ունեւն խանդավառութիւն տուաք բերելով: Եւ վերադառնալով Երեւան՝ պատերազմի օրերին, նրան վիճակուեց Ալեքսանդրապոլի դաշնագրի ստորագրութիւնը: 1920 թ. Դեկտեմբեր 2ին:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, հատիսեանը անցաւ Փարիզ եւ շարունակեց քաղաքական գործունէութիւնը, որպէս Հ. Հ. Պատուիրակութեան անդամ, ապա փոխ-նախագահ եւ վերջը՝ նախագահ՝ ներկայացնելով եւ պաշտպանելով հայկական շահերը պետութիւնների եւ Ազգերի Դաշնակցութեան առջեւ: Տարագրութեան տարիներին աշխատակցեց հայ մամուլին եւ լոյս բնծայեց «Հայաստանի Հանրապետութեան Մարտն ու Զարգացումը» արժէքաւոր հատորը:

Անհետը է սեղմ յօղուածի մէջ ամփոփել հատիսեանի բազմա-  
նիւղ սւ բեղուն գործունէութիւնը: Նա մինչեւ մահ մնաց իր կոչման  
բարձրութեան վրայ եւ անշահախնդիր նուիրումով ծառայեց հայ  
ազգին: Ծանր ու տառապալից ապրումներ ունեցաւ վերջին սրտե-  
րագիւր տարիներուն, երբ ստիպուած էր սլաշտպանել վտանգի են-  
քարկուած երստակայութիւնը: Եւ հատուցումը եղաւ դաժան. այն  
մարդիկ, որոնց կեանքը նա վարկել էր բռնութեան նիրաններէց, տր-  
մարդօրէն բանտարկութեան եւ չարչարանքների մատնեցին նրան:  
Արդարութիւնը շուտով յազրանակեց, բայց բանտային տառապանք-  
ները վերջնականապէս խորտակեցին նրա արդէն իսկ տկարացած ա-  
ռողջութիւնը: Խատիսեանը մեռաւ 1945 թ., Մարտ 10ին, Փարի-  
զում՝ անջնջելի յիշատակ թողնելով Հայաստանի Հանրապետութեան  
պատմութեան մէջ:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

«ՅՈՒՇԱԳԱՏՈՒՄ Հ. Թ. ԴԱՆՆԱԿՑՈՒԹԵԱՆ»

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն Ի Տ Ե Վ,

Իմ գլուածքը, որ առաջին անգամ սպուեցաւ «Հայրենիք» ամսագրի մէջ, պատմութիւն չէ սնշուշտ, այլ՝ պատմական նիւթ, յուշերու ձեւով: Եւ հասկնալի է որ իմ գրութեան մէջ տեղ գտած են գերազանցապէս այն դէպքերն ու դէմքերը, որոնց հետ շփման մէջ եմ եղած ես, ինչպէս նաեւ յայտնուած են կարծիքներ, որոնց միակ պատասխանատուն ես եմ անհատաբար: Տարօրինակ չպէտք է թուայ նոյնպէս եւ այն, որ իրերու բերումով կամ պատահաբար, այս կամ այն փաստերն ու փաստարարքերը չեն արձանագրուած: Իմ դերը եղած է գրի առնել իմ իբրեւ ֆազիֆական գործիչի մը, յուշերը, յիշատակելով միտամամակ յարակից դէպքերը: Աւելին — գործն է պատմաբանի:

ԱԼ . ԽԱՏԻՍԵԱՆ

ՌՌԻՍԱՍՏԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱԻՈՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

1917 թ. Փետրուար 28ին տեղի ունեցաւ Ռուսաստանի Մեծ Յեղափոխութիւնը եւ քիչ յետոյ Թիֆլիս եկան ռուս ժամանակաւոր կառավարութեան կողմէ նշանակուած «Անդրկովկասեան Յատուկ կոմիտէի» — կամ ինչպէս կ'անուանէին զայն այն ատեն, «Օղակոմի» — անդամները: Այդ կոմիտէին ցոյց տրուեցաւ խանդավառ բնորոշներովին: Անոր նախագահն էր ռուս քառեղական կուսակցութեան անդամ Պարլամովը՝ ծայրամով կոչուի մը: Անկէ բացի, կոմիտէն բազկացած էր 3 անդամներէ, որոնցմէ մէկը Հայ էր՝ Մ. Պապաճանեանը, Վրացի Զինեկելին եւ Թաթար ճաֆարովը:

Այս կազմն իսկ արդէն ցոյց կու տար ազգային հարցի զոյուրթիւնն ու կարեւորութիւնը կովկասի մէջ: Ինքը, կեդրոնական իշխանութիւնը հաշուի էր առած տեղական ազգութեանց շահերը եւ ջանացած էր շտափով մը զոհացում տայ անոնց: Միւս կողմէ իրենք, ժողովուրդներն այ սողային արթնացման եւ ինքնազործունէութեան նշաններ ցոյց կու տային: Կը դումարուէին ազգային համագումարներ եւ կ'ընտրուէին ազգային մարմիններ՝ ազգային զործերը վարելու համար:

1917 թ. Հոկտեմբեր ամսու մէջ զուժարուեցաւ նաեւ Հայոց Աղզային Խորհրդաժողովը, որ ընտրեց Հայոց Աղզային Կեդրոնական Խորհուրդը: Զուգրնթացարար տեղի կ'ունենային քաղաքային վարչութեանց ընտրութիւնները, որոնց ատեն բացայայտօրէն հրապարակ կու գային աղզային համախմբումներն ու հակամարտութիւնները: Այսպէսով աղզային յորձանքը, որ յեղափոխութիւնէն առաջ դետնի տակ կը հոսէր, աննկատելի՝ շատերուն համար յանկարծ, հրապարակ եկաւ իր ամբողջ ուժգնութեամբ: Աղզային զգացումներու և սինկլարութիւններու զարգացման, մասնաւորապէս Հայերու մէջ, նպաստած էին ուսական դէնքի և մեր կոմաւորական խումբերու յաղթանակները, որոնք Հայերու կարծիքով կը մօտեցնէին աղզային բազմաթիւներու իրագործման ժամը: Գրաւուած էր արդէն Քրիստոսայտանի խոշորագոյն մասը, և Թուրքիա ամէն կողմէ անգամահատումի կ'ենթարկուէր զաշնակից զօրքերու նուաճումներու հետեւանքով:

Աղզային Խորհուրդը զրաւեց Աղզային Բիւրոյի տեղը, որ կազմակերպած էր հայ կամաւորական շարժումը և մինչ այդ գլխավարած էր հայ քաղաքական կեանքը պատերազմի ատեն: Աղզային Խորհուրդի առաջին զօրքը եղաւ կազմակերպիչ հայկական զօրաբանակ մը՝ զնելով զայն Զօր. Նաղարէկեանի հրամանատարութեան տակ:

Այս ժամանակները Ռուսիոյ մէջ արդէն շատ ուժեղ թափով առաջ կը տարուէր պոլշեիկեան շարժումը: Դեռ Յուլիա ամսուն պոլշեիկները դիմում փորձ մը բրին իշխանութիւնը իրենց ձեռքն ստնելու, որ սակայն անյաջող անցաւ: Յետոյ ծայր տուաւ Զօր. Քորնիլովի հակայեղափոխական շարժումը: Բանակին մէջ եւս ուժեղ պոլշեիկեան խմորում կար: Օր աւուր ասելի բնդհանուր կը դառնար նշանաբանը՝ «Հաշտութիւն առանց հոգային նուաճումներու և պատերազմական տուգանքի»: Այս նշանաբանը կտորեց զանդուածներու ռազմական թափը, այ ինչո՞ւ համար կտուիլ, արիւն թափել, եթէ ո՛չ մէկ նուաճում և հատուցում պիտի չըլլայ:

Հայերը սկսան անհանդուստնալ, վախնալով որ Ռուսիա կրնայ յբէլ թրքահայաստանի դրաւուած շրջանները, մանաւանդ որ այդ հակառազմական նշանաբանը մտած էր արդէն նաեւ կովկասեան բանակին մէջ: Պոլշեիկեան քարոզչութիւնն ու զրգուումը տեղի կ'ունենային աղատօրէն ամէն տեղ, խաղաղով զանդուածներու ամենագոհելի բնազդներուն և զգացումներուն հետ: Պոլշեիկ զօրծակայները կ'ընէին հասարակ ժողովուրդին. «Ահա այս մեծ ու գեղեցիկ



տան մէջ կ'ապրին երկու հոգի միայն, իսկ դուք պրոլետարներդ տասր մարդ ունիք հազիւ մէկ փոքրիկ սենեակ. չէ՞ որ ասիկա անարդար է. պրոլետարներ պիտի ոչնչացնէ այս գրութիւնը»:

Այս խօսքերը կ'ազդէին ամբողջ մտայնութեան վրայ: Բանակի մէջ ալ նևտուած էր նշանաբանը «զկպի տուն», որը հարկաւ չէր կրնար չբարտյայտել զինուորական շարքերը: Եւ ահա՛ զինուորները սկսան խամբերով լքել իրենց դիրքերը եւ փախչիլ տուն:

Պրոլետիկ գրգոռչները զիշտացնելուն կը նևտէին նոյնպէս հրապարչիչ նշանաբան մը՝ «ամբողջ հոգը ժողովուրդին»:

Այսպէս էր, որ քանդուեցաւ ուսուսական բանակը եւ կոմկուսի մէջ. զինուորները, սրանց մեծ մասը պարզ զիշտացնելուն, կը շտապէին օր առաջ տուն հասնիլ հազի բաժանումէն զրկուած չմտաբու համար:

Հայոց Արդային Խորհուրդը զիմեց վարչապետ Կերենսկիին, ինդերկով թոյլ տալ արևմտեան ճակատի բոլոր հայ զինուորներուն վերադառնալ Կովկաս եւ կազմել յատուկ հայկական զորաբանակ մը, պաշտպանելու համար կովկասեան ճակատը: Կերենսկիին կը դանդաղէր, այսուհանդերձ հայկական զորաբանակը կը հաւաքուէր Թիֆլիսի մէջ:

Այդ ատենները եւ հետագիւր մը ստացայ ուսուսական բանակի բնդհ. հրամանատարութեանն՝ անմիջապէս մեկնելու Մոկրիեով, ուր կը դռնուէր բնդհանուր սպայակոյտը: Կը հրաւիրուէի խորհրդակցելու համար Կովկասեան Քաղաքներու միութեան մասին. պատրաստութիւններ կը տեսնուէին բնդհանուր համագումարի մը համար Մոսկուայի եւ Փեթերսպուրկի մէջ: Հոկտեմբերի սկիզբը մեկնեցայ Ալեքսանդրապոլին եւ զացի Մոսկուա: Համագումարը արդէն սկսած էր: Հին գործիչներու փոխարէն, զորս եւ կը ճանչնայի 1916 թ., տևայ յոյրրօրին նոր մարդիկ, որոնք լնտրուած էին ընտրական նոր սկզբունքներով: Իշխող էր Մոցալիստ-Յեղափոխականներու կուսակցութիւնը: Անոնք ճշող մեծամասնութիւն կը կազմէին: Կային քանի մը պրոլետիկներ միայն, որոնց զուխը կանդուած էր Յարիցին քաղաքի նոր քաղաքայլուի յայտնի պրոլետիկ Միներ: Այսուհանդերձ պրոլետիկները շատ յանդուղն եւ զրգոխչ ընթացք մը ունէին, այն աստիճան՝ որ բոլորին ծիծաղը կը շարժէին:

Պէտք է բաել, որ այդ ատենները ամէն տեղ կարելի էր տեսնել պրոլետիկներ, որոնք թէեւ շատ ստիպաթիւ էին, բայց կը գործէին խիստ եռանդուն կերպով եւ մանաւանդ մոլեռանդ հաւատ մը ունէին զկպի իրենց յաղթանակը: Եւ կը յիշեմ, երբ աստոծայիլով

Թիֆլիսէն կը մեկնէի Վրաստիկուհայ Մոսկուա երթալու համար, ինձ հետ կ'երթար Տօքթ. Օրախելաշվիլի, պոլշեիկ մը, որ այժմ Վրաստանի խորհրդային կառավարութեան նախագահն է: Ան կը հաւատար մոլդեօրէն, որ ամիս մը շանցած իշխանութիւնը իրենց ձեռքը պիտի անցնի: Ինձ մօտ կը ծառայէր ուրիշ յայտնի պոլշեիկ մը, Նաղարէթեան, զարմանալիօրէն ինքնոյտուտ մարդ մը, որ նոյնպէս տարակոյս չունէր իրենց յաղթանակի մասին: Բայց ամէնէն աւելի յիշողութեանս մէջ գրոշմուտն է Ստեփան Շահումեանի պատկերը, որ Լենինի ամենասիրելի ընկերներէն էր մոլեռանդ հաւատացեալ առաքեալ մը պոլշեիկեան զաղափարներուն: 1905 թ. կը ճանչնայի զինքը և զանոսոսն ատիթներով մասնակցած էի անոր հետ միջնորդ դատարաններու: Շահումեանը սպաննուեցաւ 1918 թ. Թուրքիստանի մէջ: Կը ճանչնայի նաև շարք մը ուրիշ մոլեռանդ պոլշեիկներ, ինչպէս, օրինակ, տիրաճոչակ Ախարովկոյի, որ կը ծառայէր Քաղաքներու Միութեան մէջ: Ասոնց շարքին մէջ կը յիշեմ նաև Ֆիլիփ Մախարաձէն, նշանաւոր պոլշեիկ, որ յետոյ զարծաւ փրացական խորհրդային կառավարութեան նախուստ: Այդ պարունը 1917 թ. զարնան քարտուղարն էր յեղափոխական գործադիր կոմիտէի, որուն նախագահն էի ևս: Մախարաձէն ուրիշ պատիժ չէր ճանչնար, բացի կախաղանէն:

Բայց զառնանք համալուծարին:

Համալուծարը այս անգամ շատ անդոյն էր: Ճառեր կ'արտասանուէին առանց ողևորութեան: Ժամակաւոր Կառավարութիւնը տկար էր և կը խօսէր անվերջ: Ճառերը կարծես միակ վէճքն էին կառավարութեան:

Մոսկուայէն զացի գերադոյն հրամանատարի կայանը: Այն ատենուայ վերադոյն հրամանատար Զօրափար Դուխոնինը մեզ հրաւիրեց խորհրդակցութեան: Շատ բան, սակայն, կայսնին մէջ տարօրինակ թուեցաւ ինձ. արդէն չկար զինուորական կարգապահութիւն. ընդհ. հրամանատարը կը խօսէր շատ անորոշ և անխտան շէտոյ մը: Երեք օր փերջ կը սպասէին հոն Կերենսկիի զայտան, բայց ան չեկաւ: Մենք պատրաստեցինք ծրագիր մը Քաղաքներու Միութեան Հետադոյն գործունէութեան համար: Ես կ'ապրէի Մոկիլեովի մէջ Հիւրանոց մը, իսկ իմ սենեակիս կողքին տեղաւորուած էր Կերենսկիի դահլիճի արդարադատութեան նախկին նախարար Պ. Պետկերկուր, Քաղաքներու Միութեան գործիչ մը, որ սաստիկ վերդոյած էր Կերենսկիի դէմ մեղադրելով զայն, Լենինը և Թրոցքին ազատ արձակելուն համար: Պետկերկուր բանտարկած էր զանոնք

Եւ անհրաժեշտ կը գտնէր պահել բանախ մէջ: Ան կ'ըսէր ինձ, թէ Կերենսկին պիտի տապալուի անոնց իսկ միջոցով, իր անհետատեսութեանը համար: Այդ տարակարծութեան համար էր, որ Պետկերզեւը զուրա կը եկած պահիճէն:

Երբ Մսկիթովէն մեկնեցայ Փեթերսպուրկ եւ Հոկտեմբերի 22ին հասայ հան, փողոցներու մէջ արտակարգ բան մը չտեսայ, հսկայ քաղաքը կ'ապրէր իր սովորական խաղաղ կեանքով: Ես հանդիպեցայ իմ բարեկամ Աճէմովին, որ սուսական խորհրդարանի անդամ էր եւ սիրելի Տօբի՝ Յ. Զաւրեանին: Նախարարութիւնները կը շարունակէին իրենց սովորական գրադամները: Հոկտեմբեր 23ին եւ 24ին քանի մը այցելութիւններ բրի կոտաւարական գիտնատուներուն՝ Ալերսանդրապուլի քաղաքային գործերուն համար եւ նոյնիսկ երկաթուղային առն առի Հոկտեմբեր 27ին Կովկաս մեկնելու համար:

Հոկտեմբեր 27ին սոկայն, աստուան ժամը 10ին, երբ կ'անցնէի մայրաքաղաքի գլխաւոր փողոցէն, Նեսկի պողոտայէն, իմ ուշադրութիւնս գրասեղին տարօրինակ մարդոց խումբեր, որոնք զինուած էին հրացաններով, բայց զինուորական համազօղեստ չունէին: Ոչ ոք կը կանդնէնէր պահանջ հարցնելու, թէ ո՞ր էն եւ ինչո՞ւ համար են զինուած կամ ո՞ր կ'երթան: Անցորդները հատաքերբութեամբ կը նայէին անոնց եւ կ'անցնէին լուռ: Հասայ Նեսկիի եւ Մոսքովի անկիւնը եւ լսեցի յանկարծ հրացանի պայթիւն: Ժամը 12 էր, երբ հասայ այն շէնքը, ուր տեղի կ'ունենար այսպէս կոչուած նախապարբամէնտի նիստը: Բոլորն ալ հան գրադուած էին երկարաչունչ ճառեր արտասանելով: Խօսեցաւ Կերենսկին, խօսեցան մենչեւիկներու պարագլուխները, խօսեցան սոցիալիստ-յեղափոխականներու պետերը, խօսեցան կատկոյները: Ճառերու նիւթը պարզեց ինձ այն, ինչ որ տեսայ փողոցներու մէջ: Կերենսկին կ'ըսէր. «Հուրով եւ սուրով կը ճնշեմ ապստամբները: Ազատ Ռուսիան թոյլ չի տար ունէլ բռնութիւն եւ որբնական կատապարտութեան տապալումը»: Լրսուեցան խանդավառ ծափահարութիւններ: Կուսակցութիւնները խոտաացան իրենց անվերապահ աջակցութիւնը կոտապարտութեան:

Ընդմիջումի ատեն, Բրոֆ. Կուլմին – Կարալայեւի Հետ ցաղիքը ճաշարանը, նոտանք սեղանի մը մօտ, եւ ան բացատրեց ինձ թէ ինչ կը կատարուի զուրա- յայտնեց որ զօրանոցներուն մէջ շատ ուժեղ խմորում մը կայ եւ զօրքերը պոլշեւիկներուն կողմը անցնելու հակում ցոյց կու տան, բայց փստահեցուց որ կոտապարտութիւնը կը ճնշէ շարժումը:

Նիստը վերսկսաւ: Սոկայն, հայիւ քանի մը վոյրկեան անցած

էր, երբ ժողովասրահ մտան քանի մը զինուած նաւաստիներ եւ առաջարկեցին բոլորին ցրտիւ իրենց տուները: Լսուեցան բողոքներ դանադան կողմերէ, և սակայն, ամէնքն ալ առանց դիմադրութեան ի վերջոյ ցրուեցան: Եւ Լւս զուրս եկայ:

Նևսակիի վրայ նկատուցի րպիմաթիւ օթօմօպիինը, որոնք լեցուած զինուորներով կը սլանային ղէպի Զմեռնային Պալատը: Նորէն գացի Աճէմովի մօտ Լւս պատմեցի տնոր՝ տեսածս ու լսածս: Մօտը նստած էր իր Լեղբորդին, Լեւոյա Աճէմովը, 17 տարեկան պատանի մը, որ կատաղի պաշտօնիկ էր և որ յետոյ, 1921ին, Փետրուարեան Ապստամբութեան օրերուն սպաննուեցաւ: Ան մեզ հազորդեց որ պաշտօնիկները այդ օրը պիտի գրաւեն Իշխանութիւնը, ու նորէն վայեց ղէպի Ամոյնի վարժարան, ուր այդ պահուն նիստ կը գումարէր Պաշտօնիկներու Խորհուրդը, Լենինի եւ Թրոցկիի ղեկավարութեամբ: Թէ ի՞նչ կը կատարուէր այդ պահուն Ամոյնի մէջ, պատմած է Թրոցկիին այդ օրերուն նուիրուած իր զբօնի մէջ:

Յանկարծ լսեցինք մեր Հեռախօսի ձայնը: Զօր. Բաղրատունին էր, որ Կերենսկիի կողմէ նշանակուած էր Փեթրասպորիկի շրջանի զինուորական հրամանատար: Կր խտէր Զմեռնային Պալատէն: Տեսնելով, որ պաշտօնիկները կը մօտենան Պալատին, ան պաշտը էր կացութեան փափկութիւնը և պատասխանատուութիւնը ու պէտք էր զպաշտը խորհրդակցելու Տոբի. Զարեանին և ինձ Հետ: Կր խնդրէր անմիջապէս Լըթալ Զմեռնային Պալատը: Դացինք. Զօր. Բաղրատունիի առանձնասենեակին մէջ տեսանք Զօր. Տիգրանեանը, որ անոր սպայակոյտի պետն էր: Պատուհաններէն տեսայ, որ պաշտօնիկեան զօրքերը կը շրջապատեն Պալատը: Զօր. Բաղրատունին բացատրեց, որ Փեթրասպորիկի մէջ Լեղած 40:000 զինուորներուն մէկ մասը պաշտօնիկներուն կողմն է, իսկ միւս մասն ալ կ'ուզէ չկոտոր մնալ: Կատարութեան կողմն են միայն սպայից վարժարանի աշակերտները, և Կիներու գումարտակը, ընդամէնը 800 հոգի: Ի՞նչ ընել, ուրեմն:

Բաղրատունին հաղորդեց նաև որ Կերենսկիին մեկնիր է քաղաքէն ղէպի ռազմաճակատ, հաւատարիմ զօրքեր մայրաքաղաք ըրերելու նպատակով:

Խորհրդակցելով՝ մենք որոշեցինք բան զօրավարին, որ Պալատի պաշտպանութեան դործը անյոյս բան է և որ մենք, իրրև վկաներ կը տեսնենք թէ Հրամանատարը անգոր է:

Մենք դուրս եկանք պալատէն, որ արդէն լիակատարօրէն շրջապատուած էր: Դժուարութեամբ ինձ ու Զարեանին զուրս թողուցին: Զօր. Բաղրատունին ձերբակալուեցաւ, իսկ Զօր. Իշխան Թուման-

վր, որ զինուորական նախարարի օգնականն էր, դիմադրութիւն ցոյց տուաւ, սպաննուեցաւ: զինուորներու կողմէ եւ նետուեցաւ Մոյսէայի ջրանցքը: Գևտի մօտէն անցնելու ատեն մե՛ք տեսանք, ինչպէս մարտանաւ: Արորայի վրայէն պոյշևիկները կը ոմրակոծէին պալատը, ուր այդ պահուն տեղի կ'ունենար նախարարական նիստը: Եատ մը փոսոցներ փակուած էին զինուած մարտոց կողմէ: Երբ Լս կ'անցնէի Քաղաքային Դումայի շէնքին մօտէն, տեսայ բազմութիւն մը, Հայտիկ իշխան Ալեքսանդր երկայնարարակի գլխաւորութեամբ, որ Հայի տարի մը ատաջ իմ օգնականն էր Թիֆլիսի մէջ Լս փոխադրուած էր այժմ ոտսական մայրաքաղաքը՝ նոյն պաշտօնով: Քաղաքային պատգամաւորներ, զրոյներ և կուսակցական գործիչներ էին ատաք, որ կ'երթային զէպի պալատ, վերջ տալու արիւնահեղափոխան, բայց անոնք թայլ շտուին ատաջ շարժուելու: Պալատը դրսուեցաւ և նախարարները ձերբակալուեցան: Հանրային շէնքեր և Հաստատութիւնները անուեցան պոյշևիկներէ, մէկ խօսքով, իշխանութիւնը անցաւ պոյշևիկներու ձեռքը:

Միւս օրը քաղաքը ամայի տեսք ունէր, նոյն օրն իսկ Լս մեկնեցայ Կովկաս: Մոսկուայի կայսրանէն լսեցի թնդանօթաճողութիւն կատարի կսի տեղի կ'ունենար պոյշևիկներու և կառավարական ուժերու միջև, — կսի մը, որ ամբողջ Լօթը օր տեւեց:

Հսկանմարի վերջին օրն էր, երբ Հասայ Թիֆլիս: Եկաւ Լս Զաւրեանը: Թիֆլիսի մէջ պոյշևիկներու կողմէ կարծես լուրջ փորձեր չէին բլար գրուելու իշխանութիւնը: Հետեւեայ օրը, վաղ առաւօտեան, մօտս Լկան Տարթ: Զաւրեանը և Ստեփան ԵաՀումեանը:

Զաւրեանի Համար բարդ զէպերըր մէկ արժէք ունէին միայն, որ Հայիով որ անտք կրնային նպաստել Հայկական Հարցի լուծման և թրահաշտութեան ազատագրման: Զաւրեանի տեսակէտը այն էր, թէ Հայ ժողովուրդը զէնքով պէտք է նուաճէ իր ազատութիւնը, իսկ Խուսիան, ինչ ում իմ այ ունենայ, պարտաւոր է և պէտք է օգնէ Հայերուն: Այդ զարգիւթի մոլեռանդ սպասուար մըն էր, բիրեղեայ և մաքուր Հոգի ունեցող մեծ անձնաւորութիւն մը, որ թողած էր իր տունը, անձնական գործը և Հանգստուկտ կեանքը՝ ծառայելու Համար իր ժողովուրդին: Բարոյական մաքրութեան և Հայրենասիրութեան անսակէտով մեծագոյն մարդն էր, զոր տեսած եմ երբեւէ իմ կեանքի ճամբուն վրայ: Զինքը կը սիրէին ամէնքը և չէին կրնար Հսիրել:

Պոյշևիկներու իշխանութիւնը Զաւրեանին չէր թուեր արդելք մը իր տեսակէտին իրականացման: Այդ պատճառով ալ կը պահէր իր

ժօտ Շահումեանը, որուն ձերբակալման հրամանը տրուած էր կովկասեան իշխանութեան կողմէ: Բերած էր Շահումեանը ժօտս կարողալու համար այն յայտարարութիւնը, զոր իր յղացումով եւ Շահումեանի միջնորդութեամբ պիտի հրատարակէր իր կողմէ Լենինը Թրքահայաստանի ինքնաշարութեան մասին, ազգերու ինքնորոշման սկզբունքի հիման վրայ: Զաւրեան արդէն պատրաստած էր այդ յայտարարութեան նախադիժը, որուն Շահումեանը հաւանութիւն տրուաւ իմ ներկայութեամբ եւ յանձն առաւ անմիջապէս ուղարկել Փեթերսպուրկ Լենինին, հրատարակութեան համար: Եւ իրաւ, այդ յայտարարութիւնը տեղի ունեցաւ պաշտօնապէս եւ նոյնիսկ այդ իմաստով կէտ մը մտաւ պոլշեիկներու հիմնական սահմանադրութեան մէջ:

Թէեւ Հոկտեմբերեան յեղաշրջումէն յետոյ, ժամանակաւոր կառավարութեան նշանակած Անդրկովկասեան Յատուկ Կոմիտէն մրնաց պաշտօնի մէջ, բայց անոր հեղինակութիւնը Լրկար չտեսնեց: Պէտք եղաւ նոր իշխանութիւն մը, որ տարբեր ծաղում ունենար. եւ ահա ստեղծուեցաւ Անդրկովկասեան Կոմիտարիատը, տեղական կուսակցութեանց համաձայնութեան միջոցով: Իշխանութեան մէջ մտան Հայեր, Վրացիներ եւ Թաթարներ:

Այդ կոմիտարիատը բոնեց Կերենսկիի նշանակած Յատուկ Կոմիտէի տեղը, յայտարարեց, որ կը նկատէ Կովկասը իրրիւ Ռուսիոյ անբաժան մասը:

ԱՆԿՐԿՈՎ, ԿԱՍԵԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՐ

Ե Ի

ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԵՏ

Հայաստանի Հանրապետության դիւանագիտական պատմութիւնը ուսումնասիրելու տեսակէտով շափագանց կարելոր է այն շրջանը, որ սկսաւ 1917 թ. Հոկտեմբեր 25ին պոլշեիկեան յեղաշրջումով և փակուեցաւ 1918 թ. Մայիս 28ին, երբ տեղի ունեցաւ Հայաստանի անկախութեան հռչակումը:

Որքան ատեն որ Փէթրոկրատի մէջ կ'իշխէր ժամանակաւոր կառավարութիւնը, խօսք չկար Կովկասի անջատման մասին: Պոլշեիկեան յեղաշրջումը առաջին հարուածն Եղաւ այդ ուզողութեամբ: Կովկասը շինպուսեց այդ յեղաշրջումը և, ի վէ և իրաւականօրէն դեռ կապուած Ռուսիոյ հետ, փաստօրէն սկսաւ ապրիլ ուրոյն, գրեթէ անկախ կեանքով: Կովկասի հետ միասին անջատ կեանքով սկսաւ ապրիլ նաև հայ ժողովուրդը իր մէջ առած թրքահայ զաղթականներով, որոնց թիւը կը հասնէր 300-400ի:

Այդ ժամանակաշրջանը կտրելի է բաժնել երկու մասի. առաջինը՝ Հոկտեմբեր 25էն մինչև Ապրիլ 1, և Երկրորդը՝ Ապրիլ 1էն մինչև Մայիս 28: Առաջին շրջանը կ'ընդգրկէ Անդրկովկասեան կոմիսարիատի պատմութիւնը և բանակցութիւնները Թուրքիոյ հետ

Տրապիզոնի մէջ՝ Երկրորդ՝ պատերազմը թուրքիոյ հետ, Անդրկովկասեան անկախ հանրապետութեան հռչակումը Ապրիլ 9ին, րանակցութիւնները Պալումի մէջ. Անդրկովկասեան հանրապետութեան քայքայումը, ապաշին հանրապետութիւններու հռչակումը և Պալումի հաշտութիւնը: Այս պրոլի մէջ կը մտնեն առաջին շրջանի վերաբերող զեպերը:

Երբ Փեթրոկրատէն վերադարձայ Թիֆլիս, արդէն տեղի ունեցած էր սյուլեիկեան յեղաշրջումը և մեծ յուզում կար Թիֆլիսի մէջ: Ես առաջինն էի, որ տկանատես էի եղած Փեթրոկրատի յեղաշրջման: Ամէն կողմէ կ'ուղղէին ինձ հարցումներ, պարզելու համար ստեղծուած կայտութիւնը: Տեղի կ'ունենային կուսակցական և միջկուսակցական խորհրդակցութիւններ: Հասարակութեան հետաքրքրութիւնը այնքան մեծ էր, որ ևս ստիպուած եղայ, Նոյեմբեր 5ին, կարգաւ հրապարակային զեկուցում մը, որուն ներկայ էր աննախընթաց բազմութիւն մը:

Վասնզատոր էր, մասնաւորապէս, ոտղմաճակատի կացութիւնը: Հայրըր առանձնապէս կը վախնային, որ դժուար պիտի ըլլայ պահել ռուս զօրքը կովկասեան ճակատի վրայ, երբ արեւմտեան ճակատներու վրայ ան նուազ խուճապահար կը փախչէր զէպի տուն: Հայերէն թերևս քիչ մը նուազ չափով մտահոգուած էին նաև Վրացիները, որոնց համար ևս վատնզատոր կացութիւն մը կրնար ստեղծել ռուս րանակի փախուստը Կովկասէն: Միմիայն մահմետական թաթարներն էին, որ տարրեր կը մտածէին: Բայց անոնք ալ շատ զգուշաւոր ու ծածկամիտ էին, թէև պարզ էր իրենց ուրախութիւնը իրերու այց անակնկալ ընթացքին հանդէպ:

Բնական է, որ Կովկասի այս անապահոյութիւնը ամէնէն աւելի կը մտահոգէր Հայերը, որոնք ռուսական զօրքի փախուստի ետեւէն կը տեսնէին տանկական րանակի արշաւը: Եւ որովհետև այլևս վատահոյութիւն չկար ռուս զօրքի վրայ, որուն տրամադրութիւնները բարձրացնելու և Կովկասի մէջ պահելու ամէն ճիղ կը թափուէր, այնուամենայնիւ հրատապ և հրամայական ընդոյթ ստացած հայկական յատուկ զօրք ստեղծելու ծրարիւրը, որուն հետ կապուած էր նաև ապաշին հոգամաս մը ճշդելու և հաստատելու խնդիրը: Հայկական զօրքի առաջին գործը պիտի ըլլար պաշտպանել Թրքահաստանը:

Մինչ այդ, կովկասեան րանակի զինուորական ներկայացուցիչներու շրջանային խորհուրդը Հոկտեմբերեան Յեղաշրջման առթիւ, հետեւեալ կողմ ուղղեց կովկասեան րանակին.—



«Շրջ․ խորհուրդը վճռականապես եւ խտտօրէն դատապարտելով պոլշեիկներու կատարած յեղաշրջումը փեքրոկրատի մէջ, կը հրաւիրէ բանակը մնալ հանդարտ եւ կարգապահ:

Նախագահ՝ ՏՕՆՍԿՈՅ»

*Այս կոչին կոպիասեան ճակատի կոմիտէն անմիջապէս պատասխանեց հետեւեալ բանաձեւով․*

«Տեղեկանալով փեքրոկրատի մէջ կատարուած դէպքերուն եւ իշխանութեան յախշտակման պոլշեիկներու կողմէ, կովկասեան բանակի կոմիտէն կը գտնէ, որ Ա) Պոլշեիկներու այդ փորձը հսկանակ է գերիշխան կամֆին ժողովրդի, որ իշխանութիւնը յանձնած է կերեւնակիի դահլիճին. Բ) կերեւնակիի նախարարութիւնն է միայն որ յեղափոխական դեմոկրատիայի հսկողութեան տակ լիազօրութիւն ունի կառավարելու երկիրը մինչեւ Սահմանադիր ժողով, եւ Գ) Ուրիշ որեւէ այլ կառավարութիւն, ինքնակազմ կերպով կառավարութեան գլուխ կանգնելով, նահատագրականօրէն դէպի կոքժամուժ պիտի առաջնորդէ յեղափոխական նուաճումները՝ մլրքնելով երկիրը քաղաքացիական պատերազմի սարսփներուն մէջ եւ յամձնելով զայն գերմանական իմբերիպիզմի ձեռքը:

«Այս պարագաները նկատի ունենալով, կովկասեան բանակի կոմիտէն կ'որոշէ․ Ա) Ճանչնալ կերեւնակիի կառավարութիւնը Ռուսիայ հանրապետութեան միակ լիազօր կառավարութիւնը, Բ) Յայտարարել թշնամի յեղափոխութեան ամէն մէկ այլ կառավարութիւն եւ ամէն միջոցներով պայքարիլ անոր քայքայիչ գործունէութեան դէմ, Գ) Պահպանել բանակի կարգն ու մարտունակութիւնը՝ նկատի ունենալով, որ յեղափոխական ժողովրդի բոլոր յոյսերը կապուած են բանակի հետ, որ է վերջին յեկարարն ուրածին ազատութեան, Դ) Անյապաղ ընրացք տալ Սահմանադիր ժողովի ընտրութիւններուն, որսնձ տեղի պիտի ունենան ամենակարն ժամանակի մէջ, որովհետեւ միմիայն Սահմանադիր ժողովն է, որ պէտք է արտայայտէ ժողովրդի անվիճելի ձայնը եւ իր ձեռքն առնէ մեր քանկագին հայրենիքի նահապետը տնօրինութիւնը:

*Այս բանաձեւը գրուած էր էրզրումի մէջ, և անկասկած, կ'արտայայտէր այն ատեն զոյութիւն ունեցող ընդհանուր տրամազրութիւնները:*

*Սոցիալիստ-յեզովոխականներու և սոցիալ-դեմոկրատներու կուսակցական մարմիններն ևս նմանորինակ բանաձևեր հանեցին՝ կոչ ուղղելով ժողովրդին ու բանակին, «խաղաղորդն հաշուեյարդարի Լենինարկել պուշկինկան ապստամբութիւնը» և շուտափոյթ կերպով հրաւիրել Սահմանադիր ժողովրդը: Նման որոշում և յայտարարութիւն բրաւ նաեւ Շ. Յ. Դաշնակցութիւնը: Եւ այսպիսով հաստատուեցաւ միացեալ քաղաքական ճակատ մը:*

*Պէտք էր կազմակերպել իշխանութիւնը: Ժամանակաւոր կերպով քաղաքական կուսակցութեանց նախապահներէն Թիֆլիսի մէջ կազմուեցաւ «Հանրային Ապահովութեան» կոմիտէ մը, որ Նոյեմբերի 11ին ժողովրդական Տան մէջ հրաւիրեց մէծ խորհրդակցութիւն մը, որուն կը մասնակցէին բոլոր քաղաքական, դինտորական և հասարական կազմակերպութեանց ներկայացուցիչները: Սուրհրդակցութիւնը Եկաւ հետեւեալ Եզրակացութեան.—*

«Նկատի ունենալով, որ կը բացակայի բոլորէն մանչցուած կեդրոնական իշխանութիւն մը եւ երկիրը ենթակայ է յարաճում անիշխանական վիճակի, որը կայող է տարածուիլ նաեւ Անդրկովկասի վրայ, նկատի ունենալով նոյնպէս, որ գոյութիւն ունին շարք մը անյետաձգելի հանրային, տնտեսական եւ ելեւտական խնդիրներ, որոնց լուծումէն կախուած է Կովկասի մերձակայ ապագան.

«Խորհրդակցութիւնը կ'որոշէ՝ Ա) Միևչեւ Սահմանադիր ժողովի ընտրութեանց վերջանալը Անդրկովկասի եւ Կովկասեան բանակի մէջ, երկրին իշխանութիւնը յանձնել Հանրային Ապահովութեան կոմիտէին, որուն մէջ կը մտնեն, բացի յեղափոխական-դեմոկրատիկ կուսակցութեանց ներկայացուցիչներէն, նաեւ ազգային եւ այլ հանրային կազմակերպութեանց ներկայացուցիչներ. Բ) Սահմանադիր ժողովի ընտրութիւններէն յետոյ ժամանակաւոր իշխանութիւնը պէտք է կազմակերպեն ժողովրդի եւ բանակի ընտրեալները հետեւեալ պայմաններով. 1) Վարել տեղական բաղաձայնութիւնը, համաձայն համառուական դեմոկրատիայի եւ համապետական շահերու, 2) Ինքնավար կերպով տնօրինել միմիայն տեղական ընթացիկ խնդիրները, 3) Կառավարել երկիրը մինչեւ համայն Ռուսիոյ կողմէ նանչցուած կեդրոնական իշխանութեան մը կազմակերպուիլը Սահմանադիր ժողովի կողմէ, եւ 4) Յեռուիլ բանուորական, զինուորական ու զիւղացիական խորհուրդներու եւ տեղական ինքնավարութեանց մարմիններու վրայ»:

Այս սրբումունքը բնորոշուեցան գրեթէ միաձայնութեամբ եւ շորս օր ետք, Նոյեմբերի 15ին, նոր իշխանութիւնը մտաւ պաշտօնի մէջ «Անդրկոմկասեան Կոմիտարիա» անուան տակ :

Կոմիտարիատի մէջ մտան հետեւեալ անձինք.— Նոխազահ՝ Գեկեզարի (Վրացի), որ էր նաեւ արտաքին գործոց կոմիտար, Չխենկելի՝ (Վրացի) ներքին գործոց կոմիտար, Տոքթ. Տնտէկոյ (Ռուս-Հրեայ)՝ դիւտարական եւ ծովային կոմիտար, Ս. Կարծիկեան (Հայ)՝ Ֆինանսական կոմիտար, Այերազէւ-Ալսխիւս (Վրացի)՝ արդարադատութեան կոմիտար, Մելիք Ասյանով (Քաթար)՝ Հազարդակցութեան կոմիտար, Ներուշև (Ռուս)՝ Հոգադործութեան կոմիտար, Տէր Ղազարեան (Հայ)՝ պարենաւորման կոմիտար, Տոքթ. Հ. Օհանջանեան (Հայ)՝ խնամատարութեան կոմիտար եւ Խոս-Մամեկով (Քաթար)՝ պետական վերահսկիչ :

Երեք օր վերջ կոմիտարիտար հրատարակեց կոչ ձը, ուղղուած կոմիտեան ժողովուրդներուն, հրաւիրելի ցանոնք խաղաղ շինարար աշխատանքի եւ շէշտելոյ երեք կարևոր ինդիւստրիա.— Ա) Սահմանադիր Ժողովի բնորոշութիւններ, Բ) Ազգային հարցի լուծում, Գ) Անձիճական կնքում հաշտութեան թուրքիոյ հետ :

Այս երեք շինական հարցերը գրասեյին Կոմկասի ամբողջ ուշադրութիւնը : Կարող եմ հաւաստիացնել, որ բովանդակ Կոմկասը համակրանքով վերաբերուեցաւ Կոմիտարիատի կոչին : Դժբախտաբար Կոմիտարիատի մէջ մտած կուսակցութիւններն ու անձերը հակամարտ ձգտումներ, պայտամներ ու քաղաքական հակումներ ունէին, — րան մը որ երևան Լիւս ասաջին օրերէն իսկ : Հայերը կ'ուզէին պահպանել Տաճկահայաստանը իրենց համար. Քաթարները կ'ուզէին վերադարձնել զայն Տաճկաստանին. իսկ Վրացիները կ'ուզէին վերադարձնել զայն Տաճկաստանին. իսկ Վրացիները կ'ուզէին խաղաղ եւ բարեկամական յարաբերութիւններ հաստատել Տաճիկներու եւ Քաթարներու հետ :

Կոմիտեան նոր կառավարութեան մէջ կարևորագոյն պաշտօններ ստանձնած էին Վրացիները : Փաստօրէն անոնց ձեռքն էր զեկավարութիւնը եւ ուժերու հաւասարակշռութեան պահպանումը :

Ազգային հակամարտութիւններու հետեւանքով հետզհետէ միշտ աւելի խոչըր գեր սկսան կատարել Ազգային Խորհուրդները՝ Երկրորդ տեղը մղելով Անդրկոմկասի Կոմիտարիատը : Մասնաւորապէս հայկական կեանքի մէջ միշտ աւելի շեշտուեցաւ Ազգային Խորհուրդի ղեկավարութիւնը, սրուն կեղրոնը զժախտաբար կը գտնուէր Քիֆիսի մէջ, Հայաստանի սահմաններէն դուրս. հոն էր նաեւ հայկական գորարանակի ղլխաւոր սպայակոյտը :

Կոմիսարիատի մատնանշած երևբ հարցերէն առաջին հերթին լուծման առարկայ դարձան երկուքը՝ հաշտութիւնը Թուրքիոյ հետ եւ Սահմանադիր ժողովի բնորութիւնները :

Ընտրութիւնները տեղի կ'ունենային խաղաղ, առանց խոշոր միջադէպերու եւ բաղխումներու : Պարզ էր, որ երևբ իշխող կուսակցութիւնները՝ Հ. Յ. Դաշնակցութիւնը, Վրացի Մենչևիկները եւ Մուսավաթականները իրենց ազգային շրջանակներուն մէջ պիտի չահէին բացարձակ մեծամասնութիւն : Այդպէս ալ եղաւ : Սակայն, այդ բնորութիւնները իրենց նպատակին շնասան, որովհետեւ Սահմանադիր ժողովը առաջին օրն իսկ ցրուեցաւ պոչուիկներու կողմէ :

Երկրորդ խնդիրը՝ հաշտութիւնը Թուրքիոյ հետ ողբերգական ընթացք եւ վախճան ունեցաւ՝ ճակատադրօրէն որոշելով կովկասեան ժողովուրդներու հետագայ բախտը :

Նոյեմբեր 21ին Կոմիսարիատը որոշեց սկսիլ հաշտութեան բանակցութեանց Թուրքիոյ հետ՝ որոնք յանդեպն զինապաշարի, որ կնքուեցաւ 1917 թ. Գեկուտեմբեր 5ին Երզնկայի մէջ : Իսկ 1918 թ. Յունուար 1ին տաճկական բանակի կովկասեան ճակատի հրամանատար Վահիպ փաշան էնովլը փաշայի կողմէ Անդրկովկասեան կոմիսարիատին ուղղեց ուշադրաւ հարցում մը, թէ շէնք կը մտածէ Անկախ Անդրկովկասի կառավարութիւնը հաշտութեան պայմաններու մասին Թուրքիոյ հետ : Եւ թէ շէնովլը փաշան մտադրօր է Անկախ Անդրկովկասի մայրաքաղաքը զրկել պատուիրակներ հաշտութեան զանազիր կնքելու համար : :

Առանձնապէս կը հրաւիրեմ ընթերցողի ուշադրութիւնը երկու անգամ կրկնուած անկախ բառին վրայ, որով ճաճիկները կ'ուղչին ներշնչել կովկասեան իշխանութեան, թէ իրենք կը կամենան զործ ունենայ միմիայն անկախ կառավարութեան մը հետ : ճաճիկներու համար անկախ կովկաս մը բողձալի պատնէշ մըն էր Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջև : Թիֆլիսի մէջ այդ բանը զգացին. բայց զեռ ոչ ոք չէր ուզիր բացառապարօքն խօսիլ Ռուսիոյն անջատուելու մասին : Յամենայն զէպս, ուշադրութեան արժանի է, որ անկախութեան զազափարը եւ այդ զազափարի հրահրումը եկան Թուրքիայէն :

Կոմիսարիատը բռնի մը նիստեր նուիրեց իր պատասխանի մշակման : Ան նպատակ ունէր հարցը ձգձղելով համաձայնութեան մը զալ Ուրբայինայի եւ Հիւսիսային կովկասի հետ, որով մէկ կողմէն կ'ուղչր շէտուի իր կապը Ռուսիոյ հետ, իսկ միւս կողմէ յեանարան ունենայ Թուրքիոյ հետ բանակցութիւններ վարելու առին : 1918 թ. Յունուար 15ին, կովկասեան կառավարութիւնը յայտնեց

Տաճիկներուն, որ իր պատասխանը պիտի տայ երեք շաբաթ ետքը՝ անհրաժեշտ համարելով նախօրօք հասկնալ Ռուսական Հանրապետութեան ինքնայար անդամներու կարծիքը: Այդ յայտարարութեան մէջ որեւէ ակնարկ չէր եղած Անկախ Անդրկովկասի մասին:

Տաճիկները միևնոյն ժամանակ ձեռք բերեցին ծալած շնորհը, սպասելու համար Կովկասի պատասխանին: Շաբթ մը հետագիւրծներով՝ ուղղուած կովկասեան բանակի ընդհանուր հրամանատարին, որ Վրացի մրն էր, անոնք կը հաղորդէին հայկական բարբարոսութեանց շինծու յուրեր, իսկ նոյնուար 30ին հաղորդեցին, թէ մահմետական բնակչութեան պաշտպանութեան համար իրենք ստիպուած են արչուսանքի սկսիլ: Կր սկսուէր նոր պատերազմ մը:

Տաճիկական սովերը, բայտ երեւոյթիւն, ուշքի եկած էին, մինչ ռուսական զօրքերը անընդհատ գանդուածային եւ անկանոն կերպով կը լքէին ճակատը եւ կը շտապէին տուն: Ամբողջ երկու ամիս կը հետեւէի այդ զօրքերու փախուստին, որ կը կատարուէր երեք ուղղութեամբ՝ միանալով Ալեքսանդրապոլի մէջ. կու պային երկաթուղիով երևանի վրայով Պարսկաստանէն, Կարսի վրայով Էրզրումէն եւ խճուղիով ելինսովկայէն: Յաճախ անոնք կը ծախէին իրենց զէնքերը, նոյնիսկ իրենց սարքերու պատկերները, կը ծախէին զինուորական կտորերը, հայուստները եւ այն ամէնը, ինչ որ կրնային ծախել: Բոլորն ալ ինքզինքնին պաշտելի կը համարէին՝ յայտարարելով, թէ իրենք կը պատկանին այն կուսակցութեան որ զիրենք զէպի տուն կը հրաւիրէ: Բոլորն ալ սննէին այն համապումը, թէ իրենց հայրենիքին մէջ արդէն հողերը կը բաժանուէին, եւ տուն կը շտապէին իրենց բաժնէն շրջակայէն համար:

Չափազանց ծանր, զրեթէ անկարելի պործ մը ստանձնեց հայկական զօրաբանակը, որ այդ զժնպակ պայմաններու մէջ՝ որեւէ օգնութիւն չստանալով կովկասեան հարևաններէն՝ պարտաւորուած էր պաշտպանել կովկասեան ճակատը եւ զիմպղբել տոճկական արշաւուց բանակին: Դժուար էր Յունուարի եւ Փետրուարի զարհուրելի ցորտերուն զինուորները տանիլ զէպի Տաճկահայաստանի շրջանները, որոնք աւերուած ու ամայի էին. մանաւանդ որ հաղորդակցութեան միջոցները կը բացակայէին այդ մեծ տարածութեան վրայ: Նաեւ կը պակսէր սնունդը:

Ալեքսանդրապոլ նստած՝ մենք ստիպուած էինք երկու գործ միտմամտակ ընել. մէկ կողմէն կ'ընդունէինք ճակատէն փախչող ռուս զօրքերը, որոնք բարոյալքում եւ խուճապ կ'տառջացնէին, միւս կողմէն հապճեպ կերպով հայկական զօրքեր կը հասաքէինք ու կ'ուղարկէինք զէպի ռազմաճակատ:

Հայերու և Տաճիկներու ուժերը այսպիսի պայմաններու մէջ հաւասար չէին կրնար ըլլալ:

Հայկական զօրքանակի կազմակերպութեամբ գրադուած էր Հայոց Աղլոյային Ուրհուրդը, բայց միաժամանակ Անդրկովկասեան կոմիտարիատը կը կազմակերպէր վրացական ու թաթարական զօրքանակները: Անդրկովկասեան իշխանութեան զինուորական ղեկավարութիւնը Հայերու ձեռքը չէր, ուստի ան կը ծառայէր հակահայկական, այսինքն ռազմաճակատին հակառակ նպատակներու: Ուրովհետեւ թաթարները պարզապէս թուրքերու կողմն էին, իսկ Վրացիները անոնց ուժ կու տային փաստօրէն, Անդրկովկասեան կոմիտարիատը իրաւունք չէր տար զօրահաւաք բնելու, որուն համար կը բերէր զանազան ձեւական առարկութիւններ: Ելլաւ վայրկեան մը, երբ Հայերը պատրաստ էին առանց կոմիտարիատի թոյլտուութեան, ինքնազուտի կերպով, հայկական զօրահաւաք ընել: Ամբողջ ամիս ու կէս սայլաբար տեղի կ'ունենար մեր և մեր հարեւաններու միջև, մինչև որ յաջողուեցաւ ձեռք բերել թոյլտուութիւն:

Պէտք է նկատի ունենոյ նաև, որ երկաթուղիներն այ Հայերու ձեռքը չէին, այլ թաթարներու և Վրացիներու, որոնք կը մերձէին մեզ վակոններ տալ զկտի ճակատ զօրք փոխադրելու համար: Հայոց Աղլոյային Ուրհուրդի նախադասն ու անդամները ամբողջ 48 ժամ ստիպուած եղան սպասել թիֆլիսի կայարանին մէջ, մինչև որ զնացք մը ստացան Կարս երթալու համար: Երևան-Ձուլֆա գծի վրայ, հայկական զօրքերու շարժումը կանգնեցնելու համար, թաթարները պայթեցուցին երկաթուղային կամուրջը:

Միեւնոյն ատեն հայկական զօրքանակի կազմակերպումն ալ մեծ դժուարութիւններու կը հանդիպէր: Քաղաքացիները դժուարութեամբ կը մտնէին բանակին, մասնաւորապէս հետեւազօրքի մէջ: Հայ հարուստները գրամ չէին տար, և պէտք կ'ըլլար զանոնք բանտ նստեցնել՝ վճարել տալու համար իրենց վրայ ինկած բաժինը: Թիֆլիսից Հայերը, մասնաւորապէս, կը խուսափէին զինուորական ծառայութենէ, և զօրքի մէջ կը մտնէին առաւելապէս երևանի, Պայազիտի ու Չանկելուրի Հայերը, այսինքն բուն Հայաստանի Հայերը:

Հայոց Աղլոյային Ուրհուրդէն զատ, թիֆլիսի մէջ կը զործէր նաև Թրքահայերու կոմիտէ մը: Այն ատեն ղեռ միացեալ Հայաստանի մասին խօսք չկար, և հայկական հատուածները իրարու մօտենալով հանգերձ՝ ղեռ չէին ձուլուեր: Թրքահայերը գրադուած էին միմիայն Տաճկահայաստանի ազատազրութեան խնդրով և կը



U. Frobhoff

կազմակերպելին յատուկ զօրամասեր Անդրանիկի ղեկավարութեամբ: Անոնց հետ կը զործէր Անդլիացի զնդապետ Բարբը, որ յետոյ սպաննուեցաւ պոլշեւիկներու կողմէ 'Հրատիկաւկայի մէջ: Անոր միջոցոյ Ազգային Խորհուրդը ստացաւ 4 միլիոն ռուպլի զինուորական նպասակներու համար:

Օրէ օր կ'աճէր Հայոց Ազգային Խորհուրդի հեղինակութիւնը. անոր շուրջ կը համախմբուէին հայկական բոլոր տարրերը՝ համակուելոյ կոպիտսի մէջ հայկական յատուկ հպարտա ունենալու զազափարոյ:

Հայկական զօրաբանակը կը կազմակերպուէր եւ մաս առ մաս ճակատ կ'ուզարկուէր: Չեմ կրնար բնէ սակայն, որ անիկա սպառնալից ուժ մը կը ներկայացնէր, որոյհետեւ ռազմաճակատը մեծ էր, եւ ստիպուած էր տարածուիլ կազմելոյ շատ փոքրիկ զօրամասեր: Գրօն, որ անկասկած զինուորական բնածին տաղանդ մըն է, կ'ըսէր թէ մեծ սխալ է զօրքը այդպէս տարածելը. ան կը պաշտպանէր այն միտքը, թէ անհրաժեշտ է կրճատել ճակատը եւ զօրքը համախմբել զօրաօր բունցք մը կազմելու համար: Ատոր փոխարէն, սակայն, մեր զօրքերը կը բաժնուէին փոքրիկ մասերու եւ մասմաս կը ջարդուէին:

Թիկանքի կացութիւնը օր օր կը վատթարանար. կոյկասեան մահմետականները զինուած խումբեր կազմած՝ յարձակումներ կը զործէին ղեկի ճակատ մեկնող մեր զօրամասերուն վրայ, կը քանդէին երկաթուղապղծերը, կը պայթեցնէին կամօրջները. մէկ խօսքով կ'ընէին այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է բանակի մը շարժումները կասեցնելու համար:

Փոքրիկ ընտրոջ ղեկք մը: Այեքսանդրապոլի մօտ մահմետական զիւզ մը կար Մոլլա-Մուսա անունոյ: Այդ զիւզի բնակիչները յարձակումներ կը կատարէին հայ զինուորներուն վրայ, կը սպաննէին զանոնք եւ զէնքերը կը զրուէին. նախքան պատժիչ զօրամաս մը այդ զիւզը ուղարկելը, սրտուեցաւ ուղարկել պատգամաւորութիւն մը՝ զինուորական պատգամաւորներու խորհուրդի նախադահ Ասիբէզեանի ղլխաւորութեամբ: Ասիբէզեանը երիտասարդ սոցիալ-դեմոկրատ մըն էր, մենչեւիկ, որ կը հաստատար համոզելու միջոցներուն այդպիսի պարսպաներու մէջ: Անոր հետ զացին նաեւ Արեքսանդրապոլի քաղաքային վարչութեան անդամները: Երբ պատգամաւորութիւնը մօտեցեր էր զիւզին, զիւզացիները հրացաններ էին պարպել անոր վրայ եւ սպաննուէր էր Ասիբէզեանը: Արեքսանդրապոլի բնակչութիւնը խորապէս յուզուեցաւ եւ զրոգուեցաւ:



Երբ կայարանին մօտեցաւ Քիֆլիսէն եկող զնացքը, ամբոխը դուրս քաշեց վակոնէն մահմետական ճամբորդ մը եւ տեղն ու տեղը սպաննեց :

Այսպիսի երեւոյթներ սոյրորական էին Կովկասի բոլոր կողմերը :

Քուրքերը տեսնելով, որ ուսական զօրքերը լքած են ճակատը, հետագիւր հետագիւրի ետեւէ կ'ուղարկէին կովկասեան բանակի ընդհանուր հրամանատար զօր. Օղիշէլիձէին՝ մեղադրելով Հայերը զարհուրելի բռնութեանց մէջ հանդէպ Քրդերու եւ Քաթարներու : Յայտնի է, որ Քուրքերը ամէն անգամ երբ կոտորածի կը պատրաստուին սոյրութիւն են զարձուցած Հայերը մեղադրելով՝ հոգեբանական գետնի մը պատրաստել իրենց զիւային ծրարիներուն համար : Այդ հաղորդապրութիւնները նպատակ ունէին պարզապէս զրգոել եւ ոտքի հանել Կովկասի մահմետականութիւնը Հայերուն դէմ : Անոնց շնորհիւ մեծապէս յարուեցան մեր յարտերութիւնները Ատրպէճանի Քաթարներուն հետ եւ անկարելի եղաւ որեւէ համաձայնութեան զայ անոնց հետ : Տաճիկները ամէն ջոնք ի զործ զրին, որպէսզի այդպիսի համաձայնութիւն մը տեղի չունենայ, եւ յաջողեցան՝ զրգոելով մեր հարեաններուն կրօնական ու այլ կիրքերը :

Քաթարները, սակայն չէին գոհանար Հայերու վրայ միայն յարձակելով, անոնք յարձակումներ կը կատարէին նաեւ տուն վերադարձող ուս զինուորներու վրայ : Ամէնէն մեծ յուզումը առաջ բերաւ ուս զինուորներու մէջ Քաթարներու զօրաւոր յարձակումը ուս զօրամասի վրայ՝ Շամխոր կայարանի մօտ : Յարձակողները յանկարծակիի էին բերեր միամիտ ուս զինուորները, որոնք զէնքերը մէկ կողմ դրած եւ վակոններու մէջ տեղաւորուած, կը հանդստանային : 1000 ուս զինուորներ այրուեցան վակոններու մէջ, զբաւուեցան թնդանօթներ եւ բազմաթիւ հրացաններ ու տարուեցան Գանձակ : Այդ զէպքին համար ուս զինուորները 1920 թ. վրէժ լուծեցին Քաթարներէն հազարաւոր մարդիկ սպաննելով եւ ամբողջ քաղաքամասերը այրելով ու աւերելով : Քաթարները մեղադրեցին Հայերը, որ անոնք ալ իրք թէլ օգնեցին պոլշեիկներուն իրենց սեփական վրէժը լուծելու համար :

1918 թ. Յունուարին տաճկական արշաւող բանակի ճնշման տակ Հայերը աստիճանաբար կը պարպէին Տաճկահայաստանի շրջանները. կը հեռանային գաղթականները, իսկ անոնց ետեւէն նաեւ հայ զօրամասերը : Զակատը կը մօտենար 1914 թ. Ռուս-տաճկական սահմանին : 1917 թ. Դեկտեմբեր 5ի կնքուած զինադադարը խախ-

տուած էր հիմնովին թէ՛ փաստօրէն և թէ՛ իրատեւանօրէն :

Եւ կը պատրաստուէի մեկնել իր գրում, ուր կը կանչէին զիս անդադար, երբ, յանկարծ, Հեռուգիր մը ստացայ թիֆլիսէն. մեր կուսակցական մարմինը կը կանչէր թիֆլիս : Երբ Հասայ թիֆլիս, արդէն ընդհանուր խօսակցութեան առարկայ էին Հաշտութեան բանակցութիւնները Թուրքիոյ Հետ : Տեսայ, որ մենք արդէն շատ ուշացած էինք :

1918 թ. Յունուար 3ին զրուած նամակով մը կովկասեան ռուգմաճակատի թուրք հրամանատար Վեհիպ փաշան կը հրաւիրէր Անդրկովկասեան ներկայացուցիչները Երթալ Պրեսթ-Լիթովսք, ուր տեղի կ'ունենար Հաշտութեան ծանօթ քննարկումը : Վեհիպ փաշա կը խոստանար ճանչցնել տալ Անդրկովկասեան կառավարութիւնը նաև իր զինակիցներուն՝ Գերմանացիներուն, Աստրիացիներուն և Պուլխարներուն : Այս հրաւերը թէ՛ և սրտէ տարակարծութիւն առաջ բերաւ կովկասեան զործիչներու մէջ, բայց մեծամասնութիւնը զէմ էր Պրեսթ-Լիթովսք Երթալու : Վեհիպ փաշայի նամակը թիֆլիսի մէջ ստացուեց էր միայն Փեարուար 1ին : Պրեսթ-Լիթովսք Երթալու կողմնակից էին Վրաց ազգայնականները, բայց մեծականապէս զէմ էին Վրաց սոցիալ-դեմոկրատ մեծուհիներն և Հայերը :

Պէտք է թել, որ կառավարութենէն բացի մեծական խօսք ունէր թելու այլ կարգի ընդիրներու մէջ, Անդրկովկասեան Ալլմըր : Ալլմի նախագահն էր վրացի Չիլիճէն, իսկ փոխ-նախագահներն էին Ս. Տիգրանեանը և Տուրթ. Ալլայուր (Թաթար) որ յետոյ սպաննուեցաւ թիֆլիսի մէջ : Ալլմը կը խտացնէր իր մէջ կովկասեան ազգութեանց երեք զիսուսը կուսակցութիւններու տարբեր ձգտումներն ու քաղաքականութիւնը, սուսի և ոչ մէկ հիմնական հարցի մէջ ան կրցաւ համերաշխութիւն զոյացնել : Ալլմի քուլիաներու ետեւ զործները կը ղեկավարէին կուսակցութեանց կեդրոնական մարմինները : Փետրուար 1ին Անդրկովկասեան կառավարութիւնը առաջին անգամ բլլալով լրջօրէն մասնուարկեցաւ Հաշտութեան բանակցութիւններով : Այդ ստեղծ Պրեսթ-Լիթովսքի մէջ համաձայնութիւն չէր զոյացած պոչուհիներու և գերմանական քաղաքականի միջև : Թուրքերն ու Գերմանացիները յարձակողականի անցած և պրեթի առանց զիմպրուսիան առաջ կը շարժուէին :

Անդրկովկասեան կառավարութիւնը կը շարունակէր բանակցութիւններ վարել հիստորային կովկասի Հետ ոչ-պոչուհիական Ռուսիոյ վիճակի մասին : Կովկասի զինուորական իշխանութիւնները անհրաժեշտ կը պահէին Հաշտութեանց բանակցութիւնները, որպէսզի

կարելի բլրար դէժ փրկելի դէնքի և ուղղամթերքի հսկայ պահեստները Տրապիզոնի մէջ :

Նկատի ունենալով այս պայմանները՝ Անդրկովկասեան կառավարութիւնը սրտաւց Փետրուար Վին խնդրել Ալյմէն, որ յատուկ յանձնարարութիւն մը միջոցով մշակել հաշտութեան պայմանները, միաժամանակ ձեռնարկելով բանակցութեանց գործին : Այս որոշումէն յետոյ է որ դիւ կանչեցին Ալեքսանդրապոլէն Թիֆլիս : Հ. Յ. Գալստեան թիւնը անհրաժեշտ էր դասած իմ մասնակցութիւնը հաշտութեան բանակցութիւններուն :

Փետրուարի ընթացքին կառավարութիւնը բաղամթիւ նիստեր գումարեց զննութեան Լեթարկելու համար հաշտութեան խնդիրը եւ պայմանները : Փետրուար Վին կովկասեան ճակատի սղայակոյտի պետը յայտարարեց, որ «յիշուորական ուժ չկայ այլևս շարունակելու համար պատերազմը» : Հայերն ևս կ'ուղէին հաշտութիւն : Միայն Ռուսերն էին որ կը քանակին ձգձուկ հաշտութեան բանակցութիւնները առաջին անգամը համար կովկասի անջատման Ռուսիայէն :

Հաշտութեան խորհրդատուութի վայրը գործաւ վիճարմունքեան առարկայ. կ'առաջարկուէին Թիֆլիսը, Պաթումը և Տրապիզոնը : Երկու առաջին քաղաքները մերժուեցան, որովհետ պատահութիւն չարտի Թուրքերուն մօտէն ծանօթանալու կովկասի ներքին վիճակին : Կանց առին, վերջապէս, Տրապիզոնի վրայ, որ կը նկատուէր «չէզոք» քաղաք մը, որովհետև դեռ այդ որոշումը կայացնելու առն Տրապիզոնը Ռուսերուն ձեռքն էր :

Փետրուար 13ին, նկատի ունենալով որ Հիւսիսային կովկասէն և Ռուսիայինայէն ոչ ոք Եկու, Անդրկովկասեան կառավարութիւնը հարգեց Ռուսիային կեդրոնական իշխանութեան, թէ ինք համաձայնութեան Եկած է Թուրքերուն հետ հաշտութեան բանակցութիւններ վարելու համար Տրապիզոնի մէջ՝ յայտնելով միաժամանակ, որ հաշտութեան խորհրդատուութի վիտի բացուի Փետրուար 17ին (հին տոմարով) :

Մէյի մէջ, Երբ ևս վճռականապէս արտայայտուեցայ ի նպաստ հաշտութեան ու մերձեցման Թուրքիոյ հետ, որու քաղաքական շրջանակները շատ յուզուեցան և վրդովուեցան՝ Երեսիս տարով իմ ճառերը Մոսկուայի մէջ : Սակայն, անոնք կը մոռնային, որ ոչ թէ մենք էինք Ռուսիային հետապնդ, այլ ինքք Ռուսիան էր լքեր մեզ :

Փետրուար 16ին Ալյմը ընտրեց հաշտութեան պատուիրակութիւնը, որուն կազմը հետեւեայն էր. նախագահ՝ Ակակի Չիսնկէյի (Վրացի), անդամներ՝ Ապաշիձէ (Վրացի մահմետական) Գովազովա

և Լասխիշիլի (Վրացիներ), Յ. Քաջպնունի և Լա Հայերու կողմէ  
և Լա Շահնակի, Հայաստոյ, Մեխէտոյ, Սասամեհտոյ ու Շէյխուլիս-  
լամոյ (Թաթարներ) :

Թուրքերը սկիզբը առաջարկեցին իրեն Խորհրդածողովի  
յարմար վայր Պաթումը, բայց յետոյ հրաժարեցան իրենց պահան-  
ջէն և Համաձայնեցան Տրապիզոնին : Մեր գլխաւոր նպատակն էր  
չկորսնցնել Թրքահայաստանը, մինչդեռ Թաթարներն ու Վրացիներ-  
ըր տրամադիր չէին պաշտպանելու զայն : Պարզ էր, որ հիմնական  
վէճը Թրքահայաստանի շուրջ պիտի բլլար : Վրացիներու բաւական-  
նաչափ արդէն փոխուած տրամադրութեանց արտայայտիչն էր պատ-  
ուիրակութեան նախագահ Չխենկէլին, որ Գեղեկչկորթի նման ուու-  
սական հակամեր շունէր, այլ թրքական օրիէնթալայի մարդ էր :  
Պատուիրակութեան թաթար անդամներէն աչքի կ'իյնային Մահմեդ  
Հասան Հաճիճեկին, Պարտիէն, չափազանց զլուշուոր և լուրջ գոր-  
ծիչ մը : Հայ պատուիրակներու հետ իրբև Խորհրդական Էկաժ էին  
նաև Ռուրէն Տէր-Մինտաներ, Լէօն :

Պատրաստուելով Տրապիզոն երթալ՝ Լա Հեսա վերցուցած էի  
կսովհասան զինուորական շտապէն աշխարհադրական քարակա մը,  
որ այսօր այ մօտա է և հետագային բոլոր Խորհրդածողովներու ա-  
սան սեղանի վրայ էր. անոր վրայ էնիվը փաշան, Վեհիպ փաշան,  
Բէուֆ պէյը և Պէքեր Սամի պէյը յաջորդաբար զծած են Հայաս-  
տանի սահմանները : Կամենալով ունենալ նախ Թրքահայոց Խորհուր-  
դի կարծիքը՝ ևս զիմեցի անոր անդամ Վահան Փափաղեանին՝ խն-  
դրելով գրաստ կերպով տալ ինձ իրենց պահանջները Թրքահայաս-  
տանի սահմաններու մասին : Պէտք է բւեմ որ անոր տուած սահման-  
ները գրեթէ նոյնն էին, ինչ որ հետագային զծեց նախագահ Ռեի-  
սըն :

Պատուիրակութիւնը Փետրուար 17ի զիշերը ժամը 12ին պիտի  
մեկնէր Տրապիզոն, բայց նախքան կայարան երթալը պատուիրակ-  
ները հաւաքուեցան նախկին փոխարքայի պալատին մէջ, մտքերու  
վերջին փոխանակութիւն մը ունենալու համար կտառվարութեան  
անդամներուն հետ : Երբ մենք պալատին մէջն էինք, Էկաւ, յան-  
կարծ, աստի-հետպիր մը՝ ստորագրուած Կարախանէ : Հեռագիրը  
կու գար Պրեսի-Լիթովսքէն, պուշեիկեան պատուիրակութեան կող-  
մէ : Հեռագրի մէջ, ի միջի այլոց, կարդայինք .

«Փետրուար 11ի վերջնագրի հետ համեմատած թուրքերու այս  
նոր առաջարկը պայմանաժամ կը պարունակէ : Այդ նկատումով,

ինչպէս նաեւ հաշուի առնելով Գերմանացիներու մերժումը, դադրեցրին յատերագմական զարժողութիւնները հաշտութիւն կնքելէ առաջ, մեեմ որաշեցինք ստարագրել հաշտութեան դաշնագիրը առանց զայն քննած ըլլալու եւ մեկնիլ անմիջապէս: Ամենալուրջ վարչա-րացումը Փետրուար 11ի պայմաններուն այն է, որ Ռուսիայէն կ'անջատուին, ինքնարձման պատրուակով, Արտահանը, Կարսը եւ Պաբումը:

## ԿԱՐԱՆԱՆՑ

Այս հետադիրք մեծ զարմանք եւ յուսախարտութիւն պատճառեց: Մենք որ երկար նիստերու մէջ քննութեան առած էինք Թրքա-Հայաստանի միացման պայմանները, այժմ կ'իմանայինք որ ոչ միայն Թրքահայաստանը, այլև Անգրկովկասի զբերքէ կէսը կ'անջատուէր եւ կը յանձնուէր Թուրքերուն: Փոքրիկ տատանում մը ունեցանք, երթա՞լ արդեօք թէ ոչ: Ըստ ի վերջոյ զպայտիք, որ անհրաժեշտ է մեր երթալը: Սակայն, բոլորիս սրտերուն մէջն այժմ ասած էր արդէն թոնասուր ու ճնշող կասկածը: Կարծես նախապայտում մը ունէինք, որ անկարելի է այլևս Հաշտութեան ընտանեկցութիւններ վարել, երբ խնդիր անձնատուութեան գոռով հասած էր: Այսուհանդերձ, անհրաժեշտ էր որեւէ ձեռով ընդհանուր լեզու մը գտնել Թուրքերուն հետ, մանաւանդ որ Եւրոպայէն ալ եկած պատերազմական լուրերը միեմարական չէին մեզի համար:

Ժողովուրդը հաշտութիւն կ'ուզէր, եւ մենք չէինք կրնար չերթալ: Երբեմն մեզ կը թուէր, որ եթէ Պրեսթ-Լիթովսք երթայինք, թերևս կարողանայինք փրկել 1914ի սահմանները:

Նոյն զիշերք, այսինքն Փետրուար 17ին, Անգրկովկասեան Ալեյմի նախապահ Չխէիձէն եւ կառավարութեան նախապահ Գեղէկ-Կորին Հաղարկեյին աշխարհի բոլոր կառավարութեանց, թէ Անգլըրկովկասը չի ճանձնար Պրեսթ-Լիթովսքի զաշնադիրք եւ թէ իր պատասխանութիւնը կ'երթայ Տրապիզոն:

Վեհիպ փաշան, սակայն, չուտով, Փետրուար 25ին, Հիմրու-իւղով արդէն Պրեսթ-Լիթովսքի զաշնադրի վրայ, պահանջեց ամենակարճ ժամանակուայ մէջ պարպել Կարսը, Պաթումը եւ Արտահանը: Նոյն օրն իսկ անոր պատասխանուեցաւ, թէ Անգրկովկասի կառավարութիւնը չի ճանձնար Պրեսթ-Լիթովսքի զաշնադիրք եւ Վեհիպ փաշայի պահանջը կը նկատէ մերժում հաշտութեան ընտանեկցութիւնները վարելու, որոնց համար արդէն մեկնած է Տրապիզոն յատուկ պատասխանութիւն մը Անգլըրկովկասեան Ալեյմի կողմէ:

Անդրկովկասի կառավարութիւնը իր տեսակէտը աւելի եւս ամրապնդելու համար հարկ համարեց հետեւեալ օրը, Փետրուար 26ին, Ալեքի արտակարգ նիստ մը հրաւիրել, ուր վարչապետ Գեղեշկորին զեկոյց մը տուաւ Ղևհիս, փաշայի պահանջներու, կառավարութեան պատասխանի եւ պատուիրակութեան մեկնումի մասին: Այս զեկոյցը բնելու առեն, Գեղեշկորին առաջին անգամը ըլլալով հրապարակօրէն ու պաշտօնապէս յիշեց սը Անդրկովկասը կը գործէ իրբեւ կատարելապէս անկախ քաղաքական միասնութիւն մը: Գեղեշկորին զարմանք յայտնեց, սը Թուրքերը, խոստանալէ ետք պաշտպանել Պրեսի-Լիթովսքի մէջ Անդրկովկասի անկախութիւնը, չսպասեցին Տրապիզոնի խորհրդածուցովին, այլ անջատ հաշտութիւն մը կնքեցին Ռուսիոյ հետ ի մնաս Անդրկովկասեան հողամասերու: Գեղեշկորի յայտնեց, սը «հաշտութիւնը մտանդի տակ է եւ ժողովուրդը պէտք է պատրաստ ըլլայ ամէն պատահականութեանց»:

Բայրը կուսակցութիւնները, բացի Մուսաօթլէն, ոյժ տուին կառավարութեան անդրդուելի զիրքին՝ համաձայնելով, որ պէտք չէ ճանչնալ Պրեսի-Լիթովսքի պաշտպալը: Միայն Խան-Սոյաքին, Մուսաօթլի յետրը, կը հրաւիրէր սպասողական զիրք բռնել եւ վճռական ոչ մէկ քայլ առնել, մինչեւ որ Տրապիզոնէն նոր տեղեկութիւններ պան:

Ալեքի բնդունած բանաձեւը կը մերժէր Պրեսի-Լիթովսքի պաշտպալը եւ հասանութիւն կու տար կառավարութեան քայլերուն:

Մանրութեան կելրանք փոխադրուեցաւ Տրապիզոն: Բայց հոյկերանորէն Անդրկովկասը կը զգար ինքիներք բոլորովին մինակ, լքուած Ռուսիայէն, թէ եւ պաշտօնապէս դեռ անջատուած չէր: Երկյիմի վիճակ մը ստեղծուած էր. փաստօրէն Անկախ Անդրկովկասը տակախ իրաւականօրէն անկախ չէր: Եւ Թուրքերը կը բացատրէին այդ՝ Հայերու՝ եւ մասամբ Վրացիներու ուսաստիւթեամբ, որ աւելի եւս կը զրկուէր զանոնք:

Չինուորական տեսակէտով Հայերու վիճակը ամէնէն ծանրն էր: Եւ բնական է, որ ամէնէն աւելի անհանգիստ էին անոնք՝ սրբատարով սպասելով Տրապիզոնի բանակցութեանց արդիւնքին:

Տ Ր Ա Պ Ի Զ Ո Ն Ի Խ Ո Ր Հ Բ Գ Ա Ժ Ո Ղ Ո Վ Ը

(1918 ՓԵՏՐՈՒԱՐ 23 — ԱՊՐԻԼ 1)

Տրապիկոն դաջած պատուիրակութեան կազմը շատ բաղձան-  
դամ էր: Բոլորս միասին 40 հոգի էինք — պատուիրակութեան ան-  
դամներ, խորհրդականներ, քարտուղարներ, տնտեսական բաժնի  
մարիչներ, յատուկ յանձնարարութեանց սպաներ: Ասկէ դատ, հե-  
տերնիս տաած էինք 50 հոգիէ կազմուած պահակախումբ մը:

Այս ահապին բազմութիւնը ինքնին ցոյց կու տայ, թէ որքան  
անխորձ էինք աստիպին հաշտութեան խորհրդաժողովի մը պատ-  
ուիրակութիւն կազմելու համար, միւս կողմէ ան ապացոյց էր, թէ  
ս'ր աստիճան միտապարձ անմիտահասութիւն կար պատուիրակութիւնը  
կազմող դանդաղան ազդութեանց ներկայացուցիչներուն միջեւ, ու-  
րոնք ամէնքն ալ կ'ուզէին իրենց սեփական խորհրդականներն ունե-  
նալ՝ շփտահեղով ուրիշներուն: Հետագային, երբ հասանք Տրապի-  
կոն, թուրք թերթերը շարամիտ կերպով սրախօսեցին, թէ՛ «Եթէ  
Եկածը զինուորական արշաւախումբ մըն է, զուգը է. բայց եթէ հաշ-  
տութեան պատուիրակութիւն մըն է, չափէն աւելի մեծ է»:

Տեղաորուելով յատուկ զննչքի մը մէջ՝ Փետրուար 17ին կէս  
դիշերին մեկնեցանք Թիֆլիսէն: Փետրուար 22ին արդէն ծովի վրայ  
էինք: Ռատիօ-հեռագրով հազարդեցինք Պոլիս մեր դուրս գալու մա-  
սին: Կը ճամբորդէինք «Կարլ» նաւով:

Առաւօտեան ժամը 4ն էր, էրր, յանկարծ, խուցիւ զսուր ծեծեցին: Գուրս Լկու որ պատուիրակութեան նախապահը կը խնդրէր անմիջապէս զալ խորհրդակցութեան շատ կարեւոր հարցի մը մասին: Երբ ևս բարձրացայ նաւապետի սենեակը, տեսայ որ հոն նրստած էին Չիւնկէյին և, մեր պահակախումբի հրամանատարը. նաւապետն ալ հոն էր. նաւապետի բաղատութիւններէն տեղեկացայ, որ գիշերը Սեւաստափոլէն Սեւ Մոսի նաւատորմի պոլշէիկեան կոմիտէն պահանջէր կը անմիջապէս երթալ գէղի Սեւաստափոլ և յանձնել մեզ կոմիտէին: Նաւապետը թէև անձամբ տրամադրութիւն չունէր Լնիսարկուերու, բայց, կը տատանուէր. մէկ կողմէ կը վախնար չկատարել իր նաւատիրներու պահանջը ուղղելու նաւը գէղի Սեւաստափոլ, միւս կողմէ պատուոյ խօսք տուած կը մեզ հասցնել Տրապիզոն: Իսկ, ինչպէս յետոյ պարզուեցաւ, իր սեփական նպատակն էր հասցնել մեզ Տրապիզոն և յետոյ նաւը դուրս բերել Սեւ Մոսիէն ու ծախել:

Այդ ժամանակ մենք միայն մէկ բանի մասին կը մատչէինք, ողջ-առողջ հասնիլ Տրապիզոն: Մեր ամէնէն Լուսնդուն և ճարպիկ աշխատակիցներու միջոցով անմիջապէս նախապայուշական միջոցներ ձեռք առինք, զրամներ բաշխեցինք նաւաստիններուն՝ ամէն մէկուն տարով միանուսդ 60-000 ոտայլի և խոտանալով 10-000 ոտայլի և սվճարել ամէն օր, որ միանք Տրապիզոնի նաւահանդիստին մէջ: Իսկ նաւաստիններէն աւելի բարոտներուն սպառնացինք մեր պահակախումբով: Այս բոլոր միջոցները յաջողութիւն ունեցան և մեր նաւը որ արդէն Սեւաստափոլի ճամբուն վրայ էր, նորէն դարձուցինք դէպի Տրապիզոն: Փետրուար 23ի երեկոյեան ժամը 8ին արդէն կանցնած էինք Տրապիզոնի սոջև: Հետեւեալ առաւօտ Փետրուար 24ին, էրր դուրս եկանք նախ տախտակամածը և նայեցանք շորս կողմը, չկար ուրիշ նաւ մը որ բերած ըլլար Պոլսէն թուրք պատուիրակներ: Մոպսիկն կը լսուէր զինուորական նաւապատմարի ձայն և կը նըշմարուէին զինուորական մասերու շարժումներ: Երբ նայեցանք հեռադիտակով, այն տպաւորութիւնը ստացանք, թէ թուրքերը զինուորական ցոյց կ'ընէին: Ժամը 10ին ծովափ ուղարկեցինք մեր քարտուղարը և պահակախումբի հրամանատարը՝ իմանալու համար թէ ինչ տեղեկութիւններ կան թուրք պատուիրակութեան մասին: Վերադառնալով անոնք մեզ հաղորդեցին, թէ թուրք պատուիրակութիւնը արդէն Պոլիս մեկնած է: Փետրուար 24ին և 25ին մնացինք նախ վրայ, բայց ոչ ոք Լկաւ. արդէն սկսանք անհանդստանալ. մեր ինքնախերութիւնը վիրաւորուած էր: Հաղորդեցինք Թիֆլիս,



Թէ Թուրքերը չեն եկած : Փետրուար 25ի երեկոյեան մեր նաւը եկաւ Տրապիզոնի վայրն ու յայտնեց թէ թրքական պատուիրակութիւնը չուտով կու գայ : Մենք տուինք անոր փոխ-այցելութիւն մը եւ որոշեցինք, որ եթէ հետեւեալ օրը թուրք պատուիրակները չգան, անմիջապէս պիտի վերադառնանք Պաթում : Սակայն, հետեւեալ օրը առաւօտեան հարիզոնի վրայ երեւցաւ ու յետոյ մեր նաւահանդիսաւը մասնա թրքական նաւ մը, թուրք պատուիրակներով :

Երեք ժամ յետոյ մեր նաւին մօտեցաւ փաքրիկ նաւակ մը, ուրկէ վեր բարձրացան թրքական պատուիրակութեան նախագահ Բէուֆ պէյը, ծաղումով Պոսնացի, զնդապետ Համիտ պէյ եւ Երիտասարդ Թուրքերու կոմիտէի անդամ Բիզա պէյը, որ 1914 թուին մասնակցած էր Աճառիայի արշաւանքին : Թուրք պատուիրակները ինչորեցին մեզմէ ցամաք ելլել . մէկ ծաղեցաւ մեր եւ թուրքերու միջեւ սրահակախումբ ունենալու իրատնքի մասին . Թուրքերը յայտնեցին սրչապէս, թէ Տրապիզոնը չկողք քաղաք մը չէ, այլ թրքական է եւ թէ միջապային օրէնքով անոնք իրենց վրայ կը վերցընեն մեր պատուիրակութեան պաշտպանութիւնը : Որոշ տատանումներէ յետոյ մենք համաձայնեցանք մեզ ծօտ թողոյ մեր պահակախումբէն 10 հոգի եւ մնացածները ճամբել Պաթում, առաջին իսկ նաւով :

Երեկոյեան պէմ ցամաք ելանք, նախօրօք փոխ-այցելութիւն մը րնելէ ետք թուրք պատուիրակութեան : Մեզ րնդունեցին իողճուկ նաւապատմարի մը նաւապով եւ հրամատարութեամբ : Մեզ տեղաւորեցին Երկյարկանի տան մը մէջ, որուն դիմացը կը գտնուէր թրքական զօրանոց մը պինտորներով լեցուն : Հետեւեալ առաւօտ դուրս եկանք փողոց . քաղաքը զրեթէ ամայի էր եւ փողոցները ցեխոտ էին : Հարկաւ, ոչ մէկ հայ կար . խանութները փակ էին ու դատարկ . քանի մը Յայնք միայն միտ ու կանաչեղէն կը ծախէին : Գացինք զէպի հայ եկեղեցին, որ ախտոի էր վերածուած :

Հետեւեալ օրը միայն տեղի ունեցաւ մեր առաջին պաշտօնական խորհրդակցութիւնը թուրք պատուիրակներուն հետ : Նախագահութիւնը իր վրայ վերցուց Բէուֆ պէյը եւ մեզ հրաւիրեց հաշտութեան խորհրդածոյսի հանդիսար բացման, որով անուղղակի կերպով Տրապիզոնը կը ճանչցուէր արդէն թրքական քաղաք :

Մեր խորհրդածոյսի առաջին օրն իսկ առինք երկու բախտորոշ գէպերու յուր . առաջին՝ թուրք զօրքերը վերցուցեր էին էրզրումը . եւ Երկրորդ՝ պոլշեիկները Պրեսթ-Լիթովսքի մէջ, ստորապրած էին Հաշտութեան պաշնապիւր մը, որով կարաւ, Պաթումը եւ Արտահանը կը զիջէին թուրքերուն :

Աւելի պտղղ կերպով ներկայացնելու համար մեր խորհրդածողովի աշխատանքները, պէտք է յիշենք նաև, որ ասոր տեսչութեան ուժով ընթացքին Քուրթերը անդադար տալով կը շարժուէին կովկասեան հակառակ վրայ, իսկ մեր զօրքերն ալ անընդհատ կը նահանջէին: Խորհրդածողովի սկիզբը մեր զօրքերու տեղադրումը հետևեալն էր — Պաթումը եւ Ճորտիի հովիտը գրասած էին Վրաց զօրամասերը: Երզնկայի ուղղութեամբ կանդնած էր մեր Երզնկայի գունդը: Էրզրում կը գտնուէին Էրզրումի դունդը եւ Ա. ու Գ. դունդերը: Կարսի մէջ ունէինք երեք դունդեր: Խնուսէն մինչև վար դիրքեր բռնած էին Բ. հայկական դունդը եւ Խնուսի եւ Վանի դունդերը: Վանէն հարաւ կանդնած էին Ե. հայկական գունդը եւ Ա. Բ. ու Գ. Վանի դումարասկները: Վանէն արեւելք կեցած էր Թալուսի դունդը: Առնցմէ զստ այդ ճակատներու վրայ մենք ունէինք յատուկ զօրամաս մը Անդրամիկի հրամանատարութեամբ եւ Սեպուհի, Մուրատի, Տէր Ղեւնդեանի, Թարլոմի, Պանդուխտի եւ այլոց խումբերով: Երևանի մէջ կը գտնուէր Զօրավար Սիլիկեանի տիփղիան, Ալեքանդրապոլի մէջ՝ Զօր. Արեւեանի տիփղիան եւ հեծելազօրաց զօրամասը գնդ. Կորկանեանի հրամանատարութեամբ: Գրխուսար սպայակոյտը եւ Նաղարբէկեանը կը գտնուէին Թիֆլիս, իսկ Պաքուի մէջ կային 10.000է աւելի հայ զօրքեր: Պարսկաստանի մէջ էին Ատրիներու զօրամասերը Աղա Պետրոսի գլխաւորութեամբ եւ հայկական դումարտակ մը՝ Ստեփանեանի հրամանատարութեամբ: Քուրթերու ընդհանուր ծրագիրն էր գրասել Պաթում-Պաքու երկաթուղայինը, տիրել Պաքուի նախահանքերուն, փոխադրել զօրքերը Քուրթաստան եւ այնտեղէն սպանալ Անդլիոյ: Միաժամանակ անոնք կը շարունակէին ժողովել Ալեքսանդրապոլին, որպէսզի այնտեղէն երթան Պաքու, Զուլֆա, Պարսկաստան, իսկ այդ տեղէն ալ սպանալ Պաղատաի՝ Անդլիացիներուն:

Հասկնալի է, որ Կովկասը կը գտնար ռազմական գործողութեանց կեդրոն: Գերման զօր. Լիտէնտորֆ պատերազմի մասին զրուած իր յիշողութեանց մէջ կ'ըսէ, թէ Հայերու հերոսական դիմադրութիւնը խանդարեց այդ ծրագրի իրագործումը, արդեւք եղաւ նախի եւ կապոյինի ստացման Պաքուէն, — բան մը որ անհրաժեշտ էր ռիօժոպլիները ժամանակին հասցնելու եւ շարժելու համար:

1918 թ. ամրան սկիզբը Գերմանացիները կիզբոնացուցին Օսեսայի մէջ 15.000 զօրք Կովկաս ղրկելու համար, իսկ Կովկաս ղրկուած Թրքական զօրքերը մօտ 30.000 էին, որոնցմէ 8.000ը Պաքուի մէջ էր: Ասոնք Պաղեստինի ճակատէն վերցուած Թրքական լաւադոյն

գործատերն էին :

Եւ քաղխեցան երկու ուժեր՝ Կովկասեան, կամ աւելի ճիշդը, Հայկական ու թրքական. էրզրումէ պատումէն յետոյ Թուրքերու կողմէ Հայկական գործը նաՀանջեց զէպի Սարիգամիչ : Ա որ Հայ գործերը կրցան դիմադրել, մինչև որ Թիֆլիսէն օդնական ուժեր եկան : ԱյսուՀանդերձ անկարելի էգուս պահել Սարիգամիչը, զոր Թուրքերը գրասեղին Մարտ ՉՅին : նահանջելով՝ Հայերը կրակի տրին քաղաքն ու պահեստները եւ քաշուեցան զէպի Կարս :

ԱորՀրգամողովի ստամին օրը Րէուֆ պէյը, թրքական պատուիրակութեան նախադահը, երկուք, զեղեցիկ խօսքերով զարդարուած ճառ մը խօսեցուս : Ինչպէս իր պրոյններէն ալ յետոյ Հասկըուեցուս, Րէուֆ պէյ մեծ նշանակութիւն կու տար Թուրքիոյ եւ Անդլիոյ մերձեղման : Մագուսով Չերքէզ, սն շատ կը Հետաքրքրուէր Կովկասի ու իր ցեղակիցներու քախտով : Իր ճառին մէջ Րէուֆ պէյ բուս, թէ Վերեւելքի մէջ կը բարձրանայ նոր աստղ մը եւ ասիկա Անդըրկովկասեան Հանրապետութիւնն է», զոր կ'ողջունէ, ինչպէս նաեւ կ'ողջունէ անջատուած Հողամասերու վերադարձը մայր երկրի դիրկը : Րէուֆ պէյ նկատի ունէր Կարսի, Պաթումի եւ Արտահանի վերադարձը Թուրքիոյ :

Բնականաբար, այս ակնարկները շիտխութիւն եւ տՀանձութիւն պատահողին մեղի : ԱյսուՀանդերձ մեներ շարունակեցինք պաշտպանել մեր դիրքերը, ինչ սը արտայայտեցինք Մարտ Դին մեր յատուկ յույսարարութեան մէջ :

Պաշտօնական եւ անպաշտօն բանակցութիւններէն պարզուեցուս, որ . ա) Թուրքերը ամէն դնով կ'ուղին ստանալ Կարսը, Պաթումը եւ Արտահանը յենուելով Պրէսթ-Լիթովսքի դաշնադրի վրայ . եւ բ) կ'ուղին ստեղծել պատուար մը Թուրքիոյ եւ Ռուսիոյ միջեւ յանձին Անդլովկասեան Հանրապետութեան, որ թէ՛ փաստօրէն եւ թէ՛ իրաւականօրէն անկախ ըլլայ եւ անջատուի Ռուսիայէն :

Այս ծրագիրը իրագործելու Համար Թուրքերը որոշած էին դիմուորական արշաւանք մը կատարել եւ գրուել վիճելի Հողամասերը :

Թուրք պատուիրակութեան քարտուղարը Համի պէյ, որ 85 տարեկան մարդ մըն էր, «միջուկային իրաւունքի փորձեսոր» շատ ծուր Րէուֆ պէյին եւ սնոր յանձնարարութեամբ յաճախ կու գար ինձ ծուր խօսելու Համար յատկապէս Հայկական Հարցի մասին : Այդ պարտնին ես Հանդիպեցայ նաեւ Կ. Պոլիս 1918 թ. աշնան : Թէ Րէուֆ պէյի եւ թէ Համի պէյի Հետ ունեցած իմ խօսակցութեանց տպաւո-

րութիւնն այն էր, որ Թուրքերը թրքաւճայ հարցի լուծման Երկու ծրագիր ունէին այն ատեն: Առաջին՝ բնակչութեանց փոխանակութիւն Թուրքիոյ և Անդրկովկասի միջև և Երկրորդ՝ տեղական ինքնապարտութիւն թրքական վեհապետութեան տակ Ալաշկերտի, Վանի և Խնուսի շրջաններուն մէջ:

Փոխանակութեան վերաբերմամբ ԲլուՖ պէյ մեղ կ'առաջարկէր թողուլ Անդրկովկասի մէջ 300,000 թրքաւճայ դաղթականները, իսկ անոնց փոխարէն Անդրկովկասէն Թուրքիա փոխադրել 300,000 Թաթարներ: Այս առաջարկը մենք մերժեցինք, որովհետև ան կր զրկէր մեզ իրաւունքէ պահանջել թրքաւճատանք, որ Թուրքերը կ'ուզէին տեղաւորել Անդրկովկասէն տարուած մահմետական տարբեր:

Երկրորդ ծրագիրը Թուրքերու մտքին մէջ այլ շատ աղօտ էր և ԲլուՖ պէյ դուրս չէր դար բնդհանուր խօսքերու սահմանէն. պարզ էր միայն, որ ան կ'ուզէր այդպէսով Թրքաւճայաստանի խրնդիբը դարձնել թրքական ներքին խնդիր մը:

Գալով Անդրկովկասի անկախութեան խնդրին, Թուրքերը այդ մասին շատ վճռական էին: Անոնք կր պահանջէին, որ Անդրկովկասը յայտարարէ իր անկախութիւնը հանդիսաւոր կերպով, այսպէս կր մերժէին մեզ չեա պաշտօնապէս բանակցել:

Աստիճանաբար, ռազմական գործուղութեանց դարդացման հետ դուրսնալով կովկասեան ճակատի վրայ, մենք հասանք այն եղբակացութեան, թէ անհրաժեշտ է որոշ հոգային զիջումներ ընել Թուրքերուն: Իսկ երբ այդ համոզման Եկանք, սկսան ներքին վէճերը կովկասեան ազգութեանց ներկայացուցիչներուն միջև: Վրացիները չէին ուզեր զիջիլ Պաթումը, Հայերն այ ոչինչ կ'ուզէին զիջիլ Կարսէն, իսկ Թաթարները չէրք էին այդ խնդիրներու մէջ, բացի Շէյխիլիսլամովէն, որ բնկերովարական էր և: Հայերու ու Վրացիներու կողմը կր բռնէր միշտ:

Շուտով Տրապիզոն Եկան և՛ Հիւսիսային կովկասի լեռնականներու ներկայացուցիչները, Չերմու և Բամատով: Երկուքն այ միացեալ կովկասեան Ֆեռերասիոնի կողմնակից էին և Իրենց փրկուցութիւնը ատր մէջ կր տեսնէին: Առհասարակ, պէտք է ըսել, որ Տաղատանի լեռնականները այն աստիճան թրքական օրիւնթացիս չունէին, որքան Ատրպէճանցիները: Անկախ Տաղատանի և Հերոս Շամիլի յիշատակը զեռ թարմ է անոնց մէջ: Անոնք փորձեցին մեղ օգնել: Խօսեցան ԲլուՖ պէյին հետ յիշեցնելով անոր, թէ ինքն այ Չերքէզ է, կովկասցի և սրբամ պարտաւոր է օգնել կովկասեան գործիչներուն իրենց ժողովուրդներու ազատութեան գործին մէջ:

Բայց անոնց միջամտութիւնը արդիւնք չտուաւ : Թուրքերը անզոր-  
զուակիւ չէին :

Կոփլուսեան պատուիրակութեան նախագահ Պ. Չիսնեկչիւն,  
տեսնելով, որ բռնակցութիւնները՝ այսքան հակամարտ տրամադ-  
րութիւններով ու ձգտումներով իր իսկ կազմին մէջ, չեն կրնար ռեւէ  
զբական արդիւնք տալ, առաջարկեց ուղարկել Թիֆլիս յատուկ  
յանձնախումբ մը, որ պիտի պաշտօն ունենար անձամբ ներկայացնե-  
լու կոտորածութեան իրերու մեծակը պարզել և յատուկ լիազօրու-  
թիւններ խնդրելու նախագահին համար՝ «ինքնուրոյն քայլեր» առ-  
նելու : Այդ յանձնախումբը, որու մէջ մտաւ նաեւ Քաջապուտեանի մեր  
կողմէ, զնաց Թիֆլիս և արտակարգ լիազօրութիւններ ստացաւ  
Ալէյմէն Պ. Չիսնեկչիւնի համար Թուրքիոյ զիջելու Անդրկովկասեան  
Հողամասերու մէկ մասը :

Երբ յանձնախումբը վերադարձաւ, մեր պատուիրակութիւնը  
Մարա Յէին գրուած նամակով մը հազորդեց Թուրքերուն, թէ հա-  
մաձայն է զիջելու Կարսի նահանգի որոշ մասերը Թուրքիոյ : Այդ զի-  
ջումները չդճացուցին Թուրքերը : Եւ անոնք պահանջեցին իրենց  
բոլոր առաջարկներու լիակատար բնդունումը : Միեւնոյն գրութեան  
մէջ կովկասեան պատուիրակութիւնը թրքահայկական ամբողջ Հար-  
ցը կը վերածէր հոյ զողթականներու վերադարձի և տեղաւորման  
խնդրի մը՝ անոր հետ կապելով նաեւ որոշ երաշխիքներ գաղթական-  
ներու կեանքը ապահովելու համար : Յիշուած էին նաեւ ուրիշ ազ-  
գերու գողթականներ. նկատի առնուած էին յատկապէս Ասորի  
գաղթականները :

Պէտք է բնէլ, որ երբ մենք Թիֆլիսէն Տրապիզոն կը մեկ-  
նէինք, Ասորիներու զեկամարները զիմեցին մեզի խնդրելով, որ  
իրենց հարցն այ՛ պաշտպանենք : Անոնք ալ մեզի պէս յուսախարուե-  
ցան : Անէլի լաւ է այս կտորը զնէլ Լոզանի զլուխը :

Թուրքերը կը շարունակէին անզորուակի մնալ : Տրապիզոն ե-  
կաւ Վեհիպ փոշան և բնդունուեցաւ մեծ հանդիսաւորութեամբ,  
երաժշտութեամբ և զօրահանդէսով. տեսնուեցաւ նաեւ մեզ հետ,  
հազորդեց իր ռազմական յանձնարարութիւններու մասին : Քաղաքին մէջ  
նկատելի էր որոշ զրգուած : Եւ, իրաւ, Մարտ 24ին, ուշ երեկոյեան,  
մեր պատուիրակութիւնը ստացաւ Րէուֆ պէյնէն այս նամակը. —

«Պ. Նախագահ, (Օսմանեան Կայսերական կառավարութիւնը  
կը պնդէ 1918 Մարտ 21ին իր բլում յայտարարութեան վրայ եւ կը  
խնդրէ Անդրկովկասեան յարգելի պատուիրակութեան վերջնական  
պատասխան տալ իրեն այդ մասին 48 ժամուայ ընթացքին» :

Այս վերջնապիւրը շատ լուրջ կոպտութիւն մը կը ստեղծէր, որովհետեւ պարզ կը թէ դայն շինուողն յարապային պատերազմական գործողութիւնները սխալ վերակէլին և Անդրկովկասը գրաման կ'ենթարկուէր: Մեր պատուիրակութիւնը անմիջապէս նիստ գումարեց զէշերը, և ձայներ կը լսուէին արդէն զիջելու: Բայց յանձնել կարան ու Պաթումը թուրքերուն, կը նշանակէր Անդրկովկասէն փրցնել անոր ամէնէն արժէքատու մասերը: Մենք փորձ ըրինք փրկել զէթ բան մը: Մարտ 25ին առաւօտեան Չիսենկէլին հետադիր մը քաշեց թիֆլիս հաղորդելով, որ իր կարծիքով իբրև առաւելագոյն զիջում թուրքերուն պէտք է յանձնել ամբողջ կարսի նահանգը հայ տարրով ընկուած անոր արևելեան սահմանադուբի փոքրիկ սրբազրութեամբ, Արասահնի շրջանի հիւսիսային մասերը և Պաթումի նահանգի Արդուինի շրջանը: Պ. Չիսենկէլի աւելցուցեր էր մասնաւորապէս. «Ես համագումար եմ որ թուրքերը չեն զիջիր ե՛ւ Պարսաւը: Վեհիպ փաշան որոշապէս ըսաւ այդ. բայց տարբերութիւնը այն է, որ ամոնիֆ կը սակարկեն ամոր շուրջ: Գալով կարսին՝ զայն պահպանել դիւանագիտական փախուցումը բացարձակապէս անկարելի է: Կարսի մասին թուրքերը խօսիլ անգամ չեն ուզեր: Ես զիտեմ, որ հարցին այս կերպ դառնիլ կը սպառնայ Անդրկովկասի եւ Սէյմի միութեան, բայց, դժբախտաբար, ուրիշ ելք չկայ: Թուրքերը շատ լուրջ կերպով սկսած են պատերազմ մղել»:

Գիշերը ևս տեսնուեցայ Չիսենկէլիի հետ, և երկուքս ալ այն կարծիքէն էինք, որ պէտք է զիջումներ ընել, որովհետեւ պատերազմ չէինք ուզեր և չէինք կրնար:

Միևեռոյն ատեն թուրքերը արդէն մտած էին Անդրկովկասի սահմանները. անոնց զորամասերը գրասած էին Մարիգամիշը և Պաթումի նահանգի մէկ որոշ մասը: Ուստի, Անդրկովկասի կառավարութիւնը Մարտ 26ին հեռագրով հրահանգեց պատուիրակութեան. «Պէտք է յայտնել յուրիք պատուիրակութեան, թէ քանի որ յուրիք զօրքերը մտած են Անդրկովկասի սահմանները, հաշտութեան բանակցութիւնները պէտք է դադարի և այս մասին պիտի հաղորդուի Անդրկովկասի ժողովուրդներուն»:

Բայց նոյն օրը երկկուսեան կառավարութիւնը հաղորդեց, թէ ինքը համաձայն է զիջելու կարսի նահանգը և Արդուինի շրջանը աւելցնելով՝ որ հայերը չեն ուզեր յանձնել կարս քաղաքը թուրքերուն:

Ժամանակը, սակայն, կ'անցնէր: Պատուիրակութիւնը կը



**Կարսի ընդհանուր տեսարանը**

զյար, որ Թուրքերը կ'ուզեն դաճափել այդ զկողքերը: Եւ Մարտ 26ին, Հեռուգրեց կառավարութեան, թէ իրերու միճակը կը պահանջէ անմիջապէս ճանչնալ Պրեսի-Լիթուիսքի հաշտութիւնը: Վերջնելոյ պատասխանատուութիւնը իր մրայ, պատուիրակութիւնը Մարտ 28ին հազարեկէ թուրք պատուիրակութեան, թէ ինք կ'ընդունի Պրեսի-Լիթուիսքի գաշնուցիրը: Ես եւ Քաջագնունին անհրաժեշտ նկատեցինք մեր կողմէն անձամբ սպգելու Ալյաթի Իտալիացական Քրակցեայի մրայ, եւ այդ նպատակով Մարտ 28ին Հեռուգրեցինք Գեղեչկորիին ու Ֆինանսներու նախարար Կարճիկեանին Հետեւեայր. «Անհրաժեշտ կը նկատենք հրատարակելու Հ. Յ. Գաշնուցութեան ամենալուրջ ուսուցողութիւնը այն բանի մրայ, որ ստեղծուած պայմաններու մէջ Պրեսի-Լիթուիսքի գաշնուցիրն ընդունելու մտադրուած չարքարոյն չարքար պէտք է համարել»:

Պէտք է յայտնել, որ այդ Հեռուգրէն չարքար մը առաջ մարշալեան Գեղեչկորիին հրատարակելու կը զիս եւ Քաջագնունին մտնելու կառավարութեան մէջ: Մենք տեսած էինք մեր համաձայնութիւնը եւ այդ պատճառով այ մեր Հեռուգրերը սպգած էինք մեր կառավարական ընկերներուն:

Թուրքերը, աւելի եւս սպգելու համար մեր տրամադրութիւններուն մրայ, հազարեկցին մեզ, թէ Վերտուճըր ինկած է արդէն, եւ Գերմանացիները կը մտնեն Փարիզին: Մարտ 30ին Թուրքերը վերջնապէս մը զրկեցին Պաթումի հրամանատարին՝ անմիջապէս յանձնելու իրենց Պաթումի բերդը իր բոլոր ամբողջութիւններով ու սպառնալով, հակառակ սպարազային կը սպառնային Ապրիլ 1ին զրոճ տալ բերդին մրայ, որուն Հետեւանը պիտի բլլար «ստեղծ, արեւան թափում եւ զինուորներու դերում»: Իսկ Մարտ 31ին Ռէուֆ պէյը հազորեկց Քեր պատուիրակութեան, թէ չորպէսդի կարելի բլլայ բանակցութիւններուն մասնակից դարձնել նաեւ զինակիցները (Գերմանացիները, Աստրիացիներն ու Պուլկարները), անհրաժեշտ է ամէն բանէ առաջ, որ Անգրկոյկասը յարաբար է իր անկախութիւնը»:

Մենք տապանապալի միճակի մէջ էինք: Ամէն մարտիկեան կը սպառնէինք Ալյաթի Հեռուգրին: Կը կարծէինք, թէ Ալյաթ պիտի ընդունի Պրեսի-Լիթուիսքի գաշնուցիրը: Մինչդեռ Թիֆլիսի մէջ շատ ուժեղ յայտնում կար. մեր Հեռուգրիները ստացուած էին, հարցերը լուրջ ճիշտութեան կ'ընթացակարգէին: Մարտ 31ին, ժամը 1:50ին, ցերեկը, Չիլիճի նախապահութեամբ Թիֆլիսի մէջ տեղի ունեցած էր կարեւոր ժողով մը Ալյաթի նախապահութեան, կուսակցութեանց



ներկայացուցիչներու և կառավարութեան մասնակցութեամբ: Գեղեկորին կառավարութեան կողմէ յայտարարեր է, թէ զինուորական հեղինակութեանց կարծիքով Պաթումի պաշտպանութիւնը ամենայն վիճակի մէջ է: Մերեթէ յայտներ է, թէ աւելի լաւ է մեռնիլ կրօսի մէջ, քան մահացու ինքնահարուած հասցնել յանձնելով Պաթումը: Կարճիկանն ևս նոյնիմաստ յայտարարութիւն բրած է: Բոլոր կուսակցութեանց Ֆրակցիաները խօսեր ևն նոյն ոգիով, և ժողովրդ, որ փակուեր է ժամը 2-5ին, ընդուներ է հետեւեալ բանաձեւը. «Առաջարկել Սէյմին ետ կանչելու պատու իրակուրիւնը Տրապիզոնէն, ընտրել մարմին մը երեք հոգիէ բաղկացած՝ տալով անոր արտակարգ լիազօրութիւններ երկրին պաշտպանութեան գործը վարելու համար եւ անմիջապէս հրաւիրել Սէյմի նիստ»:

Այս բանաձեւը ընդունուեր է միաձայնութեամբ:

Նոյն օրը, Երեկոյեան ժամը 7ին կը հրաւիրուի Ալէքսի նիստը, և Վրաց սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան պարագլուխ Ժորտանիայի առաջնորդութեամբ միաձայնութեամբ կ'ընդունուի բանաձեւ մը, որ կ'ըսէր. «Նկատի ունենալով, որ Թուրքիոյ եւ Անդրկովկասի միջեւ կարելի չեղաւ խաղաղ համաձայնութեան մը գալ սանձաճեղձութեամբ վերաբերմամբ, կ'առաջարկուի Անդրկովկասեան պատու իրակութեան անմիջապէս վերադառնալ Թիֆլիս»:

Ժորտանիայի բացատրութեամբ այդ բանաձեւի ընդունումը կը նշանակէր պատերազմի յայտարարութիւն Թուրքիոյ դէմ: Պատերազմը վարելու համար ընտրուեցաւ մարմին մը արտակարգ լիազօրութիւններով: Այդ մարմնին մէջ կը մտնէին վարչապետ և միաժամանակ զինուորական նախարար Գեղեկորի, ներքին գործերու նախարար Ռամիշվիլի և Ելեւմտական նախարար Կարճիկեան:

Ապրիլ 1ին, առաւօտեան ժամը 10ին, վարչապետ Գեղեկորիին պատու իրակութիւնը ստացաւ հեռագիր մը, որով մեզ կը հաղորդուէր Սէյմի ընդունած բանաձեւը և կը հրահանուէր անմիջապէս մեկնել Թիֆլիս: Մեր որոշումով Չխենկելին յայտնեց Թուրքերուն, թէ պիտի մեկնէք անմիջապէս, բայց ոչ թէ հաշտութեան բանակցութիւնները խղիւղով, այլ ժամանակաւորապէս ընդհատելով: Թէև Թուրքերը շատ լաւ կը հասկնային, թէ ինչ կը նշանակէ մեր այդ ձեւակերպումը, բայց լուսութեամբ ընդունուեցաւ: Նոյն օրը երեկոյեան արդէն մեկնեցանք նստով:

Այսպէսով հաշտութեան փոխարէն մենք Տրապիզոնէն կը տանէինք մեր Երկրին պատերազմ:

Թ Ո Ւ Բ Բ \_ Ա Ն Դ Բ Կ Ո Վ Կ Ա Ս Ե Ա Ն Պ Ա Տ Ե Բ Ա Չ Մ Ը

Ե Ի Պ Ա Թ Ո Ւ Մ Ի Բ Ա Ն Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Բ Ը

(1918 ԱՊՐԻԼ 1 — ՄԱՅԻՍ 28)

1

Ապրիլ 2ին, կէսօրին, մօտեցանք Պաթումին, շափազանց անհանդիսա սրտով: Գիտէինք, որ նախորդ օրը Թուրքերուն կողմէ վերջնապիւր ուղղուած էր Անդրկովկասեան կառավարութեան անձիջողէս յանձնելու Պաթումը:

Պայծառ, արևոտ օր մըն էր: Ողբ այնքան թափանցիկ էր, որ զիւրութեամբ հետունները կը տեսնէինք: Յանկարծ, մեր նուապետը յուզուած մօտեցաւ ինձ եւ Չխենկելիին եւ կէս ձայնով բտաւ. «Ամբողջի վրայ քրքական դրօշակ կը տեսնեմ, քաղաքը Թուրքերուն ձեռքն է, եւ մենք չենք կրնար մտնել Ուսահանգիստ»: Եւ իրաւ, Պաթումի աւերութեանց վրայ կը ծածանէր թրքական դրօշակը եւ քաղաքը, անկասկած Թուրքերուն ձեռքն էր:

Փոքրիկ խորհրդակցութեան մը ետք, սրռչեցինք մեր նաւը ուղղելով կէտի Փոթի: Քանի մը ժամ ետքը արդէն հասած էինք. ճանապարհին տեսանք բազմաթիւ նաւեր ու նուակներ լեցուած Վրացի զինուորներով, սրտնք կը փախչէին Պաթումէն. իսկ Փոթիի նաւա-

Հանդիսատեսը նույնպէս լեցուն էր փոփոխական ժողովուրդով: Զինուորներն ու ժողովուրդը խառն էին իրենց իրերով ու կահկարասիներով:

Նաեւն ի՛նչելով՝ փութացինք կտախումք նսախ ժամ սոսջ թիֆլիս հասնելու համար: Երբ հասանք Սամտրեդի կայարանը, որ Փոթիի գիծը կը միացնէ Պաթում-Թիֆլիս գլխաւոր երկաթուղադրծին, տեսանք հսկայական միթինկ մը՝ բազկացած մեծ մասամբ Պաթումէն փախած զինուորներէ: Ճաստիօտք ժորտանիւն էր, Վրաց սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան շէֆը, որ յատկապէս եկած էր թիֆլիսէն, զինուորներու արամադրութիւնը բարձրացնելու համար: Ժորտանիայի հետ եկած էին նաև Նոյ Ռամիշվիլին, նոյնպէս սկանստր Վրացի գործիչ մը ու կտախարութեան անդամ, եւ Սէյմի քանի մը անդամներ: Ասոնց հետ շարունակեցինք մեր ճամբան դէպի թիֆլիս: Ժորտանիան եւ ընկերները յոյս կը յայտնէին, թէ Պաթումի սոցիալիստները ճակատար կարելի պիտի ըլլայ ամբողջին:

Երբ թիֆլիս եկանք, իմացանք, որ Վրացիները Պաթումը յանձնած էին զրեթէ սոսնց կոխի՝ տալով միայն մէկ սպաննուած շրամանատորները եւ զօրքի մէկ մասը զերի էին ինկած: Գրաւելով Պաթումը՝ Թուրքերը անմիջապէս սոսջ շարժեցան Օդոբկէթի ուղղութեամբ: Տեղի սենեկան քանի մը աննշան բնդհարուսներ եւ ի վերջոյ Օդոբկէթն ալ դրսուեցաւ Թուրքերուն կողմէ, որոնց միացան չուտով Արասիումանի կողմի թաթարները: Արտաթումանն եւս անցաւ Թուրքերու ձեռքը:

Միամտմանակ Թուրքերը սկսան սոսջ շարժիլ Կարսի ուղղութեամբ՝ նահանջի մղելով հայկական զօրամասերը: Ակսաւ կանոնաւոր պատերազմը: Բնակիչները կը փախէին արշաւող թշնամիին առջևէն, զէպի թիֆլիս:

Երբ մեր պատուիրակութիւնը հասաւ թիֆլիս, անմիջապէս անոր անդամները սկսան զեկուցումներ տալ իրենց պատկանած կուսակցութիւններուն: Իսկոյն շէտուեցաւ կուսակցութեանց տարբեր վերաբերմունքը զէպի սկսուած պատերազմը: Վրացիները չէին սպասեր, որ այդքան զիրուսթեամբ պիտի իյնար Պաթումը, եւ այդ պատճառով ալ շատ վշտացած էին: Վրացական ցանդուսներու մէջ պատերազմը ժողովրդականութիւն չունէր: Մահմետականները հողիով ու մարմնով Թուրքերու կողմն էին, եւ գործեալ պատերազմի ամբողջ ծանրութիւնը կ'իյնար Հայերու վրայ: Պարզ էր, որ սկզբուած պատերազմը պիտի ըլլար պատերազմ մը ոչ թէ Անգլիոյ կառի եւ Թուրքիոյ, այլ Հայերու եւ Թուրքերու միջեւ:

վրտուփի հայտնի մտադրության վերադառնալով Լյուսիանոսի մղչ  
— զւլով ամբաստան մնիկողւածն՝ մի ևս զնովեփով զվիղիղովն՝ զուստով  
հիմն ՚ս Եզ զհոյր զուստ մն զմբ մտեուն մաստիադարսր ոչխուտուտուն  
միսեսարտեմնմսով վրանկիտամց մս ՚զնխեոտմուն զհս Եզու ոչխուզով  
՚զնիճուտրտեղուչ վշտեոտովուզ զարթնակովուստուն իսկուստուն 0

։ Դիսնչակուզար վիվուստովճ զուստեմտուն՝ ՚զլ  
կվեմուր մարուտար մղչունիղ մս ՚բզվ եղզամոմ իսեմղի զտունսնզս  
եևոմ ՚զվուտր զտղթնակեմս եևոս զտղթնակովուստուն Եսոմ ՚զվն  
ոչխուտուտուն ուղծովելն ՚զվիղիղուղն զվուստ զվիվուսնզս ժզսմս ՚մղչ  
— տես զտրմղն մաստեմնմսով ժղմղ զսիղ զսնկիտամց զսամզս զվծմղի  
վիսեսարտեմնմսով վրանկիտամց մս ՚Լզոմ ն ժաչնն ։ Եսոմ զվծմեոթզվ  
սամզմնչն տեղզուս զվիվունկեևոս նմաստովսմ զսեոտմուն ուղն

։ Ետչ Եսկուարմղչ մն զզվիվուզնչարստն՝ մեևնիղ եևո Եզ  
Եզնմղմսով մտրոչ տղխուտուն զվղծովեմզվ մբ եսնիղ զվն զուստ  
՚ նրեակի ուղն ։ Եստղ զնրեակուս վրտովուն Լվուսի մղիսն՝ մեևուս  
— սեսր եղզմղ մս զվտեսն մի ժզսնղ ։ զվուտր տղիկուսամոմ մբեոմ  
— զուստն մղզզովիվուզմտեոտմս ձմուս զուստ զվն մեուզ ճնր զարթնան  
— հոտուսի Եսովն զեոմն ՚ ժզվն զսեսն զս՝ ՚զսիղ վիվուս սս՝ ժզստ  
— մե մզովիվուսմեոտմս վեղսղս ՚ սովեփով ժզստմունսամղի մմզ

։ մաստիադարսր Լյուսիանոս Եզ մզովիվուն  
— տրվն Լղիկուսամոմ ն ժաչնս մս ՚զարթնակեմղ զհս տիղ մզվիվ  
— սնկեոտմնմսով ։ մղզզովիվունիղիկուս զտիստովիվուն զսիստամ զվն զսոմ  
— զմ ժզսմս ՚ մղզզվզմսն Ես մղզզվեևոսնակմղչ զտիղ զնտուտուտրեևս  
Եզուզ զվնիկուտուտր մի զսմս ՚ զվն Եզ զվն Լվուսղ մբ զվիվունիկունսմ  
— մսով մարզմտի տեղզուս վեղս ճնր վսեստեևուտովնղ ։ զվիտչվի վտակ  
— տուտրեևոս մտրոչ Եստուզթնզուզ զնստր չնղզարտեղս զարթնակով  
— վրտուտուն Եզ զտղթնամտրուստակ ՚ վրնղն ՚ վեևուսնզսնղ ։ եևո զուսրեակի  
— ճր ժրտովուզար Լղիմունս Լեստեմնզստովնղ եղչսմս ՚ մզվիվուն  
— տի զուսուզուտու ժուղ չիղզուս զարթնուզմ ճնր տղզվիսեսր մբ ժսոմ  
՚ մզվիվունսնզուզ ճնսմբոս վմսմբուն զսիստիկուս մսղվիկ Եսոմ զսոմ  
— ս ՚ մեևուսնզսնղ զվտեսնղ եևոն՝ ճնր տղզզարտեևոս վովեևոնղ

։ մաստրով մղ եևոնզիտ  
— մսի մրեոտղզստուն մտրոչ տղզզվեևոմն ՚ տեղզուստակ մրտովուն ժմզ  
։ մտրոչ զտղթնուզտեունտուն վրտովուն Լվուսի մնիկուսուն զմի մրեոտղզս  
— տուն մտրոչ Եստղզվեևոմն ։ մտրոչ վմստի մն զմբ վսի զս զվտեսոմ  
— տուն ուտ կով ՚ զվնչնի զսիստղզսովուս զսիստովիվունսն մն զվուսի կնր  
տիկուզ մտրոչ Եստղզսն՝ մրեոտղզստուն մնսեսր մի մտրոչ տղզզուտ  
— տուզ զտիստղզսն ՚ զվն չիվ ՚ Լղիկուս մն ժաչնս ձստու չզսոմ զնրղ

—մի մի մզւոյթանհետընուե . ց . չ տղչ դամզծմաւթ մզւոյթաւաստուոյ  
—ոտատն ճեւմտո վրեւմզատն : ետքին դամզծմաւթ մտրտչ ւստուր  
կտայր չարչ ւսմզգլեւմի : ‘ սնկամաստղուր ‘ ւզ ւսմզգլեւմոն դտոյ  
—տակիրեւնզլլ մզւոյթաւսմզտրտչ Լզտեսչտն մչ զզւոյթանհետն զլմսմ  
—սմ . մտի՛ ցչին վեւատակ զսծեւս ճչր զարթւանհետընուե . ց . չ

։ աղչ դամ

—դծմաւթ մմզուզւոյթանհետըսմ զարթւասւնոչ Լվոնմզլի ւզ զվլղիզլոյթ  
Լզլն ոյւան զարթւամտիտտակ ‘ զւոյթուարեւտմզտչ սլտիզա մտակիրե  
—մեւնզլլ Լզմամասմտ մչ զտնսմ վչ րչեեկմ մտարթուզտուրուզր վզ  
—տոյ 6 զչնմրտե զտիտզսմչեղ զարթւանհետակ կտոյթ եւմի : ‘ ոչեւսճ  
—մզլի ‘ ծար չմզզզւոյթուզամաչլի ծատ Լուրմոնիմզ : ‘ սնի ստ ոչի չթ  
—դմե զվչ զուարթամ մմզլուր ‘ մչ վեւատակ մմտմեւն ւսմզգլուտոչ  
ւսկմզ սիլլ : մչ եկիտըրեակ զարթուսւնոչ ւս զարթւամտիզա մտարթ  
—ւսեւսզլուտոյ մվլկիւնչլրտոյ ւզ վլղիղիզլոյթ մծուտոչ կեւմիմզ ւզ : զչր  
—տիւտոյ զլրտատոճղտ վոտակիրեւնզլլ մչ րչե ւզ մրեւմզտան Լզիտը  
—ւսմտ՛ մչեւսի մտարթւամաստլլե մվմսիչեղեղե ւզ վրտվզտտմսթ մզլճ  
—տալլ ւ մտի ծղտոտչ ւսկմզ ճչր ւսմզգլեւմի : ‘ ծղլմ մ ոչեւնզլլ

։ մզւոյթաւաստի վրնլլ ւստոնմ զսեւտտ եզտատ մչ զուրտ զվլ  
—դիզլոյթ մզտրտմչ զարթըզտ վսմտակ : մզտղիվչմտե ւզ զվմսիչեղեղե  
լմմզղտեւզտ եկիտըրեակ վրեւմզտտն ճչր զարթւամտիտտակ իսմ  
—դեր տլ լր ծրչե զտիտզսմչեղ ւսքմտե եկիտըրեակ զարթուսւնոչ  
ւզմմզ զվլղիղիզլոյթ ւզ մզեւս զվիչ՛ Լվտակ ուղլւս մմզլեւմի մս ‘ զվճ  
—զտրտեւզտ զւս ւվչմսզ՛ զտեղզա վեղա մմզծեւն իսմտ ուլլ

։ զվոտր ւսլրտի

—ոմմզլի մմզլուզւոյթանհետըսմ զարթուսւնոչ զտեղզա զւոյթանհետաւոյսի  
ւսմզգլաթուր տնտի կոչրի ւզ վլղիղիզլոյթ լեւսմսմ՛ ւզ : զւսմզծմաւթ  
ւսեղուարթուր մսմտակ իտրտրտմչ վլղիղիզլոյթ լեւսմսմզ : զչրտիտալլ  
մրտատոճղտ մվ եղմամտամտ զվե Լվմեղլ մտակիրեւնզլլ լեւսմսմզ  
ւ մտարթւամաստլլե մվլղիղիզլոյթ մր զւոյթուամտիտտակ մսզ ւսեւտտիմզլզ  
զվրնլլ զվե՛ Լվմեղլ ‘ զչմտոյսի զվչվլ՛տն մվմսիչեղեղե զվճտալլ : մզճ  
—եւնի մարմակ եմա՛ զտեղզա վեղա զւսմզծա կեւ մս ‘ ծղրոմ ճատտ ւզ  
ոյտլ : զւսմզծա րտամտտ զլ—՛ Լվմեղլ Լտոյա մրտաղա մս չլլ ‘ զրտ  
զրտոյր Լըեւտն րտաղճ վսվն ոլ ւզ ‘ զտի մզլուզւոյթուզամտիտմտ զրտ  
ճմա՛ զարթւամեւտեւտակ մստեւնչմտոյ ուտ զլրտաղաղա վսմտե

։ զւսմզծմաւթ մսմտի Լզղըղտ մչ զտեւտե

—մտի իտեւտի սլտեւտալլ վլղիղիզլոյթ մմզ ‘ ւստոչ զարթւանտտակ  
մծղուտրիտեի կեւս . զչմզղըզւոյթանհետըսմ ոյւստեւտալլ ւզ վզտեւտե  
իւտ զվչ զտաիտեի մմզլուտըճմ՛ զտեւտիւտ : ոչեւտուարտոլլ : տղչ

բայ չէր կրնար վերցնել, իսկ այդպէս պիտի բլրար, եթէ ան գործէր հակառակ Վրացիներուն: Դաշնակցութեան զեկայար շրջանակներու արտոմարտութիւնները շատ յաւարտայայտեց այն ատեն Սէյմի անդամ Յոյսէնի Արտաթանյանին, որ կատարարութեան կողմէ հետեւեալ բնորոշ յայտարարութիւնը բրտաւ Սէյմի մէջ. «Քաղաքացիներ, Սէյմի անդամներ, Դաշնակցութեան Սէյմի խմբակցութիւնը լիակատար յստակութեամբ գիտակցելով այն մեծ պատասխանատուութիւնը, զոր իր վրայ կը վերցնէ այս պատմական վայրկիանին, կը միանայ Անդրկովկասը անկախ հանրապետութիւն յայտարարելու անպարտաւորութեամբ: Դաշնակցութեան մէջ տիրող այս արտոմարտութիւնները կարծիքներ պարզեց քանի մը օր ետք ընդարձակ և զեղեցիկ ճառով մը Սէյմի նիստին մէջ:

Անկախութեան յայտարարութեան զէմ արտոմարտութեան սոցիալիստ-լեզապոխականները յանձին Լ. Թումանյանի, հետագային Հայաստանի Խորհրդարանի անդամ, և Վրացի Լոնա Կրպանիձէն: Այսուհանդերձ ամբողջ դաշինքը խանդավառ ցոյցերով ընդունեց Անդրկովկասի անկախութեան յայտարարութիւնը, որ տեղի ունեցաւ Ապրիլ 9ին: Այդ սրտումէն յետոյ Չիկենկոյի զեկուցում մը բրաւ ճրտակողորն խորհրդածոյովի մասին: Եւ Սէյմը այդ զեկուցումը լրասելէ ետք, առանց յիշարտնութեան ընդունեց հետեւեալ բանաձեւը. «Լսելով հաշտութեան պատուիրակութեան գեկուցումը, Սէյմը կ'առաջարկէ կառավարութեան շարունակել հաշտութեան բանակցութիւնները և միջոցներ ձեռք առնել հաշտութիւնը շատափոյթ կերպով կնքելու համար. միաժամանակ Սէյմը կ'առաջարկէ կառավարութեան ետանդուն միջոցներ ձեռք առնել երկրի պաշտպանութիւնը կազմակերպելու համար»:

Երբ Ապրիլ 9ին Սէյմը սրտեց յայտարարել Անդրկովկասեան հանրապետութեան անկախութիւնը և վերակտել հաշտութեան բանակցութիւնները Թուրքերու հետ, Գեղեղորիի դաշինքը նկատեց այդ որոշումը իբր անխտատնութեան արտոմարտութիւն իր քաղաքականութեան և հետագա քաղաքական ըմբէն: Երբ Ապրիլ 10ի առաւօտը ևս պարզեց պայտտ, հանդիպեցայ Գեղեղորիին սանդուխներուն վրայ գորտ Էլլիս տանն: Հարցուցի իրեն թէ ինչո՞ւ կը հեռանայ, ան պատասխանեց. «Սէյմի որոշումն ետք այլեւս չկայ եին դաշինք»: Բայց ևս առարկեցի, թէ՛ չէ՞ որ նորը չկայ գեղ: Ես ինքս Գեղեղորիի դաշինքի անդամ էի և անհրաժեշտ կը նկատէի պաշտօնի մէջ մնալ, մինչև որ Սէյմը վտաստնութիւն յայտնէ նոր դաշ-

լիճին: Այսօր ալ այն կարծիքէն եմ, որ Գեղեկորի-կարճիկեան-Թա-  
մազլիլի երրորդութիւնը ժամանակէն առաջ լքեց իշխանութիւնը:  
Նոյնը յայտնեցի նաև կարճիկեանին:

Իրականին մէջ, Ապրիլ 9ին, գիշերունէ սկսեալ մինչև Ապ-  
րիլ 13ը երկիրը մտց տուանց օրինակուն իշխանութեան: Եւ Չիսն-  
կելին էր, որ ինքնազուտ ու միահեծան կերպով կը վարէր զոր-  
ծերը: Ապրիլ 13ին միայն Ալյաբը վստահութիւն յայտնեց Չիսնկելի  
կազմած զաւլիճին, սրուն ծրարներն էր անկասութիւն և հաշտու-  
թիւն:

Սակայն, հետաքրքիր է իմանայ, թէ ի՞նչ բրտս Չիսնկելին իր  
միահեծան իշխանութեան երեք օրերու (Ապրիլ 10, 11, 12) ընթաց-  
քին: Ան յարարութեան մէջ մտաւ Վեհայ փաշայի հետ, վերս-  
կաւելով հաշտութեան բանակցութիւնները անոր հետ, հրաման ար-  
ձակեց զոր. նախարրկիւնին յանձնել կարսը Թուրքերուն և զբա-  
ղեցաւ իր զաւլիճի կազմութեան գործով:

Հարկաւ, Չիսնկելին այն ստեղծ իրատեսք շունկը այդ բոլոր  
քայլերն ընելու, որոնցմով առաջ բերաւ վրդովմունքի փոթորիկ մը,  
որ կարող էր շատ վտանգաւոր բարդութիւններու առիթ տայ:

Գեղեկորիէն բաժնուելով՝ էս, այնուամենայնիւ բարձրացայ  
վերև և մտայ կառավարութեան նախադաշի առանձնասենեակը,  
ուր գտայ մինակ Չիսնկելին: Քանի մը աննշան նախադասութիւն-  
ներ փոխանակելէ ետք, հեռացայ, և ներս մտաւ կովկասեան ռազ-  
մաձակատի հրամանատարը: Հետևեալ օրը միայն հասկցուեցաւ, որ  
Ալյաբի նախադաշ Չիսնկելին նամակով մը յանձնած էր Չիսնկելին  
նոր զաւլիճը կազմելու պաշտօնը: Ապրիլ 12ին, կէսօրէն ետք, Աւե-  
տիք Սահակեանը (Հայաստանի Խորհրդարանի ապագայ նախադա-  
շը), Յովհ. Քաջազնունին և Լուսինայի ստացանք Չիսնկելիէն մըտ-  
նելու իր զաւլիճին մէջ. ինձ կ'առաջարկուէր Էլիմտական նախա-  
բարի պաշտօնը, Քաջազնունին՝ ինձամտարութեան, իսկ Սահակ-  
եանին՝ պարենուորման: Մեր կուսակցութեան հաւանութեամբ մենք  
ընդունեցինք մեկի առաջարկուած պաշտօնները: Նոյն օրը երեկոյ-  
նան ժամը 8ին Չիսնկելին հրաւիրեց մեկ նոր կառավարութեան ա-  
ռաջին նիստին՝ կազմելու համար նոր զաւլիճի յայտարարութիւնը,  
որ պիտի ներկայացուէր Ալյաբին:

Չիսնկելին բանալով նիստը՝ բտաւ հետևեալը. «Պարոններ,  
ես շնորհակալ եմ ձեր աշխատակցութեան համար: Ես յամձն առի  
կազմել այս դահլիճը, երբ Սէյմը յայտարարեց Անդրկովկասի առ-  
կախութիւնը և ոյրոյնց վերակսիլ հաշտութեան բանակցութիւնն-

րը: Ուստի մասնանկ չկարսնցնելու համար ես արզև Ապրիլ 10-ին շաբթ մը Էսպլեր րբի: Յայտնեցի Վեիլայ փաշայի՞ն, որ Աէյմը կ'ընդունի Պրեսը-Լիթովալի գաշնագիրը՝ հաղորդելով իրեն որ Կարսի պարպուսին համար արզև տուած եմ անհրաժեշտ հրամանները: Նայմ օրը եւեր հրաման տաի մեր բոլոր զօրքերսն զտղքեցնել զինուորական զործողութիւնները: Ապրիլ 11-ին Վեիլայ փաշան պատասխանեց, որ իմ եւս վաղրեցուցած է զինուորական զործողութիւնները, հրամայելով իր բանակին կանգ առնել Կարսէն երկու վեյլաս հեռաւորութեամ վրայ: Վեիլայ փաշան կը խնդրէր հաշտութեամ պատուիրակութիւն ուղարկել նարէ՞ն Տրապիզոն»:

*Երբ Չիլենկելին վերջացուց իր խօսքը, մենք նոր հասկցանք, որ Կարսը արզէն յանձնուած է Տաճիկներուն: Յնցուած էինք այդ լուրէն: Եւ որովհետեւ չէինք կրնար այդպիսի անակնկալ պայմաններու մէջ մեր վրայ պատասխանատուութիւն վերցնել կատարուած իրօքութեանց համար, Սահակեանը, Քաջագինին Լուս յայտարարեցինք, թէ մեր համաձայնութիւնը մասնակցելու Չիլենկելիի պահանջին մենք Լուս կը վերցնենք: Եւ զորս եկանք նիստէն: Ես անմիջապէս հետախօսով հաղորդեցի Աէյմի Դաշնակցական խորհակցութեան նախագահ Կարճիկեանին իրերու կացութեան մասին: Ան անմիջապէս եկաւ պարտաւ Լուս յարաբերութեան մէջ մտաւ վրաց մենչեւիկ կուսակցութեան նախագահութեան հետ, տեղի ունեցած միջազգայի մասին:*

*Երեկոյեան ժամը Սին, նոյն օրը, իրերու մի՞ճակը հետեւեալն էր: Ճարտանիտ, Գեղեչկարի, Մերեթելի Լուս Ռամիշլիի վրաց մենչեւիկներու կողմէ ու Կարճիկեան, Սահանեան, Քաջագինի Լուս Զ. Յ. Դաշնակցութեան կողմէ խորհրդակցութիւն ունեցանք այն խնդրի մասին, թէ արդե՞օք Չիլենկելին կարող է մնալ իրրեւ թիկնածու վարչապետի պաշտօնին այն ինքնապարտ թայլերէն Լուս, զորս բրած էր Լուս որոնք կը սպառնային մեծապայն բարդութիւններով: Նոյն ժաման, Կարսէն կամ աւելի ճիշդը Ալեքսանդրապոլէն զօր-Նապարէկեանի հրահանգով հարցում կ'ուղղուէր Հայոց Ազգային Խորհուրդին, թէ արդե՞օք ան հասանութիւն տուած էր Կարսը թուրքերուն յանձնելու հրամանին: Ամէն պարագայի տակ զօր-Նազարը կէկեան կը պահանջէր երկարածակ Կարսի պարպուսի պայմանաժամը: Ան կը յայտնէր, որ ամբողջ քրիստոնեայ րնակցութիւնը կ'ուղղէ լիկ Կարսը Լուս առնուապէս շարաթ մը պէտք է, որպէսզի ամէնքը կարողանան հետանալ: Չօր-Նապարէկեան կը շեշտէր նաեւ, թէ*



Կարսի նահանգի մէջ գտնուող Ալեքսանդրապոլի ամրութեանց ոչըն-  
չացումը, փաստորէն Ալեքսանդրապոլն եւս կը յանձնէ Թուրքերուն,  
և ուր անորոշ է, թէ ով պէտք է պաշտպանէ Կարս-Ալեքսանդրապոլ  
երկաթուղու գոյի ծրարը :

Արտակերէք տեղեկութիւններ կու գոյն Կարսի պարպումի  
մասին : Կարսի նահանգային բոմբասը Մամոյեանք պաշտօնապէս կը  
հաղորդէր Ապրիլ 14ին հետեւեալը .

«Անակնկալ եւ արտակարգօրէն արագ յանձնումի հետեւան-  
քով, որ տեղի ունեցաւ Թիֆլիսէն եկած հրամանով, Անդրկովկասի  
այս մեծագոյն ամրութիւնը պաշտպանելու պատրաստուած բնակ-  
չաբիւնը հարկադրուեցաւ լքել ամէն ինչ եւ ձգել Կարսը Ապրիլ  
12ին, երեկոյեան ժամը 5ին՝ յոգնով Կարսը համառաբար կիդեհի  
մէջ : Կր վառէին լաւագոյն շէնքերը : Բնակչութեան նահանգի պատ-  
կերը աննկարագրելի է» :

Այսպիսի պայմաններու մէջ Չխենկելիի վարչապետութիւնը  
անհանգստութիւն էր : Եւ մենք մեր այդ տեսակետը պարզեցինք Վր-  
րաց մենչեւիկներուն, որոնք յայտնեցին թէ համաձայն են եւս վեր-  
ջրներու Չխենկելիի թեկնածութիւնը, բայց չեն ուզեր ուրիշ մենչե-  
ւիկի մը անունը սաղ անոր տեղ : Վրացիները հաղորդեցին նաև, որ  
իրենք համաձայն են, որ վարչապետ գտնայ Քաջաղնուհին, որուն  
աջակցելու պատրաստակամութիւն կը յայտնէին : Այդ յայտարար-  
ութեանէն յետոյ մենք սկսանք խորհրդակցել ստանձին : Քաջաղնու-  
հին բացարձակապէս անբնորոշելի գտաւ Վրացիներու առաջարկը՝  
բաւելոյ հետեւեալը . «Այժմ ամէն բան լսեցած է . Կարսը յանձնուած  
է . գայնի հետ ստանալ անկարելի է . ողէտք է հաշուի առնել կատար-  
ուած իրողութիւնները : Անկարելի է մեր վրայ վերցնել վաղուայ  
պատասխանատուութիւնը : Եթէ մենք ընդունինք Վրացիներու առա-  
ջարկը, այդ պիտի նշանակէ որ մենք մարտսերաւէր կ'ընենք մահ-  
մետակամներուն եւ մենք պատերազմի գլուխ կ'անցնինք Թուրքերու  
դէմ : Ընկր ներկայ ուժերով մենք իրատուն չունինք այդպիսի քայլ  
ընելու» :

Ի վերջոյ, մենք մերժեցինք Վրացիներու առաջարկը :

Կէս դիւլերին, սակայն Վրաց մենչեւիկները նորէն եկան մեզ  
մօտ և յայտնեցին, որ կը կրկնեն իրենց առաջարկը՝ կամ Չխենկե-  
լին կամ Քաջաղնուհին :

Մենք նորէն բննութեան առինք կացութիւնը: Գիտէինք որ հանրային կարծիքը մեզ կը գառաւարտակ Չիւենկէլիի գահճիւնին մասնակցելու համար: Բայց ամէն բանէ վեր կը գտակինք Անգրիսիկապի ժողովուրդներու համերաշխութեան պահպանման գաղափարն ու անհրաժեշտութիւնը: Այդ պատճառով ալ տասնօակեան ժամը 4ին եկանք այն եղբարեացութեան, ինչ որ ինչ էլք շունինք բայց էթէ բնագոյնի Չիւենկէլիի վարչապետութիւնը և մտնել անոր գահճիւնին մէջ: Ու մենք առինք մեր հասանութիւնը:

Կուսակցական գործիչները սկսան բացատրել գոնգուսիստներուն ստեղծուած տագնապայի կացութիւնը և անկէ բխող անխուսափելիութիւնները: Եւ տարիս յաջողեցաւ շնորհիւ շ. Յ. Գալանկցոյութեան գոնգիլի կողմակէրպութեան և անոր ազդեցութեան ժողովրդական գոնգուսիստներուն վրայ: Կուսակցական կարգապահութիւնը յաղթանակեց:

Միևնայն սակեւ Հայոց Ազգային Խորհուրդը դրողուած էր գողթականները Ալեքսանդրապոլ փոխադրելու և անկուսերկու հարցով, ինչպէս նաև հայկական գոնգուսիստ պաշտպանութեան գործով: Արդէն շատերը կը գիտակցէին, որ պատերազմը կը գառնայ գոնգուսիստ-խորհրդան և պիտի շարունակուի հայկական հողի վրայ: Կը պատգուէր, որ շատով կոյկատեան ազգութեանց հակամարտութիւնները իրենց ծայրայեղ սատիճանին պիտի հասնին շնորհիւ տարբեր օրինակացիաներու:

Ապրիլ 15ին գոր. Նապարէկեան և Վեհիկ փաշան հաղորդեցին պաշտօնապէս Կարսի յանձնուժի մանրամասնութիւնները: Վեհիկ փաշա իր հաղորդագրութեան մէջ կը մեղադրէր գոր. Նապարէկեանն այն բանի մէջ, որ հայ գործադրը թնդանթալի կրակի էր բռնած իրբական գորբերը, — բան մը, որ հակառակ էր յանձնման պայմաններուն: Իսկ գոր. Նապարէկեանը կը մատնանչէր այն պարտոյն, որ բնականան պայմաններու մէջ բերպը կրնար պաշտպանուիլ ստիս մը ևս, բայց հաշտութեան յարբեր և բանապնացներու հանդիպումը ուղաննեցին զիմացրութեան ուղին գորբերու և ժողովուրդի մէջ:

Այսպէս թէ այնպէս, Կարսը թուրքերուն ձեռքը ինկաւ, և մեր գորբերը նահանջեցին զէպի Ալեքսանդրապոլ:

Այս փաստերէն պարզ կ'երևի, որ Անգրիսիկապի անկախութեան յայտարարման, հաշտութեան բանակցութեանց և Կարսի յանձնուժի ծանրակշիռ ինդիքներուն մէջ բախտորոշ դեր կատարեցին Վրացիները: Խանդավառ ճառերով աննք ուղաննեցին պատե-

բազմր, բայց հասցին Ծ օր անցած, հաշտութեան խօսք բացին և ճատագրական քայլերը բրին: Եւ այս գերը կրցան խողալ, որովհետեւ իրենց ետեւ կանդնած էին նաև Անդրկովկասի մահմետականները:

Չխնկելիի գահձիճի կազմը հետեւեալն էր. — Վարչապետ և արտաքին գործերու նախարար՝ Չխնկելի, ներքին գործոց նախարար՝ Ռամիշվիլի, Էլեմտական նախարար՝ Ա. Խատիսեան, հազոր-դակցութեան նախարար՝ Մելիք Ասլանով (Թաթար), արդարադատութեան նախարար՝ Խան Խոյսկի (Ատրպէյճանի ապագայ վարչապետ), գինուորական նախարար՝ Գէորգաձէ (Վրացի), Հանրային կրթութեան նախարար՝ Ուսուրպէկով (Ատրպէյճանի ապագայ վարչապետ), առևտուրի նախարար՝ Հաճինսկի (Թաթար), աշխատանքի նախարար՝ Արամայիս Երզնկեան, պարենաւորման նախարար՝ Աւետիք Սահակեան, ինտամուտրութեան նախարար՝ Յ. Քաջագնունի և պետական վերահսկիչ՝ Հայտարով (Թաթար):

Ինչպէս կը անան ընթերցոյցը, Չխնկելիի գահձիճը զօրաւոր էր իր կազմով, որովհետեւ իր մէջ տուած էր Անդրկովկասի ապագայ հանրապետութիւններու գրեթէ բոլոր վարչապետները, նախարարներն ու գեապանները:

Չխնկելիի կարգացած յայտարարութիւնը՝ Մէյմի մէջ, Երկու Հիմնական նպատակ կը պաշտպանէր՝ հաշտութիւն և անկախութիւն: Ատկէ դատ ան կը ծանուցանէր հետեւեալ շինարարական ծրագիրը. «Հողային հարցի լուծում, գործաւորական դասակարգի միճակի բարելաւում, Էլեմտական անկախ պրութեան ստեղծում, պարենաւորման գործի կանանաւորում, հպարդակցութեան միջոցներու վերականգնում և կոտաժարական հաստատութեանց պատահանցում պետական նոր իրաւակարգին»:

Չխնկելիի յայտարարութեան ընթերցումէն յետոյ արտայայտուեցան Անդրկովկասի երեք պիտար կուսակցութեանց, այսինքն՝ ազգութեանց ներկայացուցիչները: Մուսավաթի, այսինքն՝ Թաթարներու կողմէ խօսեցաւ Ռատուրպաղէ, որ տունձին խանդավառութեամբ ուղծունեց Անդրկովկասի անջատումը Ռուսիայէն: Վրաց մենշևիկներու կողմէ խօսեցաւ Մերեթելի, փայլուն հոտար մը, որ կարելւոր գեր կոտարած էր յեղափոխական Ռուսիայ մէջ: Մերեթելին Անդրկովկասի անջատումը Ռուսիայէն պատճառարաննց Երկու զրլխաւոր շարժառիթներով — արտաքին ճնշում (Թուրքերու կողմէ) և անկարելութիւն ապրիլ Ռուսիայ հետ ընդհանուր կեանքով այն օրէն ի վեր, Երբ իշխանութիւնը անցած է սուլէաիկներու ձեռքը, ո-

բոնք կը սպաննեն ժողովուրդի սպին եւ կը գործեն միմիայն բռնութեամբ :

Հ. Յ. Դաշնակցութեան կողմէ Ալլաի այս պատմական նխախնայականացումը Ս. Կարճիկեան, որ բաւ հետեւեալը :-

«Քաղաքացիներ, Ալլաի անշամներ, Հ. Յ. Դաշնակցութեան խմբակցութեան կողմէ պէտք է յայտարարեմ ձեզ. թէ մեր խմբակցութիւնը պիտի պաշտպանէ բազմազան այն ծրագիրը, որ ներկայացուցաւ այսօր Անդրկովկասեան հանրապետութեան վարչապետի յայտարարութեան մէջ :

«Գլխաւոր. ամէնէն էական հարցի՝ Անդրկովկասի հանրապետութիւնը ամբողջովն վերաբերմամբ մենք կը կարծենք, որ կանոնադրութիւնը արտաքին կարգի դժուարութիւններ ներկայացնող ինքնիշխան առջեւ է կանգնած : Անկախութեան յայտարարման փաստը՝ ներկայ արտակարգ կարիւրութիւն ունեցող վայրկեանի մէջ եւ Անդրկովկասի սպառնացող մահացու վտանգին տակ՝ ինքնին արդէն կ'ըսէ, թէ այդ հայրը կատարուած է արտաքին ուժերու ճնշման հետեւանով : Այդ ուժերու ճնշումը կու գայ պոլշեիկեան Ռուսիայէն եւ արտաքին թշնամիէն : Եւ ահա այդ արտաքին ուժերը, որոնք հարկադրեցին մեզ յատկապէս այսպիսի վայրկեանի մը յայտարարել Անդրկովկասի անկախութիւնը, կը դրոշմեն Անդրկովկասի սպառնացողութիւնները եւ Անդրկովկասեան դեմոկրատիան հրապարակ բերել որո՞ւ սատանամներ : Արդեօ՞ք ներկայ վայրկեանին այդ է փրկութեան ճամբան, թէ կը տանի դէպի կործանում :

«Ահա հարցեր, որոնք կը մտածողէին մեզ : Անդրկովկասեան ժողովուրդներու՞ այս վարանումը ցոյց կու տայ, թէ չկայ այն վրատահալութիւնը, որ անկասկածաւ էր երեսն բերել ներկայ հանդիսաւոր վայրկեանին : Պէտք է ժխտել այս փաստը :

«Տարակաշ չկայ, որ շատ շտտերը, եւ ոչ միայն բազմազան խմբակցութիւններն ու կուսակցութիւնները. այս հիմնական հարցի մտօն տարակարծիք են : Եւ ահա Անդրկովկասեան նոր կառավարութեան առջեւ դրուած է պահանջ մը՝ ներշնչել այդ վրատահալութիւնը, հասկցնել Անդրկովկասեան ժողովուրդներուն, թէ անկախութիւնը բարիք է ինքնասիւնիքեան եւ թէ ան է Անդրկովկասի փրկութեան ճամբան : Այս ուղղութեամբ Անդրկովկասեան կառավարութեան առջեւ կանգնած են շատ ծանր դժուարութիւններ : Եւ երէ ունիկա կարեւոր յոյսահարել այդ դժուարութիւնները, վրատահալութիւն ներշնչել Ան-

դրրկովկասի դեմոկրատիային, յէ անկախութիւնը պիտի փրկէ Անդրկովկասը եւ տանի ղէպի ազատ կեանք, ատիկա պիտի ըլլայ նոր կառավարութեան մեծագոյն ծառայութիւնը հանդէպ Անդրկովկասի: Որովհետեւ երէ չըլլայ այդ վատասութիւնը, երէ շարունակուին վարսնումները, այդ պարագային եւ պիտի ըսեմ մեր կուսակցութեան կողմէ, յէ ո՛չ մէկ կառավարութիւն եւ ո՛չ մէկ ուժ պիտի չկարենան ամբապնդել Անդրկովկասի անկախութիւնը եւ հաստատուն հիմք ձգել պետական նոր կազմի համար:

«Կառավարութեան առջեւ դրուած մէկ ուրիշ արտակարգօրէն ծանր խնդիր է հաշտութեան կնքումը: Այն պարագան, որ նոր կառավարութեան գլուխ կանգնած է հաշտութեան նախկին պատուիրակութեան նախագահը, կ'ըսէ արդէն յէ նոր կառավարութեան պիտի դուռին շատ ծանր հաշտութեան պայմաններ: Տյապիգոնէն հաս եկած պատուիրակութիւնը լիովին վստահ էր, յէ կարելի պիտի ըլլայ կրճէի հաշտութիւն մը, սր պիտի փրկէ Անդրկովկասը: Եւ պատուիրակութիւնը ոչ միայն ինքի վստահ էր. այլ եւ կարողացաւ այդ վատասութիւնը ներշնչել նաեւ զանգումներուն: Այս պարագան ծանր պարտականութիւններ կը դնէ ոչ միայն պատուիրակութեան, այլ նաեւ կառավարութեան վրայ. այդ մտրհակով կառավարութիւնը կը պարտասարտի վճարել:

«Կառավարութեան առջեւ դրուած հարցերէն ոչ նուազ դժուարութիւն կը ներկայացնէ նաեւ Անդրկովկասի հողային միասնորոշումը ստեղծումը՝ ըստ ազգութեանց: Անկասկած, առանց այդ հիմնական հարցի լուծման. կարելի չէ խօսիլ խաղաղութեան եւ հանգստութեան մասին: Երէ կառավարութիւնը կարենայ լուծել այս խնդիրը, որուն առջեւ աշխարհի ծանր արգելներ են դրուած, այն ատեն անկա կը դառնայ Անդրկովկասին արժանի կառավարութիւն մը:

«Ահա այս գլխաւոր հարցերու վերաբերմամբ Հ. Յ. Գաշնակցութեան խմբակցութիւնը իր բոլոր միջոցներով պիտի պաշտպանէ նոր կառավարութիւնը առէն կերպ աջակցելով անոր եւ ջանալով դիւրացնել կառավարութեան գործը՝ զանգումները պատրաստելու, անոնց վատասութիւնները ներշնչելու եւ երկրի մէջ համապատասխան մրրնուորտ ստեղծելու աշխատանքին մէջ»:

*Այս ճատերէն Լուրը, Ալէքս ընդունեց Հետեւեալ բանաձեւը.*  
*«Հասելով անկախ Անդրկովկասեան Հանրապետութեան առաջին դահլիճի պետին յայտարարութիւնը, Ալէքս ծայրալեզօրէն անհրաժեշտ*

կը գտնէ իրազորմամբ տեսնել յայտարարութեան մէջ յիշուած կէտերը՝ արտաքին և ներքին քաղաքականութեան վերաբերեալ և , խոստանալով իր լիակատար աջակցութիւնը կառավարութեան՝ կ'անցնի չերթական հարցերուն»:

Հետեւեալ օրը կառավարութիւնը դարձի վրայ էր արգէն: Ես ևս գացի ելեւմտական նախարարութիւն և սկսայ աշխատանքի:

Անդրկովկասը իր սեփական գրամն ունէր արգէն: Անոնց արմէրը շատ լաւ էր՝ սուպլին Չ Ֆրանք: Ապրանքներու գիները բնական էին: Ինձ ժող և կապառու իրական մը առևտրական դասին կողմէ , Թիֆլիսի վաճառականներու առաջ Միլոյի գլխաւորութեամբ: Պատուիրակութիւնը խոստացաւ ինձ ամբողջ առևտրականներու կողմէ լիակատար աջակցութիւն: Ես հրաւիրեցի Հին ռեժիմի փորձուած պաշտօնեաներ՝ Պ. Կելարեւ , Օպոչինին և ուրիշներ , որոնց յանձնեցի Անդրկովկասի հանրապետութեան պիտոճէի պատրաստութիւնը և գծեցի ելեւմտական բարենորոգմանց ծրագիրը:

Սակայն , քաղաքական գործերը և մասնաւորապէս Թուրքերու բնթացքը թայլ չէին տար հանգիստ սրտով գրազուելու մեր ընթացիկ աշխատանքներով: Փոզովուրդի մէջ ստաճ և կամ յուզումը մեղմացնելու համար որոշեցինք քննութիւն կատարել այն մասին , թէ ո՛րքան ժամանակ կարող էր կրնար պաշտպանուիլ , Եթէ անոր յանձնումի հրամանը չըլլար: Ընդհանուր հրամանատարի սպայակոյտի պէտքեր . Լեվանտոյի յայտնեց Հետեւեալ կարծիքը գրաւոր կերպով . «Կարսի գրութիւնը Ապրիլ Աին անյուստի էր և անոր ժամերը հաշուարտած էին: Բանակի սպին ինկա այն առեւն , Եր Թուրքերը մտեցան Կարսի ամրութեանց երկու շիրմաթը հեռաւորութեան վրայ: Դժուար է սպասել թէ Կարսը պիտի կարենար պիտազրել մէկ շաբաթ»:

Իմ տրամադրութեան տակ ևս այս պահուս րոյրը հեռագիրները , սրտնք կը վերաբերին Կարսի յանձնումին , — թէ՛ անոնք , որ Թիֆլիսէն պացած էին և թէ՛ անոնք որ Թիֆլիս և կամ էին , Ապրիլ 10-17: Շատ երկար պիտի ըլլար այդ հեռագիրներու քաջանդակութիւնը մէջբերելու համար . կ'ուզեմ սակայն թել , թէ այժմ այլ , երբ նորէն աչքէ կ'անցնենք գանոնք , կատարուած պէտքերէն գրեթէ վեց տարի ետք , չեմ կրնար սղերկութիւն շանուանել Կարսի յանձնումը կամ այլ յանձնումին Լգանակը:

Որովհետեւ հասարակութիւնը կը շարունակէր յուզուիլ Կարսի խնդրով , կառավարութիւնը 1918 Մայիս 5ին հրատարակեց մանրամասն և փաստացի կերպով կողմուած պաշտօնական հազարդարու-

Թիւն մը՝ ներկայացնելով այն բոլոր պարագաները, որոնք կը բա-  
ցատրէին Կարոտի յանձնումը :

Այն տառն, երբ Թիֆլիսը զեռ կ'ապրէր Կարսի յանձնման խո-  
սակցութիւններով և յուզումներով, հայկական պատաններու մէջ  
տեղի կ'ունենային պատերազմական զործպութիւններ : Ապրիլ 16ին  
մեր զօրքերը պարպեցին Կարսի նահանգը և կեդրոնացան Ալեքսան-  
դրապոլի մէջ : Թուրքերը ժողովան Արփաշային և կեցան Ալեքսան-  
դրապոլէն վեց վերստ հեռաւորութեան վրայ : Գաղթականները Կար-  
սէն, Էրզրումէն, Վանէն և Մուշէն լեցուեցան Երեւանի նահանգը :

Երեւանի մէջ կը գործէր տեղական Արդային Խորհուրդը, ու-  
րուն զեկամարն կը Արամը և զինուորական հրամանատարը՝ Գրօն :  
Այս երկու զօրեղ զէմքերը կը կոտոյարէին Երեւանի թէ՛ քաղաքա-  
ցիական և թէ՛ զինուորական գործերը : Երեւանի ճակատի վրայ մեծ  
հեղինակութիւն կը մտնէր զօր . Սիւրիկեանը, որ տարի մը առաջ  
ինքնասպանութիւն գործեց Խորհրդային Հայաստանի մէջ : Երեւանը  
կ'ապրէր իր սեփական ներքին կեանքով : Հոն կը հասուննար ազգա-  
յին պետական կորիցը : Ռազմամթերք և զրամ մէնք կ'ուղարկէինք  
Երեւան, որ ինքզինքը զբեթէ անկախ կը դար Թիֆլիսի կեդրոնա-  
կան կոտոյարութենէն և ամբողջովին կ'սնուած էր ռազմաճակատի  
գործերով : Երեւանի այս անջատ և զբեթէ անկախ վիճակը աւելի  
զօրացուց, երբ Մայիս 15ին Թուրքերը գրաւեցին Ալեքսանդրապոլը  
և կտրեցին Թիֆլիս—Երեւան երկաթուղիները :

Թիֆլիսի մէջ մենք կը շարունակէինք ամբողջովին Անդրկով-  
կասեան անկախ հանրապետութեան գաղափարը : Հրատարակեցինք  
անկախ շրջաբերական մը՝ ուղղուած բոլոր իշխանութիւններուն՝  
հրահանգելով խտտօրէն հետևել Անդրկովկասի ժողովուրդներու խա-  
ղաղ կենսակցութեան, վերջ տալ աւազակութիւններուն, ընդհարում-  
ներուն և ամէն տեսակի բռնութիւններուն և խտտանալով փայլուն  
ապագայ մը, երբ «անիշխանութիւնը վերնայ և Անդրկովկասեան  
հանրապետութիւնը գառնայ իրապէս անկախ և զօրաւոր պետու-  
թիւն մը» :

Սակայն, մեր յորդորներն ու ձեռք առած միջոցները անզօր  
էին խաղաղեցնելու Երկիրը : Թաթարները կը շարունակէին յուզուել  
և ամէն տեսակ արդիւրներ յարուցանել : Ուր որ կարող էին, կը  
խանդարէին Հայերու ինքնապաշտպանութեան գործը՝ արշաւող ճա-  
ծիկներու ղէմ :

Գաղթականներու տարերային հոսանքը ղէպի Երեւան, մթերք-  
ներու պակասը, պատերազմական զործպութիւնները և համաճա-



**Arnd Pöngel**



բակ չիտանդութիւնները այնպիսի ծանր կացութիւն մը ստեղծած էին մասնաւորապէս Հայկական դատաներու մէջ, որ անհրաժեշտ էր փութացնել Հաշտութեան կնքումը: Բանակցութիւնները կը ժտեանային իրենց վախճանին: Խորհրդածոցովը պիտի ունենար Պաթումի մէջ: Նորէն սկսանք կայմել պատուիրակութիւն մը, աւելի սակաւաթիւ: Պատուիրակութեան դյուխ անցաւ դարձեալ Զիննկէլին, իսկ անդամներն էին՝ Հայերս կողմէ՝ Քաջաղնուսին և ևս: Մեր առաքելութիւնը այս անգամ մեզ շատ գիւրին կը թուէր: Կը մտածէինք թէ պէտք է միայն երթալ և ստորադրել դաշնագիր մը, Համաձայն Պրեսի-Լիթիւմսի պայմաններուն:

Մենք դուրս եկանք Թիֆլիսէն Մայիս 5ի երեկոյեան, և յաջորդ օրը Երեկոյեան արդէն Պաթում էինք: Բոլոր պատուիրակներն ալ իջևանեցան Հոթել Էմբերիայի մէջ: Իբրև խորհրդական մեզ կ'ուղկէր նաև Միմոն Վրացեանը: Թաթարներու կողմէ իբրև պատուիրակներ կ'կամ էին Ռատուրպէկովը, Խան Սոյակին և Հաճինսկին, իսկ իբրև խորհրդական՝ Ռատուր Զատին: Վրացիներու կողմէ՝ Ալախով, Նիկոլաձէ, Ռիխիաձէ: Տաճիկներու կողմէ կ'կամ էին Թուրքիոյ տրպարպատութեան նախարար և պետական խորհուրդի նախագահ Սալիք պէյը և օսմանեան գործերու կոմիսսեան ճակատի հրամանատար Վեհիպ Մեհմէտ փաշան: Գերմանիոյ կողմէ միայն ներկայացուցիչ մը կար՝ Զօր. Ֆուն Լոսով:

Այս պէպերու ժամանակամիջոցին Ռոսիոյ ձայնը չէր լսուեր: Կասկանչական է յիշատակել Հոս շատ հետաքրքրական հետադիւր մը, որը ստացած էինք Պաթումի անկումէն մէկ օր առաջ, Մարտ 31ին: Այս հետադիւրը շատ քիչերուն ծանօթ է, բայց իր շահեկանութեան պատճառով ուրժէ մէջրերէլ: Հետադիւր հետեւեալն է.

ՄՈՍԿՈՒԱ.— Թրքական բանակը առաջ կը շարժի Պաթումի, Կարսի, Արտախանի ուղղութեամբ՝ աւերելով երկիրը և ոչնչացնելով գիւղական բնակչութիւնը: Հայերու հետագայ բախտի ամբողջ պատասխանատուութիւնը կ'իյնայ Գերմանիոյ վրայ, որովհետեւ անոր պահանջով ռուսական զօրքերը դուրս քերուեցան հայկական նահանգներէն, և այժմ Գերմանիայէն է կախում զայն քրքական զօրքերը իրեն յատուկ բնութիւններէն վրէժի և բշխամութեան հողի վրայ: Գժուար է հաշտուիլ այն մտքի հետ, որ Գերմանիոյ պէս կուլտուրական պետութիւն մը, որ հնարաւորութիւն ունի ազդելու իր գիւնակից Թուրքիոյ վրայ, քոյլ պիտի տայ, որ Պրեսի-Լիթիւմսի դաշ-

նագիրը դառնայ մեծ Կատերսագմի մէջ իր կամբէն անկախ մտած հայ ժողովուրդին համար ազգիւր անմատչելի դժբախտութեան : Ուստի , հարկուրդը համոզուած է , որ դուք անհրաժեշտ միջոցներ ձեռք կ'առնէք , ազգիւր Իրաւական իշխանութիւններու վրայ , կանխելու համար հայ բնակչութեան ոչնչացումը , որպէսզի սեղի շուրհեանայ այն ինչ որ եղաւ Արտասանի մէջ : Ձիչերին , Կարախան :

Ես շատ ուրախ պիտի բլլայի , Եթէ Ձիչերին և Կարախան այսօր անպատ մը ևս կարողային իրենց այդ Հետադիրը ու անկէ Հանկէն Համապատասխան կարակացութիւնը . — այն ինչ որ անոնք կը պահանջէին Թուրքիոյ պաշտակից Գերմանիայէն , այսօր կրնայ իրադործել ինքր՝ Թուրքիոյ ներկայ պաշտակից Ռուսիան , որ դիջեր է Թուրքիոյ Հայաստանի կէսը :

Մէկ խօսքով՝ այն սառն Անդրկովկասը և Թուրքիան կանգնած էին դէմ դիմաց : Կատարուած իրողութիւն էին արդէն Տրապիզոնի խորհրդածուցովին մէջ զբուած Երկու պայմանները՝ Անդրկովկասի անկախութիւնը և Պրեսթ-Լիթովսքի պաշտակիրը : Բայց կար աւելի բան մը ևս , զոր Հաշուի առած էին Թուրքերը , այն է՝ Կարը և Պաթումը Թուրքերու ձեռքն էին : Երբ մենք Եկանք Պաթում , մերջինս արդէն իրբախան տեսք ունէր , — ամէնուրեք ասկեարներ , առետուրը դադրած էր , արմէրասուր իրերը կ'անհետանային , խանութները կը թալանուէին պիշերը ասկեարներու կողմէ , քաղաքը դրեթէ մեռած էր , փողոցները ամայի էին : Այն Հիւրանոցին՝ մօտ , ուր մենք իջեանած էինք , կը գտնուէր խոշոր զեղատուն մը : Գիշերը մեծ կտորերով Թուրքերը Եկան ու պատարկեցին այդ զեղատունը : Հետապային , պինդադարէն Ետք , Ես լսեցի , որ զեղատան թալանի մէջ ամբաստանուեր է զլիսասուր Հրամանատար Վեհիպ փաշան : Փողոցներով կը տանէին Վրաց զերի դիւնուրներ : Համեմատարար ինքզինքնին լաւ կը զգային Ռուսերը , որոնց Հանդէպ Թուրքերը ներողամիտ և ուշադիր էին , որու սպաներուն ոտճիկներ կու տային , ոմանց ծառայութեան մէջ կ'ընդունէին . մէկ խօսքով՝ ամէն կերպով կը ջանային սիրուահարի պանսք :

Քողաքին մէջ Հայեր զրեթէ չէին մնացած , բոլորն այ Հեռացեր էին Թիֆլիս : Համեմատարար աւելի շատ կային Վրացիներ : Արդու ինի մէջ միայն Հայերը մնացեր էին իրենց տեղերը՝ յանկարծակի Եկած զահալիթոց զէպքերէն :

Պաթումի մէջ մեր առաջին զործերէն մէկը Եղաւ այցելու-

Թեան երթալ թրքական պատուիրակութեան նախագահ Սալիլ պէյի  
և գերմանական ներկայացուցիչ Զօր- Ֆոն Լոսսովի մօտ : Սալիլ պէյը  
հասա մտրդ մըն էր, ուսած զէմքով ու լա կը խօսէր Քրտնսերէն :  
Իր մասին այն կարծիքը կտր, թէ թուրք պետական զործիչներու մէջ  
ամէնէն մեղմ, չափասը և գիծոյ մէկն է : Սալիլ պէյը կը պաշտպա-  
նէր այն գաղափարը, թէ Անգրկոմիտասը և թուրքիան ամենասերտ  
բարեկամներ պէտք է գտնան : Յայտնի է, սը Սալիլ պէյ յայտատան  
էր գտած Զահրայի մօտ այն տակն, երբ ներխուստարդ-թուրքերը հա-  
րածանքի ենթարկուեցան Նազիմ փաշային յեղաշրջման ատեն : Բայց  
երբ 1915 թ. Զահրայի կիներ յուսահատօրէն գիւժած էր Սալիլ պէյին,  
ինչպէս լոյս պաշտպանել իր ամուսինը, սն կտրուի կերպով մերժած էր  
սրեւէ օյնութիւն բնծայել :

Թրքական երկրորդ պատուիրակը Վեհիպ փաշան էր : Այս  
մտրդը շատ ինքնավստահ չարժուածներ ունէր, խլացնող ձայնի տէր  
էր, գարձանախօրէն գիտէր բացայայտօրէն ստել՝ ուղիղ նայելով  
աչքերով մէջ : Երբ Վեհիպ փաշա գարձանը կը յայտնէր իր զօրքե-  
րու կատարած այս կամ այն բարբարոսութիւններու մասին, այն  
տպաւորութիւնը կը ձգէր, թէ իսկապէս անտեղեակ է այդ ցաւայի  
իրադարձութիւններուն : Բայց յետոյ փաստերը մեղ համոզեցին, թէ  
ինքն էր հեղինակը իր զօրքերու կատարած բարբ փայրարութիւննե-  
րուն : Վեհիպ փաշան գարձանայի քաղաքապար և սիրալիր էր մեղ  
հետ, զէ կը խօսէր Քրտնսերէն, բայց տւելի լա՝ գերմաներէն :

Զօր- Ֆոն Լոսսովը բարձրահասակ, զդուտ ձերունի մըն էր, որ  
անկեղծօրէն վրդոված էր թրքական խժոյժութիւններէն, բայց, նը-  
ւիրուած բլլալով իր հայրենիքի շահերուն, ամէն կերպ կը ջանար  
հստակացրել թեան յետոյ գտնել կովկասեան ազգերու և թուրքիոյ  
միջեւ : Վրացիներու վերաբերմամբ Զօր- Ֆոն Լոսսովը որոշ հրահանդ-  
ներ ունէր, նախնական համաձայնութիւն մը արդէն զոյացած էր  
Վրացիներու և Գերմաններու միջեւ : Վրացիները մենաշնորհներ տը-  
ւած էին Գերմանիոյ, Օլիթիի նաւահանդիստի վերաբերմամբ, ինչպէս  
նաև Վրաստանի մանկանէլղը և հարուստ անտառները շահագործե-  
լու մասին : Տնտեսական այս ստանձնաշնորհումներու փոխարէն  
Գերմանիա խոստացած էր պաշտպանել Վրաստանի սահմանները :

Մեր և թուրք պատուիրակութեանց ստաջին պաշտօնական  
նիսար տեղի ունեցաւ 1918 Մայիս 11ին տեղական ակումբի շէնքին  
մէջ : Կը նախապահէր Սալիլ պէյը համաձայն միջազգային օրէնքի,  
որով խորհրդամոզովի մը նախապահութիւնը կը տրուի այն պետու-  
թեան, որուն հոգամասին վրայ կը զուժարուի խորհրդաժողովը :

Անդրկովկասեան Ալձի ներկայացուցիչներէն զատ՝ խորհրդաժողովին մասնակցեցան Հիւսիսային Կովկասի և Տաղստանի ներկայացուցիչներն ևս :

Ողջոյնի ճառերէն Լուրը Չիւենկելի Անդրկովկասեան պատուիրակութեան կողմէ յայտարարեց Ա) Թէ Անդրկովկասը անկախ պետութիւն մըն է , որու մասին արդէն հաղորդուած է պաշտօնապէս բոլոր պետութիւններուն և ամէնէն առաջ Թուրքիոյ , և Բ) Թէ իրբև հիմք բանակցութիւններու պատրաստ է ընդունիլ Պրեսթ-Լիթոմ-Վլադի գաղնադիրը , — պայման մը , որ պրած է թրքական պատուիրակութիւնը Տրապիզոնի մէջ :

Պուսափողական ժամի մը հարց ու փորձ Լուր Պալի փաշա հետեւեալ յայտարարութիւնները բրտու , որ միանգամայն կը պարզէր Թուրքերու ծրագիրները .—

«Տրապիզոնի բանակցութիւններէն յետոյ սեղի եմ ունեցած բաղիտումներ եւ արիւնահեղաւթիւն Թուրքիոյ եւ Անդրկովկասի գործերուն միջեւ : Ուստի . մեր յայտարարութեանց բնոյթը եւ հիմքը արդէն փոխուած են , հետեւաբար ես չեմ կրնար բոյլ տալ , որ մեր ներկայ բանակցութեանց իբրի միակ հիմք ծառայէ Պրեսթ-Լիթոմ-Վլադի դաշնագիրը» :

Այս յայտարարութիւնը նախորոշեց հետեւեալ դէպքերու ընթացքը : Ասիկա անսպասելի չէր մասնաւորապէս մեզ համար : Այս նկատումով էր , որ ևս և Քաջապուտին Տրապիզոնէն հեռադրած էինք Թիֆլիս , թէ «սակցածուած պայմաններու մէջ Պրեսթ-Լիթոմ-Վլադի դաշնագիրն ընդունելու փոքրագոյն շարժին է» : Այդ խօսքերը ըսուած էին Մարտ 28ին : Այդ օրէն անցած էր 44 օր աւելորդ պայտարներու եւ յուսախտութիւններու : Մենք ուշացած էինք , ինչպէս ժամի մը անկամ ուշացանք մեր վերջին տարիներու պատմութեան մէջ : Պատճառը միշտ ոչ այն էր , որ մենք ղերպոյնահատեցինք մեր սեփական ուժերը և ստորագնահատեցինք թշնամիին ուժերը :

Ուստի պէ՛յի յայտարարութեան յետոյ սկսան վիճարանութիւններ , զորս Ուստի պէ՛յր անուանեց ապարդիւն ու անիմաստ : Շուտով պարզուեցաւ , որ Թուրքերը արդէն պատրաստ ունին հաշտութեան դաշնագրի նոր ծրագիրը , զոր Ուստի պէ՛յ անմիջապէս յանձնեց Չիւենկելիին : Գերման ներկայացուցիչ Ֆոն Լոսովը բաւ , թէ

ինք ճնկատի պիտի առնէ թրքական եւ Անդրկովկասեան պատուիրակութիւններու տարբեր տեսակէտները Պրեսթ-Լիթովսքի զաշնագրի մասին, սպարտաստ է ուսումնասիրելու թրքական նոր զաշնագրի ծրագիրը եւ մասնակցելու անոր քննութեան գերման շահերը սրաշաղպանելու համար :

Այս յայտարարութեան վրայ ժողովը փակուեցաւ : Մենք տուն դարձանք չափազանց ծանր եւ մտայլ տպաւորութեան տակ : Հարկաւ, մեր առաջին գործը եղաւ ծանօթանալ թրքական զաշնագրի նոր ծրագրին, որ մեկ յանձնուած էր կնքուած ծրարի մը մէջ : Երբ բացինք ծրարը, մեր ստաջին հայկացիք ինչպէս սահմաններու վրայ, որոնց նկարագրութեանն տեսնք, թէ Հայաստանն կը խլուէին ոչ միայն Կարսի նահանգը, այլ նաեւ Ալեքսանդրապոլը, Սուրմալուի գաւառը եւ Երկաթուղին, Հայաստան գաղտագորտուած էր ինչդո՞ւելու անտանկլորէն նեկ սահմաններու մէջ : Վրացիներն եւս ուրախանալու բան մը չառնէին, որովհետեւ իրենցմէ կը խլուէր Ախալցք-խաչի գաւառի մէկ կարեւոր մասը : Մեր վրդովմունքին սահման չկար :

Հետեւեալ օրը, Մայիս 12ին, մեր պատուիրակութիւնը հաւաքուեցաւ խորհրդակցութեան : Ընդհանուր կարծիքը այն էր, թէ պէտք է պինդ կանգնել Պրեսթ-Լիթովսքի զաշնագրին գեանին վրայ եւ յետոյի գոյն ստորագրող Գերմանիոյ, Աստրիոյ ու Պուրկարիոյ վրայ : Ժողովն յետոյ մենք անմիջապէս գոյնք Զօր. Ֆոն Լոսովի մօտ, որ միակ ներկայացուցիչն էր Թուրքիոյ զաշնակիցներուն, եւ մեր եռանդուն բողոքը ներկայացուցինք Պրեսթ-Լիթովսքի զաշնագիրը այնքան կոպիտ կերպով խախտելուն համար : Զօր. Ֆոն Լոսովը արդէն գիտէր Թուրքիոյն պահանջները : Զուսպ, բայց որոշ կերպով ան հասկցնել տուաւ մեկ, թէ ինք համամիտ է մեզ, սակայն պարտաւոր է վերապահ ըլլալ :

Լեւիստուի «Գերմանիա եւ Հայաստան» զբոլն կը հասկցուի, որ Զօր. Ֆոն Լոսովը նոյն գիշերն իսկ վրդովմունքով լի հեռագիր մը ուղղած է Պրեսթ զերման գեապանին եւ Պերլինի կառավարութեան՝ թրքական պահանջներու մասին : Այդ հեռագրի բովանդակութիւնը հետեւեալն է .

«Ամէն սահման անցնող քրքական պահանջները՝ անջատելու գուտ հայկական գաւառները, ինչպէս եւ Ախալցախքը, Ալեքսանդրապոլը եւ Երեւանի նահանգի մասերը, կը խախտեն Պրեսթ-Լիթուս-

վըսֆի դաշնագիրը ազադակող կերպով եւ նկատի ունին ոչնչացնել Հայքը Անդրկովկասի մէջ: Այսօր երեկոյեան Թուրքերը վերջնագիր ներկայացուցին Բոյլ տալու, որ իրենց զօրքերը անցնին Ալեքսանդրապոլի վրայով Ջուլֆա եւ այդ մասին ոչինչ հաղորդեցին ինձ: Եւ բազմեցի այդպիսի բնրացֆի դէմ»:

*Այս հեռագիրը ուղարկելով Պերլին գերման կառավարութեան՝ Պոլսոյ գերման դեսպանը իր կողմէն կը թերազդէ երկու պայման իբր հիմք հաշտութեան, — Ա) Թուրքիա պէտք է ընդունի Պրեսթ-Լիթովսքի դաշնագիրը, Եւ Բ) Դիւրացնելու համար Թուրքերուն նահանջը դէպի Պրեսթ-Լիթովսքի գաշնուցիրը՝ կատարել ժողովանակութիւն, այսինքն՝ ստաջարկել Թուրքերուն վերցնել Ախալցխա գաւառի թրքական մասը Եւ ստոր ժողովարկն վերադարձնել Կարսի շրջանի հայկական մասը (Կապուտան): Գերման գեսպանը կ'ուսուցնէ, թէ իտալի պէյ Եւ վեհապ փաշա համաձայն են այսպիսի ժողովանակութեան մը, բայց էնվէր փաշա կը պահանջէ անմիջապէս վերջնագիր մը տալ: Գեսպանը կը յայտնէ այն կարծիքը, թէ այսպիսի վերջնագիր մը կը առաջ պիտի բերէ նոր պատերազմ Կովկասի մէջ, Եւ անհրաժեշտ էր գտնել յայտարարել վարչապետ Թալաթի փաշային, թէ թրքական այդպիսի շաղագրականութիւն մը կ'ովկասի մէջ չի կրնար արժանանալ Թուրքիոյ գինակիցներու պաշտպանութեան, այլ բնդհակառակն, պիտի մեծապէս վնասէ Թուրքիոյ շահերուն, հանդէպելով գինակիցներու բառն գիմազրութեան:*

*Այսպէս կը մտածէին ու կը գործէին գերման Զօր. Ֆոն Լոստֆր Պաթումի Եւ գերման դեսպան Կամ Պերնստորֆը Պոլսոյ մէջ: Այդ օրերուն, այսինքն Մայիս 15ին, Թիֆլիս հասած էր գերմանական պատուիրակութիւն մը Զօր. Ֆոն Կրեսսի գլխաւորութեամբ: Պատուիրակութիւնը ունէր սպանական Եւ շաղագրական ստաբլլութիւն:*

*Այդ առթիւ գերման արտաքին գործոց նախարարի օչնական կէտակէրթ կը հաղորդէր Հայոց Ազգային Խորհուրդի ներկայացուցչութեան հետեւալը. «Թուրքերը կ'ուզեն բնդարձակել Պրեսթ-Լիթովսքի դաշնագրին սահմանները: Ասիկա առաջ պիտի բերէ քաղաքային անոնց եւ Հայերու միջեւ: Այս հարցի մասին գերման կառավարութիւնը բանակցութիւններ կը վարէ յրժական կառավարութեան հետ: Անկրածեշտ է որ դուք երթաք Կովկաս եւ տեսնուիք Զօր. Ֆոն Կրեսսի եւ Զօր. Ֆոն Լոսովի հետ»:*

Յունիս Գին դերման բանակի ընդհանուր հրամանատար Հին-տէնպուրիը հեռուէալ հեռապիբը ուղղած է Էնվէր փաշային —

«Գերման գեղազոյն հրամանատարութեան անուսով կը խընդրեմ Ձերոյ Գերագնացութեան հրամայել, որպէսզի բոլոր քրքական գործերը զուրա քաշուին կովկասի սահմաններէն, բացի կարսէն, Արսահանէն եւ Պարսուէն» :

Գերմանական այս բողոքները եւ քայլերը երկու պատճառ ունէին : Առաջին՝ անսնք կ'ուղէին հաստատ կենալ Պրեսթ-Լիթովսքի գաշնապրի պայմաններու գեանին վրայ, որ անոնց կողմէ նախօրօք գծուած եւ սրշուած կը, ինչպէս շատ մը ուրիշ բաներ պատերազմի վերաբերմամբ : Եւ երկրորդ՝ անսնք ակրեակ էին իրերու իսկական զիճակին կողմասի մէջ Ջօր. Փոն Լոստի է Լայոց Ալպային Խորհուրդի ներկայացուցչութեան միջոցով, որ այն ատեն Պերլին կը գտնուէր. Քուրբերը իրենց ընթացքով կը խախտէին ռազմական ընդհանուր ծրարիբը, որուն համաձայն թրքական ուժերը պիտի դործէին նարտի ողողութեամբ ընդզլմ անզլիական շարժման զկպի Պուպտատ, մինչպէս անսնք կ'երթային զկպի հիւսիս՝ Պաբու եւ Հիւսիսային կողկաս իրենց սեփական համաթրքական նպատակներու իրադործման համար :

Այս հոգի վրայ տեղի կ'ունենար բողոքեմ թուրքերու եւ իրենց զինակիցներու միջէ : Այս պարագան բացատրեցին ինճ նաեւ Վեհիպ փաշան եւ Ջօր. Փոն Լոստիբ : Ասկէ մասամբ հասկնալի պիտի բլլայ, թէ ինչու Գերմանացիները կ'աշխատէին սլաշուպանել մեր շահերը :

Փորձեր բրին նաեւ Պաթուսի բանակցութիւններուն մասնակից զարձնել Պուլկարներն եւս, որուն համար սրշեցինք նոյն իսկ պատուիրակ զրկել Վառնա, բայց զկպրերու պահալէ ընթացքը թոյլ շտտուս իրադործել այլ ծրարիբը :

Իրենց նոր պայմաններուն պատասխան շտտանալով՝ թուրք պատուիրակները Մայիս 14ին նոր պահանջ մը ներկայացուցին մեզ՝ թոյլ տալ թուրք զօրերուն Ալեքսանդրապոլի վրայով անցնիլ Ջուր-Փաս : Այս ստիբիւ եւ ստիպուած կ'այս երթալ Նոթաննպի կայարանը ուղիք հեռապրաթելով իուսելու Ահարոնեանի եւ կարճիկեանի հետ՝ ինչըրելով անիջնալս քննութեան ատեն թրքական պահանջները եւ մեզ շտտափոյթ պատասխան տալ : Սակայն մինչեւ մեր պատասխան առնելը, Մայիս 14—15ի զիշերը ժամը 1ին, տեսակցութիւն մը տեղի ունեցաւ, որուն կը մասնակցէին Խալիլ պէյր, Վեհիպ փաշան,

Քաջագուններն ևւ ևս : Տևտակցութիւնը տեղի ունեցաւ Ոսպիլ պէշի  
ընակարանին մէջ՝ յայտնի հարուստ Ձիլինկարեանի գեղեցիկ տու-  
նը : Ոսպիլ պէշը կ'ըսէր մեզ . «Հասկցէ՛ք իրերու դրամքիւնը : Ես եւ  
Վեհիպ փաշան կը ներկայացնենի կամխոէի մէջ չափաւոր, հաշտա-  
րար հոտանքը . Թալէաք եւ Էնվէր փաշաները կ'ոգեմ ի սպառ ոչըն-  
չացնել հայկական հագը : Օգնեցէ՛ք մեզ մեր զիրքը ուժեղացնելու . ը-  
րէ՛ք բոլոր զիջումները, նմարաւորութիւն ստեղծեցէ՛ք մեզ երբայու  
Ջուլփա — Պարսկաստան երկարուղազծով եւ քոյլ տուէ՛ք մեզ եր-  
բայու Պաֆու եւ Հիւսիս՝ Ղարաֆիլիսէ — Եւլալա ճանապարհով : Իսկ  
յետոյ, երբ պատերազմը վերջանայ, մենք ձեզ օգնութեան կը հաս-  
նինք եւ կը վերադարձնենք այն, ինչ որ այսօր ձեզմէ կ'առնենք :  
Մենք ձեզ կ'օգնենք ապագային : Իսկ ձեք զիմադրութիւնը այսօր  
միայն պիտի վնասէ ձեզ եւ նոր արիւնահեղութեանց պատճառ դառ-  
նայ» :

Ոսպիլ փաշան յիշեց նաև այն բոլոր զէպքերը, երբ Հայերը  
յորժակցեր էին իրեն ևւ բաւ, թէ ինք Եղսծ է Հայերու լաւ խոր-  
հըրգատուն : Ես ևւ Քաջագուններն մեր սրտի ամբողջ գտնունքիւնը  
յայտնեցինք անոնց՝ շեշտելով որ Թուրքերը ուրիշ քաղաքականու-  
թիւն չունին քացի Հայերու ընտնանմէ : Մենք բարեք, որ Հոյերն  
ևւս Համաձայնութեան եղբ մը կը փնտուն Թուրքերուն հետ, քայց  
Թուրքերը իրենց անդիջող ընթացքով կը մղեն մեզ զէպի քաղխում :

Մեր խօսակցութիւնը տեսեց Երկու ժամ ևւ իրրեւ արդիւնք ա-  
նոր Համաձայնեցանք գերմանական պաշտպանութեամբ թոյլ տալ,  
որ Թրքական զորքերը անցնին հայկական հոպերով : Այս մասին հա-  
ղորդեցինք հեռագրով Թիֆլիս : Գուրով հաշտութեան դաշնագրի պայ-  
մաններուն՝ Ոսպիլ պէշը հապորդեց մեզ, թէ միմիայն իր հաշտա-  
րար կամքն է, որ արգելք կը դառնայ զէպքերու գահալիմման, ո-  
րովհետև թրքական վերջնադիրը իր զրպանին մէջն է, ևւ Էնվէր  
փաշա կը պահանջէ անմիջապէս գայն ներկայացնել, բայց ինքը կը  
ձգձգէ այն յոյոսով, որ Անդրկովկասը ստանց վերջնադիր ալ ան-  
հրամաւտ գիջողութիւններ պիտի ընէ :

Սակայն, Անդրկովկասեան կառավարութիւնը Մայիս 15ի հե-  
տադրով կը հրահանգէր իր պատուիրակութեան բունակցութեանց  
մտնել Թուրքերու հետ Ալեքսանդրապոլ—Ջուլփա Երկաթուղազծի  
վերարերմամբ, իսկ մինչև համաձայնութեան կայանալը կը հրա-  
մայր գոր . Նպատրդէկեանին «պահէլ Ալեքսանդրապոլը ևւ երկա-  
թուղազիծը զինու զորութեամբ» :



Մայիս 15ին Թուրքերը նսրն պնդեցին թէ Պրեսի-Լիթովսքի գաշնադիրք միակ հիմքը չի կրնար ծառայել Հաշտութեան Համար, և թէ առանց Գերմանացիներու և միւս զինակիցներու ալ Հաշտութիւնը կարող է կնքուիլ. ապագային անոնք կրնան միանալ :

Կայիս 16ին մէնք երկար գրութեամբ մը պատասխանեցինք Թուրքերու պահանջներուն և տեսակէտներուն՝ նորէն յենուելով Պրեսի-Լիթովսքի գաշնադիրք վրայ և պահանջելով Գերմանիոյ և միւս զինակիցներու մասնակցութիւնը : Բայց այն առեւ, Երբ մենք կը բանակցէինք Թուրքերու հետ Պաթումի մէջ Հաշտութեան պայմաններու մասին, Թուրքերը Մայիս 15ին տառաջտեան ժամը 7-15ին, յանկարծ, յարձակամ գործած էին Ալեքսանդրապոլի վրայ՝ նախօրօք Երեք ժամ ժամանակ տալով քաղաքը պատարկելու համար և տոանց սպասելու պատասխանի յարձակած և զբաւած էին քաղաքը :

Մայիս 17ին և 18ին ետանդուն հետադրային փոխանակութիւն տեղի ունեցաւ Թիֆլիսի և Պաթումի միջև : Դաշնակցութեան խրմբակցութիւնը Ալյամի մէջ խնդրած էր մեկմէ հեռադրով Երեք քան, (կ) Որ Գերմանացիք պաշտպանեն Ալեքսանդրապոլ-Ջուլֆա Երկաթուղիքը, (Բ) Որ Հայկական զորքերը մնան իրենց զիրքերուն մէջ Երկաթուղիի Երկու կողմերու վրայ, և Գ) Որ Հաշտութեան պատասխանակութիւնը, Եթէ ստանայ այս Երաշխիքները, Հրատարակ կողմը ուղղուած ժողովուրդին՝ հանդարտ մնալու իրենց տեղերը : Հետադիրք ստորագրուած էր Կարճիկեանի կողմէ :

Մենք անմիջապէս զիմեցինք Զօր. Ֆոն Լոսովին և Ուալի պէյին այլ Երեք պահանջները իրազարժելու համար : Զօր. Ֆոն Լոսովը յայտնեց, թէ Թուրքերը շատ քիչ հաշուի կ'առնեն իր բողոքները, բայց խոտուացնու այլ մասին յարարելութեան մէջ մտնել իր կառավարութեան հետ : Ուալի պէյը և Վեհիպ փաշան պատասխանեցին. «Ինչի՞ ես պէտք ձեզ Գերմանացիները : Մեք իմքնիր կրնանք ձեզ հետ համարութեան հետ : Թող բնակչութիւնը մնայ իր տեղը» : Զտանալով սրել էր աշխիք՝ մենք որեւէ կողմ չ'հրատարակեցինք :

Տեսնելով, որ անմիջական բանակցութիւններու միջոցով մեր և Թուրքերու միջև անկարելի է որեւէ համաձայնութեան պայմար, Զօր. Ֆոն Լոսովը Մայիս 19ին ուղարկեց Անդրկովկասեան պատուիրակութեան հետեւեալ ուղարկուած նամակը.—

«Պարումի բանակցութիւնները առայ չեն երրար եւ ցարդ որեւէ արդիւնք չտուին, սակայն արավիտեւ բալար կողմերու շահերը



Քեան մայրաքաղաք պէտք է բլրայ Վաղարշապատ (Էջմիածին) գիւղը՝ պահանջելով կցել Երեւանը Աւարկջանին: Ուսուրպէկովի և Խան-Ոռոյսֆիի բերանով անոնք կը պնդեն թէ Երեւանը թաթարական քաղաք է, ուստի մահմեականները պիտի չներեն, և թէ Երեւանը գիջին Հայերուն: Ատորկջանի պատուիրակութեան Լեւոն Հաւաքուած էին Գանձուկի և Ախալցխայի մահմեականներու ներկայացուցիչները՝ Մուլթանովը, Խաֆիպէկովը և ուրիշներ, որոնք ուղղակի կը հրաւիրէին Թուրքերը գրաւել Կովկասը: 40 ստորապրտութիւնեով յտուով գրութիւն մը ևս ներկայացուցաւ Թուրքերուն Ախալցխայի և Ախալցախի Թուրքերուն կողմէ. որով կը պահանջուէր միացրնել այլ գաւառները Թուրքիոյ:

Այսպիսի պայմաններու մէջ, շրջապատուած ամէն կողմէ իշնամիներով, մեր միակ յոյսը կը մնար Գերմանացիներու միջամտութիւնը: Մենք թնսութեան ստնելով ստեղծուած կացութիւնը՝ Եկանք այն կարակացութեան, թէ ճիշդ է Հայոց Աղղային Խորհուրդի տեսակէտը. պատրաստեցինք քարտէսներ, թուական տեղեկութիւններ և գրասուր պեկուցում՝ որոշելով յանձնել գանոնք Զօր-Ֆոն Լոսովին և ընթացք տալ Աղղային Խորհուրդի հրահանգին անյայտպապ:

Քանձանունին և ևս, Վրացիներու հետ միասին, գացինք Զօր-Ֆոն Լոսովի մօտ, Մայիս 21ին, բացատրելու համար անոր Հայերու վիճակը: Ան թելադրեց մեզի մեր խնդիրքը ներկայացնել գրասուր կերպով, և մենք այդ բրինք Մայիս 22ին: Մայիս 23ին, Զօր-Ֆոն Լոսով երկար ու մանրամասն հետազոտով մը՝ ուղղուած Պոլսոյ գերման պետական՝ բացատրեց մեր հարցի էութիւնը: Այդ հետագրի մէջ ան կը մատնանշէր, որ Հայոց Աղղային Խորհուրդի ներկայացուցիչները և Անդրկովկասեան պատուիրակութեան անդամ հայ նախարարները Գերմանիայէն կը սպասեն օգնութիւն և փրկութիւն իրենց ժողովուրդի ներկայ ուղրդական վիճակէն: Զօր-Ֆոն Լոսով կը ներկայացնէր նաև հայ պաղթականներու անտանելի կացութիւնը. կը բացատրէր Թուրքերու տարապայման պահանջները և կը պաշտպանէր այն միտքը, թէ Թուրքերու խսկական նպատակն է յափշտակել հայկական հողերը և բնամջնել հայ ժողովուրդը: Զօր-Ֆոն Լոսով կը խնդրէր չհաստատել ինչէր և թայէաթ փաշաներու հաստատացումներուն, և մեկնելով գերման շահերու տեսակէտէն, կ'ըսէր թէ Հայերը պիտի անցնին պարտիզանական կռիւներու, պիտի փճացնեն Երկաթուղային հաղորդակցութիւնը և ծանր վիճակի մէջ պիտի դնեն Կովկասեան ճակատը:

Պայիլ պէյ ևս հետադրական հազարդակցութեան մէջ կը զբռնուր և կը վստահեցնէր մեզ թէ ինքը կը քանայ համարկ կնիկը և թաղաթ փաշաները գիջումներ բնելու, սակայն, կ'աւելցնէր, թէ կոմիտէն ոչ մէկ գիջում կ'ուզէ բնել:

Իբրևս գիհակը հետևեալն էր. Գերմանացիները հետզհետէ կը զօրանային Թիֆլիսի մէջ՝ պաշտպանելու համար Վրացիներն ու Վրաստանի սահմանները, իսկ թուրքերը կը շարձէին հայկական հողերով և պատերազմ կը մղէին Հայերու հետ: Պաթումի մէջ հարցերը մեռնալ կէտի մը յանդամ էին:

Մայիս 22ին Պաթում եկաւ «Կիւյ ձեմար» նաւով, ծովային նախարար ձեմալ փաշան: Ան այցելեց մեր պատուիրակութեան: Շատ լաւ կը յիշեմ այդ օրը: Պատուիրակութիւնը ողջունեց ձեմալ փաշայի գալուստը երեք ճտերով. Վրացիներու կողմէ խօսեցաւ Չիւնկելի, Հայերու կողմէ՝ և և թաթուրներու կողմէ՝ Ռասուլ Չաղէ: Մենք համերաշխարար խօսեցանք Անյրկավկասի շահերու մասին և սպա մեզմէ իւրաքանչիւրը մասնաւոր կերպով կանց առաւ իր ազգային շահերու վրայ: Մեր ճտերուն մէջ մենք մասնաւորեցինք այն միտքը, թէ փոխանակ արիւն թափելու, պէտք է ապրելու, շնչելու, աշխատելու և կերակրուելու հնարաւորութիւն տալ բոլորին: Ես, մասնաւորապէս, մասնաւորեցի պատերազմի ստրատիներն ու տներները և խնդրեցի վերադառնալ դաշնադրի պայմաններուն:

Ձեմալ փաշա, պատասխանելով Ռասուլ Չաղէի ճտին, շատ ցերձ թօնով մը բաս, որ Ատրբէյանցիք թուրքերու սիրելի եղբայրներն են և թէ թուրքերը եկած են ռապտոպրկելու՝ զանոնք: Գառնալով Չիւնկելիին և Վրացիներուն ձեմալ փաշա խօսեցաւ նոյնպէս սիրալիբ և հաճոյսի թօնով մը, որ ի վերջոյ նոյնիսկ դարձաւ սրտապին: Ան բաս, թէ թուրքերու և Վրացիներու միջեւ, ճիշդ է, եղած են անցադակի թիրիմացութիւններ, բայց ինքը վստահ է, թէ սպազային անոնք պիտի չկրկնուին ոչլեւս և շատ զիւրութեամբ կարելի պիտի բլլայ համերաշխ զարծակցութեան մը կետիներ մշակել: Դատարարով, վերջապէս, ինձ՝ անոր ղեմքը մտայնեցաւ և թօնը չորցաւ. ան կը խօսէր արդէն թոյլ և զանդաղ ձայնով մը, աչքերը լեցուն էին դաման և մտայլ կայծերով. Ան բաս. «Թուրքերու վէհր Հայերու հետ հիմ է, եւ Հայերը աչ մէկ քայլ կ'ընեն հաշտուելու համար թուրքերու հետ: Այս բնրացքը պատճառ պիտի դառնայ Հայերու մար դժբախտութեանց»: Ձեմալ փաշա յիշատակեց Անդրանիկի անհաշտ գիբքը Չանկեղոսի մէջ, Հայերու կապը պոլսեիկներու հետ, հայկական ռապտոպրկութիւնները՝ մահմետականներու նկատու-

մամբ: Անոր ամէն մէկ խօսքին մէջ էր զգացուէր, թէ որպիսի ահա-  
ւոր անդունդ մը կայ թուրքերու ն: Հայերու միջեւ, և թէ որպիսի  
անյողթևի տակուիւնամբ լեցուած է փաշային սիրտը հանդէպ Հա-  
յերուն, սրտնք կանգնած էին թուրքերուն ճամբուն վրայ:

Ճեմայ փաշային ևս պատահեցայ ասիկ ևտք նաև Պոլսոյ մէջ  
ու ոյնտեղ զինքը զոտայ ասելի մեկմ տրամադրութեան մէջ, բայց  
Պոթոմի մէջ իր զիրքը բացարձակապէս թշնամական և անհաշտ  
էր մեզի հանդէպ:

Հետևեալ որը հանդիսաւոր ճաշկերոյթ մը տեղի ունեցաւ  
թրքական նաւի վրայ ի պատիւ Անդրկովկասեան պատուիրակու-  
թեան: Արտաքին վերաբերմունքը շատ սիրալիւր էր. նաւը զարդար-  
ուած էր զորդերով, ծաղիկներով և մեկ զիմաստրեցիին խոնարհ ող-  
ջոյններով: Ճանչ ատեն զիս նստեցուցին ճեմայ փաշայի և Տոքթ-  
Պահալատին Շաքիրի միջև: Վերջինս պատմեց, թէ ինչպէս ինքը  
մասնակցեր էր էնիվեր փաշայի արշաւանքին 1913 թ. Արտահանի ուղ-  
ղութեամբ և թէ ինչպէս զնոյ. Ռիպա պէյի հետ կողմակերպեր էր  
աճատական չլթաները: Եւ յայտնեց, թէ ինքը Հայերու աղիւ թըշ-  
նամին է:

«Հայերը, ըստ ան, կանգնած են մեր համիլլամական եւ հա-  
մալլապական սրբագան իտէլլաներու իրականացման ճամբուն վրայ,  
և մենք անխուսափելիօրէն կը բաղխինք անոնց հետ: Ատիկա վեր է  
եւ զարս է մեր անճակաւն զգացումներէն ու տրամադրութիւննե-  
րէն: Մենք հարկադրուած ենք սարերայնօրէն ոչնչացնել մեր ճամ-  
բուն վրայէն այն ամէնը, ինչ որ արգելք կը հանդիսանայ մեր ազ-  
գային սրբագան իտէլլաներուն: Եւ յետոյ, զուր միշտ Ռուսերուն հետ  
էք. զուր անոնց առաջապահն էք, իսկ Ռուսերը մեր ռիտերիմ թշնա-  
միներն են: Պատմական քշնամիները: Մտածեցէք այս մասին, փո-  
լիեցէք մեր հոգեբանութիւնը եւ օրիէնսացիան: Դուր քշնամի էք եւ  
ես այ քշնամի եմ, բայց մենք լնկիլակիցներ ենք. մենք կը հասկը-  
նանք կենդանի մարմնի կեանքը, եւ անոր մէջ չկայ մարդասիրու-  
թիւն կամ կամքի սկալարթիւն: Ջորատըր եւ կենսունակ մարմնի ի-  
րաւունքն է, այն միակ իրաւունքը, որով կ'ապրի մարմինը: Այդ-  
պէս է ե՛ւ ապգերու կեանքին մէջ: Այդտեղ չկայ մեղի զգայնակա-  
նութիւն, կայ միայն ինքնապաշտպանութեան բնագոյն եւ զգացում»:

Եւ, հարկաւ, պատասխանեցի իրեն ինչ որ պէտք էր, բայց  
սկիներեւ էր, որ մենք կը խօսէինք սարբեր լեզուներով, ու մենք

բամնուեցանք առանց որեւէ կերպով համոզած ըլլալու զիրար :

Ուր խօսակցութենէն տասր օր Լաք Էնվէր փառչան պաշտօնական ղիմում բրաւ մեղի՝ Հայերու հայ-թրքական ղիմուորական զաշինք մը կնքելու մասին : Արդեօք ճի՞շդ փարուեցանք մենք թէ սխալ՝ տարրեր խնդիր է . բայց, ինչպէս եւ 1914 թ. , մենք մերժեցինք այդ առաջարկը :

Քանի մը ամիս Լաք, իմացայ, որ ձեմայ փառչան իրեն հետ Պաթումէն տարած էր շատ արձգաւոր ապրանքներ ու այդ առթիւ իրեն զէմ նոյնիսկ ղոտական քննութիւն էր սկսած, որ սակայն, անհետեանք մնաց :

Երբ ձեմայ փառչա հեռացաւ Պաթումէն, միւս օրն իսկ հանգիպեցայ Կոմս Շուլենպերկին, որ նոր էր եկած Պերլինէն : Շատ հետաքրքրական մարդ էր ան . եկած էր Պաթում իրրեւ ղերման սպայ : Չինքը կը ճանչնայի ղեռ 1912 թ. պատերազմէն առաջ եղած էր Թիֆլիսի ղերման ընդհանուր հիւպատոսը, կը խօսէր ուսուերէն եւ Փրանսերէն, լաւ կապեր ունէր Թիֆլիսի ամենարարձը հասարակութեան հետ եւ ամենալայն ու ամենախոր կերպով ուսումնասիրած էր Կովկասի կեանքը : Պատերազմէն ամիս մը առաջ Կոմս Շուլենպերկ արձակուողով մեկնեցաւ հայրենիք : Եւ 1913ին, երբ Էնվէր եւ Իհասան փառչաները Երեք ղորաքանակներով յարձակում գործեցին Կովկասի վրայ, անոնց սպայակոյտին մէջ կը գտնուէր նաեւ Կոմս Շուլենպերկը : Երբ Թուրքերը պարտուեցան, ան ալ անհետացաւ, թէեւ ուսուական ղորափարները կ'ուզէին ղինքը ղերի վերցնել : Եւ ահա, յանկարծ, Երեւցաւ Պաթումի մէջ : Ան յացատրեց ինձ, որ նշանակուած է իրրեւ անգամ ղերման ղիմուորա-քաղաքական սուսքելութեան Կովկասի մէջ : Ես յացատրեցի անոր մեր տեսակէտը, եւ ան, ընդառաջ Երթալով մեղի, բաւ . «Մեմֆ՝ Գիւրմանցիներս շահաղրղուած եմք Անղրկովկասի անկախութեամբ : Եթէ ղուի՝ Հայքնը օգնէք Լոռիի շրջանի գերման պանրաղղըմներուն եւ գործարանատէրերուն, այն առեմ մեմֆ կ'օգնեմք ձեզի համար նկատուար կերպով լուծելու այդ վիճելի շրջանի բախտը : Պէտք է բել, որ այդ շրջանին մէջ կը ղոնուէին ղերման խոշոր գործարան մը ջոն Կուշներսի անունով, ինչպէս նաեւ շարք մը ուրիշ մանր գործարաններ : Ուր շրջանի վրայ յաւակնութիւն ունէին Վրացիները եւ այդ պատճառով է, որ յետոյ տեղի ունեցաւ հայ-վրացական պատերազմը, որմէ Լաք անկաւ ստացաւ շէղոք ղօտի անունը :

Կոմս Շուլենպերկը ծանօթանալով իրերու վիճակին՝ Մայիս 23ին մեկնեցաւ Թիֆլիս :

Յոն Լստոյր, ստանալով մեզմէ Համաձայնութիւն իր ըրած տաջորկին համար, զիմեց նոյն պահանջով նաև Քուրքերուն, բայց անտնայմէ մերժուեցաւ : Եւ Մայիս 24ին հաղորդեց մեր պատուիրակութեան, թէ իր միջամտութեան ֆանքերը, զժրախտաբար, յաջողութիւն չեն ունեցած :

Մայիս 25ին, Ձիշերին Մոսկուայէն Հետադրով մը հաղորդած էր գերման գահճիճին, թէ խորհրդային կառավարութիւնը պատրաստ է բանակցութիւններ վարել Անգլիոյկապեան կառավարութեան հետ, Անգլիոյկապի մաս գտնուող սրել ջաղաքի մէջ, առանց նախօրօք մճնելու Անգլիոյկապի անկախութեան խնդիրը :

Երբ Պախտովի մէջ ի գերեւ կ'ըլլէին հաշտութեան փորճերը Անգլիոյկապի և Քուրքերոյ միջեւ, և գերման միջամտութեան առաջորկները ապարդիւն կ'անցնէին, հայկական շրջաններու մէջ տեղի կ'ունենար կանոնաւոր պատերազմ, որու ընթացքին տեղի ունեցած իրադարձութիւններէն ամէնէն կարելու և պատմական նշանակութիւն ունեցան Երկու ճակատամարտներ՝ Սարգաթապատի մէջ՝ Մայիս 24-25) և Ղարաքիլիսէի մէջ՝ Մայիս 25-26) :

Իմ նպատակը չէ այսուց մտնրամասնօրէն նկարագրել այդ ճակատամարտները, բայց այն ինչ որ ինձ ըսած են ուսու, թուրք և հայ զինուորական հեղինակուոր անճինք, իրաւունք կու տայ պնդելու, թէ այդ ճակատամարտները հայ զինքի ամէնէն լուրջ և փայլուն կտիւններն են եղած : Սարգաթապատի հերոսներն էին Դրօ և Զօր. Սիլիկեանը :

Յրանասոյի բախիթեան Պուստուպարը իր ծանօթ գրքին մէջ հետեւեալ կերպով կը գնահատէ Սարգաթապատի ճակատամարտը .

«Երկրորդ հայկական տիպիգիան Զօր. Սիլիկեանի հրամանատարութեամբ կը պաշտպանէր Արաքսի հովիտը՝ Երեւանէն դէպի հարաւ, քաղաքէն քանի մը վերստ հեռուարութեան վրայ : Շէֆի փաշայի ամբողջ բանակը կանգնած էր անոր դէմ : Մայիս 24ին Զօր. Սիլիկեանը այսպիսի ուժով գրոհ տուա թուրքերուն վրայ, որ կատարելապէս ջախջախեց զանոնք, և հայկական հեծելազօրքը հալածեց թուրքերը մինչեւ Ալեքսանդրապոլի բարձունքները : Միմիայն ուզումամքերքի պակասն էր ար կանգնեցուց այդ հետապնդումը » :

Այս փայլուն ճակատամարտը փրկեց Երեւանը՝ Հայաստանի ապագայ մայրաքաղաքը : Այս ճակատամարտը նոր յաղթանակներու ոգի ներշնչեց հայ զինուորին :

Գրեթէ միամտանակ, Մայիս 25ին, թրքական զորմասերը առջ խաղարայ գեղի Թիֆլիս, ճակատամարտի բռնուեցան հայկական առաջին տիլիզիայի հետ Ղարաբաղի մաս: Կոնք տեւեց շորս օր: Հայկական գիմադրական ուժը, թրքական սպայակոչոյի իսկ զրկայութեամբ, սրանչելի էր եւ լուսայոյնը ամբողջ պատերազմի բնթացքին: «Բայց, կ'րակ նոյն Պատակար, յշնամիլն գերազանց հրետանիի հարստաններէն եւ ռազմամթերքի պակասէն ստիպուած, Հայերը տեղի սուիմ թարքերու գերազանց ուժին: Եւ հայկական առաջին տիլիզիայի մնացորդները նահանջեցին ղեղի երեւան, իսկ թարքերը կոտորեցին Ղարաբաղի մէջ 7000 բնակիչներ եւ գերիներ»:

Ընթերցողը արդէն գիտէ, որ Մայիս 28ին Թիֆլիսի մէջ յայտարարուած էր Հայաստանի անկախութիւնը: Սարգսրապատը եւ Ղարաբաղի ստեղծած էին մեր ժողովուրդի այն ռազմական ողին եւ կամքը, որ անհրաժեշտ են անկախ պետութիւն մը կազմելու համար: Վեհիպ փաշան իստակցութեան ժամանակ անձամբ բաւ ինձ, որ գիմադրական թափի, քաջութեան եւ արիութեան տեսակետով Ղարաբաղի ճակատամարտը իրեն յիշեցուցած էր Տարտանչիի ամէնէն յամառ կոխները, որոնց ինքը մասնակցած էր:

Ղարաբաղի ճակատամարտն յետոյ այլեւս լուրջ կոնքներ տեղի չունեցան, միայն Լոտիի եւ Բորչալուի շրջաններուն մէջ թաթարները կը կատարէին Հայերը, սր որ կը հանդիպէին: Զօր. Կորկանանի աչքին տօջեւ թաթարները կոտորած էին 20 հայ երախաներ եւ հայ վարժուճի մը, իսկ զինքն ալ տարած էին անտառ՝ բնգունելով Անգրանիկի տեղ: Գերմանական եկատերին Լեֆլու գիղին մօտ, թաթարները շրջապատած էին 300ի շտի Հայեր զաշտի մէջ եւ կոտորէր էին, ինչպէս այլ մասին հաղորդած էր գերման սպայ Վարքէր իր կատարութեան: Իսկ նախկին գերման հիւպատոս Անտերս, Մայիս 14ին, Կարսէն կը հաղորդէր թարքերու վայրագութեանց մասին՝ Երզնկա-Էրզրում-Կարս ճամբուն վրայ:

Մայիս 25ը Պաթուսի մէջ սղերդական օր մըն էր մեզ համար: Գերման զորավարի միջնորդութեան ճախողանքն յետոյ, մենք ինկած էինք անկ վիճակի մէջ: Թաթարներն ու Վրացիները չէին ուղեր պատերազմի: Թաթարները կը պահանջէին հաշտութիւն որեւէ գնով, իսկ Վրացիները սպահոված էին ինքզինքնին գերմանական ուժով: Եւ մենք էինք միայն, որ կը պատերազմէին Սարգսրապատի եւ Ղարաբաղի մէջ: Մեր ճամբաները բաժնուած էին եւ բնդհանուր լեզու բացարձակապէս անկարող էինք գտնել: Օղին մէջ արդէն կը





զգացուէր, որ Անդրկովկասեան հանրապետութիւնը կը քայքայուի, բայց ինչպէս հանդուցեալի տան մէջ մահուան մասին չեն խօսիր, այնպէս այ կը խուսափէինք որեւէ ակնարկ ընելէ Անդրկովկասի հանրապետութեան քայքայման ու անդամահատութեան վրայ:

Այլ մասին, ստեղծ, ստաջին, ստաջին խօսքն ըրաւ Զօր. Փան Լոտովը, որ Մայիս 25ին, Էրեկոյեան ժամը 7ին, նամակով մը յայտնեց մեզ, թէ իր ունեցած հաստատակներէն իրենց հիման վրայ Անդրկովկասեան հանրապետութիւնը քայքայման վիճակի մէջ է, և որովհետեւ ինքը լիարարութիւններ ունի Անդրկովկասի հանրապետութեան և կառավարութեան վերաբերմամբ, ուստի այժմ, Էրբ այլ հանրապետութիւնը և կառավարութիւնը խնդրեցան կը պաշտօնը, սակայն կը ինչպէս ալլուս ժամանակ կորսնցնել Պախուսի մէջ և որոշած է նոյն Էրեկոյ իսկ գերման «Միննա Սորթ» նախ մեկնելի Պախուսէն:

Էրեկոյեան ուշ ատեն Քաթաղիսի հետ զացինք պարտաբան մօտ՝ «Միննա Սորթ» նախ միայն, խնդրելու անկէ, որպէսզի պաշտպանէ մեր նապաստակը արդար պահանջները գերման կառավարութեան մօտ: Զօրայարք խոստացաւ և խորհուրդ տուաւ անմիջապէս ներկայացուցիչներ ուղարկել Հայոց Ազգային Խորհուրդի կողմէ Պերլին:

Նախ մեկնումէն ետք, զիշերուան ժամը 12ին վերադառնալով հիւրանոց, ևս խմացայ, որ Պախուս Էկամ է Ժորտանիան, Վրաստանի ապագայ կառավարութեան նախագահը: Ան Էկամ էր խորհրդակցելու Չիկենկելիի հետ, Վրաստանի անկախութեան յայտարարութեան հետ կապուած խնդիրներու մասին: Հետեւեալ օրը, Մայիս 26ին, որոշուած էր յայտարարել Վրաստանի անկախութիւնը և Ժորտանիա կը շտապէր:

Ժորտանիա կեդրոնական գէմքն էր Վրացիներու մէջ, բլայլով Վրաց մենչեթիկ կուսակցութեան կեդրոնական կոմիտէի, ինչպէս նաև Վրաց Ազգային Խորհուրդի նախագահը: 1900 թ. իսկ կը ճանչնամ զինքը: Ետտ խելացի և իր ժողովուրդի հոգեւորութիւնը յաւ բմրանոց հմուտ քաղաքակցութիւն է, տեսականապէս յաւ պատրաստուած: Անոր ազդեցութիւնը վրացական դանդաղութիւնը միայն հակադրեցին է: Կը խօսի շատ զէշ կակաղելով, բայց իր ճատերը կասուցուածքի և մտքերու տեսակէտով կեդրեթիկ են: Գէմքի մկանայնքները գրեթէ լոպ շունին և կը յիշեցնեն եղիպտական քրմապետի մը արտայայտութիւնը:

Տեղեկանալով Ժորտանիայի գալու նպատակի մասին, ևս դացի անոր մօտ անմիջապէս: Անոր հետ էր Փրոք. Ալայլովը, նոյնպէս

Վրացի: Ժորտանիան պատմեց Քիֆլիսի մէջ իշխող տրամադրութիւններու մասին, Հաղորդեց, որ Հայերը կը շարունակեն պատերազմիլ թուրքերու հետ, սր թուրքերը սանձարձակորէն կը շարունակեն իրենց առաջխաղացքը, և յայտնեց թէ այդպիսի պայմաններու մէջ Վրացիներուն սրիշ: բան չի մնար, բայց եթէ յայտարարել Վրաստանի անկախութիւնը:

— Ինչպէ՞ս, բացայտնչեցի հս. չէ՞ որ մենք եւ դուք միասին պատերազմի մէջ ենք, ընդհանուր պատերազմի մէջ ընդհանուր թրշնամիին դէմ: Ինչպէ՞ս կրնաք լքել մեզ, երբ մենք զեռ արիւն կը թափենք: Մի՞թէ ազնիւ բան է այս:

— Ազնիւ բան է այն, ինչ որ օգտակար է ժողովուրդին, պատասխանեց Ժորտանիան:

— Այո՛, ըսի ես, իսկ մե՞նք:

— Մենք չենք կրնար խեղդուիլ ձեզի հետ միասին, պատասխանեց Ժորտանիան: Մեր ժողովուրդը կ'ուզէ փրկել այն ինչ որ կրնայ: Դուք այ պարտուոր էք համաձայնութեան լեզու մը գտնել թուրքերուն հետ: Ուրիշ էլք չունիք:

Ասոր վրայ վերջապա մեր խօսակցութիւնը: Ժամ մը ետք, Ժորտանիան մեկնեցաւ Քիֆլիս՝ Վրաց պատուիրակներու մէկ մասին հետ:

Մեզ իրապէս ուրիշ էլք չկը մնար, բայց եթէ մեր կողմէ եւս յայտարարել Հայաստանի անկախութիւնը: Բախտորոշ դեր կատարեց այն վերջնաղիբը, զոր մենք ստացանք նոյն գիշերն իսկ թուրքերու կողմէ:

Երեք օր ժամանակ կու տար վերջնաղիբը ընդունելու այն դամբան պայմանները, զորս թրքական պատուիրակութիւնը ներկայացուցած էր Պաթումի խորհրդատուի առաջին նիստին իսկ, փակ ծրարով:

Այս վերջնաղիբն ևս Վրացիներու մեկնումէն յետոյ, մեզի այլեւս բան չկը մնար ընել Պաթումի մէջ: Պէտք է փութայինք Քիֆլիս: Մայիս 26ի երեկոյան ժամը 7ին մեր զնացքը շարժեցաւ Պաթումի կայարանէն: Մայիս 27ի առաւօտեան Հասանք Քիֆլիս: Ճանապարհին կայարաններու մէջ կանգնած էին գերման գիւնուորներ ևս վրացական սահմանին վրայ կը ծածանէր գերման զրօշակը: Վրացիները ապահոված էին ինքզինքնին թրքական արշաւանքէն:

Ե. Գ Լ Ո Ի Խ

ԱՆԿՐԿՈՎԿԱՍԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԲԱՅԲԱՅՈՒՄԸ

ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՌՁԱԿՈՒՄԸ

Թիֆլիս հասնելով՝ Գաջապուրին և ևս անմիջապէս դաջինք Հայոց Ազգային խորհուրդի շէնքը, որ Արամեանցի հսկայ տունն էր, Գալստիանքի պրոպոստի և Բարեաւորնսկայա փողոցի անկիւնը: Մեզ կը սպասէին անհամբեր, մանասանց այն պատճառով, որ մէկ կողմէ տեղի կ'ունենային այլ պահուն արխանահեղ կռիւներ Սարգարապատի և Ղարաքիլիսէի մէջ, իսկ միւս կողմէ՝ չափազանց կասկածելի էր դարձեր Վրացիներու բնթաղքը: Հայերը պարտաւորուած էին որոշել իրենց դիրքը:

Ճիշդ նոյն տողաւան, Մայիս 27ին, Ջոր՝ Սիլիկեանէն ստացանք հետպիւր մը, որով կ'ազաչէր փամփուշտ զրկել: Ազգային Խորհուրդը կազմող կուսակցութիւնները շատ տարբեր կերպով կը վերաբերուէին Վրաստանի անկախութեան յայտարարութեան: Ումանք կը կարծէին, թէ Վրացիներու այդ քայլը պէտք չէ հարկադրէ մեզ ևս նոյն քայլն ընելու: սմանք ոչ կ'ըսէին, թէ ժամանակը եկած է վերջապէս, մեր երկիրն այ յայտարարելու անկախ:

Գաջապուրին և ևս նոյն օրը երեկոյեան (Մայիս 27) զեկուցում տունը Պաթումի խորհրդատուովի մասին: Նախորդ օրը Սէյ-

մը հանած էր հետեւեալ բանաձեւը. «Նկատի աւնեցալով, որ պատե-  
րագրի եւ խաղաղութեան խնդրին մէջ երեւան եկան հիմնական տա-  
րակարծութիւններ Անդրկովկասեան անկախ հանրապետութիւնը  
կազմող ազգերու միջեւ, սրով անկախելի կը դառնայ ամբողջ Ան-  
դրկովկասի համար հեղինակասւոր իշխանութեան մը գոյութիւնը,  
Սէյմը կ'արձանագրէ Անդրկովկասի էայՖայման փաստը եւ վար կը  
դնէ իր լիազօրութիւնները»: Այս բանաձեւէն յետոյ, Վրաստան նոյն  
օրն իսկ յատարարած էր իր անկախութիւնը՝ ընտրելով կառավա-  
րութիւն Նոյ Խամիշվիլիի նախագահութեամբ: Վրաստանի անկա-  
խութեան յայտարարութիւնը հետագայով հազարդուած էր 18 պե-  
տութիւններու:

Նոյն պահուն յայտնուեցաւ, որ Քաթարները եւս կը պատ-  
րաստուին Մայիս 28ին յայտարարել Ատրպէջանի անկախութիւնը:

Այսպիսի պայմաններու մէջ Հայոց Ազգային Խորհուրդը որո-  
շեց յանձնարարել իր անդամներուն անմիջապէս գրուիլ եւ մինչեւ  
հետեւեալ օրը ժամը 10 բերել իրենց կուսակցութեանց միտքը Հա-  
յաստանի անկախութեան յայտարարութեան մասին: Հետեւեալ օրը  
բոլոր կուսակցութիւններն ալ Ազգային Խորհուրդին մէջ եկան յայտ-  
նելու, թէ իրենք կողմնակից են Հայաստանի անկախութեան հռչակ-  
ման: Անմիջապէս սկսան կազմել անկախութեան յայտարարութեան  
բանաձեւը, որուն խմբագրութիւնը յանձնուեցաւ Ա. Ահարոնեանի,  
Նիկոլ Աղբալեանի, Յ. Քաջազնունիի եւ ինձ: Ի վերջոյ, ցերեկուայ  
ժամը 12ին Հայոց Ազգային Խորհուրդի կողմէ ընդունուեցաւ հե-  
տեւեալ պատմական բանաձեւը. —

«Անդրկովկասի քաղաքական ամբողջութեան լուծումով եւ  
Վրաստանի եւ Ատրպէջանի անկախութեան եռչափունով ստեղծուած  
նոր դրութեան հանդէպ Հայոց Ազգային Խորհուրդը իրեն յայտա-  
րարած է հայկական գաւառների գերագոյն եւ միակ իշխանութիւ-  
նը: Որոշ ծանկալիչա պատճառներով քաղնելով մօտիկ օրերում կազ-  
մել Հայոց ազգային կառավարարիւն՝ Ազգային Խորհուրդը ժամա-  
նակաւորապէս առանձնում է կառավարական բոլոր փունկցիաները՝  
հայկական գաւառների քաղաքական ու վարչական դերը վարելու  
համար»:

Այս բանաձեւը հրատարակուեցաւ Հայոց Ազգային Խորհուրդի  
կողմէ իրրեւ Հայաստանի անկախութեան յայտարարութիւն:

Այսպիսով, 1918 Մայիս 28ին, ցերեկուայ ժամը 12ին, հըո-

չակուեցաւ Հայաստանի անկախութիւնը: Կառավարութեան կազմութիւնը յետաձգուեցաւ մինչև հաշտութեան պատուիրակութեան Պաթում Երթալն ու վերադառնալը, որովհետև Քաջաղունիի եւ իմ մասնակցութիւնը կառավարութեան մէջ անհրաժեշտ կը նկատուէր, իսկ մենք պէտք է նորէն Երթալին Պաթում: Թուրքերու վերջնադրին պայմանաժամը կը լրանար Հետեւեալ օրը Մայիս 29ին, Երեկոյան ժամը 8ին: Հետեւորար պէտք էր շտապել:

Մեր՝ արզնի դուռ հայկական պատուիրակութիւնը կազմուեցաւ 3 հոգիէ, նախագահը եւ էի, իսկ անդամներն էին Քաջաղունին եւ Մ. Պապաջանեանը: Պատուիրակութեան քարթ պլանը տրուեցաւ եւ մենք Մայիս 28ին, զիշերուան ժամը 12ին մեկնեցանք Պաթում, ուր հասանք Հետեւեալ օրը ցերեկուայ ժամը 12ին: Այս անգամ Պաթումի մէջ մնացինք 8 օր միայն, մինչև Յունիս 5, եւ ամբողջ ժամանակը զրազուած էինք հուշատեղեան զաշնագրի կազմումով: Առաջին միջոցառումն ահա՛ն էր, որ պիտի կատարէր Հայաստանը, եւ մեծ ու խնամքոտ աշխատանք էր պէտք այն ժամանակուայ ծայրագոյն պայմաններու մէջ, ըստ կարերոյն տանելի դաշնագրի մը կնքելու համար Թուրքերուն հետ:

Հէնց որ Պաթում եկանք, մեր տառջին գործը եղաւ նամակով մը յայտնել Պալիլ պէյին Հայաստանի անկախութեան յայտարարման, ինչպէս նաև իրբական վերջնագրի բնուանման մասին: Նամակը ստացուած էր Մայիս 29ին, Երեկոյան ժամը 7ին, այսինքն՝ վերջնագրի պայմանաժամը լրանալէ 1 ժամ տառջ: Իսկ Վրացիները իրենց յայտը գնելով Գերմանացիներու վրայ, չէին շտապեր: Միայն Մայիս 31ին անոնք յարարեցութեան մէջ մտան Պալիլ պէյին հետ, ինչև իրենց ալ վերջնագրի պայմանաժամը կը լրանար Մայիս 29ին, Երեկոյան ժամը 8ին: Այս պարագան շատ պէշ տպաւորութիւն ձգեց Թուրքերու վրայ, բայց այս մասին յետոյ:

Պալիլ պէյ նոյն Երեկոյան իսկ պատասխանեց ինձ, եւ մենք պայմանաւորուեցանք անոր հետ նիստ գումարել Հետեւեալ օրը, Մայիս 30ին, ցերեկուայ ժամը 12ին տկումրի շէնքին մէջ: Բանակցութիւնները տեղի կ'ունենային Փրանսերէն: Առաջին նիստի առեն Վեհիպ փաշա սնձամբ զծեց Հայաստանի սահմանները այն պատմական քարտէսին վրայ՝ որ ինձ մօտ էր թէ՛ Տրապիզոնի եւ թէ՛ Հետագային՝ Պոլիս, Այերանդրապոլ ու Եւրոպա: Երբ մենք նայեցանք քարտէսին վրայ, Երկու սուր զպացումներ համակեցին մեզ. առաջին՝ հարաբերութիւն, որ մենք ալ դարաւոր պայքարներէ ետք, վերջապէս, պէթ փոքր անկիւն մը ունեցանք աշխարհի քարտէսին

վրայ, և Երկրորդ՝ գառնութիւն, որ մեզի տրուած այլ անկէնը  
Հազիւ 9.000 թառ. քիտմէթը կը պարտահազէր, որ բացարձակապէս  
անբարտար կը մեր ժողովուրդը իր մէջ առնելու համար:

Առաջին նիստը նուիրուած էր սահմաններու քննութեան: Ճիշդ  
է, Թուրքերը կը խուսափէին նկատի առնել մեր սահմանները Վրաս-  
տանի և Ատրպէջանի հետ, անոնք կը գծէին միայն մեր և Թուր-  
քիոյ սահմանները՝ խոյլով, որ մենք ինքներս հասկացողութեան  
զանք մեր հարևաններուն հետ, անոնց հետ ունեցած մեր սահման-  
ներու մասին: Բայց մենք զիտէինք արդէն, որ Վրացիները մեղմէ  
կը պահանջէին խոշոր հայկական հողամաս մը մինչև Դարաքիլիսէ,  
իսկ Ատրպէջանցիները մինչև Երևան: Անփոհէլի հողեր էին միայն  
Նոր-Պոյազլուի գետաօր և Ալեքսանդրապոլի լեռնային մասը, ու-  
րոնց մէջ Հազիւ կ'իշխար 13 քիլոմէթր Երկաթուղի:

Ամբողջ 3 նիստ նուիրեցինք սահմաններու խնդրին, այստեղ  
Վեհիոյ վաշալէն ու Խալիլ պէյէն լսեցինք շատ մը բաներ, որ այսօր  
այլ, մազն այլ առաջնահարկ նշանակութիւն պիտի ունենան Հայ ժո-  
ղովուրդի բախտի համար: Յոյց տուլով թարտէպ և նկարագրելով  
թրքական ձգտումները, Վեհիոյ վաշան բաւ.

«Դուք կը տեսնէք որ հակաազգիւր կը քաշէ Թուրքիան արեւ-  
մուտքէն արեւելք. մենք հեռացանք Պալմաններէն, կը հեռանանք  
նաեւ Ափրիկէէն, բայց մենք պէտք է տարածուինք դէպի արեւելք.  
հոն է մեր արխուր, մեր կրօնքը ու լեզու: Եւ առիկա տարերային  
ձգողութիւն ունի. մեր հղբայրները Պաքու, Տաղատան, Թուրքիս-  
տան եւ Ատրպէջան են: Մենք պէտք է նամբայ ունենանք դէպի հոն:  
Եւ դուք՝ Հայերդ կանգնած էք մեր այդ նամբուն վրայ: Պահանջե-  
լով վանք՝ դուք կը փակէք մեր նամբան դէպի Պարսկաստան: Պա-  
հանջելով Նախիջեւանն ու Չանգեզուրը՝ դուք արգելք կը դառնաք  
մեզի իջնելու Քուրի հովիտը եւ երյալու Պաքու: Կարսն ու Ախալ-  
քալաքը կը փակեն մեր նամբան դէպի Վազախ ու Գանձակ: Դուք  
պէտք է մէկ կողմ քաշուիք եւ մեզի նամբայ տաք: Ահա քէ ո՛ւր է  
մեր հիմնական վէճը: Մեզի պէտք են երկու լայն նամբաներ, որոնք  
հնարաւարութիւն տան մեր բանակներուն առաջ շարժելու եւ պաշտ-  
պանուելու: Մէկ նամբան՝ Կարս-Ախալքալաք-Բորչալու-Ղազախն է.  
որ կը տանի դէպի Գանձակ, մլուսը՝ կ'երթայ Շարուր-Նախիջեւան-  
Չանգեզուրով Քուրի հովիտը: Դուք կարոք էք մնալ անոնց մէջտե-  
ղը, այսինքն Նոր-Պոյազլուի եւ Էջմիածնի շարքը»:

Մենք նկատել տուինք, որ ՎՆՀ-ից փաշան հաշուի չ'առնեք եւրեք պարագաներ, այն է՝ Ա) որ Հայերուն թողուած հողամասը չափազանց փոքր է հայ մտղափայլին զահագում տալու համար, նուազապէս չափով խել, Բ) որ Հայկական Հարցը միջազգային խնդիր մըն է եւ չի կրնար այլ ձեւով վերնալ մէջտեղէն. եւ Գ) որ Թուրքերուն այժմ պծած Հայաստանի սահմանները աղբիւր պիտի դառնան յայտնական իշնամութեան Հայերու եւ Թուրքերու միջեւ:

ՎՆՀ-ից փաշան պատասխանեց. «Հայկական հողամասը այսօր փախ է, որովհետեւ ձեզ մօտ շատ մահմետական տարրեր կ'ապրին. սաւէք գանսիք մեզի եւ ձեր տեղը կը մեծնայ: Հայկական Հարցը միջազգային է, կ'ըսէք, եւ պիտի նկատի առնուի հաշտութեան ընդհանուր յարիւրդածողովն մէջ: Այդ բանը շատ լաւ գիտեմք, բայց հէնց սապր համար ալ մենք առաջիկր ըլլալով յանձն կ'առնենք լուծելու գայն եւ կ'ընդունինք Հայաստանի անկախ գոյութիւնը: Գալով ըջնամուրեան զգացումներուն հողամասի փոքրութեան պատճառով, պէտք է ըսեմ, որ բոլոր պետութիւններն ալ քիչով սկսեր են եւ աստիճանաբար են անք: Կարելիքն այն է, որ մենք բարեկամներ դառնանք եւ փոխադարձաբար պաշտպանենք զիրար: Մեզ պէտք է Հայերու նպաստաւ որ պրոպականտը արտասահմանի մէջ»:

Հետագային մենք համոզուեցանք, որ Սալիլ պէյ եւ ՎՆՀ-ից փաշա անհուհանջ կերպով կը պաշտպանեն իրենց մատնանշած սահմանները, որոնց համաձայն Թուրքերուն ձեռքը պիտի անցնէին ամբողջ Կարսի շրջանը, Ախալքալաքի գաւառը, Այլքսանդրապոլ քաղաքը, Համամյու-Երեւան խնուրին, Սուրմալուի գաւառը, Երեւանի գաւառի կէսը եւ Ղարաբաղիս-Ուլստանիս ամբողջ Երկաթուղին: Մենք խնդրեցինք մեր բոլոր պատճառարանութիւնները հեռազրով հաղորդել Պուլխա եւ անոնց համաձայն ընդարձակել սահմանները: Յունիս շին մենք ստացանք պատասխանը, որով «այնուս սկսուած լաւ յարաբերութիւններու» Թուրքերու համաձայնութիւն կու տային զիջելու մեզի Համամյու-Երեւան խնուրին եւ սահմանը անցնելու Արագած լեռան գաւաթով: Այս նոր սահմանագիծը Զաջուր կայարանէն կ'անցնէր Այապետի գաւաթով եւ կ'իջնէր զԿպի Վաղարշապատ, որով մենք 1000 քառ. քիլոմէթր տարածութիւն մը կը շահէինք: Ասկէ աւելի զիջում Թուրքերը չ'ըրին:

Գալով մեր բանակցութեանց քաղաքական կողմին՝ ՎՆՀ-ից փաշան կը համոզվր մեզ զինուորական գաւառի կնքել Թուրքերուն



Հետ, տալ անոնց 10,000 զօրք և միասին արչաւել Պարտատի վրայ: Այս առաջարկի հեղինակն էր Էնվէր փաշան: Ոչ մէկ տեսակետով չէինք կրնար բնորոշել այս առաջարկը և պատրուակ բերելով մեր ժողովուրդի ծայրայեղ յոյնածուխիւնը, մերժեցինք դայն: Վեհիպ փաշան, սակայն, ցատով յայտնեց որ այդպիսի գաշինք մը պիտի վերացնէր շատ մը թիւրիմացու թիւններ Հայերու և Թուրքերու միջև:

Այդ օրը մեկի այցելութիւն տուաւ Ահմէտ Ալայիւը, «Կասպի» թերթի նախկին խմբագիրը և Իթիհնամի տեղաւոր ղեկավարն մէկը, որ ջերմօրէն պաշտպանեց մեր մերձեցումը Թուրքերու հետ: Ազգայնական մեկի խոստացում իր աշակցութիւնը, բայց սատար արդիւնքը չաւանդ: Երբ հաշտութեան գաշնապրի սահմաններու վերաբերեալ մասը պատրաստ էր արդէն, Վեհիպ փաշան զրպանէն Հանեց կտոր մը՝ կարմիր խաչ մը սպիտակ Ֆունի վրայ՝ և բաս. «Ահա հայկական դրօշակի իմ նախագիծը: Դուք քրիստոնեաներ էք եւ կը պարծեանաք այն խորհրդանիշով. ես կը կարծեմ քեզ խաչը պէտք է ըլլայ ձեր խորհրդանիշը»:

Առհասարակ, պէտք է բւժ, որ բանակցութեանց այս շրջանը բատ Երեսոյթի կը շայնք Թուրքերուն ինքնասիրութիւնը. կ'իրազործուէին իրենց ծրարները և կը յուծուէր Հայկական Հարցը աշխատանք, որ զիրանար ապագայ միջազգային հաշտութեան խորհրդածոցովին մէջ ունենալիք իրենց դործը: Պէտք է նկատի ունենայ, որ Թուրքերը շատ կը մտնային Հայկական Հարցէն ապագայ խորհրդածոցովին մէջ: Այդ մասին յստք եմ Ռէուֆ պէյէն, Վեհիպ փաշայէն: Մայիլ պէյէն, Էնվէր փաշայէն և շատ մը ուրիշ Թուրք գործիչներէ: Այդ էր պատճառը, որ մինչև միջազգային խորհրդածոցովը Թուրքերը կ'ուզէին յուծել Հայկական Հարցը:

Հետագային իմացայ, որ երբ մենք բանակցութիւններ կը վարէինք Պաթումի մէջ, կատաղի վէճեր տեղի ունեցեր են Պոլսոյ երիտասարդ Թուրքերու կոմիտէին մէջ այն մասին, թէ ո՞ր աստիճան նպատակայարմար է կոմկասի մէջ պահպանել Հայկական պետութիւնը մը: Այս մասին ինձ պատմեց Պոլսոյ մէջ, 1918 թ. աշնան, մեծ վկայի Թալէաթ փաշան Հետեւեալ խօսքերով.—

«Էնվէր փաշան կը գտներ, որ բանի որ Հայերը եղած են եւ պէտք է միշտ ըլլան մեր բշխումները ու հանգիստ պիտի չբողոն մեր Անատոլիոյ նահանգները, աւելի լաւ է, որ հիմնապէս բնացընջ—

աւին անոնք նաեւ Կովկասի մէջ . ինչպէս եղած են Թուրքիոյ մէջ : Իսկ փոքրիկ Հայաստան մը Կովկասի մէջ պատուաւ պիտի դառնայ, որ միշտ ձգտի բնդարձակելու իր ասիմանները եւ դառնայ յաւիտեան կան վասնզ Թուրքիոյ համար : Իսկ ես, շարունակեց Թալէաք, պատասխանեցի, որ այդ ծրագիրը անկարելի ծրագիր մըն է քէկոյց այն պատճառով, որ այսպէս ըէ այնպէս երկու միլիոնի չափ ողջ մնացած Հայեր կան այժմ եւ անհնար է զանոնք բոլորն ալ ոչնչացնել, ուստի աւելի լաւ է, որ անոնց զստացում տրուի, սրովիետեւ եթէ նայնիսկ 100.000 Հայեր մնան աշխարհի երեսին, մեզի հանգիստ պիտի չտան երբեք : Եւ վերջապէս, փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ մենք լուծած կ'ըլլանք Հայկական Հարցը եւ այդպէս կը ներկայանանք հաշտութեան միջազգային խորհրդածոյողութիւն :

*Թալէաք փաշայի տեսակէտը յայտնելու էր և Թուրքերը ստեղծեցին փոքրիկ Հայաստանը : Առկէ Լորը Էնվէր փաշան օր մը պարծենալով ըստ ինծի. «Ես լուծեցի շատ դժուարին խնդիր մը, ստեղծեցի Հայաստանը, զստացում ստի Հայերու ազգային պահանջներուն, բայց այդ ըրի այնպիսի ձեւով մը, որ չգտնեցի թրքական հողերէն ոչ մէկ քիզ իսկ» :*

*Այս նոյն մտայնութիւնը փոքրիկ Հայաստանի մը գոյութեան անհրաժեշտութեան մասին թրքական շահերու տեսակէտով ևս գտայ նաև 1920 թ. Ալեքսանդրապոլի մէջ Կարապէտի փաշայի հետ հաշտութիւն կնքելու ատեն : Թրքական շարժառիթները կարելի էր ամփոփել Լըբէ կէտերու մէջ. Ա) Անոնք կ'երազէին ունենալ Կովկասի մէջ իրենց սպիկցութեան և, Եթէ Հնարաւոր է, իրենց հովանաւորութեան տակ չորս հանրապետութիւններ (Հայաստան, Վրաստան, Ատրպէջան և Հիւս. Կովկաս), միացած զաշնակցային կապերով, որով Թուրքիա բաժնուած պիտի ըլլար իր ամէնէն սարսափելի թշնամիքն՝ Ռուսիայէն : Բ) Թուրքերը հաստի կ'առնէին Հայկական Հարցին միջազգային բնոյթը և փոքրիկ Հայաստան մը ստեղծելով՝ կ'սպիկն որոշ զահագում մը տայ աշխարհի հանրային կարծիքին : Եւ Գ) Թուրքերը կ'ուզէին ունենալ, յանձին Հայաստանի, հողամաս մը, որ կարողանային հաւաքել Հայերու մնացորդները Թուրքիոյ սահմաններէն :*

*Լոյսնի մէջ հաշտութեան խորհրդածոյողութիւն ատեն, չորս ամսուայ ընթացքին, Իսմէթ փաշա 22 անգամ զանազան առիթներով ու զանազան անձանց կրկնած է, որ Հայկական Հարցը վերջնականա-*

բոց ստոճատեսի մս 'վերգատմոմ ոզ : մք իսզմսն մսւցմսի ստոճ Լղզոյոս  
 ոսկի չնեսի զտնամի հոյնդի մս 'հեղմսնեոյ ւյ մնեոյքոյ զտկոմսսս  
 -գլն վրտնոսի հոյնդի րակց սօք քզվ 'զմտիզտ 'զվլլ մքսք զտրհսի  
 -գլմզ ւմն՝ զուսմնոմսստ սյն մմվեոտղնոն զսկիտնամի կոմ 'զտրհսի  
 -գլմզ մք ովզւսց 'ժտզ չրեղք զվեղմնոմսստ մմղզվեզտճնեմսալլ : մյն  
 -տտճ զվն՝ իսմղզքստտոկղ Նամս մղղզվեզտճնեմսալլ ւս զմղզվեոմի : մն  
 զզվճոստ իստնիոտոյ զտկոմնոտղտոք մմվեոտղնոն մղլլ

։ մմղզմսղք հզտրիքիք ժզվեղքեղս

րս ժզտեղոսմ մյսսոյ մվզտմստոճմսզճ ւյ վղնսճն ոյ ւյ մնյն Լվրոս  
 Լստղ զնղղլլումնոմսսոլլ : մմղզզտւոմղտմ ւյ մմվեոտղնոն զվեղմնոմ  
 -ստո Լո զմղքեղսի տիմզ : «սլզ մուտկոտյոտր Լս սլզզմվեոտղնոն . Լոսլ  
 չյվճս ցոտկոտյոտր Լո Լզյմ Լոս ճճ Խոճլն : մյոլվմւոտրոտն Լոսլզմւոտ  
 -գլն վրտնոտսի մկ ոճլոտղ» . տտմ վղզվ իստազտն 'ճնք մղտեոլ ւյ  
 վզտտղսլ 'վրտնոմնոտոմղլլլ յտմղզվեոտրտեմնոմ Նվմսս մք ժմոճ  
 տեղեղտոտր Լո զվրտնոտոյ մս ւյ մն զտիտեմնոմսլ զտկոտմմ  
 ւզտղ մն 'Լնի մվզվլլ մտնտտմժ զտղթիտմմվրտտնոն զտկոմժ  
 : իստոտնեոյ զտիտոզտ ւյ իսքեոսի մաստիտմ զտեոտիքոյ մմ Լոզ  
 -ւզտոյ լո զմղքեղսի տիմզ : զվիտոզտ մղք ւյ զվրտնոն 'զվզտղիվլվլլ  
 . մոն զտոյմզ չնմտնոյ զվիմտի մվ Լո զտ վեոնեմս 'զվրտոտիտնի . մոն  
 'ստեղ վեղնոմնեոյ իստօլտոյ յւյ զվրտք ոլլ : զվլլ մքսք Լոտեղմ  
 -գն մմ Լոտոյտոյ մն զտտիտոզտճ մքստնոմստ վմտոտղնոն ւյ զվն  
 ստոմստնի զնեմս մղթիտոլլ մտմ զտրհսիղմ զվ : սլզւոց

։ հզտղթիտտտտոյ զտի

-տոզմի ւյ վղզմի Լոնեղս . զվրտք մվզտեմտ զմտնոտիտի (։ ւյ . ճնք  
 տմղզզտճն ճիտոտղքոյտո զվրտք վմտտոյտո (։ 'զվրտք վրվեղտմթ  
 (Լ 'մղզզտւոմղտմ ժղմղ զվն զտտնի զվմտոտղնոն : զվրտոյ 'զվրտոյ  
 'հզտղթիտտտղզտմ տեղնոն՝ մղքրտոլտիտտտո 'զտմղզզտտմ  
 զտիտոտտոտնոյն 'զտմղզվեոտրտիմղ 'հոլտ վճնր վ 'զվնղրտմղի  
 մի ժզմս 'մյոնի ճլ զտտք տտն զնղղզտղքոյտո ճնք վմտոտղնոն մս  
 'քզտտիղ չ ժտնի հզտղթիտնիտոլլ մղք վրտոլտն իտնոտոլլ

։ իտզտտոյտոյ զտրքեղտո ճտմղզզվթիտմղտմտմ

զտիտիտնոմ վմտմ՝ 'զվրտնոտն զտզտտո մկ քտզտ մղքեմոյ մտմ  
 Լո մս 'զղզտոլտտտնոն մկ տմք մղքժմտ . մղզզտոլտոլլեոն մտմ  
 մվ Լղմտտեղտ ւյ մղզվթիտնիտոլլ մվ Լղմիտմղի չ հոմտիզտ 'զնիտզ  
 չ զտտմտի ' չ մժտի տոճ մոտքտնոյ մղտտտոտն՝ Լոտմղ չթ 'զտղթ  
 -տիտտտ զլլ : զնղղմ տմղզճղզմսն զտկոմնոմժ ժմտլլ վլթրտնոմ  
 քզ զտոճ մն ' չ զզվթիտնիտտտոտի մտտոտնոտղքոյտո զտմղթմտ . սի  
 -մոլլ : իտրտոզեղտո զտղթիտտոլտոմզտն զտիտիտնոյ չ զտտոզտ ոչն

գինք բնդանելու ։ Կէս գիշերին Վեհիպ փաշան եկաւ ինձ ժամ եւ ըստ ։ Հետեւեալք ։

«Բնովեանի դաւ արդէն ստորագրած էք հաշտութեան դաշնագիրք եւ մեր միջեւ յսողող բարեկամական յարաբերութիւններ են հաստատուած , ես իմ պարտքս համարեցի նախագոյնացնել ձեզ , որ մենք կամ պէտք է ստանանք վրացական պատուիրակութեան ստորագրութիւնը հաշտութեան դաշնագրի տակ մեր առաջարկած պայմաններով . եւ կամ այս առաւօտ իսկ ժամը ճիւղ մեր գործերը Վարացիական գլխի (Ռոբարտի գաւառ) պիտի շարժին Թիֆլիսի վրայ , ուր կը հասնին երկուքեան : Հրամանը արդէն տրուած է : Գուր կը հասկնամ , անշուշտ , թէ սրբաբախտ խոնարհ կարող էր առաջացնել այդ , Թիֆլիսի մէջ , ուր մօտ 200.000 հայ բնակչութիւն կայ : Մենք հարկաւ հրաման կու տանք , որ Հայերսն ձեռք չտան , բայց բերես աւելի լաւ կ'ըլլայ , որ դուք անմիջապէս խօսիք վրացական պատուիրակութեան նախագահին հետ :

Պարզ է , որ Վեհիպ փաշան երկու կողմէն կ'ուզէր սղոյել Վարացիներու վրայ՝ սպառնալով դրսուել Թիֆլիսը եւ սպառնալով հայկական նոր կասարած տառջացնել Թիֆլիսի մէջ : Գիշերուան ժամը յին եւս դացի Վրաց պատուիրակութեան նախագահ Նոյ Ռամիշվիլիի ժամ եւ հագորդեցի անոր Վեհիպ փաշայի հետ ունեցած խօսակցութիւն : Ռամիշվիլին շատ յազուած էր : Ան իր ձեռքին ունէր իր կատարութեան կտրուկ հրամանը՝ շտաբայրել գաշնագիրք մինչեւ որ Թուրքերը սահմաններու մասին որոշ գիշումներ չընեն : Եւ որովհետեւ արդէն ուշ էր , ան հնարատրութիւն չունէր բանակցելու Թիֆլիսի հետ : Իսկ Թիֆլիսի դրսուածք ոչ մէկ պարագայի տակ կ'ուզէր թոյլ տալ : Վերջապէս , գիշերուայ ժամը Յին էր , որ համաձայնեցաւ ստորագրել գաշնագիրք այդ մասին հաղորդելով Վեհիպ փաշային յատուկ նամակով մը՝ ինդրելով միայն Թուրքերէն ինքնարբարար ընել որոշ գիշում սահմանի մասին :

Հետեւեալ օրը ստորագրուեցաւ Թուրք-վրացական գաշնագիրք եւ Թուրքերը ինքնարբարար Արաւթու մասնը գիշեցան Վրացիներուն : Յունիս Տին երկուքեան թրքական պատուիրակութիւնը մեզ ամէնքս հրաւիրեց հանդիսաւոր ճաշկերոյթի : Ներկայ էին կովկասեան բոլոր պատուիրակութիւնները եւ Պոլսէն եկած բազմաթիւ սպաներ , պաշտօնեաներ ու օրագրողներ : Դաշնագրերու վաւերացումը

նշանակուած էր մէկ ամիս ետք, Պոլսոյ մէջ: Յունիս Գին բոլոր պատուիրակութիւնները մեկնեցան Պաթումէն: Մենք վերադարձանք Թիֆլիս՝ բերելոյ մեկի հետ հաշտութեան դաշինքը, որուն բնագիրը այժմ կը պահուի Էջմիածնի թանգարանին մէջ, իսկ պատճէնը տպուած է երեք լեզուներով՝ ռուսերէն, Ֆրանսերէն և հայերէն:

Յունիս Վին հաշտութեան դաշինքի հետ միասին Պաթումի մէջ մենք կնքեցինք թուրքերուն և մեր կալիքսեան հարեւաններուն հետ յստուկ համաձայնութիւն մը երկաթուղային գոյքերու բաշխման մասին, ըստ իւրաքանչիւր պետութեան երկաթուղայիցի երկաթուղիներն: Հարկաւ, այս համաձայնութիւնը երկաթուղային ամբողջ գոյքը գրեթէ կու տար Վրացիներուն, Թաթարներուն և Թուրքերուն, որովհետև Վրացիներն ունէին մօտ 500 վերստ երկաթուղայիցի, Թուրքերն ու Թաթարները միասին 700 վերստ, իսկ մենք միայն 13 վերստ: Այս համաձայնութիւնը ուժի մէջ չկրցաւ մտնել հետագայ զէպերու հետեւանքով: Ուրիշ համաձայնութիւն մըն ալ կնքուեցաւ զերիններու փոխանակութեան մասին:

Երբ անգրկոյթիսեան հանրապետութիւնները հաշտութիւն կնքեցին Թուրքիոյ հետ, անմիջապէս հերթական գործաւ սահմաններու խնդիրը նորակազմ հանրապետութիւններու միջև և հրապարակ եկան Լոտիի, Ղարաիի, Չանդեկուրիի, Սեւանայ լճի, Ղարաբաղի, Նախիջևանի և այլ ցուտ սահմանային խնդիրներ: Թուրքերը ուզեցին փարձաբերել Հայերը ի հաշիւ Վրացիներուն և առաջարկեցին իրենց ծառայութիւնը մեր և Վրացիներուն միջև եղած սահմաններու խնդիրը մեկի համար նպատաւոր կերպով կարգադրելու: Աւարզէմանցիներն ևս, որոնք մէճ ունէին Վրացիներու հետ Չաքախալայի շրջանի և Բորչալուի գաւառի մէկ մասի վերաբերելոյ, նոյնպէս յայտնուեցան Թուրքերու ամբողջութեան վրայ: Բայց Վրացիները յստուկ գրութեամբ մը խնդրեցին Թուրքերէն շխտնուիլ Անդրկովկասեան հանրապետութեանց սահմանային մէջներուն մէջ: Յունիս Դին գերման զօր. Ֆոն Լոսովը հազարեց Վրաստանի կառավարութեան, որ «գերմանական պահակագործերուն հրաման է տրուած քշմամբարը չվերաբերուիլ Թուրքերուն, բայց անպայման կենցախ իրենց տեղերուն վրայ եւ յայտնել Թուրքերուն, թէ իրենց դրուած են ինչ գերման վերին հրամանատարութեան հրամանով»: Այսպէսով Գերմանիա իր հոյանաւորութեան ու պաշտպանութեան տակ կ'առնէր Վրաստանի սահմանները, և Մայիսի կէսին Թիֆլիս հասած գերման զօր. Ֆոն Կրեստի առաջելութիւնը գործաւ Վրաստանի փաստական իշխանութիւնը:

Երևանն ևս զնոց զերմանալան տառապանքիսն մը, բայց չորս զինուորներով միայն :

Երբ մեր պատուիրակու թիւնք Պաթուսէն վերադարձաւ թիֆլիս, Հայոց Ազգային Խորհուրդը անմիջապէս ձեռնարկեց Հայաստանի կոստալարութեան կազմակերպման : Վարչապետութեան թեկնածու Երեք Հոյի կային, բայց կարգ մը նկատումներով միաձայնութեամբ որոշուեցաւ ընտրել Յ. Քաջազնունին : Միւս Երկու թեկնածուները՝ Կարճիկեանը և Լս, մտանք Քաջազնունիի գահչիճին մէջ, — Լս իբրև արտաքին գործոց, իսկ Կարճիկեանը իբրև Լիւմառից և ինտամատարութեան նախարար :

Քաջազնունիի գահչիճը ընդունուեցաւ մեծ համակրանքով Հայ Հասարակութեան կողմէ : Մասնաւորապէս Քաջազնունին յարգուած ըլլալով միւս կուսակցութիւններու կողմէ, ընդունելի անձնաւորութիւն մըն էր ամէնուն համար : Զօր. Կորկանտոյր, որ հրաւիրուեցաւ մտնելու գահչիճին մէջ իբրև զինուորական նախարար, մերժեց ընդունիլ իրեն տառապանքաւ պաշտօնը և յսնձնարարեց զօր. Ախլերտոյր : Վերջինս մտաւ գահչիճին մէջ : Զօրաւորը անուայմանօրէն նախարարած ըլլալով Հայաստանի անկախութեան պաշտպարին, զմբախտարար հայերէն չէր զիտեր : Հայերէն չէին զիտեր նաև զօր. Սիլիկեանը և զօր. Նապարկեանը : Եւ ստիկա անկասկած մեծ թերութիւն մըն էր, որ անկարելի էր արդէն ուղղել :

Կոստալարութիւնը կազմելէ ետք կուսակցութիւնները սկսան մտածել ժամանակաւոր խորհրդարանի մը կազմութեան մասին : Որոշուեցաւ խորհրդարանը կազմել աշխպէս, ինչպէս կազմուած էր Հայոց Ազգային Խորհուրդը, այսինքն՝ կուսակցութիւններու համաձայնութեամբ և, որոշ թուական համեմատութեամբ : Քաջազնունին հակառակ էր, որ թէ՛ գահչիճը և թէ՛ խորհրդարանը կազմուին թիֆլիսի մէջ : Ան տնհրամեշտ կը պնդէր այդ խնդիրը վերջնականապէս յաւանք Երևանի մէջ՝ գահչիճի և խորհրդարանի մէջ առնելով Երևանի գործիչները :

Մինչ տեղի կ'ունենար կազմակերպչական այս աշխատանքը, Թրքական զօրքերը Ղարաբաղի միայնով կ'անցնէին զէպի Դիլիջան և Ղապախ, սրիկ կ'ուղևորուէին զէպի Պաքու : Պաքուի մէջ կազմուած էր տեղական իշխանութիւն մը, որուն ուժ կուտային պուշեփիկները և որ չէր սուրբ ճանչնալ Պաթուսի գաշնապիրը : Միւս կողմէ Անդրանիկը ամբացել էր Զանդեղուրի՝ մէջ և որոշեց էր թոյլ շտալ Թուրքիոյն անցնելու Ղարաբաղ : Այսպիսով, Պաթուսի գաշնապիրը լուծած չէր Կալիասի բոլոր խնդիրները և նայնիսկ նոր ա-

ոթի՞նը ու կու տար թշնամութեանց ու բաղխումներու ։ Ամէնէն կարեւոր ինչորք Պարուի գրաւումն էր, սրան ղէմ թարգերը ուղղեցին 15,000 զորք ։

Պաթումի դաշնադրի կնքումէն յետոյ զաղբեցան զինուորական բաղխումները թուրքերուն հետ, Երեւանի և Ալեքսանդրապոլի շրջանին մէջ ։ Սալիլ փաշան՝ Միջագետքի ճակատի հրամանատարը՝ Եկած էր Երեւանի թրքական ճակատը՝ իր զորքերուն վիճակը քննելու համար ։ Չոր. Նապարրէկեան՝ իմանալով անոր գալու մասին՝ ցանկութիւն էր յայտնած Երթալու իր հակասակորդի մօտ, զոր Զարգած էր սլաւահական ճակատի վրայ, Գիլմանի մօտ ։

Սալիլ փաշա, յսելով Չոր. Նապարրէկեանի այդ ցանկութեան մասին, ինչորք էր հաղորդել իրեն. «Սալիլ փաշան թոյլ չի տար Երբէք, որ այն մարդը, որ զինքը միշտ Զարգած է, առաջինը այցելէ իրեն» ։ Եւ, իբրև, Սալիլ փաշան ինքը Եկու Երեւան, Նապարրէկեանի մօտ՝ տեսակցութիւն ունենալով նաև Արամին հետ, որուն անձամբ ծանօթ էր շատանց ի վեր ։ Թոյլով Մեհմէտ փաշան Երեւանի մէջ իրբև թուրքիս ղեկարան՝ Սալիլ փաշա մեկնեցաւ ։

Թիֆլիսի և Երևանի կողմը շատ սկար էր ։ Թուրքերը գրաւած էին Երկաթուղաղիծը և անցնելու թոյլտուութիւն ստանալու անոցմէ շատ դժուար էր ։ Հետագիրք իճացած էր ու չէր զործեր ու Երկաթուղիինն ուլ գրեթէ կանց աւած էին ։ Մինչև Քաջագոնուրի գահլիճին Երևան գալը, որ տեղի ունեցաւ Օգոստոսին, Հայաստան կը կառավարուէր Երևանի Աղղային Սորհուրդին և յանակին կողմէ ։

ՊԵՐՂԻՆ ԱՂԱՐԿԻԱԾ ՄԵՐ ԱՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ՝ ՏՈՒՔԻ. Համօ Ռանճանեանի և Արշակ Չահրայեանի մասնակցութեամբ յաջողած էր մեղ համար որոշ նպաստաւոր տրամադրութիւններ ստեղծել զերման կառավարութեան մօտ ։ Այդ ջանքերուն հետեանքով էր, որ Պոլսոյ մէջ Յունիս 25ի համար նշանակուեցաւ խորհրդաժողով մը, որուն պիտի մասնակցէին Կեղրսնական Եւրոպայի բոլոր սեռու-թիւնները՝ Գերմանիա, Աստրո-Հունգարիա, Թուրքիա և Պուրկարիա, և սրուն հրուիրում էին նուև Անգլիսիկոսի հանրապետութիւնները ։ Փոն Արեսը պաշտօնապէս հաղորդեց այդ մասին Հայոց Աղղային Սորհուրդի նախագահ Ա. Ահարոնեանին, ինչորքով անհրաժեշտ կարգադրութիւնները բնկ խորհրդաժողովին մասնակցելու համար ։ Նոյն օրը Երեկոյեան տեղի ունեցաւ Հայոց Աղղային Սորհուրդի նիստը, մասնակցութեամբ Քաջագոնուրի գահլիճի անգամներուն ։ Հետագիրք նպաստաւոր տրամադրութիւն ձգեց. բնոցանոր կարծիքն այն էր, թէ Գերմանիա կուզէ վերաբննել Պաթումի դաշ-

նազիրը և փոխելի դույն, Համառոտ Պրեսի-Լիթոգրաֆի Հաշտութեան պայմաններուն: Պսիխ Երթալու Համար բնարուեցաւ պատուիրակութիւն մը յանձին Ա. Ահարոնեանի, Մ. Պապաջանեանի և ինձ: Մեզ հրահանգ տրուած էր առէն ջանք թափել ընդարձակելու Հայաստանի սահմանները: Մեզ հետ ստինք իրբու գինուորական խորհրդական Զօր. Կորկանեանը և Երկու քարտուղարներ, Յունիս Աին Վրաց պատուիրակութեան հետ միասին մեկնեցանք Պաթում, ուրկէ հետևելով սրբ գերման «Գեներալ» նաւով ուղևորուեցանք Պսիխ:

Երեք օր ևոք արդէն Պսիխ էինք: Քարտիր մեզ գիմաւորեցին, Մուխթար սէյի գլխաւորութեամբ:



## Ջ. Գ Լ Ո Ի Խ

### Վ Ո Ր Ս Ա Մ Ի Ս Կ. Պ Ո Լ Ս Ո Յ Մ Է Ջ

(1918 ՅՈՒՆԻՍ 15 — ՆՈՅԵՄԲԵՐ 1)

Մեր Պալիս հասնելուն, չէնց որ նաւի կամուրջը իջեցուցին, Մուխթար պէյր, որ Թուրքիոյ նախկին գեապանն էր Յունաստանի մէջ և այժմ պաշտօն ունէր մեկ ուղեկցելու, Երեք սպաներու հետ միասին բարձրացաւ նաւ և Ֆրանսերէնոյ մը ողջունենց մեզ իր կառայարութեան կողմէ, շնորհասուրենց, որ ողջ-առողջ հասած ենք եւ ներկայացուց մեկ իր հետ եկած սոյաները՝ Նուրի պէյր և Ահմէտ պէյր: Վերջինս ծաղումսոյ Արար էր:

Մուխթար պէյր մեկ հաղորդենց, որ մենք թուրք կառայարութեան հիւրերն ենք եւ մեր ընտելութեան համար յատկացուած է Թոքաթլեանի պանդոկը: Մենք յայտնեցինք մեր շնորհակալութիւնները կառայարութեան սիրայիբ վերաբերմունքին համար և մեկնեցանք պանդոկ: Ուշադրութեամբ կը դիտէինք քարափը հաւաքուած ամբոխի գէմքերը և չէինք կրնար գտնել Հայեր, որոնցմէ ոչ ոք յանդգնութիւն ունեցած էր բացարձակ կերպով գիմարելու Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչները: Երևւոյթը գեռ շատ նոր էր ու Երկիւղայի: Պատերապմը գեռ վերջացած չէր եւ անոր վախճանը կտակածի տակ էր: Բոլորն ալ շափուպանց գգուշաւոր էին: Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներու գալուստը, ինչպէս յետոյ իմացանք, շատերուն կը թուէր Երազ. բոլորի յիշողութեան

մէջ զեռ թարմ էին մեծ սղկտի գարձուրելի պատկերները, և ո՞ր  
Հայր կրնար հաստատ, թէ այդ սարսափներէն ետք իր տոջեւ պիտի  
դանէ Հայաստանի Հանրապետութեան նախարարները :

Երկու տարի ետք ևս նորէն Պոլիս եղայ : Քանի մը կիներ պատ-  
մեցին ինծի, թէ ինչպէս այն ատեն իրենց տուներուն մէջ պահու-  
տած՝ ջերմօրէն սպօթած ևն մեր անողջութեան և բարօրութեան  
համար : Անոնք կը վախնային, թէ Թուրքերը օր մը մեզ պիտի սպան-  
նեն կամ թունասրեն :

Պանդուխտ մէջ մեզ համար յա սեղան մը պատրաստած էին  
արդէն : Ճաշէն և բիշ մը հանգստանայէ ետք պայմանաւորուեցանք  
Մոխիթար պէյի հետ, որ մեր առաջին այցելութիւնը պիտի բնենք  
Խալիլ պէյին, որ արդարապատութեան նախարար էր և Պաթումի  
խորհրդատուօրին ատեն թուրք պատուիրակութեան նախագահն էր :

Խալիլ պէյ մեզ ընդունեց շատ սիրալիբ կերպով . մեր խօսակ-  
ցութեան ասարկան եղաւ ասաջիկայ խորհրդատուօր, անոր օրա-  
կարգը և այն միջոցները, որոնք անմիջապէս պէտք է ասնուին Հա-  
յերու վիճակը Կովկասի մէջ բարեկուսկոյ համար : Մեր հիմնական  
միտքը հետեւեալն էր, որ սրտէ կերպով արտայայտեցինք խօսակ-  
ցութեան ընթացքին . «Կո՛ւմ Հայաստանը պիտի սպրի, բսինք մենք  
Խալիլ պէյին, այն ատեն տուէք անոր յարմար սահմաններ, կամ  
պիտի չսպրի, այն ատեն մեր բոլոր խօսակցութիւնները աւելորդ  
են» :

Պէտք է յսեմ ընդհանուր կերպով, որ մեր գրողումներու ու  
խօսակցութիւններու զլխասար ասարկաները չորս ամսուան ընթաց-  
քին եղան երեք . Ա) Նպատակադարմար սահմաններ կենսունակ Հա-  
յաստանի մը ստեղծման համար . Բ) Պոլսոյ խորհրդատուօր . Գ)  
Հայերու անտանելի վիճակը Կովկասի մէջ : Այս հարցերու մասին էր,  
որ կը խօսէինք շարունակ այն բոլոր պաշտօնական թէ անպաշտօն  
անձերու հետ, որոնց հետ առիթ ունեցանք տեսնուելու Պոլսոյ մէջ :  
Եթէ մեր այդ բոլոր խօսակցութիւններն ու տեսակցութիւնները շատ  
մը անձերու հետ՝ զրի ատներու բլայի, ահապէն հատոր մը դուրս  
պիտի դար : Ես կանոյ կ'տանեմ միայն ամէնէն կարեւոր զէպքերու  
վրայ, որոնք պիտի բաժնեմ երեք խումբի . Ա) Մեր յարարերու-  
թիւնները Թուրք նախարարական Խորհուրդին հետ, Թալէաթ փա-  
շայի և Էնվեր փաշայի զլխասարութեամբ . Բ) Մեր յարարերու-  
թիւնները օտար ղեկավարներու հետ, Գերմանիոյ ղեկավան Կոմս  
Պերնստրֆի, Աստրօ-Հունգարիոյ ղեկավան Մարքիզ Բայալիչիչիի  
և Պուլկարիոյ ղեկավան Քուլչիֆի, ինչպէս նաեւ չէզոք պետութեանց՝

Պարսկաստանի և Եուզիստանի պետականներուն հետ. Գ) Մեր յարաբե-  
րութիւնները Երիտասարդ Քուրդերու կոմիտէի, ինչպէս թուրք պե-  
տական ազգայնիկ զործիչներու և մամուլի ներկայացուցիչներու  
հետ. ստանց մէջն էին, ի միջի ալյոյց, Ահմէտ Բիպա պէյր, Քեօանիճի  
խմբադիր Հիւսէին Ճահիա պէյր և ծովային նախարար Բէուֆ պէյր :  
Ասկէ զատ մենք տեսակցութիւն ունեցանք Սուլթանին հետ, որուն  
մեզ ներկայացուց ինովէր փաշան : Մեր խոսակցութեան նիւթն էր  
Հայկական Հարցը :

Մեր գիտօրութիւնները Հայաստանի սահմաններու չափազանց  
նեղ ըլլալու մասին, շարունակ կը հանդիպէին Քուրդերու կողմէ այն  
ստարկութեան, թէ բոլոր պետութիւններն ալ սկսած են իրենց կեանքը  
փոքրիկ հոգածաստով և փոքրիկ ժողովուրդով : Իբրև օրինակ կը բե-  
րէին Յունաստանը, որ իր սկզբնաստութեան օրերուն ունեցած էր  
միայն 400-500 ընտկիչ : Կը մտանանչէին Պելճիքան, որ 30-000 քառ-  
գիյրմէթրի վրայ կըրցած էր միայն մեզ միլիոն ժողովուրդ ապրեցնել  
և ինչ : Քուրդերուն ստարկութիւնները այս ուղղութեամբ ջրելու եւ  
մեր տեսակէտները աւելի համոզիչ կերպով ներկայացնելու համար  
մենք պէտք ունէինք վիճակագրական տեղեկութիւններու ու փաստա-  
կան տուեալներու : Այդ պատճառով ալ մեր առաջին զործը եղաւ  
պատրաստել զեկոյց մը, որով ցոյց տայինք թէ որքան հոգ պէտք է  
Հայ ժողովուրդի գոյութեան համար, ինչպէս նաև համեմատական  
թիւեր կաւ տայինք կովկասեան երեք ազգերու բնակչութեան եւ հոգի  
մասին : Այս աշխատանքը կատարուեցաւ զինուորական մասնազա-  
տը. Կորկանեանի, տնտեսական գիտութեանց փրոֆեսոր Բունեաթ-  
եանի և Կովկասի ազգայնութեան մէջ հմուտ եղբոր՝ Փէրոզ Սա-  
տիսեանի զեկովարութեամբ : Մեր նպատակն էր ցոյց տալ մեր ան-  
վիճելի իրաւունքները Ախալքալաքի, Լոռիի, Զանդակուրի, Ղարա-  
բաղի և Նախիջևանի վրայ, որոնց վրայ յասակնութիւններ ունէին  
մեր կովկասեան շարեանները :

Քուրդերը շատ բաւ ծանօթ էին մեր ծրարիքներուն եւ ձգտում-  
ներուն, բայց չէին ուզեր որ գոյութիւն ունենայ կենսունակ Հայաս-  
տան մը : Անոնք զէմ էին, որ Ղարաբաղն ու Զանդակուրը կցուին  
Հայաստանին, որովհետև կ'ուզէին բաց պահել իրենց ճամբան զէպի  
Պաքոն : Դէմ էին նոյնպէս, որ Ախալքալաքն ու Լոռին մեզի տրուին,  
որովհետև կ'սպէին սպառ պահել ճամբան զէպի Ղազախ ու Գան-  
ձակ : Մենք շարունակ կը վիճէինք իրարմէ ճածիկով ճամբարտութի-  
ւնը, խուսափելով բանալ մեր բոլոր քարտերը իրարու առջև : Երբ,  
վերջապէս, մեր քարտէսը զծուած սահմաններով ներկայացուցինք

Թուրքերուն, տեսնե՞ք որ Ատրպէջանցիներն ու Վրացիներն այ շարք մը հայկական հողամասեր մտցուցած են իրենց սահմաններուն մէջ: Հրտաբարակ կու գար ներքին մտանցուոր հակամարտութիւն մը, որ յետոյ արտառայառուեցաւ հայ-վրացական և հայ-ատրպէջանեան բնդհարումներու միջոցով, որ այսօր ժամանակաւոր կերպով դրս-պուած է և որ մայր հաւանաբար նորէն հրտաբարակ գայ այս կամ այն Եզանակով:

Իւրաքանչիւր սուրհանդակ՝ որ կու գար կովկասէն, մեզ կը բերէր սարսափելի լուրեր Հայաստանի ժողովուրդի վիճակին մասին: Թուրքերը դուրս կը տանէին մեր երկրէն կենսամթերքները, և պանդուածը կը մասնուէր սովի ու համաճարակի:

Յուլիսի սկիզբը մենք կը սպասէինք, որ պիտի բացուի խորհրդածոցովը, որուն համար արդէն պատրաստ էինք լիովին: Բայց չբացուեցաւ. կը նշանակուէին շարունակ բացման օրեր և միշտ կը յետաձգուէին: Գլխաւոր պատճառը անյաջողութիւններն էին ռազմաճակատներուն վրայ: Որքան աւելի կը մեծնային այդ անյաջողութիւնները, այնքան աւելի Թուրքերն ու Գերմանացիները կը խուսափէին խորհրդածոցովի մասին խօսել: Չորս ամիս այսպէս սպասեցինք և ի վերջոյ խորհրդածոցով շունեցանք: Եւ մեր զիւանսպիտական աշխատանքը Պոլսոյ մէջ՝ սահմանափակուեցաւ մեր ունեցած տեսակցութիւններով, Թուրքիոյ ղեկավար անձնաւորութիւններուն և անոր ղինակից ղեկավարներուն հետ:

Ուայիլ պէ՛ղն յետոյ, մենք նոյն օրն իսկ այցելութիւն տուինք Թալաթ և Լնվէր փաշաներուն: Անոնքի վերջն էր: Թալաթ փաշան մեզ բնդուեց Բ. Դրան մէջ: Հարկաւ, իր տուօջին իսկ խօսակցութեան ատեն, ջնասց նետէ իր վրայէն որեւէ պատասխանատուութիւն հայկական Եղեռնին համար: Ամբողջ պատասխանատուութիւնը կը ձգէր ղինսորական իշխանութեան, Քիւրտերու և տեղական իշխանութիւններու վրայ: «Ահա դուք պիտի տեսնէք ինքներդ, կ'ըսէր ան, թէ ինչպէս Երրեմն պաշտօնեաները կամայական կերպով կ'արգաւաղեն վերէն եկած հրամանները»: Ան կը պատմէր, թէ ինչպէս պատերազմի առաջին օրերուն ինք խնդրած էր խորհրդարանի անդամ Վարդգէսէն Թուրքիոյ կողմը բռնել և ինչպէս Վարդգէսը իր այդ խնդրանքին պատասխանած էր լուսթեամբ: «Ար թշնամիները Բուսուրն էին, կ'ըսէր Թալաթ, բայց երբ անոնք իրենց հրայանները կը պարպէին մեր ղինուորներուն վրայ, անոնց փամփուշտները կը դաշէին մեր ղինուորներուն ոտքերուն: Իսկ երբ սկսան կրակել թրքահպատակ Հայերը, իրենց հայրենիքի դաւաճանները, այն

տանն փամփոռչաները կը դպչէին մեր զինուորներու սրտին» :

Այս տեսակցութիւնը հարկաւ տանջանք էր մեզի համար : Ահա-  
րոնեանք խօսեցաւ հանդամանօրէն եւ բուռն կերպով, իսկ Պապա-  
ճանեանն ու ես աշխատեցանք մեր խօսակցութեան նիւթը անցեալէն  
փոխադրելու ներկայի հրատապ հարցերուն վրայ :

Ընդհանրապէս պիտի բռնեմ, որ զերերը մենք առաջուրնէ կը  
բաժնէինք իրարու միջեւ եւ ամէն մէկը յանձն կ'առնէր խօսիլ որոշ  
նիւթերու վրայ :

Թալաթի փաշան խօսքով իր հասանութիւնը կու տար մեր պա-  
հանջներուն, բայց կ'ըսէր թէ բոլոր հարցերն ալ խորհրդածոցովը  
պիտի որոշէ : Թալաթի արտաքինը իրեն համար նպաստաւոր տպա-  
ւորութիւն մը չէր ձգեր . իր ամբարտաւան երեւոյթը, ոչ-մտաւորա-  
կանի զէմքը, մարմնեղ կազմուածքը, իր ձայնը, որ կեղծ բարեկա-  
մութեան մը շեշտը կ'առնէր, չէին կրնար նպաստաւոր ըլլալ : Ի վեր-  
ջոյ, ան խնդրեց զրաւ որ կերպով ներկայացնել իրեն հայկական պա-  
հանջները, զեկուցանելու համար նախարարական խորհուրդին եւ  
խոսաւցաւ խօսիլ արտաքին գործերու նախարարին հետ :

Մեր երրորդ այցելութիւնը տունք էնվէր փաշային, որ մեզ  
ընդունեց պատերազմական նախարարութեան շէնքին մէջ, Պայազի-  
աի հրապարակին վրայ : Երբ մտանք ընդունման մեծ սրահը, մեր  
ուշադրութիւնը զրաւեց դիմացի պատին վրայ ռսկէ տառերով գրծ-  
ուած արարերէն մակադրութիւն մը, որ կ'ըսէր . «Սուրբնու հովանու  
տակ կը գտնես քո հանգիստը» : Էնվէր փաշա անմիջապէս ընդունեց  
մեզ . միջահասակ եւ մոյլըզակազմ մէկն էր, որ առաջին անգամէն  
քաշուոց, վերաբերմունքի մէջ պարզ եւ շատ դուստ մարդու տպա-  
ւորութիւն մը կը ձգէր . զէմքը շատ խիստ էր եւ հանգարտ, ազբերը՝  
խորթափանց եւ խոհուն . ընդհանրապէս զրաւիչ էր արտաքինով :  
Այս մարդուն նայելով գծուար էր հաստատել, թէ ընդունակ է հան-  
դարտ սրտով հարիւր հարգաւոր մարդիկ մահուան զիբկը նետել :  
Այդքան խարուսիկ է Թուրքերուն երեւոյթը . ասոր համար է, որ  
Եւրոպացիները այնքան զիւրաւ կը խարուին անոնց անուշ եւ զրաւիչ  
ձեւերէն :

Էնվէրի մօտ մենք ուղղակի անցանք մեզ շահագրգռող հրա-  
տապ խնդիրներուն՝ զազթականներուն, սահմաններուն եւ խորհրդ-  
ածոցովին : Էնվէր փաշա շատ դուստ կերպով արտաստեանեց . «Ար-  
տաքին նկատմաները մեզ թոյլ չեն տար, որ ապատութիւն տանք  
զազթականներուն վերադառնալու մեր զրաւած շրջանները . տեղա-  
կան մահմետականները չեն ուզեր զանոնք տեսնել . ես չեմ կրնար

Երաշխաւորել անոնց կեանքը: Թող անցնի ժամանակ մը. հանգա-  
մանքները թիրեւս կը փոխուին: Եւ յետոյ, չէ՞ որ Հայերը դեռ պա-  
տերապի մը մղեն մեզի զէմ. Պարսի մէջ անոնք կազմակերպած են  
տեղական մը եւ կը կոտորեն տակաւին, ինչպէս նաև Զանգեզուրի մէջ  
Անդրանիկը կը շարունակէ պատերազմի մեր զէմ»: Նոյն պատաս-  
խանք տուած էր նաև յետոյ գերման գեսպան Կամ Պենատորֆին եւ  
ընդհանուր հրամանատար Հինտենպուրկին: Այդ մենք տեսանք այն  
հետագիւրծերէն, որոնք փոխանակուած էին անոնց միջև:

Գալով սահմաններուն՝ էնվէր փաշան յայտնեց միտք մը, որ  
երևի շատ խորն էր նստած անոր ուղեղին մէջ: Ան բտաւ. «Մենք  
չենք կրնար մտածել սահմաններու ընդարձակութեան մասին, որով-  
հետեւ ես յաջողեցայ ընել այն, ինչ որ կենսական անհրաժեշտութիւն  
մըն է Թուրքիոյ համար: Ես եւ իմ ընկերներս ստեղծեցինք Հայաս-  
տանը եւ ատով գտնացում տուինք Հայերու ազգային ճգնաժամներուն  
եւ լուծեցինք Հայկական Հարցը: Միևնոյն ատեն մենք այդ ըրինք  
Թուրքիոյ սահմաններէն դուրս, որոտական հողին վրայ, եւ ունե-  
ցանք երկու յաջողութիւն. Ա) Ստեղծեցինք Հայաստանը եւ Բ) Ան-  
վարար պահեցինք Թուրքիոյ հողը: Միայն այդ զեմով է, որ մենք հա-  
մաձայնեցանք հաշտուիլ Հայկական Հանրապետութեան գոյութեան  
հետ: Արդ, ի՛նչպէս կարելի է այժմ պահանջել, որ նոր հոգամտեք  
կցենք Հայաստանին. չէ՞ որ այդ չենք կրնար ընել առանց դպչելու  
հին եւ նոր Թուրքիոյ հողերուն: Կորստ, Արտահանը եւ Պարումը  
նոր միայն վերադարձան իրենց հին հայրենիքին գիրկը»:

Մեր առարկութիւններուն՝ Հայաստանի սահմաններու չափա-  
զանց նեղ ըլլալուն եւ Հայ ժողովուրդի պատմական իրաւունքներուն  
մասին, էնվէր փաշա պատասխանեց. «Ո՛ր, ես լաւ գիտեմ, որ անգամ  
մը ազատութիւն նախկին ժողովուրդ մը երբեք չի կրնար անկէ  
հրաժարիլ»:

Մեր առաջին տեսակցութիւնները ընդհանուր տոմամբ որևէ  
գրական արդիւնք չտուին: Մեր հետեւեալ տեսակցութիւններն ալ  
արտաքին զործոց նախարար Նիսիմի պէյի եւ ներքին զործոց նախա-  
րար Ճանպուրաթ պէյի հետ շատ քիչ բան աւելցուցին նախորդ տպա-  
ստութիւններու վրայ: Բոլոր Թուրքերն ալ իրենց խօսակցութիւն-  
ներուն մէջ շարունակ կը շեշտէին այն մտքը, թէ Հայերն ու Թուր-  
քերը բաժնոցը Անգլիան եւ Ռուսիան են, որոնք երկու հարևան ժո-  
ղովուրդները իրար հետ կուսեցնելով՝ պատր Զուրի մէջ ձուկ կ'որ-

սան: Մասնաւորապէս հետաքրքրական էին Հիւսէին ճահիտ պէյի եւ Րէուֆ պէյի արտայայտութիւնները:

Նկատելով, որ մեր խորհրդածուրդը ձգձգումներու կ'ընթարկուի, մենք կը ջանայինք զբաւել մեր կողմը թուրքիոյ հանրային կարծիքը՝ աշխատելով ցոյց տալ թուրք հասարակական զործիշներուն, որ համաձայնութիւնը Հայերու հետ թուրքերու համար ալ օգտակար է: Մեր պատճառարանութիւնները հետեւեալներն էին.—

Ասանց ժխտելու մեր պրոպականտը արտասահմանի մէջ, ինչպէս նաեւ հայաստանէն զարձանելութիւնը ամէնուրեք, մենք կը յայտնէինք թէ այդ բարբը պիտի շարունակուի ի վնաս թրքական վարկին, որքան առեւն որ Հայկական Հարցը լուծուած չէ զոհացուցիչ կերպով: Միւս կողմէ մենք կը խոտտանայինք բարոյական անկարգութիւն թուրքիոյ վերաշինութեան զործին մէջ, ցոյց կու տայինք, որ անկախ Հայաստանի, Վրաստանի եւ Ատրպէջանի գոյութիւնը ապահով սահմաններ կը սակզծէ թուրքիոյ համար անհանդիստ Հիւսիսին դէմ: Մեր պատճառարանութիւնները որոշ տպագրութիւն կը ձգէին թուրքերու վրայ, բայց զպոյի էր, որ իրենց միտքերը սրելու օգտութեամբ կը զարմէին, այն է՝ իրենց անյաջողութիւնները արեւմտեան ճակատի վրայ իրենց հայեացքները ուղղած էին զկոյի արեւելք: Կորսնցնելով Պալատները, արարական երկիրները յոյս ունէին, թէ իրբեւ փոխ-հատուցում պիտի ստանան կենդանի ուժ եւ հոյ կովկասի, թուրքիստանի եւ պարսկական Ատրպատականի մէջ: Եւ կրնամ պնդել, որ այդ հետեւիները բատկանին իրական հնարատութեան մը ձեւով ներկայացուցած էր թուրքերուն Պրեսի-Լիխովսքի մէջ Պալատիոյ վարչապետ Մայիսովը: Այս մասին ինձի պատմեց Պոլսոյ պալիարդէսպան Քոլսովը, որուն հետ առիթ ունեցանք տեսնուելու տասնեակ անգամներ:

Այսպիսով, Երկու հիմնական ծրարիներ կը զբաղեցնէին թուրքերուն միտքը այն ստեղծ: Առաջին՝ Ենթարկել կովկասը թուրքիոյ, յենուելով միասութեանական մեծամասնութեան վրայ եւ իջնցնել Հայերու եւ Վրացիներու ուժը նուազագոյն չափի մը: Ետեւս իր թուրքիստանի վրայ եւ Մակուի վրայով նորէն պարսկական Ատրպատականի վրայ: Երկրորդ՝ սակզծել կովկասի մէջ կովկասեան պետութեանց զօրեղ գաղնակցութիւն մը եւ այսպիսով ուժեղ պատասար մը ստանալ բերել թուրքիոյ զարատը թշնամիին՝ Ռուսիոյ դէմ: Թուրքերէն ոմանք կը ջանային այս երկու ծրարիները միացնել: այսպէս էր օրինակ Հիւսէին ճահիտ պէյը, որ կ'ուզէր ստեղծել կովկասեան զօրաւոր գաղնակցութիւն մը թուրքիոյ հօգնանաւ-

րութեան տակ: Այն ատեն դեռ ծանօթ չէի էնկիրիբի կառավարութեան արտաքին գործերու նախարար Պէքեր Սամի պէյի հետ, որ հետագային նոյն ծրարիրը արծարծեց քանի մը անգամներ:

Հիւսէին ճահիտ պէյի մօտ մենք գապինք հայ հրապարակապիր Տիգրան Չաւէնի հետ. բնակարանը, ծառաները, կարգ ու սարքը եւ վերաբերմունքը Լուսափան երեւոյթ ունէին: Բարձրահասակ, խլացի գէմբոյ, բաւ հացուած, Փրանսերէն սրանչիլի խօսող՝ ճահիտ պէյը շատ հաճելի տղայութիւն կը ձգէր: Մենք պատմեցինք անոր մեր պահանջներու մասին, եւ ան պատասխանեց մեզ, որ ինքը կառավարական կուսակցութեան չի պատկանիր Լուսափանի մէջ, ուստի հազիւ թէ կարողանայ գործնական օգտակարութիւն ցոյց տալ մեզ, բայց իրբեւ հանրային գործիչ մը՝ ան անհրաժեշտ կը գտնէր զո՞ւրեք մտաւ շայերուն: Ան բաւ. «Պէտք է զուր գեղ հաշի տար եւ բմբուռք նաեւ մեր ազգային կենսական պահանջները»: Եւ սկսաւ մեզ ներկայացնել գանձեր: Վերջոյց բարակար եւ սկսաւ պարզել աւն սեռութիւնը, թէ Թուրքիոյ մէջ պատերազմէն յետոյ հազար թէ միջ տիւրքներու տեղի Թուրքեր կը մնան: «Մեզ պէտք են կենդանի ուժեր, բաւ ան, եւ Հայերը պէտք չէ որ մեր ճամբուն փակեն դէպի մեր Երբայրները»: Եւ ցոյց տուաւ Երկու ճամբարներ, սրանք կը տանին դէպի այդ Երբայրները. առաջին՝ Չանկուր-Ղարարազ ճամբան, եւ Երկրորդ՝ Ախալքալաք-Բուրջալու գիծը: «Աստուծոյ մէջն ու մէկը, Երբայրացոյց ան, պէտք է բաց մնայ մեզ համար. բայց ստոր դուզընթաց պէտք է որոշ գոհացում տալ նաեւ ձեզ»: Եւ ճահիտ պէյն այնուհետեւ սկսաւ ցոյց տալ այն հողերը, ուր Հայերը կրնան զուրեք մտաւ:

Հիւսէին ճահիտն յետոյ տեսակցութիւն ունեցանք նաեւ Բէուֆ պէյի հետ: Ճեմալ փաշայէն յետոյ ան ծովային նախարարի պաշտօն ստանձնեց: Այն ատեն սակայն Բէուֆ պէյ իշխանութեան գլուխ չէր, բայց յետոյ, Երբ անդլիական հասանքը Թուրքերու մէջ դորացաւ՝ շնորհիւ անդլիական յաղթանակներու, Բէուֆ պէյը ծովային նախարար կարգեցին: Բէուֆ պէյը չափաւոր հայեացքներու տէր կը համարուէր, Լուսափան մեզ խօսելը էնպէր փաշայի հետ ի նպատակ մասնաորակէ մեր զաղթականներուն: Իր խոստումը կատարած էր, բայց իր միջամտութենէն որեւէ արդիւնք չէրաւ:

Իր վարչապետութեան օրով այդ մարզը ոչ մէկ համակրանք ցոյց տուաւ դէպի Հայերը, թէ Գալիս Եղած ատեննիս, Երբ գեղ իշխանութեան զըտի չէր, Չերմ համակրութիւն ցոյց կու տար: Անոր մամանակն էր, որ տեղի ունեցան Իգմիրի աղէտը եւ Պուլտոյ ահա-



րեկման օրերը :

Այցելութիւն մը տաինք նաև Վեհայ փաշային, որ կ'ապրէր Գատրղէօյ եւ զորձէ քաշում էր : Չափապանց սիրալիւր էր : Իր կարծիքով այսուհետև այլևս վիճելի խնդիրներ Հայերու ե թուրքերու միջև պէտք չէ ըլլան, րացի մէկ քանի աննշան «թիւրիմացութիւններ» էւ զտղթականական խնդիրներէ : «Հայ-թրքական բարեկամութեան նոր գարաշրջան սկսած է», եղրակացուց ան :

Բնորոշ է, որ անկեղծ թէ կեղծ՝ մեր տեսած բոլոր թուրքերն ալ կը շեշտէին Հայ-թրքական բարեկամութեան անհրաժեշտութիւնը թուրքիոյ համար : Եւ տրամադիր եմ կարծելու, որ անոնք այն ատեն անկեղծ էին, սրովհետև Հայկական Հարցը ապագայ հաշտութեան խորհրդածողովին մէջ կը նկատէին իրենց ամէնէն զժաւարին Հարցը : Հայկական գոհերու արիւնք զեռ թարմ էր յիշուցութեանց մէջ, եւ Մաստիքի նաութիւն հասր շէր կրցած տակաւին մոռցնել մեծ եղեռնը :

Օր մը մեկ ճամ կեաւ երիտասարդ թուրք մը՝ Հմին պէյ, որ այժմ «Վազիր» թերթի խմբագիր է : Ան յետոյ Մայթաւ աքտորուեցաւ ս վերադարձաւ Պոլիս՝ շարունակելու իր հրապարակագրական գործունէութիւնը : Էմին պէյ նոր ճամբաներ կը փնտռէր Հայ-թրքական մերձեցման համար . ան բարեխղճօրէն ներկայացուց մեր պահանջները իր թերթին մէջ, պաշտպանելով դանտք, «տոանց սակայն մնաւ մը հասցուցած ըլլալու թրքական շահերուն» :

Պոլսոյ միւս օրկանները, օրինակ՝ «Թասվիլի Էֆենարը» եւ «Ալզամ»ը բառն կերպով հակառակ կ'արտայայտուէին մեզ : Առաջինը յրբաբար հնարեց կնթէրվի մը ինձ հետ՝ ինձի վերագրելով այնպիսի մտքեր, ինչպէս, օրինակ, «Հայերը սարբեցին հայկական կոտորածը՝ արդար կերպով զրգոելով մահճետականներու վրէժ-խնդրութիւնը» եւն. : Եւ սախուած էի հերքում զրել եւ թերթը հարկազրուեցաւ տղել :

Տեսակցութիւն մը անեցանք նաև Աճէտ Ռիդայի հետ : Իր արտաքինով ան ամէնէն համակրելի թուրքն էր, զոր մենք տեսանք Պոլսոյ մէջ : Բարձրահասակ, սպիտակ մօրուքով, մեղմ աչքերով, ուղնաական զիմադձով, Աճէտ Ռիդա տաաջին անգամէն կը գրաւէր իր խօսակէցը : Թալաթ փաշայի անկումէն յետոյ ան տաաջինն է թուրքերուն մէջ, որ Մերակայտի մէջ յայտարարեց սպաննուած Հայերու եւ Արարներու թիւը : Մեկ գանդատեցաւ, որ Երիտասարդ թուրքերը ի շարը զործ զրին այն զտգափարները, որոնց համար ինք եւ անոնք պայքարեցան ժամանակին : Ան ողբաց միութեան եւ հաւասարութեան իաւալներու անկումը եւ ըսաւ, թէ որքան ատեն

որ թալկաթ և Լնվէր իշխանութեան գլուխ են, ապարդիւն են մեր բոլոր ջանքերը :

Թուրքերը առամներ կը կճրտացնէին մեր գէմ, բայց ժպիտով ու անուշ հայեացքով կը խօսէին մեզ հետ : Մանաստրապէս ընորոշ կը այդ տեսակէտէն Պուլսոյ ոստիկանապետ Աղմի պէյը : Անդամ մը ևս և Աւարսնեանք նստած էինք թալկաթ փաշայի բնօրինարանը և կը սարսէինք տեսակցութեան : Թալկաթ փաշայի մօտ կը աստրիական գեսապներ : Մեզ սուրճ հրամցուցին և ժամանակը ծանծրալի չընելու համար, կը գրադեցնէր Աղմի պէյը : Ան իր հիացումը կը յայտնէր Աւարսնեանին իր գրաստփնրան համար, մանասնոց այն գրքուստփնրան, որոնք Թրքահայերու տառապանքը կը պատկերացրնէին : «Օ՛ր, կը բացապանչէր ան, այդ գրաստփնրը խիստ բանաստեղծական են ու գեղեցիկ» :

Թուրք նախարարներէն և քաղաքական գործիչներէն յետոյ մենք այցելութիւններ տուինք Աւստրիոյ և Պուլխարիոյ գեսապաններուն, և մեր առաջին տեսակցութիւնը, ի հարկէ, և կրօնական գեսպան կամ Պերնստորֆի հետ, որ կ'աղբէր Վասիտրի իր ապարանքին մէջ : Պէտք է խոստովանիմ, որ գերման գեսպանատունը, ուր մենք եղանք քան անդամէն ասելի, շափազանց ուշադիր վերաբերմունք ևս գործնական օգնութիւն ցոյց տուաւ մեզ : Մեր տրամադրութեան տակ զրուեցաւ ուղիւ հեռադրաթէլը Պուլսոյ և Պերլինի մէջ, և մենք քանի մը անգամ խօսեցանք Պերլին գոնուսոց մեր բնկեր Տոքթի-Համօ Օհանջանեանի հետ : Գերման սուրհանդակները կը տանէին մեր նամակները Պերլին, գերման գեսպանատան քարտուղար Յոն Տիբովի շէնքը ու ցերեկ պատարաստ կը մեր հեռադրներն ու նամակները հասցնէյ, ուր սր անկ էր : Ինքը, կամ Պերնստորֆը ուշադրութեամբ լսէց մեզ, բնօրինէց սր մեր պահանջները միանգամայն արդար են և հազորդեց ցանոնք իր կառավարութեան : Է. Է. Բիտտիտի հրատարակած «Գերմանիա և Հայաստան» գրքին մէջ տպուած են անոր բազմաթիւ հեռադրները, որոնք կ'ապացուցանեն իր բարեկամական վերաբերմունքը մեզի հանդէպ : Հեռադրական դիմումներէն բացի, գերման գեսապանը քանի մը անգամ անձամբ գնաց թալկաթ փաշայի մօտ ևս պաշտպանեց մեր պահանջները : Սակայն, ինչպէս միշտ, այդ դիմումն ալ արդիւնք չտուաւ : Պէտք է բռնի բնօրինարապէս, որ այդ առեւնները Թուրքերը արդէն սկսած էին արհամարհանքով վերաբերուիլ գէյի Գերմանիան և կը ջանային ապատուիլ գերման խնամակալութենէն :

Այսանոց աւելորդ չեմ նկատեր յիշատակել, որ հայ ժողովուրդ-

զի գոյութիւնը կովկասի մէջ, այն ժամանակամիջոցին, երբ մենք Պոլիս էինք, աւելի ծանրացած էր: Մասնաւորապէս յուսահատական էր Ախալքալաքի գրատոբի վիճակը: Այդ գրատոբ, որ 80,000 հայ բընակչութիւն ունէր, ստիպուած էր զբեթէ ամբողջովին տեղահան ըլլալ և ազատտան գոնել հարևան Վրաստանի Բակուրեան շրջանի մէջ, (6000) սոք բարձրութեան վրայ, անձրևի և ձիւնի տակ: Զարմանալի չէ, որ այդպիսի պայմաններու մէջ այդ գանդուածը ենթարկուեցաւ հակայական կորուստներու՝ թիֆլիսի, քոյրբայի և սոփի միջոցով: Երեք ամսուան մէջ մօտ 25,000 մարդ զոհուեցան այդտեղ:

Բակուրեանի մէջ կուտակուած հայ դազթականներու հարցը ամէնէն աւելի էր զբաղեցնէր այդ ժամանակ ըլլալը Հայերու միաբեր, թերթերը շարունակ անսոց վիճակով էին զբաղուած, և ազգային իշխանութիւնները անոնցմով էին մտահոգուած: Թուրքերը զրաւած էին Ախալքալաքի գրատոբ և թոյլ չէին տար, որ Հայերը վերադառնան իրենց տեղերը: Այս մասին էր, որ մենք բազմաթիւ դիմումներ բրինք թուրք կառավարութեան:

Հայ գաղթականներու ծայրայեղօրէն ծանր վիճակի մասին դիմումներ բրինք նաև զերմանական ներկայացուցիչները կովկասի մէջ: Գերման կառավարութեան դիմում բրաւ նաև այդ մասին Համօ Օհանջանեանը՝ Պերլինի մէջ: Վրաստանի զերման զեկայան Ֆոն Գրէս շարք մը հետապիւններով, որոնց մէջ էր նկարագրէր տիրող սարսափելի կացութիւնը Հայ գաղթականներու, կը պահանջէր իր կառավարութենէն անմիջապէս կարուկ միջոցներ ձեռք առնել, վերջ տալու համար այդ կացութեան: Հայ գաղթականներուն ի նպաստ միջամտեց նաև Հոսմի Պապի Նախարար Միտիսինի մէջ, որ յատուկ հետապիւն գիտեց զերման կառավարութեան, խնդրելով անոր աջակցութիւնը «Թուրքիայ և Պարսկաստանի Հայ և ասորա-քաղղէական քրիստոնէայ ընակչութեան համար»: Նոյն ուղղութեամբ մենք կոչ բրինք նաև կարտինալ Տոլէէին, որ Պապի ներկայացուցիչն էր Պոլսոյ մէջ: Յուլիս 15ին Համօ Օհանջանեանը և Արշակ Զօհրապեանը մանրամասն զեկոյց մը ներկայացուցին զերման կառավարութեան, մեր գաղթականներու վիճակի մասին՝ կովկասի մէջ: Յուլիս 16ին նոյնք բրած է նաև զոր. Ֆոն Գրէսը Թիֆլիսէն:

Թուրքերու հոգեբանութիւնը հասկնալու համար ևս կը բերեմ այստեղ Վեհիպ փաշայի Ֆերմանը, որ հրատարակուած է Յունիս 4ի Պաթումի հռչակութեան առիթով: Ահա թէ ինչ կ'ըսէ այդ Ֆերմանը. — Երկաթուղային հաղորդակցութիւնը Գանձակի և Երևանի միջև միջև վերականգնելու համար շրջանառութեան մէջ պիտի զբոլին յա-

տուի գնացքներ, որոնց մէջ պիտի գտնուին թուրք սպաներ։ Այդ սպաները իրենց ձեռքը պիտի անենան Վեհայ փառայի Ֆերմանը, զոր պիտի կարգան թուրք-թաթարական բնակչութեան՝ ամէն տեղ յայտարարելով, որ այլևս հաշտութիւն է, որ արգիլուած է թշնամական վերաբերումը ցոյց տալ զկպի Հայերը․ կ'արգիլուի նաև այսուհետև սպաննել Հայերը»։

Բնորոշ է այս նախապատմութիւնը։ Սուրբն, առաջ թոյլատրելի էր սպաննել պատահած Հայր։

Մեր բոլոր զիմումները հետեւեալ էրեք արգիւնքները տուին․— Ա) Հարց բարձրացաւ, որ Հայաստան ուղարկուին աստրիական զորքեր, այնպէս ինչպէս Վրաստան ուղարկուած էին ղերմանական զորքեր։ Բ) Գերման գլխաւոր հրամանատարութիւնը լուրջ պահանջներ գրաւ ինչպէս փառային։ Գ) Գերման ղեկարան կոմս Պերնատորֆ արտաքին գործոց նախարարութեանէն պահանջեց վերաբնել Գերմանիոյ վերաբերմունքը զկպի Հայերը և Հայաստանի քաղաքական վիճակը։ Աստրիական կառավարութիւնը սկիզբները տրամադրութիւն ցոյց տուաւ զորքեր ուղարկել Հայաստան, սակայն արեւմտեան ճակատի վրայ անեղած պարտութենէն յետոյ հրամարեցաւ այդ միտքէն։ Պալիարները, Աստրիացիները և Գերմանացիները յատուկ պատուիրակութիւններ ուղարկեցին Հայաստան, որոնք մեղի համար նորատուր ղեկայցներ բրին իրենց կառավարութեանց։ Համօ Օհանջանեանը յատկապէս Վիլհելմ կը պահած, աստրիական կառավարութեան հետ բանակցելու համար։ Ուշադրաւ է նաև Համօ Օհանջանեանի տեսակցութիւնը Թալէաթ փառայի հետ Պերլինի մէջ։ Ան խոստացած է նսյեմբեր Վին Պոլսոյ մէջ հանդիսուար կերպով յայտարարել, որ Թուրքերը պիտի պարպեն մինչև 1914 թուի սահմանները՝ թողլով Ռուսահայաստանի գրաւուած վայրերը Հայերունչ։

Նոյն օրերուն իմացանք, որ համաձայնութիւն մը պոյացեր է Վրացիներու և Գերմանացիներու միջև։ Գերմանացիները պարտաւորուէր էին ճանչնալ Վրաստանի անկախութիւնը և պարտադրել պայն Ռուսերուն, իսկ Վրացիները տուած էին Գերմանացիներուն մենաշնորհներ Փսթիի նաւահանդիստի, իրենց անտառներու և մանկանդի հանքերու շահագործման համար։

Մինչ մենք բանակցութիւններ կը վարէինք Պոլսոյ մէջ պաշտօնական անձնաւարութիւններու հետ, ինկու Պարուն, որուն գրաման ատեն Թուրքերը սարսափելի կտորած մը սարքած էին՝ ջարդելով մօտ 30․000 Հայեր։ Լուրջ վտանդ կը սպառնար նաև Ղարաբաղի հայութեան․ ընդհանուր յուզում կը տիրէր Հայերու մէջ, և

մենք սրուչեցինք բանակցութեան մէջ մասնկ երիտասարդ թուրքերու կոմիտէի հետ : Մեկ բնդունեց կամիտէի շէնքին մէջ զնպապետ մը , Բիգա պէյ , որ հրախիւսեց ժողովարան , որ մեկ կը սպասէին Տօրթ . Պէնակատին Եօգիբ և Տոքթ . Նադիմ : Երկու ժամու շափ խօսակցութիւն ունեցանք ևս և Սահարնեանը՝ այդ պարոններուն հետ : Մենք յայտնեցինք մեր վրդովմանքը Պաքսի կոտորածին համար այն ատեն , երբ մենք հաշտութիւն կնքած էինք թուրքերուն հետ , և խնդրեցինք , որ Երիտասարդ թուրքերու կոմիտէն միջամտէ կառավարութեան մօտ , ի նպաստ խաղաղութեան ու մեր համեստ պահանջներու իրագործման :

Պէնակատին Եօգիբ և Նադիմ ամբողջ մեղքը ձեռքին թուրք զօրքի յոյնաժողովեան վրայ , որ չէր կրցած տեղական թաթաւներու կողմէ կատարուած կոտորածին տուջին տանել և յայտնեցին , թէ ոչ թէ 30-4000 Հայեր կոտորուած են , այլ միայն 300 , այն ալ փոստացային կոիւներու ժամանակ : Ըսին , որ Հայերը ամէն տեղ կը կռուին թուրքերուն դէմ և կ'օյնեն թուրքիս թշնամիներուն ու եղբակացացին , թէ միակ բանաւոր էրբ հայ-թուրք անվերապահ զործակցութիւնն է : «Իսկ ամէն տեղ մեր դէմ կը զործէք , կ'ըսէին անոնք , կը դիմէք ամբողջ Եւրոպան ու Ամերիկան մեր դէմ . անողոք կերպով կը ձգէք մեր վարկը : Եւ եթէ մենք ձեզ ֆիդիքապէս կ'ոչնչացնենք , զուրկ այ մեկ կը սպաննէք բարոյապէս , — բան մը , որ շատ աւելի ծանր է մեզի համար» : Մեր խօսակիցները կը պահանջէին լիովին մոտնայ անցելու , անմիջապէս զազրեցնել ամէն հակաթրքական պրոպագանդա և զործակցիլ թուրքերուն՝ ամէն կերպով :

Երբ մենք կը խօսէինք անոնց մեր պահանջներու և սահմաններու մասին , պնդեց խօսքերը կը զտոնային մշուշոտ և անորոշ : Երկու ժամուայ խօսակցութենէն ետք կոմիտէի անդամները մեկ խօստացան քննելու մեր պահանջները թալէաթ փաշայի հետ : Երբ մենք զարս կու զայինք ժողովարանէն , սպասման սրահին մէջ նստած էր թալէաթ փաշան , որ կը սպասէր մեր խօսակցութեան վերջաւորութեան՝ տեսակցելու համար կոմիտէի անդամներուն հետ :

Հետեւեալ օրը մենք եղանք նաև թալէաթ փաշայի մօտ : Ան ալ նոյն բացատրութիւնները տուաւ մեզ Պաքսի կոտորածի մասին : Ըստ երևութիւն բնդնահանուր ներքին համաձայնութիւն մը կար թուրքերուն մէջ՝ այդ կանախով խօսելու մեզի հետ : Երբ մենք մեր բողոքայ յայտնեցինք թալէաթին , թէ թուրք զօրքերը կը պատրաստուին յարձակում զործել Ղարաբաղի վրայ , թալէաթ վերջուց հետախօսք ևս սկսաւ խօսիլ Էնվէրի հետ՝ ըսելով ի միջի այլոց , որ «Հայերը կը

խնդրին հրաման տայ շարձակելու Ղարաբաղի վրայ»։ Ըստ Երեւոյթին էնձիլըր կը ժխտէր այդպիսի յարձակման մը մտադրութիւնը և Թայկաթը ժպտելով կ'ըսէր. «էնձիլը, մի՛ մտռնար որ քեզ հետ խօսողը օտար գեւսպան մը չէ։ Եւ յետոյ աշտեղ նստած են Ահարոն-Եանն ու Խատիսկանը, որոնք շատ լաւ գիտեն ամէն ինչ»։

Այս խօսակցութենէն յետոյ Թայկաթ մեզ յայտնեց, որ ինքը կ'երոշխասուրէ թէ սեւէ յարձակում պիտի չըլլայ Ղարաբաղի վրայ։ Թայկաթէն հոգ մենք պէտք զգացինք նոր այցելութիւն մը տալու նաև էնձիլը փաշային։ Էնձիլը կրկին հաւաստեցուց մեզ, որ ինք հրաման տուած է չզրատել Ղարաբաղը, բայց Երբ կարգը Եկա՞ Պարտի կոտորածին, սն ըրաւ հետեւեալ յայտարարութիւնը, որ գեաթարմ է յիշողութիւնս մէջ.

«Գու՛ք կ'ըսէք կոտորած. բայց չէ՛ որ պատերազմի ժամանակ ալ մարդիկ կը սպաննուին եւ շատ աւելի մեծ արկնահանգութիւններ կը կատարուին, որոնց համար ժողովուրդները արձաններ ալ կը կանգնեցնեն իրենց զօրավարներու։ Չէ՛ որ ըստ էութեան նոյնն է խնդիրը. պատերազմի մէջ քնդանօրներով ու երացաններով կը ըսպաննեն. իսկ աշտեղ սուրբնով եւ սուիներով։ Արդիւնքը նոյնն է՛ մարդոց սպաննութիւնը, ինչո՞ւ փախեցնիս ինչն ընել։ Թուրքիոյ մահապալու փտանգ մը կը սպառնար Հայերէն, որոնց սպանութիւնը հաւասարագոր է քշնամիներու սպաննութեան՝ պատերազմի մէջ»։

Գալով Ախալքալաքի գողթականներու վերադարձի ինչդրին, էնձիլը պատասխանեց, թէ այդ անկարելի է գինուորական տեսակատով։

Թուրք գործիչները շատ ճշգրտա՛հ կերպով կը պատասխանէին մեր այցելութիւններուն։ Մանաւորապէս Հոկտեմբերին, Երբ Գերմանացիներու անյաջողութիւնները արեւմտեան ճակատի վրայ կ'աճէին, Թուրքերու փոխ-այցելութիւնները աւելի յաճախիկ դարձան և վերաբերմունքը զէպի մեզ աւելի սիրալիք ու արտասայտութիւնները աւելի պուշտուր։ Այսպիսի արամապրութեան մէջ էր, որ օր մը մեզ յայտնեցին, թէ մեզ կը հրաւիրէին ներկայ գտնուելու Սեյամ-լըզի՛ ներկայանալու համար Սուլթանին։ Կրօնական արտոգութենէն հոգ մզկիթի մէջ էնձիլը փաշա մեզ ներկայացուց Սուլթանին։ Ահարոնկանը ճաւ մը խօսեցաւ Հայաստանի Հանրապետութեան անունով և յոյս յայտնեց, որ անկախ Հայաստանն ու Թուրքիան աշտուհետեւ բարի գրացիներ պիտի ըլլան։ Սուլթանը պատասխանեց, թէ ինքը

չատ երջանիկ է, որ «զարտար բարեկամական» յարաբերութիւնները Հայերու և Քուրդերու միջև այժմ քաղաքական բարեկամութեան կը վերածուին Քուրդիոյ և Հայաստանի միջև: Սուլթանը յոյս յայտնեց, որ մենք վերադառնալով Հայաստան՝ կը հաղորդենք Հայ ժողովուրդին՝ Սուլթանի և ամբողջ Քուրդիոյ անունով իր բարեմաղթութիւնները:

Սուլթանէն յետոյ մեկ ներկայացուցին թագածառանդին՝ իր սյուրաֆին մէջ: Կատարելապէս մտասուրդական մարդու երևոյթ ունէր և շատ հաճելի սպասորութիւն ձգեց. բոսո մեկ, թէ ինք երբեք համակիր չէ եղած հայկական հալածանքներուն և մաղթեց, որ Հայաստանը երջանիկ բլրայ:

Թագածառանդին մօտ մենք ծանօթացանք նաև Թեփֆիք փաշային հետ, որ Քուրդիոյ նախկին գեապանն էր Լոնտոնի մէջ: Թեփֆիք փաշա մեզի բոսո, թէ ինքը կը նախատեսէ պատերազմի բռնատարաֆիկ վերջնասրտութիւնը. այն կարծիքը յայտնեց, թէ երբ Քուրդիա կուտի Անգլիոյ զէմ, միշտ զժրախտութիւն կը պատահի Քուրդիոյ:

Քանի մը որ ետք էնովէր փաշա հրախրեց մեկ ճաշի իր տանը: Արեւելքի ամբողջ շքեղութիւնը բացուեցաւ մեր առջև, ոսկի, մետաղա, գորգ և ամէն անասի թանկարժէք իրերով լեցուն էր էնովէրի բնակարանը: Ըստի հրախրուած էին նաև գերման զօրավար Ֆրոն Ալքիթ, որ այժմ գերման ընդհանուր բանակի հրամանատարն է, Քալէաթ և Իդէթ փաշաները և կովկասեան երեք պատուիրակութիւնները: Ազգանի շուրջ խօսակցութեան նիւթն էր կովկասեան նորակազմ հանրապետութիւններու սպապան: Էնովէր փաշան բոսո. «Էլաւ պիտի բլլար, եյէ Հայաստանը իրեն համար քաղաւոր ընտրէր արստրիակոն իշխան մը, Վրաստանը՝ գերմանական իշխան մը, իսկ Ատրիպէջանն ու Իրիակոն իշխան մը: Այս երեք քաղաւորութիւններն ալ կարող էին շատ լաւ ամրանալ իրենց արքայական տուներու շնորհիւ»:

Ճաշէն ետք հիւրերը սկսան ուշադրութեամբ դիտել մեծ իզաներկ պատկեր մը, որ կը ներկայացնէր տեսարան մը Տրիպոլիոյ պատերազմէն: Էնովէր փաշա բոսո, որ իր զինուորական քարտէրը պատերազմի գաշախն վրայ սկսաւ և աւելցուց. «Կոխէն գուրա ևս կենոք չեմ ճանչնար ու չեմ հասկնար»:

Այսպէս, շարքեր կ'անցնէին իրարու ետևէ և ո՛չ խորհրդածոցով տեղի կ'անենար, ո՛չ ալ մեր բանակցութիւնները տեւջ ջօշափելի արդիւնք կու տային, իսկ անդին, պատերազմի մեծ ճակատ-

Ներսէն վրայ, տեղի կ'ունենար ճակատադրական բեկումը: Պատե-  
րացմի բարտը կը գտածանէր Գերմանիոյ և իր գինակիցներուն:  
Թէև իրաւ գրաքննութիւն կար մամուլի վրայ, բայց արդէն որոշա-  
պէս կը պարտէր, թէ իրերս ընթացքը կը փոխուի հիմնապէս: Հա-  
մօ Օհանջանեանը Պերլինէն մեկ կը հազարդէր, թէ Ֆրանսական յա-  
ջողութիւնները հասանական կը նկատուին Գերմանացիներու կողմէ:  
Անգլիական ստատոնակները աւելի յաճախ սկսան երեւալ Պոլսոյ վր-  
այ և ուսմբեր նետել:

Հսկումբերի կէտին անակնկալ կերպով Թալէաթ փաշա մեկ-  
նեցաւ Պերլին: Հայերը սկսան աւելի համարձակ գտնաւ. եկեղեցիին  
մէջ արդէն կը մօտեկային մեկ և կը ջանային խօսակցութեան բրո-  
նուիլ: Յոյները համարձակ կերպով կը խօսէին Յրանսացիներու յա-  
ջողութեանց մասին: Մենք պացինք զերման զեպանին մօտ, որոշ  
տեղեկութիւններ ստանայու համար, և Կոմս ՊերնատորՖր ուղղակի  
ըտտ մեկ, որ Դաշնակիցները կը յաղթեն: Անոր մօտ մենք հանդի-  
պեցանք զոր. Տոն Լոտովին, որ շատ մտայ էր: Վերջինս բտտ ինծի.  
«Ինք մտղովուրդը յաղմած է. մեր քշմամին երեք ում ունի՝ բաց ծո-  
վը, սաւառնակները եւ կեմսամբերքներ: Մենք ալ չտւնինք եւ յաղ-  
բուած ենք»:

Փոփոխութիւնները ճակատներու վրայ աղղեցին նաեւ թուրք  
կառավարութեան ընթացքին վրայ: Մեկ մօտ բերին 60 հայ զերիներ  
ոռտական բանակէն և յանձնելով մեղի բսին. «Առտնք Հայաստանի  
Հանրապետութեան բաղաբայինը եւ այտուհետեւ, ուտտի կը յանձ-  
նենք ձեկ, որղղակի զանտնք ուղարկէք Հայաստտնք»: Թալէաթ փաշան  
վերաղարձաւ Պերլինէն՝ հաղիս աղտտուելով զերի ինչալու վտանղէն  
Պուլխարիոյ մէջ, որ արղէն գինաղաղար էր կըբտծ Դաշնակիցներու  
հետ: Ան յալտնեց մեկ, որ Թուրքիա պտտրաստ է վերաղարձնել Հա-  
յաստանի և Վրաստանի 1914 թուի ստձմանները: Արտաթին զործոց  
նախարար Նիսիմի պէլ ինք եկաւ մեր մօտ, Թաքաթլեանի պանղողը  
և յալտնեց, որ տմէն բան կարղին է ու Թուրքերը շտտով պիտի  
պտրպեն Կովկասը:

Պուլսոյ մէջ արղէն կը խօտուէր Թալէաթ փաշայի զաշիծի  
անկման մասին: Հսկումբերը 20ին, եթէ չեմ սխալիր, ցերեկտան  
մամը 4ին, Թալէաթ փաշա ընղունեց մեկ ոտքի վրայ և բաւ. «Քանի  
մը մամ ետք ևս պիտի ձղեմ իշխանութիւնը. մենք յաղթուած ենք, ևս  
ձեկ կը նախանձիմ. զուր յաղթողներու բանակին մէջն էք, իտկ մենք  
պարտտածներու հետ ենք և շատ բան կը կտրմնցնենք: Բայց ձեկ  
բան մը պիտի բտեմ. երբէք մի՛ մոտնաք, որ աղաղտն անյայտ է և





Յովհաննէս Քաչազնուհի

դեռ այդ դիտել ինչևէր կրնան պատահել: Եւ ճակատագրապաշտ եմ. դուք երիտասարդ գիտնողէաներ էք. միշտ սպասեցէք վերջին վայրկեանին. երբեք չստորազրկէք թաղթ մը երեկոյեան, երբ ան պիտի երթայ վայր ստաւօտեան, այդ դիտել ինչ կրնայ պատահիլ դիշերուսայ ընթացքին»:

Քանի անդամներ Լօյսնի մէջ ևս յիշած եմ Քոյէաթի այս շարաշուք խօսքերը: Ո՞վ կրնայ մտածել, թէ ջախջախուած Քուրքիան հինգ ասորի ետքը պիտի թերազրկ յաղթող Դաշնակիցներուն հաշտութեան որոյժաններ:

Երեկոյեան զէմ Քոյէաթ փաշայի գահճիւր ինկու. եւ մեծ վէ՛ղիւ նշանակուեցաւ Իզէթ փաշան: Հետեւեալ օրը մեր պնդողի մէջ երեւցաւ անդլաւկան Կորափար Քասաղչնալը, որ Միջագետքի մէջ դերի էր ինկած Քուրքիւրուն ձեռքը և կը պահուէր Հայդի կղզին: Անոր հետ էր Իզիբի վայրի Բահմի պէյ: Ինչպէս հասկցանք յետոյ, կը պատրաստուէին մշակելու գինազագարի պայժանները անդլաւկան ծովախալին հետ: Երեկոյեան ուշ ատեն, ժամը 11ի ատենները, մեզ մօտ Լեւո Բէուֆ պէյի գինաւորական համհարար և խնդրեց մեզմէ Երթալ ծովային նախարարին մօտ: Երբ մենք պայքինք, Բէուֆ պէյ գիմարեց մեզ հետեւեալ ճոտով. «Այս գիշեր ես պիտի երբստ անգլիական ծովախալին մօտ գիտադար կնքելու, կ'առաջարկեմ ձեզ այլ անոր մօտ երբայ ինձ հետ միասին: Թող Անգլիացիները տեսնեն որ մենք հաշտուած ենք. չէ՞ որ խորհրդաժողովի համար շատ կարեւոր է իմանալ, որ Թուրքերն ու Հայերը այլեւս վէ՛ն չունին ինարս հետ»:

Այս պաշտօնական խօսքերու փոխանակութեան ևտք սկսաւ ընդհանուր խօսակցութիւն մը, որմէ վերջ խան Նախիջևեանաբին հրաւիրեց մեզ բարբա ճաշի իր տունը, ցերեկուայ ժամը 3ին: Մենք

րնդունեցինք այլ հրակեր, իսկ մինչ այլ սրուչեցինք տեսակցիլ տեղական ընակչութեան երևելիներուն հետ և և այցելել անգլիական գործասերուն: Օթոմոսիլի նստեցանք ևս ևս զոր. Տէլլիին միտանխան Նախիջևանաքին ցանկութիւն յայտնեց ուղեկցելու մեզ՝ նստելով չօֆէօրի կողքին: Անգլիական գործասերը զինուորական բարեւներ տուին մեզի և հայկական գրուակին: Նախիջևանի գաւառային վարչութեան շէնքին մէջ հասարակած էին մասնատական երևելիները, որոնց հետ ժամի մը չափ զրուցեցինք: Կր խօսէին յիսուսաբազա զիւրտանուս մը՝ Սուլթանով ազանուսով, նախկին գաւառական պաշտօնէայ Քենկերլինաքին և քանի մը միֆթիներ:

Անոնց յայտնած յիսուսը միտքերը երեք պահանջներ կ'արտայայտէին. առաջին՝ կ'ուզէին, որ քաղաքացիական նահանգապետէն գաւ զոր ևս բերած էի հետս՝ մնացած բոլոր պաշտօնէաները տեղական մասնատականներէն բլլային. երկրորդ՝ որ պէտք չէ հայկական գործասեր մտնէին Նախիջևան. և երկրորդ՝ հայ փախրտականները պէտք չէ վերադառնային Նախիջևան՝ իրենց լքած տուները:

Առաջին հարցի առթիւ ևս յայտնեցի, որ պաշտօնէութիւնը կ'ըլլայ խառն, իսկ նահանգապետի օղնականը կ'ըլլայ մասնատական: Երկրորդ հարցին վերաբերմամբ ըսի, որ հայկական զորքեր պիտի մտնեն կարգը պահպանելու համար: Իսկ երրորդի մասին յայտարարեցի, որ տեղական մասնատականները պարտաւոր են բարեկամօրէն ընդունիլ Հայերը, որոնք վերջին տարիներու ղէպերուն առթիւ հարկադրուած էին լքել իրենց տունն ու տեղը և փախչիլ այս գաւառէն: Միտմամնակ ըսի իրենց, թէ առևնը կկամ է վերջապէս, որ խաղաղ յարաբերութիւններ հաստատուին երկու զրացի ժողովուրդներուն միջև:

Իմ պատասխանները ըստ երևոյթիւն զոհացում չտուին մահմետական երևելիներուն, որոնք սկսան բարձրացնել իրենց ձայնը և նոյնիսկ բացապահէլ, թէ Անգլիացիք խաբած են զիրենք, քանի որ խոստացած են իրենց, որ Հայերը պիտի տան միտան մէկ նահանգապետ, իսկ ամէն ինչ պիտի մնայ նախկին ձևով:

Չոր. Տէլլիի վրդովեցաւ ևս սկսաւ վճռականօրէն պահանջել, որ Լնթարկուին անգլիական իշխանութեան հրամանին: Ամբար սկսաւ նկատելիօրէն յուզուիլ ու ազմկել: Գուրս կկու մոյլա մը, որ մեզ հետ խօսած էր ևս սկսաւ զրգռել ամբարը կրակոտ ճառով մը: Եւ ամբարը սկսաւ ազդակել. «Չենք ուզեր հայկական իշխանութիւն, չենք ուզեր հայկական զորքեր»:

Բառական մտափուկ կացութիւն ստեղծուեցաւ. և ևս ստիպուեցայ զիմեւ ամբոխին ճառով մը՝ շեշտելու մեր գալու խաղաղ նպատակը, ինչպէս նաև մեր անվերապարճ որոշումը ճանչցնել տալու հայկական իշխանութիւնը: Ինձմէ ևտքը խօսեցաւ զօր. Տէյրիի նոյն սպիտակ: Իսկ յետոյ նաև խոսեց Նախիջևանսքին յայտնեց ամբոխին, թէ ինք կը խնդրէ հաստատու մեզի ինչպէս «հիւրերու» և մտաւհիւ երկրի իրաւունքներու և շահերու պաշտպանութիւնը ժողովուրդի ներկայացուցիչներուն:

Այս ճառին ամբոխը հանդատացաւ և կամաց-կամաց սկսաւ ցրուիլ: Որոշ կը որ նախօրօք պատրաստուած ցոյցի մը հետ գործ ունէինք: Ասկէ ևտքը մենք թիշ մըն ալ խօսեցանք երեւելիներուն հետ, որոնք խոստացան մեզի հանդիստ պահել ժողովուրդը, և հեռացանք:

Գոցքինք ճաշի խոսեց Նախիջևանսքիի մօտ: Քաղաքը տակաւին կը կրէր հետքեր ու մարտնչութեան, որուն Ենթարկուած կը 1917ին Անգլոսոսկիի զորամասերու կողմէ: Ոսն Նախիջևանսքիի տան վրայ ևս կային հայկական ուսման հետքեր: Ծաշը խաղաղ անցաւ: Բացի մեր խումբէն ներկայ էին Նախիջևանի բոլոր խաները և բոլոր անդլիական սպաները: Ընտրի տունն արասանուեցան ճառեր խաղաղ կենտրոնութեան և զործակցութեան մասին: Ծաշէն վերջ վերադարձանք կայարան, ուր արդէն խաղաղ արամագրութիւն կը տիրէր:

Մայիս 19ի գնացրով մեկնեցանք Ջուլֆա՝ Պարսկաստանի սահմանապարս: Իջնելով այնտեղ՝ մենք անցանք կամուրջը և այցելութիւն տուինք պարսիկ սահմանապահ իշխանութեանց, որոնց կողմէ գտանք շատ սիրալիւր ընդունելութիւն: Ջուլֆայէն ևս հեռացիր ուղղեցի Պարսկաստանի վարչապետին հետեւեալ բովանդակութեամբ.—

«Կը գտնուիմ Պարսկաստանի ու Հայաստանի Հանրապետութեան սահմանին վրայ եւ կարիք կը զգամ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կողմէ յայտնելու խորին ուրախութիւն, որ մեր ժողովուրդները, որոնք միշտ իբրեւ բարեկամներ ապրած են կողք կողքի, այժմ կարող են վերսկսիլ իրենց բարի դրացիական պետական յարաբերութիւնները: Հայաստանը համոզուած է, որ Պարսիկ կառավարութեան դարաւար հովանաւորութիւնը Հայերուն պիտի արտայայտուի նաեւ երկու հարեւան պետութեանց բարեկամա-

կան յարաբերութիւններու մէջ: Կր խնդրեմ հաղորդել Նորին Վեհափառութեան Շահին իմ ամենաբարձր զգացումներն ու բարեմտաբարութիւնները»:

*Հետեւեալ օրը ստացայ Պարսկաստանի վարչապետ Վահան-Իւլ-Դոզլէէն Հետեւեալ պատասխանը.—*

«Նորին Վեհափառութեան հրամանով կր յայտնեմ Ձեզ խորին շնորհակալութիւն բարեմաղթութեանց համար. Հայաստանը կարող է վստահ ըլլալ, որ պարսկական կառավարութիւնը անփոփոխելի կերպով պիտի երեւան բերէ իր բարի դրացիական վերաբերումը դէպի բարեկամ հայ ժողովուրդը եւ հայկական նոր հանրապետութիւնը»:

*Ջուլֆայէն վերադարձին անցանք Նախիջևանէն եւ կանդ առինք Շախթախտի կայարանը, ուրկէ նեղ գծով երկաթուղադիժ մը կ'անցնէր դէպի Մակուի խանութիւնը: Շախթախտիէն ողջոյնի նամակ մը ուղարկեցի Մակուի խանին յատուկ սուրհանդակով: Հետագային ստացայ Մակուի խանէն ողջոյնի ու շնորհակալութեան նամակ մը: Մակուի խաներէն մէկ քանին ամբողջ ամիսներ կ'ուարէին Էրեւանի մէջ եւ կը վախելին մեր հիւրասիրութիւնը: Անոնց հետ մենք առևտրական յարաբերութեանց մէջ էինք եւ կը ստանայինք ցարեն, խոտ ու տուար:*

Վերադառնալով Էրեւան եւ անհունապէս զոհ էի, որ, վերջապէս, մենք անմիջական հաղորդակցութեան մէջ մտանք Պարսկաստանի հետ, որը մեզի համար արժէքատու շուկայ մը կը ներկայացնէր: Եւստով մենք առևտրական առաքելութիւն մըն ալ սղարկեցինք Պարսկաստան, իսկ Պարսկաստանէն ալ Էրեւան Եկու նոյնպէս առաքելութիւն մը ոչ միայն առևտրական այլ նաև քաղաքական ու քաղաքացիական այլևայլ խնդիրներ կարգադրելու համար:

Պարսկաստանի կողմէ մենք ինքզինքնիս սպահնով կը զգայինք: Հոյսային ոչ մէկ վէճ կը նախատեսէինք անոր հետ: Գժրախտարար, սակայն, մեր ուրախութիւնը երկար չտևեց: Հազու երկու ամիս Նախիջևանը խաղաղ մնաց: Այդ ժամանակաշրջանի մէջ Քելյալի խան Նախիջևանաքին եւ մեր իշխանութեան թշնամի միւս խաները անդադար պատրաստութիւններ կը տեսնէին: Անգլիական զօրքերը Նախիջևանէն Հեռացան անմիջապէս որ մենք մեր զօրքերը

մտցուցինք: Մեր կառավարութիւնը շատ խնդրեց որ Անգլիացիք մեան մինչեւ աշուն, բայց Լոնտոնէն Եկած Հրամանը վճռական էր: Անգլիացիներու Տնտեսայր թե տուաւ մահճետական դաւազիրներուն: Եւ Յուլիս 23ին անոնք յարձակեցան զօրամասի վրայ Կախիջեանի մէջ ու միամամանակ նաև Հայկական միւս զօրամասի վրայ Բաշ-Նարաշէն գիւղի մէջ: Յանկարծակիի Եկած զօր. Շեյքսփիկեանը հարկադրուած էր նահանջել գլխի Երեւան, ուր հասաւ Երկար ճամբայ մը կտրելէ ետք: Անոր զօրքին մէկ մասը, թուով մօտ 200 հոգի, գերի էր ինկեր և Երկար տառապեցաւ գերութեան մէջ, մեծ մասը մեռաւ սովէ ու հիւանդութիւններէ: Հայ պաշտօնեաները Ջուլֆայէն փախած էին Պարսկաստան: Երկաթուղային Հաղորդակցութիւնը կարուեցաւ: Կախիջեան վերադարձած Հայերը նորէն հարկադրուեցան լքել իրենց տուններն ու հողերը և ապաստան փնտոել Հայաստանի աւելի ապահով վայրերուն մէջ:

Հայաստանի սահմաններու ընդարձակումը Երրորդ ուղղութեամբ կը կատարուէր Ջանդեկուրի և Ղարաբաղի գծով: Այստեղ կրնայ հարուէին Հայաստանի և Ատրպէջանի շահերը: Հայաստանի համար Ջանդեկուրն ու Ղարաբաղը երեք ակառկի շահեկանութիւն կը ներկայացնէին. ստացին՝ բնակչութեան տեսակէտով, սրովհետեւ 300,000 Հայեր կ'ապրէին այդ շրջաններուն մէջ: Երկրորդ՝ Ղարաբաղն ու Ջանդեկուրը կը պաշտպանէին Հայաստանի թիկունքը այն թշնամիներէն, որոնք կ'երազէին անոնց վրայով միանալ իրարու հետ: Եւ Երրորդ՝ երկու շրջաններու ալ բնակչութիւնը անբաժանելիօրէն կապուած կը զգար ինքիցիցը Հայաստանի Հանրապետութեան հետ: Սակայն, սրբան աւելի կարեւորութիւն ունէին մեղի համար այդ երկու շրջանները, այնքան աւելի արժէք կու տային անոր Ատրպէջանցիներն ու Թուրքերը, որոնց հետ անկարելի էր հաշտութեան լեզու գտնել ստանց զիջելու Ջանդեկուրն ու Ղարաբաղը. բայց այդ մասին մեր մէջ խօսք անգամ չէր կրնար բլլալ. պիջումի կոպմտակիցիներ չկային մեր մէջ, հետեւաբար, բաղաւաճ անխուսափելի կը դառնար և զարձաւ: Միակ մարդը որ չափով մը կոպմնակից էր կէս զիջումի, իշխան Յովսէփ Արշութեանն էր, Պարսկաստանի մեր գլխապահը, որ անհրաժեշտ կը գտնէր Ջանդեկուրը պահել մեր ձեռքը մինչև Ջուլֆայ գետը, իսկ Ղարաբաղը գիջիլ Ատրպէջանին: Բայց այդ ձայնը միակն էր:

Անգլիական Հրամանատարութիւնը յանձին զօր. Թամսընի կը պաշտպանէր 1918 թ. սեպտեմբերի վեր Ղարաբաղը Ատրպէջանին յանձնելու պահանջը: Անոր կողմէ Շուշի ու Գորիս ուղարկուած

զնդ . Շաթվորթը այդ մասին հաղորդեց Ջանդեգուրի եւ Ղարաբաղի բնակչութեան : Ես եւս իմ կողմէ ուղարկեցի Գորիս , իշխան Յովսէփ Արղութեանի իբրեւ ներկայացուցիչ : Խաղաղեցումը ժամանակաւոր էր , մենք համաձայնեցանք ստեղծել շէկոք գօտի մը : Գարիթան Կիպրնար ատկէ առաջ կանգնեցուցեր էր Անգլոսիկի արշաւանքը դէպի Շուշի եւ բերեր էր զայն Երեւան :

Ղարաբաղի հարցին մէջ հայկական բոլոր կուսակցութիւնները միահամուռ կերպով համերաշխ էին : Ղարաբաղի գործիչներու վերաբերումը դէպի Հայաստանի կառավարութիւնը եւ անոնց դերը նման էր շափով մը մակեղոնական գործիչներու վերաբերումին ու դերին հանդէպ պուլկար կառավարութեան : Անոնք զօրաւոր էին ժողովուրդի , բանակի եւ Խորհրդարանի մէջ եւ ի վիճակի էին բաւական ուժեղ ճնշում գործ զնելու կառավարութեան վրայ : Ղարաբաղի շնորհիւ Ատրպէյջանը կը զրկէր մեզ նաւթէ եւ հացահատիկէ : Նախքան շատ զօրաւոր զէնք մըն էր Ատրպէյջանի ձեռքին բնդդէմ մեզի : Բայց հակառակ ատոր մենք մինչեւ վերջ անդրդուելի մնացինք Ղարաբաղի հարցին մէջ :

Թէեւ մեծ պետութեանց ներկայացուցիչները շարունակ կը հաւատացնէին , թէ Հողային բոլոր հարցերը պիտի լուծուին Փարիզի վեհաժողովին մէջ , բայց երկու կողմերն ալ կը ջանային նրպաստաւոր դիրքեր ստեղծել իրենց համար Փարիզի վեհաժողովը կատարուած իրողութեանց առջեւ զնելու համար :

Անգլիացիները , ինչպէս օրինակ գոր . Թամսըն , Պիչ , Միլն , Տէյլի , Ասիեր եւ Վորտոպ շարունակ կ'ըսէին մեզի . «Կարելի չէ բոլոր պահանջները հիմնաւորել զուտ սզգագրական պայմաններով . ատոնք բաւական չեն , կարելի էր եւնաւ տնտեսական , աշխարհագրական եւ ռազմագիտական պայմանները : Իսկ այդ տեսակէտներով Ղարաբաղը կապուած է Բաքուի հետ , որովհետեւ հոն կ'երթան հազարներով դարաբաղցի զինացիներ գործ գտնելու համար . հացն ու բոլոր արդիւնքները կ'երթան Եւրասի վրայով . աշխարհագրորէն Ղարաբաղը կապուած է Քուր գետի հովտի հետ , իսկ ռազմագիտորէն , ով Շուշիի եւ Ասկերանի տէրն է , ան իր ձեռքը կը պահէ նաեւ Բաքուի երկաթուղին » :

Անգամ մը գոր . Պիչ հետեւեալ ուշադրաւ հարցումը ուղղեց ինձ . «Արդեօ՞ք կարելի չէ դարաբաղցիները փոխադրել Հայաստան ,

իսկ Հայաստանէն Ղարաբաղ փոխադրել մտահետակաճնեքը»։ Ես պատասխանեցի թէ այդ կարելի չէ այնպէս, ինչպէս կարելի չէ օրինակ Մանթենեկոսի բնակիչները փոխադրել իրենց լեռներէն ուրիշ տեղեր :

Անհասարակ, պէտք է լսել, որ բնակչութեանց փոխանակութեան հարցը յաճախ կը պրուէր մեր սեղանի վրայ, սակայն, անկապ կը լուծուէր ոչ թէ խոզաղ համաձայնութեան ճանապարհով, այլ տարերային ղեկբերուի եւ միջցեղային արինանակող կոիւնքու հետեւանքով : Քաղաքացիներու կամքով չէր, որ միտտարը զանդուածներ կը ստեղծուէին այս ու այն շրջաններուն մէջ, այլ ղեկբերու տարերային բնթացքով :

Այդպիսի ճամբով էր, որ Զանգեզուրը դարձաւ դուռ Հայկական՝ ապստուխով մահմետական բուսական շուսփելի բնակչութեանն : Եւ այդ փոփոխութեան հետեւանքով էր, որ Զանգեզուրը միացաւ Հայաստանին վերջնականապէս ու այսօր մտած է խորհրդային Հայաստանի սահմաններուն մէջ : Մինչպէս Ղարաբաղը կարելի չեղաւ Հայաստանին կցել, թէլեւ ան կրցաւ պահպանել իր ներքին ինքնափարութիւնը :

Ախալքալաքի վերաբերմամբ, որու բնակչութիւնը մօտ 80,000 զուտ Հայկական էր, ինչպէս նաեւ Լոռիի գաւառի վերաբերմամբ, որ իր 60,000 բնակչութեամբ նոյնպէս զուտ Հայկական էր, մեր դիրքը շատ պարզ էր : Մենք չէինք կրնար հաշտուիլ Ախալքալաքի կորուստին հետ . թէլեւ Վրացիները դեռ 1918 թ. Դեկտեմբերին պրաւած էին դայն եւ մինչեւ վերջ պրաւած պահեցին : Իսկ Լոռին պատերազմի հետեւանքով վերջ ի վերջոյ անցաւ Հայաստանի ձեռքը :

Գալով Թրքահայաստանի նահանգներուն՝ անոնց զրաւումը յետաձգուած էր մինչեւ Փարիզի վեհաժողովի որոշումը : Ճիշդ է, որոշ պատրաստութիւններ կը տեսնուէին այդ զրաւման համար, բայց զործնական քայլերէ կառավարութիւնը կը խուսափէր միշտ : Ըստ զօր. Նապոլեոնի կեանքի, Դրոյի, Ախալքալաքի եւ Արարատեանի կազմած ծրագրին՝ ամէնէն ստաջ պիտի գրասուէր Ախալքալաքի հովիտը : Զօր. Պիշ. Եւս տուած էր իր հուանութիւնը այդ ծրագրին, իսկ կը թելադրէր սպասել մինչեւ Փարիզի վեհաժողովի որոշումը :

300,000 թրքահայ գաղթականներ անհամբեր կը սպասէին սահմաններու բացման, որպէսզի կարողանան վերադառնալ իրենց տեղերը : Այս տեսակէտով Թրքահայաստանի օր առաջ միացումը ստիպողական անհրաժեշտութիւն էր մեզի համար :

« Գ Ա Շ Ն Ա Կ Ի Յ Ն Ե Ր Ը »

Կ Ո Վ Կ Ա Ս Ի Ե Ի Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Մ Է Ջ

Հայաստանի Հանրապետութեան դոյութեան առաջին ամիսներուն, 1918 թ. վերջերէն մինչև 1920 թ. վերջը, տրամադրութիւնները և յոյսերը ծայրայեղ աստիճանի բարձր էին: Այդ շրջանը կարելի է բնորոշել այսպէս. պատերազմը վերջացաւ մէկ կողմէն հայկական խնդրի հօր բարեկամներու՝ «Դաշնակիցներու» յաղթանակով, իսկ միւս կողմէ՝ Հայոց թշնամիներու թրքական բռնապետութեան և ռուսական ցարիզմի տապալմամբ: Հրապարակի վրայ էին խոստումներ, համակրութիւններ, բանաձևեր և մինչեւ անպատպաստութիւններ: Ի՞նչ կը մնար բնի, վստահութիւն ցոյց տալ Դաշնակիցներուն, սպասել և որոշակի ձևակերպելով իրենց ցանկութիւնները՝ օրհնել անոնց իրադարձման, որքան իրենց ուժերը թոյլ կու տան:

Այսպէս կարելի է բնորոշել բոլոր Հայերու տրամադրութիւնը մեծ պատերազմի վերջին՝ զինադադարի միջոցին, այսինքն 1918 թ. Նոյեմբերին: Հայաստանի մէջ այլ տրամադրութիւնը կը բաժնէին թէ՛ կառավարութիւնը և թէ՛ ժողովուրդը, իսկ Եւրոպայի մէջ՝ մեր պատուիրակութիւնները և դաշնութիւնները:



Ահա այդպիսի մթնալորտի մը մէջ տեղի ունեցաւ Կովկաս եկած Դահնակիչներու տոռաջին հանդիպումը հայ կառավարութեան և հայ ժողովուրդի հետ: Որպէսզի պատկերը տւելի պարզ ըլլայ, պէտք է յիշել, որ կովկասեան կեսնիցի գլխաւոր գործօնը՝ Ռուսաստանը կրնտուած էր քաղաքացիական կռիւով և կարծես անհետացած էր այն ուժերու շարքէն, որոնք կ'այգլէին Կովկասի դիմակի վրայ: Ռուսական բանակը սարերային կերպով լքած էր թրքական ճակատը և վերադարձած «տուն» հայերու բաժանման յոյսերով: Ռուսաստանի դիմակը կը թուէր բոյորովին անորոշ. որեւէ ուժեղ իշխանութիւն չկար Ռուսաստանի մէջ:

Շատերուն, — չեմ բեր բոյորին, — կը թուէր, թէ կովկասեան և մասնաւորապէս Հայաստանի հորքը պէտք է վերջնական կերպով լուծուի Փարիզի և ոչ թէ Մոսկուայի մէջ և, յամենայն դէպս, առանց Մոսկուայի մասնակցութեան: Եթէ Հայաստանի Խորհրդարանին մէջ կային անձինք, որոնք համաձայն չէին այդ կարծիքին, այդ մասին առաջին շրջանին բացարձակ չէին արտայայտուել խորհրդարանին մէջ: Այդ մասին կը խօսուէր մասնաւոր գործընդերու ժամանակ և խորհրդարանի Ֆրակցիաներու ժողովներուն: Միայն սոցիալիստ-չեկափոխական («Էս-էր») կուսակցութեան անդամները կը գնդէին, որ առանց Ռուսաստանի անկախելի է մտածել կովկասեան և մասնաւորապէս ռուսահայկական հարցի հաստատուն լուծման մասին: Խորհրդարանի անդամներու՝ Լ. Թումանեանի, Ա. Խոնդկարեանի, Վ. Մինախորեանի ճառերուն մէջ շարունակ կ'արծարծուէր այդ միտքը:

Յստակ կերպով խորհրդարանին մէջ արտայայտեց այդ միտքը Էս-էր Սպօ Սահակեանը հետեւեալ խօսքերով. «Այլ զայ ռուս մուծիկը (գիւղացիին) իր մահակով (ձեռնափայտով) եւ ցայց կու տայ, թէ ինչ է ուզում այստեղ ռուսակիսն ույծը»:

Հետագային՝ այդ «մուծիկը իր մահակով» իսկապէս եկաւ: Այդ բոլորի համար պարզուեցաւ 1921-1924 թ. շրջանին, բայց 1918-1919 թ., մանաւանդ քանի ղեռ քաղաքացիական կռիւներու տաք շրջանին էր, — Ռուսաստանի որեւէ միջամտութեան և արդեւորութեան պարտաւոր ղեռ հերթական չէր: Բայց հետզհետէ, որքան աւելի կ'ամրանար բոլշեւիկներու իշխանութիւնը Ռուսիոյ մէջ, Երեսանի քաղաքական շրջաններու մէջ ալ կը հասուննար այն միտքը, թէ անհրաժեշտ է համաձայնութեան գալ բոլշեւիկներու շուրջը կեդրոնացած ռուս քաղաքական ուժերու հետ, որոնք արդէն գերակշռութիւն կը ստանային 1920 թ., ինչպէս նաև կամաւո-

բական բանակին հետ, ի դիմաց զոր. Կոյսակի, Դենիկինի և Վրան-կելի: 1920 թ. Հ. Հ. կառավարութիւնը ուղարկեց բոլոր շորս կազմերն այ իր պատգամատարները յատակ առաքելութիւններով: Անոնցմէ ամէնէն կարեւորն էր Լեւոն Շանթի առաքելութիւնը, որ ուղևորուեցաւ Մոսկուա՝ իր կազմին մէջ անկնայով իրրու նախա-յաճ Լ. Շանթը և անդամներ Լ. Զարաֆեան և Հ. Տէրտէրեան: Անոնք ճանապարհուեցան Մոսկուա՝ 1920 թ. Մայիսի 20ին և այն անգին պարս Էկան Օղբատտս 11ին: Մտվալու Կոլչակի մօտ գնաց Գրիգոր Մամոնեան, իսկ Դենիկինի մօտ կը մնար Յ. Սաղաթէլեանը:

Յետագարձ հայկացի ձգելով այժմ Դաշնակիցներու դերի վը-րայ Կովկասի մէջ և աչքի առաջ անկնայով սկիզբի շրջանին երե-տանի կարուած ըլլալով Մոսկուայէն և հետագային կապուիլը անոր հետ, պէտք է ինչպէս և Երոսպական պետութիւններու հետ մեր ունեցած յարաբերութիւններու խնդիրներու մէջ բնորոշիլ Էրեք շըր-ջան. առաջին շրջանը՝ 1914-1917 թ., Էրբ Հայերը և Ռուսերը ընդ-հանուր ջանքեր կ'ընէին թրքական ճակատի վրայ. Էրկուրդ շրջանը՝ 1917-1918 թ. վերջը, Էրբ այդ յարաբերութիւնները կ'ընդհատուին ո՛չ Հայերու նախաձեռնութեամբ, այլ Ռուսաց զորքերու Կովկասէն հեռանալու և քաղաքացիական կռիւններու հետեւանքով. և Էրբորդ շրջանը՝ 1919-1920 թ., Էրբ յարաբերութիւնները կը վերահաս-ասաուին Հայաստանի Հանրապետութեան զիւանագիտական յարա-բերութիւններու սկսուածով դանդաղան սուտական պետական-քաղա-քական կազմակերպութիւններու հետ, թէ՛ բոլշևեիկ և թէ՛ հակա-բոլշևեիկ:

1920 թ. յետոյ (այսինքն՝ 1920 թ. Դեկտեմբեր 2էն, իշխա-նութիւնը խորհուրդներու փոխանցուելէ յետոյ) կը սկսի Հայկական Հանրապետութեան խորհրդային շրջանը, որը և կը շարունակուի մինչև այսօր:

Այս ամբողջ Էրկուր նախաբանը անհրաժեշտ էր պարզելու հա-մար Դաշնակիցներու դերը Կովկասի, մասնաւորապէս Հայաստանի մէջ և ճշգրտու պատճառները այն բացառիկ վստահութեան, որ կար գէպի անոնց կատարելիք դերը կովկասեան հանրապետութիւններու, յատկապէս Միացեալ և Անկախ Հայաստանի քաղաքական կեանքի կարգաւորման և անկախութեան իրականացման խնդրին մէջ:

∴

Ներկայ դրութի մէջ ևս կանդ կ'առնեմ Դաշնակիցներու դերի վրայ Կովկասի և մասնաւորապէս Հայաստանի մէջ:

Դաշնակիցները բռնելով պէտք է հասկնալ զլիսուորապէս Անգլիացիները, յետոյ Ֆրանսացիները և մասամբ Իտալացիները: Անոնց ազդեցութիւնն ալ նոյն կարգով կ'արտայայտուէր:

Փարիզի խորհրդածոյցովը Կովկասի «ազդեցութեան շրջանը» տուած էր Անգլիոյ, բայց միւս կողմէ Դաշնակիցներն ալ ունէին ունէին այնուպէս իրենց զերպոյոյն կոմիսարները և զործակատարները:

Ամերիկան երբևէ չուզարկեց Հայաստան մնայուն քաղաքական ներկայացուցիչներ, բացի զորովար Հարրութի առանձին յոնձնախումբէն, որ այցելեց Հայաստան 1919 թ. Սեպտեմբեր 25ին՝ ունենալով իր կողմի մէջ բազմաթիւ պաշտօնեւորներ, որոնք կ'ուսումնասիրէին Հայաստանը՝ Ամերիկայի կողմէ անոր վրայ մանդատ ընդունելու հնարաւորութեան տեսակէտէն: Բայց Ամերիկան միշտ ունեցաւ Հայաստանի մէջ մինչև 30—40, երբեմն նոյնիսկ 70 ամերիկացի զործիւններ՝ Նիւ Իոթ Րիլիֆի կողմէն, որոնք կը կազմակերպէին որբանոցներ, հիւանդանոցներ և անդատու կայաններ:

Բացի այս քաղաքական և մարդասիրական մարմիններէն, պէտք է յիշատակել զնոյն Հասկելի յատուկ առաքելութիւնը՝ ուղարկուած Փարիզի խորհրդածոյցի խորհրդածոյցի անուշով իբրև Հայաստանի մատակարարութեան հսկող զերպոյոյն կոմիսար:

Ատոնցմէ զորս Հայաստան այցելեցին զլիսուորապէս յատուկ յանձնարարութիւններով շարք մը մասնաւոր պատուիրակութիւններ: Ասոնց զլիսուորապոյոյններն էին ա) Մերակուտական Կոնստիտուտական առևտրական տոսքելութիւնը, բ) յունական պատուիրակութիւնը, որը եկած էր Կարսի շրջանի յոյն ընակիչներու խնդրի համար՝ Յունաստան տեղափոխելու համար, գ) Ձեխօ—Ալլոյաբիայի պատուիրակութիւնը՝ Հայաստանի և Ձեխօ—Ալլոյաբիայի միջև տրնտեսական յարաբերութիւններ հաստատելու համար, դ) Պոնտոսեան պատուիրակութիւնը մետրոպոլիտ Սրիդանֆի՝ Հայաստանի և Պոնտոսի փոխ-յարտերութիւններու խնդրի համար և է) Դոնի, Կուրանի ու Թերեկի պատուիրակութիւնը Հայաստանի և Հիւսիսային Կովկասի հանրակրթութիւններու միջև կապ հաստատելու խնդրի լուծման համար: Իզլաւ նաև Պարսկաստանի պատուիրակութիւնը:

Բացի անոնցմէ Հայաստան այցելեց ամբողջ շարք մը զորավարներու, բարձր քոմիսարներու և զինուորական մասնազէտներու, սոսնցից առիթներով:

Յիշատակեմ անոնցմէ կարեւորագոյններէն. Անգլիոյ կողմէն՝ Արեւելեան ուժերու զլիսուոր հրամանատար զորովար Միլեր,

զոր․ կորի, զոր․ Ծորեստիւր-Ուօկէր, զոր Աստեր, զոր Տիմպլըլէյ, զոր Պիչ, զոր Տէյլի, զնոյ Պոյլտին, ՚ւոյ Ստոկս, կապիտէն Կրեմի, բարձր քոմիսըր Ուստրոպ իր օգնականներով: Ծրանսայի կողմէն՝ զնոյ Շարզինիի, կապիտէն Պուստեպար, բարձր քոմիսար կոմսար Մարթել, Ա. Շեւարիչ, զնոյ Տեկտրբի: Իտալիոյ կողմէն՝ բարձր քոմիսար զնոյ Գարբա, Մարբիպ Ալբրեցի:

Մնայուն ներկայացուցիչներն էին պետութիւններու կողմէն․ Անգլիայէն՝ քաղաքական մասի համար կապիտան Կրեմի, իսկ տեղեկատու քոմիս համար՝ կապիտէն Կերի և Ծոստեր: Ծրանսայի կողմէն՝ կապիտէն Պուստեպար (զինուորական ծառայութեան կողուած ճիղուիթ արբայ): Իտալիոյ կողմէն՝ լէյտընանտ Ալբրեցի: Ռուսական կամաւորական բանակի կողմէն՝ զնոյ Ջենկեիչ: Պարսկաստանի կողմէն՝ բնիկահուր հիւպատոս Ասապուլլա Ռան:

Լրացնելու համար երևանի կառավարութեան մօտ եղած զիւստնայրական մարմնի կազմը, յիշատակենք նաև Վրաստանի Հանրապետութեան ներկայացուցիչը, սկիզբը՝ Ս․ Մղիվանի, յետոյ Գրասիմ Մոխարաձէ, սպա զոր․ Կարալով: Ատրպէջանի ներկայացուցիչ՝ Ռան Թեկինսկի և յետոյ Ախարտով:

Հանդէսներու, խնջոյքներու և ժողովրդական տօներու ժամանակ զիւստնայրական մարմնի տեսքը շատ տպաւորիչ էր, եւ բոլորի համար ալ կուսկածէ զուրս էր, որ Հայաստանը աստիճանաբար, բայց որոշակի կը մտնէ ազգերու բնութեան մէջ: Հայաստան կը տեսնէր, որ զինքը կը ճանչնան, իրեն այցելութեան կու գան, իր հետ բանակցութիւններ կը վարեն, կը հետաքրքրուին իր հարստութիւններով: Դանակիցները անկասկած կ'առաջնորդէին Հայաստանը զկպի լայն և բողոքական ճանապարհը, որը կը տանէր զկպի Ազգերու Լիկան, զկպի բողոքակիրթ աշխարհը, զկպի միջազգային հաղորդակցութիւնը:

Որպէսզի բնթերցողը հնարաւորութիւն ունենայ ծանօթանալու Դանակիցներու Հայաստանի մէջ ունեցած դերի և ազգիցութեան, եւ կը դառնամ այն մոմենտին, երբ 1918 թ․ աշնան, Նոյեմբերի վերջերը Հայաստանի մէջ տոմջին անկամ Լերուաց տաջին Լուրպական սպան՝ Ֆրանսական կապիտան Պուստեպարը: Ընթերցողը կը յիշէ այդ:

Նոր կը վերջացեր Մեծ Պատերազմը, բացուր էր ճանապարհը Պոլսէն զկպի Պաթում․ կայացեր էր Նոյեմբեր 11ի զինադադարը: Ես նոր Պոլսէն վերադարձեր էի Երևան, մտեր էի Յովհ․ Քաջագնունիի դահլիճին մէջ և փոխարինելով սպաննուած Կարճիկեանը՝

ընդունե՞ր է՞ի ինձամատարութեան նախարարի պաշտօնը: Հայաստանը սարսափելի դրութեան մէջ էր. սոյլ, շրջափակում, բժաւոր տիՖ, սառնամանիքներ, հաղորդակցութեան ճանապարհները փճացած, բարձրաժիւղ փախստականներ փոսպնեցնում մէջ, շտեմնուած չափերու հասած մահացութիւն, վառելիքի բացակայութիւն, — եւ միեւնոյն ժամանակ մեծ յոյսեր Եւրոպայի վրայ եւ ընդհանուր զիտակցութիւն, որ տառապանքներու շրջանի կը վերջանայ, արչայոյսը կը բացուի եւ աղատութեան ու անկախութեան տրեկակը կը ծագի Հայաստանի զլիտուն: Դաշնակիցները կը սպասուէին իբրեւ երկնային մահանայ, իբրեւ փրկարար հրեշտակներ: Գարուն էր քաղաքական իմաստով, թէ եւ զուրպ ցուրտ ձմեռնային Նոյեմբերն էր:

Եկաւ Դեկտեմբերը: Աղահուսիսումը կը յիշատակէինք յուրերը եւ րուպական ուժերու Պոլիս մտնելու եւ Պարսկաստանի կողմէն կասպից ծովի վրայով Բաբու հասնելու մասին:

Այդպիսի օրերէն մէկն էր եթէ շեմ սխալիք Դեկտեմբեր 10: Նստած էի իմ պաշտօնական ատանձնասենեակի մէջ: Ինձ դեկուցեցին, թէ ինձ կ'ուզէ տեսնել Վերսալեան սպայ Պուատեպարը: Անմիջապէս ընդունեցի զինքը: Մտաւ սպայ մը, մօտ 40 տարեկան, Փրանսական զինուորական համալցւածով: Փոխապարձ ողջոյններէ յետոյ Պուատեպարը բացատրեց, որ անցեր է անգլիական բանակի Հետ Պարսի, Պագտասի եւ Բաբուի վրայով եւ եկեր է Երեւան: Խօսակցութեան միջոցին պարզուեցաւ, որ կը խօսի Հայերէն, որովհետեւ վեց տարի ապրեր է Թուրքիոյ մէջ իբրեւ Փրանսական միսիոնար:

Այս առթիւ կը բերեմ Հետաքրքրական տեղեկութիւն մը այն մասին, թէ ինչպէս Պուատեպարը անցած մը Ալեքսանդրապոլի վրայով անցնելու ատեն կայարանի մէջ իրեն ի պատիւ կանչած պահակախումբի զինուորիկներուն զիմեր է Հայերէն ճտտով եւ ինչպէս այդ ճառը ստիպուե՞ր են թարգմանել ռուսերէն, որպէսզի հասկնայ պահակախումբի սիւտը, որը Հայերէն չէր զիտեր:

Պուատեպարը յետոյ զարձաւ Հայերու անկեղծ բարեկամը եւ մեզ հետ ռամնեց մեր սմբողջ Հետապայ քաղաքական կեանքի ցուիւրն ու ուրախութիւնները մինչեւ այն օրը, երբ կը զրուին այս տողերը: Ան շուտով նշանակուեցաւ Ֆրանսայի ներկայացուցիչ: Հ. Հ. Կառավարութեան մօտ:

Պուատեպարի զալէն քիչ յետոյ, Հայաստան եկան անգլիական սպաներ: Առաջինը եկաւ զօր. Ֆորեստիէ Ուոլեր, որ յետոյ զնաց Թիֆլիս, իսկ Երեւանի մէջ մնաց լէյտնանտ Չարլզ: Շուտով

երևանի մէջ հիմնուեցաւ անդլիտական միաբան, որու կեդրոնը, սակայն, կը գտնուէր Թիֆլիս:

Առհասարակ, պէտք է ըսել, որ Թիֆլիսը իր մէջ կը կեդրոնացնէր Դաշնակիցներու ներկայացուցիչները ի զէմ բարձր քոմիսարներու, իսկ երևանը և Բաքուն կը պահէին բարձր քոմիսարներու «ներկայացուցիչները»: Դիտար որ քոմիսարները կու գային Երևան միայն երբեմն, առանձին կարեւոր դէպքերու պարագային: Այդ ունէր իր բացասական կսոյժը: Արո՞վհետև Թիֆլիսի մէջ անոնք կ'հնթարկուէին այնպիսի ազդեցութիւններու և տպաւորութիւններու, որոնց շատ դժուար էր հակադրել Երևանին: Անոնց հետ խօսելու համար Երկու տարուայ ընթացքին ևս յաճախ ճամբորդութիւններ կատարեցի Թիֆլիս և ամէն անգամ այնտեղ անցուցի մեր կառավարութեան ծրարները: Այսպէս Եղաւ, օրինակ, Կարսի, Նախիջևանի, Չոնդկուրի Հայաստանին կցելու խնդիրներու վերաբերմամբ, որոնք քննութեան առնուեցան և յաճախեցան Թիֆլիսի մէջ:

Թիֆլիսի գացած եմ նոյնպէս բանակցելու համար Հայաստանի սահմաններու մասին զօր. Պիշի հետ, որ Կովկասի մէջ եղած անդլիտական զօրարանակի քաղաքական բաժնի մարիչն էր: Թիֆլիսի մէջ տեղի կ'ունենային և իմ բանակցութիւնները ամերիկեան բանակի պնդապետներ՝ Հասկելի և Բէյի հետ՝ Ատրպէջանի հետ եղած ընդհարման առթիւ:

Այսպիսով Թիֆլիսի Դաշնակիցներու քաղաքական կեդրոնն էր նաև այն խնդիրներու յամման համար, որոնք Հայաստանի եւ Հայերու համար առաջնակարգ կարեւորութիւն կը ներկայացնէին:

Պէտք է ըսել, որ Թիֆլիսի այդ պերակշտող զիրքը բացասական սպեկտրութիւն կ'ընէր ընդունուելիք որոշումներու վրայ: Դաշնակիցներու զիտար կեկրոնավայրը Ենթակայ չէր հայկական իրականութեան, հայ տեղական կեանքի և անոր կական պահանջներու անմիջական տպաւորութիւններուն: Ամէն անգամ պէտք կ'ըլլար այդ բոլորը պարզել բարձր քոմիսարներու սոջեւ, պէտք կ'ըլլար համոզել և և ազդել անոնց վրայ՝ բերելով ապացոյցներ իրականութենէ մը, զոր անոնք յաճախ չեն տեսած սեփական աչքերով:

Երբ 1920 թ. Օգոստոսին առիթ ունեցայ ձեռնկախութեան Փոխառութեան» համար այցելել Փարիզ և Լոնտոն, այդ հանգամանքի վրայ ևս հրաւիրեցի Անգլիոյ և Ֆրանսայի արտաքին զործերու նախարարութիւններու ուղադրութիւնը ի զէմ Պայէօրդի և Վանդիտարի: Անոնք խոստացան շտկել այդ թերին, բայց աւա՞ղ, չորս ամիս յետոյ Հայաստանը դարձաւ խորհրդային եւ բոլոր ծրարները խորտակուեցան մինչև անորչ ապագան:

Ուրեմն, Դասնակից ուժերու կեդրոնը — քաղաքական և վարչական — կը գտնուէր Թիֆլիս: Գլխաւոր տարրը, որ կը զերիշխէր գիտնութեան ուժով և քաղաքական արդեցութեամբ անգլիականն էր: Գործերը կը ղեկավարէր անգլիական բարձր ժամասարը: Ակիբրը անոնք զօրավարներ էին՝ Չարևասիկ-Ուսիեր, Կրբբի, Ասբբ, Պիշ, յետոյ ևկա քաղաքական անձ մը, Ուսբարսոյ, իսկ անկէ յետոյ — և այլ վերջին զերպոյն ժամասարն էր — զնպասկա Ստոկս:

Քանի որ ինձ յաճախ միևնոյն խնդրի մասին տտիթ կը ներկայանար խօսելու բարձր զերպոյն ժամասարներու հետ, կրնամ վկայել, որ շատ անգամ ամէնէն կական խնդրներու վերաբերմամբ անոնց մէջ կտատարուէր համաձայնութիւն զոյսութիւն շունչը, և անոնք իբրտա հետ կը վիճէին: Մանաւանց այլ աչքի կ'իշխար Անգլիոյ և Չարևասիկ ներկայացուցիչներուն միջև: Ետպիտ Ներկայացուցիչը ասելի կրտարական ընթացք անէր և շատ քիչ աղ-զեցութիւն՝ զործերու վրայ: Այսպիսով կարելի է խօսիլ անգլիական քաղաքականութեան մասին Կովկասի մէջ ասելի մեծ իրաւունքով, քան Դասնակիցներու ընդհանրապէս: Քանի որ այլ քաղաքականութեան արտաշայտութիւնները բարձրաթիւ էին և անհնարին է կանց ասել ըրտրին վրայ, և կը զերպասեմ տալ անոնց զիսաւոր զիծերը միայն:

Ի՞նչ կը փնտռէր և ինչի՞ կը ձգտէր անգլիական քաղաքականութիւնը Կովկասի մէջ: Անգլիացիներու Երևալու առաջին վայրկեանէն, այսինքն 1918 թ. վերջին օրերէն և 1919 թ. սկիզբի ամիսներէն անոնք անկասկած կ'ուզէին յաջողցնել Երկու նպատակ. նախ՝ ամբացնել անգրկովկասեան հանրապետութիւններու անկախութիւնը՝ օգտուելով միաժամանակ Բաքուի նախկէն, և Երկրորդ՝ սակզծել հիմունքներ տարպէջտեան մահմետական հանրապետութեան՝ զարձնելով զայն ուժեղ և կենսունակ:

Այլ քաղաքականութիւնը կը տանէր Բաքուի մէջ զօրավար Թոմասը՝ առաջին անգլիական զօրավարը, որ մտեր էր Բաքու Միջուկուրէն և Պարսկաստանէն: Անոր տուած հրահանգները Ղարաբաղի և Չանդեղուրի մէջ կ'իրապարձէր զնոյ. Շատելու որտը:

Այլ Երկու նպատակներու մէջ զուգընթացաբար Անգլիացիք այն ժամանակ կ'աշխատէին անպայման ապտուել Կովկասը Թրքական զրաւումէ և խիտ միջոցներով զոյց տալ Թուրքերուն, որ անոնք խկապէս և փաստօրէն պարտուած էին: Ուժեղացնելով մահմետա-

կան Ատրպէջանը, անոնք կը թույլացնէին մահաճակատական թուրքիան: Այսպէսով այդ ոչ գրատ մահաճակատական թուրքականութիւնն էր, այլ թուրքականութիւնն էր որուն նպատակն էր ուժեղացնել Ռուսաստանի սահմանի մէջ գտնուած և հարուստ նաւթահորերու տէր երկրատարր պետութիւն մը: Հիւսիսային Կովկասի սահմաններու, Տապրասանի և Չեչենիայի մէջ, Անգլիացիները աշխարհ ալ գործունէն էին: Այնտեղ չկային անպիտան գորգեր, կային միայն առանձին սպաներ:

Անգլիական գործօն թուրքականութեան տառջին ժառանգը Կովկասի մէջ եղան, մէկ կողմէն սովոր տեսակ ջանքեր Ատրպէջանի սահմաններու մէջ մտցնելու Դարբարդի և Չանդեղուրի հայկական շրջանները, աշխուղ ամբարցնելու նահանգապետի պաշտօնով նշանակուած տարթ- Սորոյի բէկ Սուլթանովի հեղինակութիւնը և միւս կողմէ՝ գորտօւր Շիւքրիի հրամանատարութեան տակ գտնուած թրքական գորգերու հետացումը Կարսի շրջանէն:

Որքան երկրորդ նպատակը՝ թուրք գորգերու հետացումը կ'ողջնուէր Հայերու և հայկական կառավարութեան կողմէն, նոյնքան անտէրն նպատակը կը ջգտնացնէր և նոյնիսկ կը զայրացնէր հայ ժողովուրդի բոլոր խաւերը և կուսակցութիւնները:

1919 թ. սիկտր (Փետրուար 24ին) զօր. Ասոր, անգլիական բորձը հրամանատարութեան ներկայացուցիչը Երևանի մէջ հետեւեալ պայմաններ սկզբնէն Հայաստանի արտաքին գործերու նախարարին.

«Ձերդ գերազանցութիւն,

«Պատիւ ունիմ Ձեզ հաղորդել հետեւեալ ուստիօգրի քարգումնուրիւնը, որ մենք ստացանք զօրավար Ֆորեստիէ Ռոկերէ.

«Զօրավար թումանը Բաքուից հեռացում է. թէ դո՛ւտոր Սուրանովը գնում է Եուրի իրիւ ընդհանուր ցահանգապետ Ջանգեգուրի. Եւրա և Դարբարդի շրջաններու:

«Նա այդ անում է ատանց ղեկելու որիւէ պահանջ տղագայում ատրպէջանեան վարչաքրեան վերաքրեումը. նա այնտեղ գնում է միայն օրէնքը եւ կարգը պահպանելու համար:

«Նրան քոյլ չի տրուած գնուարական ուժի դիմելու եւ յայտարարում է, որ երէ նա չաշխատի modus vivendi յաջողցնելու համար եւ չստիմանափակի ազգամիջեան վէճերը, նա կը հեռացուի պաշտօնից: Նա ընդունակ մարդ է եւ երէ ցանկանայ, կարող է շատ քան անել այդ շրջաններում, ուր լաւ ծանօթ է եւ որտեղ Մուսաւաթ



կուսակցութեան քաղաքական պարագլուխն է՝ բայց շատ կարելի է, որ նա չկատարէ իր խոստումները: Մայր Մասունը, Պենջակի 54րդ գնդից, կ'ունենայ հսկողութիւն այդ խնդրում եւ միեւնոյն ժամանակ կր կարգադրի Անդրանիկի գործերի հեռացումը, որոնք պիտի գնան տեղաւարուելու Ազդա եւ Շուշի»:

«Ընդունեցէ՛ք, Ձերդ գերագնացութիւն, իմ անկեղծ համակրութեան զգացմունքները:

Վ. ԱՍԸՐ

Բրիտանական Գերագոյն Կոմիսարի ներկայացուցիչ Նրեւնում Նորին Գերագնացութիւն Արտաքին Գործ. Նախարարին Նրեւան, 24 Փետր. 1919»

*Չորավար Ասրը այս հաղորդարութեան, Հայաստանի կառավարութիւնը անմիջապէս պատասխանեց Հետեւեալ պաշտօնական գրութեամբ.*

Փետրուար 1919

«Բրիգադ-գորավար Ասրը, անգլիական ներկայացուցիչը Նրեւնում, ինձ հաղորդեց փրանսերէն թարգմանութիւնը գորավար Թումարնի մի հեռագրի, որը Ձերդ գերագնացութիւնը ստացել է Բաբուից:

«Հեռագիրը հաղորդում է, սր «դաւտոր Սուլլանովը գնում է Շուշի իբրեւ ընդհանուր նահանգապետ Ջանգեզուրի, Ջերբայիի եւ Ղարաբաղի շրջանների եւ որ նա այդ անում է առանց դնելու որեւէ պահանջ ապագայում ստրպէջմանս վարչութեան վերաբերմամբ:

«Հայաստանի կառավարութիւնը չի կարող համարել գորավար Թումարնի հեռագրի հաղորդելու փաստը. իբրեւ արտայայտութիւն նոյնիսկ անողակի նաւազման Արապէջանի կառավարութեան թէ-կուզ ժամանակաւոր գերիշխանութեան իրաւունքի՝ այն գաւառների վիճելի շրջանների վրայ, որսնք այժմ պէտք է ենթարկուեն դո՛ւտոր Սուլլանովի իշխանութեանը:

«Հայաստանի կառավարութիւնը իր ժամանակին բողոք է յայտնել Ատրպէջանի կառավարութեան այս գլխաւոր նահանգապետութեան հաստատելու առթիւ:

«Հայաստանի կառավարութիւնը այս խնդրի վերաբերմամբ եւս սպասում է խաղաղութեան խորհրդածողովի վճռին. եւ գտնում է, որ մինչեւ այդ որոշման օրը, ներկայումս գոյութիւն ունեցող գոյալինակը պէտք է պահպանուի, եւ անկասկած, չի կարող փոխուի Ատրպէյջանի կառավարութեան միակողմանի կարգադրութեամբ :

«Հայաստանի կառավարութեան համար հետաքրքիր կը լինէր իմաստ, արդեօք խաղաղութեան հորհրդածողովի կողմից 24 Յունուարի 1919 թ. բնդունուած որոշումը հաղորդուած է եղել Ատրպէյջանի կառավարութեանը, ինչպէս նա հաղորդագրուել է Հայաստանի կառավարութեանը 19ին Փետրուարի 1919 Ձեռք գերագանցութեան միջոցով :

«Բնդունեցէ՛ք, խնդրեմ, Ձերը գերագանցութիւն, իմ խորին յարգանքս հաւաստիքը :

ԱՐՏԱՎԻՆ ԳՈՐԾԵՐՈՒ ՆԱԽԱՐԱՐ՝  
Գիւսնուպետ՝

Նորին գերագանցութեան  
Զօրավար Ֆորեստիէ Ուոկլը  
Բրիտանական ուժերու կրտսնատար  
Անդրկովկասում՝ Թիֆլիս» :

*Այս երկու հաղորդագրութիւնները չափազանց բնորոշ են բժրոնելու համար այն միանպատան անվերջ շփումները, ընդհարումները եւ պատերազմական գործողութիւնները, որոնք յետոյ տեղի ունեցան եւ կը շարունակուէին անընդհատ երկու տարի :*

*Այժմ յետագարձ սկնարկ ձգելով՝ կարող ենք բռնել, որ այդ ընդհարումներու հիմնական պատճառը՝ սահմաններու մասին եզած մշտական վէճն էր, որ իր կողմէ կը ծագէր Ղարաբաղի եւ Զանգեզուրի վրայ ունեցած իրաւունքներու տարրեր բժրոնումէն : Տնտեսապէս Ղարաբաղը կապուած է Բաքուի հետ, իսկ աղյուսակայան եւ քաղաքական տեսակէտէն՝ Հայաստանի հետ : Այստեղէն կը ծագէր վէճը :*

*Անգլիական իշխանութիւնը ամենայն միջոցներով կը պաշտպանէր Ատրպէյջանի յաւակնութիւնները. Հայաստանը բոլոր մը անգամ չէր հաշտուեր Ղարաբաղը եւ Զանգեզուրը Ատրպէյջանին զիջելու հնարաւորութեան հետ : Այդ շրջաններու հայ ազգաբնակչութիւնը անպայման կը ձգտէր միանալ Հայաստանին :*

Գնդ . Ետտեյուրտր սկսու աշն բանոյ, որ առաջարկեց Անդրանիկին խողուլ Զանգեզուրը, սր ան մտեր էր Նախիջևանէն՝ Պարսկաստանէն վերայտոնարոյ : Անդրանիկը Հեռացաւ անդլիացի կայտան Գիրքսնի տղեկցաւթեամբ : Գնդ . Ետտեյուրտր եկաւ Գորիս, եւ այդ միջոցին անդլիական հրամանատարութիւնը խնդրեց ինձ ուղարկել այնտեղ կատարութեան կողմէ լիազօր մը համոզելու համար հայ ազգարնակութիւնը հանդիստ մնալ :

Ես ուղարկեցի Գորիս իշխան Ասլանի Արցաթեանը : Իշխանը Ղարաբաղի եւ Զանգեզուրի խնդրին մէջ առհասարակ չափաւ որ տեսակէտներ ունէր : Ան այս կարծիքին էր, որ պէտք է բաժնել Ղարաբաղն եւ Զանգեզուրը Զարազի գծոյ : Բայց ան ակոտանես էր եղեր ազգարնակութեան կողմէ այնպիսի թշնամութեան ղէպի դնդ . Ետտեյուրտրի առաքելութիւնը, որ վերայտոնարոյ՝ զեկուցեց կատարութեան, որ ազգարնակութիւնը լսել անպամ չ'ուզեր Ատրպէջանի Հեռ միանալու մասին : Ժողովուրդը ուղղակի կը սպստնար Ետտեյուրտրին :

Անդլիացիներու հողերանութեան մէջ ներկայ պարտղային դեր կը խաղար երկու հանդամանք : Կ'րսեմ այց՝ հիմնուելոյ անդլիացի յորտարներու խօսքերուն վրայ :

Նախ՝ անոնք կ'ոյնարկէին այն ահապին հոգամաներու վրայ, որ Հայաստանը պիտի ստանար Թրքահայաստանի վեց վիլայէթներու մէջ, այն ինչ Ատրպէջանը ոչ մէկ կողմէ չէր կրնար բնդարձակուիլ, բացի Ղարաբաղէն : Երկրորդ՝ Ղարաբաղի լեռները՝ Ատրպէջանի բնական սահմաններն են, որովհետեւ Հայաստանի անցքերը զկալի Կուս գետի հովիտը Եուզիի եւ Ասկերանի վրայոյ ուղղակի կը սպստնան Ատրպէջանի սպահաթութեան : Իսկ Հայերը կը գտնէին, որ Ղարաբաղի ժողովուրդը իր պատմական անցելալոյ եւ ուժեղ, քաջ ու անկախ հոգիոյ Հայաստանի ողնաշար կը ներկայացնէ :

Այդ վիճերու Հետեւանքն էր սպստամբութիւն եւ զրեթէ բացարձակ պատերազմ Հայաստանի եւ Ատրպէջանի մէջ :

Մնացած հողային խնդիրներու մէջ անդլիական քաղաքակառուցութիւնը չէր տարբերէր Հայկականէն : Անդլիացիք, ինչպէս ըսի, յաջողցուցին, որ մենք տիրանաք բազմաթիւ մասնակտական շրջաններու, սրտնք այն ժամանակ բոլորովին զրկուած էին հայ ազգարնակութենէ :

Երեւանի հայ քաղաքական շրջաններու մէջ երբեմն կը շփոթէին Անդլիացիներու քաղաքականութիւնը Ղարաբաղի մէջ առհասարակ անոնց մասնակտական քաղաքականութեան Հետ : Կր կարծէին,

որ միշտ ևս ամենուրեք Անդլիտցիք կը պաշտպանէին մահճետականները, բայց այդ սխալ է : Անոնք կը պաշտպանէին մահճետականները այնտեղ, ուր, իրենց կարծիքով, այդ կը պահանջէին Ատրպէջանի կենսունակութեան պայմանները :

1920 թ. Անդլիտայ աջակցութիւնը Հայաստանի վերաբերմամբ արտայայտուեցաւ Հայաստանի բանակի համար 40,000նոց զէնք և ռազմամթերք սպարկելով, որ այն ժամանակուայ զինեցով կ'արձէր 1,200,000 ֆունտ սթերլինկ : Հայերը կը մեղադրէին Անդլիտցիները այն բանի մէջ, թէ այդ զէնքը հասաւ շատ ուշ, թէ զէնքը այն տեսակէն չէր, որուն սովոր էին հայ զինուորները, և այդ սեղադրանքներն ու պիստոլետները զուգարկուեցան 1920 թ. աշնան հայ-տաճկական պատերազմի անյաջող ելքի հետ :

Երբ ուշի ուշով կ'ուսումնասիրես այն ժամանակուայ անդլիտական քաղաքականութիւնը, պարզ կը տեսնես, որ Անդլիտ կ'ուզէր, որ Հայերը, ինչպէս և կովկասեան միւս ապստամբութիւնները, կարենային ևս մղել ընդէն իրենց յոռաշխարհացումը ևս տիրել Թուրքիոյ հայկական վիթլայկիներուն : Իրենց ուժերով, իրենց սեփական ուժերով Հայերը չկրցան ընել այդ : Եւ երբ Անդլիտցիք սկսան հասկնայ, որ Հայերը չեն կրնար իրապարծել տառաջարտած նպատակները, սկսան պայտի Հայերէն :

Անդլիտական Բարձր քաճիտարը այդ առթիւ բաւ Անդլիտցիներու համար ընտրու յախապատութիւն մը. «Անգլիան խաղ ըրաւ անյաջող ձիւտ վրայ», այսինքն, որ Հայաստանի և Հայերու զբայ դրած թուղթը շտահեցաւ, քանի որ Հայերը անկարող եղան իրապարծել այդ պիստոլետ խնդիրը, որ վեր էր անոնց ուժերէն :

Ինչ կը վերաբերի Անդլիտցիներու տեսակէտին Հայերու քաղաքական պահանջներու մասին, Հայաստանի սահմաններու, անոր ծովային ելքի մասին պէտք է ըսել, թէ այդ խնդիրներու քննութիւնը և լուսարանութիւնը յանձնուած էր զօր-Պիչին, որ կը վարէր անդլիտական անդրկովկասեան դարարածնի քաղաքական մասը : Ան երկար խորհրդակցութիւններ ունեցաւ ինձի հետ այդ խնդիրներու շուրջ, հասարակ շատ թանկագին նիւթեր, կարմեց ճիշդ մանրամասն վիճակագրութիւն և ներկայացաւ Հայաստանի սահմաններու մասին իր նախադիժք, որ շատ կը մօտենար նախագահ Վիլսոնի որոշած սահմաններուն :

Այն տեղեկութիւնները որ ևս այն ժամանակ ունէի, ցոյց կու տային, որ զօր-Պիչը հուսատացած էր, թէ զրեթի բոլոր Հայերը, ուր որ ալ գտնուին, հեղհեղ պիտի գան և հաստատուին



«1. Անհրաժեշտ է արագ կարգադրութիւններով եւ եռանդուն միջոցներով հեռացնել հայկական հողամասերից քրքական զինուորներին եւ սպաներին, որոնք դեռ եւս գտնուում են այնտեղ: Մինչեւ այժմ օսմանեան զօրացումը շի իրագործուել Հայաստանում, եւ մեծաքանակ զինուած խմբեր թուրք սպաների ղեկավարութեամբ գտնուում են Ախալցխայի, Ախալքալաքի, Կարսի, Արտահանի, Նախիջեւանի շրջաններում՝ հասնելով մինչեւ Էրզրում, Երզնկա, Ալաշկերտ, Բիսլիս. Վան:

«2. Բանալ Հայաստանի նահապարհները եւ այնտեղ հաստատել կանոնադր հաղորդակցութիւններ, գլխաւորապէս Տրապիզոնի, Էրզրումի-Երզնկայի, Կարսի-Ալեքսանդրապոլի-Էրզրումի, Իգդիր-Քալաթի եւ Վանի միջեւ: Այս նպատակով պէտք է կարգի բերել նահապարհները, կառուրջները, նրանց վրայ զինուորական պահպաններ նշանակել. ձեռք բերել տեղափոխութեան միջոցներ (օտոմօբիլներ):

«3. Կազմակերպել հայկական զինուած ուժ Հայաստանում, նրան միացնել այն զօրաբաժինները, որոնք գտնուում են Հայաստանի սահմաններից դուրս, դնել այդ զօրքերը փրանսական սպաների հրամանատարութեան տակ եւ նրանց համար հայրայրել ռազմարքերք, հագուստ եւ բոլոր զինուորական անհրաժեշտ միջոցները, ինչպէս եւ պաշարեղէնը:

«Ապագայ Հայաստանի կազմակերպութիւնը անհմարիմ է առանց այս երեք հիմնական խնդիրներու լուծման:

«Բացի դրանցից, իբրեւ անյետաձգելի խնդիր, կազմակերպել, որքան հնար է շուտով, հայ զաղքականների վերադարձը, որպէսզի կարելի լինի արագութեամբ վերականգնել տնտեսական կեանքը:

«Այժմ առաջ ունենալով, որ այն շրջանները, ուր պէտք է ազարկուին զաղքականները, բոլորովին աւերուած են, պէտք է անհրաժեշտ միջոցների ձեռնարկել հետեւեալ հարցերի լուծման համար. ա) մատակարարումը, բ) քանդուած տների եւ աւերուած գիւղերի վերականգնումը եւ վերաշինութիւն տեխնիկական տեսակետից (երկրազուրծական մեքենաներ, արհեստների գործիքներ եւ այլն). գ) առողջապահական միջոցների կազմակերպութիւնը:

Ա. ԽԱՏԻՍԵԱՆ

••

*Նոյնանման յուշագրերով Հայաստանի կառավարութիւնը դիմեր է իր պատուիրակութեան միջոցով Փարիզի վեհաժողովին: Պատ-*

ուիրակութեան գործերու մէջ կարելի է գտնել բազմաթիւ յուշա-  
յրեր նման բովանդակութեամբ, բայց ամբողջ զժբախտութիւնն այն  
չր, որ մեծ պետութիւնները 1919 թ. և 1920 թ. մէկ մասի բն-  
խացքին ամբողջապէս գրադուած էին գերմանական հարցոյ, և այդ  
միջոցին թուրքերն ու ռուս-եփկները կարողացան կազմակերպել բա-  
նակ ու կազմել ծրարներ, որոնց նպատակակէտն էր Կովկասեան  
Հանրապետութիւններու վերացումը: Եւ Էրր հերթը հասաւ Թուր-  
քիոյ հետ կնքուելիք զաշնադրին ու Հայկական Հարցին, Փարիզի  
վեհաժողովն արդէն կարանցուցեր էր իր հեղինակութիւնն ու հմայքը:  
Ատոր հետ միտմամտակ կ'իյնար անոր հեղինակութիւնը  
նաև Կովկասի մէջ, որ, ինչպէս և ամէն տեղ, նախ և առաջ կը  
գնահատուի սօք: Այս տեսակէտէն շատ բնորոշ է միջոցէպ մը, որ  
ինծի պատմած է զօր. Պիշր.—

Անգլիական կոտորածութիւնը անոր յանձնարարը էր Էրթալ  
պարսկական Ատրպէջան, անցնիլ Խոյ, Մալմաստ և տեսնել քրտա-  
կան ցեղերն ու յարմիր քրտական ցեղապետ Միկոն: Երբ զօր. Պիշ  
մէ տղակ Միկոյի վրայ, արդէսդի ան բնօրինի պարսկական իշխա-  
նութիւնը: Զօր. Պիշ կը խոստանայ խօսիլ Միկոյի հետ և համոզել  
յայն Լեյթարկուէրու նահանգապետին: Երբ զօր. Պիշ խօսք կը բանայ  
այդ մասին, Միկոն կը պատասխանէ .

«Զեմ հասկնար մէկ բան. ի՞նչ կը նշանակէ նահանգապետ:  
Ինչո՞ւ ան չի ձեռքակալեր գիս: Զէ՞ որ ես իրեմ չեմ հպատակիր եւ  
ան պարտաւոր է գիս ձեռքակալել: Իսկ եթէ ան գիս չի կրնար ձեռ-  
քակալել, ուրեմն ուժ չունի, և այն ժամանակ ա՛յ ինչ նահանգա-  
պետ է եւ ինչո՞ւ պէտք է հպատակիմ իրեմ»:

Պատակցութիւնը տեղի է ստեղծել Էրեկոյիան. իսկ առաւօտ-  
եան Միկոն ցոյց է տուր զօր. Պիշի իր զօրքը՝ 800 զինուած ձիաոր-  
ներ: Եւ զօր. Պիշ հասկցեր էր Միկոյի պատճառաբանութիւնը:

Երբ ևս հարցուցի զօր. Պիշին, թէ ինք ի՞նչ էր պատասխա-  
նած Միկոյին, ան բառ, որ անոր պատճառաբանութիւնը գտեր էր  
հիմնաւոր և բնծայեր էր անոր 800 անգլիական ոսկի:

Սկիզբները, 1918 և 1919 թ., Թուրքերը կը զգային այդ ուժը  
յանձին անգլիական զօրքերու, իսկ 1920 թ. Անգլիացիները սկսան  
հետանալ Կովկասէն, և միայն զատարկ հրամաններն ու սպառնա-

լիքները պարզեցան արդեցութիւնը դործելէ . Ահա Անգլիոյ արդե-  
ցութեան անկումը : Ինչո՞ւ : Հետացան անգլիական զորքերը : Եւ չգի-  
տեմ արիչ բացատրութիւն, քան խաղաղասիրական հասանքի ծաւա-  
լիլը Անգլիոյ մէջ, բանասիրական շարժման ուժեղանալը, որ կը պա-  
հանջէր զորացում եւ զինուորական ծախքերու կրճատում :

Երբ Անգլիոյ մէջ միտակցութիւնը կազմուեցաւ զատարկելու հարցը,  
մենք ամէն միջոց ձեռք առինք, որպէսզի Հայաստանի մէջ ժամա-  
նակ մը եւս մնան անգլիական զորքերը, բայց չյաջողեցանք որեւէ  
յուրջ արդիւնքի հասնիլ :

Հարց կը բարձրացած 40.000 խտրական զորքեր ուղարկելու  
մասին : Եւ ստանալութիւնը ստացալ ընակարաններ պատրաստելու  
8000 խտրական զորքերու համար Հայաստանի մէջ . բայց այդ զոր-  
քերը չեկան : Ինչպէս յետոյ իմացանք, պատճառները նոյնն էին :  
Իտալիոյ մէջ բանասիրները կը հրամարէին Բաթում գացող շողենա-  
ւերը բեռնել : Ակտսէր էին բողոքի գործադուլներ . Հիւսիսային  
Իտալիոյ մէջ կ'ուժեղանար բաշտակի մը : Այսպէս փոխուեցաւ զորքեր  
ուղարկելու կարգադրութիւնը, եւ Հայաստանը մերկացաւ դաշնակից  
զորքերէն :

Իտալիան, առհասարակ, աւելի կը հետաքրքրուէր Վրաստա-  
նով, քան Հայաստանով՝ գտնելով հոն իրեն համար հարկատու ան-  
տասր, քարածուխը եւ մանկանկար : Մերակուսական Կոնստինտի  
խտրական առաքելութիւնը այդ մասին ինձ բացարձակ յայտարարեց :  
Հայաստանի մէջ չկային մեծ հարստութիւններ, որոնք կարողանա-  
լին գրաւել Իտալիոյ եւ ուրիշ եւրոպական երկիրներու դրամատի-  
րական շրջանակները :

Փրանսական զինուորական զործիչները՝ դեղ . Շարտինիի եւ  
կապ . Պուատուար անձնապէս միշտ կ'սպանակից էին ֆելտիքարիւ  
սկիւրտներէ եւ միշտ կը համոզէին մեզ պահպանել, որքան հնար է,  
սերտ կապ Ռուսաստանի հետ : Փրանսայի քաղաքացիական զործա-  
կալները նոյնպէս կը բաժնէին այդ կարծիքները . այստեղ կ'արտա-  
յայտուէր Փրանսայի ձգտումը՝ տեսնել հզոր Ռուսաստան, իբրեւ  
դաշնակից՝ Փրանսիոյ դէմ : Անկախ Կոստանտինուպոլսի պաշտպարը  
զէր սղիսրեր : Կոստանտինուպոլսի անջատման մէջ անոնք կը տեսնէին Ռու-  
սաստանի թալանարար եւ անկեղծօրէն հաւատացած էին, որ Արե-  
ւելքի փոքր արդերը կարիք ունէին պաշտպանութեան՝ մեծ արդերու  
կողմէ :

Այդ պատճառով Փրանսական քաղաքականութիւնը անդոյն կը  
եւ ոչ-զործուն :



Փոքր պետութիւններէն Հայաստանի Հետ յարաբերութիւններ  
ունէին Յունաստանը՝ Պոնտոսի խնդրի, զազթակոսներու եւ Կարսի  
չրջանի յոյն զիւղացիներու մասին: Այդ հարցերուն համար Երեւան  
էր եկեր մետրոպոլիտ Խրիստոսֆոր, որ բանակցութիւններ վարեց Հա-  
յաստանի կառավարութեան հետ՝ Հայաստանի եւ Պոնտոսի միջեւ  
համաձայնութիւն կայացնելու մասին: Բանակցութիւնները կատար-  
ուեցան Երեւանի մէջ եւ վերջացան համաձայնութեամբ, որու մէջ  
յետոյ մենք մտցուցինք լրացումներ ու վերջնական ձևով համա-  
ձայնութիւնը խմբագրուեցաւ մետրոպոլիտ Խրիստոսֆորի ուղղում  
իմ հետեւեալ նամակի մէջ.

Հ. Հ.

Միևիսար-նախագահ

17 Յունուար 1920 Թիֆլիս.

«Գերազ:տիւ տէր,

«Է լրացումն իմ 10ից Յունուարի քիւ 173 գրութեան պատիւ  
ունիմ յայտնելու Ձեզ, որ աչքի առաջ ունենալով, որ Ձերդ գերա-  
պատուութեանը ներկայացրած գրութիւնը բնութիւն է եւ ընդունուել  
կառավարութեան եւ պարլամենտական շրջանների կողմից, ես իրա-  
ւունք չունեմ մտցնել նրա մէջ նոր փոփոխութիւններ եւ որեւէ լրա-  
ցումներ առանց նայն մարմինների լիազօրութեան, աչքի առաջ ունե-  
նալով նայնպէս, որ ներկայումս այդ գրութեան նիւր կազմող հար-  
ցերը Հայաստանի եւ Պոնտոսի պատուիրակութիւնների խորհրդակ-  
ցութիւնների առարկայ են կազմում: Եւ չրկնելու համար հակա-  
սութեանց մէջ յիշեալ պատուիրակութիւնների հետ, ես, անհրա-  
ժեշտ եմ համարում ի լրացումն նախորդ գրութեան անել հետեւեալ  
յայտարարութիւնները.

«Պոնտոսը կազմելով Հայաստանի մի ղաշնակից մասը՝ վա-  
յելում է կատարեալ ինքնավարութիւն իր ներքին գործերի մէջ, ու-  
նի իր տեղական պարլամենտը, եւ ունենալով բանակ միացած Հա-  
յաստանի Հանրապետութեան բանակի հետ մի ընդհանուր հրամա-  
նատարութեան տակ, եւ ունենալով զինուորական նախարարութիւն,  
դրամական սխտեմ, արտաքին քաղաքականութիւն, փոստ եւ հեռա-  
գրական վարչութիւն, ցամաքային եւ ծովային հաղորդակցութեան  
նախապահներ — այդ բոլորը ընդհանուր եւ միացեալ Հայկական  
Հանրապետութեան հետ, ինչպէս եւ միեւնոյն պետական ֆինանս-

ները, բացի տեղական փինանսներից, ունի միայն պարլամենտ Հայաստանին եւ Պոնտոսին վերաբերեալ ընդհանուր խնդիրների լուծման համար :

«Մեզմտ ամենաանկեղծ յարգանքներով, Ձերդ գերազանցութիւն, Ձեր խոնարհ ծառայ, ԽԱՏԻՍԵԱՆ» :

Այս համաձայնութիւնը շիրապործուեցաւ, և Յոյներու պարտութենէն յետոյ ամբողջ Պոնտոսը մարբուեցաւ Յոյներէն :

•

Ձեռք-Սյոյաբիան սպարիսիւս կը Հայաստան տնտեսական պատերազմութիւն : Ան հաստատեց կապեր, սրտնք կը խոստանային փայտին սպարայ :

Տանի, Թերեկի, և Քուպանի կառավարութիւնները նոյնպէս սպարիսիւսին տանձին պատերազմութիւն երևան : Բայց ան ոչ մէկ քաղաքական հետեանք ունեցաւ, ինչպէս և, առհասարակ, ոչ մէկ համաձայնութիւն կայացաւ : Հ. Հ. կառավարութեան և ուստի կամաւորական բանակի միջև :

Միակ յորջ գրութիւնը, որ ստացուեցաւ կամաւորական բանակի ներկայացուցչէն Երևանի մէջ, զնոյ. Ձենկեիչէն, այդ պաշտօնական հաղորդագրութիւնն էր, թէ զոր. Դենիկիներ de facto կը ճանչնայ Հայաստանի, ինչպէս և Վրաստանի և Ատրպէջանի անկախութիւնը :

Երկրորդ քայլը զոր. Դենիկիներ կողմէ կաւ հայկական բանակի համար մէկ միջոցն փամփուշտ առաջարկելը, բայց տոտնք մնացին ճանապարհին, Խրիմէն զէպի Պոլիս տեղափոխութեան միջոցին տնտեսացան և այնպէս ալ չհասան Հայաստան : Ոչ մէկ ուրիշ յարաբերութիւն Հայաստանը ուստի կամաւորական բանակի հետ չունեցաւ : Այդ ևս կը սնկեմ անվերապահօրէն :

Միացեալ Նահանգները Հայաստանի մէջ իսկուպէս քաղաքական զործն զեր չկատարեցին, բայց կրնային մեծական զեր խաղալ, և թէ իրապօրծուէր Ուիլյամի պաղատարը Ամերիկայի կողմէն Հայաստանի Մանգատը ընդունելու մասին : Սակայն այդ պաղատարը հասնութիւն չգտաւ Ամերիկայի մէջ և Ամերիկայի զերը այնպէս ալ մնաց զուտ մարդասիրական : Բայց մանցատի խնդրի ուսումնասիրութեան համար Հայաստան և Թուրքիա ուղարկուեցաւ յատուկ յանձնախումբ մը զոր. Հարրոտի նախադահութեամբ : Այդ յանձ-

նախումբը անցու ամբողջ Թուրքիայոյ, Էդաւ Սոյազ, Էրզրում, Սա-  
րիզամիշ, Կարս, Երևան, Քիֆլիս, Բաթում և ապա վերադարձաւ  
Լաճրիկա: Սոյազի մէջ զօր. Հարրոտը տեսաւ Մուսթաֆա Քեմալը,  
խօսակցութիւն անկցաւ կոտորածներէն նախապահ Բէուֆ Բէյի  
հետ, պարզեց անոնց տեսակէտները, Էկաւ Կարս, աշտուղ տեսնուե-  
ցաւ նահանգապետ Ղարապետեանի հետ և 25 Սեպտեմբերին 1919 թ.  
հասաւ Երևան:

Զօր. Հարրոտի առաքելութեան մասին մենք արդէն գիտէինք  
Փարիզին մեր ստացած հեռագիրներէն: Գիտէինք, որ անոր զեկու-  
ցումէն շատ բան է կախուած, և յըջօրէն կը պատրաստուէինք անոր  
յանձնախումբը բնականաբար համար:

Հարրոտի գալէն ամիս մը առաջ կառավարութեան հաղորդ-  
ուած էր զոյն հետաքրքրող հարցերու ցուցակը, որոնց համար մենք  
կը պատրաստուէինք շատ մտնրամասն պատասխաններ: Շարք մը  
առանձին հարցեր յանձնուած էին մասնապէտներուն զբիւլու համար.  
ժող 25,000 ուրլի ծախսուեցաւ միայն իր վարձատրութիւն գրող-  
ներուն. ժող 10 մտրղ կ'աշխատէր Երկու ամիս: Ստացուեցան շատ  
բնագրածակ և թանկարժէք նիւթեր: Պատասխանները կ'ընդգրկէին  
Հայաստանի պատմութիւնը, բաղարակնութիւնը, անտեսութիւնը,  
անոր հարեւաններու վիճակը, ժողովուրդի, կառավարութեան, Էկու-  
զեցիի, արդիւնաբերութեան զրութիւնը, մէկ խօսքոյ տեղեկութիւն-  
ներու այն ամբողջ ծաւալը, որոնց հիման վրայ կարելի էր զաղափար  
կազմել ժողովուրդի մը և պետութեան մը մասին:

Երևանի մէջ զօր. Հարրոտը բնորոշուեցաւ մեծ շուքոյ: Ժա-  
մը 2ին իմ բնակարանը հաւաքուեցան բոլոր օտարազգի ներկայա-  
ցուցիչները և ժամը 8ին, մենք զաշինք զօրափարը և անոր յանձ-  
նախումբը զիմաստըրլու բաղարի սահմանը, Հրազդանի կամօրջի  
մօս: Այնտեղ պատրաստուած էր յաղթական կամար մը: Ճանապար-  
հին կանգնած էին զօրբերը, որբերը և ժողովուրդի բաղմութիւնը,  
որ բոտն խանդավախութեամբ զիմաստըրեց Ամերիկացիները: Ազգա-  
յին Էրզ, պատուոյ պահակախումբ, սղեւորուած ողջոյններ, ծա-  
ղիկներ, — այս ամէնը տեսակ մը տօնական տրամադրութիւն կը  
ստեղծէին:

Հէնց նոյն Էրեկոյեան և Էրեք օր շարունակ մենք նիսակը ու-  
նեցանք: Յանձնախումբը կ'ուսումնասիրէր մանդատի խնդիրը: Պէտք  
է բայ, որ Երևան մտնելու նախօրեակին յանձնախումբը ճանապար-  
հին Քիւրտերու կողմէ Էնթարկուեր էր հրացանաձգութեան. անոր  
սղաններէն մէկը թեթեւ կերպով վիրասարուեր էր. իսկ ինքնաշարժը

երեք տեղէն զնդակներ կը բնդասներ : Այս պէպքու պարզ ցոյց կը տը-  
ւած զոր . Հարրորտին մեր հարեւաններու հպարտութիւնը :

Կառավարութիւնը տառջին օրն իսկ երեք ժամ խորհրդակցու-  
թիւն ունեցաւ զոր . Հարրորտի հետ : Ան ծանօթացաւ իւրաքանչիւր  
նախարարի կենսագրութեան, անոր կրթական պատրաստութեան,  
մէկ խօսքով՝ հետաքրքրուեցաւ ըստ ըստ մանրամասնութիւններով :  
Նիստէն յետոյ կառավարութիւնը ճաշ աուաւ ի սրտիւ զօրավարին  
և անոր ընծայեց թուր մը :

Գարձնական մասին զիմելով՝ պէտր է բռնմ, թէ ինչքան կա-  
րելի կը հասկնայ, զօրավարը, որ ընդհանրապէս սաստիկ վերտուած  
և րտակեաց մտրդ կը, արդէն աշն ժամանակ այն համոզմանքին կը  
յանցած, որ եթէ Ամերիկան պիտի ստանձնէ մտնդատը, պէտք է  
բլլայ ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ Փոքր Ասիայ և Անդրկով-  
կասի վրայ, Ալեքսանարեթին սկսած մինչև Բարու, ալիւնքն՝ Մի-  
ջերկրոկանէն մինչև Կասպից ծով : Այդ եզրակացութեան կը յան-  
ղեր յանձնարար, նկատի առնելով հազարակցութեան ճանա-  
պարհները, զլիաւերապէս ծովային և անտեսական պայմանները :

Ամերիկացիները շատ կը զրապեցնէր աշն հարցը, թէ ի՞նչպէս  
կապ պահպանել Հայաստանի հետ, Տարտանէլի փակուելու պարա-  
պային : Այդ պատճառով անոնք կը կարծէին, թէ պէտք է ամուր  
կերպով կանցնել Ալեքսանարեթի մէջ և Տարտանէլի փակման պա-  
րապային երկաթուղիով անցնել մինչև Կովկաս : Ատոր համար կը  
ճրապուէր երկաթուղային զիծ ամբողջ Փոքր Ասիայ, Անատոլուի  
և Անդրկովկասի վրայով :

Միւս կողմէ, Ամերիկացիք կը կամենային մանդատի ինդիքը  
կապել վառելիքի, ալիւնքն՝ Բարուի նաթի ինդրի հետ : Անոնց կը  
թուէր, որ անտեսական հայեցակէտէն Փոքր Ասիան և Անդրկովկասը  
կը ներկայացնեն ամբողջութիւն մը, որ հոյատար մանդատերի տե-  
սակէտէն անկարելի է բամնել, և ատոր համար Հարրորտի յանձնա-  
խումբը արտայայտուեցաւ յօդուտ միացիսլ մանդատի :

Իր կատարած ուսումնասիրութեանէն յետոյ, զօր . Հարրորտը  
զնայ Ամերիկա, և, ինչպէս յայտնի է, Ամերիկան սկզբունքով մեր-  
ժեց մանդատը ընդունիլ : Այդ, ինչպէս և Հայաստանի սահմաննե-  
րու ինդրի մէջ, նախապահ Ռիլսընի բարեացակամութիւնը իրական  
հետեւանքներ չունեցան :

Ի միջի այլոց պէտք է բռնմ, որ զօր . Հարրորտը ինձ հետ մի-  
նակ մնալով իմ առանձնասենեակի մէջ, պատմեց, թէ ինձ ողջոյն է  
բերած Անդրտայի կառավարութեան նախապահ Րլուֆ պէլէն, որուն

Հետ եւ ծանօթ էի զեռ Տրապիպոնի բանակցութիւններու ժամանակէն, եւ որ Ռէուֆ պէյը պատրաստ էր անմիջապէս բանակցութիւններու մէջ մտնել Երեսնի կառավարութեան հետ: Չօր. Հարբոս իր կողմէն խորհուրդ կու տար սկսիլ այլ բանակցութիւններ: Մենք այլ խորհուրդին չհետեւեցանք, հաւատացած ըլլալով, որ մեր խընդիրը պիտի լուծուի Փարիզի մէջ: Յամենայն զկաս, եթէ բանակցութիւններու մէջ ալ մտնէինք, հասանօրէն զործնական եւ ցանկալի արդիւնքներ պիտի չստանայինք: Մենք մեր ամբողջ յոյսը զբաժ էինք Փարիզի վրայ:

Եթէ յիշատակենք նաև յայտարարածն սրոջ զերբ, զոր կ'աշխատէր խաղալ զնոյ. Հասկեր, Սաղազութեան Վեհաժողովի լիազօր մատակարարման զործին մէջ, եւ անոր փոխանորդ զնոյ. Ռէյը, կրոնանք սպառած համարել «Դաշնակիցներու» զերը կոմիտսի եւ մասնաւորապէս Հայաստանի մէջ:

Բայց զնոյ. Հասկերի զերբ, հայ ժողովուրդին սնունդ մատակարարելու, սրբերը խնամելու, արհեստանոցներ բանալու զործին մէջ՝ իրօք հակադաս էր: Իրբև պետ ահապին ոչ-քաղաքական կազմակերպութեան մը, որուն ցանցը կը տարածուէր ամբողջ Հայաստանի մէջ եւ սրբ զեղեցիկ կերպով կ'ըմբռնէր իր գործը եւ անձամբ կը մտնէր անոր բոլոր մանրամասնութեանց մէջ, Հասկեր իր անունը ոսկի սառելքով գրած է հայ ժողովուրդի Ֆիդիքական զոյութեան պահպանման զործին մէջ:

Ան բաժնած էր Հայաստանը մէկ քանի շրջաններու. ամէն մէկ շրջան ունէր իր կառավարիչը, կառավարիչը ունէր իր պահեստը, ուր կը մտնէին պաշարեղէնը եւ հապտար՝ Ալեքսանդրապոլի կեդրոնական պահեստէն:

Նոր էի վերջապուցեր գործերս Ալեքսանդրապոլի մէջ, Երբ մանրամասն հետազոյր առաջայ կառավարութեանէն, որով ինձմէ կը խնդրէին անցնիլ Թիֆլիս եւ բացատրել զաշնակից պետութիւններու դերակոչն քաժխտարներուն եւ Վրաստանի կառավարութեան երկու բան. առաջին որ բոլշևիկեան ապստամբութիւնը համարեաւ առանց արինահակութեան ու վերջնականապէս ճնշուած է, եւ երկրորդ, որ իմ հեռանալը վարչապետի պաշտօնէն ոչ մէկ չափով չի նշանակեր օրիննտախոնի փոփոխութիւն Դաշնակիցներու վերաբերմամբ եւ չ'ազդէր մեր արտաքին քաղաքականութեան վրայ եւ որ ես կը գործեմ նոր կառավարութեան հետ համերաշխութեամբ: Պարագայ մը, որ ինձ միանգամայն հասկնալի երեւաց:

Մայիս 20ին հասայ Թիֆլիս, որ մնացի 10 օր: Կատարեցի վրաս գրուած յանձնարարութիւնը: Տեսնուեցայ մեծ պետութիւններ

րու բուրբ ներկայացուցիչներուն հետ և հանդատացուցի գանձոք, պարգևով, որ կեանքը Հայաստանի մէջ նորէն կ'ընթանայ խաղաղ:

Ամերիկացիք ասկէ յետոյ վերադարձան Երևան: Մայիս 28ի օրը, Հայաստանի անկախութեան տարեկարծը տօնացիք հանդիսաւոր կերպով Թիֆլիսի ներկայացուցչութեան մէջ: Կար մեծ բազմութիւն, ներկայ էին Երասխան պետութիւններու, Վրաստանի և Ատրպէյճանի ներկայացուցիչները:

Յունիս Վին վերադարձայ Երևան և զտայ Երկիրը խաղաղ գրութեան մէջ: Կառավարութիւնը գրապատմութեան մասնակիցներու խնդրի վերջնական կարգադրութեամբ: Այլ նպատակով կազմակերպելը էր արտակարգ գաղութներ: Մի քանի հոգի, թուով 3, գաղութների սրտամար գնդակահարուցան Ալեքսանդրապոլի մէջ. մէկ մասը գաղապարտուեցաւ բանտարկութեան: Կասկածի ենթարկուած պաշտօնեաներ հետաքննուած էին ծառայութեան:

Յունիս Նին գումարուեցաւ Խորհրդարանի նիստը յետև համար կառավարութեան պեկուցումը պաղատարութեան ճշման մասին, արտասուելուցան սկիւրուած ճատեր, սրտնջ հաստարկութիւնը բուն կերպով կը ծախահարէր:

Ես կը պատարատուէի նախընտրու խորհրդարանական աշխատանքի: Բայց շանցաւ Երբ-չար օր իմ Երևան վերադարձաւ յետոյ, Երբ վարչապետ Համօ Օհանջանեանը առաջարկեց գրադուիլ՝ մշակելով օրինակիժ փոխառութեան մասին Հայաստանի համար և ուղեւորուիլ Երասխանայ փոխառութիւնը յաջողցնելու համար: Գրանելով, որ Հայաստանի կեանքը կ'ընթանայ բնականօրէն վիճակով և որ իմ մասնակցութիւնը Խորհրդարանի աշխատանքներուն նուազ կարեւոր է, քան փոխառութեան իրադարձութիւնը, որ կարող է մեծ գործ տալ Հայաստանի Լեւոնտական վիճակին, ևս բնականօրէն առաջարկը:

Խորհրդարանը Յունիս Նին առաջին անգամ գումարուելով Մայիս Նի նիստին յետոյ, նորէն տուաւ կառավարութեան խորհրդարանական իրադրութիւններ և ցրուեց գարձեալ մէկ ամիսով: Այսպէսով Յունիս Նի օրէնքի հիման վրայ կառավարութիւնը ինքը կարող էր հաստատուի «փոխառութեան» օրինակիժը:

«Փոխառութեան» օրինակիժի մշակման գիծերով՝ ևս ձեւակերպելի նպատակը այսպէս. «վերականգնել Հայաստանի տնտեսական վիճակը և արդիւնարկութիւնը և ամբողջնել նրա գրամական շրջանառութիւնը»:

Փոխառութիւնը որոշուեցաւ բնել 20 միլիան տարաբի, տասը տարիով՝ 6 տկոսով: Փոխառութիւնը կոշուելու էր «Հայաստանի

Անկախութեան փոխառութիւն» : Մանրամասնութիւնները մշակելու համար ևս քանի մը անգամ հրաւիրեցի իորհրդակցութիւն գրամատուներու ներկայացուցիչներէն ևւ Ելեւմտական մասնադէտներէն :

Օրինակիւմը, հարկ եղած հրահանգները ևւ բոլոր մանրամասնութիւնները մշակելի յետոյ, Յունիս ԱՏին զեկուցեցի կառախարութեան, որ ևւ հաստատեց փոխառութեան վերաբերեալ օրէնքը : Փոխառութիւնը սրտչեցիւնք իրականացնել հաշկական զագութներու մէջ : Յունիս ԱՏին կառախարութիւնը ինձ յանձնեց ալլ զսրձը՝ տալով ինձ փոխառութեան զլխաւոր լրագորի կոչումը : Միտմամանակ ինզրեց ինձ սրտարտաւել իմ սրտասահմանեան ճանապարհորդութեան միջոցին զուցակ մը զեկուցաններու ևւ հիւպատոսներու Հայաստանի ներկայացուցչութեան : Չուզրնիւղարար ևւ լրագորութիւն ստացայ ծանօխացնել զանազան երկիրներու վարիչները Հայաստանի Հանրապետութեան կազմութեան ևւ վիճակի մտաին :

Այսպիսի կարեւոր ևւ լուրջ յանձնարարութիւններով ծանրաբեանում՝ Յունիս Աին, սասուա, ժամը Չին կնոջս հետ մեկնեցայ Երևանէն : Ամբողջ կառախարութիւնը, սպարապետը, Սորհրդարանի անզամները, անձնական բարեկամներ եկեր էին կայարան :

Արեւակը կը վայլէր . Արարատը Հեռուն կը զրուէր իր ձիւնախոյլ մաքրութեամբ : «Յտեոսութիւն», «կատարեալ յաջողութիւն» ընզհանուր ազազակներու տակ մեր զնայքը շարժուեցաւ Թիֆլիսի սուզութեամբ :

ժ.Ռ. Գ Լ Ո Ի Խ

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՒՐՈՊԱ, ԵԳԻՊՏՈՍ

Ե Ի Ի Ձ Մ Ի Ր

19 ՅՈՒՆԻՍ — 23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1920 Թ.

Առաջին վայրը, ուր սկսեց էլ զբաղուէլի Անկախութեան փոխառութեան խնդրով, բնականաբար, Թիֆլիսն էր, իւրեւ Վրաստանի եւ անոր հայ ազգաբնակչութեան կեդրոնը եւ միտմամանակ հայ հասարակարգի բնակատեղին:

Թիֆլիս եկայ Յունիս 1920ի վայր առաւօտեան: Չնայած, որ եւ շունչի կառավարութեան նախագահի կոչում եւ պաշտօնապէս կրկնէի «Հայաստանի կառավարութեան յատուկ լիազօր» տիտղոսը, Վրաստանի կառավարութիւնը բրաւ հանդիսասր բնուենկութիւն՝ երաժշտութեամբ, պատուով պահակախումբով ու արտաքին զործերու նախարար Գեղեշկարին անձամբ եկաւ կոյարան զիմաւորելու:

Առաջին գործս եղաւ տեսնել Սնդիխոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ բարձր քաղաքները եւ անոնց տեղեկացնել Հայաստանի վերջին անցքերու եւ բոլշեւիկեան շարժման կատարելոյ հաշուեյարգարի մասին՝ միեւնոյն ժամանակ հազարակում իմ նորապա ուղեւորուելու մասին եւ ապահովելով անոնց բարեկեցակամութիւնը եւ աջակցութիւնը:

Յետոյ այցելութիւն տուի Վրաց կառավարութեան եւ ծանօթացայի Հայաստանի բնթացիկ կարիքներուն, զյիստորապէս փո-

խողրութեան և մատենիքի մատակարարման խնդիրներուն : Հայ-  
փրացական յարարերութիւնները միանգամայն կանոնաւոր էին, և  
անցած ընդհարումներու ախար յիշողութիւնները զբխէ անհետա-  
ցած էին. կէտնքք առաջ էր բերած նոր պահանջներ և կր թելադրէր  
համերաշխ աշխատանքի անհրաժեշտութիւնը : Հայաստանի Հանրա-  
պետութեան Թիֆլիսի ներկայացուցչու Տիգրան Բէկպատեանն էր,  
որ յաջորդած էր հիանդացած Լեւոն Լեւանդուրյանին և կր շարու-  
նակէր Վրաստանի հետ սերտ յարարերութիւններ մշակելու քաղա-  
քականութիւնը :

Վրաց կառավարութեան նախագահ Փորտանիան և արտաքին  
գործոց նախարար Գեղեշկարին խնդրեցին ինձ Փարիզ այցելութեան  
միջոցին յատուկ ուշադրութիւն դարձնել կարգաւորելու Բաթումի  
խնդիրը, որ առանձին անհամաձայնութեան առարկայ էր դարձած  
փրաց և հայ պատուիրակութիւններու միջև Սան-Րեմոյի խորհրդ-  
հրդածուցովին մէջ, 1920 թ. գարնան :

Սան-Րեմոյի մէջ հայ պատուիրակները՝ Ա. Ահարոնեան և  
Պոզոս Նուպար փոշա՝ պահանջած էին Հայաստանի համար առան-  
ձին էլք գելլի ծով, Բաթումի փրայտ, յատուկ հողամասով մը, որ  
պիտի պատկանէր Հայաստանին, իբրև սեփականութիւն, իսկ Վրա-  
ցիք՝ Զիւլիձէլ և անոր ընկերներու միջոցով համաձայնած էին զի-  
ջի Հայաստանին Բաթումի նաւահանգիստէն օգտուելու իրաւունքը  
միայն : Վրաց կառավարութիւնը կանգնած էր այն տեսակէտի վը-  
րայ, որ անկարելի է հրամարիլ նոյնիսկ աննշան հողամասէ մը,  
և անպիջող կը համարէր Հայկական Պատուիրակութեան նախագահ  
Ահարոնեանը : Ուստի, Փորտանիան և Գեղեշկարին խնդրեցին հա-  
մազել զայն աւելի զիջող զիրք բռնելու այս խնդրին մէջ :

Երբորդ գործս ելաւ Հայաստանի մասին տեղեկութիւններ տալ  
Թիֆլիսի հայ սպարանկութեան. և կաղմակերպեցի հրապարակա-  
յին գասախօսութիւն մը : Մէկ խորհրդակցութիւն տեղի ունեցաւ մեր  
զիւանադիտական ներկայացուցչութեան մէջ. Երկրորդը՝ Վաճառա-  
կանական Բանկայի և Երբորդը՝ Հայ Գիւղատնտեսական Ընկերու-  
թեան մէջ : Այդ երեք խորհրդակցութիւններու միջոցին ևս նկարա-  
զրեցի Հայաստանի անտեսական ու Երևմտական դրութիւնը և Երև-  
մրտական քաղաքականութիւնը ու տոյի հայկական խնդրի քաղաքա-  
կան կողմի ընդհանուր պատկերը :

Առանձնապէս բաղմամարդ և Երևմտական տեսակէտով չա-  
փողանց կարևոր յարան կը ներկայացնէր Վաճառականական Բան-  
կայւմ կայացած ժողովը : Հաւաքուեր էին 40ի չափ ամենահարուստ



**Հայասանի Հանրապետության Թիֆլիսի ղեկավարական կազմը  
Եկեղեցու՝ Յ. Ռեզգաղեան**

և ամենաազգեցիկ ներկայացուցիչները հայ մաճառականական դասին՝ Արշակ Մելիանի նախագահութեամբ: Ներկայ էին Միք. Արամ-Լան, Գուրիթ Իսգոյանի եղբարք Բաղդասարեաններ, Պաշ. Աֆրիկ-Լան, Եղբարք Ալյոնանաններ, Եղիա Մայիլեան և շատ ուրիշ աչքի ինկոպ ներկայացուցիչներ հայ սուևտրա-արգիւնարերական և Երև-մբտական աշխարհի: Զեկուցման վերջին և անցայ փոխառութեան խնդրին և հրախիբցի սնկնկոյրները աջակցելու սնոր իրականացման: Զեկուցումն յետոյ ինձ սուին շարք մը հարցեր, սրունց նպատակն էր գլխաւորապէս պարզել Հայաստանի սուևտրա-արգիւնարերական ձևնարկներու մէջ գրամապլուխ մտցնելու հնարաւորութիւնները:

Մէկ քանիներ կը մտածէին Ալեքսանդրապոլի և Երևանի մէջ շարքի և կաշիի գործարաններ բանայ: Միւսներ կ'ուզէին Ղարաքիլիսայի մօտ ապակիի գործարան հիմնել: Ուրիշներ կը խորհէին Հայաստանի գանազան մայրերու մէջ իրենց բանկաներու բաժանմաններն բանալ: Մէկ խօսքով՝ հայ գրամատիրոջ ձևնարկու միտքը ազատ գրամապլուխի նոր գործադրութեան ասպարէզներ կը վնասէր: Ասկէ գտա, անունց մէջ կը դրացուէր դժողոտութիւն Վրաց կատապարտութենէն. սնունք սկսած էին արդէն Թիֆլիսի մէջ ինքզիններին զգալ սրպէս հիւրեր:

Վրաց մենչևելիկան կտաւապարտութիւնը միամամանակ կը տանէր Երկու քաղաքական գիծ. մէկ կողմէ յանուն իր քնկերոյարական ծրարայային սկզբունքներու, կը կոտէր բարժուադիայի դէմ՝ ուժեղացած տուրքերու, կալուածներու պետականացման, ստիպողական փոխառութիւններու միջոցով. միւս կողմէ՝ կ'աշխատէր ազգայնացնել Վրաստանի մայրաքաղաքը՝ ուժեղացնելով ամէնուրեք վրացական տարրը և յետոյ, մտցնելով այն՝ իրրեւ պարտաւորեցուցիչ բոլոր հիմնարկութիւններու մէջ: Եւ Եթէ նկատի առնենք, որ բարժուադիան Թիֆլիսի մէջ բազմապէս էր Հայերէ և որ Վրացիք կը կառմէին Թիֆլիսի սմբողջ ազգաբնակչութեան մէկ քառորդէն ոչ սուելին, այն ինչ Հայերը իրենց թիւով քնակչութեան ասպին տեղը կը բռնէին, բոլորովին պարզ կ'ըլլայ, որ վերոյիշեալ քաղաքականութեան երկու գիծերն ալ ամէնէն շատ կը հարուածէին Հայերու անմիջական շահերը, և Հայերն էին, որ գլխաւորաբար, կը տուժէին թէ՛ նիթապէս և թէ՛ բարոյապէս, կը կորսնցնէին իրենց տուները և գրամապլուխները, ազգեպարտիւնն ու գիրքը, և կ'ընդհարուէին Վրացիներու հետադնպած արհեստական ազգայնացման հետ: Թիֆլիսի ամենալաւ թատրոնը, Վրաստանական Ընկերութիւնը

անուշով, շնչին գումարով անցաւ Իւզրաշևաններու ձեռքէն պետտո-  
թեան : Քաղաքի ամենաբաւ տունը Մ. Արամեանցիներ, Վրացիք գրա-  
ւեցին՝ վերածելով «բանուորական տան» : Փրիտօնեաններու տունը  
դարձաւ նախարարի բնակարան, Մանթաշևանի տունը՝ դիւանագի-  
տական ներկայացուցչութիւն, Լեայլն : Միւսնոյն ժամանակ քաղա-  
քային վարչութիւնը աշտպին առողջապահական տուրքեր նշանակեց  
հարուստ քաղաքացիներու վրայ, և վճարողները դարձեալ շա-  
յերն էին :

Ահա այս բոլոր ծանր տուրքերը ազգային արժնցած գիտակ-  
ցութեան ազդեցութեան տակ կը մղէին հայ զբոստաւէրերը դէպի  
Հայաստան, որ մինչև այց չէր գրաւած անոնց ուշադրութիւնը :

Այս երևոյթը շատ ուրախովի էր և ազադայ մեծ յաջողու-  
թիւն կը խոստանար Հայաստանի արդիւնաբերութեան զարգացման  
համար : Եւ իրականութիւնը սկսաւ արդարացեալ այս ցոյցերը : Մա-  
լիականները որոշեցին կառուցանել ապակիի գործարան Ղարաքիլի-  
սայի մօտ, Փիթոյեանները՝ կաշիի գործարան Ջալալ-Օղլիի մօտ :  
Սկսան հետադարձութիւններ կատարել շաքարի մշակութեան հնարա-  
ւորութեան մասին Ալեքսանդրապոլի զատի մէջ և ծխախոտագոր-  
ծութեան՝ Սուրմալուի և Էջմիածնի շրջանը :

~

Թիֆլիսի մէջ Փոխտոութեան Կոմիտէի նախագահ նշանակուե-  
ցաւ մեր դիւանապետական ներկայացուցիչ Տիգ. Բէգրատեանը, իսկ  
բանկաները յանձն տուին իրականացնել փոխտոութիւնը առանց սրել  
վճարումի իրենց օգտին : Աստրաղրութեան վճարը որոշուեցաւ 97  
օտոբլի 100ի տեղ : Ամէն ինչ կը խոստանար կատարելոյ յաջողութիւն :  
Գաւառական քաղաքներէն՝ Ախալցխայէն, Գորիէն, Սիւնախէն հեռա-  
դիրներ կը ստացուէին, որոնք յաջողութիւն կը մտղթէին ու պատ-  
րաստակամութիւն կը յայտնէին աջակցիլ մեր փոխտոութեան :

Նոյն եզանակով վարուեցայ Հետապային ամէն տեղ իմ ուղե-  
ւորութեան միջոցին : Ամէն տեղ կ'ունենայի երեք տեսակի ժողով-  
ներ՝ ա) բուրժուական դասի, բ) ժողովրդական դանդախածներու, և  
գ) մամուլի ու տեղական թղթագրական ու պատկեր կազմակերպու-  
թիւններու՝ բժշկական, իրաւարանական, բարեգործական բնիկբու-  
թեանց համար :

Թիֆլիսի մէջ բազմաթիւ հայ պաշտօնեաներ, որոնք առաջ կը  
ծառայէին անդրկովկասեան երկաթուղագծի վրացական և ասորբ-



պէջանեան սահմաններու մէջ, դուրս էին նետուած, առանց գործի էին եւ փափաք կը յայտնէին տեղափոխուիլ Հայաստան:

Նոյն գիծակի մէջ էին նաեւ փոստ-հեռագրական պաշտօնեաները, որոնցմէ շատերը պաշտօնի հրաւիրուեցան Հայաստան:

Յունիսի վերջին սոցեւոյնականացի Բաթում: Կայարան եկած էին զիմաստրելու Բաթումի մեր հիւպատոս Մ. Աթարէկեանը, տեղական գաղութի ներկայացուցիչները եւ անպիտան ընդհանուր նահանգապետ Քուկ-Քոյիսը, գաղութի նախագահ Ա. Մնոսյանը եւ այլն:

Հոս եւս, գրեթէ բոստօյի կրկնուեցաւ Թիֆլիսի աշխատանքը եւ Երևան եկաւ նոյն իրանպատասխանը: Տեղական հայ տիկինները, «Բաթումի Տիկնանց Կոմիտէ»ի անդամները առաջարկեցին ինձ կապակերպել ոսկիի հանգանակութիւն Հայաստանի «Ոսկի Փոնտ» ստեղծելու համար: Եւ տեղն ու տեղը գործի սկիզբը դնելու համար՝ սեղանի վրայ գրին ոսկի ժամացոյց, մատանիներ, ոսկի շրջաթոյ, սպարանձաններ եւ այլն: Այս օրինակը չուտով դատու հետեւողներ, եւ այսպէսով հիմք դրուեցաւ «Ոսկի-Փոնտ»ին, որ մեծ յաջողութիւն կը խոստանար: Եւ միւս բազմաքանակ մէջ Պոլիս, Իզմիր, Գահիթէ, Աղերանպրիս, Սոֆիս եւ Պուքրէջ, ուր ուր եկայ յետոյ, ամէնուրեք մեծ առատութեամբ սեղանի վրայ կը թափուէին ոսկի իրեր եւ թանկացիք բարեր:

Բաթում մնացի միայն չորս օր եւ Յունիսի սկիզբը մեկնեցայ արտասահման, եւ Յունիս Խին հասայ Պոլիս: Որքան փոփոխութիւն Երկու տարուան մէջ. 1918 թ. Յունիսին մենք կը մօտենայինք Պոլսին պատերազմի միջոցին. նոյն տարուայ Հոկտեմբերին կը հեռանայինք այնտեղէն զինազաղարի օրերուն, իսկ այժմ մեր ուժերու եւ յոյսերու ծաղկման շրջանը կ'ապրէինք: Կը թուէր թէ ամէն ինչ կը ժպտի եւ մեզ կը սպասէ փայլուն ապագայ:

Յուլուստով կը մօտենայի Պոլսին: Առաւօտ էր, հեռադիտակը ձեռքս կը նայէի հետուն, մինչդեռ չոզեմար կ'անցնէր Վոսիօրը: Ահա մօտեցանք Փայաթլոյի նաւահանգիստին: Առաջին բանը, որ դրուեց իմ ուշադրութիւնը, առևտրական շուկան մըն էր խոշոր հայկական ուրօշակով կայմի վրայ: Բաթումի եւ Պոլսոյ միջեւ երթուկերը չօգնաւ մըն էր, որ կը պատկանէր իզմիրցի հայ կաթողիկոսեաններին մը:

Քիչ անցին նկատեցի նուազ մը, որուն մէջ նստած էին չորս երիտասարդներ: Անոնցմէ մէկը ձեռքին տակ բռնած ունէր հայկական հագոյն գրօշակը՝ կարմիր-կապոյտ-նարնջագոյն: Հասկցայ, որ Եկած էին ինձ զիմաստրելու: Մենք հայեացքներով գտանք իրար,

փոխադարձաբար ողջունեցինք․ յետոյ անոնք արագութեամբ ետ  
դարձան զկպի ակփր՝ յատենլու համար այնուպէս սպասող ահազին  
բացմութեան իմ գալուստ մասին։ Այնմիջապէս ամբոյսի մէջ բարձրա-  
ցան հայկական զրօշակներ եւ օդի մէջ երեւացին զլիսարկներ եւ  
թաշկինակներ․․․

Շոգեկամ ասեցաւ ասիին, իջեցայցին ասնպուխը։ Եւ ինձ ող-  
ջունելու եկան պատրիարքի, մամուլի եւ գոնապան ներկայացուցիչ-  
ները, իմ անձնական բարեկամները եւ շ․ շ․ ներկայացուցիչ Ֆերա-  
թախթաճեանը։ Ամբոյս հասարակցուս պահլիճի մը մէջ եւ մէկը մի-  
սի ետեւէն արտասանեցին ողջոյնի ճատեր եւ մատուցին ծաղկեփուն-  
ջեր։ Ճատերու մէջ կը յատնէին իրենց ուրախութիւնը այն յաջողու-  
թիւններու առթիւ, որ ունեցեր է Հայաստանը պետական կեանքի բո-  
լոր ճիւղերու մէջ եւ վստահութիւն կը յայտնէին փոխառութեան յա-  
ջողութեան մասին։

Եւ պատասխանեցի ընդհանուր ճատով մը՝ յայտնելով որ Քրե-  
րէլ եւ Հայրենիքի ողջոյնը բոլոր Հայերուն»։

Ողևւորուած ողջոյններու եւ տղազոհներու մէջ հասայ Քո-  
բաթիան հիւրանոցը, ուր պատրաստուած էին սենեակներ, պա-  
տուհանէն կը ծածանէր հայկական զրօշակը։ Դոներու մօտ Հերթա-  
պահութիւն կ'ընէին երկու յատուկ նշանակուած անձինք։

Պոլիս մնացի մէկ շարաթ։ Բայց այդ շարաթուայ ընթացքին  
ինձ վիճակուեցաւ այնքան շատ խօսիլ հրապարակօրէն՝ թատրոնի,  
եկեղեցիի, ժողովներու մէջ, փողոցները, ընդունելութիւններու մի-  
ջոցին, որ բառիս բուն իմաստով կորսնցուցի ձայնս։ Տեղէս կ'ելլէի  
վաղ առաւօտեան, եւ կը պոսկէի շատ ուշ գիշերին․ բայց ոչ մէկ  
բող միակ չէի մարդ․ ամբողջ ժամանակ ժողովուրդի եւ հասարա-  
կական գործիչներու հետ էի։

Փամանակս դասաւորուեցաւ այսպէս։

Ազգայնականութեան յայն խաւերու մէջ փոխառութեան պրոպա-  
կանտի եւ Հայաստանի մասին տեղեկութիւններ լսելու կարօտ ան-  
ձանձ Համար եւ հինգ տնկած ընդարձակ գեկուցումներ տուի —  
Բերայի Ս․ Երրորդութեան եկեղեցիին մէջ, Սինկոզոս տաշիճին  
մէջ, ժողովի մը մէջ քաղաքի մէկ ծայրամասը։ Բրթի-Շան թատ-  
րոնի եւ Բերայի թատրոնի մէջ, յատուկ ներկայացումէ մը յետոյ։  
Բուրժուայի եւ առևտրական գասի համար գեկուցում տուի Հայ-  
կական Ակումբին մէջ, իսկ Ազգային ժողովի համար՝ Ազգային ժո-  
ղովի պաշտօնական նիստին մէջ պատրիարքի եւ բոլոր անդամներու  
ներկայութեամբ։ Այդ Եօթը ժողովներու մէջ նկարագրեցի ամբողջ

պտակերը Հայաստանի կեանքին, անոր ազգահանգութեան, բանակին, ներքին և արտաքին քաղաքական կեանքին: Ամէն տեղ ոգևորութիւնը կատարեալ էր:

Երբ փոխառութեան գաղափարը և բովանդակութիւնը բաւականաչափ բացատրուած էր հասարակութեան, տեղի ունեցաւ Հայկ. Ակումբի նիստը: Այնտեղ հաւաքուած էին հարիւրի շափ ականաւոր պրահայ վաճառականներ: Ողջունի խօսք ըսաւ Ակումբի նախագահ Արսէնեանը, յետոյ խօսեցաւ տաքթ. Թորգոմեանը: Այլ ժողովին մէջ քննարկեցաւ փոխառութեան յանձնախումբը: Վաճառականները հետաքրքրուած էին մեր փոխառութեամբ, Հայաստանի տնտեսական հեռանկարներով և եսանդպին հարցեր կու տային:

Այսպէսով իմ առաջին նորաստեղծ լիովին իրապօրծուած էր: Փոխառութեան գաղափարը ստացաւ լայն ժողովրդականացում, ընտրուեցաւ կամիտէ, և զարծր առաջ գնաց մեծ թափով. պատրաստուեցաւ փոխառութեան թուղթի նկարը ու ձեւը և յանձնուեցաւ տպագրութեան:

Առանձին խօսակցութիւն ունեցայ առաջին Հայ Հարուստ Իքրանտեսանի հետ, որ ստորագրեց 50,000 թրքական լիրայի պարտատմանը: Սակայն, երբ ամիս յետոյ ան Սոփիայի մօտ գնացքի խորտակման գահ գարձաւ, և ժառանգորդները չկատարեցին անոր խոստումը: Խոշոր անախարժութեան տեղի տուաւ այլ. երկու ամիս չթաղեցին անոր գիտիք՝ սպասելով, որ ժառանգորդները կու տան խոստացուած գումարը. բայց չտուին և Իքրանտեսանը այնուամենայնիւ թաղուեցաւ:

Հաս պէտք է բան, որ թէ՛ Պոլիս, և թէ՛ Եգիպտոս և այլուր, հաւաքուած միլիոնները տուաւ ժողովուրդը, այսինքն չունեւորները և ոչ թէ տասնմիկ հարստները: Վերջինները կը ստորագրէին գումարներ ոչ-համապատասխան իրենց կարողութեան: Ընդհանուր առմամբ Պոլսոյ Հայերը ստորագրեցին 2 միլիոն Փրանկէն աւելի. այս գումարները հետագային վերագարձուեցան իրենց տերերուն մինչև և վերջին ամսով:

Բացի փոխառութենէն այցելութիւն տուի բարձր քոմիսարներուն և Պոլիս գտնուող Փրանսական և անգլիական նաւատորմերու հրամանատարներուն: Տեսնուեցայ Փրանսական քոմիսար Դեյա-Փրանսի հետ: Տեսնուեցայ նաև անգլիական քոմիսար ծովակալ Դեթորեկի հետ, որ յետոյ աշաղին օգնութիւն հասցուց Հայաստանին, յանակոտ քոմիսար Կոնստանտինեակու, ամերիկեան դեր-ճովակալ Բրիստոլի և անգլիական զօրքերու հրամանատար զօրավար Մէյնի հետ:

Ասոնց հետ ունեցած գրոյցներէս այն տպագրութիւնը ստացայ որ բարեացակամ վերաբերմունք ունէին զկտի մեր շահերը, որովհետեւ ոչ մէկ հակասութիւն կար Հայաստանի և «Ինչո՞ւնե՞րու» շահերու միջև: Մասնաւոր խոր տպագրութիւն թողոյց իմ վրայ պատմական գրոյցը ամերիկեան գեր-ժառանգաւոր Բրիտտոլի հետ: Կ'ըսեմ պատմական, որովհետեւ ան կը հակասէր այն ժամանակուայ ընդհանրացած տեսակէտին Ամերիկայի և նախողան Ռիխտերի գերի վերաբերմամբ Հայաստանի քաղաքական վիճակի մասին, բայց եւ այնպէս անոր բոլոր խօսքերը և վստահացումները շատ կարճ ժամանակ ետք միանգամայն արդարացան:

Երբ Բրիտտոլին յայտնեցի իմ խորին Երախտագիտութիւնը Ամերիկայի կողմէ Հայ ժողովուրդին ցոյց տրուող խոշոր մարդասիրական օգնութեան համար, ան այդ Երախտագիտութիւնը ընդունեց հաճութեամբ և բաւ, թէ կը հաղորդէ իր կտաւաբարութեան: Բայց երբ յոյս յայտնեցի Ամերիկայի օգնութեան վրայ Հայաստանի քաղաքական կողմակիցութեան համար, յիշատակելով այդ առթիւ նախադան Ռիխտերի խոստումը, ծափակալ Բրիտտոլ անմիջապէս յայտարարեց հետեւեալը.

«Ռիխտեր բոլորովին չ'արտայայտեք իր ժողովուրդի կարծիքը. ան կ'ըսէ այն, ինչ որ բոլորովին չի համապատասխաներ Ամերիկացիներու շահերուն ու տեսակէտներուն: Գու՛ք այդ մասին պատմանքներ պէտք չէ ունենաք»:

Երբ ևս պատասխանեցի Բրիտտոլին, թէ կը պարմանամ լսելով այդպիսի կարծիք նախադան Ռիխտերի ներկայացուցչէն, ան պատասխանեց, որ Ամերիկայի ժողովուրդը աստջիկայ ընտրութիւններուն ցոյց կու տայ իր կամքը և այդ կամքը յայտնապէս կ'ըրոյսայ ոչ յոյսով Ռիխտերի դադարներուն, և այդ պատճառով, շարունակեց Բրիտտոլ, Հայերը պէտք է իրենք մնտուն թուրքերու հետ մերձեցման ճանապարհներ: Ան հարց տուաւ ինձ, թէ չ'ե՞մ յամար արդեօք Պոլսոյ Հայերէն իր մասին այնպիսի կարծիքներ, որ իրը ինքը չի սիրեր Հայերը և աւելի կը պաշտպանէ թուրքերը: Պատասխանեցի, որ, այո, լսեր եմ: Ատոր վրայ Բրիտտոլ բաւ, թէ առհասարակ ինք իր պարտքը կը համարէ նախադրուած չ'ապրելու քաղաքական գործիչները, որ իրենք մնտուն մերձեցում թուրքերու հետ՝ իրենց պահանջները հասցնելով նուազագոյնի, հակառակ պարագային անոնց կը սպասէ ծանր տպագրայ: Ահա իր նման յայտարարութիւններն են,

անոր կարծիքով, որ անոր մասին ստեղծեր են Հայերու թշնամիի համբաւ :

Արդարութիւնը կը պահանջէ անդամ մըն ալ ըսել, որ զրեթէ նոյնանման խորհուրդ տուաւ ինձ նաև զորովար Հարբուրտը, բայց աւելի մեղմ ձևով :

Բայց եւ ըստն ցանկութիւն ունէի իմանալ, թէ Ի՞նչ կը մտածէին այն ժամանակուայ թուրք կառավարութեան անդամները հայ-կահան պահանջներու մասին: Հոգեբանական վայրկեանը թուրք կառավարութեան հետ խօսելու համար հայ ժողովուրդի տեսակէտէն միանգամայն աննպաստ էր. թուրքերը կը թուէին ըլլալով ընկճուած, Փարսիցի վեհաժողովը ամենազօր, իսկ մեր հարցը լուսագոյն ուղիի վրայ: Տիրոջ կարծիքն այն էր, թէ թուրքերու հետ խօսելիք չկայ:

Այնուամենայնիւ եւ կամեցայ տեսնուիլ թուրք կառավարութեան արդեցիկ անդամի մը հետ. բայց բոլորովին զաղտնի եւ շէշոք հողի վրայ: Այդ տեսակցութիւնը տեղի ունեցաւ մասնաւոր բնակարանի մը մէջ: Իմ խօսակիցն էր այն ստեղծուած չեղած զորոք նախարար Բեշարտ փաշան: Մենք տեսնուեցանք երկու անգամ, եւ ամէն անգամ երկուստեան ժամ: Այդ տեսակցութեան մասին Պոլսոյ մէջ գիտէին մեր կողմէ միայն երկու հոգի, իմ մօտ բարեկամները:

Բեշարտ փաշային եւ պարզեցի մեր բաղձանքները, բացատրեցի, թէ որքան ցանկալի է փոխադարձ համաձայնութեան միջոցով որոշել Միացեալ Հայաստանի սահմանները՝ մտցնելով հայկական հոգամասերու մէջ վեց վիլայէթներու կարեւոր մասը, նաւահանդիստ մը եւ այսպէսով յուճել մեր պարտքը վէճը:

Մեր տառջին տեսակցութեան միջոցին Բեշարտ աւելի կը լսէր: Երկրորդ անգամ ան, ըստ երևոյթի իր ընկերներու հետ խորհրդարանային ունենալ յետոյ, աւելի զործան էր կարծիքները արտայայտելու մէջ, թէ եւ ընդհանրապէս սաստիկ վերապահ էր: Ան թուրքի վրայ զիջեց Հայաստանի հնարաւոր սահմանները՝ մտցնելով Հայաստանի հողերու մէջ ամբողջ Ռուսական Հայաստանը, Այաղ-կերտի եւ Բասէնի հովիտները եւ իրրեւ նաւահանդիստ՝ Բիզէն: Այդպէսով, Վանը, Մուշը, Էրզրումը եւ Տրապիզոնը կ'անցնէին թուրքիային:

Ես յիստորութիւն շունչի որեւէ համաձայնութիւն կնքելու անոր հետ: Ան իր կողմէ կը զտնէր, որ մեր խօսակցութիւններու շարունակութիւնը պէտք է տեղի ունենայ Փարսիցի մէջ, ուր կը գտնուէին թուրքիոյ սրատուիրակները, որոնք այնտեղ հրաւիրուած էին խաղաղութեան Վեհաժողովին կողմէ:

Բնչատ փառայի Հեռ ունեցած խօսակցութիւններէն յետոյ իմ առաքելութիւնը Պոլսոյ մէջ վերջացած էր: Կը պատրաստուէի ճանապարհ ինչոյ, Էրբ ստացայ Հեռոպիր Փարիզէն, Շ. Շ. Պատուիրակի վրէժնէն: Ահարոնեանն, որ ինձմէ կը խնդրէր նախ և առաջ անցնել Փարիզ: Հետեւեալ օրն իսկ մեկնեցայ Փարիզ Իտալիոյ վրայով:

Յուլիս 20ին մօտ էր, Էրբ Հասոյ Փարիզ: Ինձ Համար պատրաստուած էր բնդունելութիւն: Եղան ճաստախօսութիւններ: Ողևորուած խօսեցաւ բանաստեղծ Որբերեանը՝ ողջունելով մեր անկախ պետութիւնը: Կայարանէն գացինք Հիւրանոց:

Ըրի երկու գեկուցամ. մէկը Շ. Շ. Պատուիրակութեան սրահը մտաորակներու ներկայացուցիչներու Համար, իսկ երկրորդը՝ սալ տէ գ'Ակրիփիւրէօրի մէջ, ուր Հաւաքուած էր ահադին բազմութիւն: Ներկայ էին երկու պատուիրակութիւններու նախագահները և տնդամները. Պօղոս փառա Նուպար մեծ ուչադրութեամբ լսեց գեկուցումը. Ահարոնեանը խօսեցաւ մօտ երկու ժամ իմ գեկուցումներու ստիքի: Զեկուցումս բնդանուցաւ ըստ ծափահարութիւններով: Կազմուեցաւ յանձնախումբ մը Հայաստանի Էրեւանուական նախարար Արտաշէս Էնֆրաճեանի նախագահութեամբ: Այդ յանձնախումբին յանձնարարուեցաւ կազմակերպել յանձնախումբը Պեյճիքայի և Զուիցերիոյ մէջ: Ներկայ Էրայ Հայաստանի Հանրապետութեան և Ազգային Պատուիրակութիւններու միացեալ նիստին, ա՛յն նիստին, ուր վերջնական ձևով խմբադրուեցան Հայերու ցանկութիւնները սահմաններու մասին՝ ուղարկելու Համար Ամերիկա, նախագահ Ուիլսոնին:

Յայտնի էր, որ Յոյները կը ցանկային Տրապիզոնը պահել ինքնապար յունական Պոնտոսի Համար, և յունական Հանրային կարծիքը բուսարբելու Համար Հայկական որոշ շրջաններու մէջ պատրաստակամութիւն կար շնոցնելու Տրապիզոնը Հայկական պահանջներու մէջ, բայց Հայկական Էրկու Պատուիրակութիւնները և տնոց նախագահները կը դոնէին, որ «Տրապիզոնը չպահանջել կը նշանակէր դաւաճան Էրեւայ Հայերի աչքում» — և Տրապիզոնը մտաւ ծրարուած սահմաններու միջ իրբև նուաճանդիստ Հայաստանի Համար:

Շ. Շ. Պատուիրակութեան մէջ կայացած նիստին մէջ որոշուեցաւ խնդրել Պարստ Կիլիպէնեանն՝ ստանձնելու փոխառութեան յանձնախումբի նախագահի պաշտօնը: Այդ մասին յանձնարարեցին ինձ խօսել անոր Հեռ Լսնոտն: Ես այցելեցի Պօղոս փառային

և խնդրեցի մասնակցել յանձնախումբին: Ան յայտնեց, որ կը մտցնէ իր շուման փոխառութեան մէջ, բայց անձնախումբի անդամ ԸԼԼԿ չի կրնար աչքի տալն: Եւ նկատի չ. չ. Պատուիրակութեան գործիչներու անբարեապակամ վերաբերմունքը իրեն հանդէպ:

Այդ միջոցին Փարիզի մէջ հասարած կը զգատգամաորական ժողով» մը որ հրատարակէր Պօղոս փաշան հայկական քաղաքական կեանքի ընթացիկ խնդիրներու մասին խորհրդակցելու համար: Պօղոս փաշան Բիւր՝Վ հիւրանոցի մէջ ի պատիւ ինձ և պատգամաւորներուն հրաւիր մը ստրքած կը: Ան ճտով մը ողջունեց ինձ, իբրև չ. Հանրապետութեան ներկայացուցիչ և յոյս յայտնեց, որ շատով կ'իրականանան Հայաստանի և բոլոր Հայերու տեքնանքները: Եւ խնդրեց ինձմէ բոլոր ներկայ կողմներուն կողմէ ողջունել Հայաստանի չ. կառավարութիւնը:

Եւ այցելեցի նոյնպէս Փրանսական արտաքին գործոց նախարարութեան ընդհանուր քարտուղար Պալօլուպին, որուն վարչապետ Միլերանը անձնաբարբեր կը բնղունիլ զիս: Պալօլուպին ներկայացուցի Հայաստանի միճակը (ան կղած կը դեպքան Փեթերսպուրկի մէջ) և խնդրեցի տանձին ներկայացուցիչ նշանակել Փրանսայի կողմէ կրեւանի համար, որովհետև Թիֆլիս ընտելոյ Փրանսայի բարձր բոմիտարը շատ բիշ անդամ կ'երթայ կրեւան: Պալօլուպը խոստացաւ կատարել խնդիրս:

Հետեւեալ օրը Յովհ. խան Մասեհեանի հետ զացինք Լոնտոն: Պօղոս փաշան և Ահարոնեանը հետադրեցին Լոնտոն իրենց ներկայացուցիչներուն զիմաւորելու ինձ: Լոնտոնի կայարանը կղած էին ողջունելու Պօղոս փաշայի ներկայացուցիչ Մալիմը, Արև վարչապետը և շարք մը ուրիշ անձինք հայ գաղութէն: Լոնտոնի մէջ ևս գործեցի նոյն ծրարով. ունեցայ խորհրդակցութիւն փոխառութեան մասին, բրի այցելութիւն արտաքին գործերու նախարարութեան: Տեղական գաղութը հիւրասիրութիւն կողմակերպեց Քարլըրն Լոնքիլի մէջ, որուն ներկայ կը ամբողջ հայ գաղութը, նաև Անդրանիկը, որ պատահամբ կը գտնուէր Լոնտոն: Պատահան ճտեր. խոսողներու մէջ էին նաև Մալիմն և Անդրանիկը, որ յիշեց իր հին հաշիւները Հայաստանի կառավարութեան հետ: Պատահայ և ևս: Ընդհանուր ողջունութեան մէջ վերջացաւ ընդունելութիւնը:

Մանչեսթրի տեղական գաղութի ժողովին զեկուցում տուի, որմէ յետոյ կայացաւ նիստ, ուր բնտրուեցաւ անձնախումբ Մարկոս Բարբճեանի նախագահութեամբ: Յետոյ վերադարձայ Լոնտոն, ուրիշ Օգոստոս ցին նորէն կղայ Փարիզ:

Դրուած նպատակը Եւրոպայի այս մասին մէջ Համարելով վերջացած՝ ևս պատրաստուեցայ ուղևորուիլ զկպի հարաւ՝ Մելանի, Վենետիկի և Լուսի վրայով՝ Եղիպտոս օդատու Դին՝ ուղևորուեցայ Միլան. գաղութի ներկայացուցիչները զիմաւորեցին ծաղկեկերով ու ճառով: Հոս շկեցայ և շարունակեցի ճանապարհս մինչև Վենետիկ, ուր մնացի Երկու օր: Եղայ Միլիթարեաններու մօտ, այցելեցի Ռաֆայէլեան զպրօքը: Տրամապրութիւնը այստեղ ևս բարձր էր: Հայ վարդապետները մեծապէս հետաքրքրուած էին այն ամէնով ինչ որ կը կատարուէր Հայաստանի մէջ և ինձ բնորունեցին իբրև իրենց հայրենիքի ներկայացուցիչ: Ռաֆայէլեան զպրօքի աշակերտները Երպեցին սպոյսին օրհներգը և կարգացին Հայրենասիրական բանաստեղծութիւններ: Ընդունելութիւնն յետոյ տեղի ունեցաւ ճաշ՝ ճատերով:

Օդատու 10ին ճանապարհուեցայ Հոռոմ, ուր մնացի օր մը: Այստեղ հայ գաղութ չկար: Ինձ այցելեց միայն Դիլիթիաներ, այն ժամանակ շատ հարուստ վաճառական մը, և ներկայացուց ինձ իր անասական զարժանութիւններու ծրարիւնները Հայաստանի համար: Իտալոսոցի կտուտովորութիւնը նշանակէր էր ինձ մօտ իբրև ուղևոր կամ Մարտցին, որ ցոյց տուաւ քողաքը:

Օդատու 11ին ևս ուղևորուեցայ Պարի նաւահանգիստը՝ այնտեղէն Եղիպտոս մեկնելու համար: Հոս չուզեցի սպասելով՝ մնացի Երկու օր: Նոյն Օդատու 11ին, Երեկոյեան, հետադիւր ստացայ Ահարոնեանէն, որով կը հաղորդէր, թէ Օդատու 10ին ստորագրուած է Սևրի վաշնագիրը թուրքիոյ հետ, որու հիման վրայ Հայաստանի սահմանները թուրքիոյ մէջ կը թողնուի որոշել նախագահ Ռիլսոնին, իսկ Անգրկովկասի սահմաններու վեճերը Վրաստանի, Հայաստանի և Ատրպէյճանի միջև պիտի լուծուին վախագործ համաձայնութեամբ, իսկ եթէ այդ տեղի չստանայ, այն ատեն Փարիսի Վեհաժողովին կողմէ նշանակուած միջոցառումներու վերջնական որոշմամբ: Այսպէսով, վերջապէս Հայաստանը կը մտնէր միջոցառումի վաշնագիր ստորագրողներու շարքը, իբրև անկախ պետութիւն:

Այս արքր տաջը բերաւ աննկարագրելի ուղևորութիւն ամբողջ Հայասթեան մէջ: Ամէն կողմ տեղի կ'ունենային մաղթանքներ, տանկատարութիւններ, հանդիսաւոր ժողովներ: Լրագրիւնները լեցուն էին սղևուռն յօդուածներով, հայ մարդիկ կը շնորհաւորէին զիրար:

Օդատու 12ին ճանապարհ ինկայ Եղիպտոս և Երկու օր յե-



տոյ Հասոյ Աղեքանդրիա :

Իմ պաշուստ մասին պարտաւոր յարգէն կանխաւ տեղեկացուած էր : Այդ պատճառով Հէնց որ շոյեկտոր մասս նուաստանդիստ, անոր վրայ բարձրացաւ Հայ պատգամաւորութիւններու շարք մը զանպան ճիմնարկութիւններու և անձերու կողմէ՝ իրենց զլուխ ունեակով Արդային Խորհուրդի նախագահ և տեղական հոգևորականութիւնը, կուսակցութիւններու ներկայացուցիչները, յանձին Հ. Յ. Դաշնակցութեան և Ռամկապարներու :

Աղեքանդրիոյ մէջ ալ ընդունելութեան և իմ ձեռնարկած քայլերու եղանակը անցաւ Պոլսոյ եղանակով : Փոխառութեան յանձնարարութիւնը կազմուեցաւ պր. Մուրթաթեանի նախագահութեամբ :

Ամէնչէն Լուսնայուն ամակցութիւն ցոյց տուաւ ինձ փաստարան Տէլեմաք Թիւթիւնճեանը, որ բնութուցաւ փոխառութեան յանձնարարութիւնը քարտուղար, պր. Մուրթաթեանը, Թորոզոմ եպիսկոպոսը, ճարտարագիտ կարօ Պալեան և պր. Չարքչեանը, որ, տեղական պարտութիւն յանձնարարութեամբ, իրբեւ քարտուղար ծառայեց ինձ : Աղեքանդրիոյ մէջ ընտրուած յանձնարարութիւնը իր զործունէութեան շրջանը պիտի տարածէր նաև Հասկէրատանի և Սուտանի վրայ :

Նոր կէն իրենց բնոյթով երկու այցելութիւններ. իմ պաշտօնական այցելութիւնը Եփրատսի թաղասար Ֆուատ Ա.ին և անդլիական ներկայացուցիչին :

Ֆուատ թաղասարին բրած իմ այցելութիւնը կը կրէր միանպատակ պաշտօնական բնոյթ : Ես ցանկութիւն յայտնեցի այցելութիւն մ'ընելու իրեն, և անմիջապէս մօտս եկաւ թաղասարի տառջին պաշտատեան պաշտօնեան և անոր անունով խնդրեց նշանակել ինձ համար յարմար ժամանակ այցելութեան համար : Ես խնդրեցի նշանակել Հեռեւեալ օրը ժամը 12ին : Պոլսոյ պաշի պր. Տէլեմաք Թիւթիւնճեանի ուղեկցութեամբ : Ֆուատ թաղասարը մօտ Ա) տարեկան մարդ էր, հաճելի և երողական գէմբով, ճիմնայի կը խօսէր Ֆրանսերէն : Ան արատայտեց իր կատարեալ գոհութիւնը Հայկական պետութեան կազմուելու ատթիւ, մանրամասն հարցափորձ բրաւ անոր պրտութեան և կարիքներու մասին, միեւնոյն ժամանակ մեծ գոգաւանդով խօսեցաւ Եփրատս բնակող Հայերու մասին : Երկար խօսեցաւ իր հայրենիքի և մասնաւորապէս այն մասին, թէ որքան զրգուար է սպառնալի Եփրատսի վարչութիւնը, բանի որ փոքրաթիւն է բարձրագոյն կրթութիւն ստացած երիտասարդ Եփրատայիններու քանակը : Ան կը գտնէր, որ այդ սպառնալի համար, երբ բոլոր պաշտօնները կարելի կ'ըլլայ տալ Արարներուն, պէտք է զեռ սպասել

տասր ասրի էս : Հարցոց մեր գրօշակի զսյներու մասին և երբ իմացաւ , սրամասրէն նկատեց . « Ես այսպէս կը հասկնամ այդ գոյնները . կարմիր գոյնի արխնով դուք ձեռք էք բերած ձեր անկախութիւնը , և որպէսզի վանի կապոյտ երկիւնք լոյս սիռէ քաղաքակրթութեամբ և ազատ Հայաստանի վրայ , հարկաւոր է նարնջագոյն ատարկայ , այսինքն՝ ոսկի-դրամ » :

Բարօրութիւն մաղթելով Եզիպտոսին և նոյնպիսի բարեմաղթութիւններ աստնայով Հայաստանի համար՝ ևս հեռացայ պաշտտէն :

Անպիտան բարձր ներկայացուցիչը նոյնպէս շատ սիրալիր ընդունելութիւն բրտ . ան ևս մաղթեց Հայաստանին սմէն տեսակ բարեքներ , Երջանկութիւն և բարբաւածութեամբ :

Աղեքսանդրիոյ և Գահիրէի հետ ինձ համար կապուած են Երկու յիշատակիւններ . այցելութիւն բարբաւած և իմ առաջին հանդիպումը Անպիտոյ այժմեան վարչապետի որպէ Սլիվեր Բուլգիլինի հետ :

Տեղական սոփոքութեան համաձայն սպասելու վրայ գացիլք բարբաւած այցելութեան : Լուսանկարուեցանք մեր անսովոր զիրքերուն մէջ , և մեր այդ պատկերները կը վաճառուէին բարեզործական նպատակով :

Ես զեկացում տուի նաև Հ . Յ . Գահիրէի Անուամբին մէջ , այցելեցի օրիւրգաց զարոցը , ներկայ եղայ հոգեհանգիստի՝ ի յիշատակ բարեզործ Մեքսիկանի , որ թողած էր միլիոնաւոր ժառանգութիւն Հայաստանին , յետոյ ընդունեցի իրբեւ ընծայ մետաքսէ հայկական եռագոյն գրօշակ՝ պործութեամբ սկզբնատառերով , զոր մատուցին Աղեքսանդրիոյ տիկիւնները : Այդ գրօշակը հետս է անբաժան :

Երեք օր յետոյ ևս դացի Գահիրէ , ուղեկցութեամբ խումբ մը անձանց , — Լալիսիոպտի , յանձնարարութիւն և կուսակցութիւններու ներկայացուցիչներուն :

Ճանապարհին Չապաղիկ կայարանը , ծխախոտի գործարաններու տեղական հայ թանուարները պարս կէն եկած պիմաւորներու մատուցին ծաղիկներ և սակեայ իրեր « Ոսկու Փոնտի » համար :

Գահիրէի Հայերը պատրաստած էին շտեմնութեամբ հանգիստար ընդունելութիւն : Ամբողջ կայարանը լեցուն էր ժողովուրդով . սմէն կողմէ ծաղիկներ կը թափուէին վրաս . լուսանկարչական գործիքները կը պործէին շարժն : Տեղական մտաւորականութիւնը իր ամ-

բող՞ կար՞ով, առանց կուսակցական խորութեան, ոչևորուած՝ չբջապատած էր Հայաստանի ներեռնաբանութիւնը, իսկ ժողովուրդի խոտն բարձրութիւնը կեցցէներով և ազգայիններով կ'ուզեկցէր ինձ մինչև ինքնաշարժը: Զիտար ոստիկանութիւնը կը մաքրէր ճանապարհը, և մեր ամբողջ շքախումբը կ'ուզեւորուէր դէպի Գա՛նիքի առաջնակարգ հիւրանոցը, սրուն վրայ կը ծածանէր Հայկական դրօշակը: Այդ փոստն իսկ խորապէս կը յուզէր ահապէն ամբարը, որ ազեկեցեցաւ մինչև հիւրանոց:

Կը յիշեմ մանրամասնութիւն մը, որ ասանձնապէս հաճելի էր եզրկտտախի հայ գաղութի սրախն: Իմ Գա՛նիքի գալիս ամիս մը առաջ նոյն հիւրանոցը և նոյն սենեակներու մէջ իջեւանած էր Փրանսայի նախարարապետ Քլեմանտոն. այն ժամանակ այ հիւրանոցի շինութեան վրայ կը ծածանէր Փրանսական դրօշակը: Այս զուգադիպութիւնը կարծես շօշափելի կերպով կը վկայէր շատերուն՝ Հայաստանի մասաբը անկար պետութիւններու քնտանիքի մէջ:

Գա՛նիքի մէջ անցուցած շաբաթը կը կրէին առանձնապէս ժողովրդական և խանդավառ բնայթ: Իմ գրադումներու ծրարիբը սովորական էր. գեկուցումներ, այցելութիւններ և փոխառութեան յանձնարարի կազմակերպութիւն: Բայց գաղութի Հեղափոխութիւնը մեծ ճանապարհներէն, սրանցմէ կ'անցնէին եւրոպայէն Հայաստան գացող և այնտեղէն ևս դարձող գործիչները, առաջ էր բերած այն, որ առաջին Հայկական քաղաքական գործիչն էր, որ կ'այցելէր եզրկտտու և կ'այցելէր Սևրի գաշնադիրը ստորագրելէն քանի մը օր յետոյ: Բացի այդ՝ պաղտիթը չէր պղպեղ պատերապմի սարսափները, հարուստ էր և յայտնի շափով երջանիկ:

Մտադրեալ կեդրոնական կէտր իմ ղեկուցումն էր որ կայացաւ «Կոլիզէ» շարժապատկերի թատրոնի ահապէն գա՛նիքին մէջ, որ կը տեղադրէր քանի մը հարար մարդ: Թատրոնը շափէն զուրս լեցուն էր: Չնայած Սպոստոս ամսու «ափրիկեան շողերուն», քանի մը հարար մարդ երեք ժամ յեց գեկուցումը, և բոտն կերպով ծափահարեց. վերջն այ ուղղակի անձրելի պէս սեղանի վրայ թափուեցան նուիրատուութիւններ «Ոսկի Փնտ»-ի օգտին: Կանոնաւոր շարքերով կ'անցնէին կանայք, տղամարդիկ, երախտներ և սեղանի վրայ կը դնէին ժամացոյցներ, մատանիներ, ազամանդներ, սակեայ շղթաներ, գրամներ: Եզրկտտախի թեմական առաջնարդ Թորգոմ Եպիսկոպոսը հանեց իր մատէն զմրուխտ մատանին և գրաւ սեղանին վրայ:

Մոտաքի մօտ կանգնած էին շարքերով սկաւտուներ և աղաներ շեփորներով: Ամբոխը ուժգնօրէն կը ծափահարէր ամէն անգամ, երբ

յիշատակութիւն կ'ըլլար Հայկական բռնակի, Հայաստանի սահմաններու և անոր Ներսաներու ու մարտիրոսներու մասին: Իսկական ժողովրդական հանգչա մըն էր, որու միջոցին միայն էին բոլոր հայ կուսակցութիւնները սնիտիր:

Երեկոյեան հիւրանոցիս չէնքին տոջն ամբոխը Երաժշտութեամբ, յապտերնեբոյ և զբոշակներոյ ցոյցի սարքից: Ռամկափարներու սկումբը ի պատի ինձ հանդիսաւոր ընդունելութիւն մը կազմակերպեց ճառերոյ, Երաժշտութեամբ և հիւրասիրութեամբ:

Իմ հիւրանոցը կայացած զբամաւէրու ժողովը բնորեց փոխառութեան յանձնախումբը նախապահութեամբ Գաւնուկի, որուն յանձնեցի պահելու համար այն բոլորը, ինչ որ հաւաքուած էր «Սուկու Ծոնտ»ի համար: Ի գէշ բեւեմ, որ Աղեքսանդրիոյ մէջ հաւաքուածը թողուցի պահելու յանձնախումբի նախապահ Մոսթաֆեանի մօտ: Նոյնն բրի նաև Եղմիր, Բայրանները: Հետագային, երբ Հայաստանի խորհրդայնացման հետեւանքոյ «Սուկի Ծոնտ»ը չիրականացաւ, ամէն տեղ «Սուկի Ծոնտ»ը փաճառքի տրուեցաւ և ստացուած գումարները, համաձայն Փարիզէն, Հ. Հ. Պատուիրակութենէն ստացուած կարգադրութեան, յատկացուեցան որբերու և փախըստականներու օգտին:

Տեղական հասարակութիւնը ինձ պատուեց հրաւերոյ, որու միջոցին առևտուրի և արդիւնաբերութեան ներկայացուցիչները ճառեր խօսեցան Հայաստանի հետ առևտրական յարաբերութիւններ հաստատելու անհրաժեշտութեան մասին: Ելիպտոսի Հայաստանի ներկայացուցիչ Նշտնակուեցաւ փաստորան Ջօհրայր:

Գահիրէ կգած միջոցիս, Երբորդ օրը, ինձ զեկուցին, որ անդրիացի սպայ մը կը ցանկայ տեսնել զիս: Բարձրահասակ, չկէ և հաճելի զէմբոյ, մօտ 25—26 տարեկան երիտասարդ մըն էր, որ զիմեց ինձ Քրանսերէն և բաւ, թէ սկսնառես բլլալոյ այն ընդունելութեանը (ան կ'ապրէր նոյն հիւրանոցը), զոր ինձ ցոյց տուին Հայերը և տեղեկանալոյ, թէ ոյ իմ ևս, ան կը խնդրէ վերցնել զինքը հետ Հայաստան: Եւ աւելցուց, որ ոչ մէկ զբամաւան օդնութեան և ոտճիկի կարելի ունի: Եւ հարցուցի, թէ ո՞ր է ինքը: Ան պատասխանեց, թէ ինքը անդլիական բռնակի սպայ է, ամբողջ պատերազմը անցուցեր է ճակատի վրայ Փրանսա, և այժմ զօրացրուածի հետեւանքոյ ազատ կը ճամբորդէ և նիթապէս ապահովուած է:

«Իսկ ինչու՞ կ'ուզէ զայ յատկապէս Հայաստան», հարցուցի ևս:

Ան պատասխանեց. «Ես կարգացի քերթերու մէջ, որ, այն-տեղ պատերազմ է եւ որ Հայերը աբժիդար կերպով կը տուժեն, իսկ ես կը սիրեմ ըլլալ հոն, ուր կան պատերազմ եւ արկածներ, եւ կ'ուզեմ ըլլալ Հայերու հետ»:

Վայրկեան ծր մտածելէ յետոյ ևս ըսի իրեն, որ այնուամենայնիւ, շեմ գիտեր անոր ով ըլլալը, այդ պատճառով չեմ կրնար անմիջապէս համաձայնութիւն տալ: Ան իսկոյն հասկցաւ իմ տատանման պատճառը և համեստութեամբ ըսաւ.

«Դուք, ի հարկէ, կ'ուզէիք իմ մտախ յանձնարարական տննուիլ եւ իմանալ, թէ ճիշդ կը խօսիմ սրբոք: Ես կրնամ իմ մտախ վկայութիւն բերել Եգիպտոսի անգլիական բարձր ֆոմիսար՝ յորտ Ալլենբիլէն եւ յետոյ պէտք է սեպեցնեմ, որ հայրս Անգլիոյ եղբւրսական նախարար է Լսյա ձորնի նախարարութեան մէջ»:

Վերջին յայտարարութիւնը ինձ անհասանկան երևաց, բայց եւ այնպէս համաձայնեցայ ընդունիլ անկէ լորտ Ալլենբիլի վկայութիւնը: Երկուստորդը հրամեշտի սղոյն տուաւ և հետացաւ:

Միւս օր ատուտեան ան նորէն Եկաւ ժոտս՝ բերելով լորտ Ալլենբիլէն զրուսը վկայութիւն, որ կը հաստատէր անոր ըսուածները: Այն ժամանակ հաճութեամբ համաձայնութիւն տուի անոր ինդիքն և տեսուցութիւն նշանակեցի անոր մէկ ամիս յետոյ, Պոլիս, Թոքաթլեան հիւրանոցը:

Եւ, իսկապէս, մէկ ամիս յետոյ ևս գտայ գինք Պոլսոյ այդ հիւրանոցը: Ան գնաց Հայաստան: Այնուհետև իր արկածային պատմութիւնը յայտնի է իր զրքէն, որ թարգմանուեցաւ «Հայրենիք»ի մէջ: 1921 թ. գարնանը ան հասաւ Փարիզ, արձանագրուեցաւ անդամ Հ. Յ. Դաշնակցութեան, Եղաւ Լոպան՝ Խորհրդածոցովին, ուր շատ ոգիեց իր կապերով, յետոյ գարձաւ Բանուորական Կուսակցութեան անդամ և 1924 թ. բաւարկուեցաւ խորհրդարանի պատգամաւորութեան համար: Վերջերս ան գրեց գիրք մը «Կոնկրէ» վերնադրով, որ նուիրուած է Հ. Յ. Դաշնակցութեան, 1921 թ. Հայաստանի Փետրուարեան Ազատամարտութեան յիշատակին:

Օրոտոսսի քանններուն և նստոյ շոյենաւ և ուղևորուեցայ Փիրէ, Յունաստան: Ինձ ճանապարհ գրին մեծ պատուով, բեռնաորեցին Հայաստանի համար հուարութեամբ գամարներով (աւելի քան երկու հազար կիլոգրամական Ֆունտ) և նուէրներով՝ դանազան հիմնարկութիւններու համար:

Երևք օր յետոյ կը մօտենայի Փիբէին: Այնտեղէն պագի Աթէնք, ուր այն ժամանակ կար շատ փոքրիկ հայկական պաշտօն: Բայց Յունաստանի մէջ մենք ունէինք խոշոր քաղաքական շահեր ու կապեր: Կառավարութեան կազմի մէջ էին այն ժամանակ համաշխարհային հոշակ ստացած Վենիզելոսը, որ կառավարութեան նախագահի պաշտօնը կը վարէր, և նայն կառավարութեան արտաքին գործերու նախարար, յայտնի գիտնական և քաղաքագէտ Պոյիտիսը, որ յետոյ Յունաստանի ղեկավարը դարձաւ Փարիզի մէջ:

Աթէնք պայլ՝ ևս իմացայ, որ հետևեալ օր Փարիզէն Աթէնք պիտի հասնի Վենիզելոսը, որ Սերբի գաշնապիբը ստորագրելէ յետոյ կը վերապառնար Յունաստան: Սերբի գաշնապիբը, որ Հայերուն կատարեալ բաւարարութիւն կու տար, կ'իրականացնէր միաժամանակ նաև Յունաստանի բոլոր քաղաքական տենչանքները. անոր կու տար Իզմիրը և Պոլսոյ մօտի վայրերը, ինչպէս և Երկուստասան կղզիները:

Ես այցելութիւն տուի արտաքին գործերու նախարար Պոյիտիսին և իորհրդարանի նախագահին: Երկու օր յետոյ ևս պէտք է այցելութեան Երթայի Վենիզելոսին, որուն ժամանման կը սպասուէր յաջորդ օրը: Ճաշի Էդայ Պոյիտիսի մօտ, որ Վենիզելոսի ջերմ կուսակիցն էր: Ան ինձ հազարկեց այն շահանուած հանգիստը ընդունելութեան մասին, որ կը սխտրաստուէր Վենիզելոսի համար:

Հետևեալ օրը ևս անցայ քաղաքայլ. ամէն տեղ ծաղիկներ, փունջեր, գրօշակներ և կամարներ: Չօրքերը կանգնած էին շարքերով: Փողովորդը խումբ-խումբ կ'անցնէր փողօցներով: Երեկոյան զժ սկսաւ շատ շքեղ հրաշագոյնութիւն: Աճրիսներէն ճառարտները ոգևորուած ճառեր կ'արտասանէին: Թերևս կանաչի յատուկ նոր-քաղցածութեամբ կ'իեն ըստ ինձ. «Այս բոլորը շատ շքեղ է եւ հանդիսաւոր: Բայց իմն այնպէս կը յուի, թէ կառավարութիւնը ինքն է կախիւր այս ծաղկեփունջերը և դրօշակները եւ ինքն է լուսաւորեր նրագները. իսկ ժողովուրդը գրեթէ անտարբեր է»: Եւ, իրօք, այս ընդունելութեան Երևք ամիս յետոյ Վենիզելոսը համաձայնագրական բուհարկութեան ժամանակ պարտութիւն կրեց և ստիպուած էր յաւ թողուլ Յունաստանը: Աթէնք կ'զատ օրերուս կապիկ մը խաժաւ Աղբարանդը թաղաւորը, և ան մեռաւ արիւնի վարակումէն: Ինչոր ծաղկեցաւ Կաստանդին թաղաւորի վերադարձի մասին, և Վենիզելոսը այս հարցին մէջ պարտութիւն կրեց, թէ ևս այդ ժամանակ



Է. ՎՆՆԻՔԵԼԻՆ

ան իր ազդեցութեան եւ փառքի գաղափրնակէտին էր ամբողջ Եւրոպայի մէջ :

Ես այցելեցի Վենիզիւոսին : Ան ինձ ընդունեց շատ սիրալիբ կերպով : Անոր ձեռքը կապուած էր, որովհետեւ Փարիզ եղած ժամանակ ատրճանակի հարուածով վիրաւորեր էին : Սօսեցանք Յունաստանի եւ Հայաստանի շահերու ընդհանրութեան եւ ապագայ փոխ-յարարերութիւններու մասին : Մեր գրոյցէն յետոյ Վենիզիւոս նախքէն իր լուսանկարը յատուկ մակադրութեամբ՝ բարեմաղթելով բարօրութիւն Հայաստանին՝ խոստանալով շուտով ղեկսպան նշանակել Հայաստան, որ եւ կատարեց : Դեռսպան նշանակուեցաւ Պապաս, որը, սակայն, չկրցաւ գալ Հայաստան մերժինիս խորհրդայնացման պատճառով :

Տէպական Հայ գաղութը ինձ ճաշկերոյթ տուաւ : Անոր շահերը կը պաշտպանէր Գլըճեան, որ հետադային շատ աշխատեցաւ Հայ գաղթականներու համար : Մենք կաղմեցինք փոխառութեան յանձնախումբ մը յետոյ նշանակեցինք անոր բաժանմունքը Սելանիկ, նոր Յունաստանի համար :

Աթէնք մնացի ժօռ մէկ շարաթ եւ յետոյ գացի Իզմիր, որ այն ժամանակ յունական շրջան էր՝ բարձր քոմիսար Ստերիատիսի իշխանութեան տակ : Յունական կառավարութիւնը հեռագրով կարգադրած էր Իզմիրի իշխանութիւններուն՝ ընդունելու ինձ, որպէս բարեկամ պետութեան պաշտօնական ներկայացուցչին : Եւ երբ մենք կը մօտենայինք Իզմիրին, մեր նաւապետը կայմի վրայ բարձրացուց Հայկական դրօշակը, եւ մենք նկատեցինք, որ եղերքէն ղէպի մեզ շարժուեցաւ զինուորական շոգեշարժ նաւակ մը, որուն վրայ նստած էր ծովային սպայ մը երկու օղնականներու հետ : Իզմիրի նաւահան-դիստի պետն էր, որ կու գար բարի գալուստ մաղթելու : Սպաներ բարձրացան շոգենաւի վրայ եւ ողջունեցին ինձ կառավարութեան անունէն : Ես պատասխանեցի եւ շնորհակալութիւն յայտնեցի բարեկամ Հայաստանի Հանրապետութեան ցոյց տրուած ուշադրութեան համար : Ես նստայ անոնց շոգեմակոյկը, եւ մենք շուտով Հասանք ասի :

Քարտիր, մեզ կը սպասէին Հայկական պատղամաւորութիւնները : Փոխադարձ ողջոյններէ եւ թէյասեղանէ յետոյ, որ մեզ առաջարկեցին ավի վրայ հիւրանոցի մը մէջ, գացինք Հրանտ Բաքրճեանի տունը, ուր պատրաստած էին բնակարան : Հոս մնացի հինգ օր : Իմ առնելիք քայլերուս ծրարիբը նոյնն էր. ղեկուցում՝ տեղական քաղաքներէ պատի համար, ճառ, տաճարի մէջ, զպրօքը՝ ժողովուրդի



համար, այցելութիւններ՝ յունական զլխաւոր քոմիսար Ստերիատիսին եւ յունական զօրարանակի զլխաւոր հրամանատար զօր. Պարասկեուպուրսին եւ ընդունելութիւն՝ հայկական թեմական տան մէջ: Ժողովուրդի սղելւորութիւնը ուստեղ եւս անահման էր: Եկեղեցիի մէջ իմ տուած զեկուցումս անաջ ընթաց անաս նուէրներ «նսկի Ֆսնառի համար: Հոս ալ սեղանի վրայ թափուեցան ժամացոյցներ, սպարանջաններ, մատանիներ: Այդ ամէնը եւ թողուցի Հրանտ Բաքրճեանի մօտ, որ բնորուցաւ «Փոխառութեան Բանձնախումբ»ի նախագահ: Հետագային սակին վաճառուեր եւ դրամը պորձածուեր էր որբերու օգտին:

Իրմիբի մէջ, յատկապէս, կը հետաքրքրուէին այն հարցոյ, թէ ինչպիսի մասնազէտներ են պէտք Հայաստանի համար: Կարճ ժամանակ անցած Իրմիբին շատերը պային Հայաստան, բայց չուտով ետ եկան, Երբ աշտեղ Երեւոյցին բոլշեփիները:

Յունական զլխաւոր հրամանատար զօր. Պարասկեուպուրսին այցելելու ատեն զիս ընդունեցին զինուորական նուագախումբի ռազմերգչոյք եւ սրատուոյ պահակախումբոյ, իսկ զօրավարը ինձ յանձնեց ՏՊ շքանշան հայ սպաներուն բաժնելու համար: Առաջին շքանշանը, իմ յանձնարարութեան համաձայն, յանձնեց Երեւանի քաղաքապետ զնոյ. Շահաթուրիին տալու համար:

Յունական բարձր քոմիսար Ստերիատիսը ինձմէ խնդրեց այցելել քաղաքը, անոր հիմնարկութիւնները, հիւանդանոցը, որբանոցները եւ իմ սպասարութիւնները յայտնել իրեն: Իմ սպասարութիւնները միանցումայն նպաստուոր էին, եւ այդ մասին եւ հեռազրեցի Աթէնք՝ Վենիցիլուսին:

Հայկական հիմնարկութիւններէն տեսայ սքանչելի որբանոցը հազար որբերով, որոնք շատ լաւ կ'երգէին, մարմնամարդի վարժութիւններ կ'ընէին, կ'արտասանէին բանաստեղծութիւններ եւ առհասարակ, հիանալի սպասարութիւն կը ձգէին:

Իրմիբին ալ Հեռացայ այն սպասարութեամբ, որ ամբողջ հայ զազուիք կ'արդի սիրով ղէպի Անկախ Հայաստանը:

Պրատասի վերջն էր: Շողեմաին վրայ կը ծածանէր հայկական զօրջակը, Երբ Հասայ Պոլիս: Հոս բաժանորդագրութիւնը կ'անցնէր շատ յաջող: Առաջին վճարումները արդէն կը մտնէին զանձարանը: Կար ընդամէնը չորս ժամանակամիջոց: Պարտատոմսերը արդէն կը ստացուէին: Երեւանէն ստացուեր էին յայտարարութիւններ եւ ռեկլամներ փոխառութեան համար:

Հետագայ իմ ծրագիրն էր. Երթալ Պալքանները — Ռումանիա,

Պուլկարիա — այնուպէս ևս զայլ Պոլիս ևս ապա անցնիլ Հնդկաստան և Ամերիկա: Առաջ Ամերիկան չէր մտնէր ծրագրիս մէջ: Այնտեղ ևս նշանակեր էի իբրևս ներկայացուցիչ փոխառութեան կազմակերպութեան համար մեր գլխաւորիտեան ներկայացուցիչ Գարօ Փաստորմաճևանը, բայց անկէ ստացայ հետեւեալ Հեռադիրք. «Փոխառութեան յաջողութեան համար անհրաժեշտ է ձեր անձնական ներկայութիւնը»: Եւ այդ պատճառով լիճոցի Պոլսոյնեան պետոյտէս յետոյ անցնիլ Հնդկաստան և այն տեղէն ալ Ամերիկա՝ Երևան դառնալու համար 1921 թ. տարեմատին:

Անարյով Պոլիս երև. օր, Աւստրալիայի սիւրբ ևս մեկնեցայ Պուլկարիա: Ամէն տեղ կայարան զուրս կու զայնի հայ երախաներ ուսուցիչներու հետ և կը գիտատրէին ծաղիկներով և ուղերձներով: Ֆիլիպէէն ընդատաջ էին Եկեր րմ. Օրմանեան ևս սր. Աղարեան, սրտիք ինձ հանդիպեցան Ֆիլիպէէն 6 ժամ հեռադրութեան վրայ, իսկ Ֆիլիպէի կայարանը կազմակերպուած էր շատ ջերմ ընդունելութիւն՝ ճառերով ու ծաղիկներով: Ասֆիայէն Եկած էր պատգամատարութիւն մը՝ Արցախի Խորհուրդի նախագահ Բարսաճեանի զլխատարութեամբ:

Ֆիլիպէ մնայի Երև. օր: Ձեկուցում տուի թեմական տան մէջ, ճառ խօսեցայ Եկեղեցւոյ մէջ ահապին բազմութեան առջև ևս այցելեցի տեղական հայկական «Ասպարէզ» բանկը:

Պուլկարիայ Հայերը ամէնէն աւելի ուժեղ են Վատնա և Ֆիլիպէ: Վատնան Հայերու յեղափոխական աշխատանքի օրրանն է զեմերատուայի յենարանը, Ֆիլիպէն՝ ամէնէն աւելի զարգացած է տնտեսական տեսակետով: Մինչդեռ Ասֆիան ունի հայկական թոյլ զպոլի:

Ասֆիայի և Ֆիլիպէի միջև վէճ էր ծագած, թէ ո՞ր պէտք է բոլոր կեղերներ փոխառութեան զործին համար: Եւ կը հակէի Ֆիլիպէի կողմը, իբրևս աւելի հարուստ վայրի: Այդպէս ալ լիճուցայ ինչիւր Ասֆիայի և Ֆիլիպէի ներկայացուցիչներու խոսք խորհրդակցութեան մէջ:

Ուղևորութիւնը Պուլկարիայ մէջ առանձնապէս ուժեղ էր, թէ ևս այնքան աչքի ինկող արտաքուստ, ինչպէս Ելիպտոս և Իզմիր, սրովհետև ժողովուրդը այստեղ աւելի խորը կը զգար ևս իր մէջ ընդունակութիւն չէր գտնէր ուղևորութեան արտաքին ցուցադրութեան համար: Պէտք է ըսել, որ Հայերը, ընդհանրապէս, կ'ենթարկուէին շրջապատող ժողովուրդի սովորութիւններուն, իսկ Պուլկարներն, առհասարակ, շատ վերապահ ևս լուսկեց ժողովուրդ են:

Պուլիարիոյ Հայերը կը պատրաստուէին տեղափոխուիլ Հայաստան, մանաւանդ արհեստաւոր դասակարգը եւ Թուրքիայէն եկած փախստականներու նոր շարքերը :

Տիրիպէնէն ճանապարհ ինկայ Սոֆիա՝ այնտեղէն եկած պատգամաւորներու ուղեկցութեամբ : Հոս մնացի երկու օր, խօսեցայ եկեղեցւոյ մէջ, զեկուցում տուի եւ այցելութիւն՝ պուլիար կառավարութեան վարչապետ Ստամպոլիսկիին, որ ջերմօրէն ողջունեց Սոֆիայի մէջ հայկական հիւպատոսարանի հաստատումը, թոյլ տուաւ մեր փոխառութիւնը եւ դրաւ որ կերպով ճանչցաւ Հայաստանը՝ յայտարարելով ատոր հետ միասին, որ մօտ ապագային կ'ուզարկէ Հայաստան քաղաքական ներկայացուցիչ : Խօսեցաւ Հայերու եւ Պուլիարներու միջեւ եղած կապերու մասին եւ խնդրեց հաւատալ, որ Հայերը միշտ Պուլիարներու մօտ յուսադոյն դրութեան մէջ կ'ըլլան : Հայերն ալ իրենց կողմէ ինչպէս ինչ միջնորդել Ստամպոլիսկիի մօտ, որպէսզի տուններու բոնադրաւումը եւ աղղայնացումը, որն այն ժամանակ մուսաբ էր պործած Պուլիարիոյ մէջ, շտարածուի նաեւ Հայերու վրայ :

Նշանակելով Բարսամեանը փոխառութեան յանձնախումբի նախագահ, եւ մեկնեցայ Ռուսնօք, ուր մնացի մէկ օր : Բժ. Սաղեանը իր մօտ հրաւիրեց Հ. Յ. Դաշնակցութեան անդամները, եւ ես անոնց զեկուցեցի Հայաստանի մասին : Տիկին Կուրթիանոյի մօտ եղաւ հրաւեր տեղական հայ հասարակութեան կողմէն :

Վառնա կը մտածէի անցնիլ Ռումանիայէն վերադարձիս : Այդ պատճառով հետեւեալ օրը Դանուբի եւ Զուրջիւռոյի վրայով գացի Պուքրէշ : Աւստինբեր 15ի մօտ էր : Պուքրէշի կայարանը ինձ դիմաւորեցին Ալզային Խորհուրդի նախագահ՝ Խնդիրեանը, տեղական դործիչներ՝ Արտէրեան, Պարսիկեան եւ եղբայրք Մանիսալեաններ : Ռումանիոյ մէջ մնացի շարաթ մը, Պուքրէշ եւ Քոնստանցա եւ կատարեցի նոյն ծրագիրը ինչ որ եւ ուրիշ տեղեր :

Ռումանիոյ հայկական դադութիւնը աւելի փոքրաթիւն է, քան ուրիշ գաղութներ, բայց աւելի բարեկեցիկ. կան մօտ 10—12,000 բոլորովին ուսմանացած Հայեր, ինչպէս օրինակ, աշխատանքի նախկին նախարար Տրանկօ Յաշը, որ ինձ յստաւ, թէ ինքը Ռումանացի է հայկական ծագումով : Նոյնը յստաւ նաեւ ծերակուտական Գերփեմ :

Չուտ հայկական դէմքը պահպանած աղղարնակութիւնը ջերմ կերպով ողջունեց Հայաստանի վերածնութիւնը : Նոյն իսկ ուսմանացած աղղարնակութեան մէջ Հայաստանի վերածնութիւնը արթնցուցեր էր քնացած աղղային դպացումները : Եւ եթէ աղղայնօրէն ազատ

կանճը շրնդհատուէր Հայաստանի մէջ, շատ լեհացած, ուռմանցած եւ հունդարացած Հայեր պիտի վերադառնային Հայութեան դիրկր: Իսկ անոնց մէջ կային շատ աչքի ինկող քաղաքական եւ Հասարակական գործիչներ, ինչպէս նախարար Լուկաշ, արքեպիսկոպոս Թոտորովիչ, Աժգամովիչ, Տրանկո Եաշ եւ ուրիշ յայտնի գէմքեր:

Պուքրէշ խօսեցայ Լեկղեցւոյ մէջ, ուր տեղի ունեցաւ սակիի հանդանակութիւն «Ռսկի Ծոնո»ի համար: Ընդունեցի Հրաւեր տեղական Հասարակութեան կողմէ եւ այցելեցի վարչապետ Ավերեսկոյին: Ռուսմանական նախարարներու խորհուրդը, Պուլկարիոյ օրինակով, պաշտօնապէս թոյլատրեց վսխառութիւնը, բնորոնեց Հայաստանի հիւպատոստրանը, եւ խնդրեց Հաւատալ Ռուսմանիոյ բարեկամութեան: Զօր. Ավերեսկոյն ծանօթացաւ Հայաստանի իրերու գիծակին եւ, ի միջի ալլոց, լսելով իմ ցանկութիւնները Հայաստանի սահմաններու մասին՝ բտաւ. «Ըստ իս առաջին հարցը ձեզ համար այն է, թէ ովքե՞ր են ձեր հարեւանները: Զեր ամբողջ ապագան կախուած է ատկէ: Կարեւորը այն չէ, որ սահմանները շատ ընդարձակ ըլլան, այլ այն, որ հարեւանները բարեացակամ ըլլան»:

Պուքրէշէն, ուր փոխառութեան յանձնախումբի նախագահ նշանակուեցաւ Մանխաւանը, անցայ Քոնստանցայ, ուր մնացի երկու օր: Այնտեղ եւս նոյն ծրագիրն էր.— ճատ Լեկղեցւոյ մէջ, գեկուցում եւ հրաւեր: Այնտեղէն վերադարձայ Պուքրէշ եւ Ռուսմանկի վրայով՝ դացի Սսֆիա, յետոյ Ֆիլիպէի վրայով, ճանապարհ ինկայ Պոլիս:

Հիւանդութեանս պատճառով չկրցայ Վառնա անցնիլ:

Ֆիլիպէի կայարանը դադութր գիս ողջունեց եւ առաջին անգամը անհանգստութեամբ սկսաւ հարցեր տալ, թէ ի՞նչ կը կատարուի Հայաստանի Թուրքիոյ սահմաններու վրայ: Այդ օրը թերթերու մէջ Լեւեցեր ինն անհանգստացնող տեղեկութիւն այն մասին, թէ հայ-թրքական սահմանապիտին ընդհարումներ են տեղի ունեցեր: Ոչինչ կրնայի ըսիլ, որովհետեւ սեփական տեղեկութիւններ գեւ չունէի: Ուղղակի անցայ Պոլիս, ուր հասայ Հսկտեմբեր 2ին եւ գտայ շատ տեղեկութիւններ: Պարզուեցաւ, որ Թուրքերը սկսեր են յարձակումը Հայաստանի վրայ, անցեր են սահմանը Սարղամիչի մօտ եւ ընդհարում են ունեցեր հայ զօրքերու հետ: Պարզուեցաւ նոյնպէս, որ իմ կրտսեր եղբայրը, ճարտարապետ Լեւոնը, որ կ'աշխատէր Կարս, վիրաւորուեր էր եւ գերի ինկեր Քիւրտերու ու Թուրքերու մօտ: Պարզուեցաւ, որ Հայաստանի մէջ չկայ նաւթ, եւ գնացքները չեն կրնար երթեւեկել...

Հոկտեմբեր Աին ևս Հեռագիր ստացայ մեր կառավարութեան նախագահ Հ. Օհանջոնեաննէն, որոյ կը խնդրէր ինձ մազութ դնել Հայաստանի Երկաթուղիներուն համար: Ես դրամ չունէի: Ետեկայի մէջ մազութ չկար: Վճուցի գիմել անդլիական նաւատորմի հրամանատար Գէ Թորեկին: Կոչի քոյր. բացատրեցի խնդրի կաթինը և լսի, Անդլիոյ օդնութիւնը այս դժուարին բազմին Հայաստանի համար կեանքի և մահու խնդիր է: Մոյսիային լսի, որ ևս կը խնդրեմ գիջիլ Հայաստանին մազութը փոխարինարաբ: Մոյսիայը շատ սիրալիր կերպով լսեց ինձ, անմիջապէս Հեռագրով հարցոց լորտ Քրքընին և միւսնոյն օրն իսկ պատասխանեց, թէ ամբողջ չոգենամք մազութ իմ տրամադրութեանս տակ է: Ես ստացայիր տուի 17,000 Փունտ սթերլինի (մազութի արժէքը) և Հեռագրեցի Երևան: Այցելեցի ծովակայ Բրիտանոյին, որ արդէն տեղեկութիւն ունէր, թէ Թորքերը յարձակեր են Հայաստանի վրայ: Եւ Երբ խնդրեցի իրմէ միջնորդի դեր ստանձնել Հայաստանի և Թուրքիոյ միջև, ան յիշեցոց մեր ամառուոյ գրոյցի մասին Թուրքիոյ վերաբերմամբ և ըսաւ. «Հիմա արդէն ուշ է»:

Հոկտեմբեր 7ին ևս Հեռագիր ստացայ Հայաստանի կառավարութեանն, որ Թուրքերը կը շարունակեն յաստիջազոցութիւն: Իսկ Հոկտեմբեր 8ին կառավարութիւնը կը Հեռագրէր. «Ձեր ներկայտութիւնը նրեւանում աներածեշտ է: Վերադարձէ՛ք»: Հասկցայ, որ դրութիւնը կը դառնայ չափազանց լուրջ և անմիջապէս կարգադրութիւն բրի Բաթում ճանապարհուելու մասին: Առաջին չոգենամքը կ'երթար Հոկտեմբեր 12ին:

Մնացած չորս օրերը ևս նուիրեցի նամակադրութեան բոլոր տեղերու փոխառութեան յանձնարարութեան հետ, տուի անոնց անհրաժեշտ հրահանգներ, տեղեկացուցի իրերու վիճակի մասին և խնդրեցի շարունակել գործը:

Տրամադրութիւնը Պոստայ մէջ այլևս այն չէր, ինչպէս իմ ստաջին ժամանման միջոցին. ամէնքը անհանդիստ էին և յուզուած. Հայաստանի անցրերը բոլորը կը ջղայնացնէին: Ինձ մօտ Եկաւ փաստորան Յակոբեանը և ըսաւ, որ իրեն մօտ խահարարուհի մը կը ծառայէ մօտ 50 ասրեկան կին մը, Պարտիզակցի, որ Երկու տարի ստաջ շահած էր Եգիպտական վիճակախաղի մէջ 80,000 Փրանք (8,000 թրքական լիրա): Այդ դրամը կը պահուէր իր փաստարանին մօտ, որովհետև իր խահարարուհին չէր ցանկացեր ծախել այն իրեն համար: Լսելով Եկեղեցոյ մէջ իմ ճառը Հայաստանի պէտքերու և սրբերու մասին՝ ան իմ մէջ տեսեր էր Աստուծոյ առաքեալ-

— Թորոյք տոչ եղև : Եվսև զվհուռք ' Կառլը զչնմզստց թվ զչնմզզտթևեթև  
 Իզ զչնմվթևվ զվյն զտիզ Ժզսմս ' մզզթվզտսզմ ճևսմթլլ : Կտրքնտևտև  
 Իմզթեհնն իսնզոտտե լ զզսս մն հզտև մժվլս Իմզզզ՝ լ զզսս Լոչ Խսզ  
 — մսփ Լոթմզ զտտոտե՞ : Կմտտտև նթթմև մոթմզղի մսուզհե՞  
 Իզվտտր Իմզզթվլս մսզ Իմզզզտհտտոտլմլ Լոչ Ի սմտև վննն զվս  
 — Թր զվճզտչոզ ռմզթմտև զտհտկ' Լոչ զվնտլ մի մզզզմվտտուչ : Իվս  
 — Թս զվճմզղի : Իմզվթվսնմսմթսզ թվ մն մստլՏ : Թսթլոյ Լոհզղիզթ  
 Իզ մտոզղևն՝ « օզվտոչվմթ տնլ » Լոտոզ ոզ ' Կվլ մզմզթսկս՞ ' Իմ  
 — զզզրտիզմտմ զտհտժտևտմ Իզ զլսմզզմզղիզմ Իմզզզզտտտլ՞ : Թ իս  
 — Թս տնչրտմչ ժթսզթվսնմթս ' Իմզզ՞ Իմ Իմթոց թվ իսնզթտտե՞



Ի զվճետթզմ վժզտզի ճևսմթս թվ ռմզզոզս  
 Լոտոզլս թվստ ոզ մսև ' մն զժզլսթմզմմզղի մնսսա՞ Լոչ Իզ մսժտր վ  
 — Դտ զչնչթո մջուսմտտտտիզ Իզմզղի մս ' Թվզտլստտտլ ն ժտչև

Ի մզվթվսնմտտոզզլտ Լետ հզմտտտի մթսզթվսննչ Իզ ոչևտճվթլտ  
 ոզվի ' Թզտթմտտմզղի զսւթմչ մմզ : ճնթ վզտլթմզ զլսմզղիճևտ Լոչ  
 մմս Լզզրտմ զվտոթք տոչ վլսմվլ ՍՃ : մմտրտև զտետտս Իզ մմզմվ Լետ  
 Լզվտզ ոճսզղի մնննզլ մի ' զղևտթ մի Լո Լետ հզտտս մժզվի մս ' ն  
 զվթվսնտտն՝ Լեմզթոտ Լետ մս ' Իսնզղտև թրթև հեմ ' մտրտչ զլսմ  
 — զթթլթզ զտրևտթ մվ զվլտտտտտ մնչտտ մի մթսմև Իզ մմզմվ Լետ  
 նթ ' ն մթմ իսնզթմթտի Իզ թմտ Թմվլ ՍՃ : Իզ մեհետթսթ ' զտթևն  
 վիտս մվ ն մզզմ մս ' հզզտնտ իստոզստտմզղի Իզ տիզ ոմտև ոզվի  
 Ի մժզվն Լվզսննզլ ոճսզղի հզմեզլ Իզ հսզտմվչ տիզ զտ զտթստտտ  
 Լտի մմս Լոզլթսչ՞ : Իտետճմզղի՞ մմվեզլ իստտ ' զլտիտլլ

Ի զտթլլսնմտրտտտի վզտտտտե՞ վեզզզլտ Լոտր Իզ մ  
 — զզզրտմ զեզզլտեզմ մթսզթլտնտիմզղ վմսմ ' Թևտթ զտիտոզտնտև  
 վեզթետի ' մմնտ զտս մսզս ' մմզզմվետմթլ Իմզթլմզլթ Լեզզլտ վե  
 — զմվտտչ ' սօթ վժմտվմտտե զչտո՞ Վմտտ մզվի Լետ ոզ : զլտոզմմս  
 Լզղետիտտ Իզ մմսմ Լզղեմզղի նեեզլ մի վտտս ' վիսթմտրտն՞ վս  
 — վի ժզմզլ մժզլ լ մզզթտմև զտտիտտի իմժզտտտլ՞ : Ի Իզ զտիտչ  
 — Թտտտ Լետ մթ ոտր Լտիչլթ ' սօթ մվ Լչչտև նթ Իզ ' մտլտմ մվ զչե  
 — մտ Ի զճնթ մտտ Իզ ' մտրտչ Իսզղտ Իմզթմս մթ հոճվթ Իզմվ ոչև  
 — Թեմտև ն մզմտզմ մժզվի զտտտտլլ նթ ' Իսնզղմ լ իզթմթթ ոչևտտտի  
 — Թմտի զտ ' « մտրտչ Լոտտո ղո » սօթ մվ նչտտ մթ ոտր զչնմզթտմ  
 մս ' մժզվի Լեխտոչ Լոտիտ ոզ մմզ : զլտև Իմզթ մզլմտտտտթ : ոտթ  
 Լտև զվչսնմտտուչտլ մս ' վեզմեզլ Իզ Լոհզլտնտն ոչևտմտլ ոզ

Ի զվտտե Իմզթմս Լոչ ' զտմվլ ՍՍՕ՝ Տ Լետ ճևսմթս թլզ Լզ  
 — Թլտն մճսմվտ մվ մն զտմեզլ զտ ' սօթ թլզ Լտև մժզլ իստոզ՞ թո տչտ  
 Իզ : մթտմ մվ Լոտ ն ժտչև զլսմս նթ ' մտտ Իս հեհե մսզս մս ' մլ

մանակ կ'երթար միայն նաեթով բեռնաւորուած շողենաւը, որ կ'ուզարկուէր Բաթում Դէ Թորեկի կողմէ Հայաստանի Համար:

Հինգ օր ճանապարհէին էինք: Հոկտեմբեր 19ին մօտեցանք Բաթումին: Մեզ զիմաւորեցին Հայկական Հիւպատոս Մ. Աթաբէգեանը, տեղական Հասարակութեան ներկայացուցիչ Մնտոյեանը եւ նաւահանգիստի բանուորները: Բոլորին զէմքերն ալ տխուր էին: Կը տիրէր լուսթիւն: Ձէին լսուէր աղաղակներ. զիս ողջունեցին լռելեայն:

Հիւպատոս Աթաբէգեան Հաղորդեց, թէ մեր զօրքերը կը նահանջեն, թէ Թուրքերը կը շարժին զէպի Կարս, թէ իմ եղբայրը սպաննուած է Օլթի-Կարս ուղղութեան վրայ եւ թէ, առհասարակ, տրամադրութիւնը Հայաստանի եւ Հայկական շրջանակներու մէջ շատ ծանր է:

Նոյն զիշերը Լս մեկնեցայ եւ Հոկտեմբեր 20ին, առաւօտեան Հասայ Թիֆլիս:

Ձիւս զիմաւորեց մեր զիւանդիտական ներկայացուցիչը՝ Տիգրան Բէգգաղեանը եւ Հաղորդեց, որ Հայաստանի զինուորական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը կը դտնուի Թիֆլիս եւ բանակացութիւններ կը վարէ Վրաց կառավարութեան եւ անդլիական բարձր քոմիսար զնդ. Ստոքսի Հետ: Ես անմիջապէս տեսնուեցայ Հետը եւ ծանօթացայ իրերու զրութեան. Թուրքերը կ'առաջնային, կը պահանջէին մեր կառավարութենէն Հրաժարիլ Սեւրի զաշնագրէն եւ ընդունիլ Բաթումի զաշնագրի պայմանները, որով Հայաստանին կը թողուէր միայն 9,000 քառակուսի քիլոմէթր: Մեր կառավարութիւնը մերժած էր, եւ Թուրքերը սկսեցին ինչ յարձակումը: Այդ պայմաններու մէջ կառավարութիւնը յայտարարեց իր մէկ քանի կարգերու զօրահաւաք եւ ուղարկեց իր զօրքերը սահմանազուրիս: Սկսեց իր պատերազմը: Ինքը՝ զինուորական նախարարը եկեց իր Թիֆլիս առաջարկելու Վրաստանին զաշն կապել թշնամիներէն մէկուն զէմ, որովհետեւ վախ կար նաեւ բոլշեւիկներու կողմէն՝ Հիւսիսէն: Ձիւս շտապ կերպով կը կանչէին Երեւան: Այդպիսի պայմաններու մէջ, իմ առաքելութիւնը փոխառութեան Համար կը վերջանար: Կը սկսէր նոր գործ:

Առանց բոլոր մը կորսնցնելու, Լս սկսայ անձամբ ուսումնասիրել ստեղծուած զրութիւնը. այցելութիւն տուի Վրաց կառավարութեան, Լուրպական բարձր քոմիսարներուն եւ կրկու օր յետոյ Ռուբէն Տէր-Մինասեանին Հետ մեկնեցայ Երեւան:

Այնքանազրպայովի մէջ մենք լսեցինք զօրավար Յոյսէփեանի պեկուցումը, եւ Հոկտեմբեր 23ին Հասանք Երեւան:

Վ Գ Կ Լ Ո Ւ Խ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Թ Ո Ւ Բ Բ Ի Ո Յ Հ Ե Տ,  
ԲՈՒՇԵՒԻԿՆԵՐՈՒ ՅԱՐՁԱԿՈՒՄԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

(1920 Թ. ԱՇՈՒՆԸ ՄԻՆՁԵՒ 2 ԳԵԿՏԵՄԲԵՐ)

Ես Հայաստանը թողուցի 1920 թ. Յունիսի վերջին: Չորս ամիս քաջակալ էի երկրէն: Ես թողուցի Հայաստանը բոլշևիկեան ապստամբութեան բռնկումէն յետոյ եւ դոտայ զայն պատերազմական վիճակի մէջ: Այդ չորս ամսուայ բնթացքին մեր երկիրը հասեր էր իր ուժեղացման եւ հողային ծաւալման գագաթնակէտին:

Այդ շրջանին կառավարութիւնը անփոփոխ կերպով կը գրտնուէր Հ. Յ. Գաշնակցութեան Բիւրոյի ձեռքը բժ. Հ. Օհանջանեանի նախադաճութեան տակ: Այդ կառավարութեան առաջին զործր Լգաւ բոլշևիկեան շարժման ճնշումը:

Ապստամբութեան ճնշումէն յետոյ կառավարութիւնը զիմեց իր Երկրորդ նպատակին. ոչնչացնել այն որջերը, որոնք չէին ճանչնար կառավարութեան իշխանութիւնը եւ այդ վայրերու ազգաբնակչութիւնը հպատակութեան բերել: Այդպիսի որջեր էին՝ Չանդիրասար, Բէօյիւք-Վէյի եւ Կարսի նահանգի քանի մը շրջաններ: Այս նպատակն եւս իրականացաւ յաջողութեամբ: Կառավարութեան իշխանութիւնը այլևս չունէր բաց թշնամիներ մահմետական շրջան-



ներու մէջ: Յուլիս 12ին և 15ին մեր գործերը գրաւեցին Բէօյլիք-  
Վէլլին, Գայլի Դրանքը, Բաշ-Նորաշէնը:

Ազատամարտիներ ճնշել և բմբոս շրջանները հպատակու-  
թեան բերել յետոյ՝ կոտորածներ իր ուշադրութիւնը դար-  
ձուց ազգայնականեան սնունդի վրայ: Անոր կը սպառնար սով:  
Այդ նպատակով կոտորածները հեռագիրներ քաշեց Փարիզ՝  
Պատուիրակութեան՝ խնդրելով միջոցներ ձեռք տանել ազգակեղու  
համար ալիւր և սերմնոցու: Ահա մէկը այդ հեռագիրներէն.

«Բարում, հայկական հիւպատոս Արաբէգեանին

«Խնդրում եմ Թախթանեանի միջոցով հազարդիլ Փարիզ Պատ-  
ուիրակութեան նախագահ Ահարոնեանին հետեւեալը.— Ցանուած է  
մտաւորապէս մի միլիոն փութ. սպասում է հունձ մտ ուք մի-  
լիոն: Կը պակսի երեք կամ չորս միլիոն փութ: Ստացուած է Ամե-  
րիկեան կումիսի միջոցով ընդամէնը ութսուն եւ մէկ հազար տոն,  
որից վարստն հազարը գործ է ածուած Հայաստանում, տասնեմէկ  
հազարը ծախսուած է աեղախոյսութեան վրայ եւ տաս հազարը ծախ-  
սուած է կումիսի ձեռքով Հայաստանի կառավարութեանը: «Բիլլըր  
Արաբս»ի միջոցաւ զրկուած ալիւրը արդէն ստացուած է: Շուտով  
ձեզ կը հեռագրեմ մեր կարիքները, որոնք կարող են հոգացուել  
Սկանդինաւեան պետութիւնների առաջարկութեան համաձայն հինգ  
տարուայ վարկով: Ց Յուլիս, քիւ 45000: Արտաքին գործերի նախա-  
րար՝ Օհանջանեան»:

*Միաժամանակ կոտորածներ պատրաստուելով Սևերի  
գաշնազրի ստորագրութեան համար և վճռած բլլայով մտնել Ազգե-  
րու Լիկայի կազմի մէջ՝ լիազօրած էր Զ. Զ. Պատուիրակութեան  
ստորագրել Սևերի գաշնազիրը և ապա յայտարարութիւն Ազգերու  
Լիկային:*

*Ահա այդ լիազօրագրերը, որ գրկուեցան հեռագրով.*

«Բարսում, Հայաստանի ընդհանուր Հիւպատոսին. Խնդրում  
եմ հեռագրել սախազական Պարիզ Դաշնակիցների Գերագոյն խոր-  
հրդից, պատեմէնր Զ. Զ. Պատուիրակութեան նախագահ Ահարոն-  
եանին: Ի յրումն այն լիազօրութիւնների, որոնք Հայաստանի Հան-  
րասպետութեան կառավարութեան կողմից տրուած են Զ. Զ. Պատ-

ու իրականութեան նախագահ Աւարոնեանին 7 Դեկտեմբեր 1918 թ. Հա-  
յաստանի կառավարութիւնը սրանով տալիս է պր. Ա. Աւարոնեանին  
իշխանութիւն եւ իրաւունք ստորագրել Հայաստանի Հանրապետու-  
թեան անուանից խորհրդարեանի ղաշնագիրը, որը ներկայացուած է  
ղաշնակից պետութիւններին կողմից Թիւրքիային: Թիւ 3743. Յունիս  
20. նախարարապետ Հայաստանի Հանրապետութեան՝ Լ. Օհան-  
ջանեան»:

*«Արագօրացիր՝ ուղարկուած յատուկ սուրհանդակի միջոցով»:*

*Հրահանգելով Փարիզի Պատուիրակութեան ստորագրել Սեւրի  
դաշնագիրը՝ Հ. Հ. կառավարութիւնը միւսնոյն ժամանակ մտահոգ-  
ուած էր Բաթումի վրայով գնացի Աւստրիայի ծով ելքի խնդրով:*

*Ինչպէս յայտնի է, այդ հարցը տաք միճարանութիւններու  
նիւթ էր պարձած Սան Ռեմօ, բայց առանց որեւէ արդիւնքի: Այդ  
պատճառով կառավարութիւնը առանձին հետազոտով յատուկ հրա-  
հանգներ տուաւ Բաթումի հարցի մասին: Ահա այդ հետազոտը ու-  
ղարկուած Բաթումի վրայով ռատիոյով.—*

**«Պարիզ. Աւարոնեանին**

Հայկական կառավարութիւնը, ի նկատի առնելով պայմաննե-  
րի փոփոխութիւնը, անհրաժեշտ է գտնում զձեզի հետեւեալ սահման-  
ները Բաթումի շրջանում Հայաստանի եւ Վրաստանի միջեւ: Առա-  
ջարկուած սահմանը ոկսում է Սեւ ծովի ափում Բաթումի նաւա-  
հանգիստից, որի մի մասը պէտք է լինի Հայաստանի Հանրապետու-  
թեան սեփականութիւն, շարունակուում է Ճորոխի հովիտով եւ նրա  
մէջ քափոզ իմիրիսեճայ եւ Արդանուչաւ գետակների հոսանքով,  
յետոյ բարձրանալու Արդանուչաւի հովիտով հասնում է Ալլագու-  
զի լեռնանցքը՝ այսպիսով փակելով այն հողամասը, որը կտրուում է  
Բաթում-Արտահան ճանապարհով: Այս տերիտորեալ պահանջը հիմ-  
նաւորում է այն սահմանաշտութեամբ, որ ներկայանում է պետու-  
թեանը՝ սահմակ ելք դէպի ծով՝ իրագործելի մօտ ապագայում: Այս  
ելքը տալիս է Ճորոխի հովիտը: Պահանջած հողամասը Բաթումի  
նահանգի պարունակում է աշխարհագրական տեսակէտից 15,000  
Հայ, 25,000 Թիւրք եւ այլ մակնետականներ, իսկ Վրացիք բնդամե-  
նը 5000 հոգի»:

Ես դիտմամբ մէջ բերի այդ բոլոր հեռագիրները եւ գրութիւնները ցոյց տալու համար, թէ սրբան ուժեղ թափով կը զարգանար, պետական կեանքը Հայաստանի թէ՛ ներքս եւ թէ՛ ցուրտ աշխարհի համար: Մէկ կողմէ Հայաստանը կ'ամրանար ներքնայէս, միւս կողմէ կը մտնէր միջնադարին հազարյակցութեան մէջ, իսկ փոխառութեան միջոցով կարգի կը բերէր իր էլեւմուտքը:

Այսպէս անցան Յունիսը, Յուլիսը, եւ Օդոստոսի սկիզբը: Բայց Օդոստոսի կէսին Հայաստանի վրայ սկսան կուտակուիլ ամպեր. թէ՛ հիւսիսէն եւ թէ՛ հարսուէն կ'առաջանային մեր թշնամիները. հարսուէն քեմալական թուրքերը, իսկ հիւսիսէն բուլղերիկները, որոնք սրտած կին ամէն դնով խորհրդայնացնել Հայաստանը, այսինքն՝ կցել Ռուսիայ: Վազայց ի վեր պատրաստուող ռուս-թրքական, կամ սուլի ճիշդը՝ քեմալական-բուլղերիկական համաձայնութիւնը սկսած էր տալ իր գործնական պտուղները:

Հայաստանի Հանրապետութեան պատմութեան մէջ այս վայրկեանը շատ կարեւոր է եւ անոր վրայ պէտք է աւելի երկար կանգ առնել: Այս խնդրի շարժը ստեղծուած են շատ առասպելներ եւ շատ բան է գրուած, բայց վերջին խօսքը դեռ չէ բուռած, որովհետեւ այդ շրջանի վերաբերեալ գիտնապիտական պատմութիւնը չէ հրատարակուած ո՛չ թուրքերու եւ ո՛չ ալ Ռուսերու կողմէ: Երբոր հրատարակուի, մենք կ'իմանանք, անշուշտ, շատ զառն ճշմարտութիւններ եւ ցնցած կը տեսնենք շատ հերթաթիւներ բուլղերիկներու «փրկարար» գերի մասին:

Օդոստոսի կէսէն մինչեւ Դեկտեմբերի 2րդ, այդ Երեք ու կէս ամիսներու ընթացքին, սկսաւ մայր մտնել Հայաստանի Հանրապետութեան աստղը եւ Դեկտեմբեր 2ին ծածկուեցաւ խաւարի մէջ:

Այս շրջանը նկարագրուած է ինձմէ առաջ դանաղան անձանց ձեռքով եւ Ես չեմ ուզեր կրկնութիւններ բնել: Այսօրանք, սակայն, սուլորդ չեմ նկատեր հօս յիշատակել:—

Թուրք — բուլղերիկական բարեկամութիւնը ձեւակերպուեցաւ առանձին համաձայնագրով մը, սրուն պատճէնը ուղարկուած էր Երևան Պոլսէն՝ Շ. Շ. կառավարութեան մէկ տեղեկատուի ձեռքով: Ռուսաստանը եւ թուրքիան իրար ձեռք կը մեկնէին Կոմկասեան Հանրապետութիւններու գլուխներու վրայով:

Ատրպէջանը, ի դիմաց իր գործիչներու, օրինակ՝ Բաքուի քաղաքային վարչութեան նախկին անդամ ճարտարապետ Մահմադ Հա-

սան Հաջինսկու, չէնց այն պատճառով չէշտութեամբ յանձնեց իշխանութիւնը բուլղարիկներուն, որ յոյս ունէր թուրքերու միջնորդութեան և անոնց օգնութեան վրայ՝ բուլղարիկներու հետ իրենց ունենալիք յարարերութիւններու խնդրի մէջ: Ինձ անձամբ շատ սպիտակ ատրպէշանեան գործիչներ բռնած են, որ իրենք անկեղծօրէն կը հաւատային, որ թուրքերը իրենց միջնորդութեամբ կրնան պահպանել Ատրպէշանի անկախութիւնը: Այդ պատճառով՝ ցանկալով թուրքերուն օգնել՝ անսնփ վճռեցին ճանապարհ տալ բուլղարիկներուն: Այսպէս խորհրդայնացու Ատրպէշանը:

Վրաստանը 1920 թ. Յունիս 7ին, ի գիմաց Ուրուջաձէի ստորագրած էր դաշնագիր Ռուսաստանի հետ, որով վերջինս կ'երաշխատէր անոր անկախութիւնը և անձեռնմխելիութիւնը: Այդ պատճառով Վրաստանը աւելի հանդիստ կը նայէր իր հարեւաններուն՝ հիւսիսէն և հարաւէն, համարելով, որ ինքը որոշ չափով ապահով է ռուս-թրքական սպառնալիքէն: Վրաստան՝ շունենալով սուր թիւրիմացութիւններ թուրքիոյ հետ՝ շատ ալ չէր վախնար թուրքերէն, թէ և Ռուսերէն կր վախնար:

Հոյաստանի համար խնդիրը այլ կերպ էր դրուած: Նախ և առաջ ան վտանգի տակ էր թուրքիոյ կողմէն. իսկ Սևերի դաշնագիրը ստորագրուելէն յետոյ այդ վտանգը աւելի ևս սաստկացաւ: Թուրքիան պարբարապէս կը կամենար զհնքի ուժով պատռել Սևերի դաշնագրի պայմանները: Այս տեղէն կը ծայկէր անոր ձգտումը՝ ընկճել Հոյաստանը: Իսկ բուլղարիկները կ'ուզէին կամուրջ ձգել կովկասի վրայով զկողմ թրքական ճակատը:

Վախնալով թուրքիայէն՝ Հոյաստանը, աշխուժեանային, դեռ չէր կարած յոյսը Եւրոպայէն, Դաշնակիցներէն, Փարիզի Խորհրդը՝ դաժողովէն, Ամերիկայէն: Ատով պէտք է րացատրել, որ ան առանձին անհրաժեշտութիւն չէր տեսներ անմիջական բանակցութիւններու մէջ մտնել թուրքերու հետ որեւէ համաձայնութեան երբ գտնելու համար: Մեծ պետութիւններու կողմէ ստորագրուած դաշնագիրը, որ կու տար Հոյաստանին կարիքը, Մուշը, Վանը, Տրապիզոնը, չէր կարելի վերաքննութեան ենթարկել միայն Հոյսերու և թուրքերու միջոցով: Այդպէս էր հոյերանական և իրական դրութիւնը:

Պատրաստուելով մտնել Այդերու Լիկայի մէջ, նոր ստորագրելով Սևերի միջազգային դաշնագիրը և ստանալով Անգլիայէն գէնք և ռազմամթերք 40,000,000 ռոյսական համար (մօտ մէկ միլիոն Ֆունտ սղերլինկ արժողութեամբ) Հոյաստանը որոշեց, եթէ պէտք ըլլայ, զհնքի ուժով պաշտպանել իր իրաւունքները:

Թուրքիան, իր կողմէն տեսնելով, որ Եւրոպան յոգնած է, որ բոլիւնիկները Իտալիոյ մէջ թոյլ չտուն զօրք բառնալ Հայաստանի և, ընդհանրապէս, Կովկասի համար, որ սնչլիտական բանուորները կը պահանջեն ինչայոյթիւն և զօրացում, սկսաւ Մուսթաֆա Քեմալի ղեկավարութեամբ կազմակերպել ազգային բանակ Թուրքիոյ շահերը պաշտպանելու համար: Եւ պէտք է խոստովանիլ, որ այդ շարժման ղեկավարները ցուցադրեցին մեծ եռանդ և ընդունակութիւն:

Առաջին տեղեկութիւնները պատրաստուող թրքական յարձակման մասին հայկական կառավարութեան խուզարկու մարմինները սկսան ստանալ Օլլաստոսին: Անոնք այս տեղեկութիւնները հազարէկէն Դաշակիչներու ներկայացուցիչներուն՝ պատրաստուող զէպքերը կանխելու նպատակով: Այս տեղեկութիւնները հասան մինչև Փարիզ, բայց անոնց առանձին նշանակութիւն չարուեցաւ:

Ակաւեմբեր 20ին և 21ին թուրքերը Սարրզամիշի մօտ էին: Սկսան պատերազմական գործողութիւնները: Միսամանակ Հայաստանի և Թուրքիոյ կառավարութիւններու միջև սկսաւ դիւանադրտական գրութիւններու փոխանակութիւն: Հայաստանի Խորհրդարանի նխադի մէջ Նոյեմբեր 11ին, վարչապետ Օհանջանեանը յայտնեց այն բոլոր զրութիւնները, որ փոխանակած էին երկու կառավարութիւնները Սեպտեմբերի վերջին կէսին և պատերազմի օրերէն՝ Նոյեմբեր 2էն մինչև 11:

Այս գրութիւններու էութիւնն այն էր, որ թուրքերը առաջարկած էին Հայաստանի կառավարութեան հրամարիլ Սեբի պաշտպալն և ընդունիլ Բաթումի գաշնադիրը, այսինքն՝ փոխանակ 180,000 շիյմէթրի ստանալ 9,000: Հայաստանի կառավարութիւնը բացարձակապէս մերժած էր այդ պահանջը: Անոյ թուրքերը պահանջած էին հաւաքուիլ խորհրդամարտի՝ ընդունելով իրբև խորհրդակցութեան հիմք Բաթումի գաշնադիրը: Հայկական կառավարութիւնը պատասխանած էր, որ Սեբի գաշնադիրը ստորագրուելն յետոյ անկարելի է մտածել Բաթումի գաշնադրի մասին:

Հարկ կը համարեմ մէջ բերել այստեղ մեր և թուրքերու միջև փոխանակուած գրութիւնները:

1) Անգորայի կառավարութեան արտաքին գործերու բաժնար Բեհրի Սամի պէյի զիմումը 24 Յուլիս, 1920 թ.

«Երեւանի հանրապետութեան արտաքին գործաց նախարարութեան.—

«Հայաստանի կառավարութեան հիմնուելէն ի վեր մեր կառավարութիւնը նրա հետ պահպանել է բարեկամական յարաբերութիւններ եւ այդ շարունակել է իրեն համար վարձագիծ ընտրել: Նա այդ ցոյց է տուել զործով հակառակ ձեր շարունակական յարձակումներին: Զեր գրաւման տակ եղող հողամասերում գտնուող, բայց իր ինքնուրոյնութիւնը սրտոյդ եւ Միլլի Շուրա կազմող իսլամ ազգաբնակչութիւններուն դէմ միշտ կրկնուող յարձակումների եւ ջարդերի ձեր քաղաքականութեան հանդէպ մեր կառավարութիւնը բաւականացել է միշտ բարեկամական ծանուցագրերով:

«Մի քանի օրից ի վեր Օլթիի իսլամ ժողովրդի հանդէպ ձեր կանոնաւոր գործառնների կողմից շարունակուող պատերազմական զործուղութիւնների մասին մեր այեւեյեան ճակատի Ն. Գ. հրամանատար փաշայի կողմից երեք օր առաջ ձեր զինուորական ուժերի հրամանատարութեան ուղարկուած բարեկամական ծանուցագիրը, պատերազմական զործուղութիւնները անմիջապէս դադարեցնելու մասին, մինչեւ այժմ առանց պատասխանի է մնացել: Եւ բնդհակառակը, երէկուանից ի վեր Օլթիի վրայ յարձակումը աւելի շատացած եւ սաստկացած է: Մեր ազգը, ամբողջ ուժով փափաքում է բարեկամական յարաբերութիւններ պահել հայ ցեղի հետ, հայկական շահերը իր իրականի հետ լինիմանստանալու չեն: Ընդհակառակը, կարելի է համաձայնեցնել եւ սերտ դարձնել: Երբ դուք անկողմնակալօրէն դատէք, կը յուսամ թէ դուք եւս կը հաստատէք, որ ձեր բռնած ընթացքը չի համապատասխանում ձեր ազգային իսկական շահերին:

«Համոզուած ենք, որ Անգլիացիները գրադուած են մշտապէս իրար հետ տարբեր ստիպուած երկու հարեւան ցեղերը արիւնհեղուրտեան մղելով: Մենք ձեր կառավարութեան եւ ազգի համար բոլորովին վնասակար կը գտնենք, որ ձեր ազգը Անգլիացիների ձեռքը խաղալիք դառնալով՝ մեր կառավարութեան դէմ բշտամտութեան ձեռնարկէ: Զեր պատգամաւորութիւնը Մոսկուայում ռուս սովետական կառավարութեան հետ բանակցութիւններ է վարում. մենք էլ սովետական իշխանութեան հետ քաղաքական յարաբերութեան ձեռնարկած լինելով, խաղաղօրէն պատերազմի վերջ տալու կ'աշխատենք միասնաբար. ուստի ձեր յարձակումը բացարձակապէս զարմանալի եւ ցտալի մի երեւոյթ է:

«Յարձակումների շարունակութեան ամբողջ պատասխանատուութիւնը բաղնելով հայկական կառավարութեան վրայ, այս անգամ էլ բոլոր ազգային կառավարութեան Արտ. Գործերի Կոմիսարի

հանգամանքով եւ խնդրում եմ Ձեր Գերագանցութիւնից տալ հարկ եղած անմիջական հրամանները ձեր գործառնութիւն վերջ դնելու համար բշխման վրայ գործողութիւններին :

«Սպասելով ձեր սլատասխանին, խնդրում եմ ընդունիլ խորին յարգանքս հաւաստիք .

24 Յունիս 1920

Թուրք Ազգային Ժողովի Արտաքին Գործերի կոմիսար  
*Բեքիր Սամի*

2) Այս գիտումին Հայկական կառավարութեան տուած պատասխանը Յունիս 30ին .—

«Սարրղամիլ .— Գնդապետ Միրիմանեանին . խնդրում է այս հեռագիրը յանձնել օսմանեան տասնհինգերորդ գորաբանակի հրամանատար Կարաբեքիր փաշայի միջոցով հետեւեալ հասցէին .

«Անդորա, Թուրք Ազգային Մեծ Ժողովի Արտաքին Գործերի վեքիլ Բեքիր Սամի բէյին .—

«Հայաստանի Հանրապետութիւնը հիմնուելու օրից իսկ ձրգտել է եւ այսօր էլ ձգտում է ստեղծել բարի դրացիական փոխ-յարաբերութիւններ իր հարեւանների հետ եւ խաղաղ համակեցութիւն տեղական բայս ժողովուրդների հետ : Հայաստանում գտնուող մահմետական բնակչութիւնը միշտ օգտուել է եւ օգտում է ներկայիս եւ պետութեան միւս քաղաքացիների համահասար իրաւունքներից : Սոյն հաւատարիմ քաղաքացիների կեանքն ու գոյքը միշտ պաշտպանուած է Հայաստանի կառավարութեան կողմից ամէն տեսակ չարամիտ փորձերից, ինչպէս նաեւ աւագակային յարձակումներից, որոնք մեծ մասամբ կատարուած էին դրսից : Սրանք առաջ էին բերում խառնակութիւն եւ անիշխանութիւն տեղական ազգաբնակչութեան խաղաղ կեանքի մէջ :

«Հայ գորքերի վերջին ռազմական գործողութիւնները Օլթիի շրջանում նպատակ ունէին ազատելու հայկական հողամասը անիշխանական տարրերից եւ երբեք ուղղուած չէին մահմետական խաղաղ ազգաբնակչութեանց դէմ : Օլթիի շրջանի վարչութիւնը այժմ նշանակուած է մահմետականներից :

«Հայ ազգը ի վաղուց անտի ճիգ է քափում անկեղծօրէն մէկ-դի թողնել մոայլ անցեալը եւ ստեղծել բարի դրացիական յարաբերութիւններ Թիւրքիայի հետ : Հայաստանի եւ Թիւրքիայի միջեւ բարի դրացիական փոխ յարաբերութիւնների վերահաստատումը ամ-

բողոքովին կայտաւած է յիւրք ղեկավարները ընթացից, սրոնք պէտք է մի անգամ բնոյ միշտ նամաչեն հայ ազգի իրաւունքները ամբողջապէս Հայաստանի սահմանների վերաբերմամբ եւ վերջ դնեն Հայաստանի Հանրապետութեան սահմաններում գործակալների գործունէութիւններին :

«Երբ ձեք Մեծ Ազգային համաժողովը Անգարայում հաստատէ Տանկաստանի հայկական վիլայէթներում Հայաստանի անկախութեան իրաւունքը յիշեալ սահմաններում, այն ատեն հայ ազգը կ'ունենայ հիմք Թիւրքիայ եւ Հայաստանի միջեւ կանոնաւոր փոխարարներու յիւններ հաստատելու :

Հ. Հ. Արտ. Գ. Նալս. Քարաուզար՝ Տէր Յակոբեան, 30 Յունիսի 1920 թ .

**3) Յուլիս 8ին Բեքիր Սամի բէյը պատասխանում է Հայկական կառավարութեանը հետեւեալ հետազոտով .**

*Երևան, Հայաստանի Հանրապետութեան*

*Արտաքին գործերի նախարարութիւն*

Էնկիւրի, 8 Յուլիսի 1920 թ .

«Պատիւ ունեմ պատասխանելու Ձեր 30 Յունիս գրութեան որով պատասխանում էք իմ 24—6—36 գրութեան :

«Հակառակ Արեւելեան բանակի հրամանատար Քեազիմ Կարաբեքիբ փաշայի եւ մեր կողմից տրուած ազդարարութեան, կասեցնել Ոլթիլ շրջանում սչ մի օրինաւոր հիմունքով արուած յարձակումները եւ յետ կանչել ձեք գորումաները, յիշեալ գորումաները դեռ չեն կանչուում. եւ նոյն իսկ Յուլիս 2 թուին նորից մի յարձակում է տեղի անեցել :

«Թէ՛ ձեր եւ ի՛՛ ձեր գորքերի հրամանատարի պատասխանների մէջ ասուած է, որ շարժումները տեղի են ունեցել մուսուլման ազգաբնակչութեան խնդրանքով եւ որ այդ ազգաբնակչութեան դէմ ոչ մի բռնութիւն եւ հալածանք գոյած չի դրուել, որ օսմանեան սահմանի դէմ սչ մի յարձակում չի եղել, սրով գույութիւն ունեցող յարաբերութիւնների հիմք են ծառայում Հայկական Հանրապետութեան պաշտօնապէս նամայում Քրեստ—Լիտուանի դաշնագիրը եւ նրա լրացումը. Բարումի դաշնագիրը, սրը լիազօրութիւն ունեցող սրտաւիրակների կողմից ստորագրուած եւ երկու կառավարութեանց կողմից բնդունուած եւ հաստատուած է :

«Ոլթիլ շրջանն եւս յիշեալ դաշնագրի տրամադրութիւններով



հաստատուած երեք նահանգների մէջ լինելով՝ համաձայն ժողովրդի ազատ կամքով կատարուած քուէին, օսմանեան պետութեան բացարձակ ստացուածքն է կազմում:

«Յիշեալ շրջաններում որեւէ պատմառով օսմանեան պաշտօնեաների կամ գինուարական սոժերի ժամանակաորոպէս չգտնուելը օսմանեան իշխանութեան այս տեղերից ոչ փաստօրէն եւ ոչ էլ իրաւակնօրէն վերացնելու պատճառ չի կարող լինել:

«Այն ժամանակ, երբ սպասում էր, որ իրաւունքի եւ արդարութեան սկզբունքների համաձայն եւ խաղաղ կերպով պիտի լուծուեն Քարումի դաշնագրի ամբողջական տրամադրութիւններից ծագող վէճերը երէ այդպիսիներ կան, հայկական զօրամասերի կողմից Ուրիի շրջանի վրայ կատարուած յարձակումները բացէ ի բաց խանգարում են բաղձալի բարեկամական եւ հարեւանական յարաբերութիւնների շարունակման եւ դառնում են միաժամանակ մեր բացարձակ իրաւունքի դէմ սահմազուրկին:

«Ինչ վերաբերում է Ուրիի մուսուլման յոգաբնակչութեան հրաւերին եւ պահանջին, այդ էլ կատարուած յարձակումը իրականացնելու համար կատարուած մի փաստ չէ: Երէ նոյնիսկ ընդունուի, որ յիշեալ ազգաբնակչութիւնը այդպիսի մի դիմում կատարած է, այն ժամանակ այդ դիմումը նրա վրայ յանցանքի մշտական պատասխանատուութիւն կը հրաւիրէ:

«Ինչպէս որ առաջին գրութեամբ էլ յայտնել եմ, մեր կառավարութիւնը եւ յիւրք ազգը հայ կառավարութեան եւ հայ ժողովրդին թշնամին չեն եւ ցնկկանում են գտնել մի կապ փոխադարձ շահեր ապահովելու համար: Երէ իմ տեսակէտները Հայաստանի կառավարութեան կողմից անկադմնակալ եւ շրջահայեաց կերպով քննուին. կը յուսամ, որ իմ յայտնած դիտողութիւնների անկեղծութեան եւ իմ ազգի ձեռք ազգի հանդէպ սնեցած բարեկամական զգացմունքներին հաւատ պիտի ընծայուի:

«Վերջապէս, կրկին խնդրում եմ ժամ առաջ ձեռք զօրամասերը յետ քաշել եւ հիմնուելով մեր երկուսի միջեւ գոյութիւն ունեցող փաստական եւ իրաւական տեսակէտով գործադրութեան մէջ եղող Քարումի դաշնագրի վրայ, բողոքում եմ կատարուած շարժումների դէմ եւ պատասխանատու եմ գտնում մուսուլման ազգաբնակչութեան կրած վնասներին պատճառ եղողները:

Սպասելով մեր փոխադարձ շահերին համապատասխանող մի պատասխանի, խնդրում եմ ընդունել իմ յարգանքս հաւաստիքը:

Թիւրք Լեւոն Ազգային Ժողովի Արտաքին Գործերի Կոմիսար՝

*Ֆեզիլ Սամի*

*Սոյն Հեռագիրը խոսկանի հետ ճիշդ է: Կնիք 11րդ զորաբանակի եւ ստորագրութիւն:*

*1) Հայաստանի կառավարութիւնը Յուլիս 28ին պատասխաններ է Բեքիր Սամիին հետեւեալ հեռագրով.—*

*«Մարտգամիչ.— Գնդապետ Միրիմանեանին.—* Խնդրում եմ այն հեռագիրը ուղարկել օսմանեան տասնրկինգերորդ զորաբանակի հրամանատար Կուրպեֆիւր փաշայի միջոցով հետեւեալ հասցէին.

*Անգորտ. Թիւրք ՄԼժ Ազգային Ժողովի Գործավար ՄԼժ. Բեքիր Սամիին*

«Առանց շօշափելու կարգին նախալ կողմը այն տեսակէտէն, որ Բրեստ-Լիտովսկի եւ Բարումի զաշնագիրները կնքուած են Սուլթանին կառավարութեան կողմից, որը ձեր կառավարութիւնը չի ֆանաչում, պատիւ ունիմ պատասխանելու ձեր 8 Յուլիս 36 թիւ գրութեան:

Ինչպէս Բրեստ-Լիտովսկի զաշնագիրը, այի մէջ Հայաստանը ոչ մի մասնակցութիւն չէ ունեցած եւ ոչ էլ ստորագրած է, նմանապէս Բարումի զաշնագիրը, որը երկու կողմերի Պարլամենտներից չէ հաստատուած, ոչ մի իրական ուժ չեն կարող ունենալ Հայաստանի համար:

«Այն հանգամանքը, որ զուգ իբր հիմք էք ընդունում Բրեստ-Լիտովսկի եւ Բարումի զաշնագիրը, սրտեք հիմնովին չեն ֆանաչում կենսունակ Հայաստանի գոյութիւնը, ի մեծ ցաւ զրկում է մեզ ձեզ հետ համաձայնութեան գալու ամէն յոյսից, քանի զուգ շարունակէք դեկլարաւել գերման կայսերական եւ սուլթանական իմպերիալիստական հակայնդափոխական կառավարութեան ձգտումների վրայ հիմնուած այդ զաշնագրի տրամադրութիւններով, սրտեք ժխտում են կառավարութեան եւ միջազգային յարաբերութիւնների մէջ ազգերի ինքնաբոշման, իրաւունքի եւ արդարութեան սկզբունքները:

«Անկեղծաբար ձգտելով ստեղծել բարի եւ հարեւանական յարաբերութիւններ շիրք եւ միւս ազգերի հետ, հայ ազգը այդ յարաբերութիւնների իրական հիմք եւ անհրաժեշտ նախապայման է կամարում. որ երկու կողմերն էլ ֆանաչեն շահագրգռուած ազգերի պատանակում, ազգագրական եւ տնտեսական իրաւունքները:

«Յենուած իւրաւանչիւր ազգի այս օրինաւոր իրաւունքների վրայ, հայ ազգը բնականաբար չի կարող հրաժարուել Տանկատառ—

նի հայկական հանահգների վրայ ունեցած իր անվիճելի իրաւունքներից. որոնց սահմանները, համաձայն դաշնակից պետութեանց կողմից այժմս գերագոյն իրաւախօհ, Աւերիկայի Միացեալ Նահանգների Նախագահի կողմից :

«Յիշեալ դաշնագիրը ստորագրող Հայաստանը մտադիր է երշտօրէն հաւատարիմ մնալ գերագոյն հաշտարարի որոշման : Սպասելով դրան, նա մտադիր չէ քայլեր անել նախկին ռուս-տանկական սահմանները անցնելու համար : Մանաւանդ նա իրաւունք ունի յուսալ . որ Տանկաստանը չպիտի միջամտի այս հարցեքին, քրոնք վերաբերում են Հայաստանի ներքին գործերին եւ այս տեսակետից ձեր պահանջը Օլրիի շրջանը (որը կազմում է Հայաստանի Հանրապետութեան անվիճելի մասը), հայկական զօրամասերից մաքրելու մասին, եւ յիշեալ շրջանում ձեր ակտիւնիւրի յարձակողական շարժումները բոլորովին անբարոնելի եւ անթալալտելի են :

«Հաւատարիմ իր խաղաղութեան, հայ ազգը պատրաստ է երկարացնել բարեկամութեան ձեռք ամէն այն ազգին, որը իր կողմից հանաչում է նրա պատմական, ազգագրական, պետական օրինական իրաւունքները եւ արիշ ազգերի նրա հանդէպ ունեցած վերաբերմունքից կախուած է հայ ազգի վերաբերումը դէպի այդ վերջինները :

«Ընդունեցէք յարգանացս հաւատարիք :

Արտաքին Գործերի Քարտուղար՝ *Տէր Յակոբեան*» :

28 Յուլիսի 1920 թ .

*Ինչպէս վերեւ բերած բանակցութիւններէն կ'երեւայ, երկու կողմերն ալ կը խօսէին տարբեր լեզուներով :*

*Ի միջի այլոց, այդ պրոթիւններու փոխանակութեանց ձեւակառուութիւններու մէջ սպրդեր կ'ցատալի մանրամասնութիւն մը, որ, ինչպէս ինձ անձամբ յետոյ, 1920 թ. Դեկտեմբերին, ըսաւ Թուրքիոյ արտաքին նախարար Բեքիր Սամի բէյը, սոստիկ վիբաւորած էր դիւնքը եւ իր բնկերները. բանն այն է, որ Թուրքիոյ արտ. նախարար Բեքիր Սամի բէյի պրոթեան՝ հայկական կառավարութեան կողմէ տրուած պատասխանը ստորագրած էր ոչ թէ ինքը արտաքին գործոց նախարար Զ. Օհանջանեանը, այլ նախարարութեան ընդհանուր քարտուղար Ալ. Տէր Յակոբեանը : Գրութեան թարգմանութեան ժամանակ Կարսի թուրք սպայ-թարգմանը չընդհանուր քարտուղար» խօսքը թարգմանած է չքեաթիպ» Ակոպով : Այդ բանը առիթ*

էր տուած Անդրառայի կառավարութեան մտածելու, որ հայկական նախարարը՝ կամենալով զիրուսրել թուրք նախարարի ինքնապիտոյթինը՝ տուած է թուղթը ստորագրելու իր «չրազրին»:

Ի հարկէ, այդ պարզ թիւրիմացութիւն էր, բայց թիւրքերը օգտագործեցին զայն՝ իրենց շրջաններու մտքերը զրզուելու համար: Անպտեմբեր 22ին թիւրքերը մօտեցան Օլթիին: Միաժամանակ Անպտեմբեր 22ին Ատրպէջանի խորհրդային ուժերը մօտեցան Աքսի-բարային: Անպտեմբեր 29ին սկսաւ միաժամանակ յարձակում Կարսի եւ Սուրմալուի ուղղութեամբ: Հսկտեմբերին ռազմական գործողութիւնները զարգացան Կարսի նահանգին մէջ՝ առաջ բերելով խուճապային դրութիւն եւ նահանջ: Թիւրքերը կ'առաջանային Կարսի ուղղութեամբ: Հայկական զօրքերը կը նահանջէին: Ճակատի գրութեան ծանօթանալու եւ տրամադրութիւնը բարձրացնելու նպատակով կառավարութիւնը Կարս ուղարկեց նախարարներ Ս. Վրացեանը եւ բժ. Ա. Բարսեղեանը: Միաժամանակ բանակցութիւններու մէջ մտաւ խորհրդային կառավարութեան ներկայացուցիչ Լեյբանի հետ, որ Մոսկուայէն ուղարկուած էր Երևան: Այս բանակցութիւնները վերջացան համաձայնութեան նախագծով մը՝ Հսկտ. 21ին: Այդ համաձայնութիւնը նպատակ ունէր ապահովել Հայաստանը խորհրդային յարձակումէ:

Ահա անոր գլխաւոր պայմանները —

1) Հայաստանի Հանրապետութեան կը թողուին ամբողջ Երևանի նահանգը, Կարսի նահանգը, Չանկեկուրի գաւառը, Ղազախը եւ Լոռին:

2) Թիւրք զօրքերը պիտի դատարկեն ամբողջ Ռուսահայաստանը, մինչև 1914 թ. սահմանները:

3) 1914 թ. սահմանէն մինչև Տրապիզոն, Էրզրում եւ Մուշ տարածութեան թրքական զօրքերը պիտի քաշուին եւ այնտեղ պիտի մնայ միայն թրքական վարչութիւնը:

է) Այդ բոլորէն յետոյ միայն Ռուսաստանի օժանդակութեամբ եւ աջակցութեամբ պիտի սկսի բանակցութիւններ ինկիւրիի եւ Հայաստանի կառավարութիւններու միջև՝ սահմաններու վերաբերմամբ վերջնական կորակցութեան մը յանդէլու համար:

Ե) Ռուսաստանը կու տայ Հայաստանին նախ և զրամ (զուժարք ճշգրտած չէր) :

Ը) Ռուսաստանը կը դիջի Հայաստանի կառավարութեան քանի մը հայկական մշակութային հիմնարկութիւններ, որոնք կը գրտնունին ռուսական քաղաքներու մէջ, իրենց ամբողջ հարստութեամբ, ինչպէս Լապարեան ճեմարանը, գրադարաններ և այլն :

Դ) Այդ բոլորի փոխարէն Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի կը պիջի փոխադրութեան (թրանսլիտի) իրաւունք պէնքի, ստամոթեքի, որմէ հարիւրին 25ր կը ձգուի Հայաստանին, իսկ մնացածը՝ 75ր կը փոխադրուի 3րդ կէտի մէջ յիշած դիին այն կողմը, ու այդ պէնքն ու ռոպմոթեքը ոչ մէկ պարագայի տակ պէտք չէ պարձածուի Հայաստանի պէմ :

Այս համաձայնագիրը Լեզրանը պիտի տանը Մոսկուա, իսկ մինչև այժմ՝ պայմանագիրը բնորոնի պիտի տար Ատրպէջանին : Բայց երկար մնաց Բաքու, և Մոսկուան այդ համաձայնութիւնը այլևս չփաւրացուց :

Այսպիսով չ. չ. կառավարութիւնը մէկ կողմէն պտտերպոմ կը մզեր Թիւրքերուն դէմ, միւս կողմէն բանակցութիւններ կը վարէր Խորհրդային Ռուսիոյ հետ, իսկ երբայդ կողմէն կ'աշխատէր բարձրացնել ժողովուրդի տրամադրութիւնը և պորահաւաքի ենթարկել ազգարնակութիւնը :

Հողերանական ընոյթ ունեցող միջոցներէն պէտք է յիշատակել ժողովուրդին ուղղած կոչերը, ժողովները և երկու անգամ հրաւիրուած Խորհրդարանի արտակարգ նիստերու մէջ արտասանուած ճառերը :

Գործնական քայլերէն ամէնէն կարևորը ազգարնակութեան պորակուն կը մինչև 37 ասրեկանները : Բանակի թիւը կը հասնէր մինչև 40․000 հոգի : Բուսականաչափ ժամանակ չկար նորակոչները վարժեցնելու :

Կառավարութիւնը հրատարակեց թոուցիկներ՝ «Դէպի ճակատ» վերնագրով չ. Յ. Դաշնակցութեան Բիւրոն հրատարակեց կոչ «բնկերներին» : Վերջնապէս բոլոր քաղաքական կուսակցութիւնները՝ Ժողովրդական կուսակցութիւնը, Սոցիալ-Դեմոկրատները, Սոցիալ-Յեղափոխականները, Հնչակեանները, մէկ խօսքով հայ քա-

զաբական մաքի բայր Երանյներ Կրատորակեցին Կոչեր՝ ուզզուած ժողովուրդին :

Պատկերը սմբողջացնելու համար պէտք է բռնել, թէ այդ ժամանակ լուչև իկեան կարծիք բռնակը, որ գրասած էր Ղարաբաղը, կ'առաջանար Ձանդեկուրի վրայոյ Նախիջևանն : Բուչև իկեները բանակցութիւններու քաղաքականութեամբ կը հետապնդէին միայն մէկ նպատակ — ժամանակ շահիլ եւ քնացնել մեր արքայութիւնը, իսկ փաստօրէն Հայաստանը հետզհետէ կը սեղծուէր թիւրք-բուչև իկեան միացեալ ուժերու Երկաթի օղակին մէջ :

Լուսաբանելու համար զէպրերը, աւելորդ չենք նկատեր մէջբերելու հոս շ. շ. քանի մը գիտնադիտական յուշագիրներ եւ հաղորդագրութիւններ, որոնք սպարկուած են այն ժամանակները :

1) Ահարոնեան, Պարիզ, Թեհրանից, 15 Մայիսի :

«Թիւրք-բրտական ուժերը՝ անցնելով Մակուով կեհտրոնանում են Նախիջևան. պարտաստում են ուժեղ յարձակում գործել Հայաստանի վրայ : Ես բողոքի նոտաներ եմ ուղղել Դաշնակիցների ներկայացուցիչներին եւ Պարսից կառավարութեանը : Բողոքեցէ՛ք ուժեղ կերպով ձեր կողմից եւ հաղորդեցէ՛ք մեզ արդիւնքը : Յոյս ունեմ ստանալ նախատար արդիւնք Բախարայի գաղչականների խնդրի վերաբերմամբ : Երկու ամիս է կտրուած եմ կառավարութիւնից : Հաղորդեցէ՛ք մեզ երկրի դրութիւնը : Փախստականների վիճակը ծանր է : Ամէն կողմից սգնութիւն են խնդրում : Միջոցներ չունենալով խնդրում եմ փոխարինաբար տալ, եթէ կարող էք : Հայաստանի ներկայացուցիչ ԱՐՂՈՒԹԵԱՆ» :

2) Ուրգուած է Դաշնակիցներու ներկայացուցիչներուն. —

Շ. Հանրապետութեան գիտնադիտական ներկայացուցիչ Վրաստանում :

10 Յուլիս 1920, Թիֆլիս

Ձերդ գերագանցութիւն,

Հայաստանի կառավարութիւնից ստացուած անդեկութիւնների համաձայն, բուչև իկեան գործերը՝ հակառակ հորիքային Ռուսիոյ Հանրապետութեան գործավարների խորհրդի վստահացումներին՝

գրաւելով Ղարաբաղը՝ ուղեւորուել են դէպի Զանգեզուր, Յուլիս 5ին գրաւել են Գորիս քաղաքը եւ պարզապէս նպատակ ունեն շարունակելու իրենց այլալատեմբեք դէպի հարաւ, այսպիսով իրագործելով խնդիրայայն գործերի միացման ծրագիրը Հայաստանի հողի վրայով Քեմալ փաշայի բիրտ ազգային գործերի հետ: Հայաստանի Հանրապետութեան բանակը իր ուժերի եւ հնարաւորութիւնների չափով դիմադրում է եւ կը շարունակի դիմադրել ամէն կերպ խորհրդային գործերին, բայց հազիւ յէ հնարաւորութիւն ունենայ արզիւել նրանց միանալը բիրտ ազգային գործերի հետ. երէ Դաշնակիցները ցոյց չտան նրան իրական եւ արտակարգ օգնութիւն:

Հաղորդելով ձեզ վերայիշեալը՝ պատիւ ունեմ խնդրելու ձեր գերագահացութեանը հաղորդել ներկայ գրութեան բովանդակութիւնը ձեր կառավարութեանը, եւ միեւնոյն ժամանակ յայտնել ինձ, թէ ինչպիսի միջոցների կը ձեռնարկի ձեր կառավարութիւնը Հայաստանի արտակարգ օգնութիւն ցոյց տալու համար:

Ընդունեցէ՛ք խնդրեմ Ձեր գերագահացութիւն, իմ բարձր յարգանաց հաւաստիքը:

Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ՝  
Տ. ԲԷԳՅԱՆԿԵԱՆ

**3) Պարիզ, Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան:**

Խուսափելու համար հնարաւոր բիւր տեղեկութիւններից կործանողային Ռուսաստանի հետ մեր կայացուցած զինադադարի մասին՝ անհրաժեշտ է բացատրել եւ բնորոշել, որ զինադադարին պէտք է յաջորդի վերջնական դաշնագիր երեւանում: Ռուս խորհրդային գործերից գրաւուած հողամասերը չեն դադարում վէճի առարկայ լինել Հայաստանի եւ Ատրպէջանի միջեւ, եւ Հայաստանը կը շարունակի եռանդով պնդել իր իրաւունքների վրայ:

12 Օգոստոս թիւ 378:

Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ  
ԲԷԳՅԱՆԿԵԱՆ

**4) Հեռագիր երեւանից Փարիզ.**

28 Սեպտեմբերին բաւական մեծ բիրտական գործմաս յարձակուեց Կարսի մեր ուժերի վրայ: Թշնամու ննջման տակ մենք դա-

տարկեցիմք Ղարաուրգան, Սարրգամիշ, Կաղզուան: Կռիւր շարսւ-  
նակւում է: Ամբողջ Հայաստանի ժողովուրդը, ինչպէս մի մարդ,  
պաշտպանում է հայրենիքը: Խնայում եմ անհրաժեշտ քայլեր անել  
իրական օգնութիւն ստանալու համար: *Շտապարդական:*

ՕՀԱՆՁԱՆՆԱՆ

Թիւ 5260. 1 Հոկտեմբեր

5) Հեռագիր, երեսնից.

Կարաի նակտող համեմատաբար հանգիստ է: 27 Հոկտեմբերին  
ըշնամին յարձակուեց 4 ուղղութիւններով Իգդիրի վրայ եւ զրաւեց  
Կարակալա կամուրջը: Կռիւր շարունակւում է. 83 եւ 84 կարգեր  
կանչուած են:

Թիւ 6101, 28 Հոկտեմբեր

ՕՀԱՆՁԱՆՆԱՆ

••

*Միակ իրական հետեւանքը աշն բոլոր գիմումներուն, որոնք  
կատարուեցան Դաշնակիցներու Թիֆլիսի ներկայացուցիչներուն,  
Էգուս աշն, որ անգլիական բարձր քաժիտար ցնդ. Ստակար անցաւ  
պտոյտի Կարսի ճակատը եւ ցտաւ աշն ամուր (ցոնէ աշտակէս յայ-  
տարարեց Հայկական իշխանութիւններուն): Աշ մէկ ուրիշ օգնու-  
թիւն Երտպական իշխանութիւնները Կովկասի մէջ ցոյց չտուին Հա-  
յաստանին:*

*Մեծ պետութիւններուն Փարլիցի մէջ կատարուած գիմումը  
տոտջ բերաւ զիճարանութիւններ Աղցերու Լիկայի մէջ, որ Հիանա-  
լի ճտուեր արտասանեցին ցր. Նոնսէնը, անգլիական ներկայացու-  
ցիչ Բայֆուրը, Փրանսական նախարար Վիվիանին. բնորուեցաւ մի-  
ջապակին յանձնաժողով մը Հայ-թրքական կռիւր խաղաղեցնելու  
Համար՝ բողկացած առաջնակարգ Երտպական ցործիչներէ, եւ Պոլ-  
սոյ ամերիկեան նախկին գեապան Մորկենթօ պէտք է երթար այդ  
նպատակով Հայաստան: Բայց մինչ յանձնաժողովը կը պատրաստ-  
ուէր այդ քայլն ընել, Հայաստանի մէջ ամէն ինչ վերջացաւ:*

*Այսպիսով, ցրտթեան ամբողջ ծանրութիւնը ինկած էր Հայ  
ժողովուրդի, Հայ բանակի ու կառավարութեան վրայ: Կառավարու-  
թիւնը կ'ընէր իր յաւազոյնը բայց Հայկական ուժերը անբաւարար  
էին սարսափելի վտանգը չկրթացնելու Համար: Թուրքերը առաջա-  
նալով կը մօտենային Կարսին:*



Հոկտեմբեր 18ին կառավարութիւնը սպառնացեց Թիֆլիս զինուորական նախարար Ռուբէն Տէր-Մինասեանը համազօր համար վրաց կառավարութիւնը, որ համաձայնութեան պայ Հայաստանի կառավարութեան հետ միացած ուժերով կրօնելու Հայաստանին և վրաստանին սպասնոցող կրկնակի մտանդներուն պէմ. հայկական կառավարութիւնը յանձն կ'տոնէր պահել թրքական ճակատը, իսկ վրացիք պէտք է ետ մզէին թուրքական մտանդը: Այդ բանակցութիւններուն կը մասնակցէր և անպիտան բարձր քոմիսար գնդ-Ստակուր, որ իր մօտ էր հրաւիրած հայկական և վրացական նախարարները: Հայերը իրենց տաղտը կը հիմնուորէին այն ազգայն մտանդով, որ վրաստանի համար հերթական պիտի պատնար Հայաստանի հնարասր սնկումէն յետոյ: Վրացիք կը տատամսէին և չէին համարձակեր չկարսութենէ պարս պոյ:

Հեռուանքը եղաւ այն, որ վրացիք շրջպանեցին մեր կառավարութեան առաջարկը: Ռուբէն Տէր Մինասեանի առաքելութիւնը յաջողութիւն չունեցաւ: Վրացիք չէին սպասեր թրքական յարձակում վրաստանի դէմ իսկ թուրքական հետ իրենց կնքած դաշնագիրը կը համարէին մտահնկի և անխախտի:

Այդպիսով պարսի օգնութեան վերջին յոյսը մարն ինկաւ, և Հայաստանը բառիս բուն իմաստով մնաց միայնակ իր մեծ թշնամիներու զիմաց: Պէտք է պարզ և որոշակի պատկերացնել այս վիճակը, որովհետեւ կարելի ըլլայ անաչառ կերպով վերլուծել անցքերը: Այսօր ոյ փաստերը շեն հերքուիր: Իսկ այդ փաստերը կը հաստատեն, որ Թուրքերը Հայաստանի նկատմամբ ունէին պարզ և որոշ նպատակ — թոյլ շատ Սևրի դաշնագրի պորձագրութիւնը, թոյլ շատ Հայկական պետութեան որ ամբանայ: Բուրձեւիկները կ'օղնէին Թուրքերուն՝ զեկավարելով «համաշխարհային յեղափոխական» նկատումներով: «Եթէ, կ'ըսէին անոր սկանաւոր դորձիչները, համաշխարհային յեղափոխութեան գերագոյն նպատակներու համար հարկաւոր կը լինի գոհել մէկ միլիոն Հայեր, — պէտք է գոհել»: Ասկէ ետք սպասելի ճիծողելի է լսել միամիտ մարդոցմէ այն միտքը, թէ 1920 թ. բուրձեւիկները փրկեցին Հայաստանը թրքական աւերումէն:

Հայաստանի ներսը սուրբ լարումը հասած էր ծայրայեղ աստիճանի: Ամէն տեղ կը լարէր. «Աւէնքոյ դէպի հակատ, ամէն ինչ նակտաւի համար»: Զորահասարի ջանքերը անահաման էին. կուսակցական գործիչները և մամուլը կ'աշխատէին ամբողջ թափով: Բայց այդ բոլորը բուսական չէր առաջացող մտանդի առաջին առնելու հա-

մար: Բացի այդ՝ բուլեւերները օգնելով թուրքերուն՝ չէին տար Հայաստանին մազութ (փառեկանութիւն) եւ մեր գնացքները զժառարութեամբ կը չարձէին: Մեր շոյեկառփերը արապութեամբ պէտք է յարմարեցուէին փայտէ վառելիքի գործածութեան համար: Միւսնոյն ասան կը մտնէր ձմեռը:

Պատկերը կատարեալ յնելու համար առաջ բերեմ փաստաթուղթ մը, որ ցոյց կու տայ, թէ ինչպէս կը ներկայացնէին իրերու գրութիւնը թրքական ազգիւրները:

Պաշտօնական «Անատոլիոյ Գործակալութիւնը» 1920 թ. Հոկտեմբեր 23-ի իր անգլեկազգային հազարդէ հետեւեալը.

«Անատոլիոյ Գործակալութիւնը պարտք կը համարէ համաշխարհային հանրային կարծիքին տալ հետեւեալ լուսարարութիւնները այն կողմերու մասին, որոնք սկսուել են կովկասի մէջ թիւրք ազգային սովորի եւ հայ դաշնակ խմբերի միջեւ:

«Հայաստանի Հանրապետութեան հաստատումէն յետոյ երեսնի կառավարութիւնը իրեն նպատակ էր դրած ոչնչացնել կամ ստիպել գաղթելու այն թիւրքերուն, որոնք հաստատուելէն երկրի մէջ եւ կը կազմէին Հանրապետութեան ամբողջ ազգաբնակչութեան կէտը: Այդ քաղաքականութիւնը որը կը հետապնդուէր յամատուրեամբ եւ սրտը կանոնաւոր ծրարողով, կը ձգտէր մեծացնել ազգային հողը՝ հաստատելով եկուտը վախճանական Հայերը այն տեղերը, որոնք մընազիլն ազատ՝ թիւրքերու մահով կամ փախուստի պատճառով: Օգտուելով այն բանէն, որ մահմետական ազգաբնակչութիւնը անկարող էր իր ձայնը լսեցնել արեւմտեան աշխարհին, դաշնակները երկու տարի անընդհատ կը շարունակէին իրենց աւերիչ գործը: Համաձայն պաշտօնական վիճակագրական տուեալներու, որոնք կազմուած են Նիւսանի մահմետական միութեան ձեռքով եւ ներկայացուած են դաշնակից պետութիւններու ներկայացուցիչներուն կովկասի եւ Պարսի մէջ, մինչեւ 1919 թուի վերջը, միմիայն Հայաստանի սահմաններու մէջ գտնուած շրջաններու մէջ 199 թիւրքական զինուորացիներու եւ անոնց ազգաբնակչութիւնը, որը կը հասնէր 135,000 հոգիի, մեծ մասամբ կտորուորուած է. միայն մէկ փոքր մասը կարողացաւ փախչիլ Աստրախան, որտեղ Մուսաւար կուսակցութեան խորհրդարանը հաւաքակցեց 250 միլիոն ռուբլի վարկ անոնց պաշտպանութեան համար: Այս գումարը կարող է որսը գաղափար տալ դաշնակներու վախճանական, գոհեալ թուի եւ գրկահաններու մասին:

«Իաշնակները չբուսականացան կատարելով այս ջարդը Լ. Լանրապետութեան սահմաններու ներքո: Հայկական խմբերը մտան նաև Ասրպէջան եւ այրեցին մօտ 20 բարձր գիւղեր Ղարաբաղի նահանգին մէջ՝ կոտորելով ամբողջ ազգաբնակչութիւնը: Այս յանցանքներու մասին Ասրպէջանի կառավարութիւնը պաշտօնապէս հաղորդեց Կեդրոնական կոտորածի այս ծրագիրը հաստատարապէս գործադրուած է նաև հանրապետութեան հարեանութեան մէջ գտնուած շրջաններու մէջ: Հաստատարիմ ինքնարոշման իրաւունքին, որը դաշնակից պետութիւնները, իրօք, կ'ընդունին միմիայն իրենց հովանաւորեալներու համար, Կարսի շրջանը բնակաւոր Ռիւբէնը հրաժարուեցին բնդունել հայկական տիրապետութիւնը: Զօրավար Աղամեանը(\*) անցեալ տարի յայտարարեց վերջնագիր մը, որով կը հրաւիրէր անոնց բնդունել այդ տիրապետութիւնը 24 ժամուայ ընթացքին: Եւ նախքան այդ գիւղերու մեծ մասը, շնորհիւ հաղորդակցութեան միջոցներու պակասութեան, կարողացաւ տեղեկանալ այդ վերջնագրի մասին. Հայերը բնդանօրներով սլոյնեցին եւ քարուքանդ րրին մօտ 40 գիւղեր:

«Շնորհիւ այն զենքերու եւ ոստիւմբերի, որ յանուն քրիստոնէութեան եւրոպայի եւ Հայաստանի իմպերիալիստները կը մատակարարէին անոնց ստատօքէն, դաշնակները կարողացան տարածել իրենց ջարդերը եւ կաղոպուտները մինչեւ օսմանեան սահմանները, եւ մեր ցեղակից եւ կրօնակից եղբայրները սկսան փախչիլ հազարներով դէպի մեր սահմանները: Մեր սահմանակից նահանգներու բնակիչները՝ յագուած եւ զայրացած այդքան յանցանքներէ, արդէն մի քանի ամիս առաջ վնոնեցին օգնութեան համար իրենց եղբայրներուն: Միայն կառավարութեան ձեռք սոռած միջոցները կարողացան այն ժամանակ արգիլել թիւրք ազգային ուժերուն խիստ դաս տալ հայկական հրոսախմբերուն: Բայց սահմանի միւս կողմը իրենց գործը կատարելէ յետոյ դաշնակները համարձակութիւն ունեցան անցնելու օսմանեան երկիրը եւ այնտեղ գործ դնել իրենց աւերիչ ծրագիրները, որպէսզի այնտեղ ստեղծեն Ֆէթ արքամըլի (կատարուած իրողութիւն) սպասելով նախագահ Ուիլսոնի վնոնին: Սեպտեմբեր 24ին մեր սահմանային պահակները տնակնկալ կերպով ենթարկուեցան յարձակման: Մեր զօրքերը յաղթելով թշնամուն, հալածեցին գայն

(\*) Այդ անունով զօրավար չի Էզած Հայաստանի մէջ: Կարս Էզած էն զօր. Փիրուսեան, զօր. Յովսէփեան եւ Նահանգապետ զօր. Ղորգանեան:

մինչև Սարդամիշի շրջանը, որը բնակուած է միայն Թիւրքերով: Մեր ձեռքը բնկած փաստաբուղքերը ցայց կու տան, որ հայկական յարձակումը պատրաստուած է եղած խնամով՝ նպատակ ունենալով սիրելի էրզրումին: Հետապնդումը հայկական խմբերաւ, որոնք սահմանի միւս կողմի մեր եղբայրները ցարդելէ յետոյ մեր գիւղերու մէջ ալ մտցուցած էին մսի եւ աւերած, կը հանդիսանայ օրինական ինքնապաշտպանութեան ղէպ մը եւ մեր ժողովրդի համար անողական իրաւունք մըն է: Թիւրք ժողովուրդը չի տածեր ոչ մի յարձակողական զգացումով հայ ժողովրդի դէմ եւ սեւէ ուրիշ ծողովրդի դէմ: Թափուած արեան պատասխանատուութիւնը կ'իյնայ միայն Հայերու եւ անոնց հովանաւորող խմբերիայիստներու վրայ, որոնք կը հետապնդեն քիւրք սուզը կործանելու ծրագիր»:

••

*Ալեքոսնդրոսյոյի մէջ ևս ստացայ առաջին անձնական տպատորութիւնները ճակատի գրութեան և սպարնակութեան տրամադրութեան մասին: Տպատորութիւններս ախոր էին: Չկար ոչևորութիւն: Այն բոլոր անձինք, որ ակաջ վարչական շրջաններէն ե բարձր հրամանատարական կարգէն, իրենք կարծես, չէին հաստատ մեր յոգիութեան հնարատորութեան: Մենք լսեցինք կարս-Ալեքոսնդրոսյոյի շրջանի Լրկու հրամանատարներու գեկուցումները: Անոնք հաղորդեցին, որ կարսի սպարութեամբ մեր փորձերը՝ յարձակման դիմելու թուրք սովերու դէմ՝ յաջողութիւն չեն սննցած: Եւ մեր գործերը նա՛հանջած են:*

*Մենք շարունակեցինք ճանապարհը գէպի Երևան, սր հասանք ու շ երկուշեան, Հսկոնմբեր 20ին: Քաղաքը ստիտրական տեսք ունէր: Երկաթուղային երթեւեկութիւնը զանդաղեցուած էր, որովհետև առաջին շերթը կը տրուէր զինուորական զնացրներուն:*

*Հոկտեմբեր 21ին ևս նախ ևս առաջ անհուկցայ կառավարութեան նախադահին հետ, որուն հաղորդեցի իմ Երուսալ ըրած ճամբորդութեան արդիւնքները: Փոխառութեան խնդիրը սկսածայ կ'անցնէր Երկրորդ կարգը: Առաջին տեղը, ի հարկէ, կը բռնէր պատերազմի և ճակատի հարցը: Նոյն օրն ևս Եթ պետական զանձտարանին յանձնեցի իմ բերած բոլոր գումարները և «Ոսկի Ֆոնտ»ի համար յատկացուած ոսկին. ստացայ իմ բոլոր յանձնուածներու մասին ստացականներ, որոնք ի զէպ, այսօր ալ մօտա են: Ժամը 3ին ներկայ զտնուեցայ կառավարութեան նիստին, որուն կը մասնակցէին նաև*

դիմուսրական հրամանատարութեան ներկայացուցիչները եւ Խորհրդարանի նախագահը: Խորհրդակցութեան նիւթն էր պատերազմական գրաթիւեր եւ ճակատի դիմակը:

Նիստին ներկայ էր նաև Կարսէն նոր վերադարձած Երկրագործութեան նախարար Ս. Վրացեանը: Քննութեան էր զրուած՝ Թուրքերու դէմ պատերազմը շարունակելու լաւագոյն եղանակի խնդիրը: Զօրավարներ Նաղարբէկեան եւ Հախիբբեկեան իրենց կողմէն սեղեկութիւն տուին, որ թէ Լոկոտեմբեր 14 յարձակողականը չէ յաջողած, բայց հայ բանակի պաշտպանողական ուժը բաւարար է: Ս. Վրացեան բերած էր Կարսէն անձնական տղաւորութիւններ, որոնք կը վերալին զօրքերու բաւական լաւ եւ ամուր արմատագրութեան, բայց հրամանատարական կազմի թուրութեան եւ ղեկավարող ձեռքի բացակայութեան մասին:

Երբ կառավարութեան նախագահը կամեցաւ իմանալ իմ կարծիքը, եւ խնդրեցի նախ թույլտուութիւն քանի մը հարցումներ ուղղելու նիստին ներկայ ելոյց բարձր հրամանատարութեան ներկայացուցիչներուն: Եւ հարցուցի զօրավարներ Նաղարբէկեանին եւ Հախիբբեկեանին, թէ ո՞րքան մտմանակ, իրենց կարծիքով, կրնայ դիմանալ Կարսը իրբև ըրեզ:

Իրար հետ անմիջապէս խորհրդակցելով՝ Երկու զօրավարները միասին պատասխանեցին. «Մեր կարծիքով, եթէ զօրքերու սղին, որ այսօր լաւ է, շիջուայ, Կարսը կրնայ դիմանալ երկու ամիս եւս»:

Յետոյ հարցուցի զօրավարներուն թշնամի զօրքերու քանակի եւ անոր ունեցած ստղմամթերքի մասին: Եւ երբ այդ հարցումիս այ պատասխանը ստացայ, յայտնեցի այն կարծիքը, թէ պէտք է շարունակել պատերազմը:

Խորհրդակցութիւնը հաւանութիւն սուսաւ շարք մը վարչական կարգադրութիւններուն, որոնցմով կառավարութիւնը կ'ստեղծէր Երկրի պաշտպանողական ուժը եւ ցրուեցաւ բաւական լաւ տրամադրութեան տակ: Կարսի ճակատը յայտնի չափով հանդուստութիւն կը տիրէր: Սուրմալուի ճակատը Գրոյի զօրամասերը կը պահէին թշնամին, իսկ Կարսի ուղղութեամբ Թուրքերը բռնած էին Կարսի ստջևս պանսած գիրքերը:

Կառավարութիւնը ետանդով կը վարէր բանակցութիւնները՝ խորհրդային կառավարութեան հետ աշխատելով մշակել այնպիսի պայմաններ որոնք ապահովէին Հայաստանի շահերը: Գլխաւոր կէտերն էին 1) Հայաստանի պահանջը սեղեկութեան մասին եւ 2) Թրքական վերալինները Հայաստանին կցելու ապահովութիւնը:

Ռուսաստանը կը պահանջէր ամէն տեսակի թրանդիտ Հայաստանի վրայոյ :

Մտակաւայի կողմէ բանակցութիւնները կը վարէին Լեյբարնը և զինուորական խորհրդական զոր. Բարբիշէեր : Հայերու կողմէ կը շարունակէր բանակցութիւնները Լ. Շանթը, իր բնկերներ՝ Հ. Տէր-տէրեանի և Լ. Զարիֆեանի հետ :

Անցաւ չարաթ մը ևս : Հոկտեմբեր 27ին Սորհրդարանի գահ-իճին մէջ ևս հրատարակային զեկուցում տուի փոխառութեան համար կտտարած իմ արտասահմանեան ճանապարհորդութեան մասին : Ներկայ կը ահապին բազմութիւն. չորս ժամ տեսող զեկուցման մէջ ևս նկարագրեցի իմ սպեւորութիւնը և ատանձնապէս շեշտեցի չորս փաստեր .

1) Որ բոլոր հայ թողաբան կուսակցութիւնները զազուի-ներու մէջ հաստատարպէս տաք կերպով կ'ողջունեն Հայաստանի Հանրապետութիւնը և արտակարգ ուշադրութեամբ բնդունեցին անոր յատակ յիստոր :

2) Որ փոխառութեան գործը, ինչպէս բոլոր նշաններէն կ'ըրեար, կընայ վայլուն յաջողութիւն ունենայ :

3) Որ հայ բարժասողին զազութներու մէջ կը վախճայ կառավարող կուսակցութեան բնկերթարական զազութարներէն, մանաւանդ, հոգային և զբամական աեսակէտով :

4) Որ Ռոմկավարները բատական ուժ կը ներկայացնեն զազութներու մէջ, մանաւանդ Եղիպտոս և Փարիզ :

Իմ տուած զեկուցումը յայտնի դարձաւ զազութներու մէջ և յու բնդունելութիւն զտա : Բայց փոխառութեան գործը կանց առաւ : Հետագային, Պոլիս և Եղիպտոս հաւաքուած զբամները մօտ 3 միլիոն Քրտնք, վերադարձուեցաւ փոխառութիւնը ստորապարզեարուն :

Կը մօտենար Հոկտեմբեր 30ի ճակատապարական օրը : Բայց նախ քան այց կէտին անցնիլը՝ ևս ինձ թոյլ կու տամ ամբողջութեամբ մէջ բերել Հայաստանի զիւանսդիւական ներկայացուցիչ Տիգրան Բէկյատեանի 1920 թ. Օգոստոսին գրած յուշագիրը, որ շատ ճշգրիտ կերպով կը նկարագրէ այն բնդհանուր կացութիւնը .

Հայաստանի Հանրապետութիւն  
Դիւանագիտական ներկայացուցիչ  
Վլրաստանում

Գաղտնի

Օգոստոս 1920, Թիֆլիս .

Արտաքին գործերի նախարարի հրամանով :

Ջերդ Գերագանցութիւն ,

Այն իսկ բուպէից, երբ Հիւսիսային Կովկասը եւ Ատրպէջանը գրուտեցին մեծամասնական սուլթանի կողմից, անդրկովկասեան երկու հանրապետութիւնների՝ Վրաստանի եւ Հայաստանի առջե կանգնեց Սովետական Ռուսաստանը, այսուհետեւ իրենց հարեանի հետ իրենց արտաքին յարաբերութիւնները կարգադրելու անհրաժեշտութիւնը : Դրանից առաջ սովետական կառավարութիւնը Հիւսիսային Կովկասում եղած Հայաստանի պատուիրակ Ուրուտաձէի միջոցով, որը յանուն Վրաստանի բռնակցութիւններ էր վարում սովետական կառավարութեան հետ, շատ անգամ իմաց էր տուել, որ, եթէ Հայաստանը իր կողմից դիմի վերոյիշեալ կառավարութեանը խաղաղութեան առաջարկներով՝ Հայաստանի անկախութիւնը եւ ինքնիշխանութիւնը ընդունելու պայմանով, այդպիսի առաջարկները Մոսկուայում կ'ընդունուեն նպաստաւոր կերպով :

Մայիս 5ին հայկական մի պատուիրակութիւն զնաց Մոսկուա այդ բանակցութիւնները սկսելու համար . — մի փաստ, որի մասին իմ կառավարութիւնը պատիւ է ունեցել Ջեզ յայտնելու : Այդ պատուիրակութիւնը Մոսկուա զնալով Մայիս 20ին, լիազօրուած էր բանակցութիւնների ընթացքում հիմնուել Հայաստանի անկախութեան եւ ինքնիշխանութեան նամաչման վրայ Սովետական Ռուսաստանի կողմից, ինչպէս եւ այն սկզբունքի վրայ, որ Ռուսաստանը չի միջամտի Հայաստանի ներքին եւ արտաքին գործերի մէջ : Այդ բանակցութիւնները սկսուած լինելով Մայիս 28ին՝ մինչեւ օրս ոչ մի վերջնական հետեւանք չեն տուել :

Առանց մանրամասնութեանց մէջ մտնելու՝ ես ինձ բռնի եմ տալիս, սակայն, հրաւիրել Ջեր ուշադրութիւնը մի շարք փաստերի եւ իրադարձութիւնների վրայ, որոնք նկատուած են մեր պատուիրակութեան կողմից իրենց երկատեսեայ ներկայութեան միջոցին Մոսկուայում — փաստեր, որոնք մի կողմից՝ երկու շահագրգռուած կողմերից կայացրած համաձայնութեան իրագործումը դարձրին վրտանգաւոր Հայաստանի կենսական շահերի համար, ինչպէս նաեւ անտանտի պետութիւնների շահերի համար արեւելքում :

Այդ իրադարձութիւնները կարելի է բաժանել երկու կարգի՝ *բազաբախան* խնդիրների եւ *տնտեսական* խնդիրների, որոնք ունէին ընդհանուր հիմք — մի կողմից՝ յայտնի թիւրք-թարքարական համաձայնութիւնը, որոնց զլխաւոր մասերը կայանում են .

ա. Թիւրքիայի եւ Ատրպէջանի վերաբերմամբ .



Լ. ԿՆՆԻՆ



1) Քեմալականների ձգտումը՝ կապուելով Հայաստանի միջոցով ոռուս սովետական ուժերի և Ատրպէջանի հետ՝ ստանալ անհրաժեշտ օգնութիւնը այն պայմարի համար, որ Թիւրքիա սկսեր է խաղաղութեան դաշնագրի և անասանի պետութիւնների դէմ:

2) Մեծամասնական Ռուսաստանի օգնութեամբ յայտարարել խաչակրաց արշաւանք ընդդէմ եւրոպական տիրապետութեան Արեւելի և Ասիայի բոլոր մանմետական երկիրներում:

3) Խորստկումը անկախ Հայաստանի. իբրև մի պետութեան, որը խանգարում է վերոյիշեալ կապին և արգելք է հանդիսանում ստեղծելու մի միապաղաղ մակոմետական գտնուած սկսած Միջերկրականից մինչև Հնչկական ովկիանոսի սահմանները:

#### Ը. Ռուսաստանի վերաբերմամբ.

1) Աշխատել լիովին օգտագործել քեմալական ուժերը՝ նրանց հետ կապ հաստատելուց յետոյ այն բնդիտուր նպատակների համար, որ Ռուսաստանը հետապնդում է Արեւելում և Ասիայում՝ նպատակ ունենալով տարածել իր ազդեցութիւնը և պայքարել եւրոպայի ազդեցութեան դէմ, ինչպէս նաև ճնշում գործ դնել Սովետական Ռուսաստանի և համաձայնական պետութիւնների մէջ եղած բանակցութիւնների ընթացքի վրայ:

2) Բարոսքել նրա տնտեսական վիճակը՝ մտնելով Պարսկաստան Հայաստանի վրայով, և.

3) Մահացու հարուած հասցնել եւրոպական շահերին և եւրոպական կապիտալին՝ կազմակերպելով մեծամասնական շարժում Արեւելում և Ասիայում:

Այժի առայ ունենալով, որ Հայաստանը ներկայացնում է զըլ-խատար արգելքը վերոյիշեալ ծրագիրների իրագործման համար, միաժամանակ ակնբեր է, որ վերջին ժամանակները որոշ կերպով սչքի են ընկնում ատրպէջանեան Թիւրքերի ձգտումները մի կողմից և մեծամասնականների միւս կողմից. վերոյիշեալ ծրագրերը իրականացնելու համար: Այսպիսով քեմալական և ատրպէջանեան գոր-

քեր առանձին կռիւներ վարելով՝ կենտրոնանում են հայկական սահմանների տարածութեամբ: Եւ միւս կողմից՝ ռուս մեծամասնական զօրքեր՝ պատրուակ բռնելով, որ նախագաւաշական միջոցներ են ձեռնարկում միջագոյնին ընդհարումների դէմ Հայաստանի եւ Ատրպէջանի իբր թէ վիճելի հողերի պատնետով, սկզբում գրաւեցին Ղարաբաղի եւ Ջանգեզուրի շրջանները, իսկ այժմ՝ Նախիջեւանի շրջանը, որտեղ մտան նայնպէս քեմալական եւ ատրպէջանեան զօրքերը: Բայց երկրի այս վիճակը երկար չտեւեց, որովհետեւ Օգոստոս 5ին կարմիր զօրքերը յետ մղուեցին մեծ կորուստներով: Յետոյ նրանք օգնութիւն ստացան Ղարաբաղի սովետական բանակից: Նրանց վրայ աւելացաւ եւ քրտական հեծելազօրքը, Ջանգեզուրի հիւսիս-արեւելեան կողմից. Հաջի Սամլու կոչուած մասից:

Այս ծանր եւ միտնգամայն անուպատ պայմաններում հայկական զօրքերը հազիւ կարողացան նահանջի ճանապարհ բռնալ Բազար Չայի վրայով դէպի Շարուրի սահմանները, որտեղ նրանք նորից միացեալ յարձակման ենթարկուեցին բոլոր կողմերից՝ Կարմիր Բանակից, Քրտերից եւ Մոլդականներից, որոնց դէմ Դրոյի փոքրիկ զօրամասը անգոր էր կռուելու:

Միեւնոյն ժամանակ Ղազախի կողմերում տեղի էր ունեցել կենտրոնացում սովետական ուժերի, որտեղից նրանք Օգոստոս 2ին, սկսեցին առաջանալ դէպի անվիճելիօրէն հայկական շրջաններ՝ գրաւելով Աֆսիբարա, Թարախլու եւ ուրիշ գիւղեր: Այս շարժումը սպառնում էր կտրել Հայաստանի երկաթուղային հաղորդակցութիւնը եւ միանգամայն չէզոքացնել նրան:

Այս բոլոր փաստերը հաղորդուեցին ի գիտութիւն Վրաստանի կառավարութեան եւ Վրաստանի արտաքին գործերի սր. նախարարը ներկայացրեց իր բողոքը Սովետական Ռուսաստանի յարձակողական քայլերի դէմ Հայաստանի վերաքերմամբ:

Դրոյում վերոյիշեալ հանգամանքներից եւ վախենալով, որ բոլշեւիզմը կարող է թափանցել Շարուրի եւ Ղազախի անվիճելիօրէն հայ շրջանները՝ հայկական կառավարութիւնը առաջարկեց իր պատուիրակութեանը. որը Թիֆլիսում բանակցութիւններ էր վարում մեծամասնականների հետ, արագացնել գինադադարի կնքումը: Վերջինները պահանջել էին գինադադարը կնքելու համար իբրեւ նախապայման՝ երեք վիճելի շրջանների գրաւումը ռուս զօրքերի կողմից: Հայկական պատուիրակութիւնը ուրիշ ընտրութիւն չունենալով տուաւ իր համաձայնութիւնը այդ պահանջին, կարողանալով, սակայն, պահել Շահբախթ-Սուլթանբէգ հաղորդակցութեան գիծը Բա-

զար Զայի արեւելում, ինչպէս Շահրախը-Ջուլփա երկաթուղագծի վարչութիւնը:

Հայկական պատուիրակութիւնը բնից ընդհանրապէս էր, որ զինադադարի վերստին պայմաններին ընդունելութիւնը չի որոշում սովետական ուժերից գրաւուած շրջանների վերջնական բաշխումը, եւ որ Հայաստանը կը շարունակէ պահանջել այդ շրջանները Ատրպէջանից եւ իրեն կը վերապահի իրաւունքը պահանջել դրանց այն դաշնագրի մշակման միջոցին. որը պէտք է ստորագրուի երեսնում հայկական կառավարութեան եւ Հայաստանի սովետական ներկայացուցիչ Լեզրանի միջեւ:

Ուր օւրից յետոյ Լեզրանը գնում է Հայաստան: Այդ միջոցին Մոսկուայից պէտք է վերադառնար մեր պատուիրակութիւնը Լեւոն Շանթի նախագահութեամբ. եւ պէտք է վերսկսուէին բանակցութիւնները վերջնական խաղաղութեան մասին:

Հայաստանը անկարելի է գտնում զիջել Ատրպէջանին յիշեալ շրջանները եւ հաստատ յոյս ունի կարենալ համաձայնութեան գալու միւս կողմի հետ որքէ կամպրոմիսի միջոցով: Բայց եթէ Ատրպէջանը՝ յեռուելով իր դաշնակիցների եւ հովանաւորների վրայ՝ ոչ մի զիջում չանի Հայաստանին եւ զինուած ընդհարումը անխուսափելի դառնայ, Հայաստանը մեղաւոր չի լինի, որ նա վերջին երկու տարիների ընթացքում թշնամական գարծողութիւններից վերադառնաւ՝ նորից զէնք է բարձրացնում պաշտպանելու համար իր անկախութեան իրաւունքը եւ իր սահմանների պահպանութիւնը:

Հայաստանը յոյս ունի, որ այդ բանակցութիւնների ընթացքում իր ժողովուրդը ձեռք կը բերի որոշ հանգստութիւն, որին նա մեծ կարիք ունի հոցահաստիկների հունձի շրջանում, եւ որ հանգրստութեամբ վերջացնելով իր աշխատանքները՝ նա կը պատառի ընդհանուր գոբակուչի երաւելին: Եւ այդ նայն ժամանակամիջոցում գործերը հնարաւորութիւն կ'ունենան վարժուելու Անգլիայից ստացուած գէնքերի գործածութեան: Այսպիսով, հայկական բանակը հանգրստացած, լաւ զինուած եւ սպասիվ իր բնտանիքների վիճակի վերաբերմամբ պատրաստ կը լինի շարունակել կատարել իր պարտքը հայրենիքի առաջ:

Պէտք է, սակայն, յիշատակել այն զուտ հայկական պայմանները, որոնք կարող են ներկայացնել Էական եւ երբեմն անյազօքի սրգելներ այդ ձգտումների իրագործման համար: Դրանք են՝

1) Ֆինանսական միջոցների պակաս:

2) Վառելիքի բացակայութիւն :

3) Տեղափոխութեան միջոցների բացակայութիւն :

Յիշեալ դժուարութիւնները վերացնել եւ հարբելու խնդրում, Ձեռք Գերագոնցութիւն, Ձեր կառավարութիւնը կարող էր կարեւոր դեր խաղալ : Ձեր կառավարութեան կողմից Հայկական Հանրապետութեանը տրուած մի քանի միլիոն դոլարի փոխառութիւնը կարող էր փրկել նրան անտանելի կացութիւնից, որովհետեւ նախ քան վրձնելը բարձր քաղաքական նշանակութիւն ունեցող սրբէլ գործի ձեռնարկելու՝ պէտք էր, քերես, յանկարծ կանգնեցնել սկսած ձեռնարկը դրամի կամ արիշ որեւէ անհրաժեշտ միջոցների պակասութեան պատճառով, — մի բան, որ շատ յախտ պատահում է Հայաստանի Հանրապետութեան :

Իրերի այս վիճակի պատճառով մի քանի անգամ ստեղծուել են այնպիսի դրութիւններ, որոնք սպառնում էին պետութեան ապահովութեանը եւ գոյութեանը : Վառելիքի, վագոնների եւ շոգեշարժ մեքենաների, ինչպէս եւ տեղափոխութեան միջոցների բացակայութիւնը ոչ միայն միակ պատճառն էր սովորական մարդատար զնացքների յանախակի ընդհատման. — մի բան, որ գրեթէ բոլորաբաշխ էր, բայց եւ երբեմն հնարատրութիւն չէր տալիս փոխադրել օգնական զօրք, հաց եւ ռազմամթերք կոստող զօրամասերի համար :

Բնական է, որ այս գուտ հայկական պայմաններում հայկական զօրքերի բոլոր յաջողութիւնները հետեւանք են հայկական բանակի եւ հայ ժողովրդի կողմից աւելի քան երկու տարի ցուցադրած անսահման եռանդի եւ գերմարդկային մշտական ուժերի լարման : Իմ կառավարութիւնը, ինչպէս եւ ամբողջ հայ ժողովուրդը, հաստատուապէս վճռել են բոլոր հնարատր միջոցներով պահպանել Հայաստանի սահմանների անձեռնմխելիութիւնը եւ նրա իրաւունքները անկախ գոյութեան համար : Այս նպատակով կառավարութիւնը յայտարարել է նոր զօրակոչ ամբողջ Հայաստանում եւ ստիպողական միջոցներ է ձեռնարկուած բանակը ուժեղացնելու համար :

Յայտնելով վերոյիշեալը Ձեզ ի տեղեկութիւն՝ իմ կառավարութիւնը խնդրում է Ձեզ՝ հաղորդել այս Ձեր կառավարութեան եւ միեւնոյն ժամանակ յայտնել, թէ ինչպիսի նիւթական եւ դիւանագիտական օգնութիւն կարող է Ձեր կառավարութիւնը ցոյց տալ Հայաստանին նրա կոտում ընդդէմ Բիրք-մեծամասնական ուժերի, որոնք սպառնում են իր անկախութեանը :

Իր կողմից՝ իմ կառավարութիւնը գտնում է չափազանց անհրաժեշտ, որ Դաշնակիցները նկշում գործ դնեն մեծամասնական կառավարութեան վրայ: Իմ կառավարութիւնը գտնում է նոյնպէս անհրաժեշտ անմիջապէս ուղարկել Հայաստան վառելիք եւ փոխադրութեան միջոցներ:

Հրաւիրում եմ Ձեր ուշադրութիւնը այն բանի վրայ, որ վերսիշեալ բոլոր միջոցները պէտք է գործադրել ամենակարճ ժամանակի ընթացքում, քանի սր Հայաստանը մի փոքր երկիր է, որը չի կարող երկար դիմագրաւել յարձակուսւյ հարեւանների դէմ, որոնք աւելի ուժեղ են քէ՛ մարդկանցով եւ քէ՛ արիշ միջոցներով:

Սիրում եմ յուսալ, որ դուք կը բարեհաճէք ինձ տեղեկացնել, յէ ի՞նչ հետեւումք ունեցաւ այս նամակը, որպէսզի ես հաղորդեմ իմ կառավարութեանը:

Ընդունեցէք եւ այլն:

Տ. ԲԷԳՋԱԴԵԱՆ

*Այս յուշագիրը պարզ կ'արտացոլացնէ թէ՛ Երկրի փաստացի վիճակը եւ թէ՛ Հայաստանի կառավարութեան յոյսերը. մէկ կողմէ՛՝ քեմալական-մեծամասնական համաձայնութիւնը, միւս կողմէ՛՝ Հայաստանի ինքնապաշտպանութիւնը եւ բոլորական օգնութեան յոյսերով: Կառավարութեան բոլոր նախատեսութիւնները եւ վերսիշեալ համաձայնութեան ծրագիրներու բացումը Հեռապայլի հաստատուեցան, բայց այն ժամանակի համար կարելւոր էր միայն մէկ բան — ստանալ օգնութիւն՝ դիւանագիտական կամ քաղաքական: Բայց ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը չեկաւ:*

••

*Հոկտեմբեր 29ի Երեկոյեան նորէն կայացաւ խորհրդակցութիւն կառավարութեան հրաւերով:*

*Ձեկուցուեցաւ Կարսի բերդի հրամանատար զօր. Փիրումեանի Հեռագիրը այն մասին, թէ բերդապահ զօրքը եւ բանակը կը պաշտպանեն բերդը մինչեւ հնարուորութիւն եւ թէ տրամադրութիւնը սմուր է:*

*Հոկտեմբեր 20ին մինչեւ 29ը երբեան գտնուելով՝ եւ հնարաւորութիւն ունէի տեսնուելու եւ խօսելու շատ դիւնորականներու եւ ճակատը այցելած Խորհրդարանի անդամներու հետ: Կ'աշխատէի պարզել ինձ համար, թէ կուզ մտաւոր ճշգրտեմք, Հայաստանի*

զէմ գործող թրքական բանակի թիւը, բայց կը խոստովանին որ այդ չյաջողակաց հասկնալ: Դրօն, Սուրմալուի գասառի զօրքերու հրահանատարը, անձամբ կ'ըսէր, թէ իր ղէմ Երևանի սզողութեամբ ունէր Երկու զիմիպիա, ուրեմն մօտ 6000 - 7000 թուրք զինուոր, որով բոլոր թուրք զօրքերու թիւը անոր հաշուով կը հասնէր 30,000ի: Զօր. Նապարթկանը կ'ըսէր, թէ թրքական զօրքերու թիւը ինքը կը հաշուէր բնականէն մօտ 20,000 հոգի: Վերջապէս, թրքական զօրքերու զլխուոր հրամանատար, զօր. Քեաղիմ Կարաբեքիր փաշան ինձ բաւ Ալեքսանդրոպոլի մէջ, որ ունի բնականէն 8000 զօրք: Ի հարկէ, յազթութենէ յետոյ ան կ'ուզէր փոքր ցոյց տալ իր բանակի քանակը և ատով աւելի բարձրացնել իր պատիւը՝ փոքր ուժերով այդպէս մէծ յաջողութիւն ձևաք բերած ըլլալուն համար:

Իսլոր ստացած տեղեկութիւններուս վրայ յենուած՝ ևս կը կարծեմ, սակայն, թէ մօտաւորապէս թրքական ուժերը կարելի է որոշել 20,000 մարդ, բայց ատոնք բոլորը մարդուած, փորձուած և կռիւներու մէջ եղած զինուորներ էին:

Հայաստանի կողմէն զօրակոչուող ոտքի հաննց ևս մտցուց բանակին մէջ հին զինուորներու հետ միասին բնականէն մօտ 40,000 հոգի՝ հաշուելով այդ թիւին մէջ և նոր կանչուածները և պահեստի զինուորները:

Բայց բանը միայն թուական քանակի մէջ չէր: Պէտք է յիշել, որ Իզմիրի ուղու թեմամբ 1922 թ. Իսմէթ փաշան, ունենալով մինչև 80 հազար հոգի՝ ինը օրուայ մէջ ծովի թափեց զրեթէ Երկու հարիւր հազարնոց յունական բանակը:

Հոկտեմբեր 30ին, ժամը երկուֆի մօտ էր, երբ ևս նկատեցի, որ Երևան քաղաքի վրայ կը սլանայ սաւառնակ մը: Անոր թոհչֆի ազմուրը պարզ կը լուռէր քաղաքին մէջ: Սաւառնակը իջու գետին: Ոչ ոք չէր կրնար ենթադրել թէ ան բերած է սարսափելի լուր մը, — Հոկտեմբեր 30ին, ստաւօտեան թուրքերը զրահած էին Կարսը:

Ժամը երեքին ևս հրաւէր ստացայ Երթալ կոտալարութեան ժողովին: Երբ մտայ զահլիճ, այնուպէս արդէն կար մօտ քսան մարդ՝ նախարարներու կազմը: Յորհրդարանի նախապահը և անդամներէն մէկ քանին ևս քանի մը զինուորականներ: Կը տիրէր խոր լուսթիւն: Բոլորն ալ սաստիկ բնկնուած էին:

Նիստը բանալով՝ նախապահը զեկուցեց ժողովին, որ լուր է ստացուած Կարսի տնկման մասին: Մանրամասնութիւնները յայտնի չէին, միայն սաւառնակով եկած սպան կը յայտնէր, որ ինք անձամբ տեսած է թէ ինչպէս կայարանին կողմէ քաղաք կը մտնէին թուրք

սակերտները և թէ ինչպէս կը փախչէին քաղաքէն հայ զինուորները և սղազարնակութիւնը: Ստատոնորզը պարտք էր համարած թրոչի՝ փրկելու համար սատանակը և հպորդելու Երեւան՝ Կարսի անկման մասին:

Միւս օրը, Էրր Կարսի անկման սկանստեսները հասան Երեւան, սղազուեցաւ, որ Թուրքերը քաղաք էին մտած զրեթի առանց զնդակ արձակելու: Կարսը պահպանող զօրքերու բարսյալբումբ կասարեալ էր:

Ես անձամբ լսեցի Կարսի նահանգապետ Ս. Ղորղանեանի պատմութիւնը Կարսի անկման մասին:

Վաղ ստատուեան նահանգապետ Ս. Ղորղանեանը հրաւեր կը ստանայ ըրզրապետ զար. Դ. Փիրումեանէն զայ իր մօտ խորհրդակցութեան: Դուրս կու գայ տունէն և ստբոյ կ'ուղեւորուի ըրզրապետի մօտ: Փոստը մէջ կ'իմանայ փախչող ընակիչներէն, որ Թուրքերը մտեր են քաղաք: Իսկոյն տուն կը գտնայ և ընտանիքով անմիջապէս կը հեռանայ քաղաքէն. ինքը կ'երթայ ձիով, իսկ ընտանիքը կ'առքով: Ջօր. Փիրումեանը իր մօտ Էղած սպաներով, նախաբար Ա. Բարսեանը, մօտ 1500 հայ զինուորներով և 150 հայ սպաներով զերի կ'իյնան և կը տարուին Էրզրում, ուր մնացին տարիէ մը աւելի: Ապաները յետոյ զերութենէ արձակուեցան, իսկ 1500 զինուորներէն վերապարձան ընդամէնը միայն 300 հոգի:

Կարսի մէջ Թուրքերը թայլ էին տուած անկարգութիւններ, սպաննութիւններ և կրպոպուտ: Կր սպաննէին և կը կողոպտէին զլիստորապէս այն տաղակախումբերը, որ զօրքերը ներս էին թողած՝ քաղաքը զրուելի յետոյ: Ինչպէս միշտ նման զէպերուն՝ զժուար է հաշուել սպաննուածներու թիւը, բայց, ստոյգ տեղեկութիւններու համաձայն, սպաննուած են մօտ 3500 հոգի: Քաղաքէն փախած ընակչութիւնը, սրբ ստբոյ, որը կ'առքով, թողով բոլոր ունեցածը՝ փախած էր զէպի Ալեքսանդրապոլ, Երեւան կամ Թիֆլիս: Վրաց կառավարութիւնը զժուարութեամբ կը թողուր Թիֆլիս մտնել՝ վարանարով քաղաքի շտիպանց լեցուելէն:

Կարսի անկման նախօրեակին, այսինքն Հսկտեմբեր 20ին ճաշէն յետոյ տեղի կը ունեցըր հետեւեալ փաստը.— քաջ զնդապետ Մալմանեանը ուզեր է հինգ հարիւրով առաջ մղուիլ յարձակման՝ Թուրքերու զէմ, բայց շնայած իր բոլոր ջանքերուն և յորդորներուն, զինուորները իրենց տեղէն չեն շարժեր: Յուսահատութենէն մղուած, հէնց իր զինուորներուն աչքին առջև, տեղն ու տեղը ան անձնասպան կ'ըլլայ, իսկ զինուորները կը վերադառնան Կարս:

Կարսի անկումը ամէն տեսակէտէ սարսափելի պղտ եղաւ : Իսկապէս , այդ օրէն սկսած՝ Հայաստանի անկախութեան օրերը հաշուուած էին : Հաշուուած էին այն պատճառով , որ զինուորական ուժն այլևս զայգրած էր պաշտպան հանդիսանալ : Հանրապետութեան : Միւս կողմէն՝ Հայաստանը՝ զրկուած Կարսէն ու Կարսի նահանգէն , նորէն կամփոփուէր նեղ սահմաններու մէջ , որոնց վրայ պէտք է ապրէին տեղական բնակիչները , փոխտտականները և նոր կոշուած զինուորները , մասամբ ալ հայ զապաթներէն : Եւ տեսայ կայսրաններու մէջ ամբողջ ընտանիքներ , որոնք նոր էին եկած Եւրոպայէն , իմ ճառերու ազդեցութեան տակ : Անօդնական նստած էին անոնք իրենց իրերու վրայ և չդիակին՝ թէ ինչ ընեն — Է՞տ վերադանան , թէ հաստատուին նոր վայրերու մէջ :

Պէտք է ըսել , որ Երկրի ուժերու յարամը տուած էր այն բուրբ , ինչ որ ան կրնար տալ մարդոցմտով և միջոցներով : Երկրի մէջ խալ կերպով կը գործէր բուշուիկեան պրոպագանտը , և անոր թոյնը պարարտ հող կը գտնէր իրեն համար :

Երբ կառավարութեան նիստի մէջ Հոկտեմբեր 30ին վարչապետ Հ. Օհանջանեանը պաշտօնապէս հասարակց կարսի անկման մասին և նկարագրեց ընդհանուր դրութիւնը , հարց դրա ժողովին , թէ ի՞նչ պէտք է ընել : Ներկայ եղողները սկսան արտայայտուիլ : Եւ ինքս որոշակի յայտնեցի իմ կարծիքը կարճ նախադասութեամբ . « Պէտք է հաշտուիլ և կնքել թուրքիւց հետ » :

Կառավարութիւնը , իր այդ խորհրդակցութենէն յետոյ , որոշեց ամէն զնով ամբացնել ճակատը , բարձր պահել ժողովուրդի տրամադրութիւնը և նոր եռանդ մտցնել զօրքերու մէջ , միևնոյն ժամանակ որոշուեցաւ բանակցութիւններ սկսիլ Թուրքիոյ հետ զինագաղարի և յետոյ խաղաղութեան մասին : Եւ Նոյեմբեր 3ին զրաւոր առաջարկութիւն բրաւ Թուրքիոյ , բանակցութիւններ սկսելու մասին : Թուրք կառավարութիւնը , իր կողմէն , ինչպիսիք յազմայ զպալով , և իր նպատակներուն հասած նկատելով , Նոյեմբեր 2ին զիմեց նման առաջարկով մը Հայաստանի կառավարութեան : Երկու առաջարկներն ալ տեղի էին ունեցած մէկը միւսէն անկախ :

Գրութիւններու փոխանակութիւնը տեւեց քանի մը օր : Այդ բոլոր զրութիւնները ժամանակին ամբողջութեամբ տուրքուեցան Պոստոյ թերթերու մէջ : Եղած բանակցութիւններու մասին մանրամասնօրէն զեկուցեց վարչապետ Հ. Օհանջանեանը Քորհրդարանի նիստին , Նոյեմբեր 11ին՝ կարգալով բոլոր զրութիւնները :



*Ահա Էնկիւրիի կառավարութեան արտաքին գործերու ժողովրդական գործավար Ահմետ Մախթարի գրութիւնը։—*

2 Նոյեմբեր 1920 թ. Անգորա, 263

Հայկական Հանրապետութեան Արտաքին Գործերի

Պ. Նախարարին, Երեւան։

Այժմ. երբ լիակատար յաղթութիւնը գալիս է պատկելու մեր արեւելեան բանակի ջանքերը, Տանկաստանի Ազգ. Մեծ Խորհուրդը ուզում է կրկնել հայ ժողովուրդին արդէն առաջները իր արած խաղաղութեան առաջարկը եւ նորից հաւաստիացնելու, թէ նա չի ձգտել սնցեալում սչնչացնել Հայաստանը, խլել նրանից իր անկախութիւնը եւ վտանգել սրեւէ կերպով նրա իրաւունքները։

Սակայն, մենք կարծում ենք, թէ պարտաւոր ենք պահանջել Հայաստանի կառավարութիւնից, որ նա նոյնպէս վարուի մեզ հետ եւ դադարի Արեւելքում բրիտանական ինքերիսպիզմի խոնարհ գործիքը լինելուց։

Մենք համոզուած ենք, որ յիւրք եւ հայ ժողովուրդների իրարու դէմ վարած երկարատեւ սրիւնահեղ կռիւները, մինչեւ 1918 թուականը գլխաւոր պատճառ են ունեցել յաւակնութիւնները ցարիզմի, որը ձգտում էր տարածել իր իշխանութիւնը Արեւելեան Անատոլիայի վրայ։ Ցարական ռեժիմի տապալումը արագ բերեց հանգստութեան շրջան, շնորհիւ այն ստոնարիւնութեան, որ ռուսական գործերի հեռանալուց յետոյ, Տանկաստանը կարողացաւ պահել հայկական բանդաների կատարած սուկալի ջարդերի հանդէպ։

Խաղաղութիւնը, որ մենք այնքան ջանքերով վերականգնեցինք, նորից խախտուեց, երբ ինքերիսպիստ Անգլիան յաղթանակելով, կամեցաւ պահել Միջագետքը եւ ձեռք ձգել Պարսկաստանի ու Բաբուի նաւթատու շրջանները։

Ցարիզմին ծառայելուց յետոյ, Հայաստանը այս անգամ Անգլիայ նպատակներին ծառայեց եւ մեր դէմ բաց արեց նոր դարաշրջանի բռնամտութեան, որ շարունակուում է դեռ եւս ի մեծ շահ Լոնդոնի ֆինանսիստների։ Թիւրք ժողովուրդը, որ գրեթէ միայնակ պաշտպանում է Արեւելքը Արեւմուտքի կապիտալիստների բնչաքաղցուրտեան դէմ, չէր կարող բռնի տալ Հայերին անբնդիտ դատադրել նրա կեանքի դէմ եւ նրա արեւելեան գաւառների վրայ յարձակում փորձել երկարացնելու Միջագետքի եւ Պարսկաստանի բրիտանական

բանակներին, փչացնելու համար բնդափշտ դժբախտ Ասիայում դեռ եւս մնացած մի քիչ ազատութիւնը եւ անկախութիւնը:

Այս նկատումներով եւ հայ զինուորների անբնդատ յարձակումներն էլ, որ մեզ պարտաւարեցին եռանդուն կերպով շարժել մեր երկրի դէմ: Բայց, ցանկանալով արևմտահայրեան վերջ տալու համար սրեւիցէ առիթ ձեռքից չփախցնել, խնդրում ենք Երեսնի կառավարութիւնից այս յայտագիրը նկատել սրպէս խաղաղութեան վերջնական առաջարկ Թիւրքիոյ Մեծ Ազգային խորհրդի կառավարութեան կողմից: Որպէսզի հաշտութիւնը կայանայ, բաւական է, որ Հայաստանը մեզ իրական երաշխիքներ տայ, թէ այսուհետեւ նա մեր դէմ սրեւիցէ ագրեսիւ գաղափար չէ սնուցանելու եւ դադարում է Արևելքում Անգլիայի կապիտալիստների առաջապահը լինելուց: Մենք պարտաւոր ենք հայ ժողովրդին միեւնոյն տեսակ ապահովութիւններ տալ եւ խնդրում ենք այս մասին սկսել անմիջապէս խաղաղութեան բանակցութիւններ: Յետագայում սր մեր չափաւորութիւնը եւ մեր խաղաղասիրական զգացումները կատարելապէս պիտի զմտաւորեն, խնդրում ենք Պարսն նախարար, ընդունել ամենարձր յարգանքներով հաւաստիքը:

Արտաքին Գործերի Ժողովրդական Կոմիտար՝  
ԱՀՄԷՏ ՄՈՒՆԹԱՐ

*Այս զրուիւնը առաջ բերինք ամբողջութեամբ, որովհետեւ  
ան բնորոշ է իր ճոռամարտն սճով և կեղծութեամբ ու կը պարու-  
նակ էր մէջ այն նախագասութիւնները, զոր թուրքերը կը սիրեն  
կրկնել Եւրոպացիներուն առջև, որոնք անոնց վրայ երբեմն տպա-  
ւորութիւն կը թողուն:*

*Ինչ յաճախ պատահած է լսել շատ նշանաւոր Եւրոպացիներէ  
նոյն մտքերը թուրքերու մասին, որոնք արտայայտուած են այս  
զրուիւնն մէջ: Ես կրնամ բերել, օրինակ, Սորպուիի Հանրաժա-  
նօթ փրոֆեսէօր Օլարի սնունը, որ Մարգու և Քաղաքացիի իրա-  
ւունքներու պաշտպանութեան գլխաւոր կոմիտէի անդամն է և կը  
Հաստատայ թուրքերու վարմունքի այդ զրոգապատճառներուն:*

*Վերոյիշեալ զրուիւնն Հայկական կառավարութիւնը պատաս-  
խանց՝ առաջարկելով սկսել բանակցութիւնները և նշանակել իրենց  
ներկայացուցիչները: Հայ զինուորական Հրամանատարութիւնը եւս  
Նոյեմբեր 5ին առաջարկեց թուրք Հրամանատարութեան՝ գինաղա-  
պար:*

*Նոյեմբեր 6ին թուրք գլխաւոր Հրամանատար Քեազիմ Կարա-*

րեֆեր փաշան համաձայնութեամբ պատասխանեց զինազապարի մասին և իր կողմէ առաջարկեց ծանր պայմաններ, որոնցմէ զլիսաուրներն էին Ալեքսանդրապոլի բերդի և կայարանի զինուորական գրաստանը, հայկական զորքերու հետացումը 15 վերստ Արփաշայ գետի գծէն, Ալեքսանդրապոլ քաղաքի շուրջը 9 վերստ հեռաւորութեան վրայ գանձուած հողամասի գրաստանը և այլն: Այս գրութիւնը պատասխանի համար ժամանակամիջոց կու տար մինչև Նոյեմբեր 7ի առաւօտեան ժամը Տր:

Հայկական կառավարութիւնը ընդունեց այդ պայմանները: Նոյեմբեր 8ին վարչապետ Հ. Օհանջանեանը առանձին գրութեամբ հաղորդեց Էնկիւրիի կառավարութեան իր ցանկութեան մասին ամուր համաձայնութեամբ հաստատել ըստկամական յարարներու թիւններ՝ մասնանշեւոյ, որ Հայերը «չէին ծառայում ոչ ցարիզմին, ոչ իմպերիալիզմին, այլ միայն ձգտում էին դէպի իրենց սեփական ազատագրումը»: Իրրև Խորհրդածոցոյի վայր՝ Հայաստանի կառավարութեան կողմէ կ'առաջարկուէր Ալեքսանդրապոլը:

Կր թուէր, թէ ամէն ինչ պատրաստ էր խաղաղութեան բանակցութիւնները սկսելու համար: Սակայն, զործր ուրիշ ընթացք ստացաւ: Նոյեմբեր 8ին թուրք զլիսաուր հրամանատար Քեաղիմ կարաբէրի փաշան փոխեց զինազապարի պայմանները՝ զարձնելով անոնք շատ աւելի ծանր և բացատրելով այդ այն բանով, որ առաջին պայմանները ինքն էր մշակած, իսկ այժմ առաջարկուած պայմանները թելադրուած են Էնկիւրիի կառավարութեան: Նոր պայմանները ևս թէն էին՝ անոնք կը պահանջէին հայկական նոր հողամասերու գրաստան և հայ զորքերու նահանջը գէղի Հայաստանի խորերը:

Հայաստանի կառավարութիւնը հնարաւոր չհամարեց ընդունել զինազապարի նոր պայմանները և Նոյեմբեր 10ի գրութեամբ առաջարկեց դուժարել խաղաղութեան խորհրդածոցոյի Ալեքսանդրապոլի մէջ, այն պայմաններու հիման վրայ, որոնք արդէն ընդունուած էին հայկական կառավարութեան կողմէ զինազապարի համար: Նոյն օրը Քեաղիմ Քարաբէրի փաշայէն պատասխան ստացուեցաւ, թէ «Քաֆի որ Հայաստանի կառավարութիւնը չ'ընդունիր Էնկիւրիի կառավարութեան պայմանները, ոմ ստիպուած է վերսկսիլ պատերազմական գործողութիւնները»: Նոյեմբեր 11ին Հայաստանի կառավարութիւնը պատասխանեց՝ խորին ցաւ յայտնելով թուրքերու վերջին գրութեան առթիւ և, այնուամենայնիւ, յոյս յայտնելով, էլք մը կը գտնուի, որ կը բաւարարէ «երկու ժողովուրդների շահերը եւ պատիւը»:

Այսպէսով զինուորացորդը շկայացաւ : Բայց Նոյեմբեր 10ին, երեկոյեան, Երևանի մէջ ստացուեցաւ Էնկիւրիի կառավարութեան մէկ հագորդագրութիւնը, որուն մէջ ան կը ներկայացնէր գլխաւոր կէտերը ո՛չ թէ զինուորացորդի, այլ Թուրքիոյ և Հայաստանի միջև իրենց առաջարկելիք գաշնուորի :

Այս գլխաւոր կէտերը այնպէս էին, որ Հայաստանի կառավարութիւնը հնարասը շահմարեց բնդունիլ գանձեք՝ գտնելով, որ ատով վերջ կը գրուէր Հայաստանի անկախ գոյութեան :

Քանի որ այդ պայմանները կազմեց հետաքրքրութիւն կը ներկայացնեն. մէջ կը բերենք գանձեք ամբողջութեամբ .

Արտաքին Գործոց Ժողովրդական կոմիսար Աճմէտ Մուխթարի հետապնդը .

8 Նոյեմբեր 1920 թ. Անգորա

Հայկական Հանրապետութեան Արտաքին Գործերի

Նախարարութեան, Երևան

1.— Հայ-բրեւական սահմաններէ հարցը վիճակագրական եւ հանրաժողովի հարց է լինելու, համաձայն ճախագահ Ուիլսոնի եւ բոլշեւիկներէ հաշակած ինքնարշտան սկզբունքներէ : Բոլոր վիճելի շքրջաններէ ազգաբնակչութիւնները պիտի հրաւիրուին որոշելու իրենց քաղաքական ապագան : Նրանք կարող են, առանց ոեւէ մէկից կախում ունենալու, վնտիլ իրենց անկախ պետութեան կազմը եւ կամ յայտնել, թէ երկու երկրներէց որին են կցուում : Ձեր ժողովրդի կատարեալ ազատութիւնը ապահովելու համար, մենք ընդունում ենք, որ վիճելի շքրջաններէ պահպանութիւնը լինի, մինչ այդ, մեր երկրներէ ժանդարմերական մասերով : Այդ հանրաժողովը լինելու է, ի հարկէ, որքան կարելի է շուտ : Անգորայի կառավարութիւնը անկեղծ եւ խոր համոզումով ունի, որ այս ձեւի լուծումը բուն արդարութիւնն է եւ համապատասխան բոլոր մարդկութեան շահերի, որով նաեւ հայ եւ բուլք ժողովրդներէ, որոնք ապրում են վիճելի հողամասերում : Սակայն, դժբախտաբար, մենք կարծում ենք, որ Արեւմտտի ինքնիշխանութիւններին, մահաւանդ Անգլիայից հաճելի լինելու համար Երեւանի կառավարութիւնը կը դիմադրէ այս ձեւի լուծման, որը մեծ վիրաւորանք է հասցնում Ամերիկայի եւ Ասիոյ ժողովրդներէ հանդէպ, Արեւմտտի պաշտպաններէ կողմից քաղաքացիական կռիւններին :

2.— Թուրքիան յանձն է առնում իր տրամադրութեան տակ եղած բոլոր միջոցները տալ իր հարեւաններին, որպէսզի նրանք կարողանան կատարել անկախութեան եւ անկախութեան մէջ գործնական:

3.— Մենք մեր միջոցներով կ'օգնենք Հայաստանի պարեմաւորման եւ երկրի մէջ տնտեսական նորմալ դրութեան հաստատման:

4.— Երկու կողմերը յանձն կ'առնեն ազատ անցք տալ իրենց երկարաւիճակներով եւ հաղորդակցութեան բոլոր մասնապարհներով միւս կողմին պատկանող անձնային եւ սպորտային եւ արգելք չեն յարուցանելու միւս կողմին ծովի, ինչպէս նաեւ ուրիշ երկրների միջեւ եղած տրանզիտի դէմ:

5.— Թուրքիան յանձն է առնում վերաբնակեցնել իրենց օջախներում համաշխարհային պատերազմի պատճառով իրենց հողամասերից ցաղթող Հայերին եւ տալ նրանց ամենաազաւակարբութեամբ երկրներում ցեղային փոքրամասնութեանց արուած ամենալայն իրաւունքները:

6.— Թուրքիան պահանջում է, որ Հայաստանը նրա անկախութեանը համար պէտք է եղած երաշխիքները տայ: Մեր պատուիրակները սպասում են Ձեր բանակցողներին Ալեքսանդրապոլում: Այս վերջինները պէտք է ունենան իրենց հետ բանակցելու եւ հաշտութիւնը ստորագրելու համար պէտք է եղած լիազօրագրերը:

7.— Հաշտութեան բանակցութիւնների ընթացքում թշնամութիւնները դադարեցնելու գինադադարի պայմանները Ձեզ կը հաղորդուեն մեր Արեւելեան մակտի ընդհանուր հրամանատարի կողմից:

Այսուամբ Պոլսի ժողովրդական կոմիտէն  
ԱՀՄԷՏ ՄՈՒՆԹԱՐ

*Պորհրդարանի նիստին այս պայմանները կտրուել ենք՝ վարչապետը յայտարարեց, որ «Հայաստանի պատիւը եւ շահերը» թոյլ չեն տար ընդունել պահանջ:*

*Ահա Հ. Սահմանեանի արտասանած խօսքերը .—*

«Դուք տեսնում էք արդէն. քէ ինչպէս մեր հակառակորդները տեսածները եւ զարմեծը չեն համապատասխանում իրար: Այն ժամանակ, երբ մենք ընդառաջ ենք զնում իրենց իսկ առաջարկած զինադադարի պայմաններին եւ անմիջապէս գործադրում, Որանք մէջ եմ քերում նոր պահանջներ. սրանց կատարումով Հայաստանը պիտի կիսուի, զինարափսի եւ ինքնապաշտպանութեան միանգամայն անընդունակ դառնայ: Այդ բարբի հետ Որանք չեն մոռանում ընդգծել, որ Հայաստանը ապահովութեան երաշխիքներ պիտի տայ Թիւրքիային. այդ նշանակում է, որ հետագայում եւս պիտի նոր պահանջներ դրուին եւ այս անգամ զուցէ Հայաստանի ոչնչացման խնդիրը հրապարակ բերուի, եւ հէնց այդ նպատակով էլ Անգորայի կառավարութիւնը շարժել է իր բանակները Հայաստանի վրայ:

Այսպիսով հայ ժողովուրդը կանգնած է ծանր փորձութեան առջեւ, նա կա՛մ պէտք է կոսուի կա՛մ անխնայ մորթոտուի Տանիկների ձեռքով:

«Կառավարութիւնը, սպառեցիւ բոլոր խաղաղ միջոցները. կրկին փարել է գէնիին, սրովհետեւ երկրի ու ժողովրդի փրկութեան համար ուրիշ ելք չկայ»:

*Պորճրպարանի ծափահարութիւններով ընդունեց վարչապետի խօսքերը: Պատերազմական գործողութիւնները վերսկսան, բայց այս անգամ աննք տեւեցին միայն մէկ շաբաթ:*

*Չինուորական իշխանութիւնները, զինուորական նախարարը, կառավարութիւնը, Պորճրպարանի անգամները օր աւուր կը համոզուէին, որ անսպասելի աւելի երկար շարունակել պատերազմական գործողութիւնները: Դիմադրական ուղին մեր գործերուն մէջ ինկած էր, եւ պէտք էր նորէն մտածել հաշտութեան մասին:*

*Իրերու ճշգրիտ պիճակը լիովին եւ ամէն կողմէ պարզելու համար՝ կառավարութիւնը պիճեց հետեւեալ քայլերուն, նախ՝ հարցունքներ ուղղել զինուորական իշխանութիւններուն մեր զորամասերու տրամադրութեան եւ կոսուելու ընդունակութեան մասին, երկրորդ՝ սկսաւ պատրաստել խաղաղութեան բանակցութիւնները Թուրքիոյ հետ, եւ երրորդ՝ խորհրդարանական Փրակցիաներու մասնաւոր խորհրդակցութեան մէջ պեկուցեց ճակատի խիստ խուճապային վիճակի մասին:*

Տրակցիաները իրենց կողմէ չորս պատգամաւորներէ բաղկացած յատուկ յանձնախումբ մը ուղարկեցին Ալեքսանդրապոլ այնտեղի գրութեան Հեռ ծանօթանալու համար: Այդ յանձնախումբին կը մասնակցէր նաև նախկին վարչապետ Յ. Քաջազնունին:

Զինուորական նախարար Ռ. Տէր Մինասեանը, այս շրջանին, գրեթէ ամբողջ ժամանակ կը գտնուէր ստպմանակառի մօտ Ազին կայարանը և գիտէր, որ իրերու գրութիւնը մօտ է ստպմանակայանը գտնուելու: Ռազմաճակատի գրութեան մասին ստացած բոլոր տեղեկութիւններն ալ վերին տասիճանի վճատեցուցիչ էին: Թշնամին կ'առաջանար Ալեքսանդրապոլի վրայ: Կարսի նահանգէն Հայ փախըստականները կը թափուէին Ալեքսանդրապոլ: Անհրաժէշտ էր վճռական թայլ բնել:

Նոյեմբեր 10ին, երբ Թուրքերը աստջորկեցին նոր, աւելի ծանրը պայմաններ, ևս կազմակերպ էի գտնուէր ընդունելու, բայց, ինչպէս ընթերցողը տեսաւ, կառավարութիւնը ևև Պորճրդարանը պատերազմը շարունակելու կողմն էին: Շատ լուս կը յիշեմ այն խորհրդակցութիւնը, որ կայացաւ Նոյեմբեր 10ի գիշերը ժամը 3ին: Կլիսասը հրամանատարի սպայակապի գահլիճին մէջ: Ինձ արթնցուցին գիշերը ժամը 2ին և հրաւիրեցին խորհրդակցութեան, որուն ներկայ էին կառավարութիւնը, սպարապետը, սպայակապի պետը, խորհրդարանի նախագահը և ևս: Կառավարութեան նախագահը գեկուցեց ժողովին Թուրքերու նոր պահանջներու մասին: Տեղի ունեցաւ մտքերու փոխանակութիւն: Ապա նախագահը հարց գրեւ՝ ընդունի՞ր ի՞նչ մերժել Թուրքերու պահանջները: Ժողովի բոլոր անդամները, բացի ինձմէ արատայտուեցան այն մտքով, որ պէտք է մերժել պայմանները և շարունակել պատերազմը: Այդ սրուումն էր, որ գեկուցեց վարչապետը Նոյեմբեր 11ի Պորճրդարանի նիստին: Երկար ճառի մը մէջ ևս վճռականապէս սրաշարանեցի այն մտքը, որ պէտք է ընդունիլ պայմանները և անմիջապէս կնքել հաշտութիւն: Ես ըսի մօտաւորապէս հետեւեալը.

«Զօրքերի եւ ժողովրդի դրութիւնը Հայաստանում այնպէս է, որ պատերազմի շարունակութիւնը աւելի եւս կը ծանրացնի մեր երկրի վիճակը: Զօրքը չի կուտում: Ազգաբնակչութիւնը փախչում եւ կորչում է նեղուրիւններից, ցրտից ու սովից: Թշնամին մօտեցում է Ալեքսանդրապոլին, որը այս օրերս կ'ընկնի նրա ձեռքը: Միւս կողմից սպառնում են բաշխիկները: Անկարելի է կուտել երկու նպատկերի վրայ: Ես կարծում եմ, որ յշմամբ կը մօտեցայ Երեւան»

նին: կառավարութիւնը եւ Պարլամենտի անդամները կը բողոքեն քաղաքը, իսկ ժողովուրդը կը մնայ անպաշտպան: Կը սկսուի խուճապ եւ կատարեալ քայքայում: Անկի յաւ է անել ամխաւափելի զոհաբերութիւններ, քանի ղեռ բայրալիմ ուշ չէ, քան թէ կորցնել ամէն ինչ: Հիշտ է, Թուրքերի պայմանները ծանր են, բայց չկան բացարձակապէս տուճալներ, սր մենք պիտի կարողանանք նրանցից սգաւտուել»:

Պատերազմական գործադուլները վերսկսուելէն մէկ քանի որ անցած՝ արդէն բարձր համար պարզ դարձաւ սր հաշտութիւնը պէտք է կնքել ինչ պնտի ալ սր բլրայ: Անցան Նոյեմբեր 12, 13, 14, 15ը: Այլքրանդրապոլի շտաբը Լոյսը գործերու հրամանատար Սեպուհի փորձեց կանգնեցնել Թուրքերու յառաջխաղացումը, բայց անյաջող: Դրան կը պահէր Թուրքերը Սուրմալիի ճակատին, բայց կը խնդրէր օդնական գործ: Թուրքերը կը սեղմէին Նախիջևանի կողմէ: Այս պայմաններու մէջ Նոյեմբեր 16ին կառավարութիւնը նորէն քննութեան առաւ հաշտութեան խնդիրը Լուրնէց բնպոնի Թուրքերու պայմաններն ու սկսիլ վերջնական բանակցութիւններ խաղաղութեան մասին: Նոյեմբեր 17ին կառավարութիւնը որոշում կայացուց խնդրել ինձ ստանձնել բանակցութիւններու վարումը Թուրքիոյ Հետ, իսկ ինքը միջոցներ ձեռք առաւ ղեկնաղաղար կայացնելու թուրք ղեկնարական հրամանատարութեան հետ: Այդ նպատակին համար բնորուցեցաւ նախարար Սարգիս Արարատեանը, որ՝ ուղեկցութեամբ հայ սպայ Սան Կոթուրակի գնաց Այլքրանդրապոլ: Նոյեմբեր 18ին ստորագրուեցաւ ղեկնաղաղարը. Թուրքերը աւելի սաստկացուցին իրենց պայմանները՝ պահանջելով թնայանօթիներ՝ իրենց ռումբերով Լուրնէներով: Այդ բոլորը յանձնուեցան անոնց Նոյեմբեր 22ին:

Ընդունելով կառավարութեան առաջարկը՝ Թուրքերու Հետ հաշտութեան բանակցութիւններ վարելու մասին՝ Լուրնայի ունէի նախ Լուրնայի սպայ, թէ ինչպիսի աջակցութիւն կրնայ սպասել Հայաստանի Դաշնակիցներէն, այսինքն՝ Սեպուհի, Տրանսսայն Լուրնայի: Ատոր համար պէտք էր երթալ Թիֆլիս: Նոյեմբեր 17ին ղիշերուայ ժամը 2ին Հ. Հ. կառավարութիւնը համաձայնութիւն տուաւ իմ տեսակէտին, Լուրնայի 18ին առաւօտեան ժամը 6ին Լուրնայի Թիֆլիս, ինքնաշարժով, Դիլիջան-Ղարաքիլիսայի վրայով:





Ռուբեն Յեւ Ալեանեան

*Յուրտ առատու էր: Ամբողջ ճանապարհը ծածկուած էր խոր ձիւնով: Աչքի առաջ տնկնարով, որ Քիֆլիւսի մէջ պէտք է տայի Հայաստանի բազմակիսն դրութեան լիակատար պատկերը, եւ Հեռս առի գինուորակիսն նախարար Ռ. Տէր Մինասեանէն Հետեւեալ ստոյգ տուեալները որոնք, ի դէպ, պարզ կ'ապացուցանեն անկախ Հայաստանի պատմութեան վերջին օրերով Հետաքրքրուողներուն, թէ Հայաստանը այն ժամանակ չգիտայուած էր թշնամիներով եւ կը տանջուէր տնկաւասար կտուի մէջ:—*

Հայաստանը ունի չորս նակատ, բոլորն էլ պատերազմական վիճակում — Կորս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջեանի եւ Դիլիջան-Ղազախի:

Ինչպէ՞ս են բաժնուած դրանց մէջ Հայաստանի գինուորակն ու ժերը. — Կորս-Ալեքսանդրապոլի հակառուս կանգնած են հետեւեալ գորամասերը. խօսքը վերաբերում է կանոնաւոր զօրքերին եւ յատկապէս հետխառն զօրքերին: Այդտեղ են առաջին գունդը (Մագմանեան)՝ 1500 սուիսն, 4րդ գունդը (Միքիմանեան)՝ 2000 սուիսն, 5րդ գունդը (Շաղուբաքեան)՝ 700 սուիսն, 6րդ գնդի մի բատալիոն (ԽշխանեանԳնդունի)՝ 800 սուիսն եւ 8րդ գունդ (Տիգրան Բաղտասարեան)՝ 1500 սուիսն, ընդամէնը 7200 սուիսն: Բացի դրանից կան նաեւ Սմբատի խմբերը:

Սուրմալուի հակառուս (Դրոյի մօտ) կան 9րդ գունդը՝ 2000 սուիսն, 8րդ գունդը (մի բատալիոն)՝ 1000 սուիսն եւ 7րդ (մի բատալիոն)՝ 700 սուիսն. Ղարաբաղի առանձին գորամասը (Գուրօ)՝ 800 սուիսն, ընդամէնը 4500 սուիսն եւ փոքրիկ գորամաս:

Նախիջեանի ուղղութեամբ կանգնած են՝ 3րդ գունդը 200 սուիսն, 2րդ գունդը (Երկաւ բատալիոն)՝ 100 սուիսն, ընդամէնը 3000 սուիսն:

Դիլիջան-Ղազախի հակառուս գտնուում է 6րդ գունդը (Մաքսիմի)՝ 2000 սուիսն:

Այս բուերի մէջ չեն մտնում հեծելազօրքը, կրետանին եւ յասուկ նպատակ ունեցող մասերը, ինչպէս սապէօրոններն եւ հեռագրական ջոկատները:

Այսպիսով բոլոր չորս ուղղութիւնների վրայ մեծք ունենք ընդամէնը 16.700 սուիսն: Բացի դրանից. Ջանգեղուքում գտնուում են 800 սուիսն, ուրեմն վերայիշեալի հետ 17,500 սուիսն:

Նրբուանում պահեստում մնում է 10րդ գունդը (Հալապեանի)՝ 1500 սուիսն, ընդամէնը, ուրեմն, 19,000 սուիսն:

Ընդունելով եւ միւս տեսակի զէնքերը — 6000 հոգի — ուրեմն գործող բանակում կանոնաւոր մարտական ուժեր կան — 25 հազար հոգի :

Աւելցնելով դրանց վրայ նաև բիկունճում ծառայողների, բեռնակիրների, կատապանների, սպայակոյտի, ատոդապահական սպասաորնների — ընդհանուր թւոյի 30 տոկոսը, կր ստանանք բանակի ամբողջ կազմը, 34,000 հոգի, իմբերի հետ միասին — մօտ 40,000 հոգի :

Կանոնաւոր իրական ուժեր կարս—Ալիքանդրասյոլ ուղղութեան վրայ պէտք է ընդունել 4 դիվիզիա, իւրաքանչիւրի մէջ 3000 հոգի, ընդամէնը 12,000, Սուրմալուի ուղղութեան վրայ — 1 Քրքական դիվիզիա 3000 հոգի, որը սպառնում է երեսնին, Նախիջեանի ուղղութեամբ բաշքեիկիան ուժեր մօտ 2000 հոգի, եւ Ղազախ—Գիլիջանի ուղղութեամբ — Ատրբէջանցիք եւ բաշքեիկներ : Այդ կանոնաւոր զօրքերի թիւր պէտք է ընդհանուր առմամբ հաշուել 20,000 սուիմ :

Երէ դրանց աւելացնենք ոչ—կանոնաւոր ժողովրդական ուժերը, Քրդերին եւ քչնամի գինւած ազգաբնակչութիւնը, — այդ դէպքում թշնամու ուժերու թիւր պէտք է որոշել չորս ուղղութիւնների վրայ ոչ պակաս 30,000 հոգուց : Ահա մրցակից կողմերի անկադմնապահ քաւահամարը :

Սրա հետ միաժամանակ պէտք է նկատի ունենալ Հայաստանի մեկուսացած դրութիւնը, նաւթից, նաւահանգստից զուրկ լինելը, (որովհետեւ ամբողջ հողարդակցութիւնը Վրաստանի եւ Եւրոպայի հետ կախուած էր մի մագից — երկարաւղային գծից, որը շուտով կտրուեց) : Թնդանօրի ռումբերի պաշարը վերջանում է : Յրտերը աւելի սաստկանում են : Հայաստանը շղթայուած է երկար է օդակով : Գրաւուած եւ վտանգի ենթարկուած շրջաններից ազգաբնակչութիւնը հաւաքուած է Հայաստանի սրտի մէջ :

∴

*Ահա այսպիսի տուեալներով էր, որ լոյս 19 Նոյեմբերի գիշերը Հասայ Թիֆլիս : Նոյեմբեր 19ին այցելեցի անգլիական բարձր քոմիտտը գնդ . Ստոքսին, Ֆրանսական միսիսնի պետ գնդ . Նոնանկուրին եւ իտալական ներկայացուցիչ գնդ . Գարբային, ինչպէս եւ յունական ղեկավարին : Շօշափելի օգնութիւն շատացանք ոչ մէկ տեղէ : Գնդ . Ստոքսը եւ միւս քոմիտտները ուղարկեցին իրենց կառավար*

բութիւններուն շտապագական հեռագիրներ եւ Հարցուցին թէ ինչո՞վ կրնան օգնել Հայկական կառավարութեան: Լորտ Քրոզընը անդիլահան կառավարութեան անունով պատասխանեց այն մտքով, որ «աւելի լաւ է հաշտուել թուրքերու հետ քան յետ Բալքաններու»:

Ահա այդ պատասխանը, սպարկուած Ֆորէն Օֆիսէն Նոյեմբեր 20ին անդիլահան բարձր բովարտի անունով, Թիֆլիս.

«Պարզ է, որ մենք չենք կարող մասնակցել որեւէ համաձայնութեան բեմախոսութեան հետ, բայց մենք կարծում ենք, որ Հայաստանը ոչ մի ուրիշ բնաւայրիւն չունի, բանի որ Սովետական Ռուսաստանի հետ զաշտագիրը անկասկած կը լինի աւելի վատ ելք»:

Այդ էր անոր խորհուրդը, որ սպարկուած թերազրուած էր անդիլահան շահերէն: Վրաց կառավարութիւնը չկոչուած էր պահել: Յոյն կառավարութիւնը միայն համակրութեամբ կը պահանջար — Վենիզելուսը արդէն իշխանութեան գլուխ չէր: Ֆրանսական եւ իտալական կառավարութիւնները համակրութիւն յայտնեցին, բայց ոչինչով օգնել չէին կրնար կամ չէին ուզեր:

Բնորոշ է, որ սպարկուած հեռագիրները չափազանց բացասական հետեւանք ունեցան ուրիշ կողմէ: Ճիշդ նոյն օրերուն (1920 թ. Նոյեմբերի վերջերք) ժրնել տաջին անգամ գումարուած էր Աղղերու Լիկան եւ այնտեղ Հարց էր դրուած Հայաստանը եւ Վրաստանը բնաւայրու մասին Աղղերու Լիկայի կազմի մէջ: Հայաստանի ծանր վիճակի մասին նոր ստացուած տեղեկութիւնները ստիպած էին անդիլահան, Ֆրանսական եւ իտալական ներկայացուցիչներուն ժրնել շրջապատի Հայաստանը եւ Վրաստանը Աղղերու Լիկայի մէջ, սրագոյլի Լիկայի կանոնադրի 10րդ յօդուածի համաձայն ստիպուած չլլային օգնութիւն հասցնել Հայաստանին եւ Վրաստանին: Այսպէսով, ամենատարագոյլի եւ ծանր բողբին Հայաստանը լրտնեցաւ եւ գիտակցարար ձգուեցաւ միմակ: Թուրքերը տեսան այդ, հասկացան, եւ բարբ կարակացութիւնները ըրին յօդու իրենց եւ ի մաս հայաստանի:

Այդ մասին իրենք իսկ Թուրքերը ըսին ինձ ի զիմաց արտաքին գործերու նախարար Բեգիբ Սամի բէյի եւ զօրավար Քեաղիմ կարաբէրի մաշայի:

Հասկնալով իրերու գրութիւնը Թիֆլիսի մէջ՝ Նոյեմբեր 20ի Երեկոյան շտապ վերագործայ Երեւան: Նոյեմբեր 2ի առաւօտեան

արդէն Ղարաքիլիսա կի, և այնուպէս ինքնուշարժով շարունակեցի ճամբաս և հասայ Երեւան Երեկոյեան ժամը 11ին: Կը յիշեմ որ մեր ինքնաշարժը կ'անցնէր ձիւնի և ցեխի մէջէն: Եւ Խորհրդարանի անգամ 1 և 2-ը Զարաֆեանի հետ կի, զոր վերջուցեր կի հետս Գիլիջանէն: Ժողովուրդի ահալին բազմութիւնը իր տնային իրերով ու անասուններով, թափուած խոր ձիւնի և ցեխի մէջ, փակած կը ճանապարհէր: Կային ձիւնի մէջ ինկածներ, մեռածներ, ցուրտէն սառածներ:

Փախստականներու խումբերուն կ'ուղեկցէին ճակատէն հեռացող զինուորները հրացաններով և նոր անդլիական հարուստով: Ժողովուրդը կ'աղբակը խաղաղութեան մասին: Այդ խօսքը բոլորի շքեթունքներուն կը:

«Պ. Խատիսեան, Խաղաղութիւն, ի սէր Աստուծոյ Խաղաղութիւն տաւէ՛ք մեզ», կը լսէի ամէնրէն:

Ժողովուրդը վերջին ծայր յայնտնութեան կը հասած: Միւս կողմէն անոր դիտակցութեան մէջ աննկատելի կերպով կը մտնէր հաւատ, թէ կու գան «Ռուսերը» և կ'օգնեն Հայաստանին:

Այստեղ պէտք է յիշեմ հետաքրքրական միտք մը, որ լսեցի ճամբան, խումբ մը գիւղացիներէ և զինուորներէ.

«Պ. Խատիսեան, ինչո՞ւ այս Ռուսները այժմ, ասում եմ, որ ընչ Ռուսներ եմ դարձել»:

Բնածին ժողովրդական հողով սպարանակութիւնը կ'ըմբռնէր տարբերութիւնը այն Ռուսերուն, որոնց հետ միասին ինք կուր կը մղած 1914—1918 թ. Թուրքերու պէմ, և այս Ռուսերուն, որոնք Թուրքերու հետ միասին կուր կուր գային Հայաստանի պէմ: Մեր ժողովուրդը չէր կրնար մարտել այդ փոխախտութիւնը Ռուսերու պատմական զերի Արևելքի մէջ: Անոր համար ուսուցարներու ընթացքին եղած կը իր բարեկամն ու միեւնոյն ժամանակ թուրքին թշնամին: Իսկ այսօր, ընդհակառակն, սն զարձած կը Թուրքերու բարեկամ եւ իր թշնամին: Եւ մեր ժողովուրդը չէր հաւատար այդ փոխախտեանն ու կը կարծէր որ բոլշևիկները ինչ սը «սուրիշ Ռուսներ» են:

Բոլշևիկները և անոնց ետևէն նոյնիսկ Ռամկոմարները կ'ըսեն, թէ Գաղնակցականները հասցուցին Հայաստանը սղորհրդական դիճակի 1920 թ. վերջը, իսկ բոլշևիկները Եկան և վրկեցին Հայաստանը Թուրքերէն: Բացարձակապէս ստու է այս: Եւ քայլ առ քայլ և օրը օրին սուսումնասիրած եմ արտաքին քաղաքականութեան բոլոր աղղեցութիւնները և փաստերը: Եւ եկած եմ այն անխախտ

Համայման, որ Դաշնակիցները լքեցին Հայաստանը, որ Թուրքերը տուկ լայնորէն օգտուեցան, բայց Թուրքերու զլխաւոր զինակիցները բոլշեւիկներն էին, որ սճ է հարատւութիւն տաին Թուրքերուն յարձակելու Հայաստանի վրայ: Այդ՝ անփիճելի փաստ է: Փաստ է նոյնպէս, որ իբար օյնել էտքը իբար մէջ բաժնեցին Հայաստանը: Եւ բոլշեւիկները բրին այդ՝ ո՛չ թէ առանձին թշնամութենէն զէպի Հայաստանը, այլ զրգուած իրենց «Համաշխարհային» քաղաքականութենէն, որուն համար անոնք պէտք կը զգային շահելու Թուրքերու բարեկամութիւնը՝ զհարկերով Հայաստանը: Եւ բոլշեւիկները Թուրքերուն առին այն, ինչ որ անոնք կ'ուզէին — Կարսը, Սուրմալուն, Արասհանը, միացածը, ինչ որ Թուրքերուն պէտք էր, այսինքն՝ Հայերով բնակուած շրջանները, Ռուսերը առին:

\*\*\*

Այսպիսի սպաւորութիւններով Եկոյ երևան, Նոյեմբեր 20ին, Երևկայեան ժամը 11ին Եւ ուղղակի զայի դաշնակցական Փրակցիայի ժողովին, որովհետեւ Ելենովկա կայարանը ինձ կը սպասէր հեռախօսային տեղեկութիւն, որով կը հաղորդէին թէ կը խնդրեն Երևան զալով՝ ուղղակի Երթալ Խորհրդարան: Եւ զեկուցեցի իմ ուղևորութեան մասին Եւ իմացայ, թէ զինապաղարը ստորագրուած է Եւ թէ Երկու օր յետոյ պէտք է Երթալ Ալեքսանդրապոլ, որ ընտրուած էր խաղապութեան վայր:

Տրակցիայի նոյն նիստին վարչապետ Հ. Սահմանեանը յայտնեց իր հրամարական տալու որոշումը Եւ խնդրեց Փրակցիային մտածել նոր վարչապետի մասին: Խորհրդարանի անդամներու տրամադրութիւնը համանման էր վարչապետի կարծիքին, որովհետեւ կը թուէր, թէ Թուրքիոյ Հետ խաղապութեան բանակցութիւններ վարելու համար պէտք է ո՛չ այն կոտոփարութիւնը, որ պատերազմ մղած էր անոր դէմ:

Գիշերը ուշ տունն ցրուեցանք:

Միւս օրը, Նոյեմբեր 21ին Եւ զեկուցեցի կոտոփարութեան նիստին այն նախապատրաստական քայլերու մասին, որոնք անհրաժեշտ էին խաղապութեան խորհրդավոլին համար: Պէտք է բուել, թէ Եւ արդէն նշանակուած էի բանակցութիւնները վարող պատուիրակութեան նախագահ, իսկ նախապատրաստական բնէկիքներ շատ կային. պէտք էր որոշել պատուիրակութեան կազմը, պաշտօնէութեան

թեան ցուցակը, որոշել հրահանգներ, որոշել յարարերու թիւններու եղանակը, նախնական խօսակցութիւն ունենալ բուլղերիկներու ներկայացուցիչներու հետ: Այդ բոլորը պատեց երկու ամբողջ օր, նոյն օրեր 21 և 22: Եւ միայն նոյն օրեր 22էն 23ի դէտքը, ժամը 2ին, ամէն ինչ պատրաստել յետոյ, մեր պատուիրակութիւնը յատուկ գնացքով ճանապարհուեցաւ Ալեքսանդրապոլ:

Այս մասին հետեւեալ հետազոտող ուղարկուեցաւ Փարիզ Ն. Ն. Պատուիրակութեան.—

«Ամսոյս 18ին ստորագրեցիմք եօր օրուայ զինադադար թուրքիոյ արեւելեան ֆակտի հրամանատարի հետ: Մեր պատուիրակաւորիւրը խաղաղեանի ֆախագահութեամբ այսօր զմում է Ալեքսանդրապոլ կոնֆերանսի, արը բացուելու է այս ամսի քսան եւ չորսին»:

Պատուիրակութեան կազմը հետեւեալն էր.— նախագահ Ա. Պատրիսեան, Աբր. Գիւլիանդանեան (Ֆինանսներէ նախարար), Ստեփան Դորդանեան (կարսի նահանգապետ): Իբրև խորհրդականներ հրաւիրուած էին Պորհրդարանի անդամ՝ Վլասն Մինախորեան (սոց.—յեղ.—), բարձրագոյն դատական ստեանի անդամ Տիգրան Յովհաննիսեան, գնդապետ Ախոյեան և կապիտան Պիտրեան:

Բանակցութիւնները վարելու համար մշակուած էին հրահանգներ: Որոշուած էր այն նուազագոյն սահմանադիւր թուրքաց շայաստանի, որմէ աւելի կառավարութիւնը չէր ուզեր զիջումներ ընել: Բայց միւս կողմէ հրահանգ տրուած էր անպատճառ հաշտութեան գաշնազիր կնքել:

Այդպիսի հրահանգները, հարկաւ, պրած էին պատուիրակութիւնը ծանր պրոթեան մէջ. անհրաժեշտ զիջումներու մէջ որոշ սահմաններ պահել, բայց միեւնոյն ժամանակ նարարութիւն չունենալով զէնքի պրոթեամբ շարունակել պատերազմական գործողութիւնները՝ այնուամենայնիւ կնքել հաշտութիւն:

Լեզրանը և Մզիլանին, Պորհրդալին Ռուսիոյ ներկայացուցիչները հրաւիրուեցան շայաստանի կառավարութեան նիստին, որուն ներկայ էին նաև մեր պատուիրակութեան անդամները: Ես անձամբ կը ճանչնայի թէ՛ Լեզրանը և թէ՛ Մզիլանին: Լեզրանը կը յիշեմ զեռ իր աչակերտ եղած ժամանակէն: Իսկ Մզիլանին կը ճանչնայի քսան տարիէ ի վեր, երբ ան, իբրև բուլղերիկ մասնակցած էր պետական փոստի կողոպուտին, և ես, իբրև թիֆլիս թագաբի գործերը վարող մէկը, ասիթ անեցայ յետոյ տեսնել զինքը:

Մենք խնդրեցինք Խորհրդային Ռուսիոյ ներկայացուցիչներէն ազդեցութիւն գործ դնել Թուրքերու վրայ մեզ համար նպաստաւոր մտքով : Մենք ծանօթացուցինք Լեյբանը և Մզիլմանին մեր ցանկութիւններուն և պատասխան յանգինք խոստում օղնելու :

Այդ միջոցին էր, որ Լեյբանը թոյլտուութիւն խնդրեց մեր կատալարութենէն Ատրպէյջանէն Հայաստանի սահմանները մտցնել Երկու դունդ կարմիր գորգեր, սրպէսդի, ինչպէս ինքը կ'սէր, «աւելի իրական ուժ ունենար Թուրքերու հետ խօսելու համար» :

Այդ առաջարկը մեր կատալարութիւնը շրնդունեց, որովհետև կը վախնար, թէ այդ պիտի նշանակէ Հայաստանի պնուսրական զբաւում բուշուիկներու կողմէ : Նիստի մէջ սրտուեցաւ, որ խաղապարթեան պատուիրակութիւնը և Մզիլմանին Երթան Երևանէն Ալեքսանդրապոլ գտնապան պնացրներով և իրար Ետեւէ :

Նիստը վերջացաւ ցերեկը ժամը Կին : Մեր մեկնումը նշանակուած էր նոյն պիշերը ժամը Զին : Գոցինք կայարան, մութ ցորտ դիշերով, և ժամը Զին մեր պնացրը շարժեցաւ : Մեզմէ Երկու ժամ յետոյ ճանապարհուեցաւ հետեւեալ պնացր՝ տանելով Մզիլմանին : Մենք կ'երթայինք այն հաշուով, որ Ալեքսանդրապոլ հասնինք ուշ Երեկոյան : Բանն այն է, որ այդ ժամանակ Ալեքսանդրապոլ քաղաքը համարեալ տեղական բուշուիկներու ձեռքն էր : Միւս կողմէ Թուրքերու ներկայութիւնը շատ կը զրդուր հարեան Թաթարները : Մենք կ'ուզէինք տեղ հասնիլ տոսանց զարթեցնելու այդ Թաթարներու հետաքրքրութիւնը :

Մեր պնացրը հասաւ Ալեքսանդրապոլ Երեկոյան ժամը 10ին :

• •

Արդէն Նոյեմբերի կէսերուն Բարուի մէջ կազմուած էր Հայաստանի յեղկոմը (յեղափոխական կոմիտէն) Կասեանի նախադահուիթեամբ և մասնակցութեամբ Աբիս Նուրիջանեանի : Իսկ Նոյեմբեր 29ին բուշուիկեան գորգերը Ղապախէն մտան Իջևան (Քարաբանսարա) :

Սահմանն անցնելով՝ անոնք տոսանձին թուցիկով մը յայտարարեցին, որ իբր թէ Հայաստանի պիւզայիք և բանուորները կը խնդրեն իրենց օգնութիւնը դաշնակցական կատալարութեան ղէմ : Հայ բուշուիկներու Էսեւէն կու գային Ռուս Կարմիր զորքերը : Այս-



պէտով, բացի Թրքական զօրքերէն Հայաստանը կանդնած էր զէմ յանդիման ոտա բոլշևիկեան ուժերու որսնք կը գործէին տեղական ասորակջանեան մասերու հետ միասին:

Որպէսզի Հայաստանի գրութեան պատկերը լիակատար բլրայ, պէտք է բռննք, որ Վրաստան, թէև մէկ կողմէն կը ձգտէր կատարելապէս չէզոք մնալ Թուրքերու վերաբերմամբ, բայց միւս կողմէ չէր ուզեր թոյլ ապ սրել զաշնացիր կամ համաձայնութիւն կնքուի Հայաստանի և Թուրքիոյ միջև ի հաշիւ այն հոգամասերու, որոնց վրայ Վրաստանը աչք ունէր: Ահա այդ պարագան ցայց տուող գրութիւններէն մէկը.

11 Նոյեմբեր 1920. Ի՛ն 602:

Ղարափլիխայի շքանի քիլունիի պետ գորավար Արեշեանին:

Սրանով ուղարկում եմ Ձեզ ի տեղեկութիւն պատնէնր իմ գրութեան 11կց Նոյեմբերի Ի՛ն 600. Հայաստանում գործող քրքական ուժերի արեւելեան ֆակտի գլխաւոր հրամանատարի անունով:

ԶՕՐԱՎԱՐ ԿԱՐԱՆՈՎ

*Յետոյ մէջ է բերուած գրութեան պատճէնը.—*

Հայաստանում գործող քրքական ուժերի

արեւելեան ֆակտի գլխաւոր հրամանատարին:

Մանօթաբանով Ձեր Նոյեմբեր Տի գրութեանը Հայաստանի գրութաւոր հրամանատարի անունով գինադադարի պայմանների վերաբերմամբ, որոնց մէջ դուք շօշափում էք Թիֆլիսի նահանգի Բորչալուի գաւառը, որտեղ ըստ այդ պայմանների գինադադարի ժամանակը լրանալուց յետոյ կարող են բացուել պատերազմական գործողութիւններ (կէտ 5) եւ գինադադարի միջոցին իսկ դադարում է երկարուդային հաղարդակցութիւնը Սանսիին եւ Ալեքսանդրապոլ կայսրանների միջեւ (կէտ 3), — եւ. իբրեւ Վրաստանի Հանրապետութեան զինուորական ներկայացուցիչ Հայաստանում, յայտնում եմ իմ բողոքն եւ պարտք եմ համարում բացատրել, որ Բորչալուի գաւառի չէզոք գտնին Թիֆլիսի նահանգի նախկին սահմաններում Վրաստանի Ռուսկալար Հանրապետութեան կառավարութիւնը համարում է իր հողամասը, որի մասին նա վէճ է ունեցել Հայաստանի կառավարութեան հետ. եւ Խորհրդային Ռուսաստանի հետ կնքուած դաշնագրով

այդ հողամասը ճանաչուած է իբրև անվիճելի վրացական: Ուստի որբւէ յասկինոյքիւն Բորչալոյի գաւառի եւ նրա սահմաններում գտնուած երկարուղու վերաբերմամբ իմ կառավարու քիւնը կը համարի իբրև թշնամական վարմունք Ձեր կառավարութեան կողմից իր նկատմամբ:

Ձինուորական ներկայացուցիչ Վրասսանի  
Հանրապետութեան Հայաստանում՝  
ԶՕՐԱՎԱՐ ԿԱՐԱՆՈՎ

Ճիշդ է. ԳՆԻ. ՄԻԿԱԵՐԻՉԷ:

*Այսպէսով Վրաց կառավարութիւնը՝ հրաժարելով դործակցութենէ Հայաստանի հետ արտաքին թշնամիներու դէմ, կը յայտարարէ վիճելի գօտին իբրև անվիճելիօրէն իբր՝ հիմնաւորելով իր այդ «խրատունքը» Պորհրդային Ռուսաստանի ճանաչման վրայ: Վրաց կառավարութեան այս դիշատիչ ընթացքը ցոյց կու տայ, թէ մահացու ընդհանուր պատանդի առջև իսկ մեր հարևանները չկրցան քիչ մը աւելի հետատես քաղաքականութիւն վարել եւ հրաժարիլ փոքր բաներէ մեծ արժէքներու պահպանման համար:*

Ա Լ Ե Ք Ս Ա Ն Կ Ի Բ Ա Պ Ո Լ Ի Ի Բ Ա Ն Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Ե Ի Դ Ա Շ Ն Ա Գ Ի Ի Կ Ն Ք Ո Ի Մ Ը

Նոյեմբերի 24ի առաւօտեան ժամը 6ին մեր պատուիրակութիւնը հասաւ Ալեքսանդրապոլի կայսրանը, ուր թրքական զօրաբանակի զլխաւոր հրամանատար՝ Քեազիմ Կարարեքիր փաշայի ներկայացուցիչը դիմաւորեց, սղջունեց դայն և յայտնեց, որ ինքնաշարժները պատրաստ են պատուիրակները իրենց համար յատկացուած բնակարանը տանելու: Բնակարանը պատրաստուած էր սպայական շինութեան մէջ, որ կը գտնուէր քաղաքէն դուրս:

Անմիջապէս դաջինք բնակարան և առաւօտեան ժամը 10ին, կամենալով որքան կարելի է շուտով սկսիլ բանակցութիւնները, այցելութիւն տուինք Քեազիմ Կարարեքիր փաշային: Մօտ յիսուն տարեկան մտրղ մըն էր, որ բաւական ազատ կը խօսէր Փրանսերէն և, ինչպէս բոլոր թուրք պաշտօնեաներն ու զիւսնապէտները, արտաքստ շափազանց սիրալիր էր:

Մեր խօսակցութիւնը տեւեց մէկ ու կէս ժամ: Ինչպէս այդ առաջին տպաւորութիւնները, այնպէս ալ հետագայ բանակցութիւններուն ամբողջ ընթացքը ևս իր ժամանակին մանրամասն ներկայացուցած եմ Պոլսոյ հայ մամուլին և այնտեղ ալ հրատարակուած են

1921 թ. Յունուարին և Փետրուարին: Իսկ մեր պատուիրակութեան անդամ Առեփան Ղարաբեկյանը, Կարսի նախկին նահանգապետը, նըկարագրած է Քիֆլիսի «Աշակ» լրագրի մէջ՝ 22 և 23 Դեկտ. 1920 թ., թիւ 163 և 164: Սոյն գլուխի մէջ ևս ստիպուած եմ մասամբ կրկնել, մասամբ լրացնել այն, ինչ որ մամուլի մէջ հատորուած է Այլքսանդրապոլի բանակցութիւններու մասին:

Աստորական թաղաքապարական հարցերէն այն մասին, թէ ինչպէ՞ս ճանապարհորդեցինք և զս՞է ևն արդեօք մեր ընկալարանէն, Կարսը բեր փաշան ծանօթացուց մեզ թուրք պատուիրակութեան կողմին և ինչոք յայտնել հայկական պատուիրակութեան կողմը: Թուրք պատուիրակութեան մէջ կը մտնէին նախագահ, կամ ինչպէս ընդունուած է ըսել, առաջին պատուիրակ — զօր. Քեպոյիմ Կարսը բեր փաշա և Երկու անդամներ — էրզրումի ընդապետ Սալիստըլ և Անդրաբայի Ազգային ժողովի անդամ՝ էրզրումի պատգամատուր Նեջաթի ըէյ: Ինչպէս յետոյ տեղեկացայ, Թուրքերը գիտեմամբ մտացուցած էին իրենց պատուիրակութեան մէջ էրզրումի ներկայացուցիչները՝ ընդէտու համար Աւերի գաշնապրի անտրմէք ըլլալը իրենց աչքին, այն ինչ գաշնապրի զօրութեամբ և Ուիլսոնի իրաւարարութեան սրտամար էրզրումի կ'անցնէր Հայաստանին:

Ոտակցութեան սկիզբը Կարսը բեր փաշան ընդզմէց, որ Թուրքիան չի մտածեր սրեւէ յարձակողական գիտաստութիւններ Հայերու վերաբերմամբ, կը ցանկայ Հայաստանի բարգաւաճումը և այդպիսի տրամապարտութիւններով կը սկսի խաղաղութեան բանակցութիւնները: Բայց միեւնոյն ժամանակ նկատեց, որ ներկայ բանակցութիւնները կարելի էր սկսիլ շատ ատելի առաջ, եթէ միայն Հայաստանի կառավարութիւնը ընդատմած ըլլար այն առաջարկներուն, որոնք կ'ըսէ ինչպէս վերջին պատերազմի բոլոր սարսափներուն: Բայց քանի որ անցածը այլևս կարելի չէր փոխել, պէտք է խորապէս ներշնչուիլ այն գաղափարներով, որ անհրաժեշտ է ամուր հաշտութիւն կնքել Երկու հարեան պետութիւններու՝ Թուրքիոյ և Հայաստանին միջև: Թուրքիան իր կողմէ, ըստ Կարսը բերի, պատրաստ էր ամուր և Երկարատև հաշտութիւն կնքել Հայաստանի հետ: Ըս պատասխանեցի որ նայն է նաև հայկական կառավարութեան և հայ ժողովուրդի ցանկութիւնը և որ երկուստեք այդպիսի զգացմունքներով կարելի է կայուն հիմք դնել Երկու հարեան ազգերու խաղաղ կենակցութեան:

Անցնելով իր յարձակողականի պատմութեանը՝ Կարսը բեր

—մոչ վ՛զս Կնչւթթանհիտոոտր մվ մասս զզ՛ Մսթ մմդթմնաթ մս վղոթ  
 երոմ Կուսիոսյ շիմսեաչ մի պխոտր հեա զս չթ Կեղտոխոսասե  
 պվզտրիվեյ ։ Լստպ զչթզամսամթի փոփեեեա Լզլմ ծօցիմո չճոսայ  
 մի Նճվ՛ վնեանմոչ սլ ։ մչամ զհսզ չիզտ ճոտ Ի յ սղ յթմոնփ մվթզմ  
 —ամուկ մ՛ն ճոսազոտս ոչնեզհսզ զյլ ։ մչւթթանհիտոոտր մսզտ մվզուսեզմ  
 զզ՛ մմդթմնաթ մս Կմսչտ փոմ ոչ ։ ծչտեհզս զվթթանհիտոոթ մտիմդ  
 Ի յ քտեզտ Իսիմդ ծչտեհզտոչս ծչլլ ։ ծչլլ Ի յ Եղտմս Կճճ Ի յ ծվթզ՛  
 զհսզ մ՛նմեոն զյլ ։ սղչ փվզտրիվեյ Ի սեաչ Չվնեանտրիմզ զզտտ  
 —ոտուսյ Լտեհտզոչս ոչ Լստր Եչլլթթանդեոս ճոմմ զլհոնտի մվթզմ  
 —ամուկ ։ մմո Լոչուղտչ ծչլլեհիտոոտն ճոտիզ զլճոստ Ի յ զլմեզլ զսամ  
 ծչտեզտ ծչլլ Լստր Ի յ ծվթզլլթթանհիտոոթ զտիտալտալ Ելլ

։ մծմփ Գտիտսչի Իմդթմնաթ Լզլմփ Լեհմի՛ն Լոմ Կճամզ  
 —զլթթանհիտոոթ մղթ փեհիտոոթ մ՛վնեանտրիմզ զզստտոտայ մս  
 Կվմմ Եվչ զչքտ Ի յ քչն մոտ Լտեղմոթեոս Ի յ փեղիմտսս ոչ ։ մր  
 տոտի ճոտիքտտե Ետեզս ճվթթամսւթմի մսնոլ Ի յ ոտ չ ճվթթուտ  
 —մոքչ Խոթմտեայ ։ Լամի Եզսզտ Ի տեհզս ճվթթանեղեեա Եչք Չս Ի յ  
 ճոսազլլթթանհիտոոթ մղթ Ի տեղեհիտոոթ քտեզտ Եչք Չս զտ Ի յ ։ մչ  
 —լթթանհիտոոթ փվզտրիվեյ Ի սեաչ Չվնեանտրիմզ Եվուչնոմ սոսս  
 մ՛նչամո՛ Մսթ փեոնիսս Կտեի ճոտիտամ մչւթթամմամտոմ զզտքեակ  
 —տփթ ճոտրի Ի սիմփստտե ճոտիմթ մս Կքզմտտտոմ մի սչնտեոտչ  
 —մտեայ ։ «մչւթթամե զզստտոտն ճվթթիմփ» ։ չթ մմվ՛ Կմզլլիվուչ՛  
 —Լսմ մս Կտմտր զոտ ճվզտճմ՛ Ի մզլլթթանհիտոոթ փլտտմեզտոթլլ  
 ճվոտր ճոտրի տեղեեա ճոտիտոտս ճոտմե Ի յ ճոտտոթ չ ստ՛ Եզտտի  
 —ո՛ յզտչիքսս Կ Լամի ճոտրի Ի մտտտոմ ոտ քզտ՛ ճվ մի սչնտեոտ  
 ոչ ։ Ի մզլլթթանեանտրիմզ սոսս ճոտրի տեղեեա չ Ի յ մս Եզտտ Ի յ  
 ճլտոթ Ի յ ճլթ մմդթմնաթ Ի յ մզլմո՛ Լոզլզս փեղտ Ի յ Եոմո ճմզ  
 —զլթթանհիտոոթ չթ՛ Եզմտտտոմ Խուչ ճոտիմե Ի յ ճչքտեզտ Եչք  
 ճոտտի մվթզմամուկ Կզլիտալի ճմզլլթթանհիտոոթ Խոտգ

։ Ի սղտքմտի ճվ՛ ճոտեզս Խոտքտր  
 ծչոսս Կճտմզ՛ սիտմալ մղթ մ՛նմդմոթի մի Կհիմոչ վ՛ Ելլ ։ մմդթմփ  
 Ի մզլլթթանե Եզլմվ ճվ՛ ճոտտր մի Խոտիտոտ Ի յ Լամի Ի մզլլթթամ  
 —քմոմ ճվ՛ ճոտեակ մի Խոտրիտոթ Կճմզլլթթամսքմոմ ճոտրիտոտ  
 —տնտե ճոտիտոթ մզտտե ճվ՛ մմզլմո՛ չթ տոչ ։ մչւթթուտտոմտե  
 փվթթ Ի մզլլթթանեակ Եոտտոտթմթ Մոչ Եղտտտոթլլ մր Խուչ ճոտրի  
 —ոմ ճոտ չքեակ ութլլ ։ Ի տեղտտոտ փղտ Ի յ փղտ ճոտ Խոտ ճոտչ ճվ  
 մմզեոչ ճվ՛ ճոտեակ մի մմզլմո՛ մր ճոտրիտոթ Կզլ չթ՛ Կտեղոտ  
 երոմ ։ մչոթճմ՛ փվթթլլ Լզլզս մ՛նչս Խոտտեղ Կ Լոտ՛ մոմուկ Լզտմե մզճոտր  
 մ՛ն՛ ճոտ մմիկիտ Ի մզլլթթանեակ մե Կտոմ ճոտտի

կէ, չի կրնար մասնակցել: Այնուհետև ևս խնդրեցի իրմէ՝ բոլոր հնարաւոր միջոցներով օգնել մեր գործին: Ան խոստացաւ նհատէն դուրս ի նպատակ մեզի պղծեցութիւն ի գործ զնել Կարաբէքի բաշայի վրայ:

Այս առթիւ, սակայն, հարկ կը համարեմ վճարողներու յայտարարել, թէ ան աւելի շատ խանդարեց մեզ, քան թէ օգնեց: Խանդարեց այն բանով, որ ինչպէս Ալեքսանդրապոլի մէջ, այնպէս ևս Կարս կը կազմէր միախնդրեց, ճառեր կ'արատասնէր մեր դէմ, կը պախտարակէր Հայաստանի կոտորածները և պատուիրակութիւնը, կը քարոզէր բոլշևիկեան ծրարները և այսպէսով ցոյց կու տար թուրքերուն, թէ ան իրօք մեր դէմ է և ոչ թէ մեզ հետ: Ինքը բլաշայի վրայ՝ սատակ կը յարձակէր Վրաստանի մեծշուքի կոտորածներէն վրայ, գտնելով որ ան կը ստանի Վրաստանը զկալի կոտորած և որ Վրաստանի վերկութիւնը բոլշևիկեան մէջ է միայն: Նման գրոյցներ ան ունեցաւ նաև մեր պատուիրակութեան խորհրդակցական Վահան Մինախոբեանի հետ, որ նկարագրած է անոր հետ ունեցած իր խօսակցութիւնը Ռուս Սոց. — Յեղափոխական կոտորածներէն պաշտօնակցութիւն «Յեղափոխական Ռուսաստան» մէջ: Այսպէսով ևս ի վիճակի եմ հաստատել, որ Ալեքսանդրապոլի մէջ ինչորոշային Ռուսաստանի ներկայացուցիչը բացարձակապէս ոչ մէկ օգնութիւն ցոյց տուաւ Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան:

Յաջորդ օրը Կարաբէքի վաշան փոխ-այցելութեան եկու Հայաստանի պատուիրակութեան: Այդ այցելութեան միջոցին նորէն արտասանուեցան թուրքերուն յատուկ շատ սիրայի բառեր, որոնք սակայն, միանգամայն կը հակասէին իրականութեան: Այդ ժամանակ պայմանաւորուեցանք, որ խոսակցութեան խորհրդակցութիւնը պաշտօնական նիստը կայանայ Նոյեմբեր 25ին, ցերեկուայ ժամը 5ին, այսինքն՝ փոխ-այցելութեան օրը:

Երբ թուրքերը դաջին, մեր պատուիրակութիւնը զրպեցու այն պայմաններու ձևակերպութեամբ, որոնք պէտք է պաշտպանէր խորհրդակցութիւնի միջոցին: Ի հարկէ, եթէ պատուիրակութիւնը այդ ժամանակ կանդնած ըլլար բացառապէս յաղթողներու և պարտուածներու տեսակէտի վրայ, — և այդ պարտային Հայաստանը, ի հարկէ պարտուած կողմն էր, ան պէտք է համաձայնէր, որ խօսք կարող է ըլլայ միայն ամենահամեստ սահմաններու մասին, քանի որ հէնց Բաթումի գաղանգքի սահմաններու պահպանման պահանջն էր թուրքերու կողմէն, որ եղած էր պատերազմի պատճառը: Բայց մեր

պատուիրակութիւնը կը կարծէր, որ Թուրքերը կը ցանկան կենսու-  
նակ Հայաստանի մը ստեղծումը, որ օգտակար էր իրենց պետական  
չափերու տեսակէտէն, ինչպէս որ այդ մասին շարունակ կը յայտա-  
բարէին Թուրք պետական զործիչները: Հայաստանի կառավարու-  
թեան կողմէ մեկի տրուած հրահանգներուն համաձայն՝ մենք մտած  
էինք պաշտպանել Հայաստանի սահմանները՝ մտցնելով անոնց մէջ  
ամբողջ ռուսական Հայաստանը, Վան, Մուշ, ամբողջ Վանայ լիճը,  
Բիզէ նաւահանգիստով՝ թողով էրզրումը և Տրապիզոնը Թուրքե-  
րուն: Էրզրումը և Տրապիզոնը Թուրքերուն խոզուր մենք կը հա-  
մարէինք իրեւ գիջում մեր կողմէն:

Ճիշդ նոյն ժամանակները նախապահ Վիլսոնը յայտնած էր իր  
իրաւարարական ծանօթ միտքը, որուն հիման վրայ Հայաստանը  
պէտք է ունենար 180,000 քառ. քիլոմէթր՝ հաշուելով իր սահման-  
ներուն մէջ Վանը, Մուշը, Էրզրումը և Տրապիզոնը:

Երբ մենք վերջապէս մեր պահանջներու ձեւակերպութիւ-  
նը, ևս զուրս եկայ մեր բնակարանէն ևս Կոստի փողոց՝ դրօնելու:  
Այնտեղ խոր ձիւն էր և սաստիկ սառնամանիք: Իմ ուշադրութիւնս  
դրուեցին երկու պատանիներ: Առաջին՝ ևս տեսայ երիտասարդ Հա-  
յերու խումբեր թուրք ասկերներու ուղեկցութեամբ, անոնք կ'ու-  
ղարկուէին Կարսի կողմը: Պէտք է յիշել, որ Կարսի նահանգի սահ-  
մանը կը սկսէր երկու քիլոմէթրի վրայ Ալեքսանդրապոլէն Ալեք-  
սանդրապոլի դասար Կարսի նահանգէն կը բաժնէր Արփաշայ գետը,  
իսկ այդ գետը կ'անցնէր Ալեքսանդրապոլի մօտով: Պարզուեցաւ, որ  
Թուրքերը պատրուակ բոնելով բանուորներու կարիքը, կը պահան-  
ջէին Ալեքսանդրապոլի իշխանութիւններէն տայ իրենց 10,000 երի-  
տասարդներ ուզարկելու զանոնք աշխատանքներու համար երկաթու-  
ղաօժի վրայ՝ Սարքոմաիշ, Գարաուրկան և Էրզրումի գիծը: Այդ  
միջոցին փաստօրէն իշխանութիւնը Ալեքսանդրապոլի բոլշեւիկեան  
իշխանութիւնն էր, որ կը յանձնէր թուրք իշխանութիւններուն հայ  
երիտասարդները: Հետապայիս, մէկ տարի ևս աւելի ստիկ յետոյ,  
այդ երիտասարդներէն վերապարձան ընդամէնը 230 հոգի միայն:  
Մնացածները մեռած էին ցուրտէն, բաղջէն կամ ուղղակի սպաննուած  
էին:

Երկրորդ պատկերը կը ներկայացնէր թուրք իշխանութիւննե-  
րու կազմակերպած կողոպուտի ակտարանը: Անոնք կը հանէին տու-  
ներէն պատուհանները, դռները, դուրս կը տանէին կահկարասիները,  
իրերը կը զարսէին ժողովուրդէն բռնի վերցուած սայլերու վրայ և  
չտապով կը ստանէին այդ բոլորը Կարս, իսկ փայտէ մասերը, որոնք

տանկու համար պիտանի չէին, կը գործածուէին իբրև վառելիք։  
Այս տպուորութիւններէն ճնշուած՝ ևս վերադարձայ տուն,  
և և մենք սկսանք պարաստուիլ առաջին նիստին։

••

Ճիշդ ժամը չին մենք հասարակեանք։ Թուրքերը Եկան ութ  
հոգի՝ Երեք պատուիրակներ և հինգ պաշտօնեաներ։ Մեր թարգ-  
մանն էր թրքերէն լեզուի համար արտօքին գործոց նախարարութեան  
պաշտօնեայ Ջրբաշեանը։

Մենք պատրաստէր էինք մեր յայտարարութիւնները ֆրանսե-  
րէն լեզուով և նոյնպէս քարտէս մը մեր նախադժած սահմաններով։  
Եւ իմ ձեռքի տակ ունէի այն պատմական քարտէսը, որ հրատարակ  
կու գար բարձր խաղաղութեան խորհրդածուցովներուն՝ սկսած Բա-  
թումէն, ուր գծուած էին Հայաստանի սահմանները։

Ժամը չին բացուեցաւ խորհրդածուցովը։ Իմ առաջարկու-  
թեամբ նախապահութիւնը ստանձնեց Կարաբեքիը փաշան։ Իմ առա-  
ջարկը կը բղիւղէր միջազգային իրաւունքի մէջ բնականուամբ այն սկիզ-  
բունքէն, որուն համաձայն խորհրդածուցովներուն կը նախապահ  
այն պետութեան ներկայացուցիչը, որուն՝ ժամանակուոր թէ մնա-  
յուն իշխանութեան տակ կը գտնուի ժողովի վայրը։

Նիստը բանալով Կարաբեքիը փաշա պաշտօնապէս ուղղունց  
պատուիրակները և յետոյ թաւ, թէ տոաջին բանը, որ պէտք է  
աչքի առջև ունենայ, այդ՝ Թուրքիոյ պահանջն է, որ պէտք է բն-  
գունին Հայերը այն մասին, թէ Հայաստանը կը հրաժարի Սևրի  
զաշնագրէն։ Մինչև որ — յայտարարեց Կարաբեքիը — Հայկական  
պատուիրակութիւնը այդ պահանջին չպատասխանէ, խորհրդածուց-  
ովի պարագմունքները կը յետաձգուին։ Այդ յայտարարութեան հայ-  
կական պատուիրակութիւնը պատասխանեց, թէ ինքը կը քննէ այդ  
պահանջը։ Ատկէ յետոյ նիստը փակուեցաւ։

Նիստին յետոյ մենք խորհրդակցութիւն ունեցանք խորհրդա-  
կաններու մասնակցութեամբ։ Մենք այսպէս կը խորհէինք։— Եթէ  
մեծ պետութիւնները, որոնք ստորագրած էին Հայերուն բաւարար-  
ութիւն տուող Սևրի զաշնագիրը, կը ցանկան և կը կարողանան  
իրականացնել զայն, մեր սկիներև պարտադրուած հրաժարումը ան-  
կէ՝ արգելք պիտի չըլլայ անոր իրադրծման։ Իսկ եթէ պետութիւն-  
ները իրենք կը հրաժարին Սևրի զաշնագրէն, ինչ որ տեղի ունեցաւ  
հետագային, այդ պարագային մեր այսօրուայ հրաժարումը անկէ,





**Միմոն Վրացեան**

այս բացառիկ պայմաններու մէջ, միայն կ'օգնէ մեզ Թուրքիոյ Հետ բարի հարեւանութեան կապեր հաստատելու :

Միւս կողմէ հրամարիւ այդ տուաջին պայմանէն, զոր Թուրքերը կը գնէին իբր սնհրամեշտ նախապայման խորհրդածոցովը շարունակելու համար, համադր կ'ըլլար հաշտութեան լսնակցութիւնները իրելուսն եւ պատերազմական գործուցութիւնները վերսկսելուսն : Եւ ճիշդ տակէ կը, որ մենք պէտք է ամէն կերպով խուսափէինք : Առանց այդ ալ Թուրքերը մէկ օրով յետամղեցին խորհրդածոցովի բացումը այն պատճառով, որ Երեւանէն քանի մը ժամով ուշացեր էր այն գնացքը, որ կը բերէր գինուղարարի պայմաններու համաձայն Թուրքիոյ արուելիք սպամովները : Ուստի, հայկական պատուիրակութիւնը միտմայն որուէջ ընդունիլ Կարաբեքիբի նախապայմանը : Բայց աչքի առջև ունենալով ինչորի կարևորութիւնը՝ մենք որուէջինը հարցնել շ. Չ. կառավարութեան համաձայնութիւնը : Այդ օրը արդէն սկսած էր գործել սեղանի հետադարձելը Կարաբ, Ալեքսանդրապոլի եւ Երեւանի միջև :

Եւ խօսեցայ սնձամբ վարչապետ Ս. Վրացեանի Հետ : Ոսակցութիւնը տեղի ունեցաւ Երեկոյեան մօտ ժամը 10ին : Ս. Վրացեանը պատասխանեց զիչերը ժամը 2ին՝ յայտնելով Չ. Չ. կառավարութեան համաձայնութիւնը :

Նոյեմբեր 26ին մենք խմբադրեցինք մեր պատասխանը եւ հագորդեցինք Կարաբեքիբին, թէ մեր պատասխանը պատրաստ է : 27ին նշանակուեցաւ Երկրորդ նիստը : Այդ նիստին մենք կարդացինք մեր պատասխանը, որով համաձայնութիւն կը յայտնէինք Սերի գաշնադրէն հրամարելու :

Բնորոշ մանրամասնութիւն մը : Թուրքերը անպաշտօն կերպով գիտէին մեր պատասխանի լսնակցութիւնը, որովհետեւ նախընթաց օրը, Երբ տեղեկացուցինք, թէ մեր պատասխանը պատրաստ է, մենք լիպորդեցինք մեր գործերու կառավարիչը անպաշտօն կերպով ունեցնելու, որ մեր պատասխանը կ'ըլլայ գրական : Մտնակեր միտք չունէր, իսկ ճշմարտութիւնը կը պարզէր միտքորարը : Այսպէսով Թուրքերը, գիտնալով մեր պատասխանը, այն շինութեան պատուհաններուն առջև, որ տեղի կ'ունենար խորհրդածոցովը, տեղաօրած էին գինուղարարի նուազախումբ մը, որ մեր պատասխանը կարգալու միջոցին նուազեց «Էնտերնախանար»ը, այսինքն՝ բոլոր իրեան կուսակցութեան օրհնարը :

Երբ Թուրքերը լսեցին մեր պատասխանը, նախապահը յայտարարեց. «Այժմ, երբ մենք ազատուեցանք Երուսական իմպերիալիստ-

ներու հնչումէն, կարող եմք խօսիլ ազատ իբրև երկու հարեւան ժողովուրդներ: Քայց նախքան մեր սահմաններու եւ խաղաղութեան պայմաններու մասին խօսիլը, մենք պէտք է ձեր ուշադրութիւնը հրաւիրենք այն հանգամանքին վրայ, որ երբ Հայաստանը կը հրաժարի Սեւրի իմպերիալիստական դաշնագրէն, հայկական կառավարութիւնը կը դիմէ անգլիական քաղաք Գէորգ Ե-ին: Ահա այն քափօ-հեռագիրը, զոր բռնած է մեր կարսի աստիօ-կայանը եւ որ ուղարկուած է երեսունէն Գէորգ Ե-ին»:

*Մենք վերցուցինք այդ ստորոն և բովանդակութենէն իսկոյն հասկցանք, որ հետագիրը ոչ թէ ուղարկուած է Գէորգ Ե-ին, այլ Գէորգ Ե-էն է և այդ Գէորգ Ե-ր ոչ թէ անգլիական թագաւորն է, այլ Հայոց կաթողիկոսը, որ իրօք, հետագրած էր Փարիզ՝ խնդրելով օգնել Հայերուն սնունդ մատակարարելով: Բացատրեցինք թիւրիմացութիւնը:*

Առկէ յետոյ, երկու պատուիրակութիւնները պայմանաւորուեցան, որ անսնցմէ իւրաքանչիւրը կը մշակէ սահմանները և բացատրական գեկուցագիր մը այդ մասին և յետոյ փոխադարձաբար իրարու կը ծանօթացնեն իրենց պայմանները:

Նոյեմբեր 27ին երեկոյեան մենք նորէն ուղարկի հետադարձելով խօսեցանք Հ. Հ. կատարութեան հետ՝ իմանալու իրերու զրութիւնը: Ս. Վրացեանը բոս, թէ պէտք է ամէն կերպ աշխատիլ յենուիլ բոլշևիկներու ներկայացուցչի պաշտպանութեան վրայ: Ես պատասխանեցի, թէ Միդիանին միանդամայն հետացած է Քուրբերու պահանջով և կը զրադի մեր զէմ պրոպագանդ րնելով: Վրացեանը կատարութեան անունով հասնութիւն յայտնեց սահմաններու վերաբերմամբ տալու խաղաղութեան այն պայմանները, զոր մենք ըրեցած էինք երեսունէն:

27ին մինչև ուշ գիշերը մենք կը զրկինք մեր բացատրական գեկուցագիրը և կը զձէլինք քարտէսի վրայ մեր պահանջած սահմանները:

Նոյեմբեր 28ին յատուկ սուրհանդակի միջոցով ստացանք երեսունի կատարութեանէն ծրար մը, որուն մէջ գտանք ժրնեւէն ստացուած ոտտիօ-հեռագիրներ Ազգերու Լիկայի ժողովին մէջ հայկական խնդրի վերաբերմամբ եղած վիճարանութիւններու մասին, որոնք տպալորուած էին Քիֆօիսի և երեսունի ուսու և հայ թերթերու մէջ:

Նոյեմբեր 28ին մենք ուղարկեցինք մեր պայմանները Կարաբեքիր փաշային: 29ին Կարաբեքիր փաշան խնդրեց ինձմէ ստանձին տե-

ասկիցս թիւն ունենայ իրեն չեալ : Մենք Հանդիպեցանք և խօսեցանք գրեթէ Լրեք ժամ : Կարարեքիք փաշան կ'աշխատէր Համազկ, որ Հայերը բարբառն լրտած են և պէ'տք է փնտսեն ամէն ձեռով մօտենայ թուրքերուն : Ան կանց առաւ Ազգերս Լիկայի մէջ արտասանուած ազարգիւն ճասերուն վրայ՝ շեշտելով, որ Եւրոպան օգտագործած է մեզ արգէն և աշխուս մեր կարեքը շունի : Ըստ, թէ Ռուսաստանը իր պտամական յառաջխաղացման մէջ ղէկոյի Հարաւ և առք ծով կը կրանէ Կոմիտար և թէ ասանց թուրքիոյ օղնութեան և հովանութեան, մենք պիտի չկարենանք պահել մեր պայտիւնը : Խօսելով մերձակայ Հարեւաններս մասին, Կարարեքիք կանց առաւ Վրաստանի վրայ : Վրաստանի մասին անոր բառեր առանձնապէս ուշադրու էր :

— Դեռ Հայերս ղէմ պատերազմական գործադրութիւններ սկսելէ առաջ, բաւ ան, Անպարտի ներկայացուցիչները ի ղէմն Եւստօֆ Բեմալ բէյի և Այի Ֆուսա փաշայի 1920 թ. ամառը կղան Ռիֆլիս և Վրաց կառավարութեան չեալ ղաշն կապեցին, որոն զօրութեամբ Վրաստանը, Հայ-թրքական պատերազմ ծաղկաւ պարագային, պէտք է չկորսուի պահէր և ստոր փոխարէն պէտք է առանար Բորչալուի և Ախալքալաքի պատաները և Արտահանի շրջանը : Կարարեքիք նոյնիսկ ցոյց տուա ինձ աշն քարտէսը, որուն վրայ ղծուած էին Վրաստանի սահմանները, Համաձայն չկորսութեան մասին կնքուած ղաշնագրի :

Չեապային և ալ խօսակցութեան մասին պատմեցի Վրաստանի ներքին գործերու նախարար Նոյ Ռամիշվիլիին, որ ալ ղ բոլոր Հերքեց : Բայ ինձ յայնի է, որ Մուսթաֆա Բեմալի Հրամանով ղննութիւն էր կատարուած աշն մասին, թէ ուրիշ կրնայի և ստացած բլլայ ալ տեղեկութիւնը : Քննութիւնը յանձնուած էր Անպարտի կառավարութեան ներկայացուցիչին Ռիֆլիսի մէջ :

Այլ պտամութիւնը վերջացնելով՝ Կարարեքիք փաշան տկնարկեց որ թուրք-վրացական պատերազմի պարագային, — Հայաստանի չեալ խօսակցութիւն կնքել յետոյ — Հայերը Հայաստանի չկորսութեամբ կրնան ստանալ Ախալքալաքի պատար և Բորչալուի ղատի մէջ մտար : Ապա Կարարեքիք անցաւ խօսակցութեան մեր պայմաններուն և յարգուած բացապանչեց .

«Ձեր սահմանները մեզ սպասի սպիշեցուցին : Եւ ղուք՝ նրատմ Ալեքսանդրապոլ՝ պարտու թիւն կրելէ յետոյ կը պահանջէք Մուշ և Վան : Ի՞նչ կ'ըլլար, երէ ղուք նատմ ղլլայիք Վան : Ի՞նչ կը մնար

Թուրքիայէն: Հաստատե՛ք, որ ձեր պայմանները մենք պէտք է ծածկէ՛նք մեր սպաններէն եւ զինուորներէն, ապա թէ ոչ անոնք գրիւ պիտի տային ձեր պատուիրակու իւրեր: Իմ սպայախաչտի սպաները պահեցին զազատիւր: Քննութեան առնել ձեր այս սպայամաները անկարելի է: Մտածեցէ՛ք»:

*Ես պատասխանեցի անոր, որ մենք մեր պարտքը համարեցինք մեր ժողովուրդի սաջնէ ներկայացնել այն, ինչ որ անհրաժեշտ է մեր ժողովուրդի գոյութեան եւ տղազային համար: Ես աւելցուցի, որ նոյնիսկ իրեն՝ Թուրքիայ համար կարևոր է ունենալ իրրէն հարեան կենսունակ Հայաստան մը:*

*Կարարեցիք հեռուէն առարկութիւնը բերաւ — «Հայերը փութաբար են եւ մէկ միլիոն ժողովուրդի համար (սրբաբնուէ մնացածը Եւրոպա է, Թուրքիա կամ Ռուսաստան) քաակաւն է եղած փոքր հողամասը, չէ՞ որ Պելլիֆան իր վեց միլիոն բնակչութեամբ ունի բնակարանը 30,000 քառ. փոխմետր»:* Ես պատասխանեցի, թէ մենք երկրագործ ժողովուրդ էնք, եւ գիւղացիներուն հոգ է պէտք, եւ թէ Հայերը արտասահմանէն կը վերադառնան Հայաստան: Ան յայտնեց, թէ կ'ուզարկէ ինձ իր առարկութիւնները կէտ առ կէտ եւ իր հակառակարկները: Մեր պայմաններուն ի միջի այլոց, կրցուած էր բացատրութիւն մը, որ գանձարան Երկիրներէ Հայաստան պիտի վերադառնան 800,000 հոգ: Մենք այդպէս հաշուեր էինք՝ երկուսով այն ենթադրութեանէն, թէ սրտէ Երկիրներէ կը վերադառնան յիսուն առ հարիւր (Պուլկարիա եւ Ռուսանիա), մնացած տեղերէն Երեսուն առ հարիւր (Վրաստան, Ռուսաստան եւ այլն): Իւրաքանչիւր Երկրի համար վերցուած էր տոանձին չափ: Խօսակցութեան ժամանակ Կարարեցիք փաշան կը պնդէր բնակչութիւնները շատով վերջացնելու պէտքը՝ ակնարկելով, որ, հակառակ պարագային, ան ստիպուած պիտի ըլլայ Երթալ Երեսունի վրայ: Ես վերադարձայ մեր բնակարանը եւ հաղորդեցի ընկերներուս ակտի ունեցած խօսակցութեան մասին:

*Նոյնմերկ 30ին Թուրքերը ուզարկեցին զաշնագրի իրենց նախագիծը՝ սահմաններով: Անոնց ծրագրով Հայաստանին կը ձգուէր 27,000 քառ. փոխմետր. Կարսի նահանգը եւ Սուրմայուի գաւառը կ'անցնէին Թուրքիոյ, իսկ Նախիջևանն ու Զանդեղուրը կը գրուէին Սուրմայուի հովանաւորութեան տակ: Հայաստանին իրաւունք կը տրուէր ունենալ 1200 զինուոր, 20 զինացիք, 8 թնդանօթ: Ժանտարմերի թիւր չէր սահմանափակուեր: Բերդերը կը ձգուէին, սակայն*

միայն փոքր տեսակի թնդանոթներով: Դաշնակիցներու ներկայացուցիչները պէտք է ձգէին Հայաստանը:

Դաշնագրի իսկական բովանդակութիւնը թուրքերը չհրատարակեցին: Բայց ևս այժմ ևս եթ պէտք է բւժն, որ ամենածօտ (չբնիկ բառացի) բովանդակութիւնը հրատարակուած է Ա. Պուատեպարի «Les Traités Diplomatiques de l'Arménie» ժողովածուի մէջ, իմ խօսքերու և յիշուածութիւններու հիման վրայ: Հրատարակութեան վերնագիրն է՝

La Transcaucasie et la République d'Arménie dans les Textes Diplomatiques du Traités de Brest-Litowsk au Traité de Kars (1918 – 1921) par Poidebard, Paris, 1923:

Կեանքիս մէջ Երկրորդ անգամ ինձ վիճակուեցաւ ծանր բողոքներ ապրիլ Հայաստանի սահմաններու խնդրի առթիւ: Առաջին անգամ 1918 թ. Յունիսին, Բաթում, Երկրորդ անգամ Ալեքսանդրապոլ, այս օրերուն: Մենք նորէն տեսնք Հայաստանը Երկաթի փակնիցներու մէջ սեղմուած, առանց թրքահայաստանի, առանց Կարսի նահանգի, առանց Նախիջևանի, առանց նոյնիսկ Սուրմալուի:

Դաշնագրի յատկուածային բաժնին մէջ թուրքերը վճիռ կ'ենթարկէին մեր Էնթուրուքիսիսները 800.000 հողի Հայաստան վերադառնալու մասին՝ պակսեցնելով այդ թիւը մինչև 20.000 կր ծրարելին հայկական մշակոյթը՝ յայտնելով այն կարծիքը, թէ «հայկական մեղեցին թրքական արմատներ ունի» և այլն:

Նոյեմբեր 30 կ'երկոյցեան մենք ուզարկեցինք մեր պատասխանը թրքական պատասխանութեան:

Դեկտեմբեր 1ին նշանակուած էր Երրորդ ընդհանուր ժողովը, որ կայացաւ ժամը 11ին ստուօսեան: Թուրքերը վերջնագրի ձևով ներկայացուցին իրենց արդէն պատրաստուած գաշապիրը՝ պահանջելով անվերապահօրէն ընդունիլ դրան, հսկասակ պարագային կր սպառնային, որ թրքական զօրքերը անմիջապէս պիտի շարժին Երևանի վրայ:

Մենք առարկութիւններ բրինք թուրքերուն և որոշեցինք, որ, յամենայն դէպս, պէտք է գաշապրի գլխաւոր կէտերը հաղորդենք Երևան և սպասենք հրահանգներ մեր կատարարութեան: Ժամը չորսուկէսին հաղորդեցինք Երևան թուրքերու վերջնագրի պայմանները և խնդրեցինք պատասխանել շտապ կերպով: Գիշերը ստացուեցաւ հետեւեալ պատասխանը. Վրացեանն է.

«Կառավարու քիւնը հրաժարական ստուեց : Գլխիցանում և Քար-  
վանաբայում մեր զօրքերը առանց կոտի հանդիպեցին բաշխելիկեան  
զօրքերի հետ : Կազմում է Կոալիտիոն կառավարու քիւնը բոլշեւիկնե-  
րի հետ մասնակցութեամբ Գլխի և Տէրութեանի՝ Գաշնակցութեան  
կողմից : Թուրքերի պայմանները ստիպում ենք ընդունել : Գուք  
լիազօրում էք ստորագրել դաշինքը» :

*Վաղ առաստեան, Դեկտեմբեր 2ին, մենք իմացանք, որ բոլ-  
շեւիկեան հրամանատարը Քարթանաբայէն ուղարկած է Կարաբեքեր  
փաշային հետևեալ շնորհատուրական հեռագիրք . «Ռուսաստանի պրո-  
լետարիատից սղջայն քարքանի պրոլետարիատին» :*

*Մենք կը սպասէինք հեռագրի, Հայաստանի նոր կառավարու-  
թեանէն :*

*Երեկոյեան ժամը 6ին ինձ հրաւիրեց ուղղակի հեռագրաթէլէք  
մօտ Գրօն, որ բաւ հետևեալը .—*

«Յեղափոխական կառավարութեան անունից յայտնում եմ ձեզ,  
որ դուք սպաս էք ստորագրել դաշնագիրը կամ ոչ» :

*Հաւ գրտակցելով դաշնագիրը ստորագրելու կամ մերժելու  
ամբողջ պատասխանատուութիւնը, ևս երկրորդ անգամ հարցուցի .*

«Լիքեօք կառավարութիւնը ստորագրելու՞ կողմն է քէ մեր-  
ժելու : Մենք սպասում ենք որոշ եւ պարզ հրահանգների» :

*Գրօն պատասխանեց .*

«Ես ձեզ ասացի ուրդէն : Գործեցէ՛ք համաձայն ձեր հասկացու-  
ղութեան : Ես խօսում եմ ընկեր Սիլիւի և իմ անունից» :

*Սիլիւնը բոլշեւիկներու ներկայացուցիչն էր :*

*Ես հտարեցի պատուիրակութեան ևս խորհրդականներու ընդ-  
հանուր նիստ ևս քի .*

«Պարսններ . յեղափոխական կառավարութիւնը մեզ վրայ է  
դնում ամբողջ պատասխանատուութիւնը : Մենք պարտաւոր ենք  
ստանձնել այդ պատասխանատուութիւնը մեր ժողովրդի առաջ,  
խնդրում եմ իւրաքանչիւրին ձեզանից յայտնել իր կարծիքը» :

*Բուրքը միաձայնութեամբ արտայայտուեցան յօգուտ դաշնա-  
գրի ընդունելուն և ստորագրելուն : Բուրքի պատճառարանութիւն-  
ները միառեակ էին :*

Երևկայեան ժամը Տին կայացաւ խաղաղութեան խորհրդածո-  
ղովի շորրորդ և վերջին նիստը : Նիստը բացուելէ յետոյ մենք յա-  
տարարեցինք որ կ'ընդունինք զաշնագիրը : Ատկէ յետոյ սկսաւ դաշ-  
նագրի բնթերցումը յօդուած առ յօդուած : Քննութեան միջոցին յա-  
ջողեանք մասնակի մանր փոփոխութիւններ մտցնել յօդուած մեկի,  
ինչպէս, օրինակ Ազգաբաշխի մէկ մասը (Կարախ նահանգէն) Հայաս-  
տանի սահմաններուն մէջ մտցնելը, զօրքի քանակը 1200էն մինչև  
1500 բարձրացնելը : Երկար վիճարանութիւններ Լ.դան Անիի, Նախի-  
ջևանի, Սուրմալուի մասին, բայց թուրքերը այդ խնդիրներու մէջ  
ոչ մէկ զիջում բրին :

Գիշերուայ ժամը Չին (Գեկտեմբերի 2էն լսյա 3ը) զաշնագիրը  
ստորագրուեցաւ Երկու պատուիրակութիւններուն կողմէ :

Միւս օրը, Գեկտեմբեր 3ին, առաւօտեան ժամը ութի ուղղա-  
կի Տեղադրաթիւով Հազարդեցի Դրոյին, որ զաշնագիրը ստորագրե-  
ուած է և հարցուցի, կարո՞ղ է արդեօք պատուիրակութիւնը Երե-  
ւան զու և կարո՞ղ է արդեօք իր պատուութեան Երաշխաստութիւն  
ստանայ :

Ես խորհրդակցութեան հրատիրեցի պատուիրակութիւնը ամ-  
բողջ կողմով (16 հոգի) և հարց զրի. «Պարոններ, Խորիդալիմ իշ-  
խանուք ինք կը խոստանայ ազատութիւն՝ պատուիրակութեան ամ-  
բողջ կողմին, բայց չ'երաշխաստերք այդ : Գու՞ք կատարեցիք ձեր  
պարտքը : Այժմ ես, իբրև պատուիրակութեան պետ, կը խնդրեմ իւ-  
րաբանչխորէդ, բոլորովին ազատ ընդունիլ իր վճիռը, երթալ Երե-  
ւան, Թիֆլիս քէ արեւէ այլ տեղ» :

Ի՞նչո՞րն ալ առանց բացատրութեան յայտնեցին թէ կ'երթան  
Երևան :

Գիտնալով, որ մեզմէ մէկուն կը սպասեայ առանձնապէս ծանր  
վտանդ բուշուիկներէն, մէկ կողմ կանչեցի զինքը ու բախ. «Ես Ձեզ  
կը հասկնամ : Պարտքի գտացումը Ձեզ մօտ կը գերակշռէ, բայց ես իմ  
վրաս կը վերցնեմ վճռել Ձեր փոխարէն ես կ'րսեմ Ձեզ, որ դուք կա-  
րող էք հետանալ աւելի ապահով կողմ : Ձեր բնուանիքի ևողր ես կը  
վերցնեմ իմ վրաս» :

Բայց ան պատասխանեց, թէ կը մնայ բոլորքս Հետ միասին :  
Այսպէս կայացաւ մեր վճիռը՝ ամբողջ կողմով վերադառնալ  
Երևան : Մենք որսուցինք անձամբ յանձնել նոր կառավարութեան  
մեր կնքած զաշնագիրը և զեկուցել անոր՝ զաշնագրի կնքման պա-  
մաններու մասին :



Ժամբ 3ին տեղի ունեցաւ պաշտօնական ճաշ, որու միջոցին թրքական զինուորական նուազախումբը նուազեց կտորներ խտարական օպերաներէ, իսկ Երեկոյեան Ժամբ 9ին նշանակուած էր մեր մեկնումը:

Մենք հասարակչինք մեր իրերը: Բայց ժամբ 6ին Եկաւ ինձ ծօռ Կարաբէրի փաշային կողմէ գլխուս սպաշակոյտի մէկ սպայ՝ Բեհակասին Շաբիր անունով, որ խօսեցաւ գերմաներէն և յայտնեց ինձ, որ Կարաբէրի փաշան աչքի առջև ունենալով ինձ համար Երևան Երթալու վասնդր, կ'ստաջարկէ Երթալ Կարս, իսկ այնտեղէն Էրզրումի վրայով Տրապիզոն կամ Արդաիւնի վրայով Բաթում անցնելու համար Պոլլա կամ Թիֆլիս՝ բառ իմ բնորոյթեան: Յայտնեց նաև, որ ճանապարհորդութեան բոլոր յարմարութիւնները ինձ և իմ բնկերներու համար սպահարկուած կ'ըլլան: Անձամբ իմ կողմէն ևս շնորհակալութիւն յայտնեցի և բաի սր զիտի Երթամ Երևան:

Բեհակասին Շաբիր Կարաբէրի փաշային կողմէ նշանակուած էր Անկարայի ներկայացուցիչ Երևանի մէջ և ճանապարհորդուցաւ մեզ հետ միևնոյն զնայցքով:

Երբ ամէն ինչ պատրաստ էր մեկնումի համար, Եկաւ Կարաբէրի փաշան իր սպաներով մեզ գլխի կայարան ճանապարհ գնելու համար: Քաղաքի մէջ էր տիրապետէր բոլշևիկեան իշխանութիւնը: Ակտեր էին գնդակահարութիւնները: Մեր մեկնումի օրը գնդակահարուեր էին Եօթը հոգի: Արևի ցոյցէ խոստովելու համար թրքական հրամանատարութիւնը հրաման էր արձակած սպարանակութեան մեր անցնելու միջոցին դուրս չգալ փողոց: Մտի էր և ստոնամանիք: Երեք ինքնաշարժեր ամայի և յետ փողոցներով մեզ կր տանէին կայարան: Ժամբ 10ին մեր զնայցքը շարժեցաւ գլխի Երևան:

Աստուծո ժամբ 6ին Արարատ կայարանը իմ թիկնապահը գլխուցեց, որ կայարանը կանգնած զօրքերը՝ զինուորները և սպաները կ'սպեն զիս տեսնել: Ես հագուեցայ և դուրս եկայ: Ընդունեցին «Էկեցէ»ներով: Ասպ սպան գլխուցեց, որ նախընթաց օրը զրեթի բոլոր նախարարները, քաղաքապետը, Խորհրդարանի անդամներէն շատերը ձգած են Երևանը՝ մէկ մասը սպանութեամբ Թիֆլիս, իսկ միւսները՝ գլխի Չանկեղուց: Չինուորները և սպաները՝ վախճալով իմ և պատուիրակութեան անդամներու համար՝ կ'ստաջարկէին ճանապարհ ձգել զիս իրենց պաշտպանութեան սակ հայաստանի սահմաններէն դուրս: Ես պատգամ էի անոնց ուշադրութեան. շնորհակալութիւն յայտնեցի և բաի, որ իմ պարտականութիւնը կը թելողրէ ինձ Երթալ Երևան:

Գնացքը շարժեցաւ գէղի երևան: Ժամք տասին տոասունն հասանք երևան: Հետուէն նկատեցի կայարանի կարմիր դրօշակը: Այնուհ կ մեկ կը սպասէր քաղաքացւոյն ոչնական Շահումեանը ինքնաշարժով:

Տան գալով ևս Հեռախօսով կանչեցի Դրօն և խնդրեցի անկէ նշանակել կառավարութեան նիստ՝ պատասխանութեան վեկուցումը լսելու համար: Զեկուցումը նշանակուեցաւ նոյն օրը ցերեկուայ ժամը 12ին: Մենք ամբողջ կազմով գացինք կառավարութեան տունը: Մեկ րնդունեցին Դրօն և Սիլինը: Մենք մանրամասն վեկուցում տրուինք: Դրօն մեզի բաւ, իմ գործած Լեք շատ ճիշդ, ստորագրելով դաշնագիրը, և իմ իր խուսափողական պատասխանը ինձ դաշնագիրը ստորագրելու մասին (երբ Ալեքսանդրապոլէն անոր հետ կը խօսէի հետադրով) պէտք էր հասկնալ այնպէս, ինչպէս որ մենք հասկրցած էինք: Պարզ էր, որ յեղափոխական նոր իշխանութիւնը չէր սպրկը իր վրայ վերցնել պատասխանատուութիւնը դաշնագիրը ստորագրելու համար ո՛չ Քուրբերու և ո՛չ ալ հայ ժողովուրդի առջև: Երևանի նոր իշխանութիւնը կ'ուզէր, որ դաշնագիրը ստորագրուէր, բայց մէր ևս ոչ իր ձեռքով:

Դրոյին ևս յանձնեցի բոլոր վաւերագրերը և անկէ վերցուցի ստորագրութիւն, որ այս բողէխ ալ աքչերուս առջևն է: Ահա անոր բովանդակութիւնը (օտսերէն լեզուով) .

«Ստացուած է Այ. Իվ. Խատիսեանէն .

- 1) Դաշնագիր Քուրբիայ հետ (Ֆրանսերէն լեզուով) .
- 2) Նոյնը տաճկերէն լեզուով .
- 3) Երեք օրինակ քարտէսներ՝ կցուած դաշնագրին .
- 4) Հաշիս պատուիրակութեան տրուած գումարներու ծախքերու մասին .
- 5) Զեկուցում Ա. Խատիսեանի .

Ստորագրուած է՝

Հրամանատար բոլոր զինուորական ուժերու  
Հայաստանի Ս. Ս. Շ. Շ.

Գ Ր Օ

Երեւան, 5 Դեկտեմբեր 1920 թ .

Զեկուցումը ևս ներկայացուցի Դեկտեմբեր 4ին, իսկ վաւերագրերը և հաշիւները յանձնեցի հետեւեալ օրը, Դեկտեմբեր 5ին:

Յանձնելով Դրոյին և Սիլինին բոլոր վաւերագրերը, դաշնագրերը, քարտէսները՝ ևս համարեցի իմ պաշտօնս վերջացած: Ես

Հասարակի իմ բնակարանը պատուիրակութեան բարբ անդամները, խորհրդակազմներն ու պաշտօնեաները, շնորհակալութիւն յայտնեցի անոնց իրենց աշխատանքներու և անձնութիւնեան համար և յայտարարեցի պատուիրակութեան գործը վերջացած: Մենք զարձանք մասնաւոր մարդիկ:

Գարձեալ երկու խօսք զաշնայրի մտախն:

Ալեքսանդրապոլի զաշնայիրք թրքական խմբադրութեան մէջ անէր յատուկ կէտ մը երբորդ յոգսածի տակ: Կ'ուղեմ քանի մը խօսք բռնյ այլ մտախն, որովհետև այլ տոթիւ շատ է գրուած Թիֆլիսի և Պոլսոյ յրապիրներուն մէջ: Թուրք պատուիրակութիւնը գաշնայրի նախապիծին մէջ երբորդ յոգսածի տակ մտայուցած էր հետևեալ կէտը. «Ինչպէս թրքական, այնպէս ալ ռուսական, նաև ամբողջ աշխարհի վիճակադրութիւնը և բարբ տուեալները ցոյց կուտան, որ ամբողջ թրքական կայսրութեան մէջ չկայ ոչ մէկ կտոր հողամաս, որ հայ բնակչութիւնը կազմէր մեծամասնութիւն»:

Մեր պատուիրակութիւնը զգալով ու տեսնելով, որ այլ կէտ միջոցաւ Թուրքերը իրենց համար իրատական սպացոյց կ'ուզեն ստեղծել թրքահայկական պաշտօններու անհիմն բլլալով մտախն՝ վճռահանուպէս յայտարարեց, որ եթէ այլ կէտը զաշնայրին զարս չձրդուի, զաշնայիրք պիտի շտարպարսի մեր կողմէ: Թուրքերը՝ տեսնելով մեր վճռականութիւնը՝ զարս ձրդեցին այս կէտը, և Ալեքսանդրապոլի զաշնայրի մէջ ան չկայ: Մինչդեռ թրքական «Ստպահ» յրապիրք սպարքած էր Ալեքսանդրապոլի զաշնայիրք՝ պահելով անոր մէջ այլ կէտը:

«Ստպահ» թերթին զաշնայիրք նոյն ձևով արտատուպեցաւ Պոլսոյ թրքական միւս թերթերու մէջ, այնպէս ալ անցաւ հայ յրապիրներու մէջ: Թէ՛ մեր պատուիրակութիւնը և թէ՛ մասնաւանդ, ևս Ենթարկուեցանք շախապանց խիստ բննայատուկեանց աչդպիսի կէտ մը ստարպարսի համար: Գեկտեմբերի վերջերուն յրապիրներու խմբադրութիւններուն և ու զգլեցի աստմծին նամակներ, որոնցմով ջանագի վերականգնել ճամարսութիւնը, այսինքն՝ որ յիշեալ կէտը Ալեքսանդրապոլի զաշնայրին մէջ չկայ:

Ալեքսանդրապոլի զաշնայրին բնայիրք կը պահուի Երևան, խորհրդային կատարութեան մօտ: Թո՛ղ անոնք, որ ուժ և հնարատարութիւն ունին, փոխեն Ալեքսանդրապոլի զաշնայրի պայմանները: Եւ մենք, այլ զաշնայիրք ստարպարսներս, կ'ըլլանք ատմջինները, որ կը ծափահարենք: Բայց ահա անցած է արդէն քանի տարի, ևս զմախտարար, դրսութիւնը չէ փոխուած...

**Վ Ս . Գ Լ Ո Ւ Ե Խ**

**ԽՈՐՀՐԳՈՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ԶԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ**

(2 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1920 — 16 ՓԵՏՐՈՒԱՐ 1921)

*Տեսանք, թէ ինչպիսի փաստական պարագաներու մէջ Հաստատուեցաւ խորհրդային իշխանութիւնը Հայաստանի մէջ: Բայց իրաւապէս խորհրդային իշխանութիւնը չին ազդային կառավարութիւնէն (Ս. Վրացեան) փոխանցուեցաւ ստանձին Համաձայնագրով, որ ամբողջութեամբ մէջ կը բերենք.*

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**

Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. լիազօր ներկայացուցչու րեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ:

2 Գեկտեմբեր 1920 մի կողմից Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. ի լիազօր ներկայացուցիչ ընկեր Լեւոնանը, Ռ. Կ. Կ. Կ. ի լիազօրութեամբ, ի դիմաց Ռուսաստանի խորհրդային կառավարութեան, եւ միւս կողմից ընկերներ Գրօն եւ Տէրտէրեանը, ի դիմաց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան կնիքեցին համաձայնութիւն հետեւեալի մտին.

1.— Հայաստանը յայտարարում է անկախ Սոցիալիստական հարեղային Հանրապետութիւն:

2.— Մինչեւ Հայաստանի հորիւրդների համագումարում քի կրալիւմը կազմում է ժամանակաւոր ռազմա-չեղափոխական կոմիտէ, որին կ'անցնի բովանդակ իշխանութիւնը Հայաստանում :

3.— Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը ընդունում է, որ Հայաստանի Սոցիալիստական խորհրդային Հանրապետութեան հողերի մէջ անվիճելի կերպով մտնում են՝ Երեւանի նահանգը իր քալար գատոններով, Կարսի նահանգի մի մասը, սրբ զինուորական տեսակէտից կ'ապահովէ երկարուղու տիրապետութիւնը, Ջաջուր-կայարանից Արաբս-կայարանը, Գանձակ նահանգի Զանգեզուրի գատար եւ Ղազարի գատարի մի մասը (Օգոստոս 10)ի համաձայնութեան սահմաններում, եւ Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետութեան տակ էին գտնուում մինչեւ 1920 Սեպտեմբեր 28 :

4.— Հայկական բանակի հրամանատարական կազմը չի եմբարկում պատասխանատուութեան այն գործերի համար, որ կատարել է բանակի շարքերում մինչեւ Հայաստանում խորհրդային իշխանութեան յայտարարումը :

5.— Գաշնակցութեան եւ ուրիշ սոցիալիստական կուսակցութիւնների — Սոց. Յեղափոխական, Սոց. Գեմոկրատ, — անդամները ոչ մի հալածանքի չպիտի ենթարկուեն այդ կուսակցութեան պատկանելու ե կամուրհատական կուսակցութեան դէմ մղուած կռիւներում մասնակցելու ու խորհրդային Հայաստանի յայտարարութիւնից առաջ կառարարած գործերի համար :

6.— Ռազմա-Յեղափոխական կոմիտէի մէջ մտնում են 5 անդամներ կամուրհատական կուսակցութեան կողմէ նշանակուած եւ երկու անդամ ձախ-դաշնակցականների խմբակից, համաձայնելով կամուրհատական կուսակցութեան հետ :

7.— Ռուսաստանի խորհրդային կառավարութիւնը միջոցներ է ձեռք առնում անմիջապէս կենտրոնացնելու Սոցիալիստական խորհրդային Հանրապետութեան անկախութեան պաշտպանութեան համար անհրաժեշտ զինուորական ուժեր :

8.— Սայն համաձայնագիրը ստորագրելուց յետոյ Հոյաստա-

նի Հանրապետութեան կառավարութիւնը քաջաբար է իշխանութիւնները: Իշխանութիւնը ժամանակաւոր կերպով, մինչեւ յեղափոխական կռիւտի գալը, անցնում է զօրահրամանատարութեան, որի գլուխն է կանգնում Դրօն: Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կողմից Հայաստանի զօրահրամանատարութեան կից կռիւտը է նշանակում ընկ. Սիլինը:

Պատաստում է երկու օրինակ:

Ռ. Ս. Ֆ. Հ. լիազօր ներկայացուցիչ՝

ԼԵԳՐԱՆ

Հայաստանի Հանրապետութեան լիազօրութեամբ՝

ԳՐՕ, ՏԷՐՏԷՐԵԱՆ

*Այս համաձայնագիրը ստորագրուեցաւ 1920 թ. Դեկտեմբեր 23-ին կէսօրէ առաջ: Ստորագրութենէ առաջ նախագիծը քննուեցաւ կառավարութեան նիստին և վաւերացուեցաւ քանի մը փոփոխութիւններով:*

*Դեկտեմբեր 31-ին քանի մը օրերու ժամանակաւոր գիտազօրները՝ բոլոր գինուորական սմբուսներու գլխաւոր հրամանատար Դրօն և ռուսական խորհրդային իշխանութեան բաժնաւոր Սիլին ուղարկեցին ի գիտութիւն և գեկաւարութիւն Նեակուալ շրջաբերականը:*

Պատնէն

Ռատիօ-նրբեան, 315-39-1, 20.— Բուսրա-Ռատիօ.

«Հայաստանը յայտարարում է հորիզոնային Հանրապետութիւն: Մինչեւ հորիզոնային Հայաստանի յեղկոմի ժամանումը Երեւան՝ կառավարական իշխանութիւնը յանձնում է զինուորական հրամանատարութեանը, որի պետ նշանակում է ընկ. Դրօ Կանայեանը և Ռ. Ս. Ֆ. Ս. Հ. կռիւտը Հայաստանի հրամանատարի մօտ ընկ. Սիլինը: Հայաստանի բոլոր պետական հիմնարկութիւնները, սրաշտնական անձինք և քաղաքացիները սպասուող են անյապաղ կատարել զինուորական հրամանատարութեան կարգադրութիւնները: Նրանք, որոնք կը վարուեն հրամանատարութեան կարգադրութիւնների հակառակ, կը նանաչուեն յանցաւոր և անմիջապէս պատասխանատուութեան կ'ենրարկուեն յեղափոխական շրջանի օրէնքների համաձայն:

Նրեք Դեկտեմբերի, յի 6815. Հայաստանի զինուորական ուժերի հրամանատար ԳՐՕ, Ռ. Ս. Ֆ. Ս. Ռ. կռիւտը ՍԻԼԻՆՅ:

Ըստ արտաքին երևույթներուն՝ ամբողջ Հայաստանի մէջ նոր իշխանութիւնը ընդունուեցաւ ատենց ակներեւ զիմպորտիւան: Չընդունեց և չձանչցաւ գոյն և երկար ամիսներու ընթացքին կը չարունակէր չձանչնալ Հայաստանի հարստային մասը՝ Չանդեկուրը: Չձանչցողներու զլուխն անցած էր Չանդեկուրի զինուած ուժերու հրամանատար Նեպոլէնը:

Թէ ինչո՞ւ Չանդեկուրը չձանչցաւ Խորհուրդներու իշխանութիւնը, Նեպոլէնը բացատրած է իր ասանձին յօդուածաշարքին մէջ, որ տպուեցաւ «Ազատ Սիրնիք» վերնադրոյ 1925 թ. «Հայրենիք» ամսադրի Մոսկա և Յունիս համարներուն մէջ:

Նոր իշխանութիւնը սարսափ կը ներշնչէր և առաջ կը բերէր արտաբնակ հնազանդութիւն: Բայց այց՝ զխառնութեան և ակնածանքի զրոյց հիմնուած ճանաչում չէր: Իշխանութիւնը օտար էր ժողովուրդին: Անոր կ'սպեկղէին ռուս զինուորական ուժը և քաղաքական սասիկանութիւնը՝ Չեկան, որոնք իր յենակէտներն էին: Հին հայկական բանակը սղէտք է մտնէր խորհրդային հայկական բանակի կողմի մէջ: Իրրեւ միացնող օդակ կը հանդիսանար Դրօն, որ սուրպան Տեղինակուոր անձնուորութիւն էր Հայաստանի զինուորական և քաղաքացիական ազդարնակութեան համար: Դեկտեմբեր 3ին Դրօն հրաման արձակեց զօրքին և կոչ ուղղեց ազդարնակութեան՝ հրախրելոյ հարտակիլ նոր իշխանութեան: Պէտք է շեշտել, որ Հին կառավարութիւնը որինական կերպոյ յանձնեց իշխանութիւնը նորին: Նոր կառավարութիւնը ս'չ' մէկ գիտարութիւն ունեցաւ իշխանութիւնը, պետական գոյքը և պատրաստի գրամը ընդունելու համար: Հին կառավարութիւնը Տեղացու ասպորէզին՝ շուղելոյ առաջ բերել տւելոյք և անօրուա արինահեկութիւն: Ան հնարասութիւն տուաւ նոր կառավարութեան զործոյ ցոյց տալու և կատարելու իր խոստումները ժողովուրդին ստջև:

Նախկին նախարարներու և Խորհրդարանի անդամներու մէկ մասը թողաց Երևանը Դեկտեմբեր 2ին և յետներոյ ճանապարհուեցաւ զկողի Վրաստան, բայց ճանապարհին ձերբակալուեցաւ և հրակողութեան տակ ևտ բերուեցաւ Երևան, որ մնաց բանտարկուած: Միս մասը սպեկուրուեցաւ զկողի Չանդեկուր և սպասոյ հասաւ տեղ:

Նախարարներէն և Խորհրդարանի անդամներէն մէկ քանին անցան անլիզալ գրութեան: Նախկին գաշնակցական նախարարներէն բաց կ'սպորէին միտն Ս. Վրացեան, Յ. Քաջազնունի, Այ. Խատիսեան, Ս. Տիգրանեան, Ա. Գիւլխանկանեան: Խորհրդարանի գաշ-

նտիցականն անդամներու մէկ մասը ինքզինքը յայտարարեց «ձախ-  
դաշնակցական» և սշխտակցաւ խմբակ կազմել: Այդ փորձը, սա-  
կայն, չյաջողեցաւ: Մէկ մասը յետոյ պարբարակ մտաւ կոմունիս-  
տական կուսակցութեան մէջ, իսկ միւս մասը՝ երկու երեք ամիս  
յետոյ հեռացաւ Հայաստանէն:

Դեկտեմբեր Աին երբեան եկաւ նոր խորհրդային կառավարու-  
թեան կազմը՝ Կասեանի նախագահութեամբ և մտաւ իր պաշտօնին  
մէջ: Այսպէսով իսկապէս ընդմիջումը Ս. Վրացեանի սոցիալին կառա-  
վարութեան զազրելու և անոր յաջարկոյ Կասեանի խորհրդային կա-  
ռավարութեան միջև տեսց ընդամէնը չարտ օր:

Դեկտեմբեր Կին երբեան մտան սուս-խորհրդային բանակի  
ստաջին զորամասերը: Եւ սկանառես Կի այդ տեսարանին իմ բնա-  
կարանի պատահանէն, որ կը գտնուէր երբեանի գլխաւոր՝ Արտի-  
եան փոստային վրայ, ուրիշ կ'անցնէին զօրքերը իջնելով Քանաքեռ  
գիւղէն և ուղեւորուելով նախկին Խորհրդարանի շէնքը, սրտն առ-  
ջեւ տեղի ունէր զբեթէ մնայուն միտինոյ: Ինչպէս հին ցարական  
օրերուն՝ վաղ ստաւօտարնէ նոր կառավարութեան պաշտօնեաները  
տունէ տուն անցնելով՝ կը հրամայէին պատահաններու և պատըշ-  
գամներու վրայ կախել զարկեր և սրել կործիր կտոր: Նոյնպիսի  
կորցապարսթիւն եկաւ և իմ տան տիրաջը:

Փամը Էին երեւոյցին զօրքերը, սրտնոյ ընդառաջ վացին Դրօն և  
բողոքատար: Զօրքերը երկու տեսակ էին, կապակներ և թնդանօ-  
թածից զորամաս: Անոնք յոյնած զէմք ունէին, հազուած էին վատ:  
Ատանց միջադէպերու անցան վացին վաղօրօք պատրաստուած մաս-  
նաւոր բնակարանները:

Փոստպարբը վախէն փոստոյ չէր դուրս գար: Մասթերու վրայ  
կանցնած էին խումբերով պատանիներ և բանի մը երիտասարդներ  
կարմիր նշաններով: Ինչպէս Պուշկինը «Պարիս Գոպուսովի» մէջ  
բասձ է «ժողովուրդը լուռ էր»:

Կառավարութեան ատաջին զորքը եկաւ՝ կազմել «բնակարան-  
ների բռնադրաման յանձնարումը»: Նոր եկածներու համար պէտք  
էին բնակարաններ: Սկսաւ բնակարաններէ տրտարասմը և «սեղ-  
մումը»: Եկած նոր պաշտօնեաները ուղակի կ'իջնեանէին տուներու  
տաջէ, անմիջապէս կը սկսէին գարս քշել սենեակներու ապրոցները:

Յետոյ սկսաւ պաշարեղէնի բռնադրամումը: Աղղարնակութիւ-  
նը խուճապի մէջ ինկաւ: Քաղաքին մէջ սկսան տարածուիլ ամէն  
տեսակ յուրեր: Անմիջապէս հաստատուեցաւ Չեկո՝ Այլադեանի ղե-  
կավարութեամբ:



Այն քսանամեայ շրջանին, երբ ևս մօտ յարարեալութիւններ ունեցայ ցարական բարձր իշխանութեան հետ, նոյնիսկ ոչկապիտի մեմեմտայ օրերուն, շատ անգամ տեսայ ժողովորդի ահարեկութեամբ զիճակը իշխանութեան առջև: Այդպէս էր 1904 թ.ին՝ առաջին սուսական յեղափոխութեան նախարեակին, 1907—1908 թ.ներուն՝ սուսական յեղափոխութեան ճնշումէն ետք: Բայց 1920 թ.ի «յոութիւնը» առանձին կնիք կը կրէր. այնպիսի տրամադրութիւն էր, կարճևս թէ կը ճնշէր օտար, մտայ սյժ մը, ժողովորդին համար միանգամայն խորթ, — և ժողովորդը լուելայն քաշուած էր մէկ կողմ:

Գեկեմբեր 6ին, գիշերուան մօտ ժամը 12ին, երբ ինձ մօտ նստած էին քանի մը հողի իմ բարեկամներէն, մօտս բնակող սոյայ Մուշեղ Թումանեանը յայտնեց, թէ զօրավար Արէշեանը շտապ կ'ուղէ ինձ տեսնել: Պարզուեցաւ, որ այն բայր անձինք նախկին նախարարական կազմէն և Խորհրդարանի անդամներէն, որոնք փորձեր էին անցնիլ Վրտոտան, (Համօ Օհանջանեան, Ա. Չիլիպիբեան, Վ. Բարայեան, Իմ. Յ. Տէր Դուբեան, Գ. Վարչամեան, Վ. Նաւասարդեան և ուրիշներ) ձերբակալուած էին ևս ամէն բովէ կը սպասուէր անոնց մտաքը Երևան: Հտակնայի էր թէ ս'ըբան անհանդուտացանք անոնց զիճակին համար:

Ես անմիջապէս զուրս եկայ տունէն՝ Թումանեանի և Արէշեանի ուղեկցութեամբ: Մութ գիշեր էր: Ոչ մէկ լոյս կ'երևար: Ահարկու յոսիքին էր: Մենք այցելեցինք ձերբակալուածներէն մէկուն սեկնոջ: Ան կը խեղցուէր տրտատութեան՝ վախնալով, որ իր ամուսինը հէնց նոյն գիշերը կը զնդակահարեն:

Քննութեան տանելով իրերս զրութիւնը ևս խոստացայ անսպասուած միւս օրն ևս եթ տեսնել կտաւարութեան նախագահ Կասեանը ևս ամէն հնարաւոր միջոց ձեռք առնել ձերբակալուածներու զիճակը թեթևեցնելու համար: Տուն վերադառնալով՝ մտածեցի, թէ որքան իրուացի էր իմաստուն Գուցկալի «Ուրիշ Ակոստա» տրամաշի մէջ, երբ կրէր, թէ «այդ բայրը կ'զամ է»:

Յիշեցի, թէ ինչպէս յայտնի բաշեիկ Ստեփան Ծառուսեանի կինը ինձ կը խնդրէր շտապել ժանտարմական զնոյ. Պատարիւլինի մօտ իր ամուսնի զիճակը թեթևեցնելու համար, և ինչպէս յեղափոխութենէն յետոյ, այդ միևնոյն Պատարիւլինի կինը կը խնդրէր ինձ՝ այն ժամանակուայ Կոմկասի քամխարին, վտանգի շենթարկել իր ամուսինը: Յիշեցի նոյնպէս իմ յաճախակի զիմումները ցարական ոչժիմի օրերուն բաշեիկները՝ Կամօ Տէր Պետրոսեանի, Կիտալայի



**Հայաստանի Հանրապետության պետական դեմոկրատիկական կուսակցության ղեկավարները**

*Լս արիչներու վիճակը թեթևացնելու համար :*

*Առատաուն զոսցի Կասեանի մօտ : Ընդունարանի մուտքի առջև հանդիպելոյս բարձրահասակ պարանի մը , կարմիր եռանկյունի սաալարարգ զլխարկով : Այլապէսն էր , Չեկոյի նախապահ : Յետոյ անոր հետ հանդիպելով խնայոյ , որ ան նախկին ունկնդիրն է իմ գտտախօսութիւններուն , զոր կը կարգաւի Թիֆլիս Չրգ զմեռագետի շինութեան մէջ 1903 – 1905 թ . :*

*Կասեանի հետ խօսելով՝ Լս սկիզբէն իսկ լսի , թէ ստաջին անգամը չէ , որ ինձ կը միջնակուի խնդրել քաղաքական բանտարկեալներու համար : Ան զիտէր այլ : Լսելով իմ խնդիրքս՝ գոնէ չզոհակահարկի ձերբակալութեանը՝ ան պատասխանեց հետեւեալ խօսքերով .*

*«Մենք բոլորովին չենք մտածում նրանց զնդակառարել : Մենք ուզում ենք դասել նրանց եւ ուզում ենք որ դասը լինի հրապարակային եւ ցուցադրական : Մեզ համար կարեւոր է պարզել Գաշնակցութեան էութիւնը եւ ցոյց տալ ժողովրդին նրա անկարողութիւնը : Գտոր մենք կը սկսենք խօսելու , երբ կը վերջացնենք մեղադրական նիւթերի հաւաքումը : Թէ ինչ կը լինի դատավիճոր — ես չգիտեմ , ի հարկէ : Անձամբ ես կարծում եմ , որ ձերբակալութեանը երկուսը — ան անուանեց երկու անձ — յամենայն դէպս կը դատաւարտուեն մտնուան : Նրանց դէմ որոշումը գործող է . բայց այս բոլորիս ոչ մի ոչինչ չի սպառնում : Թէ եւ մեր երիտասարդութիւնը կ'ուզենար անմիջապէս վերջացնել այդ գործը , բայց մենք նրան պահում ենք» :*

*Ասով ստաջին խնդիրը առժամակա սպառած էր : Ապա մենք անցանք Ալեքսանդրապոլի գաշնակցին : Եւ համառօտակի ծանօթացողի Կասեանը բանակցութիւններու ընթացքին Լս այն «պատճառներուն» որոնք զրգէլին պատուիրակութիւնը օգտակար համարել գաշնակցի ստորագրութիւնը :*

*Կասեանը ինձ ըստ .*

*«Ի՞նչ օրինաւոր վարուեցաք : Այն բոլորին անկարելի էր վարուել ուրիշ կերպ : Բայց դաք հասկանում էք որ մենք խարիբային իշխանութիւն ենք . մենք չենք կարող վերցնել մեր վրայ պատասխանատուութիւնը այս գաշնակցի համար : Եւ այդ պատճառով մեր մտնուլի մէջ շատ խիստ կերպով կը քննադատենք եւ կը պախարա-*

կենք ձեզ: Բայց դու տաճախական հարց է: Մեր նպատակն է չճանաչել այդ դաշնագիրը եւ կազմել նոր համաձայնութիւն: Բայց եթէ երբեմնից դուք հրապարակ հանէք մեր կարծիքը, թէ դուք հարկադրուած էիք ստորագրել դաշնագիրը, — մենք կը հերքենք մեր այսօրուայ խօսակցութիւնը»:

*Եւ յպատասխարէ յիշեցի, որ նման նախադասութիւն եւ լսած եմ Կոմկասի փոխարքայ կոմս Վարոնցով-Գաշկովին իմ վարժունքի տոթիւ Քիֆլին քաղաքի կոպմէ Պետական Գումայի անդամի ընտրութիւններու ժամանակ: Այն ժամանակ ալ Երկու կոտող կոպմերու ուժերու հաւասարութեան պատճառով վճռական դեր կը խաղալու Հինգ ձայներու խմբակ մը, որ կը դռնուէր իմ ազդեցութեան տակ: Եւ Հէնց իմ ազդեցութեան շնորհիւ անցաւ սոցիալ-դեմոկրատ կուսակցութեան թեկնածու Չիլիճէն՝ տաղալիւրի ապստամբութեան առաջնական կուսակցութեան թեկնածու իշխան Անտրոնիկովը:*

*Եւ այն ժամանակ քաղաքայուի էի. Եւ այնուպէս անհերք դռն-դատեր կ'էին փոխարքային, թէ իմ շնորհիւ անցեր է ընկերավարական թեկնածուն: Անձամբ փոխարքան ընկերավարական թեկնածուի կողմնակից կը եւ կը գտնէր որ ան Պետական Գումայի մէջ կը յարձակի կեղծողական իշխանութեան վրայ Եւ հանդիստ կը ձգէ փոխարքան: Բայց այնուպէս անհերք ըստ էր, թէ անբուական կը ինձմէ: Այդպէս է, բայց Երևոյթիւն, զորքէնկերպը բոլոր բոնապարտական ուժ-ժիւններու:*

*Յետոյ եւ անցայ Երրորդ խնդրին, իմ որոշման՝ մնալ Հայաստան իբրեւ սոսի քաղաքացի:*

*Կատանը պատասխանեց.*

*«Գուք այնպիսի կարկառուն դէմք էք եւ այնպիսի պաշտօն էիք վարում. որ մեր ընդհանուր կարգի համաձայն դուք պէտք է բանտարկուած լինէիք: Բայց նախ՝ դուք շատ ազնուաբար պատուիրակութեան Ձեր բոլոր ընկերակիցներով — Գիւլիանցսեանի եւ Ղոր-զանեանի հետ — եկաք մեզ մօտ: Եւ դա մեզ հանելիորէն զարմացրեց: Իսկ երկրորդ՝ եթէ դուք կը շարունակէք ապրիլ յայտ կերպով, Լեզ-բանի եւ Սիլիբի այն յայտարարութիւնը, թէ դուք ազատ կը լինէք, կը մնայ իր ոյժի մէջ»:*

*Դրանով վերջացաւ մեր խօսակցութիւնը:*

*Տեսնուեցայ Ս. Վրացեանի Հետ իր բնակարանին մէջ: Անոր*

ժող էր նշյուղէս Սորհրդարանի անդամ Լեւոն Քաղզուեանը: Վրաց-  
եանի Հեա խօսեցայ երեւան մնայու կամ Հայաստանէն Հեռանալու  
աստեւելովիւններու մասին: Վրացեանը կը զանկը, որ իմ երեւան  
մնայ աննպասակ բան է, քանի որ խորհրդային իրաւակարգի պայ-  
մաններու մէջ ինձ համար լեզու աշխատանքը անհնարին կ'ըլլայ:  
Այն ինչ՝ Եւրոպան կրնար ինձի Հնարասրտութիւն տալ շատ աւելի  
օգտակար ըլլայու իմ ժողովուրդին:

Անցաւ դարձեալ շարաթ մը: Կու գային նոր պաշտօնեաներ:  
Կային գաւանդաւորներ, որոնք կը շատուէին իրենց հաստարժու-  
թիւնը յայտնել նոր իշխանութեան: Ես ամէն օր զուրս կու գայի  
փոփոց գրասենլու: Վրաս կը նային ոմանք փոխնաւով, ոմանք ալ  
շարութեամբ: Բայց չէին անհանդուատցներ:

Նոյն վիճակի մէջ էին նաև պատուիրակութեան միւս անդամ-  
ները: Բայց քանի մը օր յետոյ իմ քեռային, Լեւոնա Աջլմեանը,  
մոլոսանդ բարչեւիկ մը, որ երկու ամիս յետոյ սոցանուեցաւ, ինձ  
բուս, թէ երիտասարդ բարչեւիկներու շքմանին մէջ չեն հասկնար,  
թէ ինչու ինձ հետ աչոյղէս քաղաքափարութեամբ կը վարտին և  
ինչու՞ չեն բանասրկեր: Հարցը հասաւ կառավարութեան: Եւ սՀա  
Դեկտեմբեր 13ի աստուօտուն Չեկոյէն Հրաման ստացայ իրեն ներ-  
կայանալու: Գաջի: Նման Հրամաններ ստացած էին և երկու միւս  
անդամները Այլքսանդրապոլի պատուիրակութեան՝ Ա. Գիւլխան-  
զանեանը և Ղարզանեանը:

Չիս քնդանեց Չեկոյի նախագահ Այլապեանը: Չրոյցը չափա-  
յանց քաղաքափար ընտթ կը կրէր: Այլապեանը բաս թէ իմ ազատ  
դրութիւնը Հայաստանի մէջ կը գտնայ անյարմար: Ժողովուրդը կը  
սեանէ և կրնայ անյանկայի տուաւորութիւն ստանայ, թէ խոր-  
հրդային իշխանութիւնը կը քաշուի դիւ բանասրկել: Այդ պատ-  
ճասով քանի մը կամուրիսաներ անհրամեշտ կը գտնեն բանասրկել  
դիւ: Կառավարութիւնը (յեղիմը)՝ բնութեան ստեւելով այդ դրու-  
թիւնը՝ գտաւ, որ սորա մնայր աւելի երկար ժամանակ այլևս ան-  
թայտարելի է, որոչեց՝ աքսորել ինձ Հայաստանի սահմաններէն  
զուրս: Նոյնը որդեկրուած էր նաև Գիւլխանզանեանի և Ղարզան-  
եանի վերաբրմամբ:

Մեկնումը նշանակուած էր Դեկտեմբեր 15ին, ստուօտեան  
ժամը 6ին ինքնուշարմով Դիլիջան-Ղարաքիլիսա ճանադարհով, իսկ  
այն աւղէն երկաթուղիով:

Մեկնումէն առաջ ևս հրամեշտ տուի Ա. Վրացեանին, Յ. Քա-  
ջազնուելին, Ա. Տիգրանեանին և այլերեցի կառավարութեան նա-

խողան հասեանին՝ անգամ մը ևս միջնորդելու բանտարկուած գործիչներու համար: Ան նորէն կրկնեց սր պիտի գատուին, իսկ դատէն առաջ բանտարկուածներէն ոչ ոք չի սպաննուիր: Տեսայ նաև Դրոն, սր արդէն իսկապէս զործերէ հետացուած էր: Ան մէկ կողմէ ձանձրացած էր իր անարջութենէն՝ խորհրդային իշխանութեան և ժողովարդի միջև, իսկ միւս կողմէ ամէն միջոցներով կ'աշխատէր օգտակար ըլլալ բանակին և կուսակցական իր հին ընկերներուն:

Գեղտեմբեր Ար նուիրեցի Հայաստանէն մեկնելուս հետ կողուած գործերուն: Բնակարանիս մէջ մնաց իմ կրտսեր եղբոր բնտանիքը: Մասս փոխադրուեցաւ զինուորական տետանի անգամ Բաղդատեանը: Իսկ ևս, Գեղտեմբեր Ային, փոքրիկ պայտաստիւթի, նստայ ինքնաշարժ - ինձ միացան Ալեքսանդրապոլի պատուիրակութեան բնակիչներու: Մեր իրերը Ենթարկուեցան ջնհութեան, բառ սրում, մեկ յայտնեցին թէ կարելի չէ գուրս տանիլ փաւերապրեր, իսկ նամակներ և գրամ եթէ կայ, չեն արդիւրիւր: Դրամ գրեթէ չունէի, բայց ունէի նամակներ սր բերած էին Երևանցիք յանձնելու համար իրենց ապրականներուն Քիֆրիսի մէջ:

Գեղտեմբեր Ային աստուտեան ժամը 9ին մեկնեցանք: Մեր հետ բեռնատար ինքնաշարժով Ալեքսանդրապոլ կ'երթային Երկու կամ մուսիսաներ՝ օրիսրդ Արէշեանը և Երիտասարդ մը: Յուրտ գեղտեմբերեան օր էր, թէևս արեւոտ: Մենք կ'երթայինք շատ զանգաղ: Տրամադրութիւններս ծանր էին ու մոռայ:

Գիշերեցինք Քազախ գիւղը: Գիւղացիք իմացան թէ ով ենք մենք և ընդունեցին մեձ հաճութեամբ:

Աստուտեան շարունակեցինք ճանապարհը: Խնայելով կը յաստանային նոր սուտական գործեր՝ զէպի երեւան:

Հետեւեալ գիշերը անցուցինք Ձիրսիլու գիւղը, իսկ Գեղտեմբեր Ային գիշերեցինք Ղարաբիլիսայի մէջ: Այստեղ վերջացուած ճանապարհորդութիւնը ինքնաշարժով, և հետեւեալ օրը պէտք է ճամբորդէինք Երկաթուղիով:

Կամոնիստներու փոքր խումր մը, գժպոհ, որ միայն մեկ կ'աքսորէին, պատրաստուել էր Ղարաբիլիսայէն գէպի Վրաստան ճանապարհին մեկ սպաննել: Այդ մասին մեկ նախազգուշացուցին: Միջոցներ ձեռք առինք, և ամէն ինչ անցաւ լուս:

Ղարաբիլիսայի Ձեկայի պետն էր իմ նախկին պաշտօնեայ, Քիֆրիսի քաղաքային ինքնապարտութեան մէջ, Լեւոն Ուլիբէկեանը: 1906 թ. ան ձերբակալուեցաւ, գտտի Ենթարկուեցաւ և արսորուեցաւ Սիբիր: Ժամանակին ևս անոր համար շատ աշխատեցայ, այն-

պէս որ ան ձեռն երախտադրուած թիւն ունէր ինձ հանդէպ : Մեզ համար պատրաստեցին ընթրիք, որոս ընթացքին, Լևոն Ուլիբէկեանը արտասանեց ճառ մը, որուն մէջ շեշտեց թէ «բոլշեւիզմը ամբողջ մարդկութեան բարօրութիւն կը բերի, եւ նա, ով չի ըմբռնում այդ ախար, կ'ըմբռնի վաղը» :

Ստաւօթեան սղջ-ասուղջ հասանք կայարան : Օրը Կիրակի էր . կայարանը գտաւրկ էր : Մենք տեղաւորուեցանք վազոնի մէջ . ժամը 3ի մօտ եկաւ կայարան Կարսէն Էնկիւրիի կառավարութեան արտաքին գործերու նախարար Բեքիր Սամի բէյը իր գաւկին հետ . կ'ըմբռնէին Մասկուտա :

Մենք ծանօթացանք անոր հետ : Ըմտնօթանալէ ետք անմիջապէս ան բաս , թէ շատ վերաւորուած էր, որ հայկական կառավարութիւնը անոր տուած իր պատասխանի տակ ստորագրած էր քեան թիւ պատգամ : Բեքիր Սամի բէյը այդ էր համարէր գիտաւորեալ վերաւորանք իր եւ տմբոյջ թուրք կառավարութեան հասցէին . Ես բացատրեցի անոր եղելութիւնը, Եւ մենք սկսանք խօսիլ հայ-թրքական յարաբերութիւններու մասին :

Ես գտնեալէս գանդատեցայ Ալեքսանդրապոլի գաշնադրի ծանր պայմաններու վրայ՝ յարանկրթի որ հայ-թրքական յարաբերութեան այդպիսի բնուցատուած Եւ անարդար յաճումը ո՛չ մէկ կերպով պիտի բարարէ Զայիւրը, Եւ թշնամութիւնը պիտի շարունակուի :

Բեքիր Սամի բէյը, ինքը Տագոտանցի, որուն հայրը Եղած էր ռուսական բանակի գործարար, անկեղծ ցանկութիւն ունէր տեսնել կոպիակեան հանրապետութիւններն անկախ : Թէ Լե կը քաշուէր իր սրշտօնական գերէն Եւ կ'արտայայտուէր մեծ գոյշտութեամբ : Այնուամենայնիւ ան հնարաւոր համարեց բուլ, թէ «հայ-թրքական խնդիրը վերցնական կերպով կը լուծուի այնպիսի դիւանագիտական սեղանի շուրջ, որուն կը մասնակցին Թուրքերը, Ռուսերը, Անգլիացիք եւ Զայիւրը : Երէ նոյնիսկ մէկը այդ շորս կողմերէն բացակայի կամ ետանայ առանց զստացում ստանալու . խնդիրը դարձեալ պիտի մնայ շլուծուած» :

Երեկոյեան ժամը 10ին մեր գնացքը ճանապարհուեցաւ Եւ ստաւօթեան ժամը 7ին Գեղեթեմբեր 20ին հասանք Թիֆլիս : Տաս որ ասուց քաղաքի մէջ յուր էր տարածուած , որ Ես , իրը թէ , սղաննուած էի : Այդ մասին գրած էին թերթերը :

Իմ Հեռանալին յետոյ Հայաստանի մէջ կեանքը սկսած էր օր բառ օրէ աւելի ծանրանալ: «Մեզ պէտք է քաղաքացիական կռիւ — կ'ըսէին Հայաստան եկած բազմաթիւները — անկրամեշտ է, որ եւրոպայէն յարգուի միայն քրիստոնէական եւ քաղաքացիական իրաւունքները: Այդ պատճառով բոլոր իրենքը չէին քաշուեր ո՛չ մէկ բանէ, որ կարող էր ապստամբութիւն առաջ բերել:

Բռնադատումները սաստկացան եւ տարածուեցան նաեւ գիւղերու վրայ: Պահեստներէն կը հանէին պաշարները եւ կ'ուղարկէին Ռուսաստան, իբրև «ճաւէր Լեւիզիոյ Հայաստանից»: Ժողովուրդը կը մասնուէր յուսահատութեան: Գիւղացիներէն սկսան բռնադատել անասուններ, հասերը, հացահատիկները: Տնտեսական կամայականութեանց եւ կողոպտութիւն յաջորդեցին անպատշաճ քաղաքական հարաւորութիւններ: Բռնի կերպով աքսորուեցան բոլոր Հայ սպաններ, հարաւոր մտասուրակներ, եւ աչքի ինկող մարդիկ բանտ նետուեցան: Կրօն Մոսկուա գրեկուցաւ իր սպաններուն հետ: Սկսան ցանցուածային խուզարկութիւնները: Փետրուար 23-ն մինչ 6 կը վնտոկէն պաշարեղէն:

Բազմաթիւներու ներխուժումը ժողովուրդի մասնաւոր կեանքի բաւր անկիւնները զայրոյթ պատճառեց նայնիսկ անոնց, որոնք քաղաքականութեան հետ ոչ մէկ տարնչութիւն ունէին: Երկրի մէջ չէր մնացած ոչ ոք, որ այս կամ այն կողմնակալ խորհրդային իշխանութիւնը հարուածի ենթակայ շղարձներ: Յեղկամբ զրգոյն կերպով նշանակած էր արգարայատութեան քամիսար բեմալական գործակալ մը՝ թուրք Սայիթման-Նուրին: Եւ ինչպէս միշտ կը պատահի նման օրերուն, իշխանութեան Լոսանդոն գործակալատարներն էին զարձակ հասարակութեան սակոնքներն ու գետ երկկ բանտը նետումները, որոնք այսօր նոր իշխանութեան կողմէ պատուած էին բանտերէն: Այսպիսի պայմաններու մէջ զարմանալի չէ, որ պայթեցաւ Փետրուարու Լոսանդոնի իշխանութիւնը, որուն մանրամասնութիւնները յայտնի են սկանաւտեաներու պատմածներէն:



## ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ՓԱՐԻԶ ԵՒ ԼՈՆՏՈՆ

Այսպէս, որեմն, 1920 թ. Դեկտեմբեր 20ին առաւօտեան ևս մտայ Թիֆլիս, սր մնացի մինչև 1921 թ. Փետրուար 13ը, այսինքն՝ բնդամէնը 58 օր, և ապա հրաւիրուեցայ Փարիզ՝ Պատուիրակութեան հետագրով:

Թիֆլիս դարով՝ ևս այցելութեան դացի Վրաց կառավարութեան, սր չէր սպասեր կարճիւր Բանակի յարձակում, որովհետև գաշն էր կնքած Խորհրդային Ռուսաստանի հետ: Միս կոյմէ թրքական ներկայացուցչութիւնն այ Վրաստանի վերաբերմամբ թշնամական զգացմունքներ և ձգտումներ ցոյց չէր տար:

Թիֆլիսի մէջ խաղաղ կ'սպրէին խտայական, անզյիական և Փրանսական միսինները: Իտալիան նոյնիսկ ունէր զեւսպան Չերուտտիկ. բարձր քովոսարը իսխարինուած էր զեւսպանով: Կեանքը Թիֆլիսի մէջ առերևոյթ աչրան անհոգ էր, որ թատրոնները լիքն էին, սեղի ունէին զուարճութիւններ, ներկայացումներ, բնդունլութիւններ: Բայց իրենց հսպիին խորքը ամէնքն այ կը զդային, որ զրուիիւնը անկայուն է: Եւ կեանքի սղութիւնը աւելի ևս աւելի զգալի կը դաւնար: Ռուրլին հետզհետէ կ'իյնար:

Կապիտան Պուտակոյարը, անկախ Վրաստանի վերջին օրերու ժամին գրած իր գրքին մէջ կը նկարագրէ այդ ժամանակուայ շրջանը: Հետաքրքրական տեղեկութիւններ կարելի է գտնել նոյնպէս Henri Barbusseի գրքի մէջ՝ «Les Extravagances bolchéviques et l'Épopée Arménienne»: Այս գիրքը կ'ընդգրկէ Հայաստանի նախախորհրդային շրջանը, Բաքուի անցքերը, Անդլիացիներու պալը և Բուսուկան ամփոփ կերպով կը պարզէ Կովկասի սոցիալիզմիան յարարելու թիւնները:

Այդ ժամանակաշրջանին՝ Հայաստանի խորհրդայնացումէն յետոյ մինչև Վրաստանի անկումը, գրեթէ չորս ամիսներու ընթացքին, Հայերու գրութիւնը չափազանց ծանր էր: Խորհրդային Հայաստանը բարբառիկ կարսած էր արտաքին աշխարհէն: Ոչ մէկ ազգայնաբան, մարդիկ, հրատարակութիւններ, նոյնիսկ յարկ չէին անցներ սահմանի այն կողմը: Հայաստանը կը գտնուէր բանտարկուած վիճակի մէջ:

Իսկ Վրաստանը ազատ հազարգահցութիւն ունէր արտաքին աշխարհի հետ Բախումի և Փոթիի վրայով: Հայերը Վրաստանի մէջ արդէն կը պայլին, թէ իրենք իսկական քաղաքացիներ չեն: Մանաւանդ ծանր էր այն Հայերու գրութիւնը, որոնք Եկեր էին այնտեղ դանապան պապութենքէ՝ Պուլխարիայէն, Ռումանիայէն, Իգիբէն, Պուլայ շրջակայքէն՝ Հայաստան անցնելու նպատակով: Անոնք չէին ուղեր մտնել «խորհրդայնացած» Հայաստանի սահմանները և միևնոյն ժամանակ միջոցներ չունէին վերագաւանդու համար, Իսկ Վրաստան թոյլ չէր տար անոնց մնալ իր սահմաններուն մէջ: Ետևեր կու պայլին ինձ ձօս խորհուրդ հարցնելու կամ սրել օգնութիւն կամ գրամ խնդրելու իրեն մարդէ մը, որ փոխառութեան պարծով արտասահման ելած ժամանակ պրապապանց կը բրած Հայաստան տեղափոխուելու համար: Ինչպէր կ'ըսէ շատ յամառ գրամական պահանջներու, նոյնիսկ սոցիալիզմիներով հարուստներու հասցելին:

Այդ միջոցին Փարիզէն Թիֆլիս եկու փաստարան Յովհաննէս Զարեանը, և Պոլսէն՝ Սրենցը: Անոնք Եկած էին դանապան պարծելով, ի միջի ալոց, օդնութիւն կազմակերպելու համար այն Հայերուն, որոնք նկզ վիճակի մէջ էին ինկամ վերջին անցքերու հեռուանքով: Այս երկուքի սոցիալիզմամբ ևս զիմուսները բրի յայտնի ունէնոր անձանց և կրցայ որոշ գումար հատարել՝ հայ պաղթականները Պուլխ վերագարձնելու համար: Կը յիշեմ առանձնապէս ծանր վիճակը Արարանքի զեպի բնակիչներուն, որոնք ամէն ինչ ծախե-

յով եկած էին Հայաստան հաստատուելու համար և կոնյո էին առած Բարչայուի գյուտուի չկոք գոտիի մէջ, աւրիկ ստիպուած էին Նորէն վերադառնալ: Կր յիշեմ Արապեան բազմանգամ ընտանիքը, որ ամէն ինչ գաճատելով Իգմիրի մէջ՝ եկաւ Երևան, յետոյ, Ալեքսանդրապոլի գաշնադրի կնքման օրը վերադարձաւ Թիֆլիս՝ թողնելով իր ամբողջ գոյքը և հողին կրցաւ գորս պրծիլ Թիֆլիսէն և վերադառնալ Իգմիր, աւրիկ փոխաւ Յունաստան: Այսպիսի պատկերներ բազմաթիւ էին:

Գրուիւն կատարեալ անորոշութիւնը կը ջլոյնացնէր ժողովուրդը: Բոյսը անոնք որ միջոցներ և հնարաւորութիւններ ունէին, կ'երապէին Յարապ կամ գոնէ Պոյիս Երթալու մասին: Բայց Վրաց կառավարութիւնը խուճապ շտեղծելու համար, արդիւնց գորս տանի օտար արժէքաւոր գրամներ, գոհարեղէն և թանկագին մետաղներ: Մարդիկ սխտան խորամանկութեան զիմել: Կր հայեցնէին արծաթը, օրինակ արծաթէ ինքնատուր, և ստացուած արծաթի կտորները կ'ամբողջնէին պոյսատիկներու ծածուկ մասերու մէջ և այդպէս ճանաչարճ կ'իյնային:

Սկսած էր օտար գրամներու եռանդուն առևտուրը. անդլիական ոսկին կ'արժէր 300 ռուբլի, յետոյ աւելի և աւելի բարձրացաւ:

Ինձ մօտ, տանը, բացի սև, շատ վատ հացէն ուրիշ ուտելու բան չկար: Յաճախ կանց կ'ստնէինք ուտեսաւեղէնի խոնորթներու առջև և հետուէն նախանձով կը նայէինք մեզի համար անմատչելի կարողի և ապուխտի մրայ: Երեկոները և ցերեկները սենևակի մէջ կը նստէինք վերարկուներով և կրկնաօշիկներով, սրովհետև վասելյու վայտի պակասութեան պատճառով բնակարանները չէին տաքցուեր:

1922 Օգոստոս 18ի համակով. պատիւ ունեցայ Ձերդ Գերագնայութեան ուշադրութիւնը հրաւիրելու Հ. Հ. Պատուիրակութեան ներկայացուցիչներու արեւելեան խնդիրները կարգադրող նախապատրաստական խորհրդածոյսովին մասնակցելու օգտակարութեան վրայ: Ձեր Օգոստոս 24ի համակով բտրեհամած էիք յայտնել ինձ ի տեղեկութիւն, որ այդ խորհրդածոյսովին մէջ, որ ներկայացուած պիտի ըլլային միայն Մեծն Բրիտանիա, Ֆրանսա եւ Իտալիա, բրնուքեան առնուելու չեն խաղաղութեան ապագայ դաշնագրի յոգուածները եւ, ապա ուրեմն Հ. Հանրապետութիւնը շահագրգռող որեւէ խնդիր պիտի չկրնայ արծարծուիլ այնտեղ: Այդ սլատնառով. Պ. Նախագահ, դուք ամիբածեշտ չէիք նկատած Հ. Հ. Պատուիրակներու ներկայութիւնը վեներտիկի համածոյսովին:

Այդ օրէն ի վեր ճազաճական կացութիւնը Մերձուոր Արեւելքի մէջ զգալիօրէն փոխուած է: Դաշնակից պետութիւնները դիմած են Անգլոբայի կառավարութեան հրաւիրագրով մը, որով կ'առաջարկեն առանց յապաղելու, ուղարկել լիազօր ներկայացուցիչ մը, մասնակցելու համար խորհրդածոյսովին, որ պիտի գումարուի վեներտիկի մէջ կամ այլուր եւ որուն պիտի մասնակցին Ֆրանսայի, Իտալիոյ, Անգլիոյ, շաբոնի. Նուկուսուիոյ, Ռումանիոյ եւ Յունաստանի լիազօր ներկայացուցիչները: Այդ խորհրդածոյսով նպատակն է բնութեան առնել եւ հաստատել խաղաղութեան վերջնական դաշինքը, Տանկուտանի, Ռումաստանի եւ դաշնակից պետութիւններու

միջեւ : Անգղաբայի կառավարութիւնը իր Հոկտեմբեր 4ի պատասխանով ընդունած է հրաւերը վերոյիշեալ խորհրդաժողովին մասնակցելու նպատակով ուղարկել իր լիազօր ներկայացուցիչը : Այս պարագաներու մէջ, ամէն կասկածէ դուրս է, որ Հայկական Հարցն ալ, իբր Մերձաւոր Արեւելի խնդրի էական մասնիկը, պիտի դրսի ապագայ խորհրդաժողովի օրակարգին մէջ : Սեւրի դաշնագրի չվարեալացուելուն պատճառով հայ ժողովուրդը կը մնայ նոյն տառապանքներու մէջ : Սակայն, այս խնդիրը զբաղմունքի առարկայ է եղած ե՛ւ 1921ի Լոնտոնի խորհրդաժողովի ե՛ւ ապա 1922ի Փարիզի երեք նախարարներու ներկայութեամբ սեղի ունեցած խորհրդակցութեան մէջ, որուն պաշտօնական տեղեկագիրը՝ տարւած 1922 թ. Մարտ 2ին, կը յայտարարէ . թէ «Հայերը պէտք է աւհուին յատուկ ուշադրութեան, այն պարզ պատճառով, որ շնորհիւ իրենց պատերազմի մասնակցութեան, անոնք ենթարկուեցան ծանր տառապանքներու : Ազգերու Դաշնակցութեան օգնութեամբ, միջոցներ պիտի խորհուին հայ ժողովուրդի աւանդական ձգտումներն իրականացնելու եւ Ազգային Օնախը ստեղծելու համար» :

Այդ տառապանքները . սրոնց մասին յիշատակուած է պաշտօնական յայտարարութեան մէջ, հասած են այժմ այն աստիճանի, որ Հայկական Հարցն յուժման հոր յետաձգումը կրնայ վերջնականապէս խորտակել հայ ժողովուրդի ապագան : Հայ ժողովուրդը վայրկեան մը անգամ չի վարանիր, որ Մերձաւոր Արեւելի ապագայ խորհրդաժողովը պիտի կարգադրէ Հայկական Հարցը, համաձայն մարդկութեան եւ նշմարտութեան բարձր սկզբունքներուն, որոնցմով պատերազմի բեմ էին դուրս եկած Դաշնակից պետութիւնները եւ համաձայն բոլոր այն կանգիտասար խտտումներուն, որոնք քանիցս եղած են հայ ժողովուրդին :

Ի նկատի ունենալով իրերու այս դրութիւնը՝ սրտի ունիմ խնդրելու Չեզմէ, Պ. Նախագահ, որ բոլոր տրուի Հ. Հ. Պատուիրակներուս, մասնակցելու այդ խորհրդաժողովին, ինչ ամուսն տակ որ յարմար կը դատեն Դաշնակից պետութիւնները :

Թո՛ղ բոլոր տրուի ինձ յիշեցնելու Չեզ այս առթիւ, որ Սեւրի դաշնագրի թիւ 88 յօդուածի համաձայն, Հայաստանը մասնացուած է, որպէս ազատ եւ անկախ պետութիւն եւ որ այդ հանաչումը չէ կիրառուած կեանքի մէջ այդ դաշնագրի չվարեալացուելուն հետեւանալով, որ Հ. Հանրապետութեան իրական կացութիւնը կը բխի նոյն դաշնագրի նախաբանէն, որով ան կը դատուի Դաշնակից պետութիւններու շարքին, և որ Հայաստանը, որպէս ազատ եւ գերիշ-

խան երկիր մը, հայնպէս ստորագրած է Սեւրի դաշնագիրը, ինչպէս եւ ուրիշ դաշնագիր մը, որ կը վերաբերի փոքր ազգութիւններու իրաւունքներու խնդրին :

Քաղաքական ծանր անցուղարձր, որուն քասերաքեմն է եղած Հայաստանի երկար տարիներէ ի վեր, չէ փոխած անոր միջազգային կացուիքը, որպէս անկախ պետութեան : Հայ ժողովուրդը՝ վստահ փրանական ժողովուրդի նշմարտաւէր զգացումին վրայ յայտուին, որ ֆրանսական կառավարութիւնը պիտի չմերժէ իր ոյժը գործադրել ի նպաստ չ. չ. պատուիրակներու մասնակցութեան այդ խորհրդաժողովին՝ ի նկատի ունենալով անոնց պահանջի արդարութիւնը :

Հանեցէք ընդունիլ, Պր. Նախագահ, յարգանքներուս հաւաստիքը :

Չ. Չ. Պատուիրակութեան փոխ նախագահ՝

ԱԼ. ԽԱՏԻՍԵԱՆ

••

*Մեր այս զիմուսներուն զրեթէ միաժամանակ պատասխանեցին Պ. Փուանդարէն Լ. Լարտ Քրրօրն, որոչ պատճառարանութիւններով կը մերժէին մեր խնդիրքը :*

*Այս առաջնակարգ նշանակութիւն ունեցող վաւերագրերը կարեւոր են մեզի համար այն տեսակէտով, որ զբաւոր կերպով անգամ մը եւս կը հաստատուեն, Հայաստանի Հանրապետութեան իրաւական (Տէ Թիւրէ) ճանաչման մասին, ըստ մեր պաշտօնական մասնակցութիւնը խորհրդաժողովին հնարաւոր չեն գտներ այն պարզ պատճառով, որ Հայաստանը ընդունած է խորհրդային իրաւակարգ, որուն իշխանութիւնը ճանչցուած չէ Դաշնակիցներու կողմէ :*

Արտաքին գործերու նախարարութեան

Փարիզ, 17 Նոյեմբեր, 1922

Պ. Նախագահ,

Դուք բարեհաճած էիք յայտնելու Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան ցանկութիւնը մասնակցելու որեւէ ձեւով մօտեքս կայսնակի խորհրդաժողովին, որ կոչուած է Արեւելի իս-

միջեւ : Անգղաբայի կառավարութիւնը իր Հսկեմբեր 4ի պատասխանով բնդումսն է հրատէրը վերոյիշեալ խորհրդաժողովին մասնակցելու հպատակով ուղարկել իր լիազօր ներկայացուցիչը : Այս պարագաներս մէջ, ամէն կասկածէ դուրս է, որ Հայկական Հարցն ալ, իբր Մերձատար Արեւելի խնդրի էական մասնիկը, տխրի դրուի ապագայ խորհրդաժողովի օրակարգին մէջ : Սերի դաշնագրի չվարեացուելուն պատճառով հայ ժողովուրդը կը մնայ հայն տառապանքներս մէջ : Սակայն, այս խնդիրը գրադումսնքի առարկայ է եղած ե՛ւ 1921ի Լանտանի խորհրդաժողովի ե՛ւ ապա 1922ի Փարիզի երեք նախարարներս ներկայութեամբ անդի ունեցած խորհրդակցութեան մէջ, որսն պաշտօնական տեղեկագիրը՝ ապում 1922 թ . Մարտ 2ին, կը յայտարարէ . թէ «Հայերը պէտք է աւուսին յատուկ ուշադրութեան, այն պարզ պատճառով, որ շուրկիս իրենց պատերազմի մասնակցութեան, անոնք ներարկուեցան ծանր տառապանքներս : Ազգերս Դաշնակցութեան օգնութեամբ, միջոցներ պիտի խորհուին հայ ժողովուրդի աւանդական ձգտումներն իրականացնելու եւ Ազգային Օնկար տեղծելու համար» :

Այդ տառապանքները, որոնց մասին յիշատակումս է պաշտօնական յայտարարութեան մէջ, հասած են այժմ այն աստիճանի, որ Հայկական Հարցի լուծման հար յետսձգումը կրնայ վերջնականապէս խորտակել հայ ժողովուրդի ապագան : Հայ ժողովուրդը վայրկեան մը անգամ չի վարանիր, որ Մերձատար Արեւելի ապագայ խորհրդաժողովը պիտի կարգադրէ Հայկական Հարցը . համաձայն մարդկութեան եւ հումարսութեան բարձր սկզբունքներսն, որոնցմով պատերազմի բեմ էին դուրս եկած Դաշնակից պետութիւնները եւ համաձայն բարբայն այն հանդիսար խոստումներսն, որոնք քանիցս եղած են հայ ժողովուրդին :

Ի նկատի ունենալով իրերս այս դրութիւնը՝ պատիւ ունիմ խնդրելու Ձեզմէ, Պ . Նախագահ, որ յոյլ տրուի Հ . Հ . Պատուիրակներսն, մասնակցելու այդ խորհրդաժողովին, ինչ անուան տակ որ շարմար կը դասեն Դաշնակից պետութիւնները :

Թո՛ղ յոյլ տրուի ինձ յիշեցնելու Ձեզ այս առարկա, որ Սերի դաշնագրի թիւ 88 յօդումսն համաձայն, Հայաստանը նանչցումս է, որպէս ազատ եւ անկախ պետութիւն եւ որ այդ նանաչումը չէ կիրառումս կեանքի մէջ այդ դաշնագրի չվարեացուելուն հետեւանմամբ, որ Հ . Հանրապետութեան իրաւական կացութիւնը կը բխի նոյն դաշնագրի նախարանէն, որով ան կը դատուի Դաշնակից պետութիւններս շարբին, եւ որ Հայաստանը, որպէս ազատ եւ գերիշ-

խան երկիր մը, հայնպէս ստորագրած է Սերի դաշնագիրը, ինչպէս եւ ուրիշ դաշնագիր մը. որ կը վերաբերի փոքր ազգութիւններու իրաւունքներու խնդրին:

Վաղափական ծանր անցուղարձ, որուն քառերաբեմն է եղած Հայաստանը երկար տարիներէ ի վեր, չէ փոխած անոր միջազգային կացութիւնը, որպէս անկախ պետութեան: Հայ ժողովուրդը՝ վստահ փրանսական ժողովուրդի հշմարաստէր զգացումին վրայ յոյս ունի, որ փրանսական կառավարութիւնը պիտի չմերժէ իր ոյժը գործադրելու ի հպատակ. Հ. Հ. պատուիրակներու մասնակցութեան այդ խորհրդածաղովին՝ ի նկատի ունենալով անոց պահանջի արդարութիւնը:

Հանեցէք բնորոշիլ, Պր. Նախագահ, յարգանքներուս հաւաստիքը:

Հ. Հ. Պատուիրակութեան փոխ նախագահ՝

ԱԼ. ԽԱՏԻՍԵԱՆ



*Մեր այս դիմումներուն գրեթէ միաժամանակ պատասխանեցին Պ. Փուանդարէն եւ Լորտ Քրրօրն, որոչ պատճառաբանութիւններով կը մերժէին մեր խնդիրքը:*

*Այս առաջնակարգ նշանակութիւն ունեցող մատերագրերը կարելոք են մեզի համար այն տեսակէտով, որ գրասարկերպով անգամ մը եւս կը հաստատուին, Հայաստանի Հանրապետութեան իրաւական (ՏԷ Փիլիք) ճանաչման մասին, բայց մեր պաշտօնական մասնակցութիւնը խորհրդածաղովին հնարասր չեն գտներ այն պարզ պատճառով, որ Հայաստանը բնորոշած է խորհրդային իրաւակարգ, որուն իշխանութիւնը ճանչցուած չէ Դաշնակիցներու կողմէ:*

Արտաքին գործերու նախարարութեան  
Փարիզ, 17 Նոյեմբեր, 1922

Պ. Նախագահ,

Գուք բարեհաճած էիք յայտնելու Հայաստանի Հանրապետութեան Պատուիրակութեան ցանկութիւնը մասնակցելու որեւէ ձեռով մտաւր կայանալիք խորհրդածաղովին, որ կոչուած է Արեւելիք խա-

դադու քիւնը հաստատելու : Պատիւ ունիմ յայտնելու Ձեզ, որ Փրանսական կառավարութիւնը ի վիճակի չէ ընթացք տալու Ձեր դիմումին՝ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստան ընդունած է հորեղային իրավարար, չհայած որ անոր իրաւական (*Տէժիւրէ*) անկախութիւնը նախնադրեալ է Դաշնակիցներու կողմէ : Հայաստանի վիճակը հանգամանօրէն քննուած է վերջերս Փարիզի մէջ տեղի ունեցած 'Կաշնակից ելեւնախարարներու խորհրդաժողովին, որպէս մասնակիր ազգերու վտճարամասնութեանց իրաւունքներու ընդհանուր խնդրին : Մենք չենք տեսներ ուր առիք մը, որ գայ խանութարարու այդ մասին եղած որոշումը, որ անկասկած հիմք պիտի կազմէ այս խնդրի լուծման, երբ հարցը վերաբերի խաղաղութեան ապագայ դաշնագրի յղումներու քննութեան :

Եթէ, իր աշխատանքներու ընթացքին համազումարը կը ցանկայ ծանօթանալ որեւէ խնդրի վերաբերեալ Պատուիրակութեանը կարծիքին, ան կ'ուղղէ Տանկահայ եւ Հայաստանի Պատուիրակութիւններուն յատուկ երաւիրագիր :

Հանեցէք ընդունիլ, Պ. նախագահ, խորին յարգանքներուս հաւատարմութիւն :

Ստորագրուած՝ ՓՈՒԱՆԳԱՐԼԷ

*Պարզ էր այս պատասխանէն յետոյ, որ մենք կրնայինք մեզ պաշտպանել միայն կիսապաշտօն ձեւով, այսինքն՝ զիմուսներով եւ ոչ թէ մեր անմիջական մասնակցութեամբ խորհրդաժողովի նիստերուն :*

*Ասիկա առաջին հարուածն էր մեր իրաւունքներուն եւ շահերուն : Հայաստանի Հանրապետութեան միջազգային կացութեան պատմութեան համար անվիճելիօրէն կը մնայ այն փաստը, որ անոր խորհրդայնացումը արդիւնք Հայերուն ընկելու Լօզանի խորհրդաժողովին մէջ իրենց իսկական տեղը : Եւ խորհրդային Հայաստանի վարիչներն այ փորձ չբրին ներկայանալու իրրեւ կողմ եւ յանուն Հայաստանի մասնակցելու Լօզան եկած խորհրդային պատուիրակութեան, ինչպէս մասնակցեցան Վրացիները յանձին Բուտու Մցիվանի խորհրդային Վրաստանի կողմէ :*

*Ի միջի այլոց, ահա եւ Անգլիոյ արտաքին գործերու նախարարի նամակի պատճէնը, որ Փուանգարէի նամակէն զրեթէ ոչինչով կը տարբերուի :*

Պարոն,

1.— Քեթլեսթրոմի Մարքիզ Քրոքրնի կողմէ հրահանգ ունիմ տեղեկացնելու ընդունումը Ձեր Հոկտեմբեր 18 րուակիր նամակին՝ Լօգանի խաղաղութեան համաժողովին մօտ հայկական ներկայացուցչութեան հարցին նկատմամբ :

2.— Դաշնակից երեք գլխաւոր կառավարութիւնները կը ցաւին, որ, յէտէ Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը իրաւախորտն (*սէ ժիբլ*) նակշցած էին, բայց անոր այժմու կառավարութեան կազմէ խորհրդային ձեր որդեգրուած ըլլալուն պատճառաւ, չեն կրնար թոյլատրել Հայաստանի մասնակցութիւնը խաղաղութեան մօտալուստ համաժողովին կամ անոր ստորագրութիւնը դաշնագրութիւններու : Հայաստանի պարագան զգուշօրէն նկատի առնելու հետ, Փարիզի մէջ անցեալ Մարտի համաժողովին, ո՛չ միայն անոր սեփական արժանիքներուն համար, այլ ընդհանրապէս փոքրամասնութեանց պաշտպանութեան խնդրին առիտ : Դաշնակից կառավարութիւնները տեղեակ չեն թէ որեւէ բան պատահած ըլլայ, որ անգոր դարձնէ այն լայն եզրակացութիւնները, որոնք ընդունուեցան այն տեսն. եւ որոնք անկապած վիճարարութեանց հիմ պիտի կազմեն, երբ այդ հարցին հասնին նոր դաշնագրի պատրաստութեան առնն :

3.— Երէ համաժողովը իր աշխատանքներու ընթացքին փափաքելի գտնէ այս կէտերէն սրելու մէկուն նկատմամբ հայկական կարծիքն իմանալ, անհրաժեշտ էրաւէրը պիտի դրկուի համաժողովին կողմէ Փարիզի Հայ Ազգային Պատուիրակութեան, որ կը հասկըցուի թէ իր մէջ կը պարունակէ թէ՛ ուստական եւ թէ՛ բրբական Հայերու ներկայացուցիչներ :

Մնամ. Տէր, Ձեր հնազանդ ծառան

Առորագրուած՝ ԼԱՆՍԷԼՈՒՆ ՕԼԻՖԷԷՆԹ

Առ Պարոն Ահարոնեան

Պարհրզամատյոյի բացումը նսյեմբերի սկիզբներուն, բնակա-  
նարար, Լօպան պէտք է փոխադրէր մեր գործունէութեան կեդրոնը :  
Բայց մինչ այդ, հայկական երկու պատուիրակութիւնները, միաս-  
նարար, պիտի մշակէին խորհրդամատյոյին մեր ներկայացնելիք պա-  
հանջները : Այդ ստիւի կայացան շարք մը խոսն նիստեր, որոնք տե-  
ղի կ'ունենային փոխ առ փոխ մէկ եւ միւս պատուիրակութիւններու  
չէնքին մէջ : Այդ նիստերը բացմամարդ էին եւ հարցերու քննութիւ-  
նը կ'ընթանար գործնական լրջութեամբ :

Առեւտրամար հարցը մեր հոգային պահանջներու ձեւակեր-  
պումն էր, սրբօճեռու այժմեան Հայաստանը կը գտնուէր խորհրդ-  
դային իշխանութեան ներքեւ, եւ փասնպատար քայլ բրած պիտի բլ-  
լայինք, եթէ պահանջէինք ալլը Հայաստանի սահմաններու ընդլայ-  
նումը : Այդ էր մեր պահանջներու թոյլ կողմը, որ մենք, խորհրդա-  
յին կարգերու հակառակորդներս, կը դիմէինք Գաշնակիցներուն, ու-  
րոնք չէին սուր ճանչնայ խորհրդային իշխանութիւնը : Բայց մենք  
կրցանք խնդրին տայ բարձր սկզբունքային նշանակութիւն : Մենք կը  
պատճառարանէինք, որ Հայաստանի Հանրապետութիւնը անփոփոխ,  
մշտական երեւոյթ մըն է կապումը ողորդակութեան եւ հողի հաս-  
կադրութիւններու հետ, իսկ խորհրդային իրաւակորպը, սրպէս ժա-  
մանակատար երեւոյթ կ'ընայ ենթակայ բլլայ փոփոխութիւններու : Եւ  
այդ պատճառով, մենք կը պահանջէինք Հայաստանի սահմաններու  
ընդլայնում :

Ճիշդ է, խորհրդայնացման հանգամանքը մեծապէս կը թույլա-  
ցրէր մեր պահանջներու սյժը, սրբօճեռու Գաշնակից պետութիւն-  
ները հակառակ էին այդ իրաւակորպին եւ կը ձգտէին ուշնացնել  
զայն : Սակայն դժուարութիւնը միտայն տուր մէջ չէր : Պարհրզային  
Հայաստանը թէպէտ ճանչցումը էր թուրքի վրայ, սրպէս ազտու եւ  
անկախ երկիր, բայց իրականութեան մէջ ան կը մտնէր Պարհրզա-  
յին Ռուսաստանի (Պարհրզային Միութիւն այդ ժամանակ չկար)  
մէջ, եւ այս պարտադրային, միանպամայն զէմ էր Անդրիոյ հաշիւնե-  
րուն, սրբօճեռու ան կ'ընար տայ Հայաստանին կարոր եւ էրդրու-  
մը, բայց երբէք չէր ցանկար այդ նոյնը ընել Ռուսաստանի համար,  
սրուն մէկ մասնիկը կը կազմէր Պարհրզային Հայաստանը :

Ահա այն նոր պատնէշները, որ կ'անցնած էին մեր եւ Լօզանի  
խորհրդամատյոյին տօջէ : Այս բոլորը կը նախատեսէինք, ի հարկէ,  
բայց անկարող էինք փոփոխութիւն մտցնել մեր պահանջներուն մէջ :



Հևտագային Գաշնակիցներու ներկայացուցիչները մեկի կ'ըսէին. «Ուրեմն էապէս դուք կը պահանջէիք Խորհրդային Ռուսաստանի ասեմաներուն մեծացումը»: Եւ կը գործնական, թէ ինչպէ՞ս մենք, խորհրդային իրաւորացի հակառակորդներս, հանդէս կ'ի՞նք Էկամ նման պահանջներով:

Միւս կողմէ, մեր պահանջած հողամասերը կը գտնուէին տաճիկ տիրապետութեան ներքեւ, իսկ Տաճիկները Ռուսերու Գաշնակիցներն էին, Եւ Ռուսերը կը պաշտպանէին Տաճկաստանի հողային ամբողջութիւնը, ինչպէս բրին պատերազմի ընթացքին Եւ Տաճիկներու Հայաստանի վրայ կատարած արշաւանքի ժամանակ:

Այս առակէտէն ալ մեր կացութիւնը չափազանց վտաճուկ էր: Այս ամէնը մենք կը պիտակցէինք: Բայց պէտք է ըսեմ, որ բարոյսպէս մեզ կը պայտինք զօրաստ, մեր իրաւունքներու Եւ պահանջներու սահմանին մէջ: Եւ այդ, ոչ ոք չէր ժխտեր, թէ պէտքէն ալ կը պտնէին, որ չափազանց պատար է մեր պահանջներու իրապարծումը:

••

Մտերմամտորէն շեշտելով բոլոր բարոյական Եւ իրաւական հիմունքները, մենք ներկայացուցինք Լօյսնի խորհրդածոցովին մեր պահանջները՝ հետեւեալ ձևով. —

Ա.

Հայկական Միացեալ Պատուիրակութիւնը կը խնդրէ Գաշնակիցներէն բարեկամիլ ի նկատի առնելու.

1) Որ՝ մեծ պատերազմի ընթացքին, Հայերը իրենց բացառապէս ծառայութիւններն են ըրած Գաշնակիցներուն, քանչեւ եւն իբրեւ լաւ կառուցներ Եւ իբրեւ Գաշնակից սպորտիստներ:

2) Որ՝ այդ պատերազմը անհամեմատօրէն հսկայական գումար է խաղաղ Հայերէն. — Տանկահայաստանի 2,250,000 հայութենէն 1,250,000ը զարդուած են, 700,000 գաղթած են Կովկաս, Պարսկաստան:

տան, Սուրիա, Ֆունաստան, Պալֆանեան երկիրներ, եւայլն: Ներկայիս Տանկաստանի զիւղերը 130,000 կայուրիւն կայ միայն եւ 150,000 ալ Պալսայ մէջ, որոնք միշտ են քարակայ են գաղթելու:

3) Որ՝ Հայկական Հարցը, որուն ծագումը շատ հին է. սկըսած 1878 թ. (Պերլինի Վեհաժողովէն), եւ որ միջագոյնին բնոյր է ստացած, այդ նարբ հարցերէն մէկն է, որուն վերջնականապէս լուծումը պիտի ազդէ Մերձաւոր Արեւելի խաղաղութեան վրայ:

4) Որ՝ Դաշնակից պետութիւնները հանդիսաւորապէս յայտարարած են Տանկահայաստանի անկախութեան մասին եւ որ, վերջապէս, այդ հարցը որոշուած էր Ազգերու Դաշնակցութեան կանոնագրի (յօդուած 22), ինչպէս նաեւ խաղաղութեան բոլոր Դաշնագիրներուն մէջ:

5) Որ՝ անոր գլխաւոր կէտերը արդէն բուէարկուած են Ազգերու Դաշնակցութեան Ա. եւ Բ. համագումարներուն մէջ, միաձայն որոշմամբ, կազմելու Ազգային Օնալիս:

## Բ.

Երեւ ճեւի որոշումներ կան Ազգային Օնալիս հիմնելու համար:--

1) Ամերիկայի Միացեալ Նահանգներու Յարգելի Նախագահին իրաւարարութիւնը, որ է որոշել տրամադրելի հողամաս մը հայութեան համար:

2) Զանալ ընդարձակել Նրեւանի Հանրաժողովութեան սահմանները արեւելեան գաւառներով եւ ծովային ելքով:

3) Կցել այդ Օնալիսին նաեւ Կիլիկիոյ մէկ մասը, որ Սեւրի դաշնագրի համաձայն Սուրիոյ է կցուած եւ որ Անգորայի դաշնագիրը զիջած է Տանկաստանին:

Անհիմն է Տանիկներու այն պնդումը, թէ Հայկական Օճախը կարելի է հիմնել Ռուսահայաստանի մէջ:

Տանիկները գրաւեցին Երեսնեան Հանրապետութեան մէկ երրորդ մասը (Կարս, Սուրմալու, Արտահան): Մնացեալ է 26,000 ֆլորինքը հող, որմէ 9,000ր միայն մշակելի է: Այս երկիրը հազիւ կըրնայ կերակրել իր բնակիչները, որոնց յիւր կը հասնի 1.260,000ի եւ որոնց մէկ երրորդը կ'ապրի Նիւ Իստ Բիւֆի. Լարս Մէյրքսի եւ ուրիշ բարեգործական հիմնարկու թիւններու շնորհիւ: Սովոր միշտ կը քազաւորէ այստեղ, ուրեմն եւ սչ մէկ գաղթականութիւն կարելի է ներս առնել:

Միւս կողմէ, Տանկաստանի ասիական հողամասերը, որոնց բնակչութիւնը բաւական ճօշք է, հնարաւարտութիւն կու տան հիմնելու իոն հայկական Օճախ մը:

360,000 գաղթականութիւն. որ կը գտնուի Կովկասահայաստանի եւ Պարսկաստանի մէջ, բոլորն ալ վիլայէթներու բնակիչներ են եւ կը սպասեն յարմար առիթի՝ նարէն իրենց սեղերը վերադառնալու համար:

Այդ վիլայէթներու մէջ շատ քիչ Տանիկներ կան. բնակչութեան զիւստը տակոսը Հայեր եւ Քիւրտեր են: Այս վերջինները արիական ցեղէն են եւ, եթէ կոյր գարծիք չըլլային Տանիկներու ձեռքին, հանգիստ աւ յաղաղ կեանք կ'ունենային Հայերու հետ:

ՏԱՆՈՒԼԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԹԻԻԸ

(Նոյեմբեր 1922)

Տաճկահայրթևան թիւր Տաճկաստանի Բրիտանական Ներկայացուցիչին և Ամերիկեան նպաստամատույցի թուած թիւերու հիման վրայ, 1921ին :

1. Պոլիս	148-998
2. Վիլայէթները	
Անգորս	13-254
Գոնիա	9-994
Քասթեմոնի	5-542
Սվաղ	14-458
Տրապիզոն	19-927
Տիարպեքիք	3-000
Խարբուի	35-000
Վան	500
Պիթլիս	13-000
Էրզրում	1-500
Կիլիկիա (Մարաշ, Այնթապ)	15-000
	<hr/>
	131-175
3. Քեմալական բանակին մէջ գտնուող 18 տարեկան երիտասարդներ, սրտնց թիւը յայտնի չէ :	
4. 1911 թ. Տաճկահայաստանէն գաղթած հայուրեան թիւը .	
ա. Սուրիա	75-000
բ. Պողեստին	3-000
գ. Միջագետք	6-000
դ. Ռուսաստան ապաստանածները, Հայաստանի Հանրապետութեան մէջ	200-000
Վրաստան	40-000
Հիւսիսային Կովկաս	60-000
Մովափնեայ քաղաքներ, Ղրիմ, Օդեսսա և այլն	60-000
	<hr/>
	360-000
ե. Պարսկաստան և Ամերիկա գաղթած	20-000



Նստած (ձախէն աջ)

Զօր. Քաղաքաւանի, Յ. Մարտազնուհի, Զօր. Անգրանիկ  
Կանգնած (ձախէն աջ)

Ս. Միլիֆեան, Արմէն Գաբօ

5. 1922 թ. Անպտ. և Հսկտ. ամիս-  
ներու դէպքերու ատեն գաղթած  
սահմանադուրեան թիւը: (Յայնե-  
րու գրաւած վիլայէրներու մէջ  
գտնուող հայութեան թիւը մօտա-  
ւորապէս 100.000ի կը հասնէր, ո-  
րոնց մեծագոյն մասը Զմիւռնիայի  
մէջ ջարդուեցաւ. մէկ մասն ալ Պա-  
լիստինի և Բիղայի մէջ բնաջրնջ-  
ուեցաւ Քեմալի ձեռքով.  
Ահա մօտաւոր թիւը այս չորս բաժնի.

<i>Անդր-Արեւմտեան Երկիրներ և</i>	
<i>Մահեդոնիա</i>	30.000
<i>Սալոնիկ</i>	5.000
<i>Կիոս և Միտիլի</i>	7.000
<i>Կրետէ</i>	2.000
<i>Մամուս</i>	1.000
<i>Աթէնք և Պիրէա</i>	15.000
<i>Պուլհարիա</i>	10.000
<i>Ալժերիա, Թունուզ, Եգիպտոս</i>	1.500
<i>Ճրանաս</i>	1.350
<i>Իտալիա</i>	850
	<hr/>
	73.700
	<hr/>
	817.873

ԱՄԲՈՂԶ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿՆԱՆՈՒՐ ԹԻԻԸ

(Նայեմբեր, 1922)

1. Տանկաստան	
<i>Պոլիս</i>	150.000
<i>Փոքր Ասիա</i>	131.000
	<hr/>
	281.000

2. Բնուսատան		
Հայաստանի Հանրապետության	1 200 000	
Վրաստան	400 000	
Ատրպեյջան	340 000	
Անդր-կասպեան երկիրներ	30 000	
Ուրիշ վայրեր	225 000	
		<hr/>
		2 195 000
3. Ինքնուր եւ Դայրագոյն Արեւելիք		
Սուրիա, Պաղեստին եւ Միջագետք	104 000	
Եգիպտոս, Սուտան, Հայկէստան	28 000	
Հնդկաստան, Ըաւա, Աստրալիա	12 000	
Պարսկաստան	50 000	
		<hr/>
		194 000
4. Արեւելեան Եւրոպա		
Յունաստան եւ Կիպրոս	79 000	
Պուլկարիա	46 000	
Ռումանիա, Թրանսիլվանիա,		
Պեսարապիա	43 000	
Եւրոպական պետութիւններ (Ֆրան- րանսա, Անգլիա, Իտալիա, Հուն- գարիա, Գերմանիա Պելժիա ևն.)	38 000	
		<hr/>
		206 000
5. Հիւս. Ամերիկա (Մ. Նահանգներ եւ Փանաաա)	125 000	
Հարաւային Ամերիկա	3 000	
		<hr/>
		128 000
		<hr/>
		3 004 000

Այս գրութիւնը մենք ուզարկեցինք խորհրդածողովին եւ կցեցինք մեր բարոյական եւ իրաւական պահանջները պարունակող մանրամասն յուշագիր մը: Ահա այդ փաստաթուղթը—

## Յ Ո Ւ Շ Ա Գ Ի Ր

Ներկայացնում Հօգանի խորհրդածաղավիւն հայկական իրան  
պատուիրակութիւններուն կողմէ, Նոյեմբեր, 1922

Տանկահայաստանի ազատագրումը Գաշնակիցներու եւ Միաց-  
եայ Նահանգներու պատերազմի նպատակներէն մէկն է եղած. ինչ-  
պէս որ կատարարութիւններու ներկայացուցիչները հանդիսաւորա-  
պէս յայտարարեցին այդ մասին պատերազմի ընթացքին: Այս առ-  
քիւ եղած սրշումները հետեւեալներն են.—

1.— Ազգերու Գաշնակցութեան կանանցորի 22րդ յօդուածը,  
որ լրացուցիչ մասը կը կազմէ խաղաղութեան բոլոր այն պայմա-  
նագրերուն, որոնք ընդունուած են Սեւրի պաշտպանութեան Միացեալ  
Նահանգաց նախագահի իրաւարարութեամբ:

2.— Լսնանի խորհրդածաղավր, որ տեղի ունեցաւ 1921 թ.,  
երբ Բարձրագոյն հարկուրդը յայտարարեց Ազգային Օնախի ան-  
հրաժեշտութիւնը Տանկահայաստանի համար:

3.— Մարտ 26ի (1922) խորհրդածաղավր, երբ երեք պետու-  
թիւններու արտաքին գործոց նախարարները աւելորդ անցամ մը եւս  
հաստատեցին Գաշնակիցներու ունեցած սրարտականութիւնը Հայե-  
բու հանդէպ:

4.— Ազգերու Գաշնակցութեան բնդհանուր ժողովը, որ տեղի  
ունեցաւ 1921 թ. եւ ուր միաձայնութեամբ քուէարկուեցաւ անպայ-  
ման իրականացումը այդ Օնախի:

5.— Եւ, վերջապէս, 22 Սեպտեմբեր 1922 թ. Ազգերու Գաշ-  
նակցութեան Ընդհանուր ժողովի եզրակացութիւնը, որ է «Տանիկ-  
ներու հետ առեւտրական դաշինք կնքելու ստեն պէտք չէ զանց առ-  
նել Հայկական Օնախի հիմնումը»:

Վերոյիշեալ 22րդ յօդուածը անցաւ գործադրութեան Պաղես-  
տինի, Միջագետքի եւ Սուրիոյ վերաբերմամբ, որոնք ձեռք բերին  
իրենց ազատութիւնը, բայց Հայերուն տրուած խոստումները տա-



կախին չեն իրականացած՝ չնայած որ տանկահայ ժողովրդի վիճակը առնելի դառն է Բան երբեմիցէ :

1914 թ . ի վեր մէկ միլիտնէ առելի Հայեր սչնչացած են ցարդերու . տեղահանութեան եւ գրկանհնչու պատահառով . հարիւր հազարներ գաղթած են օտար վայրեր : Աւելցուցէք նաեւ 150,000 որբերու հսկայական թիւը , որ իր գոյութիւնը կը պահպանէ միայն . շնորհիւ ամերիկեան Նիւ Իստ Բիլիֆի եւ կամ ուրիշ նման հաստատութիւններու : Պաշտօնապէս յայտարարուած է արդէն Ազգերու Կազմակերպեան , որ 73 :350 հայ կիներ եւ մահուկներ , բոնի ուժով տարուած են իսլամական հարեմները եւ դեռ մինչեւ այսօր ալ հոն կը մնան :

Ի վերջոյ . երբ Ֆրանսացիք պարպեցին կիլիկիան , հոն ապաստանած հայ ազգաբնակչութիւնը ստիպեցին գաղթել Սուրիա կամ ուրիշ երկիրներ : Հայերու մէկ մասը . որ կը գտնուէր Ջմիւռնիա , Պրուսա եւ կամ Փոքր Ասիոյ գոմարան քաղաքներ , ուր ապաստանած էին վերջին դէպքերէն յետոյ , ստիպուած , նորէն բռնեցին գաղթի ճամբան : Ապա՝ Անգլոսոյի կառավարութիւնը նոր կրահանգներ տուաւ արտաքսելու մնացեալ հայութիւնը եւս (մօտաւորապէս 130.000) եւ ի յրումն այս բոլորի . ախարուեցան ու բշտեցան նաեւ Սեւ ծովի սփին գտնուող Ջուկուլտաք եւ Բարսիլոն քաղաքներու բնակիչները : Ի վերջապէս , հագարաւոր Հայեր այս վերջին օրերը . յողուցին Պոլիսը եւ հեռացան զանազան վայրեր :

Այսպէսով 700,000 հայութիւն ներկայիս գրկուած է իր ունեցածէն , բշտած մայր երկրէն եւ կ'ապրի աշխարհիս զանազան կողմերը՝ անապատան եւ ենթակայ սոսկալի տառապանքներու :

Պատերազմի ժամանակաշրջանին եւ զինադադարի ընթացքին Տանկաստանի հայութիւնը 10 միլիառ փրանքի կորուստ է ունեցած — եկեղեցիներ . դպրոցներ եւ զանազան բարեգործական հիմնարկութիւններ . որոնք հիմնադրուած կործանուած են :

Այս անօրինակ անբաժուրեմէն յետոյ . համաշխարհային խիղճը կը պահանջէ իրեն առաջին տուրք . հիմնել Հայկական Օճախ մը , որ հայ ժողովուրդը կարողանայ անվտանգ տեղադրուիլ . պահպանելով իր փիլիսոփայական գոյութիւնը . գարկ տալով իր քաղաքակրթութեան :

Տանկեներն իրենք իսկ ընդունած էին . որ հայ ժողովուրդը իրաւունք ունի անկախութիւն ստանալու , քայց Անգլոսոյի կառավարութեան անուճով յայտարարուեցաւ , որ այդ հարցը արդէն վճարուած է , Բանի որ Անգլոկոկասի մէջ , Երեւան , կազմուած է հայկա-

կան հանրապետութիւն մը եւ որ հիմա Անգորայի ազգային կառավարութիւնը հակառակ է որեւէ հողամասի անջատման: Այսպէսով Հայկ. Հանրապետութիւնը, որ կը գտնուի Անդրկովկասի մէջ և որուն հաղերը կրնատուեցան Կորսի դաշնագրով (1921 թ.) եւ որ ունի միայն 9,000 քառ. ֆիլ. մշակելի հող, հագիւ պիտի կարողանայ կերակրել երկու երրորդը իր ժողովուրդին որուն գումարը 1,260,000 է: Մնացած մէկ երրորդը կը մնայ Նիր Խտ Բիլիֆի, Լորտ Մէլըբսի եւ կամ ուրիշներու հոգասարութեան: Այնպէս որ բոլորովին անհնար է տեղաւորել այսօրվան փոքրիկ եւ աղքատիկ երկրի մը մէջ, որպիսին է Հայաստանի Հանրապետութիւնը, այն բոլոր գաղթականութիւնը, որ գրուած է Յունաստան, Մակեդոնիա, Արշիպեղագոսի կղզիները, Սիրիա, Պուլկարիա, Պարսկաստան, Կովկասի զանազան մասերը եւ այլն, եւ այլն:

Եզրակացութիւն.— Որ Հայկական Հարցը Տանկաստանէն դուրս չի կրնար ունենալ իր լուծումը:

Անգորայի Ազգային ժողովը չի կրնար հակառակիլ Ազգերու Գաղթականութեան կանոնագրին, ոչ ալ կրնայ բնդղիմադրել Դաշնակից պետութիւններու՝ Հայերու հովանաւորման պարագային: Ներկայիս Տանկեկները իրենք ալ շահագրգռուած են հաստատելու անկեղծ մտերմութիւն երկու ազգերու միջեւ, որպէսզի Արեւելի մէջ ստեղծուի հաստատուն խաղաղութիւն:

Ներկայիս Արեւելեան Բաղամականութեան վերաբերմամբ կատարուած փոփոխութիւններու պատճառով, Պատուիրակութեանս կը բռնի անժամանակ պահանջել Միացեալ Նահանգաց Պ. Նախագահի կողմէ գծուած սահմաններու յիսկառաք գործադրութիւնը:

Մեր Պատուիրակութիւնը պատրաստ է, ուրեմն, բնդունելու Հայկական Օնախի կազմութեան ծրագիրը այն սահմաններով, որ նախատեսուած են Միացեալ Նահանգաց իրաւարարութեամբ:

Խորհրդածոցովը, Հայկական Օնախի սահմաններու սրտումէն յետոյ, ապահովելով մաքու անոր ելքը դէպի ծով, համաձայն խաղաղութեան վերջին դաշնագրի կանոնագրութեան, կը ստեղծէ հաստատ եւ ապահով ապաւէն մը Թուրքիայ մէջ բնակող հարիւր հազարաւոր հայութեան համար, որը ներկայիս կը գտնուի առանց հայրենի տան եւ որու անսահման քշուառութիւնը վիրաւորանք մըն է մարդկութեան արժանապատուութեան համար:

Ամէն պարագայի սակ, երէ հակառակ մեր սպասումներուն, այս հարցը չընդունուի, պէտք է անդրադառնալ 1920 թ. կայացած վճիռին, որով Հայաստանի Հանրապետութեան սահմանները պէտք է

լայննար Տանկատանի որոշ մասի մը կցումով, սահմանագծուած Միացեալ Նահանգներու Պ. Նախագահի իրաւարարութեամբ: Այս վճիռը, բնականաբար, կը գործադրուի Կովկասեան Հայաստանի Հանրապետութեան փոխադարձ գիջումով, ապահովելով ծովային ել-  
ֆր: Այս պարագային Հայաստանի Հանրապետութիւնը որ արդէն օ-  
րինաւորապէս նանչցում է մեծ պետութիւններու կողմէ, կը ներ-  
կայացնէ իր անկաւճեշտ պայմանները եւ այդպէսով կը կազմուի  
Ազգային Օճախ մը, ուր հայ ժողովուրդը հանգիստ եւ ապահով  
կ'ապրի ու կը զարգանայ: Բոլոր Հայերը ազատ պիտի ըլլան վերա-  
դառնալու իրենց Հայրենիք:

Հակառակ պարագային, երէ վերեւ յիշուած վճիռները ձախտ-  
ղին, պէտք է նախատեսել երրորդ պարագայ մը, այն է՝ ստեղծել  
Ազգային Օճախ Կլիկիայ մէջ, հին Փոքր Հայքի մէջ:

Ինչ ալ որ ըլլայ ընդունում լինի, պէտք է միշտ նախատե-  
սել, որ խորհրդածոյալը, համաձայն 26 Մարտի 1922 թ. երեք նա-  
խարարներու կայացուցած վճիռին, կը ղիմէ Ազգերու 'Իաշնակցու-  
թեան օգնութեան: Թոյլ տուէք նկատել, որ այդ ժամանակ անհնար  
պիտի ըլլայ շահաւէտ գործ մը կատարել եւ մտնուանայ, խուսափիլ  
նոր յետաձգումներէ: Խորհրդածոյալը ինքը կը դանդաղեցնէ Օճա-  
խի հաղային սահմանագծման խնդիրը եւ անոր կազմակերպման սկըզ-  
բումը:

Հայաստանի Պատուիրակութիւնը միշտ պտտրաստ է ներկա-  
յացնել խաղաղութեան խորհրդածոյալին բոլոր անհրաժեշտ լուսա-  
բանութիւնները:

Մեք համարում ենք, որ 'Իաշնակից պետութիւնները Լօզանի  
խորհրդածոյալին մէջ վերջնականապէս կ'արտշեն տանկատանութեան  
բախտը, որովհետեւ անկարելի կը թուի մեզի, որ արդարութեան եւ  
իրաւունքի համար եղած պատերազմի սրտումութեան վերջին էջը, ս-  
րուն յաջողութեան համար հայ ժողովուրդը հսկայական գոնեք տը-  
ւա, կրնայ գրուիլ առանց արդար հաստուցման»:



*Մեր պահանջները եւ յատուկ յուշագիրը ներկայացնելէ յետոյ,  
մեր աշխատանքները Փարիզի մէջ վերջացած էին արդէն:*

*Նոյեմբերի սկիզբներուն պիտի սկսէր խորհրդածոյոյր: Մենք  
մեկնեցանք Լօզան Ա. Ահարոնեանը եւ Էս Շ. Շ. Պատուիրակութեան,  
Պ. Գ. Նորատուհեան Ազգային Պատուիրակութեան կողմէ:*

Լօզանի մէջ մենք ունէինք մեր ընդհանուր գրասենեակը, որուն վարիչն էր Լեւոն Բաշալեանը, որ հմուտ, լուրջ, պատրաստուած եւ լեզուապէտ միանպամայն, համապատասխան էր իր պաշտօնին: Մեր միւս խորհրդատուներու մասին արդէն խօսած եմ վերը:

Թուրքերը մտահոգուած էին մեր ներկայութեամբ: Անոնք կը դպային, որ Հայկական Հարցը կրնայ քննութեան առարկայ դառնայ, ուստի վճռուր էին, շհամաձայնիլ ոչ մէկ դիմումի: Անոնց թերթերը կը գիտէին անիմաստ սուտերու, ինչպէս, օրինակ, կը գրէին, թէ Ժրնեւի մօտերը, Վլյնտիմի կոչուած սահմանակից կայարանի մէջ, շարք մը Հայեր, ի թիւս սրնոց եւ Ահարոնեանը, Չոպանեանը, Բաշալեանը վճառած են ահարկել թուրք պատուիրակները:

Առաջին օրէն իսկ մենք միջոցներ ձեռք առինք հերքելու համար այդ առասպելը: Պարզ էր, որ այդ միջոցով անոնք կ'ուզէին վարկարկել մեզ Գաղանակիցներու աչքին:

Տաճկաստանի առաջին ներկայացուցիչը Իսմէթ փաշան էր, երկրորդը՝ Րիզա Նուրի բէյ: Անգլիոյ ներկայացուցիչներն էին Լորտ Քրոյքն, Պոսոյ գլխաւոր կամխարը եւ Սրբ Ռուսոյոր: Իտալիայի՝ Նր' Գարսնա Մանասնա, Յունաստանինը՝ Վենիզելոս: Պատուիրակաւոր թիւններու մէջ կային այնպիսիներ, որոնք լատտեղեակ էին Հայկական ինչորին, ինչպէս օրինակ, Բարձետոնը, Նիկոլասը եւ Առամսր: Միացեալ Նահանգներու ներկայացուցիչներն էին, արդէս գիտողներ, ծովակալ Պրիտտոլը եւ Պետիի գեպան Պ. Չայլորը:

Այս բոլորի հետ մենք տեսուեցանք: Առտուրնէ մինչեւ իրիկուն մենք տեսակցութիւններ կ'ունենայինք պատուիրակներուն հետ եւ կը յայտնէինք մեր պահանջները: Տեսակցութիւններու համար կազմեր էինք սրտէ ծրարիբ, եւ այդ ծրարչով այ կ'ընթանայինք՝ քանալով, որ զուարթ ոչ ոք մնայ անձանօթ մեր պահանջներուն:

Միեւնոյն ժամանակ Հ. Հ. Պատուիրակութիւնը հրատարակեց երկու հասորներ — «Հայաստանը տնտեսական տեսակէտով» եւ «Հայկական Հարցը»: Այդ երկու հատորները զոր լայնօրէն կը տարածէինք պատրաստութեամբ մէջ, կը պարունակէին Հայաստանի քաղաքական եւ տնտեսական կեանքի վերաբերեալ բոլոր գլխաւոր փաստերը:

Խորհրդաժողովի աշխատանքները սկսան: Անոր աշխատանքներու ամբողջ տեսողութեան ընթացքին, մեզի կ'օգնէին Չուիցերիացի Կրաֆթ Բոնարը, Նաիրը, Ամերիկացի Բերրին եւ Մոնդոմերին, Անգլիացի Օրիլոր Բոլտօլինը, Բրքաստընը, Հարիսը, Մըլոնը — Լորտ Սեալիի քարտուղարը, Ռուս Մանտելչտամը եւ ուրիշ շատ շատեր:

Անոնք կ'աշխատէին մեծ եռանդով, առանց չահախնդրութեան, ամբողջ հոգիով նուիրուած մեր գործին: Խորհրդածոցովի տեւողութեան բնթացքին, հինգ ամիս շարունակ, այս անձինք ցոյց տաին մեզի ջերմ աջակցութիւն, կր խորհրդակցէին մեզի հետ մեր բնեյիքներու մասին, անվերջ գիտմամբեր կ'ընէին իրենց երկիրներու պատուիրակութիւններուն և իրապէկ կը պահէին անոնց տրամադրութիւններուն:

Հայաստաններու Միութիւնը շարունակ նիստեր կ'ունենար և իր կողմէ գիտմամբեր կ'ընէր բարձր պատուիրակներուն, մինչև իսկ ուսականին: Այդ անձնուէր աշխատանքը լաւագոյն ապացոյցն է այն տար բարեկամութեան, որ կը տածէին զէպի մէջ և արագայի մտաւորականութեան լաւագոյն ներկայացուցիչները:

Մեր բարեկամները հանգէս կու գային, որպէս մեր գաղտնի պաշտպաններ, հարցրդակիցներ և մեր պահանջները առաջարկուներ:

••

Մեր առաջին քայլերէն մէկը եղաւ երթալ տեսակցութեան թրքական պատուիրակութեան նախագահ Իսմէթ փաշային: Այդ վերին աստիճանի յատկանշական տեսակցութիւնը, զոր ստանձնած էին Թուրքիոյ նախկին նախարար և Այդալային Պատուիրակութեան անգամ Պ. Սինապուանը և Լեւոն Բաշաբանը, մանրամասնօրէն նկարագրուած է վերջինիս կողմէ, իբրևս զբական կտոր մը, և երևի օր մը կը յանձնուի հրատարակութեան:

Հետաքրքրականը այն էր, որ Իսմէթ փաշան, էնկիւրիի կառավարութեան այսօրուան նախագահը, այնպիսի գիրք էր ընդունած, որ իբր թէ իրեն բարձրօրին ծանօթ չէ Հայկական Հարցը, որ ճանաչատանի մէջ Հայերը կ'ապրին զահ ու երջանիկ և որ զիժուտարքն է միայն, որ թողեր է հայրենիքը և մեկնիր է արտասահման:

Մերոնց այն յայտարարութեան, թէ Հայերը իրենց բնակավայրէն բռնի կը քշուին և անոնց ստացուածքը կ'ենթարկուի զրուաման, Իսմէթ կը պատասխանէ .

— Դուք զիտէք, որ Հայերը կը սիրեն մամբորդել. պատճառը այդ է որ յսմայս կը բողոսն Թուրքիոյ կեդրոնները եւ կը մեկնին Պոլիս:

Օգտուելով իր ծանր յստութենէն՝ ան ցոյց կա տայ, իբր թէ, չի յսեր բոբոր այն հարցերը, որոնց համար պատասխանն չունէր, կամ անյարժար կը գտնէր պատասխանել: Իսմէթ անտեղեակ կը ձեւանար անպամ Հայերու հոգային պահանջներու գոյութեան մասին: Այ՞ որ հայկական սահմաններու վերաբերոյ բոբոր խնդիրները արդէն կարգապարսած կ'ին թուրքիոյ կողմէ յատուկ պաշտպանութիւնով:

Ասիկա մեր և թուրքերու վերջին տեսակցութիւնը եղաւ:

Բացի ցուտ քաղաքական խնդիրներէն Լօզանի մէջ, առաջին օրերէն սկսած, մենք կը պահանջէինք նաև զազրեցումը Հայերու վտարման թուրքիոյ սահմաններէն: Մեր ձեռքը կային անհերքելի վտասեր, որոնք կ'ապացուցանէին, թէ ինչպէս թուրքերը ամենասուր ձեւերով կը վտարէին Հայերը իրենց բնակավայրերէն և կը գրաւէին անոնց անեցումները: Այլ վտասաթաղթներն ալ ներկայացուցինք խորհրդածապովին: Արդիւնքը նոյնպէս եղաւ ոչինչ:

••

Մենք կը շարունակէինք մեր տեսակցութիւնները այն բոբորի հետ, որոնք այսպէս թէ այնպէս կրնային օգտակար ըլլալ մեզի և կը յայտնէինք անոնց մեր պահանջները՝ տարով մեր մանրամասն յուշագիրք: Տեսնուեցանք Նորվեկիացի յայտնի գործիչ Նանսէնի հետ, որ հանդիպելը կը Իսմէթ ժողային և անկէ ստացելը կը բացասական տպաւորութիւն: Տեսնուեցանք նաև Ամերիկացի ներկայացուցիչներ՝ Չայլոյի և Կրիլի հետ: Անոնք մեզի բռին, թէ, հակասակ որ իրենք խորհրդածապովին կը մասնակցին կիսապաշտօն կերպով, լոկ իբրև գիտողներ, բայց և այնպէս հրահանգ ունին նպատակ շայկական Հարցի լուծումին:

Եւ այցելեցի Ամերիկայի Պոլսոյ բարձր բոմբար ծովակալ Պրիստոյին: Ան ևս ոչ մէկ յայտ ունէր Տաճիկներու դիջողական քաղաքականութեան վրայ, բայց խոստացաւ շուտօք անոնց կարծիքը: Եղանք «Թանին» նախկին խմբագրապետ և խորհրդարանի նախագահ՝ Հիւսէյն ճահթի մօտ, որ մեզի բաւ, թէ ինք ո'չ մէկ հեղինակութիւն ունի տաճիկ պատուիրակութեան մէջ և Լօզան կը զրտնրի սոսկ լրագրողի հանգամանքով: Այցելեցինք Փրանսական ներկայացուցիչ Պ. Բանարին, Անգլիացի Ռումբուլտին, Իտալացի Գարրոնին: Ամէնքն ալ միաբերան կը կրկնէին զրեթէ նոյնը, թէ՛ Տաճիկները չեն ուզեր զիջիլ ոչ միայն Հայկական ինքզինքը, այլ և Դաշնակիցներու անմիջական շահապրօութեան առարկայ եզրղ միւս բո-

լըր խնդիրներու մէջ, ինչպէս, օրինակ, պարտքերու, մենաշնորհներու, և Երասխանի գաղտարաններու, Նեղացիներու հարցը, սահմանի որոշումը Մասաչի սպորթսմանը Լալլին:

Եւ յիշուի, բոլոր այս խնդիրներու մէջ Երասխանները ստիպուած էին զիջիլ Թուրքերուն, և միայն Մասաչի խնդիրն էր որ անցաւ Ազգերու Դաշնակցութեան Խորհուրդին և լծուուեցաւ յօդուս Անդլիսի և Իրաքի:

Ինչ կը վերաբերի մանր պետութիւններու ներկայացուցիչներուն, անոնք որեւէ արժէք չունէին խորհրդածոցովի աշփին: Պարտուած Յայնները սր տակաւին չէին ճանչնար իրենց նախարարական պաշտօնը, Արքեպիս Եւ Պալատեանն միւս մանր պետութիւնները, որ կը վախճային բաշխուիլներէն և չէին սպեր անոնց հպատարութեանը յանձնել որեւէ հպատաս, անկարող էին սպերցութիւն զործել: Մինչդեռ, Կարսի և Կապուսիանի վիճակներու մեր պահանջը, անոնց աշփին այդ կը նշանակէր:

Հայց Ազգային Օճախ հիմնելու խնդիրն այ հանդիպեցաւ Թուրքերու յարջ ընդդիմութեան: Մեր պահանջներուն աւելի ոյժ տայու նպատակով հայասէր բարեկամները Լոզան ուղարկեցին ամէն կողմէ հարապար որութիւններ: Դիմումներ բրին Հայասէրներու Միջպայային Միութիւնը, Ֆրանսացի մտաւորականները, գերմանական քաղաքական գործիչներն ու մտաւորականները, Զուիցերիսի, Պելճիսիսի, Հոլանտայի, Ֆրանսայի, Ֆինլանտայի բաղմաթիւ համալսարաններ ու գիտական հաստատութիւններ, հայկական ազգային և քաղաքական կազմակերպութիւններ:

Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը ոտքի ելաւ պահանջելու համար Լոզանի խորհրդածոցովէն բուարարութիւն տայ հայկական բաղմաճներուն: Եւ իբրատներ ունէր Լարտ Քրրպըն Խորհրդածոցովին մէջ գիմելու Թուրքերուն բելով:

«Ամբողջ քաղաքակիրթ աշխարհը մեզի կը նայի եւ կը սպասէ, որ դուք բուարարութիւն տաք Հայներուն»:

**Սակայն Իմէթ փաշան պատասխանեց.**

«Քաղաքակիրթ աշխարհը ատելի շատ ձեզի կը նայի, որովհետեւ դուք էք, որ անվերջ խոստումներ տուած էք Հայներուն, իսկ մեկնք որեւէ խոստում տուած չեմք»:

Բացի մեզմէլ, մեր բարեկամներն ալ զիմամենը կ'ընէին զանազան ուղղութեամբ, և անոնց սոցաւորութիւնն ալ նոյնն էր, ինչ որ և մերը: Ամէնուրեք կը լսէինք համակրական խօսքեր, բայց չէինք տեսնել թուրքերուն վրայ սղակաւ սրելէ զործնական միջոց:

Պորճրգաժողովը նախ անգամ աշխատանքներու բաժանման բնարուեցան քաղաքական, տնտեսական և իրաւարանական յանձնաժողովներ: Հայկական Հարցը կը դանուկը քաղաքական յանձնաժողովի յատուկ մասնաւորմանի մէջ, որուն նախագահն էր Իտալացի Մանտանոն, Իտալիոյ, Աթէնքի, սոցա և Էնկիւրիի գեապանը: Թուրքերը խորճրգաժողովին մէջ բոնկը էին անանկ զիրք մը, որ, իբր թէ իրենց բարբոսին ծանօթ չէ Հայկական Հարցի պայտիւնը: Անոնք կ'ընէին որ Հայաստանի և Տաճկաստանի սահմանները սրտուած են կարտի և Մսկուտայի գաշնապերտով, իսկ Թուրքիոյ մէջ բնակող Հայերու Հարցը իրենց ներքին խնդիրն է: Այս տեսակէտի վրայ ալ մնացին մինչև այն աստիճան, որ երբ խորճրգաժողովի մէջ կրկին անգամ խօսք եղաւ Հայկական Հարցի մասին, Թուրք պատուիրակ Ռիպա նոր ուժգնորէն զարնելով զաւորճ զարս ելաւ ժողովարահէն: Պարզ էր, որ մեր բարբ ջանքերը զար էին Թուրքերու վրայ աղղեցութիւն զործելու տեսակէտով: Ուտարի մենք որոշեցինք Ազգերու Դաշնակցութեան քարտուղարութեան միջոցով յիշեցնել Լօղանի Պորճրգաժողովին Ազգերու Դաշնակցութեան սրտամները մեր Հարցի մասին: Եւ Դեկտեմբեր 2ին զիմէցինք Պորճուրգի քարտուղար Պ. Դրամանկին, որը երկու օրէն պատուախանեց, որ պիտի վտիթայ յիշեցնել Դաշնակից կառուարութիւններուն, սրտնք մասն ունին 1921ի Սեպտեմբեր 21ի սրտամներու մէջ և այսօր ներկայ են խորճրգաժողովին, այն բանաձեւերը սրտնք բնոյնուած են Ազգերու Դաշնակցութեան Ընդհանուր Ժողովներու կողմէ, Հայկական Հարցի վերաբերելու:

Պորճուրգի սղակցութիւնը խորճրգաժողովի վրայ ուժեղացրելու նպատակով նոյնանման զիմամ բրինք և անոր հերթական նախագահին, որ այլ ժամանակ Պրտպիլիոյ ներկայացուցիչ Դր Գաման էր:

Հեղճեւոյ սկսան համելի մեր զիմամներուն պատախանները, շտա յանախ աննոց մէջ խոտուամներ չկային: Կը կարգայինք համակրանքի խօսքեր և կ'իմանայինք, որ մեր ստաջարկները Քտոնըւած են ի զիտութիւնք: Շտաերն ալ կը զիմէին ուղղակի խորճրգաժողովին, յանուն սրղարութեան պահանջելով մեր պատի պաշտպանութիւնը:



Դեկտեմբերի սկիզբներուն յուր ստացանք որ քաղաքական յանձնաժողովը քննութեան պիտի դնէ տաճկական սահմաններու խրե-  
զիբը, ապա ուրեան և շայկական շարքը: Դեկտեմբեր 16ին դիմե-  
ցինք խորհրդաժողովին՝ խնդրելով որ թոյլ տրուի մեզի անձամբ  
պարզելու մեր տեսակէաները: Ճիշդ է, մենք խորհրդաժողովի ան-  
դամներ չէինք, բայց կը համարուէինք հայ ժողովուրդի օրինական  
և լիազօր ներկայացուցիչները:

Համաձայն մեր դիմումին՝ մենք հրաւիրուեցանք մասնակցե-  
լու Լեխմաժողովի Դեկտեմբեր 26ի նիստին:

Նախ քան մեր ստաճարկներու պաշտպանութեան անցնիլը պի-  
տի պատմեմ թէ ինչ կը կատարուէր խորհրդաժողովի ներսը Հայկե-  
րու հրաւիրման ստիժի: Արովհետև հրաւիրագիրը մեզ ուղարկուած  
էր պաշտօնական ճանապարհով և պաշտօնական նիստի համար, այդ  
պատճառով չէլեալ նիստին հրաւիրուած էին խորհրդաժողովի բոլոր  
անդամները, ի թիւս որոնց Յայներն ու Թուրքերը: Բայց երբ Թուր-  
քերը ծանուցադրէն կ'իմանան, որ այդ նիստին մէջ քննութեան պի-  
տի ստնուի Հայկական շարքը և պիտի ներկայ բլլան Հայերու ներ-  
կայացուցիչները, կը հրաժարին մասնակցել նիստին՝ պատճառա-  
բանելով, թէ Հայերու և Թուրքերու միջև յիճեալի խնդիրները դո-  
յութիւն չունին, թէ այդ խնդիրները շատոնց արդէն կարգադրուած  
են, թէ մենք Հայերու ներկայացուցիչներ չէնք կրնար բլլալ և որ  
Խորհրդային Հայաստանն անի արդէն իր իսկական ներկայացուցիչ-  
ները: Ասոր վրայ խորհրդաժողովը առաջին պիջումը ըրաւ Թուրքե-  
րուն Հայկական շարքի վերաբերեալ. ան պաշտօնական ժողովի փո-  
խարէն պատարեց մասնաւոր նիստ մը, որուն նորէն հրաւիրուեցանք  
բերելու մեր մասնակցութիւնը:

Այդ օրը անձրևնստ էր և ցուրտ. լարուած տրամադրութեան  
մէջ էինք և պատրաստ էինք խօսելու ամենայն մանրամասնու-  
թեամբ: Կը պիտակցէինք, որ մեր ազգային կեանքի պատմական մեծ  
վայրկեաններէն մէկը կ'ապրէինք: Միևնոյն կտորի մէջ տեղաւոր-  
ուած էինք հինգ հոգի՝ Ահարոնեան, Նորատուհեան, Բաշալեան, Օ-  
լիվր Բոյրտոյն և ևս: Բոլորոնք յուզուած էր: Ան ամբողջ երեք  
ժամ սպասեց մեզ խորհրդաժողովի դրան առջև՝ բռնելով, թէ այդ  
վայրկեանին չի կրնար Փիղիբապէս հեռու բլլալ մեզմէ:

Ներս մտնելու ստեն պատահեցանք Վենիգելոսին, որ յուզուած  
դուրս կու գար սրահէն: Վենիգելոսը 1920 թ. Սևրի Խորհրդաժո-  
ղովի ամենաազդեցիկ անդամներէն մէկն էր: Երբ քննութեան պիտի  
ստնուէր Հայկական շարքը, պատասխանեց թէ «Թուրքիոյ հրա-

ժարելէն յետոյ որոշուած է մասնաւոր նիստ գումարել, որուն պիտի մասնակցին միայն Անգլիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ ներկայացուցիչները, եւ ինձ առաջարկեցին թողուլ արահը: Իր զէջքին վրայ կը կարգաչինք խորունկ վերասրանք եւ յայտում:

Արահին մէջ հարախրուածներու շարքին կը գտնուէին Պուլկարներու ներկայացուցիչներ Թոզորովը եւ Դաստուով, սրանք եկած էին Թրակիոյ Պուլկար գաղթականներու բախտը տնօրինելու եւ Ասորիներու ներկայացուցիչ Ալիա Պեարոսը: Հետաքրքրական հանդիպում: Ասանք բարբր Թուրքերու կողմէ ճնշուած ազգերու ներկայացուցիչներն էին:

Շուտով մեզ կանչեցին ժողովարար: Այնտեղ նստած էին Անգլիոյ ներկայացուցիչներ՝ Ռուսբորոյր եւ Ռամսէյը, առաջինը Անգլիոյ զեւսպանը Սոլտմիոյ մէջ, եւ Երկրորդը Պոլսոյ խորհրդականը. Ֆրանսայի ներկայացուցիչներ՝ զը Լա Քրուան եւ Լապորէտը, Իտալիացիներ՝ Մոնտանան: Կը նախապահէր Ռամբորոյր:

Ժողովի պատկերը տարազնութեամբ ներկայացնելու համար, առաջ պիտի բերեմ այն մանրամասն արձանագրութիւնը, զոր մենք կողմեցինք նիստէն անմիջապէս յետոյ: Այդ արձանագրութենէն ընթերցողը կը տեսնէ — եւ այդ կը շեշտեմ այստեղ — թէ ինչպէս Անգլիացիք կը պնդէին յամտօրէն, որ Ազգային Օճախը կազմուի Կիլիկիոյ մէջ, Միջերկրականի ափերուն, մինչդեռ Ֆրանսացիք կ'առաջարկէին Հայկական Օճախը հիմնել Արևելեան վերայլթնրու մէջ, Կովկասահայաստանի մօտ:

Երկու պետութիւններու տեսակէտներու տարբերութիւնը ունէր իր պատճառը: Անգլիան կ'ազգը Պապատափ Երկաթուղապոծի սկզբնաւորման եւ Սուրիոյ սահմանապիծին մօտ ստեղծել իրեն համար յենարան մը: Նոյն այդ պատճառով Ֆրանսացիք չէին ուզեր Հայկական Օճախի ստեղծումը իրենց հովանաւորութեան ներքեւ զտնուող Երկրին սահմանակից: Քիչ զէր չէր խաղար այդ խնդրին մէջ եւ ուստիկան ազգեցութիւնը, որ կը տարածուէր մեր արևելքէն նահանգներուն վրայ:

Ահա մեր արձանագրութիւնը —

Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

(26 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1922 ՆՒՍՏԻ)

Հայկական Միացեալ Պատուիրակութիւնը, յանձնա պարոնայք Գ. Նորասունկեանի, Ա. Ահարոնեանի, Ալ. Սատիսեանի եւ Լ.

*Բաշտօրեանի, 26 Դեկտեմբեր ժամը 16ին ներկայացաւ Էնթոմոզոլին: Նախապահի առաջարկութեամբ՝ Պ. Պ. Նորատունկեան և Ահարոնեան ներկայացուցին Հայերու պահանջները: Նորատունկեանի ընթերցումէն և Ահարոնեանի գեղոյցէն յետոյ տեղի ունեցաւ հետեւեալ հարց ու պատասխանը:—*

**Արք Նորատունկեան.**— Ի՞նչպէս կը պատկերացնէք Հայկական Օնախի եւ Տանկաստանի յայտարարութիւնները:

**Ա. Ահարոնեան.**— Մեր ցանկացած Օնախը Տանկաստանէն միտնգամայն անկախ պէտք է ըլլայ. բայց Դաշնակիցներուն դիրքութիւն տալու համար, մենք պատրաստ ենք այն բոլոր ձեւաւորումներուն, որոնք կը պաշտպանեն Տանկիկներու շահերը, օրինակ բրիտանական գաղթալայրներու ռէժիմը: Ես կը կարծեմ, որ Պ. Նորատունկեանը միանգամայն համաձայն է ինձ հետ:

**Նորատունկեան.**— Այդ մասին ես կարդացի քիչ տոճ:

**Արք Հ. Ռումբուլ.**— Ի՞նչ կը կարծէք զու՞ք Երեսնեան սահմաններու բնդլայնման եւ Օնախի մասին. չէ՞ որ այդ պարագային կ'ըլլայ երկու Հայաստան:

**Ա. Ահարոնեան.**— Քանի որ Երեսնեան Հանրապետութեան սահմաններու բնդլայնման խնդիրը անոր խորհրդային ըլլալու պատճառով դժուար է. եւ մենք չենք կրնար արժարծել այդ հարցը, քանի որ Խորհրդային ատով չի գրադիր. սրեմն եւ ոչինչ կրնայ խանգարել նոր օնախի մը կազմութեան Տանկաստանի կողմէ գրաւուած Ռուսահայաստանի հողերուն վրայ: Մենք չենք ուզեր այն սահմանները որ գծած է Մ. Նահանգներու նախագահը, մենք կը բաւականանանք նաեւ մէկ մասով: Իսկ ինչ կը վերաբերի երկու Հայաստան աւենալու հարցին, այդ անսակէտով Ձեզի օրինակ կրնայ ծառայել Պուլկարիան եւ արեւելեան Ռուսանիան:

**Արք Հ. Ռումբուլ.**— Ո՞րն է այդ հոգամար որ ձեզ կը բաւարարէ, կարա՞նք էք ցոյց սալ Բայալէսի վրայ:

**Ա. Ահարոնեան.**— Գծեց Բայալէսի վրայ սահմանագիծ մը, որ անցնելով Ռիզէէն ու Հասան կալայէն՝ դուրս քողով Էրզրումը, կը հասնէր մինչեւ Մուշ եւ մէջը առնելով Վանայ շուրջ՝ կը միանար Պարսկաստանի սահմաններուն:

**Արք Հ. Ռումբուլ.**— 700,000 գաղթականները կը տեղաւորուին՞ այդ սահմաններուն մէջ: Անոնք բոլորը Տանկահայեր են:

**Ա. Ահարոնեան.**— Այո՛, Տանկահայեր են եւ պիտի երթան բնակիլ այդ հողամասերուն վրայ:

**Արք Հ. Թումբուրա.** — Ըրեմն Տանկտհայաստանի մէջ այլեւս Հայ շի՛մնար :

**Ա. Ահարոնեան.** — Երբ անգամ մը հիմնուի Հայկական Օնախը , Հայերս եւ Տանկկներս միջեւ խաղաղութիւն հաստատուի , Տանկատաննի մէջ մնալ փափափողները կ'ըլլան լաւ քաղաքացիներ :

**Արք Հ. Թումբուրա.** — Ըրս՞նք են այժմ այդ հողամասերս բնակիչները :

**Ա. Ահարոնեան.** — Գլխուստապէս Քիւրտերը : Տակաւին պատերազմէն առաջ անոնք մեծ ըիւ կը կազմէին . իսկ Տանկկները քիչ տուկոս կը ներկայացնէին : Այնպէս որ մեծամասնութիւնը Հայեր ու Քիւրտեր էին . այս վերջինները արիական ցեղին կը պատկանին եւ շատ դժուարութեամբ են իրարմացած :

**Տր Լա Քրուա.** — Ձեր վաստիութիւնը Քիւրտերս վերաբերմամբ վիճելի է . բոլոր Քիւրտերը ձեզ հետ չեն Լւ շատերը մասնակցած են հայկական ջարդին : Քիւրտ Համիտիէի կատարած դէրը լաւ յայտնի է :

**Ա. Ահարոնեան.** — Քիւրտերը աւելի շատ քաղամուղներ են քան ջարդող : Շատ Քիւրտեր կան որ մեզի հետ են : Հայաստանի մէջ մեռնէ երկու բրտական գորպուսնդեր ունէինք , որոնք մինչեւ վերջ կրուուեցան Տանկկներս դէմ :

**Տր Լա Քրուա.** — Ես կը ցանկայի այդ մասին խմունալ նաեւ Պ. Նորատուրկեանի կարծիքը :

**Նորատուրկեան.** — Քիւրտերս մասին խօսելու ատեն պէտք է նկատի ունենալ նաեւ անոնց ցեղերը . որ 200էն աւելի են : Եզդիներս ու Կպլաշները Հայերս բարեկամներ են : Պէտք է յիշատակել , որ անոնք 1915ին 20,000 Հայեր պահեցին : Բայց , օրինակ , Ջելայները հակահայ են : Համիտիէի խումբը կազմուած էր անոնցմէ , որոնք տանկական հագուստներ հագած կը շարունակէին իրենց աւազակութիւնները : Երբ ցանկացին փոխադրել — այդ գորախումբերը — երկրորդ գահնդի գորապետ Զրնկի փաշան դէմ ելաւ , առարկելով . որ այդ խումբը սր ալ որ երբայ նայն կեանքը պիտի վարէ , քանի որ սոցոր է ատոր :

**Տր Լա Քրուա.** — Այն 350,000 Հայերը , որոնց մասին դուք կը խօսիք , ամէնքն ալ Տանկահայեր՞ն են , ըէ անոնց մէջ կան ե՛ւ Ռուսահայեր :

**Ա. Ահարոնեան.** — Ամէնքն ալ Տանկահայեր են եւ միայն նշանի կը սպասեն , որպէսզի վերադառնան :

**Տր Լա Քրուա.** — Ի՞նչ տեղեկութիւններ ունիք այն 130,000ի մասին ,

որոնք կը մնան Տանկատանի գաւառներուն մէջ: Անոնք կը բըշ-  
ուի՞րն այնտեղէն. քէ իրենց կամքով է որ կը հեռանան:

**Նորաստիկեան.** — Ահաւասիկ իրադարձութիւնք. փառացի պատերաւն վը-  
րայ յայտարարութիւններ փակցուցեր են որոնք մէջ Հայերուն ու-  
րոշ ժամանակ մը տրուած է հեռանալու: Յետոյ, տանիկ բնակիչ-  
ները իրենց հերքին կ'ըսէին Հայերուն. քէ չես գիտեր ինչ կը պա-  
տահի մնացողներուն: Եւ չնայած ձիւն ու ձմրան ու այնքան  
դժուարութիւններուն Սեւ Մով անցնելու համար, Հայերը հեռա-  
ցան գանգալն կողմեր, մանասնոյ ղէպի Սուրիա, ուր գաղթա-  
կանութեան քիւր 140.000էն աւելի է: Ինչ խօսք որ արար ժողո-  
վուրդը գոհ չէր այնպիսի գանգաւածային գաղթականութենէ:

**Լա Փորթ.** — Ի հարկէ, առիկա տնտեսական խնդիր է. Հայերուն  
գալով աշխատող ձեռքերու արժէքը ինկաւ, բան մը, սը շատ ալ  
հանելի պիտի չըլլայ Արաքներուն:

**Գ. Նորաստիկեան.** — Այե՛հասնարէրի շրջանը, ուր կ'ապրին Ալա-  
ուիքները, Հայերու վիճակը աւելի լաւ է:

**Լա Փորթ.** — Ես նոյն կարծիքէն եմ:

**Սրբ Շ. Ռուժրթ.** — Որքա՞ն է հերկայիտ Երեւանի Հանրապետու-  
թեան բնակչութեան քիւր եւ ի՞նչ տարբեր է բաղկացած:

**Ա. Ահարոնեան.** — Պաշտօնակիցս՝ Խատիսեան լաւ ծանօթ է մեր  
երկրին, երկու տարի շարունակ վարչապետ եղած է, կրնայ Ձեզի  
տեղեկութիւնները տալ:

**Ա. Խատիսեան.** — Երեւանեան Հանրապետութեան բնակիչներու քիւր  
ներկայիս 1.400.000 է, որոնք 1.200.000 Հայեր են, 60.000 մահ-  
մետական: Այս բնակչութիւնը կ'ապրի 26,000 քառ. քիւլ. հողամա-  
սի վրայ, որմէ միայն 9.000 քառ. քիւլ.ն է մշակելի: Երբ վերջերս  
խօսք եղաւ նոր գաղթականութիւն մտցնելու երկիր, Խորհրդային  
կառավարութիւնը մերժեց: Մեծ ջանքեր պէտք եղան տեղադրելու  
համար 10,000 հոգի գաղթականութիւն, որ եկած է Միջագետքէն:  
Մեր ամենաբերրի հողամասերը, որոնք կը կերակրեն ոչ միայն  
Հայաստանը, այլ եւ Կովկասի մէկ մասը, Կարս, Սուրմալու, Նա-  
խիջեւան, գրաւուած են Տանիկներէն:

**Սրբ Շ. Ռուժրթ.** — Ի՞նչ եղաւ այն մտահետակա՞ն բնակչութիւնը,  
որ կ'ապրէր Հայաստանի մէջ:

**Ա. Խատիսեան.** — Տեղափոխուեցան մաս մը Տանկատան, մաս մը  
Կարսի շրջանը եւ մաս մըն ալ Ատրպէջան:

**Սրբ Շ. Ռուժրթ.** — Ենդրեմ գոյց տուէ՛ք քարտէսի վրայ, քէ դուք  
կիլիկիոյ ո՞ր մասին մէջ կը պատկերացնէ՛ք ձեր Օնախը:



**Տախտն աջ**

**Լ. Շահր, Յ. Բաղդասարի, Ս. Վրացեան**

**Գ. Նորաստեղծան.** — (Կայց տալով) Օնախը կը գծուի ճիւղանի, Սուրխյ սահմաններու եւ Եփրատի միջեւ աւ կ'երկարի զէպի հիւսիս՝ առնելով իր մէջ Սիսր եւ Մարաշը:

**Սրբ Ղ. Ռամբոլա.** — Ի նշխան բնակչութիւն կրնա՞նք սեղանուել այդ հողամասին վրայ:

**Գ. Նորաստեղծան.** — 5—6 հարիսը հազար:

**Նախագահ.** — Պայանայք, ձեր տեղեկութիւնները բոլորը գրի առնուեցան: Մենք կը խորհրդակցինք եւ հարկ եղած պարագային նորէն կը հրատարակենք ձեզ նոր բացատրութիւններու համար:

**Գ. Նորաստեղծան.** — Ես շատ սրախ եմ, որ այս օրուան օրակարգին մէջ չկայ Տանկաստանի փոքրամասնութեան հարցը. բայց տաւէ ինձ հրատարակել Ձեր ուշադրութիւնը երկու գլխաւոր կէտերու վրայ: ա) ազատ ըլլալ գորակաչէ, բ) Պատրիարքարանի ազատութիւնը: Իրաքանչիս ձայն ազատ պիտի ըլլայ հրաժարելու զինուորական ծառայութենէ:

**Նախագահ.** — Յոյն պատուիրակութիւնը արդէն արժարժած է այդ հարցը, բայց Տանկիները զէմ են: Ամէն պարագայի տակ մենք նկատի կ'առնենք ձեր յայտարարութիւնը:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

(26 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1922 Թ. ԿՈՐԴԱՅՈՒՄՆ ԼՕՁԱՆԻ ԿՈՐԸՐԱԾՈՂՈՎԻ  
ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻՐԻՆ ՄԵՋ. Պ. Գ. ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆԻ ԿՈՂՄԷ)

Հայկերու համար այսօրու վնասական մէկ ժամուան, մենք սրտի կակիծով կաւ գամք գրադեցնելու Ձեր յարգելի յանձնախումբը Հայկական Օնախի խնդրով:

Գու՞ք զխտէք. Պարոններ, որ մեր խնդիրքը շատ համեստ է: Գու՞ք զխտէք նաեւ թէ ինչքան Հայեր կը սենչան խաղաղութեան եւ թէ ինչքան երջանիկ պիտի ըլլան երբ այս խորհրդածոյցովի բարի նպատակը իրագործուի: Բայց մեզ կը թախի, թէ կան հարցեր, որոնց մասին մենք պէտք է մեր յուսարանութիւնները տանք եւ որոնց վրայ մենք պէտք է պնդենք:

1915 թ. զէպէրը մեծ անդունդ մը բացին Հայերու եւ Տա-

նիկներու միջեւ : Երիտասարդ Տանիկներու ղեկավարները այդ ժամանակ ոչ միայն ցանկութիւն ունէին անօրինակ կերպով գործել, Հայերու, տանիկ կառավարութեան հաւատարիմ հպատակներու դէմ, այլ եւ կ'անգիտանային իրենց երկրի շահերու տարրական ըմբռնումները :

Չնայած որ, համաձայն գերմանական դեսպանի եւ ուրիշներու վկայութեան, Տանկահայերը ենթակայ եղան զինակոչի եւ կատարեցին իրենց զինուորական ծառայութիւնները. անոնք ենթարկուեցան տեղահանութեան, ջարդի եւ կորսնցուցին իրենց բնակչութեան մեծագոյն մասը :

Յամենայն դէպս, որքան եւ ողբերգական է եղած տանկական այդ ֆաղափականութիւնը, մենք չենք ուզեր անդրադառնալ նորէն այդ խնդիրներուն, այլ կը գերադասենք յատել մեր աչքերը ներկայի եւ ապագայի վրայ :

Ներկայիս դժբախտաբար, փոխադարձ անբարեացակամութիւն կ'իշխէ Հայերու եւ Տանիկներու միջեւ եւ ոչինչ կը կատարուի Տանկաստանի մէջ մեղմելու համար սուր հանգամանք կրող երեսոյրները : Նորին Գերագանցութիւն Խամէթ փաշան բաւորովին անհրաժեշտ չի նկատեր մեր Ազգային Օնախի կազմումը. այլ բաւական կը համարէ այն լուծումը, որով օտար սեղեր զտնուող մեր գաղթականութեան թոյլ պիտի տրուի վերադառնալ Տանկաստան : Մենք, զրծբախտաբար, չենք կրնար բաւարարուիլ միայն ատուլ, նկատի առնելով այն վիճակը, որ կրնայ ստեղծուիլ, բոլոր եղած դէպքերէն եւ պարագաներէն :

Մերձք մանրամասնօրէն ծանօթացրել են Ռուսրոյզին Հայերի ներքին գրութեան հետ, Պոլսոյ վիճակի, պատրիարքական խնդրի և այլն: Նա պատասխանել է, որ Պատրիարքը այլ օրը անգլիական պաշտպանութեան տակ նա է նստել և հետացել Պոլսից: Յետոյ նա ասել է, թէ նոյն օրը լրոյ Քրդերնից նամակ է ստացուել (son excellence Mr. A. Aharonian, président de la Délégation de la République Arménienne) արակէ նա գրում է որ «Հայերի գրութիւնը գրուել է նրա առանձին ուղարկութիւնը»: Նիստին ներկայ եզողները պատմում են, որ Իսթէթը շատ վրդափում էր և ջգայնացած միաձայն արտայայտութիւններով:

(\*) Պոլսոյ ռուս. դեսպանատան անգլից խորհրդակաճ, որ 1913իճ ստորագրած էր հայկական բարեկարգութեան ծրագիրը:

Այսօր Ահարոնեանք տեսնուել է ժրնեի պրոֆ. Պիտտարի հետ, որը նոյնպէս պիտի խոսի Իսմէթի հետ: Եզրակացութիւնը այն է, որ Քրդերն եւ Կոնֆեդերանսի վերաբերմամբ կարելի է գտն մնալ. իսկ ինչ դուրս կը գայ գրանից, զես յայտնի չէ: Բնորոշ է, որ Էրր Սատիսեանը խիստ պահանջել է Ռամբուլլից, որ Հայկական Հարցը պէտք է գրաւի եւ նկատուի իբրևս կենսական Անդլիայի համար, նա պատասխանել է. «Դուք ցանկանում էք, որ մենք պատերա՞զմ յայտարարէնք Քուրդիստին»: Սատիսեանը ասել է. «Ո՛չ, այլ դուք նոյն միջոցներով պիտի սրշտպանէք մեր հարցը, ինչպէս Նեպոլեոնեի ինդլիբը եւ նման ինդլիբներ»:

Ամսոյս Աօին Նիկոյանը ասել է Բարլոյիին, որ Անդլիան ասելի արամեպիբ է Հայր կազմել Կիլիկիայում Ռուսաստանից ասելի հետս, աչբի առաջ ունենարով ներկայ գրաւթիւնը: Ինչ վերաբերում է որ Քրդերն չէ բնդուանել մերթնները, նա ասել է, թէ սկզբունքով ալտակ ոչ մի առաջին պատուիրակ չի բնդուանում, այդ դերը կը կատարէ Էրկրսրդ պատուիրակը:

Նոյն օրը մերտնք ճաչի եւ հրաւիրել Ֆիլարմէններն՝ Նաւիլ, Կրոֆա Բանար, Դր Մորդիլ, Տ. Նալրանդեան, Մանդամերի, Ռուկուելլը, Բարլոյին: Ճաչից յետոյ Ֆիլարմէնները դնացել եւ Բարբերի մօտ. բնդուանել է նրանց Բամպարը: Պարզուել է որ առաստեան Բարբերը եղել է Իսմէթի մօտ եւ իսուել Օճախի մասին. ստացել է բացարձակ բացասական պատասխան: Բամպարը շատ աննպատ կարծիք է յայտնել Օճախի կարելիութեան մասին: «Թիւրքերը չեն տայ, ասել է նա, չեն ուզում. թողէք այդ պրոպագանդը, որով միայն զբոսում էք Թիւրքերին»: Եւ յետոյ ասելոցրել է. «Հայերը թէև շատ զմուտրահաճ ժողովուրդ են (c'est un peuple très dur), բայց յետոյ բնդուանել եւ բոլէիիզմ»: Ստակցութեան վերջում ասել է. «Գնացէք ասելի բա է Ամերիկայիների մօտ, թող նրանք աշխատեն. նրանք ասելին կարող են անել»: Գրեթէ նոյնը ասել էր Էրէկ Նորասունկեանին Փարբանին:

Նոյն օրը Սատիսեան, Չիւենկելի եւ Թոփչիրաչեւը ունեցել եւ շատ մտերմական եւ բարեկամական խօսակցութիւն, որ տեսել է մօտ Էրկու մամ: Թոփչիրաչեւը ասել է. «Եւ տեսնուել եմ թէ՛ Իսմէթի եւ ինչ՛ բոլոր Թիւրքերի հետ: Նրանց մտայնութիւնը այժմ ասելի մեղմ է բուն թէ Էրկու շարաթ առաջ: Ուզում եւս զանել ճանապարհ հաչտուել Անդլիոյ եւ Ամերիկայի հետ, բա յարաբերութիւն ունենալ նրանց հետ սւ յոյս անեն, թէ մի տարուց յետոյ կըր նրանք Արմատաքի կողմից հանդիստ կը լինեն, իրենց ուշադրութիւնը կը դարձնեն Արե-

ուրբի վրայ : Այսօր սուրբ եւ խոստովել կազմակերպեալ են Մասնաբի մասին խօսակց : Իսկ մինչ այլ , նրանք սուրբ եւ հաշտ սուրբի Հայերի հետ , գնահատում են շատ ձեր պրոպագանդի կարանդակը , ոչ վերասրահան նրանց համար , այդտեղ են բացմովի կոչերից , որ գալիս են կոնֆերանսին , փնտսում են հաշտութեան ճանապարհներ : Գո՛ւ են նորաստեղծներից եւ ձեռնարկից եւ Ահարոնեանից : Մի խօսքով կարծես թէ ստեղծում է համաձայնութեան հարկանալիքներ : Բայց չպէտք է մտնայ , որ Իսթեթի յետեւից կան անհաշտ սարքեր , սրանք ոչինչ չեն սուրբ գիջել եւ տասմ են : Թող Հայերը գնան նստեն Յոյների տեղը եւ հարցը կը լուծուի : Միտմամանակ Իսթեթի իրատեղի շունի ինքը գիջումներ անելու : Նա պէտք է բարբարիս եւ գնայ գեղացանի Անդրապատ , սրտեղ եւ հարցերը կը ստանան վերջնական լուծումը : Դուք պէտք է այլ շրջանի համար ունենաք միջոցներ սպիկուս Անդրապատի վրայ , աշխատելի հարկանութեան վրայ : այս գործը շատ կարեւոր է : Միտ կողմից Անդրապատ եւ Ամերիկացիք ձեռնում են անում նրանց վրայ , համարելով ինքնարեւոյր գիջումներ անել Հայերին՝ կիրիկիտայում : նրանք ստաջարկում են եւ համարում են յայտարարութիւն անել յոգսաւ Հայերի եւ գրանով պատաստար կերպով հարցը լուծել : Իսկ Թուրքերը աշխատում են պահել կազմակերպեալ հանրապետութիւնների անկախութիւնը եւ նորերս աշխտեղ սուրբիցին գետան : Շտաունակեղք անենայ յարարելութիւններ Թուրքերի հետ , թող նորաստեղծներ նորից գնայ նրանց մաս : նա նրանց գոր է կկկ : Թուրքերու առաջարկի մէջ մի կարեւոր կէտ կայ , սրի մասին պէտք է յարջ մտածել : այն է Անդրապատ մարդ սուրբիկուս ինքիբը :

Ամսոյս Աշին ժամը 3ին կայացել է Առաջին յանձնարարի նկար , սրտեղ յարգ Քրիստոսը սրտաստանել է մի բնագործակ եւ շատ սովեղ ճատ՝ փոքրամտանութիւնների ինքրի եւ յատկապէս Հայկական Այգլային Տան մասին : ճատի կարեւոր կարգները սուրած են բարբարիքներում , իսկ անգլիական թերթերը տուել են այն գրիթի բառացի : Հայաստանին վերարեւոյ նրա ճատի մի մասը տայիս ենք «Հայաստանի Չայն»ի մէջ : նրանից յետոյ խօսել են բարբար Ռաշտակիցների ներկայացուցիչները , միտնալով նրա ստաջարկին : Ապա ստանձին շեշտով խօսել է ամերիկեան ներկայացուցիչ Չայլըր : Թուրքերը իրենց սրտաստանը վերարաշէլ են հետեւեալ սրտան : Ամսի Աշին ստաստեան ժամը Աին նրանք տուել են իրենց մերժողական պատասխանը , սրից յետոյ յարգ Քրիստոսը երկրորդ անգամ խօսել է եւ մի բանի կտորներում բարբարին սպառնալից շեշտով : Վերջացնելով



խօսքը, յորդ Քրիստոսընքն աստճարկել է խնդիրը յանձնել Ենթալանձնախմբի, սրտեղ և հրաւիրում է Թուրքերին տալ իրենց վերջնական պատասխանը :

Ամսի 13ին հասել էն Լօզան Լարբիս և Մեյլան, որոնք սպարհում են յորդ Ռ. Մետիլի կողմից : Նրանք էլ պիտի աշխատեն համբ համար : Մանդակերի, Պիտա, Բարտոնի գոհ շին Չայլի ճառից, գրտնելով որ նա 1) Եղել է մի քիչ անորոշ իր ճատի մէջ, ասելով շրջան և ոչ համ, և 2) Պոստանում էր գրամ ոչ թէ կատապարտութեան կողմից, այլ ժողովրդի կողմից : Նրանք ասում են որ սպասում էին, թէ զեւոյանք պետական գրամ պիտի խոստանար : Մանդակերին տակ է մերանց որ նա հիմք ունի կարծելու, թէ մի շարաթ ասով Չայլըր ասելի ուժեղ ձեւով պիտի միջամտէր, բուն թէ այժմ : Ստացել է արդեօք նա ասելի մեղով հրահանգներ Ամերիկայից, յայտնի չէ : Ամսի 13ի նիտից յետոյ նա 1½ ժամ անց է կայրել Իամէթի մօտ, համոզելով նրան ընդունել Դահաիկիցների աստճարիք՝ նկարագրելով այն վատ տպաստութիւնը, որ նրանց պիտի կ'ունենայ Ամերիկայում : Նրան ուղեկցում էր և ծովակալ Բրիտտոյը : Ասում են, որ իր թէ Չայլըր գոհ էր իր ունեցած խոսակցութիւնից :

Վերայիշույ Մեյլանը բերել է մի յատուկ նամակ Ռ. Մետիլից յորդ Քրիստոսընքն անունով, որով նա պաշտում է նրան թափել ամենայն ջանք համբ յաջողեցնելու համար : Նամակը արդէն յանձնուած է, և յորդ Քրիստոսընքն ասել է այդ ասիլի, որ նա իր գիրքից չի հեռանայ : Միամտամանակ Լարբիս և Մեյլանը պաշտօն ունեն ասելու Չայլիին, որ նա պէտք է շատ ուժեղ պաշտպանի յորդ Քրիստոսընքն գիրքը :

Աչքի ասով ունենալով որ Թուրքերը շատ են գրազուած և փոխառութիւն կնքելու հարցով, մերանք յարմար են գտել որ Բուլղիներ, Անգլիայի և Ելմտական նախարարի որդին, տեսնուի Իամէթի հետ : Իրօք նա այդ մտքով մի նամակով պիտի է Իամէթին, ասելացնելով նամակի մէջ որ նախարարի որդին է : Անմիջապէս Իամէթը պատասխանել է, և ընդունել Բուլղիներին 13ին տոաստեան : Նա բացատրել է, որ անպիտան հասարակական կարծիքը չարապանց հետաքրքրութեամբ է Լայկական Լարբիս, որ տոանց Լայկերին բաւարարութիւն տալու գրամ չեն տայ Անգլիայում : և որ նա ինքը վիայ է, թէ ինչպէս Լայկեր կարող են պաշտպանել իրենց անկախութիւնը և երբեք չեն պաշարի կուսել այդ պաշտպարի համար : Նա ասել է որ իր կարծիքով, կիլիկիան շատ յարմար է համբ համար, և որ Անգլիայի հասարակական կարծիքը կը գնահատի Թուրքերի բարեկամութիւնը հանդէպ Լայկերի : Իամէթը ատարկել է որ Լայկերը ունեն իրենց համբ

Երևանեան Հանրապետութեան մէջ, և որ նոր օրէնքները կ'ապահովեն Հայերին: Պատկերաթիւնը, Բարդիւնի կարծիքով թողել է որոշ տպագրութիւն:

Մարտիմ հետադրել է Լոնդոնից, որ նա տեսել է Դէ Գամային, որր սակ է, թէ ամէն ինչ կ'անի, ինչ որ ցանկանում են Հայերը, և որ Արցախի Լիկայի Խորհուրդը կը հաւաքուի Յունուարի 12ին և Հայկական Հարցը այն մտային կը քննուի: Ձախտ բէյը արդէն եկել է Լոյան: նրա հետ անտպագրութիւն է լինելու:

Ամսոյս 14ին պարզուել է, որ Քարբիան որոշ կերպով թեքուած է զէպի Դաշնակիցները և հետանում է Ռուսաստանից: Ահա վտասները:

Ժամի 12ին Ա. Պատիւեանը ելել է Մզիլանիի մօտ: Անցեալից նրա հետ ծանօթ լինելով և որոշ ծառայութիւն ցոյց տուած լինելով նրան և բնկերնեքին, նա իրեն իրատունք է համարել չօչափել շատ էական հարցեր: 1) Ի՞նչ գեր կարող է ունենալ Ռուսաստանը մեր հարցի վերաբերմամբ և ի՞նչ յարտերութիւններ կան թիւրքիսայի և Ռուսաստանի մէջ: 2) Ի՞նչ է Կովկասեան հանրապետութիւնների սլոժեան իրաւական գրութիւնը և ի՞նչ է սպասուած Կովկասեան հանրապետութիւնների անկախութեան տեսակէտից Դեկտեմբեր 20ին լինելիք Համառոտ Խ. Գործադիր Կովկասի Ժողովից: 3) Ի՞նչ է Վրաստանի և Հայաստանի ներքին գրութիւնը:

Առաջին հարցի առթիւ Մզիլանի պատասխանեց, որ ոռուսահան պատու իրաւութիւնը արամագրութիւն ունի աշխատելու, որ Հայաստանը ստանայ իր սահմանները, ուր պիտի մտնի ամբողջ Ռուսահայաստանը մինչև 1914 թ. սահմանները, Վան, Մուշ, Բիթլիս և Բիւլ, — տանց Տրապիզոնի և Էրզրումի: Բայց ամբողջ հարցը նրա մէջն է թէ ի՞նչ միջոցներով կարող է Ռուսաստանը ձեռք բերել այդպիսի վճիռ: Ռուսաստանը այս սահմանները ձեռք բերելու համար պէտք է խլի թիւրքիսայի հետ, որովհետև թիւրքիսան բարեկամական խորհուրդներին չի հետևի, իսկ սլոժով գործելու համար Ռուսաստանը պտորտաս չէ քաղաքականապէս, որովհետև նա պաշտակից է թիւրքիսային իր յեղափոխական ծրարիւնների համար Միջագետքում, Հնդկաստանում և այլն: Հայկական Հարցը մինչև այժմ Ռուսերը չեն գրել իրենց օրակարգի մէջ, որովհետև իրենց չեն թոյլ տայ Կոնֆերանսում գրադուելու այդ հարցով, իսկ անպաշտան խօսակցութիւնների մէջ, նկատել են որ թիւրքիսան չի սցում յայնացրնել Ռուսահայաստանի սահմանները: Մեր խօսակցութիւնից յետոյ նա այսօր կը գեկուցի Ձիշերինին և քննութեան կ'առնեն այդ հար-

ցր, թէ ի՞նչու պէտք է ոչնչել մեր հարցի լուծման: Նա խնդրել է ուղարկել նրան մեր յաշադիրը: Մզիվանին ասեցայքել է թէ իրենք շատ յա գիտեն, որ Քիւրքերը ամէն յարմար բազէ պատրաստ են յարձակուել Բարուն ձեռք բերելու համար, եւ զբա համար Կովկասում պահում են զօրքեր: «Դուք յիշե՛՛մ էք — հարցրել է նա Խատիս-Եանին, որ ես ձեռնում էի պահել Կարսը, բայց չյաջողուեց. մենք շատ թույլ էինք այն ժամանակ, իսկ զա չի նշանակում որ մենք մի բազէ մասանում ենք նրա գոյութեան մասին: Անցնելով երկրորդ հարցին, նա ասաց, որ ի հարէլ Կովկասեան Հանրապետութիւնները բոլորովին անկախ չեն, — սրովհետեւ զա անհնարին է, աչքի տաջ ունենալով Կովկասի աշխարհադրական դրութիւնը եւ անգլիան հարբատութիւնները ու նասահանդիսաները (Բախում), որոնք անհրաժեշտ են ամէն ռէժիմի Ռուսաստանին էլ: Ընդ միշտ պէտք է համաձայնել այն անասկէտի հետ, որ մենք պէտք է սրջ կախում ունենանք Ռուսաստանից: Հարցը նրանում է թէ՛ մինչեւ ո՞ր տատրիճան կարող ենք պահել կամ պաշտպանել մեր անկախութիւնը: Ահա այս հարցի վերաբերմամբ տասմ է Մզիվանի. պէտք է խոստովանել, որ հայ կոմունիստները ամէնից չիչ են կողմնակից իրենց անկախութեան վստեկարով Քիւրքերից՝ իրենք շարունակ սասական զօրք, ուսուկան արկեցութիւն են պահանջում: Ի հարկէ զա անդրադառնում է սմբոյզ Կովկասի դրութեան վրայ: Ես, ասեցանում է նա — չեմ մեղադրում հայ կոմունիստներին, բայց Չեզ իրբեւ հայ անկախութեան պաշտպաններին, պիտի ասեմ, որ Հայերն են, որ աշխատում են պահել ուսական արկեցութիւնը Կովկասում: — Գեկտեմբեր ՉՅին պիտի քննուի նոր աղաղիլ հանրապետութիւնների եւ նրանց յարաբերութիւնների համար: Կովկասը ասելի ուժեղ պաշտպանելու համար: Ռուսաստանը վճուել է միացնել զօրքը, արտաքին քաղաքականութիւնը եւ Փրինանները: Եւ զուք նորից ասեւք, որ հայ բոլշեւիկներն են, որ պաշտպանում են այս ծրարիրը, որը անկասկած կ'անցնի: Մենք, Վրաց բոլշեւիկներս, աշխատում ենք ասելի իրաւունքներ պահել մեզ համար, բայց Հայերը այդ աշխատանքը չեն անում: Ընդհակառակը նրանք աջակցում են այդ ծրարրին: Միայն կր պահուի լեզուն զօրքի մէջ, զյեւտ եւ անուն կ'ունենան հայկական, վրացական զօրբամին, իսկ հրամանատարութիւնը կր լինի Մոսկուայից»: Անցնելով երրորդ հարցին, նա ասաց, թէ ճեւրքին կեանքը շատ հանդիսա է Հայաստանում. որ զանտիցականների 950/0 Ռուսաստանի միջոցով սեղում է վճուել Հայկական Հարցը Քիւրքիայում, եւ որ Վրացիք զանդատում են, թէ Հայերին չեն հարածում, իսկ իրենք հարածում

են: ձևաչ փառչաչի սպանութեան տաժիւ, որը կազմակերպութեան զործ չէ, այլ մասնաւոր սնծանց, բանասարկել ևն շատ մարդկանց, խակ այժմ միտն երկու հոգի ևն մնում բանասում, որոնք խկական մեկտարներն ևն, և զբանց էլ պահում ևն Անդորան հանգստացնելու համար. բայց հաստատ կարելի է սակ, որ նրանք մահապատմի չեն ևն խիտրակուի: Նա սոսայ, որ այսօր միտական օրն է թիւրքերի օրինաւաստիտն համար և որ նրանք մնասուամ ևն Գաշնակիցների բարեկամութիւնը ի մնաս Ռուսաստանի»: Մղիտանին խնդրել է Սատիսկանին իկ, Երբ ուզէ կրնան հանդիպել իբար՝ սակով իկ զայս Կանֆերանը շատ կարեւոր է Կովկասի ներքին կեանքի համար, որովհետեւ թիւրքերի օրինատարները չափազանց աղքատ է կովկասի վարչական ձեւերի վրայ հասկնալի պատճառներով»:

Ամսոյս Աին Սատիսկանը տեսակցութիւն էր խնդրել նիհայ Ռեշադ բէկից, որը Անդորայի պետպանն է Լոյսնում,  $1\frac{1}{2}$  ժամ տեսակցութիւն է սնեկել Սատիսկանի և Ահարոնեանի հետ: Մերանց սոսամ Երկար բացատրութիւններից յետոյ նա պատասխանել է. «Այս վերջին Երկու շարաթուայ ընթացքում շատ բան է փոխուել. թիւրքերը տեսան, որ Գաշնակիցները ապիւս ևն նրանց սակի, զան իկ նրանք սպասում էին. որ Անգլիացիք ահապին նշանակութիւն ևն տալիս Հայկական Հարցին, որ Ռուսաստանը աշխատում է ծոտայեցնել թիւրքիտն իր շահերի համար. որ հասել է ժամանակը վերահաստատակ մեր վարկը Եւրոպայի սոսամ: Ռուսի այն ինչ որ սնհարին էր Երկու շարաթ սոսամ, այժմ պտոնում է հարատուր: Մենք տեսնում ենք, որ ձեր պրոպագանդը սնի իրուրք չէ այլ փրօ-պրմեմիկն, և մենք զա պահատում ենք: Մենք վախենում ենք Ռուսներից: Ռուսի պաք պէտք է շարունակէք ձեր ընթացքը, որը շատ կարեւոր է և խլացի, աղքել ձեր այլ ձեւի պրոպագանդով և մօտենայ միտամտնակ մեղ և Անդորայի զործիչներին. Լօպանը և Անդորան բոլորովին սարբեր միտուրտ ևն ներկայացնում: Ինչ որ այստեղ պարզ է, այնտեղ մօթին է այնտեղի զործիչների համար, որոնք նոսամ լեռների մէջ ոչինչ չեն տեսնում և չգիտեն խկական գրութիւնը: Ինձ պէս մտածպների թիւրք սմէն օր սականում է: Մինս կողմից մենք տեսնում ենք, որ այն մարդիկ, որոնք չէին սպում լուկ հաճի մասին, այժմ սկսում ևն հոսակնայ, որ Հայերին պէտք է զոհացնել, որպէսզի Լօպանը ս'չ միտն նիթական վարձատրութիւն տայ մեղ, այլ և բարոյական: Այսօր մենք սմբողջ զիշեր խմբապրում էինք մեր պատասխանը յուր Քրքրքրնի ծանր և վիրատորական ճառին, որտեղ նա սոսայ, իկ զմեր ձեռքերը արիւնի մէջ ևն...»: Մենք այսօր ստինք

մի կարեւոր քայլ՝ յայտարարելով, թէ մենք ուզում ենք մտնել Ադրբեյջանի Լիկայի մէջ, — այդ նշանակում է օրինակաւորումն ուղիւ Դաշնակցները: Դուք, իմ կարծիքով, պիտի տեսնուէք Իսմէթի հետ եւ Բեկա Նուրի հետ, որք ճանաչում է անձամբ Պ. Ռատիսկանին, որովհետեւ Լեյլ է Այեքանը պայտում: Դուք պէտք է մտածէք միտած մանակ մարդիկ ուղարկել Անդորա Մուսթաֆա Քեմալի վրայ աղղկաւ համար, լաւ է, որ յինի մէկ Թիւրքահայ (ու Նորատունկեանը, որին կարող են մեղադրել, որ նա դատաճանել է Թիւրքիային) եւ մէկը ձեզանից, Պ. Ահարոնեան կամ Պ. Ռատիսկան: Երեւի այժմ գործերը տակի արազ կ'երթան: Այս օրերս դուք կը տեսնէք մի փաստ, որ ձեզ պարզ զոյց կը տայ, թէ ուր ենք դնում մենք մեր քաղաքականութեան մէջ: Միայն մենք պէտք է հաստատուած լինենք, որ Հայերը, Վրացիք եւ Ատրպէջանցիք համերաշխ են միմեանց հետ: Եւ — վերջացրեց նա — այսօր մեր տեսակցութեան մասին մանրամասն զեկուցում կու տամ Իսմէթին եւ մեր շրջապատի աղղկեցիկ մարդկանց հետ կ'աշխատենք համոզել նրան, որ անհրաժեշտ է տալ Հայերին հովը: Բայց մի՛ շտապէք: Նախ ատեղ ձեզք մերձեցումը ձեր մէջ է համաձայնութիւնը կը պայ հետզհետէ: Անդորան էլ պէտք է համոզուի: Գեկտմբեր 23ին երեւի կը ստորագրուեն հաշտութեան նախնական պայմանները: Այս պայմանները հետ Իսմէթի կը դնայ Անդորա, եւ կը դնած նրա հետ եւ մի շարք մարդիկ. այնտեղ երբ այս պայմանները բնորոշուեն, մնացածը հեշտ կը յինի վերջացնելք:

Ահա այս Երկու կարեւոր տեսակցութիւնները, որ միմեանց յարցնում են եւ միմեանց ժամանակ մեզ ստիպողարար թելադրում են. 1) Անդորայի մասին մտածելու, մարդ փնտնելու, 2) Կովկասում պատրաստ լինել հնարաւոր բարգաւթիւնների համար, 3) հովը շատ զոյգ կերպով կուպել այն Հայաստանի հետ, որ իրբեւ պետութիւն համարեա թէ անհետանում է, 4) Կապուիլ մեր հարեանների հետ ամենայն կարեւորութիւնների համար եւ 5) Կարծեա թէ հովի հեռանկարը երևում է կապուած Այգիլի Լիկայի հետ եւ դառնում է Լեյլ ոչ իրականութիւն, զէթ հասնելիք մի նպատակ, որի համար աշխատել:

Մոնղոմերին յայտնել է, որ զր. Բարտնը եւ Պիտտը այդ օրը Չայլդին յանձնել են մի բանաձեւ, հովի մասին: Բանաձեւը պիտի յայտարարի, շատ պարզ եւ որոշակի: Նա այնտեղ յիշեցնում է այն բոլոր իրաւանքները, որոնք պարտաւորեցնում են Դաշնակցներին տայ Հայերին անկախութիւն եւ հով, սկսած Սեբի Դաշնակցից եւ վերջացնելով Մարտ 23ի բանաձեւով:

Մ Ե Ր Ի Ն Ն Ե Ր Ը Դ Ե Ռ Լ Օ Ձ Ա Ն Կ Ը Ս Պ Ա Ս Ե Ն . . .

Դեկտեմբեր 15ին հովի հարցր քննում է ենթադրանքներ մէջ: Նախագահը իտալական պատուիրակ Մոնտանան է, իտալական դեսպանը Յունտասանում: Ֆրանսայի կողմից Լարոչն է, Անգլիայի կողմից Ռուսոյը: Կամը ուժեղ է: Թիւրքիայի կողմից զր. Բիզա Նուր, Երկրորդ պատուիրակ, որ Եղեւ է Մոսկուայում, Ալեքսանդրապոլում, չառ ուժեղ կերպով մարտող հովի պէմ: Նա բժիշկ է: Այլ որը կայացել է ենթադրանքներ Երկու նիստ: Պայքարը Եղեւ է օրակարգի շուրջ, — մտցնել հովի հարցը օրակարգի մէջ թէ ոչ: Նախագահը շատ գեղեցիկ ճառ է ասել յանուն մարդկութեան, համաշխարհային իրաւի. Ռուսոյը և Լարոչ միացրել են իրենց ձայները: Բիզա Նուր պահանջել է որ հարցը հանեն: Վերջ ի վերջոյ հարցը մնացել է օրակարգի մէջ, լայց չի քննուել ըստ էութեան: Այլ որը Երեկոյեան զր. Բիզա Նուր պիտի պնար Նախագահի մօտ մասնաւոր զրոյցի համար: Հետեւեալ նիստը լինելու է Դեկտեմբեր 18ին:

ա. Նորաստանիկան տեսնուել է Բակոյսկու և Միլիանիի(\*)

(\*) Բալչիկիեան պատուիրակներ. առաջինը ծագումով Ռումէն, միւսը Վրացի:

Նևտ, և յետոյ Բարբրէի Նևտ. ք. Ահարոնեան և Սատրեան — Նիկոյանի և զր. Նիհազ Բեշազ բէյի Նևտ(\*\*), և յետոյ զ. Հարրիսի և Մոնզոմերիի, ապա Ռումբուլլի Նևտ. զ. Ահարոնեանի՝ Մանտանայի (Էնթալանձախամբի նախագահ) Նևտ. Կ. սրբո՞ք. Պիտտաբը՝ Իսկէիի Նևտ. զ. զը Մարգիէն՝ ռուս Պատուիրակութեան բարտազար Ազամակու Նևտ: Բարյոյի՝ Ազմիբայ Կրուի և Նիկոյանի Նևտ:

Այս բարբր սեւակցութիւնների նպատակը մէկ էր. ազգէլ թիւրքերի վրայ, սրպէսիք նրանք Էնթալանձախամբի մէջ յինն չտարար և զիջուց, սրովհետեւ Դաշնակիցների տրամադրութիւնը նըպատատար է, բայց մեր Հարցի Համար նրանք պատերազմ չեն յայտարարի: Թիւրքերը այլ զիտեն: Ազգէլու Համար Հարկատը Էն ուրիշ միջոցներ. ահա զրանով է, որ զրպուսած Էն մերոնք: Չիւրիներ ներպատիւն էր խնդրել, որ ինքը շատ զրազուսած է և նրա փոխարէն Բակալսիի և Մզիլսիի և ընդունել Նարատունիկանին: Նրանք բառացի ասել Էն նայնր, ինչ որ Մզիլսիին ասել էր Ստախանին. այն է, որ Ռումաները պէտք է բարեկամարար խորհուրդ տան թիւրքերին զիջել մեզ, բայց զժուար է սպասել որ նրանք զիջեն. խոստացել Էն սպարպայում ամէն մի առիթ օղտազարծել մեր օղտին և այլն: Մի խօսքով այսօր ոչ մի զրական Նևտեանք նրանց բարեկամութիւնը մեզ չի կարող տայ: Ընդունել Էն շատ սիրայիք և խնդրել Էն ուզարկել իրենց մեր բարակզր և մեմորանդումը: — Բարբրըր ասել է Նորատունիկանին, որ նա պիտի պաշտպանի իւմը մինչև վերջին աստիճան, բայց առանց պատերազմի սպառնայիքի Նարատունիկանը խնդրել է նայել Հայկական Հարցին ոչ Հումանիտէր տեսակէտից, այլ իբրև մի յանձնատութիւն Դաշնակիցների կողմից: Նիկոյանին մերոնք բացատրել Էն, որ թիւրքերին պէտք է Հասկացնել, որ Անդլիան ոչ մի զէպքում չի թողնի իւմը Հարցը, որ մենք կը յիննք նըրանց բարեկամներ, որ թիւրքերը կը զիջեն, Էթէ խիստ պահանջ զրունն, և որ արդէն յայտնի է, որ Անդլոսն ուզում է յուծել բոլոր Հարցերը մինչև 25 Դեկտեմբեր և այս մտքով այլ օրը հեռուցիր է ստացուել: Նա բարբր պիտի զեկուցէր յորդ Քրդլոնին: Նոյնը ասել է նրան և Բարյոյի: Դր. Նիհազ Բեշազին մերոնք տուել Էն փոխ-այցելութիւն: Այսօր Անդլոսից Հեռուցիր եկաւ, պահանջում Էն, որ մինչև 25 Դեկտեմբեր վերջացնէր Կոնֆերանսի զործը, որովհետեւ բանակը չի կարելի Երկար պահել առանց զործի. յետոյ

(\*\*) Թիւրք պատուիրակութեան խորհրդակամ:

չառ խոնդ է նստում բանակը իրենց վրայ: «Մենք կարծում ենք — տակ է նա — որ կարող ենք վերջացնել, որովհետև վաղիս ենք համաձայնութեան բոլոր հարցերում, բացի Հայկական Հարցից: Փայտով Հայկական Հարցին, այստեղ մեծ դեր է կատարում հողերանահան փաստը, — Հայերը այնքան տակի են շատ Տաճիկների համար, որ հարկատու է ժամանակ՝ մաքրելու և կրթելու հանդատացնելու համար: Գուց ցիտեք որ մեր պատուիրակութեան հետ և կլի են մօտ 40 հողի և նրանք մեծ դեր են խաղում Իսմէլի շուրջը, բուհարիում են ամէն մի հարց: Ամէն մի նախապատիւին, և նրանք ամենապահանջկատ մարդիկ են: Բայց պէտք է խօսել, տեսակցել, ազդել: Տեսէք սա որ կարող էք, սակցծեցէք մերձեցումը:

Մտնողներին տեսել է Ֆորբս Աղամսին, որը տակ է, որ պէտք է ունենայ կատեգորիք համաձայնութիւն Բարբերի կողմից Կիլիկիայի համար, սրտկայի անդի շուրջը կոմիտիկոտ շիին: Ֆորբս Աղամսին մերտնք պատմել են յոյուրը, ինչ յակ են գր. Նիհայ Բեշարից և ինդրել են որ նա այդ յոյուրը յայանի յորդ Քըրդին: Ֆորբս Աղամսը տակ է որ նոյն օրը և ևթ կը յայանի յորդին, տեսցրել է, որ Մուսուլից Թիւրքերը ոչինչ չեն ուզում գրծել, որ հոսք իրենց աչքում, տակի փոքր արմէք անի բան Մուսուլը, բայց որ կ'օգտու են ամէն մի տիկից, ինդրել է, որ մերտնք ստուղեն, արդեօք Ֆրանսայից գլմ չեն Կիլիկիային: Մտնողներն տակ է Ահարանեանին, որ նա իր համար պարտք և պատիւ է համարում յաջողցնել Հայկական հոսք, որ նա պիտի աշխատի և համարում է գործք շատ գծուար, բայց յոյս ունի փոխադարձ գիջումներով յաջողցնել: Ասել է, որ այդ օրուայ նիտում Բիլայ Նուր շատ է հակառակել, բայց նա նրան հրաւիրել է իր մօտ մասնաւոր զրոյցի: Ասել է նոյնպէս որ որտէ սուգրբերէ Թիւրքերի կարող է գործք հեշտացնել, որ այժմ հարկատու է փնտուել մի բանաձև, հաշտեցնելու համար մեր պահանջները Թիւրքական Ուտի հետ, թէ հաւանական է որ մեզ յակն են ինքայանձնախմբի մէջ: Մերտնք արդէն տակ են մի գրութիւն, որով ինդրում են, որ իրենց հրատարակելու իրեն և Հայկական Միացեալ Պատուիրակութիւն:

Զիւրքերի բարտուար Աղամսիկ տակ է զը Մորդիկին, որ Բուշեիկները Հայերի վրայ շատ բաւ աչքով են նայում և որ սպաղայում Հայկական Հանրապետութիւնը կը լինի բոլորովին աղատ: Նա ինդրել է տեսակցութիւն Զիւրքերի հետ: Պատասխանը եղել է անօրոյ:

Փոքրամասնութիւնները են ինքանձնախմբի նիտուրը ամսոյս 18ից սկսուել են և մերտնք սպասում են որ իրենց այս օրերս պիտի հրատարակու լակու համար:



Լաւոս մ է որ թրքական Ազգային Ուխտի մէջ ընդունուած էն-  
դէկրիթէ տը քէրրիքուար քիւրք սկզբունքը պահպանելու համար  
նոր բանաձևէ ևն հնարել «չէկոս գոտի» սնտան տակ, որ իր մէջ պի-  
տի ամփոփել կիլիկիայի աչն շրջանը (Ամանոս-Այնթապ), որը ունի  
17.000 քառ. կիլ. տարածութիւն: Այդ մասին յսել ևն միտամանակ  
զը. Բարսեղ, Մոնղոմերին և Բոյլոյիներ: Լապորար (նախկին Փրան-  
սական հիւպատոսը կիլիկիայում) ասել է նորատունիկանին որ հար-  
կասը է մի բանաձևէ պանել սրով խնայուէր Ուխտի սկզբունքը և  
միտամանակ Հայերին տրուէր սպրեյու վայր միջազգային կոնարո-  
լի տակ: Այստեղից է բխում «չէկոս գոտի»ի գազափարը:

Գեկտմերէր Արին, կիրակի, Լոպանում մի հիւրանոցում եղել  
է մի թրքո-համակրական ցոյց. խոստում ևն ճառեր ի պատի Իսմէ-  
թի: Ի պատասխան, մերանք վճռել ևն ամսի 19ին Լոպանի մեծ եկե-  
ղեցում և կողմակերպել ևն հայասիրական մի ցոյց պրոֆ. Շատանի  
նախագահութեամբ, որ տնցել է մեծ յաջողութեամբ. խօսել ևն  
պրոֆ. Շատան, զր Մորդիկ, Ահարոնեան և կրոֆու Բաննար: Ամսի  
19ին նորատունիկան տեսնուէլ է Գուկայի և Գիամանտի (Ռումէն)  
հետ և խնդրել է նրանց անձամբ պաշտպանել օճախը Էնթալանձնա-  
խմբի մէջ: Այդ օրը յար է ստացուել ամերիկեան պատուիրակու-  
թեան մէջ, որ Հոյփերը նշանակուած է Փոքր Առիայի փախտական-  
ների հոգատար և սր պնդապետ Հասկեր պաշտօն է ստացել օչնու-  
թիւն կողմակերպելու գաղթականներին Աթէնք և Բալիաններում:

Ամսոյս 20ին նորատունիկան, կիւմիւշիկերդան եղել ևն ճապո-  
նական պետդան բարոն Հայաչի մօտ. մանրամասն ծանօթացրել ևն  
մեր հարցի պրոթեան հետ, ցոյց ևն տուել քարտէկը և խնդրել ևն  
որ նա խօսք վերցնի համը պաշտպանելու համար: Նա խնդրել է թող-  
նել իրեն քարտէկը և խոստացել է խօսել յանձնախմբի մէջ: Յետոյ  
նորատունիկան տեսնուէլ է Ջաւիզ քէլի հետ: Վերջինս ցոյց տալով  
անձնական համակրութիւն մեր Գատին, ասել է որ ներկայ գործիչ-  
ները կ'ուզենան ունենայ Հայերին Անտոյիտայում իրրե: օպտակար  
տարը, բայց ոչ հայկական շրջաններում: Նա ոչ մի յոյս չունի որ  
ներկայ պայմաններում կարելի լինէր ստանալ օճախ: Ահարոնեան և  
նորատունիկան տեսել ևն Սպալայկոյիչին, սերբիական առաջին  
պատուիրակին, որը շատ յալ գրեւ մեր Գատը, համակրում է և  
արդէն Ազգերի Լիգայի մէջ պաշտպանել է մեզ: Նա պիտի խօսի  
յանձնախմբի մէջ մեր հարցի համար: Յետոյ նրանք տեսել ևն Լա-  
րոշին (Պրանսիայի կողմից ևնթայանձնախումբերի անդամ): Նա ա-  
սել է որ միջնէ շարաթուայ վերջը փոքրամասնութիւնների հարցը

պիտի վերջանայ : Նա խնդրել է որ մինչև ատուօտ մերոնք իրեն ներկայացնեն այն բազմաթիւները որ մենք անենք փոքրամասնութիւնների մասին : Մերոնք խորհրդակցութիւն ունենալով պատրաստել են մի պատասխան, որ յանձնելու էին յաջորդ օրը նրան, ասածարանում շեշտելով, որ միայն օճախը կարող է լուծել Հայկական Հարցը : Լարուքը դանդաղաբար է որ թիւրքերը անհաշտ են և ոչինչ չեն տայ օճախի համար, բայց կրկնել է որ իրենք կը պաշտպանեն մեր Գասար : Ասել է, որ շատ հասանական է, որ Ռուրաթ Գեկուեմերը ՉՉին, մենք կը հրաւիրուենք Ենթալանձնախմբի աստջ մեր հարցը պաշարանելու համար : — Չիշերինը յայտնել է թէ Նորատունիկանին պիտի ընդունի ամսի Չին Երկրայեան ժամի Գին : Այդ առթիւ մերոնք ունեցել են խորհրդակցութիւն, ուր սրտուել է Չիշերինին ներկայացնել յուշադիր, որուն մէջ պիտի յիշատակուի, թէ Ռուսահայաստանի գրաստմար խանդարում է մեկ Միացեալ Հայաստանի իրապարձմանը և որ Ռուսները կարող են պատմական գործ կատարել՝ յայտարարելով, թէ նրանք ապահովում են Ռուսահայաստանի կատարեալ պատուութիւնը և կ'աջակցեն մեկ միացնել թիւրքահայաստանի իրենց համար ընդունելի և մտաշնչի միջոցներով, որ այդ Հայաստանը ընդմիջու կը լինի իրենց յարեկամ և զաշնակից : Նորատունիկանն բաժանում է այդ տեսակէտը և այդ մտքով պիտի իօսէր նրա հետ : Այս հարցի յաջողութեան մէջ ահապին դեր կարող է խաղայ այն յարամ գրութիւնը, որ այս օրերս ստեղծուել է թիւրքերի և Ռուսների մէջ՝ նեկուցների խնդրի առթիւով : Լուում է որ Ռուսները սպասնուցել են թիւրքերին խղի նրանց հետ յարարելութիւնները, եթէ նրանք ընդունեն Գաշնակիցների առաջարկը : Սպասենք հետեւանքներին : Թիւրքերի մօտ մարդիկ ասում են մերոնց. «Նրանց համոզել չի կարելի. նրանք ապրում են սուր ինկարպարութեան շրջան և անմատչելի են արդար մտքերը բերունելու համար» : — Մոնդոմերին այդ օրը եղել է մերոնց մօտ և ասել այն մեմորանդումը, որ նա պատրաստել է իրենց պատուիրակութեան համար օճախի մասին. այնտեղ ամէն ինչ նախատեսում է Լ'առարմութիւնը, Լ'աֆրանները Լ'ա մանդարները, Լ'ա ազգայնականութիւնը. մերոնք տուել են իրենց հասանութիւնը :

Գեկուեմերը ՉՉին մերոնք տեսել են Լապորտին (Կիլիկիոյ նախկին Ֆրանտական հիւպատոսին) : Նա շատ յուսահատական տրամադրութիւն է ցույց տուել : Մոնդոմերին տեսել է Ֆարրա Աղամսին, որը «չէկոս գօտիք» մասին պէտք է տեսնուի Բարբերի հետ՝ իմանալու նրանց կարծիքը այդ մասին, թէ և Նորատունիկան և Մոնդոմերի

արդէն գիտեն որ Յրանասցիք զձեզ չե՛ն: — Առհասարակ պէտք է աւելի որ բացի նեղուցներէ խնդրից, ոչ մի հարցի մասին գեղեցիկ թիւրքերէ հետ համամատչելիութիւն չի կայացել: Մերոնց հրաւիրելու մասին չէր գեղ լար չկայ: Այսօր արդէն զրամ են թրխթըրը որ թիւրքերէր հակառակ էն պաշտօնական նիտում հրաւիրելուս փոքրամասնութիւններէ ներկայացուցիչներին. և Դաշնակիցները նրանց կը լրանեն առանձին:

Դեկտեմբեր 22ին փոքրամասնութիւններէ Լեւոնյանձնախումբը վերջացնելով իր խնդիրներէ առաջին քննութիւնը, լսել է նախագահ Մանասնայի առաջարկը Հայերին և Պուլկարներին հրաւիրելու: Մանասնայի առաջարկը չէր մասին ինքը Մանասնայն պատմել է նոյն Լեւոնյան պրոֆ. Նախիկին, Մարցիկին, Կրաֆտին և Տ. Ինկա Նալբանդեանին, սրտք զնացել էին նրան տեսնելու: Թիւրքերը շատ զրգուսած ասել են, որ Հայերը ոչինչ չունեն ասելու, ուստի նրանց լսելու ոչ մի կարիք կայ: Նախագահը հարցրել է ըլլոր անդամներին, ամէնքը միաձայն համաձայնուել են. յետոյ նախագահը նորից զրմել է Թիւրքերին՝ համոզելով նրանց պոսն լսել եթէ ոչ զիճել: Նրանք մնացել են անհաշտ և յայտարարել են որ նրանք «չեն ազուճ լսել և ժողովին չեն գայ»: Այդպէս էլ վերջանած է ժողովը: Փոքրից առաջ նախագահը շատ է համոզել Ռիզա Նուրին, բայց առանց հեռանդի: Մանասնայն յայտնել է մեր բարեկամներին, որ մենք կանչուուեր հասնորէն 26ին կամ 27ին: Նա աւելացրել է. «Ես կ'անեմ մինչև վերջը օճախի համար ամէն բան ինչ որ կարող եմ, բայց մեծ յայտեր չունեմ: Թիւրքերը կը զիջեն երկու միջոցներէ առաջ. զԼեւոնյան և զրամի: Աշխատեցէք Ամերիկայում. թող Չայպը խիտ լեզու գործ անէք: Մանգոմերին նոյն օրը նորից տեսնուել է Չայպի հետ, որը ինքը ներկայ կը լինի այն ժողովին, որ մերոնք խօսելու են, և կ'անի յայտարարութիւն: Մանգոմերին հեռադիր է ստացել, որ 20 միլիոն զայլարի օրինադիւր արդէն մտցած է Կոնգրեսի մէջ, և որ զնդապետ Հասկէր Գոնուարի 2ին գուրս կը գալ Ամերիկայից զալու համար Աթէնք: 23ին առաւօտը զր Մարցիկն տեսնուել է Վենիկիսիի հետ, որ ասել է թէ հաստ չունի թէ մենք կը ստանանք օճախ, և որ ինքը անկարող է որ և է բանով օղնել մեզ:

Ամսոյս 23ին առաւօտեան ժամը 12ից մինչև 1ր պրոֆ. Նախիկ, զր Մարցիկ, Կրաֆտ Բոննար և պրոֆ. Մորիօ Եղել ևն Զիչերիի մօտ: Ծանօթացրել են նրան մեր հարցի արդի զրութեան հետ և խնդրել են Եթէ կարելի է զապատել Ռուսահայաստանը և զրա-

նով Հնարասրտութիւն տայ միայնել Թիւրքահայաստանը, կամ ազգեյ Թիւրքերի վրայ օճախ կազմելու. Վան-Բիթլիս շրջանների մէջ» : Ձիշերինը պատասխանել է, թէ չի կարող այդել Թիւրքերի վրայ, սրբահասեա նրանք անհաշտ են և չեն ուզում հոյ գիշել. որ Ռուսները շմտանակելով Կոնֆերանսի մէջ, չեն կարող գիծումներով զահայնել Թիւրքերին, հոյ ստանան Հայերի համար, թէ հարկաւոր է ուրիշ միջոցներով օղնել հայ գաղթականներին մարդասիրարար : Այս աւստիկաից, ասում է նա, մենք կարող ենք օտ կէս միլիոն Հայեր ընդունել Կուրանի շրջանում, որ շատ հարուստ երկիր է և շատ ազատ հոյեր կան քաղաքացիական կրիներից յետոյ, որ այնտեղ Հայերը կարող են ինքնաւոր գաղութ կազմել՝ պահելով լեղուն, կրօնը, գայրոցները. միւս մասը, ասում է, կարելի է փոխադրել Սուրիա և իսպնել Պուրիարիայում : Նա քաջատրել է մեր քարեկամներին, որ անպատճառ հարկաւոր չէ, որ Հայերը բոլորը միատեղ լինեն, օրինակ, Իրանդաշիր աւելի մեծ իսով աղբում են Ամերիկայում, քան իրենց երկրի մէջ : Գանդատուել է «Գաշնակներից», որանք ծառայում են իրրու զէնք Անգլիացիներ ձեռքում և նրանց գրամով և զէնքով տքոր էլ կուում են Պարսկաստանում բուշուիկներ զէմ. մկազարում էր Գաշնակցականներին «Իմպերիալիզմի» մէջ : Կրաֆուր, որ լաւ ծանոթ է իրականութեան հետ, հակաճառել է, թէ Հայերը ցանկանում են ձեռք բերել իրենց պատմական հոյերը, որ նրանք ուզում են միայեայ հայրենիք և որ Պարսկաստանում միմիայն (60-70) ինտելիգենտներ աղբում են խաղաղ և նեղութեան մէջ : Ձիշերինը պատասխանել է որ զոնկ տակ առաջ Գաշնակները Պարսկաստանում կր կուտին բուշուիկներ զէմ, իսկ այմ նոր «տեղեկութիւն չունի» : Ինչ վերաբերում է Բիւրցեայ Հայաստանին, Ձիշերինը ասել է անկարող է — Թիւրքերի այտորուայ պոյմաններ զէջ — աղղել նրանց վրայ : Ներկայացող օտար քարեկանները ասել են թէ Կուրանի ծրագրին նրանք լիտպորում չեն պատասխանելու, աւելացնելով, թէ օղնելով Հայկական Հարցի լուծումին, Ռուսները ամբողջ աշխարհի յարգանքը կր վատակեն : Փամի Չին նոյն օրը, Ձիշերինը ընդունել է Նորաստանիկանին : Ձիշերինը յանձնել է Նորաստանիկանին մի նամակ, որ Պապաջանեանը գրել է նրան Մոսկուայից : Գրում է (ընդհանուր բտերով) այնտեղ գտել է լաւ ընդունելութիւն և տրամադրութիւն մեր գառի հանդէպ :

Այդ օրը Նորաստանիկանը իր որդուց (Հոսմից ստացել է հետեւեալ հեռագիրը. — longuement vu Mussolini, il a envoyé une dépêche Lausanne pour Foyer» : Վարանկեանը երկրորդ առգամ չի

տեսնուել Մուսուլինիի Հետ ևւ միայն յսնձնել է նրան մեծորանդու-  
մք: Այդ օրը մերոնք նորից ճաչ են տուել մեր Շփչյարացի բարե-  
կամնելին, որոնք ներկայացրել են կոչերի երկրորդ թւերթը: Ճաչի  
ժամանակ զճուել են որ մեր մօ ա՛՛օրայր այժմ պիտի լինի. «Ոնդրել  
Պետութիւններից, որ առանց Հայկական Հարցի, դաշնայիբը չի կա-  
րող ստորագրուել»: Եւ այդ միտքը պէտք է ներշնչեն ըւրբ լինելիք  
տեսակցութիւնների ժամանակ:

Ամսի Զի Երեկոյեան մերոնք ստացան Կոնֆերանսի ընդհա-  
նուր քարտուպարից մի գրութիւն, սրով յայտնում է որ Ենթայանձ-  
նախումբը որոշել է յսել Հայկական Պատուիրակութիւնը, որը տեղի  
կ'ունենայ Երեքշաբթի, Դեկտեմբեր 26ին, ժամի 3-30ին: «Պիտի ներ-  
կայանան Նորատունկեանք ևւ Ահարոնեանք Հայկական Միացեալ  
պատուիրակութիւն»ի կողմից: Երեկոյեան Նորատունկեան տեսնուել  
է Ձիւերինի ևւ Մոնտանայի Հետ Երկուսն էլ նրան բառացի նոյնն են  
ասել, ինչ որ Հայաձիւններին: Ձիւերինք ասել է, թէ ոչ ոք չենք կա-  
րող աղղել թիւրքերի վրայ, իսկ բարեկամական խօսակցութիւնը  
նախ չի օգնի, ևւ Երկրորդ կտակածելի կը թուայ թիւրքերին, որոնք  
կարող են ենկաղղել թէ իբր մեղ համար ենք աշխատում հողը պա-  
ւելու: Դա ձեղ օգուտ չի տայ: Ատաճարկել է, որ Եթէ Լօղանում բան  
չենք ստանայ, ուղարկել դաղթականներին Կուրանի շրջանը: Ոսուել  
է Դաշնակնների գործունէութեան մասին Պարակտասանում ևւ որ միշտ  
Անգլիացիներին ձեռքում գործիք են: Նորատունկեանք մանրամասն  
կերպով առարկել է, ասելով որ 1) Հայերը փնտոում են ոչ թէ ա-  
պաստան ևւ պատսպարան, այլ իրենց հայրենիքը ևւ պատմական հո-  
ղերը, 2) Որ պարակտասանում ոչ մի ապստամբութիւն չկայ ևւ մի  
քանի տանեակ մարդիկ խաղաղ ապրում են ևւ 3) Որ Դաշնակները  
միեւնոյն գաղափարներն ունեն Ռուսների զերի վրայ, ինչ որ ևւ ին-  
քը. ևւ որ նա, Նորատունկեանք, Դաշնակցական շէֆերի Հետ բոլո-  
րովին համերաշխ գործում է Փարիզում ևւ այտուղ: Ձիւերինք ասել  
է, որ ուրախ է յսել այդ, բայց կրկնել է, որ դժուար է թիւրքերից  
հող ստանալ ներկայ պարպանների մէջ: Ոնդրել է նորից տեսնուել  
մի քանի օրից յետոյ: — Մոնտանան ասել է Նորատունկեանին որ  
Մուսուլինիից Հեռագիր է ստացուել օճախի մասին, որ թիւրքերը ան-  
հաշտ են ևւ որ նա ինքը կ'աշխատի մինչև վերջը: — Մերոնք այդ  
օրը իմացել են Ֆորբա Աղամսից ևւ Նիկոլոսոնից, որ տեղեկագրուած  
է Լոնդոն կացութեան մասին, ևւ սպասում են հրահանգներ առհա-  
սարակ ըունելիք գիրքի մասին:

Ամսայս 26ին տաուօտեան Մոնղոմերին Ամերիկայից հեռագիր

է ստացել, որ 20 միլիոն գոյլորի փոխտուրիան օրինապիծը շատ լաւ բնօրինակութիւն է գտել գանազան շրջաններէ մէջ և Էֆրիկ կողմից: Բայց աւելացնում են թէ օրինապիծը կը մտցնեն Կոնգրես. «Քննիչ Լօյպոնի Կոնֆերանսը կը հաստատի մի Այգլային Տուն Հոյերի համար»: Այնպէս որ նրանք ուզում են որ նախ Foyerի խնդիրը սրտէն, և յետոյ նրանք կը տան դրամը: Այգլայիսով գործը աւելի կը հեշտանայ:

Նոյն օրը ուղից ժամի Աին Պ.Պ. Նորատունկեան, Ահարոնեան և Խատիւնեան, իբրև Հայկական Միացեալ Պատուիրակութեանց անդամներ և Պ. Բաշայեան, իբրև քարտուղար ներկայացնում են Լեռնային ձառնարկութիւնը: Եւստանի Նախագահ Մոնտանա, անգլիացի ներկայացուցիչներ Ռուսորդ և Ֆորբս Ագամս, Փրանսիական ներկայացուցիչներ — զր Լաիրուս և Լամպորտ յունական և սերբիական ներկայացուցիչներ, որոնք կանգնելով՝ սերայիբ ոչ ջունում են նրանց: Բաշայեանը բաժանում է մեր ճառի օրինակները (տնկերէն և Փրանսերէն) բոլորի մէջ, նոյնպէս և մեր քարտէզը: Նախագահ հրահրով Նորատունկեանը կարգում է մեր զեկուցումը, որ տևում է 13 րոպէ: Վերջացնելով իր զեկուցումը, Նորատունկեանը ասում է, որ Պ. Ահարոնեանի յրացումներ կ'անի և կը լուսարանի մեմորանդումի մի բանի կէտերը: Ահարոնեանը խօսք վերցնելով խօսել է 19 րոպէ: Ահարոնեանի բացատրում է եղած դաշնագրերի պատմութիւնը. Ռուսահայաստանի դրամումը. մեր յոյսերը Foyerի քաղաքական իմաստը, մեր փոտահութիւնը պէտքի Դաշնակիցները և մեր սրբազան իրաւունքը՝ լինել սղատ: Երբ նա վերջացնում է, Նորատունկեանը ասում է որ իրենք պատրաստ են տալ պատասխաններ, եթէ հարցեր տրուելու լինեն: Բազմաթիւ հարցեր նախ և առջ տալիս է անգլիական ներկայացուցիչ Ռուսորդը: 1) Ի՞նչ փոխարարելութիւններ կարող են լինել Թիւրքիայի և Foyerի մէջ: Պատասխան. «Ուզում ենք լինել բոլորովին անկախ, — բայց կ'ընդունենք, եթէ դա անհրաժեշտ է, Տոմիլիոնների Ստատուսը: — 2) Չէ՞ք ուզում յայնպէս Ռուսահայաստանի կամ նրա կողքին ունենալ Foyer: Պատասխան. Համաձայն Լեռնային Foyer: Ռուսահայաստանի կողքին: 3) Եթէ լինի Foyer, որքա՞ն հայեր կ'երթան այնտեղ: Պատասխան. Մտտ կ'էս միլիոն: — 4) Յոյց տուէ՞ք քարտէզի վրայ մեր զանկացած սահմանները: Պատասխան. Բիզէ, Վան, Արաշկերտ առանց իրարումի: — 5) Նկարագրեցէ՞ք ներկայ Ռուսահայաստանի սահմանները, ազդարնակութիւնը և Հայերի և Թիւրքերի թիւը: Պատասխանը տրուում է խուերով: — Նրանից յետոյ հար-

ցեր է ապրիս Լազրուան. 1) Բացատրեցէք Ձեր պահանջած հոգաճա-  
սերի այսօրուայ գրութիւնը, թէ՛ ազգաբնակութեան քանակը, եւ  
թէ՛ Քրիստոսի վերաբերմունքը գէշի Հայերը անցելուամ է ներկա-  
յամ :

Ա. Ահարոնեան և Գ. Նորատուհեան, մանուանդ վեր-  
ջինս շատ մանրամասն պատասխանել են այս հարցին, աշխատե-  
լով ցոյց տալ, որ Քրիստոսը մեր բարեկամները կարող են լինել:  
Նորատուհեանը բերել է հետաքրքիր տեղեկութիւններ Արգիւլ Հա-  
միդի ժամանակից, Համիդի գնդերի պատմութիւնը և այլն: —  
Լազրուան ատարկում է ստելով. «Quand même il y a une certaine  
animosité chez les Kurdes contre les Arméniens: Նորատուհեան  
բացատրել է որ զա թիւրքերի ազխաախսնի արդիւնք է և ոչ թէ բնագ-  
դային ստելութիւն: — Մանտանս և Լազրուս հարցեր ևս տուել թէ  
արդեօք, ի՞նչ յարաբերութիւն կայ Foyerի կազմութեան և Երեւա-  
նի Հանրապետութեան մէջ այն տեսակէտից, թէ արդեօք ո՛րքան  
Հայեր կարող են մտնել այդ Հանրապետութիւնը և որքան կը մտ-  
նեն Foyer: Այս հարցի մանրամասն պատասխան է տուել Պատրիս-  
եանը, իբրև նախկին նախագահ կառավարութեան, ցոյց տալով որ  
ու մի մարդ այլևս չի կարող մտնել Ռուսահայաստան տեղի պակա-  
սութեան պատճառով: Եւսոյ նախագահը խնդրում է բացատրել  
զազթիականների ներկայ գրութիւնը, որ ևս արել են նրանք: Իրանից  
յետոյ Նորատուհեանը տուել է բացատրութիւններ Կիլիկիայի մա-  
սին: Այսպիսով մերոնք տուել են սպառիչ բացատրութիւններ, ասել  
են բոլորը, ինչ որ ուզում էին և կարող էին: — Նախագահը յետոյ  
հարցրել է. «Ունի՞ք էլի մի բան ասելու»: Պատասխանել են. «Ոչ,  
ամէն բան ասացինք»: — Այն ժամանակ Մանտանան ասում է. «Յանձ-  
նածողովը շատ շնորհակալ է Ձեզ՝ Ձեր բացատրութիւնների համար.  
մենք կ'տնենք մեր հնարասրը և յոյս ունենք նորից Ձեզ յսելու, երբ  
կը վերադառնանք այս հարցի քննութեան»: Հետանալով, Նորա-  
տուհեան և Ահարոնեան միաձայն պնդեցին, որ Դեյեղաթիւնը ներ-  
կայացնում է գամրոզ Հայութեան պայքարները և միտքը՝ ասանց  
կուտակցութեան, ծաղումի, պաշտութիւնի խտրութեան»: — Նիտար  
տուում է 1 ժամ 10 րոպէ :

Թիւրք պատուիրակութեան ներկայացուցիչը խիստ բողոք է  
ներկայացրել այս նիստի գէճ:

Դեկտեմբեր 27ին Երեկոյեան պրոֆ. Նաւիր, զր Մորզիէն և  
ամերիկական նպաստից Վարչութեան ներկայացուցիչ Բոկվիլերը  
տեսել ևս Իսմէթ փաշային: Նրանք ներկայացրել են նրան բոլոր կո-

չերր (7 միլիոն ստորագրութիւններով)․ սիոզէլ ևն Foyerի անհրաժեշտութեան վրայ, նկարագրել ևն գաղթականներէ դրութիւնը ևն ցոյց ևն տուել Ամերիկայի ևն ամբողջ աշխարհի Համադրութիւնը այլ խնդրին: Իսովհետ պատասխանը եղև է բացարձակ բացասական: Նա մի առ մի քննադատել է բոլոր փաստարկութիւնները ևն ասել է Հետեւեալը․ «Հայ ազգը ունի Foyer, Երևանի Հանրապետութիւնը, սրի Հեռ մենք գաչիւնք ունենք: Եթէ գաչնակիցները ուզում են Երկրորդ Foyer, կարող են ստեղծել Միջապետութեամբ կամ Սիրիայում: Հայերը հետևում են թիրաքիայից իրենց կամիտներէ ճշման տակ: Հայերը կարող են միշտ վերադառնալ թիրաքիա: Միլիոնաւոր կուշեր մեզ վրայ չեն կարող ազդել, սրովհետև նրանց հեղինակները ստանում են Հարցի մի կողմը, մտածանքով մեր ստանձնեցները, յազմութիւնները ևն իրատեսները: Ազգերի Լիկայի մէջ մենք կարող ենք ևն չմանել: Թող Հայերը զազարեցնեն իրենց պրոպագանդը ևն հաշտուեն ստեղծումս գրութեան հետ: Մենք բացարձակապէս մերժում ենք Foyerի մասին խօսել ևն մտածել անպատճառ: — Պրոֆ․ Նաւրիյը ստացել է այն տպաւորութիւնը, որ դա ստուած է Կալրիի Համար իսկ Մարցիէ, որ ստուած տեսել էր զր․ Բիդա Նուրին, ստուած էր որ այժմ թիրաքիի ոճը աւելի անհաշտ է քան թէ 3 շաբաթ առաջ: — Պարզուել է, որ մերսնց լսելով, եղև ևն մի շարք խօսակցութիւններ, բանակցութիւններ․ ևն կայացել է կոմարսովիս․ ևն մեզ լսել ևն հրաւիրող պետութիւնները (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա), ուրիշներ չեն յերկայութեամբ: — Ընդհանուր գրութիւնը այժմ հետեւեալն է: Հրաւիրող Պետութիւնները 27 Դեկտեմբերին մեծուել ևն արագացել ևն աւելի արդիւնաւէտ դարձնել Կանֆերանսի գրադմանքները: Դրա Համար որոշել ևն կազմել մի ցուցակ «խաղաղութեան կահան պայմաններ»: Այժմ մերոնց ամբողջ աշխատանքը կենտրոնանալու է այն Հարցի շուրջը, թէ ի՞նչպէս Foyerի Հարցը մտցնել այդ «էական» պայմաններէ մէջ: Խորհրդակցութիւն ևն ունեցել մեր բարեկամներէ հետ ևն որոշել ևն մի շարք թայլեր ևն նոր տեսակցութիւններ կատարել: Յատկապէս որոշել ևն պարզել թէ ո՞ր ծրագրին է որ վերջնականապէս թերութեամբ ևն Ֆրանսիան ևն Իտալիան — Կիւրիկայի՞ կողմը, թէ Արեւելեան Նահանգների, որպէս զի այդ Հարցի շուրջը կարծիքները չցրտին: Բարդիւնը լսել է Անգլիական Պատուիրակութեան մէջ, որ «ի դուրս է Պ․ Ահարոնեանը այնպէս շեշտում Արեւելեան Նահանգների վրայ, — թող աւելի խօսի Կիւրիկայի մասին»: — Ենթայանձնախումբի քարտուղար Հայարդա ասել է Ռատիւեանին․ Ձեր Պատուիրակութիւնը մեծ տպաւորութիւն է թողել



բութրի մէջ, բայց ոչ որ հնար չի գտնում ազդելու Թիւրքերի վրայ:

Ամառս շնին ժամը Յին Նորատունկեանը տեսնուել է Մանուսնայի և Գարբանիի հետ: Առաջինը սակ է որ Յանձնախումբը կ'ունենայ էլի մի նիստ, որակց կրկնազանի գեկուցում առաջին կամօր սիւսի համար թէ աշն հարցերի մասին, որ կայացել է համաձայնութիւն և թէ նրանց մասին, որակց չի կայացել (այդ թում և հայկական Foyer): Երեկոյեան Բոյզօրներ Էղել է Անգլիական Պատուիրակութեան մէջ և իմացել է որ պատրաստում են հիմնական պայմանները. և զբա համար բոյսը ենթադրանքաւոր մի շարքում: մէջ պէտք է իրենց գեկուցումները տան, և զբանցից կր կազմեն այդ պայմանների ցուցակը: Նրա հարցին թէ Հայկական Հարցը (Foyer) կր մտնի՞ արդեօք այդ պայմանների մէջ, նրան ասել են, որ «հասնական է որ մտնի»: Եւ զբա համար է ասա որ մերոնք պիտի այժմ աշխատեն:

Գեկուցումներ 29ի տեսակցութիւնները ցոյց են տուել որ մեծ վտանգ է ներկայացնում այժմ Foyerի վայրի հարցը. Անգլիացիք ուզում են աշն սեղանները Կիլիկիայում, իսկ Տրանսպրի՝ Արևելեան Նահանգների մէջ, — Այդ օրը Երեկոյեան ժամը 6ին Մանուսնային բացառիկ կերպով ընդունուել է յորդ Քրդոյնի կողմից (մինչև օրս Լոյսնում նա բացի պաշտօնական անձերից ոչ ոքի չէ ընդունել): Զբոյսը տեսել է կէս ժամ: Նա ցոյց է տուել որ նա շատ լաւ գիտէ մեր գտար, կարիքները և պատմութիւնը: Ներկայ զբոյսի վայրի նա տակ է Մանուսնային. Թիւրքերը բացարձակապէս մերժում են բարարութիւն տալ Foyerի հարցում. բայց և անձամբ պիտի աշխատեմ մինչև վերջին բոպէն: Ի՞նչ պօրս կր գայ վերջ ի վերջոյ — չգիտեմ: Բայց և պէտք է շեշտեմ Երեք հանդամանք, որոնք մեծ պեր են խաղում ներկայ պարագաներում. 1) Ենթադրանքաւոր պէտք է սնույալման ներկայացնի իր գեկուցումը Առաջի Յանձնախումբին մի նպատարս առաջարկութեամբ Foyerի մասին իր կողմից, և զա նախագահ Մանուսնայի զործը պիտի լինի: Աշխատեցէք որ նա մի շար գեկուցում շնորհակալցի սակում, որ Թիւրքերը գէժ են Foyerին և որիչ ոչինչ: Թոյ նա գտնէ ցոյց տալ որ Foyer-ն մի անհրաժեշտութիւն է, թոյ պատճառարանի այդ կարկուցութիւնը, և աշն ժամանակ ինձ համար կամխորհում տուելի հեշտ կր լինի պաշտպանել Foyer-ն: Թոյ Մասոյիների հետպիրները արձապանց գտնեն նրա վարմունքի մէջ, և ոչ միայն բարեկամական խօսակցութեան մէջ: Թոյ Թիւրքերը տեսնեն որ Իտալացիք Հայերի կողմն են: — 2) Երբ հարցը հասնի Կոմիտիոնին, թոյ Բարբերը ճառ

առի Foyerի օգտին, և ոչ միայն իր լուսիկամբ մասնակցի իմ խօսքերին: Ֆրանսացիք առհասարակ թողնում են որ ևս նախ յարձակուեմ, իսկ իրենք յետոյ իրենց անորոշ ճառերով թուրացնում են իմ ճառերի սպասարութիւնը: — 3) Մեր համակրանքը աւելի Կիլիկիայի կողմն է, որովհետև Արևելեյան նահանգներում ստեղծուած դրութիւնը շատ խառն է: Բայց մենք Անգլիացիք չենք կարող բաց դուրս գալ Կիլիկիայի առաջտրեխով, որովհետև դա մեր ազգեցութեան շրջանը չէ, այլ Ֆրանսիական. նրանք պէտք է առաջինը Կիլիկիա խօսքը արտասանեն. և Հայերը նոյնպէս չափազանց շատ կանց ևս առնում Արևելեյան նահանգների վրայ: — Վերջը՝ 26 Գեղեմեմբերի նրանց ճառերի և մեմորանդումի արձանագրութիւնը. նրանք հարեւանցի կերպով են խօսում Կիլիկիայի մասին և զբանով զժուարացրնում են մեր զործը: Գուք տեսնում էք որ մեր և Ֆրանսացիների մէջ կարող է կարծիքների տարբերութիւն առաջ գալ, որ ցանկալի չէ: — Մտնողներին նրան ցոյց է տուել այն մեծ Հետաքրքրութիւնը որ ունի Ամերիկան զէպի Հայերի վիճակը և. զէպի համի հարցը: — Լորդ Քրոյքին մօտ ցնայուց ասաջ մտնողներին ևզել է մերոնց մօտ և ունեցել է Երկար խօսակցութիւն ընդհար հարցերի մասին և կարող էր պատասխանել նրա Երեք կէտերին: Նա ասել է. 1) Մոնաստիքի մօտ արդէն ևզել են հայասէրները, Նորատունկեան և Ահարոնեան, նա զժուարանում է յանձնարարել, զանկով, որ դա ենթախանձնախումբի զարծը չէ. 2) Բարբերը խօսք է տուել պաշտպանելի Foyer-ն, նրան նորից տեսնելու ևն: 3) Գարով Կիլիկիային, հայ Երկու պատուիրակութիւնները շատ ուրախ կը լինեն սասնայ Կիլիկիան, և նա լիպօրութեամ է Երկու Պատուիրակութիւնների կողմից ասել այլ: Լորդ Քրոյքինը պատասխանել է. «Ուրախ եմ լսել այլ ըրաց հարկաւոր է, որ նրանք բաց ասեն այլ և չեղտեն Կիլիկիայի վրայ, որպէս զի իմ պաշտպանութիւնը զարս զայլ աւելի Հեշտ և տրամարանտիկան: Նոյն օրը Երեկոյան Փարիզից ստացուած է մի նամակ, որով յայտնում են, որ Գեղեմ. 26ին ևզել է Ֆրանսիական ինքն-հրկարանի արտաքին զործերի Յանձնախմբի Արևելեյան Ենթախանձնախմբի նիտար Լրնայի նախագահութեամբ, որը ընդունել է մի բանաձև, որի մէջ ասուած է. «Հայերի համար Ազգային Foyer-ն անհրաժեշտութիւն է. այլ Foyerն պէտք է կողմուի կամ Երեւանի Հանրապետութեան ընդարձակման ձևով կամ ստեղծելով կարսի շրջանում»: Լրնայը ասել է թիւ 1 Ենթախանձնախմբի մէջ, թէ զա Փասնդարէի և Ֆրանսիական կառավարութեան տեսակէտն է: Եզել է քուէտրակութիւն, և փոքրամասնութիւնը ևզել է Կիլիկիայի կող-

մը, իսկ մեծամասնութիւնը Կարսի: Այդ իմանալուց յետոյ ժամի 10<sup>1</sup> յին Լըրեկոյան Կրաֆտ Բոննարը զնայել է Բապական Պատուիրակութեան մօտ և առեւել է Գալլիին, որին բացատրել է ամբողջ գործը: Գալլին ստել է. «Դեռ մենք պէտք է շարունակենք. Foyerի հարցը կը գայ մի օրից յետոյ. մենք առիթ կ'ունենանք խօսելու այդ մասին. բայց իմացէք, որ առհասարակ մենք բահակցում ենք իբր պարտուած և ոչ թէ յաղթական, և որ Թիւրքերը զրամ են ստանում ամերիկական ազբիրներէց կոնցեսսիաների փոխարէն: — Իսկ մեր սպանալիքները սնցօր են դառնում քանի որ նիւթականը նրանք ստանում են բաւկերից»: — Այդ հանդամանքներում մերոնք գիշերը զճոռում են, որ հետեւեալ օրը տեսակցութիւն ունենան Բարբերի հետ, և նոյնպէս Ռումբուլլի հետ, և ամէն կերպ աշխատել համաձայնութիւն առաջ բերել անպիտական և Քրանսիական տեսակէտների միջև: Նոյն գիշերը Բուլղոյիներ կղել է Անպիտական Պատուիրակութեան մէջ, և Նիկոյտոնը ստել է նրան. «Բնչո՞ւ Ահարոնեանը այնքան Լըրեկո կանց է առել վերայէթներէ վրայ, զա լաւ չէ, զա գժուարացնում է մեր գործը»:

Ամաի 30ի կարևոր պէպքը Չայլի նիսան է Foyerի մասին: Դրա պատճէնը այս օրերս կը ստանանք և կ'ուզարկենք Ձեզ: Մոնպերիւն ինքը մասնակցել է այն ժողովին որը զճոռել է այս ցտար ներկայացնել: Թիւրքերը ուզում են նսեմացնել զրա նշանակութիւնը, աւելոյթ թէ Ամերիկան Կոնֆերանսի անդամ չէ, և նրա ցտարները պաշտօնական բնոյթ չունեն: Յամեւայն զէպս զա զրական և ուրախալի քայլ է, որը անպայման կ'ունենայ իր հետեւանքները:

Զիշերինի մեմորանդումը, որը ներկայացուած էր ամաի 30ին, պահանջում էր մի բնականուր կոնֆերանս ամբողջ աշխարհի փոքրամասնութիւնների համար և պնդում էր Կարսի գաշնադրի վրայ: Զիշերինի և րնկերների բոնած զերբի առթիւ, մերոնք հազորղել են Պերլին Պ. Վ. Փափաղեանին. և նա այդ մասին ունեցել է խօսակցութիւն, այնտեղ ներկայումս գտնուող Ա. Բեկպաղեանի և Ա. Փիլիմեանի հետ և մի շարք ներշնչումներ է արել նրանց Մոսկուայի վրայ սպելու նկատմամբ. 1) Որ աչբի առաջ ունենալով Թիւրքերի թերումը պէպի Դաշնակիցները, Ռուսները կտրուկ պահանջ զենն Թիւրքահայաստանի կցման մասին, կամ զոնէ պահանջեն 1914 թ. սահմանները: 2) Կուրանի զպափարը համարել անհեթեթութիւն: 3) Որ Լթէ նրանք այժմ վախենան պահանջներ զենլ Թիւրքիայի առջև, մօտ սպաղալում Կովկասը կտրած կը լինի նրանց համար: Պ. Փափաղեանի խօսակցութեան առթիւ նրանք խորհրդակցութիւն են

ունեցել իրենց ընկերները հետ, այդ թույլ նաև Մզխմանու, որը եղել է Պերլինսում և միս օրը զնայա էր Մսակուա, և որչև ևն հետևյալ ժամերը անել: Մի նամակ գրել են Բակոյսկուն Լոզան, անյուղա գրել են Համառուսական կենտրոնական կոմիտեին և Մ. Տէր Գարբիէլեանին, այն մտքով, որ իրենք հաստատ տեղեկութիւններ չիման վրայ համոզուած են թէ Ռուսները կազմից աւելի ուժեղ և վճատական գիմուսներ լինին մի կազմից Լոզանում միս կազմից ուղղակի էնկիրիտի, վերջինները կը գիջեն հայկական պահանջների մէջ: Նրանք ջննդատուում են Ձիշերինին որ նա հարցերը և պահանջները զնամ է միայն ձևական կերպով և տայիս է դեկլարատիւ ձև, որ անչառա պիտի չունենայ իր ազգեցութիւնը: Առում են թէ կուրանի ասպարիք՝ հարցին միջամտելու խոստովողական մի ձև է և և թէ ներկայ մոմենտում Ռուսերը վճռական չլինեն այս հարցում, հայ աշխատանքայինը և նրա գտար կարած է: Այդ նպատակով Պոպովանեանը ակնսուեղա է և խոսելու է Ռուսերի հետ: Նրանք գրել են Մսակուա, թէ իրենք ակզակ լինելով Լոզանի անցուղարմին, և թէ անձամբ գեկուցելու պէտք լինի, իրենցից մէկը կարող է գալ: Նամակները ուղարկել են օգային Քզխատարով և այս երկու օրը սպասում են պատասխանի:

Փրնեւ է և կել Նիր Իսի Բրիթի բնդհ. քարտուղար Վիբրին: Կրաֆտ Բոննարը լսել է նրանից, որ Բրիթը արամազրութիւն ունի 10-000 օրերը բերել տալ Շվեյցարիա՝ այնտեղ պահելու համար, և թէ Foyerն շքջողութի ստանայ: Տարուայ բեղջն կը լինի 7-000-000 շվ. ֆրանկ: Նա զնամ է Աթէնք՝ օգնութիւնը կազմակերպելու համար:

3 Եսնուարի երեկոյան Նարատունկան և Պատիսան եղի ևն Վենիցիոյսի մօտ և խնդրել պաշտպանել կնիթայանձնախմբի մէջ Foyerի մասին նպատատուր կարծիք ներկայացնելու ատջարկը: Նա ասել է մօտուորտղէս հետեւեայր. «Գրութիւնը շատ անորշէ. շատ բան կախուած է Փարիզի կոնֆերանսի ընթացքից: Ռուսերը օչաւում են կզած տարածայնութիւններից: Նրանք զրում են, որ իրենց զէմ կուսել շեն ուղում և շարունակում են իրենց անհաշտ գիբբը: Ինձ թոււմ է որ կարող է պատահել մի խղում, բայց ասանց պատերազմի. կոնֆերանսը կը ջրուի մի համաձայնութեամբ՝ որ է—6 ամիս շարունակեն պահել զինազարք միմիանց մէջ, և յետոյ նորից հասարակ են նոր կոնֆերանսի: Գալով Foyerին, ևս շեմ հաստատում որ Ռուսերը զիջեն: Մինչև անգամ երբ զուք գեկուցում է իք, ևնձ խնդրեցին զուրս զալ, որովհետև նիստը պաշ-

տծնական չէր: Իսկ իմ խօսքը, իմ ձայնը այժմ կարող է մի-  
այն միասնի ձեզ: Ես այլևս ազդեցութիւն չունեմ: Անցել էն այն  
օրերը, Երբ ես ունէի 200·000 զօրք, յազիտոյ, Դաշնակիցներէ ման-  
դաւտի, այսօր ես ջարդուած Յանաստանի ներկայացուցիչն եմ,  
որին թուրքերը ատում են և շէն վախենում: Իմ ճառը ձեր օգտին  
կարող է միայն միասնի ձեզ: Մենք ունենք 9 զօրաբաժին լաւ կազ-  
մակերպուած զօրք, բայց մեզ թոյլ չեն տալիս կոսւելու . . .»:

Նայն Երեկոյեան Նորատունիկեան և Խատիսեան Հանդիպելի Են  
Ռումբոյզին, որը նշանակել է նրանց ընդունելու յաջորդ օրը ժամը  
6ին: Տեսել էն Մանտանային. Մանտանան ասել է, թէ նա առա-  
ջիկայ նիստի համար պատրաստել է մի լաւ զեկուցում Foyerի մա-  
սին և յայտ ունի որ իր զեկուցումը կ'ընդունուի Յանձնախմբի կող-  
մից: — Բարյո՛վներ տեսնուել է Նիկոյսոնի հետ, որը ասել է. «Ես  
յոյս չունեմ, որ մենք զանք համաձայնութեան թուրքերի հետ, բայց  
միեւնոյն ժամանակ յարկ Քրդոյնը ուզում է խուսափիլ պատերազ-  
մից. պէտք է զանել մի միջոց»:

Յանուար Աին ժամը Աին մերոնք տեսել էն Բարբերին և իրնդ-  
րել էն նրան շահակառակել Անյլխացիներին, Երբ նրանք առաջարկեն  
Կիլիկիան, իր ճառով պաշտպանել Foyerն և նպաստաւոր կարծիք  
տան: Բարբերը խոստացել է անել այդ բոլորը իր ներկայացուցիչ-  
ների միջոցով, որոնք մասնակցում են Յանձնախմբի մէջ: Նա ասել  
է, որ ինք ոչ մի տասնձիւն հրահանգ չունի Foyerի տեղի մասին և որ  
նա չի առարկի Կիլիկիայի մասին առաջարկել գէմ: Տեսակցութիւնը  
տեսել է մի ժամ: Ժամի 7ին Նորատունիկեան և Խատիսեան Լեզի Են  
Ռումբոյզի մօտ. խնդրել էն նրան յաջորդ օրուայ նիստին անձամբ  
ներկայ լինել, պաշտպանել Foyerն և անկախ թուրքերի դիրքից՝  
նպաստաւոր կարծիք տալ: Ռումբոյզն ասել է որ ինքը անպատճառ  
ներկայ պիտի լինի և իր կողմից իրբև անյլխացի ներկայացուցիչ  
պիտի պաշտպանի Foyerն Կիլիկիայում: Նա հարցրել է, թէ արդեօք  
չա՞ռ կան Հայերի մէջ առբեր, որոնք ուզում են, որ Foyerն լինի  
Արեւելեան Վիլայէթներէ մէջ: Մերոնք նրան մանրամասն բացատրել  
են այդ խնդրի ծայունը և այժմեան գրութիւնը: Պարզել են երկու  
կողմերի գրական և բացատրական կէտերը և ասել են, որ Եթէ անդ-  
լիական և ամբրիկական տեսակէտից անպատճառ առաւելութիւնը  
արում է Կիլիկիային, և նրանք կարող են ձեռք բերել Փրանսիոյ  
համաձայնութիւնը, բոլոր Հայերը շատ ուրախ կը լինեն ունենալ  
Foyerն Կիլիկիայի մէջ, որը այսօր ունի այն առաւելութիւնը, որ ծո-  
ղի մօտ է, հեռու է ռուսական ազդեցութիւնից, որից ուզում են

խոստովել սրտչ պետութիւններ: Մերոնք առել են, որ էթէ Հարկաւոր է, իրենք կարող են այս բարբար կրկնել և լարդ Քրքրքին առաջ: Ռամբուլ խոստացել է այդ բարբար զեկուցել լորդ Քրքրքին և առաջարկել անձամբ լսել մերոնց վայրէ մասին, և թէ ինքը լրացուցիչ տեղեկութիւնների կարելու ունի: — Նա Հարցել է մերոնց: «Իսկ դուք համաձայն էք Մոնպարիէի առաջարկների հետ: Մերոնք դրական պատասխան են տուել: Գարսի առաջիկայ նիստին, մերոնք երկու ցանկութիւն են յայտնել. 1) որ այդ նիստում չսկսուի անդրօրինակ ֆրանսիական վէճը տեղի մասին, որ վարչօրոք համաձայնութեան դան ֆրանսուցիների հետ. և 2) բոլոր հանդամանքներում Foyerի հարցը պահեն կենսական հարցերի շարքում: Նա առել է, որ կարող է վստահացնել որ այս Հարցը նրանք չեն լքի: Վերջում նա Հարցել է մերոնց կարծիքը Կոնֆերանսի մասին, Թուրքերի մասին և առհասարակ դրաթեան մասին: Նորատունկեանը պատասխանել է, որ Դաշնակիցները սխալում են թրքական ոյժերի մասին, որ Հարկաւոր է փոխել բանակցելու ձևը և որ թուրքական «ռոյ» երբեմն «ռոյ» է նշանակում: — Յետոյ մերոնք տեսել են Չայլի և շնորհակալութիւն են յայտնել նրա բայի համար և յայս յայտնել, որ նա պիտի շարունակի իր պաշտպանութիւնը: — Այդ օր Ամերիկայից ու Մայկուից ստացուել է մի մանրամասն և ուշադրութեան արժանի զեկուցում Հայկական Հարցի մասին: Պարզում է, որ ամերիկեան կատաւարութիւնը ոչ մի հրահանգ չի տուել Չայլի Foyerի մասին. նրա բայը եղել է Լոյանում անձնական նախաձեռնութիւն՝ չիմնուած ընդհանուր հրահանգների վրայ: Իսկ ընդհանուր հրահանգները — փոքրամասնութիւնների պաշտպանութիւն և ազատ շրջապատութիւն Թուրքիայ մէջ: Դա Մայկուի լսել է Վաշինգտոնի արտօքին պաշտօնաւան մէջ կարեւոր պաշտօնակցից, որի ձեռքում է Հայկական Հարցը:

Թերթերից արդէն դիւէք այն միջպղպի մասին, որը տեղի անեցաւ Յունուարի 6ին Ենթալանձնութիւնի նիստին, երբ Թուրքիայի ներկայացուցիչ Բիլլոս Նուր շկամեցաւ լսել ֆրանսիական ներկայացուցիչի ճառը և հետոյաւ ժողովից:

Ամսոյս 6ին աիկ. Ինկա Նալբանդեանը եղել է Չիչերիի մասխոսել է նրա հետ աքսարուած հայ մտաւորականների մասին և խնդրել է, նրանց ուղարկեն կա՛մ Հարաւային Ռուսաստան կա՛մ արտասահման, Փերմանիա: Նա պատասխանել է. «Ես այսօր և եթ կը դրեմ Մոսկուա. ձեր խնդիրը կը կատարեմ. կարող էք հանդիսու լինել: Մենք շատ ենք ցանկանում Դանիայում բարեկամներ ունե-

նալ»։ Տիկինը տուած էր իր ծագման տղանունը, և ոչ հայկականը։

Ամսի 7ին Պ. Ահարոնեան տեսել է Մանտանային և Երեկոյ-  
եան ժամի Վին Բարձրասին։ Մանուսէրին տեսել է Բելլենին, որը  
Ամերիկայի ներկայացուցիչն է Ենթասանձնախմբի մէջ։ Բարբր միտ-  
րերան ստում ևն, որ Թուրքերը սչ մի գէպրում չեն համաձայնում  
Foyerի հարցը մացնել Գաշնապրի մէջ և գործը հացնում ևն սկսն-  
նալի ամէն անգամ, Երբ հարցը հասնում է Foyerին։ Տեսնելով այդ  
բանը և միևնոյն ժամանակ ցանկալով տեսնել Foyerն իրադործը-  
ւած, Գաշնակիցները զիմել ևն նոր միջոցի՝ այսինքն յայտարարել  
Թուրքերին, որ նրանք ներչնում ևն խորհիլ որ Թուրքեան ինքը  
իբ յոժար կամբով բուտարութիւն այս Հայերի Foyerի հարցում։  
Մանտանա գտնում էր որ զա ամենապարճնական միջոցն է հասնելու  
նպատակին։ Նա տակ է. «Չեզ համար կարեւոր է փաստը, Foyerն,  
և ոչ միջոցները։ Թողէք որ մենք այդ ճանապարհով հասնենք նը-  
պատակին»։ — Բարձրասնր տակ է Ահարոնեանին. «Դուք տեսնում  
էք որ Երեք պետութիւն բաց և ուրջ խնդրում են Foyer ձեզ համար.  
զա մի մեծ քայլ է ձեր գտտի համար։ Դուք զիտէք Թուրքերի պա-  
տասխանը — բացարձակ մերժում»։ — Մանտանայի յատարարու-  
թիւնից զուր կը տեսնէք որ Գաշնակիցները պահանջում ևն որոչ հո-  
ղամաս Թուրքիայի մէջ տեղաիւն համայնքային և քաղաքապետա-  
կան ինքնապարտութեամբ, Ազգերի Լիկայի հովանու տակ և Թուր-  
քիայի գերիշխանութեան տակ։ Տեղը որոշելու է ինքը Ազգերի Լի-  
կան։ Իսկ Ռուսրոյլի յայտարարութիւնը աւելի պարզ և ուրջ է.  
Կիլիկիա, 18-000 քառակուսի կիլոմետր, ինքնապարտութիւն և Ազ-  
գերու Լիկայի հովանաւորութիւն։ Զբանսիան պահանջել է «Foyer  
dans le Nord»։ Ամսի 8ին Մանտանան ամբողջ եղած նիթը իր  
նպատասար Երբակացութեամբ ուղարկել է Առաջին Յանձնախմբին,  
Բէ Ի՞նչ պիտի անի Յանձնախումբը և յարզ Քրքրներ, զեռ յայտնի չէ։  
Մերոնք մի շարք տեսակցութիւններ ևն ունենալու այդ ուղղութեամբ  
ազգերու համար։ Մանուսէրին հեռազրել է Ամերիկա ստեղծուած  
զրութեան մասին։ Բալլզիկնր գնում է Լանդսն այնտեղ աշխատելու  
համար մեր գտտի օգտին։ Պիտի փորձի տեսնել Բանար Լուսին։

Ենթասանձնախմբի նիստում արտասանած ճառերի ստթի,  
Նարտունիկեան, Ահարոնեան և Խատիսեան, մասնակցութեամբ մի  
բանի մօտ բարեկամների, սնեցել ևն խորհրդակցութիւն և ուրջել  
ևն միաձայն, որ հարկաւոր է առանձնապէս բողոքել աչքի առաջ  
ունենալով զիտարարապէս հետեւեալ Երեք կէտերը. 1) Foyerի հարցը  
պէտք է մտնի զաշնադրի մէջ. 2) Foyerի ներքին «սուստու»քը պի-

տի լինի պոլիթիկոմիսիոնի պէս և 3) Մեր Հարցը քաղաքական է, և ոչ թէ հիւմանիտէր: Իսկ թէ ի՞նչ ճանապարհներով և ո՞ւմ գի՞մել, — այդ Հարցը գեւ յետաձգուած է, մինչև որ պարզուեն մի բանի հանդամոներէն: զլխաւորապէս այն, թէ ի՞նչ կ'անի Առաջին Յանձնախումբը: — Այդ տոթիւ նոյն օրը, ամսի Տին Էրեկոյեան Պ. Նորատունկեանը ասել է Ռուսրոյդին և գանդատուել է առջ քերելով ըստ պերսոնալիտէտի տեսակէտները: Ռուսրոյդը պատասխանել է, որ նրանք ունեն Էրկու նպատակ: ւ) Ունենայ Հաշտութեան Դաշնագիր, և բ) Ստեղծել Foyer: Պարզ է, ասել է նա, որ Թիւրքերը ոչ մի գէպում չեն սաստապրի Դաշնագիր, Էթլ Foyer կը լինի մէջը, և Էթլ մենք կը մտցնենք Foyerն Դաշնագրի մէջ, մենք չենք ունենար ոչ Հաշտութիւն, և ոչ Foyer: Ուստի Հարկուսը է գոնի մի ուրիշ ճանապարհ»: «Եւ, ասել է նա, կարոյ Էմ ասել Չեյ, que nous maintiendrons le foyer, mais nous ne pouvons insérer le foyer dans le Traité»(\*). Իսկ թէ ի՞նչ ձևով նրանք կ'անեն այդ, — այդ Հարցը Պ. Նորատունկեանը ոչ մի կերպ չի կարողացել հասկանալ նրա խօսակցութիւնից: Նորատունկեանը ասել է, որ մենք պատրաստուած ենք մի բարձր բոլոր պետութիւններին, որ Հայ ազգը չի տանի այդպիսի ծաղրանք իր բոլոր գահարեւութիւններից յետոյ: Ռուսրոյդը նորից կրկնել է, որ Դաշնակիցները ստիպուած են ընտրել մի ճանապարհ, որով կարելի կը լինի ստանալ մի բան, թէ չէ ամենահնչոտ բանն է խմբազրեւ մի projet de Traité et provoquer la rupture (\*\*). Բայց Դաշնակիցները ամէն գնով պէտք է խուսափեն խզումից:

Նոյն օրը ԱՀարմանը տեսնուել է Վենիզելոսի Հետ: Նա նորից ասել է. «Եւ ոչինչ չեմ սպասում, դուք Foyer չէք ստանայ»:

Դեկտեմբեր 9ին Կրաֆտ Բոննարը Էրեկոյեան ժամը յին ունեցել է շատ հետաքրքիր խօսակցութիւն Բիգա Նուրի Հետ: Բիգա Նուր ասել է. «Ո՛չ մի գէպում մենք Foyerի համար ո՛չ մի գի՞ծում չենք առնի: Մենք պատրաստ ենք խզումի՝ այս Հարցի առթիւ: Հայերը ի դուր են աշխատում: Թոյ նրանք հասկանան որ Դաշնակիցները ևս Foyerի համար չեն գնայ խզումի, մենք այդ գիտենք: Ծարաթ օրը ևս դուրս Էկայ մարտից, սրով՛հետև: Մոնտանա ինձ խօսք էր տուել, որ նա միայն հասարակական կարծիքի համար մի բանի խօսք պէտք է ասէր Foyerի օգտին. բայց ևս տեսայ որ նրանք շատ հետու են գնում, մա-

(\*) Մենք պնդեմք Հայկական (Ռուսի) կազմութեան վրայ, բայց չեմք կրմար օժտի պահանգը դնել դաշնագրին մէջ...:

(\*\*) Չեմք կրմար խմբազրի դաշնագիր մը, որ կը տանի դէպի խզում:



նաւանդ Ռուսերոյր . . . — Ու Լս զուրս Եկոյ : Թոյ Դաշնադիրը ստորագրուի, թոյ կրքերը հանդատանն, թոյ ժամանակ անցնի, մենք կր սկսենք սոյրել ընդհանուր կեանքոյ (չկարուեաւի, զխառնութեան, արդիւնարեական, բարեկարծական ընկերութիւններ և այլն) և կր ստեղծենք modus vivendi. Ուրիշ ճար և ճանապարհ չկայ» : — Երբ կրա՞նք տակ է, թէ ժողովուրդը տանջուած է և կարող է յուսահատական քայլերի գնալ, — Բիզա նուր գասոյ պատասխանել է. «Քայց հասկոցէք որ Եթէ մենք աշտակ տանք Foyer, մենք չենք կարող վերադառնալ Անգլիա. մեկ այնտեղ կր սպաննեն : Այս, հայ ժողովուրդը տանջուած է, ժայց մենք էլ ենք տանջուած, — և թոյ Դաշնակիցները պատասխան անն ստեղծուած այս դժուրի համար» :

Ամսոյս 10ին մերանք պատրաստել ևն Հեռագիրներ Բոննար Լուսին, Փոստդարէլին, Մուսոյիին և Լարդինդին, որոնց մէջ պահանջուած ևն մտցնել Foyer Դաշնագրի մէջ : Մանդակրին տեսնուել է Յորրս Աղամարի հետ, որը տակ է, թէ կոնֆերանսից Լարդերը այլ ևս բան չունեն սպասելու, և պիտի զիմեն Ազգերի Լիկային, որին կ'անցնի մեր հարցը :

Նայն օրը ժամը 2-30ին Ահարոնեան, Պատրիսեան և Բաշալեան (Նորատունիկեան հիւանդ էր) Եղել ևն Չայցի մօտ : Նախ ճորհակալութիւն ևն յայտնել նրա միջամտութեան համար և սոյս բացատրել ևն նրան, որ աչքի առջ ունենալով մեր հարցի սղբերգական դրութիւնը, խնդրում ևն նրան. ա) Տեսնուել յարց Քրդրդին հետ և նոր ճնշում անել նրա վրայ, բ) Հետադրել գրութեան մասին նախագահ Լարդինդին և գ) Նորից ճնշում անել Թիւրքերի վրայ : Ապա խնդրել ևն նրան ծանոթացնել իրենց օրուայ գրութեան հետ և խորհուրդ տալ իրենց յայտնելով որ իրենք կարող ևն բողոքել ևն Հեռանալ Լոզանից : Չայցը տակ է. «Լարդ Քրդրդին նա նորից կր տեսնի և կր խօսի նրանց հետ : Իսմէլին էլ նորից կր տեսնի և կ'ասի, որ նրա պիջողութիւնը ահագին աղաւաղութիւն կր թոյնի Ամերիկայում : Ինչ վերաբերում է Լարդինդին Հեռագրելուն, նա արդէն ինքը զուրս է Եղել տուած հրահանգներից, որ Լարդինդը տեղեակ է ստեղծուած գրութեան մասին, և նա ինքը չի կարող նոր հրահանգներ խնդրել, յայց խորհուրդ է տալիս, որ մերանք իրենք Հեռագրեն : Ինչ վերաբերում է ընդհանուր գրութեանը, նա կարծում է որ Դաշնակիցները Եղել ևն ոչ վճռական առնասարակ և ի միջի այլոց նաև Լարդիական խնդրում, որ նա ինքը արել է աւելի քան թէ իրաւունք անէր, իսկ Դաշնակիցները տեսնելով Թիւրքերի անհաշտութիւնը, զիջել ևն և սկսել ևն «խնդրել» փոխանակ սպառնալու : Այսօր, նրա կարծիքով,

մենք չպէտք է հետանանք Լօզանից բողոքով, — «դա վաղաժամ է, — որովհետև, առամ է նա, ևս գեո յոյս սննեմ որ Սնդարան տեսնելով որ իրենց պահանջները համարեա թէ լիովին բարտարուած են թերևս գտնան տակի զիջոյ՝ Foyerի հարցում»։ Նա խորհարդ է առել մի քանի օրից յետոյ զերպոյն կոչ սնել Կոնֆերանսին, և ինքն էլ կ'աշխատի յարզ Քրիզյանի և Իսմէթի մօտ։ Իր խօսակցութիւնները հետևանքը մերտնց պիտի հաղարդի. «Ձեր հարցը չի մտնի, նա մնում է, և մենք պէտք է աշխատենք այս կամ այն կերպով մտցնել Գաշնապրի մէջ»։ — Յետոյ մերոնք տեսել են Մանտանային։ Նա տակ է, որ իր կարծիքով Foyerի հարցը այս Կոնֆերանսում սպասուած է, որ այլ ևս ոչ մի յոյս չկայ, որ նա մտնի Գաշնապրի մէջ։ «Բայց տակ է, թող ժամանակը անցնի, կրբերը կը հանդատանն և Ձեր հարցը կը լուծուի»։ — Նայն օրը ժամը 6ին մերոնք ուղարկել են հետապիւնները Փոստնպարէին, Մուսայիւնիին և Բաննար Լուսին։ Հարցիւնդին սպասած հետապիւրք քիչ փոփոխել են, խնդրելով օգնութիւն։ Գաշնակիցներին սպաւել են մի քանի օրով։ Այդ միջոցին Ահարանանք պէտք է գնայ Հոսմ Մուսայիւնիին տեսնելու, աչգլ ստաջ ունենալով որ նա իր միջամտութեամբ կարող է մեզ օգնել, իրբև մի մարդ, որը քնդունակ է արամադրութեան և զգացմունքը սպաւելութեան տակ կարելուք քայլեր ստնել։ — Մալիսմը գրել է Լոնդանից, որ Յարէյն Օֆիսում նրան տակ են, թէ «Հայկական Հարցը կը լինի առանձին կարգադրութեան տարակայ»։ Դա համապատասխանում է նաև Ռուսարդի խօսքերին։ Բայց և՛ որ և ի՛նչ ձևով, յայտնի չէ։ Միամտամանակ արդէն Մանդատերի և Շվեյցարական մեր բարեկամները սկսել են փնտռել նոր վայրեր մեր զաղթականներին տեղաւորելու համար՝ Քիւրբեայից դուրս — Կուրան, Ռուսմանիա և այլն, և նրանք պատրաստել են մի զիմում-բողոք Կոնֆերանսին սրակց տառն են, որ Գաշնակիցները պարտասուր են, — եթէ չեն կարող Foyer ստեղծել Քիւրբեայում, մտածել ևս կարգադրել Հայերի տեղաւորումը։ Սակայն այս հարցը, որպէս զի շխանկարի մեր հարցի օրինասուր լուծման, գեո ճննում է մեր ներքին շրջաններում, և Ռուսաթ օրը ժրնուում պիտի լինէր յատուկ խորհրդակցութիւն, որտեղ ճննուելու էր այն հարցը, թէ ի՛նչ սնել Եթէ իսկապէս Լօզանի Կոնֆերանսում մենք ոչինչ չենք ստանայ։

Մեր հարցի գրութիւնը հետևեալին է. Գաշնակիցները սպասել են որ Քիւրբերը Գաշնապրից դուրս՝ վերցնեն իրենց վրայ պարտաւարութիւն Ազգերի Լիկայի աջակցութեամբ իրադարձել Foyer։ Ահա

այս ցանկութեան շուրջն է որ այժմ պտտում են մտքերը: Իսմէլը տառջին անգամ մի յայտարարութիւն է արել Նիտտի մէջ, որ Մոնտանայի կարծիքով, տառջին անգամ «ցայց է տարիս մի ճեղքուած ք նրանց անճաշտ տրամպորտիւնն մէջ»:

Ամսի 12ին մերոնք յատուկ խորհրդակցութիւն էին նշանակել մասնակցութեամբ Մանգոմերիի, «Ֆիլյարմէն»ների և Րըլիֆի ներկայացուցիչներին՝ զաղթականների վիճակի մասին, յատկապէս այն մասին, թէ ո՞ր տեղաւորել նրանց, սրպէս զի չցրուեն: Թէ՛ Նորատունկեանի, թէ՛ Մոնգոմերիի, և թէ՛ մերոնց կարծիքը Ռուսաստանի կողմն է — կուրանի և Երևանի: Այս առթիւ նոյն օրը արդէն Մոնգոմերին տեսակցութիւն է խնդրել Չիչերինից այս Հարցի մասին լուրջ խօսելու համար: Հուսանական է որ Նորատունկեանը ևս տեսնուի նրա հետ այս Հարցի համար: Մեր թեղը Հետեւեալն է. որտեղեան հող և ամերիկեան զրամ — Բայի Foyerի Հարցից մեր պատուիրակութիւնները շարունակում են աշխատել ուրիշ կենսական Հարցերի համար (ընդհանուր ներում, զոյրերի իրաւունք, անցած ժողովրդ, մանկու իրաւունք, քաղաքացիութիւն և այլն): Այս բոլորի համար պատրաստուած նիւթերը և յօդածոները յանձնուած են Պ. Բարբերին, որի նախագահութեան տակ աշխատում է առանձին յանձնաժողով: Ինչ որ կարելի է լինում ահապիսի զժուգրութիւններով անցնում է, քանի որ Դանակիցները զիջում են ոչ միայն Foyerի Հարցում, այլ զընթէլ բոլոր Հարցերում: — Ամսի 11ին Ստտիսեան և Բաշաբեան նորից տեսնուել են Ֆրանս Աղամսի հետ, բացատրել են նրան, թէ ինչ սարսափելի տղաւորութիւն կը թողնի Լօզանի Կոնֆերանսը Հայերի վրայ, և որ անհրաժեշտ է վերջապէս տեսնել յոյգ Քրդընին: Նա պատասխանել է. «Էն կը բացատրեմ յոյգ Քրդընին ձեր ցանկութիւնը և կ'աշխատեմ, որ նա ընդունի, բայց չեմ կարող երաշխաւորել, որ յաջողուի, որովհետեւ նա ոչ սքի չի ընդունում»: Ինչ վերաբերում է ձեր Հարցին, նա խաղուած չէ. նա կ'անցնի Աղղերի Լիկային, որը կը հասարաւի դարնանը արտակարգ նիստի թիւրքիսն ընդունելու համար:

Ամսի 11ին տառաւոտ ժամի Գին Ահարոնեան, Նորատունկեան, Ստտիսեան մասնակցութեամբ Մանգոմերիի և Մանկելտամի կարեւոր խորհրդակցութիւն ունեցան: Ահարոնեան և Ստտիսեան այն կարծիքի էին, թէ Հարկաւոր է անմիջապէս ներկայացնել զրաւոր լողոքը որ արդէն պտտրաստուած էր: Նորատունկեան որ նախընթաց օրը համաձայն էր թուղթ ապրան ասել է Հետեւեալը. «Քոմնի որ ևս այժմ համոզուեցայ որ Դանակիցները վճռել են մեր Հարցը

չմտցնել Գաշնազրի մէջ, ևս Աղլային Պատուիրակութեան կողմից չեմ կարող այսօր թուղթ ներկայացնել: Ես պէտք է անձամբ տեսնեմ յարց Քրքրզնին, Բարբերին, Գարբանին և Հայաշիին, իմանամ իրենց արամադրութիւնները, Հարցնեմ իրենց խորհուրդները և մի քանի օրից յետոյ կը վճռեմ, թէ ի՞նչ տեսակ թուղթ պիտի ներկայացնել: Իսկ դուք իբրևս Սևրբի Գաշնազրի ստորապրօզներ, իբրևս Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչներ, տուէք ձեր գրութաւոր բողոքը այսօր ձեր անունից: Ես զեմ չեմ գրան: Դա իմ վերջնական կարծիքն է այսօրուայ Համար»: Մերոնց և միւս բոլորի կարծիքը այն է Լեզի, որ տայ առանձին բողոք միմիայն ձեր անունից կը լինէր մեծ սխալ, որովհետև 1) Թիւրքերը և Գաշնակիցները կարող են տեսիլ, որ Թիւրքահայերը վրդապուստ չեն, որ միայն ուսուհայերն են որ բողոքում են 2) Որ երկու պատուիրակութիւնների մէջ սխալուել են տարածախտութիւններ: Մանկելչտամն էլ նոյն կարծիքի էր և խնդրում էր առանձին բողոք շներկայացնել: Լսելով այս բոլորը Նորատուհեկանը տեսիլ է, որ «պէտք է սպասել, որ Գաշնակիցները և ապառայ ծրարիները պարզուեն, իսկ մինչև այն, մենք կ'անենք բանաւոր բողոքներ որ սբել ենք և անում ենք»: — Աչքի առաջ ունենալով նրա կարծիքը և գտնելով առանձին ձեր բողոքը վրնասակար ընդհանուր տեսակէտից մերտնք էլ վճռել են զբաւոր բողոքի յանձնումը յետաձգել մի քանի օրով:

Լսնդանից Բոյզիներ գրել է Պ. Ստախեանին, թէ Աշխատուորական կուսակցութեան անգամ Նսէլ Բրքաստնը Լեզի է Լօզանում Իամէթի մօտ և տեսիլ է նրան, թէ նա ցանկանում է Հաշտութիւն, պաշտպանութիւն փարամանութիւնների, մանուանդ Հայերի»: Բոյզիներին տեսիլ են Աշխատուորական կուսակցութեան մէջ Հետևեալը. «Անդորձութեան Հարցով զբաղուած է Աշխատուորական կուսակցութիւնը, որ պիտի օգնի Հայ Դատին, ինչքան որ կրնայ, բայց ոչ ի դին պատերազմի»: Ասել են նոյնպէս որ նրանք բացարձակապէս զեմ են պատերազմին Թիւրքիայի հետ:

Երկրորդ նամակով, Բոյզիներ գրել է Ստախեանին թէ՛ շորդ Ռուբերտ Սևակի քարտուղարը Հասարակացրել է իրեն թէ Աղլերի Լեզիան «կարող է կարգադրել ձեր գործը, և զա կը լինի Լեզայի Համար մի ուժեղ ապացոյց նրա կարողութեան»: Գրում է նաև, որ «Բաննար Լօսն (Վարչապետ) միշտ Համակրում է մեզ, շատ վախենում է պատերազմից և վստահութիւն ունի յարց Քրքրզնի վրայ»:

Ամսոյս 13ին Նորատուհեկանի մօտ Լեզի է գր. Նիհազ Բեշազը: Նա տեսիլ է, որ ներկայ անյաջողութիւնը չպէտք է յուսահատե-

ցընի ո՛չ Հայերին և ո՛չ Թիւրքիայի այն գործիչներին որոնք շէն րոմանում աշօրուայ Անգորայի վարիչներէ բոլոր տեսակետները, որովհետեւ ա) շատոյ կը լինեն նոր բնարտաթիւններ և Անգորան կ'ադատուի խոջաներից և ծայրահեղներից որոնք տապալեցին այս անգամ Հայկական Հարցը: Բ) Թիւրքերը ստացել են Լօղանում այնպիսի առաւելութիւններ, որոնք բոլորովին անսպասելի էին, և զա տալիս է հնարաւորութիւն գիջել Հայերին որոշ հոգամաս, որովհետեւ Թիւրքիայում շատ քիչ մարդ է մնացել: Գ) Թիւրքիան պարզ թերութիւն է գէպի Անգլիան, որ չի լքել Հայկական Հարցը, այլ միայն յետաձրգել է, և Անգլիայից է որ Թիւրքերը գրում են սպասում, ուստի Հայերը պէտք է աշխատեն Անգլիայում, որովհետեւ հասկացող Թիւրքերի համար Լօղանի անյաջողութիւնը չի ոչնչացրել Հայկական արդար պահանջները:

Ճրանական պատուիրակութեան մօտ անձերից մէկը ասել է իմաստասանին. «Մենք Յունուարի 2ից յետոյ ամէն օր ստանում ենք Փարիզից հետազոտներ, որոնք հրամայում են մեզ ո՛չ մի գէպում ո՛չ մի հարցի համար չկտրել յարաբերութիւնները և ամէն գնով ստորագրել պաշտպար: Թիւրքերը գիտեն այդ և և շահագործում են մեր գմար գրութիւնը. հետեւանքն այն է, որ մենք ամաշում ենք վերադառնայ Փարիզ ո՛չ միայն ձեր հարցի համար, այլ և պարտերու, քալիքի իլլալիսներու և օտարականներու անձնական վիճակին համար: Նահանջած ենք բոլոր հարցերուն մէջ»:

Թէ ո՞ր աստիճան յանգուզն են գարձել Թիւրքերը, ցոյց է տալիս այն խօսակցութիւնը որ սնեցել է 15 Յունուարին Պ. Տէր Ներսէսեանը (իմբայիր «Վերջին Լուր»ի) գր. Բիզա Նուրի հետ: Նրա հարցին, արդի գրութեան մասին և թէ արդեօք ի՞նչպէս կարելի է հասկանալ ապագայում հայ-թուրքական յարաբերութիւնները Անգորայի ակակաից, Բիզա Նուր պատասխանել է. «Այլ և ու Թիւրքիայի մէջ Հայկական Հարց գոյութիւն չունի. նա վերջացած է ընդմիշտ: Թէ ի՞նչ պիտի ասեն Թիւրքիայից գուրա ապրող Հայերը, զա նրանց գործն է և այն 7 միլիոն հայտակներէ, որոնք կաշեր են աւում նրանց օգտին: Թոյ նրանք գործով ապացուցանեն, որ նրանք Հայերով իսկապէս հետաքրքրում են: Թիւրքիայում մնացող Հայերը պէտք է ապրեն իրքեւ հաւատարիմ քաղաքացիներ: Իսկ սի որ ուզում է նորից մանել Թիւրքիա, նա պիտի ընդունի Թիւրքիայի ընդհանուր օրէնքները: Բայց ո՞վ գիտէ, կարելի է Հայերը գեւ րասական շէն համարուել, որ Դաշնակիցները լքել են նրանց ամենախայտասակ կերպով, ճատեր արտասանելով միայն pour la galerie

(Թատրոնի «լերնաստան» համար, այսինքն ամբարխի) և մեզանից զերջումներ ստանալու՝ իրենց սեփական օգտին նաֆթային հարցերում : Եթէ ուզում էք, նորից դարձեք խաղալիք Անդրկասյի ձեռքում և նորից կր տանձուկք : Իսկ եթէ մեր մարդկանց սպանելու լինեն Հայերը, մենք մի մարդու համար կ'ոչնչացնենք հարցերը, ինչպէս զապրտահել է անցելայում : Իսկ եթէ ուզում էք իսկապէս մեզ Հեռահալաւ, — նախ և առաջ պաշտօնապէս յայտարարեցէք, որ դուք հրաժարուում էք հոմից և առհասարակ ամէն տեսակ առանձին պահանջներից : ցրեցէք ձեր պատուիրակութիւնները և եկէք առանց մի սրեւէ յետին մաքի թիրբիայի մէջ ապրելու համար : Միայն խօսքով չի կարելի բաւականանալ : Դուք չէք հաւատում թիրբերին ոչ մի հարցում, միշտ պահանջում էք երաշխաւորութիւններ : և մենք էլ Հայերին մեզ մօտ թողնելու համար ոչ ձեռնարկեցինք, այլ սրտով և բարեկամարար, վերայիշեալ երաշխաւորութիւնները կ'ուզենանք, և առաջին քայլը սպասում ենք Հայերից : Իսկ զրա փոխարէն մենք ի՞նչ ենք տեսնում : Հայ Պատուիրակութիւնները ամէն տեղ առում են և յայտարարում, որ նրանք չեն թողնում իրենց զապախարը և պիտի շարունակեն իրենց պահանջների պրոպագանդը, և այսինքն զնոմ ապագայի վրայ : Միւս կողմից թորպար թրակիայում նորից գունդեր է կազմում Հայերից Կոնստանտնուպոլիսի օգտին : Դա նշանակում է, որ մեր մէջ հաշտութիւն չկայ և այլ հանդամանքներում մենք չենք հաւատում ձեզ : և այդպէս էլ կարող էք գրել ձեր թերթի մէջ : Բայց քանի որ ևս, իրբեւ պատուիրակ, իրաւունք չունեմ մինչև անգամ խօսել Հայկական Հարցի մասին, սրովհետև նա չկայ այլ ևս, գրեցէք որ դուք առաջ ունեցաք տեսնուել մի լատաւեղեակ թիրբի հետ» : — Երկու օր առաջ կրաֆտ Բոննար ատիթ է ունեցել տեսնել զր : Բիզա Նուրին, և բոտացի նախ յայտարարութիւններն է յսել նրանից : — Պ. Տէր Ներսիսեանք ատիթ է ունեցել խօսելու թիրբ Պատուիրակութեան Մամուլի ընդդէմ պետի հետ : նա նային է ասել սուլայանիով : ՔՀայերը իսկօք մարդուրդ են, առնջում ի հարկէ : և մենք դարձանում ենք, որ նրանք կարող են մի սրեւէ վատահալութիւն ունենալ այն Դաշնակիցների վրայ, որոնց երեսին զր : Բիզա Նուրը թքել է Հայկական Հարցի համար, դուրս գալով նիստից, խօսելով զուր և չուղեւորով անգամ խօսել նրանց Հետ, և նրանք... հանդիստ կերպով կրել է ևս ապրտակը և շատուել են յայտարարել, որ զա թիրբի մացութիւն է ևս որ նրանք բնաւ չեն պահանջում հոմ, այլ միայն խնդրում են աչքի առաջ ունենալ Հայերի ծանր դրութիւնը» :

Ոմար Նին Սաախեանք տեսնուել է Վենիզելուսի հետ : նա ա-

ակ է. Ձեր հարցի պրոթիւնը և Յունաստանի կատարեալ քաղաքահան պարտութիւնը, ինչպէս պիտէ, և նախտեսում էի զեռ Փարիզում, և այստեղ էլ, զեռ նոյնմբերին, նոյնը ստում էի Ձեզ: Մեզ լքեցին Դաշնակիցները կառնարեյապէս: Այժմ խօսենք ապագայի մասին: Ձեր առաջ կայ երեք ճանապարհ, և այս երեք ճանապարհով պէտք է գնաք. ա) Բոյսը միջոցներով սթեղացնել Ռուսահայաստանը, որը եղել է և մանուսնդ այժմ է Հայաստանի կորիզը, ամբողջ յոյսը: Բ) Աշխատել և միշտ աշխատել Ամերիկայում թէ՛ գրումական, թէ՛ բարոյական և թէ՛ քաղաքական օգնութեան համար թէ՛ այսօր և թէ՛ ապագայում Հայերի և Հայաստանի օգնութեան համար. մանուսնդ որ Թիւրքերը այնտեղ պէտք է գրամ վնասուն փոխառութեան համար, և միւս կողմից զա ամենատեղ և ապագայի երկիրն է: Գ) Աշխատեցէք Հնդկոսում և Փարիզում քաղաքականապէս վառ պահել ձեր գասը: Մի՛ փակէք ձեր աշխատանքը, ունեցէք ամէն տեղ քաղաքական ներկայացուցչութեան ցանցը և միշտ պարաատ եղէք օգտուն էլ ամէն հասնականութիւնից, որով այնքան հարուստ է այժմեան սնկայուն պրոթիւնը: Բայց յեռուեցէք ոչ թէ թղթերէլ վրայ, այլ երական փաստերի վրայ, որոնք են՝ առասկան Հայաստանը, Յմիլիոն ժողովուրդ և ժողովրդական կամք և ողի: Եւ բոլոր հանգամանքներում պահեցէք սերտ կապ ձեր բոյսը բարեկամների հետ, որոնց մէջ մի մտանաք ասալէն տեղը զնել Յունաստանը և մասնաորապէս ինձ:

Ամսայ 17ին Բոմպարը գնացել է Փարիզ Փուանդարէի հետ տեսնուելու համար: Դրանից առաջ Նորաստեղծները նրան նամակ է գրել ինչպէս յնրկայացնել Փուանդարէին մեր հարցը և պողթականների պրոթիւնը և մեր յոյսերի խորտակումը շորհելու կոնֆերանսի ընթացքին: Բոմպարը պատասխանել է նամակով. «Ձեր ցանկութիւնը կը կատարւեմ և վերադարձիւ ձեզ սնձամբ կը տեսնեմ»:

Նոյն օրը Խախտեանը տեսնուել է Զիւնիկիւրի հետ: Նա մնում է Լօպանում մի նպատակով՝ խանդարել Զիւնիկիւրի ստորադրել Նեղոյցների համաձայնութիւնը Վրաստանի անունից: Նրա բոյսը գիմումները կողմաբ սահմանների մասին մնացել են առանց հետեւանքի: Երան ամէն տեղ ասում էին. «Դա առաքիւրդական բանակցութիւնները ինչդր է: կոնֆերանսը գրանով չի գրազուի»:

Ստացուել է Լօպանում Մ. Պապաջանեանից մի նամակ՝ Մոսկուայից Յունուսը ճից, որով տալիս է իր խօսակցութիւնը կարախանի հետ: Նամակը գրում է Նորաստեղծներին: Պապաջանեանին գրած հարցերին կարախանը պատասխանել է. ա) Foyerի մասին

Թիւրքիայի Հեռ անկարելի է խօսել այժմ, որովհետեւ նրանք լսել անպատճ չեն ուզում այդ մասին, և Ռուսաստանը չի կարող նրանց Համադել, իսկ սյժի գիժել անկարելի է: 2) Որբերին Ռուսաստանը սիրով կ'ընդունի՝ գտնադան քաղաքների մէջ, տեղաւարելով ամէն մի քաղաքում մօտ 500 Հոյի, բայց ծախար պէտք է վերջնի իր վրայ որևէ Հիմնարկութիւն (Իրիֆիր): 4) Գաղթականներին Ուկրայինա ընդունել (ինչպէս աստճարկում էր Բակոյսկին) անկարելի է, որովհետեւ այնտեղ պահասում է սնանկը: չի կարելի նայողէս Աւ Ծովի վրայ գտնուող քաղաքների մէջ: բայց սկզբունքով ռուս կառավարութիւնը Համաձայն է ընդունել Հայերին և տեղի մասին պատասխան կը տայ մի շարաբից յետոյ: 5) Ամենայարմար տեղը զաղթականներին ընդունելու Համար Ռուսահայաստանն է: Թէև այսօր նրա սահմանները նկէ և, բայց Հարկատու է բարձրացնել մշակոյթը՝ արդիւնարարութիւն, Երկրապարծութիւն, գործարաններ Լեային, և տեղաւարել մօտ 100-000 Հայ: 6) Պապաճանեանը Յանուար 25ին կը լինի Փարիզ:

Վ. Փափաղեանը գրում է Բերլինից, որ Միսանկիւանը և Լուկաշինը գտնում են Մսակուայում, նրանք գոհ չեն Ձիւերինի զործունէութիւնից յօլուտ Հայերի Լօղանում և Բուլչեիկները այժմ սպոյում են Անկուրայի վրայ Արարոյի միջոցով, և յոյսեր են կապում Մսակինցեանի Հեռ Պոլսում: Տեղեկութիւն կայ, որ Անկուրայի կառավարութիւնը պատասխանել է Արարոյին, թէ բոլոր Հայ տղամարդիկ, սրանք վերցրած էին Թուրքերի կողմից (18-45 տարեկան) ազատուած են, և որ Հայերը վերադառնում են Թուրքիա: Դա պատասխան է Մսակուայի գիմումին: Թախթաճեանը Պոլսից գրում է, որ Մսակինցեանը և Թերգլիւսեանը զործում են Պոլսում Համբաւի, չփութում են Անկուրայի մարդկանց Հեռ և որ Մսակինցեանը ինչ որ առանձին միտախ ունի, որի մասին Փափաղեանը խոստանում է գրել, Լրբ իմանայ:

Ամսի 18ին Պատիսեանը տեսել է Լապարտին (Կլիբիկոյի Հիւպատս), որի Հեռ Երկար խօսակցութիւն է ունեցել: Նա անդամ է Փոքրամասնութիւնների և Կապիտուլյախոնիների Յանձնարարի: Մանրամասն բացատրել է նրան այն Հարցերի մանրամասնութիւնները, սրանք կապում են մեր փախտուկանների իրաւական, նիւթական և պետական գրութեան Հեռ: Նա խոստացել է բոլորը զեկուցանել Յանձնարարին և Բարբերին, բայց ասել է. «Մենք այնքան ընկել ենք մեր սեփական ոչրում, որ խորհուրդ ենք տալիս Ձերանոպայիններին (ո՛ւր մնաց Հայերին) Հեռանալ Թուրքիայից և Պոլ-



սից, սրախճեակն ամբողջ Գաշնապիրը հիմնուած է միայն Թուրքիոյ նկատմամբ եղած մտածնութեան վրայ, թէ նրանք միտուած են մի ձև, Հայահան շարքը յանձնելու մի սրևէ հիմնարկութեան՝ փախուստահաններին պահելու համար» :

Յանուարի 18ին Լոզանում կայացել է մի խորհրդակցութիւն, որբանոցները գրութեան և տեղափոխութեան մասին: Ներկայ են Լոզել Վեբերի, Բերբի, Մոնպոմերի, Նորատունկեան, Սատիսեան և Բաշայեան: Վեբերին պաշտպանել է այն կարծիքը, որ այս ձմեռ, առայժմ չպէտք է շարժել տեղից որբանոցները, պէտք է նրանց թողնել այնտեղ, սրակց այժմ գտնուած են (Յունաստան և Սիրիա): Սորհրդակցութեանը ներկայ էր և Կոնստյէր, որ նոր եկել է Սիրիայից և որբ ինչը բերել է Թուրքիայի խորհրդից 8000 որբ: Դա մի Շվեյցարացի է, որը 2½ տարի ապրում է Ուրֆուայում իրբու բժիշկ գերմանական մի հիւանդանոցի: Նրա կարծիքով արտադրող թուրքիայից լաւ հեռուանքներ կ'ունենայ Հայերի համար, որովհետեւ Թուրքերը այնքան յարուած են Հայերի պէմ, որ միեւնոյն է հետըզհետէ բարբիճ կը կտորեն: Արարները, նրա տեսիլ լաւ են վերաբերում Հայերին և ամէն օր բերում են նոր երեխաներ, որ պահել էին իրենց մօտ: Այնպէս որ որբանոցները առայժմ կը մնան իրենց տեղերը: Ինչ վերաբերում է նրանց Ամերիկա փոխադրութեան, Վեբերին յայտնել է, թէ այժմ նոյնպէս գէշ է գրան: — Լոզան է եկել զսկտար Լեպոսիսի կոպիլց՝ Բերլինից մի պարսն՝ զսկտար Շեֆեր, որբ բերել է ծրարը 400 երեխայ տեղափոխել Բերլինի մօտ: Այնտեղ կայ մի կայուածատան 60 սենեակով, որբ արժէ 6000 զոյլար, իսկ տարեկան պահելու ծախքը կը նաթի 16·000 զոյլար: Գոկոտը Լեպոսիսը ինչոյրում է, որ Հայերը տան միանուսոյ 6000 զոյլար իսկ տարեկան 16·000 զոյլարը նա յոյս սնի ստանայ Ամերիկայի Գերմանացիներից: Գաղթականների գրութեան մասին Վեբերի աւել է, որ նրանց գրութիւնը լաւանում է և նա խոստանում է մօտ ապագայում գարձնել այդ գրութիւնը բարբարիճ բաւարար: — Ներ Իսթ Բրիթֆր իր վրայ է վերցրել զգալականների տեղափոխութիւնը Թուրքիայից զուրս:

Լեպոսիսի ներկայացուցիչ զսկտար Շեֆերը նայն օրբ երկեոյեան նորից տեսակցութիւն է սնեցել Նորատունկեանի հետ: Պ. Նորատունկեան իրբու Սանտաբեան Հոգարարձութեան նախագահ, ունի Հոգարարձութեան արամադրութեան տակ մօտ 700·000 Փրանկ և արամադիր է այդ գրամով հիմնել Գերմանիայում մի որբանոց-զոյլարց 400 տղաների համար զսկտար Լեպոսիսի աջակցութեամբ: Հա-

մադաւանդանի կայսրածր կայ եւ արժէ 50000 դոլար: Գոհար Եւֆեր արզէն վերադարձել է Բերլին, եւ այժմ պէտք է սկսեն մանրամասն բանակցութիւններ այս գործի համար:

Աչքի ստաջ ունենալով որ Foyerի խնդիրը տապալուեց, այն ինչ փախտասկաններին տեղափոխելու ստիպողական հոգսը մեր առջև է, մերանց խորհրդով, Մոնղոմերին այս օրերս Լոյանից ուղղակի գնում է Մոսկուա եւ երևում՝ այդ խնդրով պապուելու համար: Նա վերցրել է Վերքից յեղորութեան թուղթ բոլշևիկներէ հետ բանակցելու համար: Գնալուց ստաջ նա նորից կը տեսնի Չիչերինին, որը ինչպէս յայտնի է, ստաջարկել կը հայ փախտասկաններին տեղափոխել Կուրանի շրջանում եւ Հայաստանում:

Ամսոյս Ային «Ֆիլարմէն»ները ներկայացրել են Գաշնակիցներին իրենց բազմադիրք Foyerի վերաբերմամբ Կանֆերանսի բռնած դիրքի պէմ, որի մէջ միամամանակ խնդրում են հայ փախտասկաններէ Յարցը յանձնել մի յատուկ մարմնի:

Յանուար 20ին Կրաֆտ Բոննար, պրոֆ. Նախի եւ տիկին Նոյրանդեան Ֆիլարմէններէ Լիկայի կազմից Լոյլ եւ Ռումբոլդի մօտ, նպատակ ունենալով պարզել, թէ ի՞նչ են մտածում անկ Գաշնակիցները այժմ Հայկական Հարցի հետ, քանի որ այժմ նա չի մտնում Գաշնակիցի մէջ: Ռումբոլդ պատասխանել է, որ մինչև այժմ Գաշնակիցները ոչինչ չեն մտնել եւ ոչինչ չեն գտել, թէ ինչ կարող են անել: «Մենք, ասել է նա, չենք ուզում Հայերին ներշնչել նոր զուր յայտեր, մենք այստեղ Լոյանում այնքան ծանր բողոքներ ենք ապրել, այնպիսի յատուկութիւններ ենք տեսել, որ դուք չէք կարող երևակայել, թէ մինչև ո՞ր աստիճան անպիտան ինքնասիրութիւնը վերաբրած է Լոյլ: Մենք շատ լաւ թմբնում ենք, թէ անասելի ծանր գրութեան մէջ են գտնուում Հայերը եւ շատ ենք խօսել մեր մէջ թէ ինչ կարող ենք անել, բայց ոչ մի էլք չենք գտել»: Կրաֆտը ասել է նրան, որ ո՞չ Հայերը եւ ո՞չ էլ նրանց բարեկամները չեն դադարի կուտի իրենց պապափորի համար եւ իրենց պատասխան համար, եւ որ այսօր հարկուար է գտնել տպահատիկ Երկու բան. ա) Հայկական Հարցի իրաւական գրութիւնը եւ բ) միջնադարին բնոյթը ճանաչել մի առանձին միջնադարային յայտարարութեամբ, եւ գ) բարեւելի փախտասկաններէ գրութիւնը՝ ստեղծելով մի առանձին մարմին:

Այդ բովանդակութեամբ գրութիւնը արզէն ներկայացրած է նախընթաց օրը: Ռումբոլդը պատասխանել է, որ այդ երկու խնդիրներէ մասին նա կը խորհրդակցի միւս պատուիրակներէ հետ: Ընդհանուր գրութեան մասին նա ասել է, թէ այս Կոն-

Ֆերանսի ձախողանքի (յառիտույէս Հայկական Հարցի) պատճառը  
Էղել է այն, որ ո՛չ մի պետութիւն չի ուղեցել պատերազմ յայտարար-  
ելու Հայերի համար, իսկ տոանց պատերազմի չէր կարելի ոչինչ քա-  
տանայ թուրքերից: Ինչ վերաբերում է առհասարակ դաշնայրի ստո-  
րագրութեան, նա զեռ չլիտէ թէ թուրքերը կը ստորագրեն Ռաշնա-  
դիրը թէ ոչ: Վերջում նա սակ է. զիմ յայս Հայկական Հարցի վե-  
րաբերմամբ Այդերի Լիկան է: Իսկ ինչ վերաբերում է փոխառու-  
թեան, ի հարկէ ո՛չ Անգլիա և ո՛չ Ամերիկա ներկայ Հանդամանքնե-  
րում ո՛չ թէ Հոյերի համար, այլ առհասարակ թուրքերի տրամա-  
դրութեան շնորհիւ օտարականների վերաբերմամբ՝ զբամ չեն տայ,  
և նրանք մի քանի ժամանակից յետոյ ստիպուած կը լինեն իրենց  
ամբողջ ընթացքը փոխել»:

Ամսի 21ին Ահարոնեան վերադարձել է Հոսմից Լոզան: Նա  
տեսել է Մուսոլինիին Ուրբաթ Յանուար 19ին: Ներկայացնելուց յե-  
տոյ խնդրի գրութիւնը, նա խնդրել է, որ Մուսոլինիին դիմէ Դաշ-  
նակիցներին ստորագրելույ որ Foyerի կողմութիւնը վճռեն սկզբուն-  
քով, իսկ իրադրութումը տան կա՛մ Այդերի Լիկային կա՛մ զեւսպանա-  
խորհուրդին: Տեսել է զբար յուշայիր: Մուսոլինին, ուշադրու-  
թեամբ լսելուց յետոյ՝ զպացուած սակ է. զեւ ամէն ինչ արդէն արել  
եմ, բայց նորից կը փորձեմ»: Մուսոլինի տեսնուել է նաև Լոցցատիի  
հետ, որի մօտ եղել է երեք անգամ Ահարոնեանը Վարանդեանի և  
Տ. Նորատունկեանի սրդիի հետ: Մուսոլինի սակ է Լուցցատիին, որ  
Անգլիան շատ թոյլ է Հայկական Հարցի հանդէպ, և որ Իտալիայի  
զրութիւնը դժուար է:

Աչքի առաջ ունենալով որ Յունուար 29ին Փարիզում հաւաք-  
ում է Այդերի Լիկայի Ուրհուրդը, մերոնք երկու Պատուիրակու-  
թիւնների կողմից պատրաստել են մի դիմում և տուել են Լիկայի  
ընդհանուր քարտուղարութեանը՝ ներկայացնելու համար խորհրդին:

Ամսոյ 25ին պ. Պատիսեանը վերադարձաւ Լոզանից Փարիզ:  
Մնացել են զեռ ևս Լոզանում պ. պ. Ահարոնեան, Նորատունկեան և  
Բաշայեան: Այս օրերս պատրաստում է այն բողոք յայտարարու-  
թիւնը, որ Հայ Պատուիրակութիւնը պիտի ներկայացնի Կոնֆերանս-  
սին Հայկական Հարցում նրա ունեցած ընթացքի դէմ: Բողոքը ներ-  
կայացնելուց յետոյ պատուիրակները կը վերադառնան Փարիզ:

Վերադառնալով Փարիզ, պ. Պատիսեանը երկու Պատուիրա-  
կութիւնների խոսն յիստում մանրամասն զեկուցում տուեց Լոզանի  
վերջին օրերի անց ու դարձի մտտին, միեւնոյն ժամանակ տուեց ընդ-  
հանուր պատկերը Կոնֆերանսի ընթացքի: Ինչպէս պարզուել է,

Բամպարը վերադառնալով Փարիզից, բերել է նոր պիջուսների մի շարք՝ Քուրֆերին, գրեթե բոլոր հարցերում: Դա այն սատիճանի վրդավեցրել է Բարբերին, որ նա սակ է. «Իմ կարրիերի վերջում ես չեմ ուզում կեղտոտել իմ ձեռքերը սասրազբելով մի այդպիսի դաշնադիր»: — Իր ճանաչարհուելու նախընթաց օրը պ. Պատիսեանը ունեցել է երկար աեսակցութիւն Ռամբուլլի հետ, որ եղել է շատ մտերմական: Պատիսեանը յայտնել է նրան Հայրի հիասթափութիւնը Դաշնակիցներից և միամտանակ բուռն բողոքը ամբողջ նրանց ընթացքի դէմ:

ՖԻԼԱՐՄԷՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Լ Օ Ջ Ա Ն Ի Մ Է Ջ

Յունուար 29ի առաւօտեան Ֆիլարմէնների Լիկայի անդամներ պ.պ. Կրաֆտ Բոննար, զը Մորզիկ և Բերրի ժրնելից եկան Փարիզ և Հայկական Պատուիրակութիւնների Հետ խորհրդակցութիւն ունենալուց յետոյ, Ազգերի Լիկայի Ուրհրդի առաջիկայ նիստի առիթով տեսակցութիւններ ունեցան Յունուար 30ին և 31ին Ուրհրդի Հետեւեալ անդամների Հետ. Նախապահ Վիլիամնի, անդամներ Հիմանս, Բրանտինդ, և բացի գրանցից պ.պ. Ֆրանկլին Բույոնի, Վիլտոր Բերրի և Կլոպելի Հետ: Բարձրորը չի ընդունել՝ սակով թէ ժամանակ չունի:

Վիլիամնի սակ է, թէ ինքը Հասկանում է որ Միջազգային Յանձնաժողովը կարող է շատ օգտակար լինել Հայ գաղթականների Համար, որ ինքը կը պաշտպանի այդ առաջարկը, իբրև մի թիւազրութիւն կառայարութիւնների ստաջ, բայց ո՞ր մէկը պիտի մտցնի այս առաջարկը Ուրհրդի մէջ: Հիմանս (Բելժիք) խոստացել է այս կամ այն ձևով բարձրացնել Ուրհրդի մէջ Յանձնաժողովի ինդիքը, թէև Հայկական Հարցը օրակարգի մէջ չի մտած: Բրանտինդը սակ

Է որ ինքը Յանձնաժողովի հարցը բարձրացնել չի կարող, բայց կը պաշտպանի ԼԲԼ ուրիշները բարձրացնեն: — Վերսուր Բերարը նորից շեշտել է որ իր կարծիքով այսօր կարելի է միայն սպասել, որ հաշտութիւնը կը գտնուի, և Հայերին տեղասփռել Սիրիայում, Ալեքսանդրիաի շուրջը: Միւս կողմից նա պնտում էր բարբոսին անհրաժեշտ որ Էրկու Պատուիրակութիւններէ կողմից արտաքին յարաբերութիւններէ համար կողմուի մի մարմին, որ չափազանց անհրաժեշտ է մանաւանդ այժմեան ծանր պայմաններէ մէջ: Կլոպել (Յրամուխոյի ներկայացուցիչ Ազգերի Լիկայի մէջ) ասել է, որ Փասանյարէն շատ լաւ պատմ է որ Յրամուխոն իր յանձնառութիւնները չի իրադարձել, և միջոց փնտռում է միջոցներ Հայերին գահացնելու՝ հետաւոր միջոցներով: Յրամուխոն Բասրայի աշգի առաջ ունենալով որ Foyerն թիրախայում այսօր անհնարին է դարձել, խորհուրդ է տալիս օլտուել Կուրանի աւաճարկով, իրբև ժամանակաւ որ ապաստարան, նկատի ունենալով որ ուսուէթարք յարաբերութիւնները պէտք է միանան, և Թուսաստանը, պիտի յայնացնի Հայաստանի սահմանները, և այն ժամանակ Հայերը, սրանք կը տեղաւորուեն Կուրանում, կ'իջնեն Հայաստան: Բայց, տեղացիել է, հարկաւոր է նախօրօք տեղեկանալ Կողակներէ արամպոյութիւնները, սրպէպի Հայերի և Կողակներէ մէջ շինի սրել է ընդհարում: — Ահա բարբ տեղեկութիւններէ յետոյ Յիրարմէնները և Պ. Բերբին (Նիւր Իսթ Բրիթի ներկայացուցիչը) պ.պ. Խատիսեանի և Սինապեանի հետ խորհրդակցելուց յետոյ միտակցին. 1) անմիջապէս հետադրով դիմել Լոզանի ամերիկական դեսպան Չայլին, որ պրէ Վաշինգտոն, սրպէպի ամերիկական կառավարութիւնը դիմի Էրկ. Դաշնակից կառավարութիւններին, ասելով՝ թէ Ամերիկան պատրաստ է մասնակցել Յանձնախմբին: 2) Նրանք պնտցել են Փարբիի ամերիկեան դեսպանին մօտ՝ նրան իրազեկ դարձնելու ամբողջ անցուցարձին և խնդրելու նրա ամակցութիւնը: Դեսպան Միրոն Հերբիկը պատասխանել է, թէ ԼԲԼ իր կառավարութիւնից հրահանգ ստանայ, նա մեծ ուրախութեամբ կը ներշնչի Փրամուխոն կառավարութեան Յանձնաժողովի անհրաժեշտութիւնը: Փետրուար 1ին Յիրարմէնները վերադարձան Լոզան:

23 Յունուարի ժամը 5ին Պ. Ալեքսանտր Խատիսեանը Միացեալ Պատուիրակութիւններէ կողմից (Նորատունկեանը հիւանդ էր, պ. Ահարմեանը Ժրնեւ էր գործով) տեսակցութիւն է ունեցել Անգլիացի Էրկորդը պատուիրակ Ռուսթոլլի հետ: Նախ և առաջ նա յայտնել է Թուսաստանին, որ նա պալիս է Միացեալ Պատուիրակութեան կողմից: Պ. Խատիսեանի խօսքերը.— Քլուսն հանգամանքներ,

Երբ ազնիւ մարդիկ պէտք է առանց դիւանապիտոյթեան ասեն ամբողջ ճշմարտութիւնը, նա մանաւանդ երբ նրանք խօսում են ամբողջ մի ժողովրդի անունից պատմական մի բաղկում : Ահա այս բաղկն հասել է : Դաշնապիւրը պատրաստ է, և նրա մէջ չկայ ո՛չ մի խօսք Հայերի մասին, և ո՛չ մի խօստում, ո՛չ մի յայտարարութիւն սպապառի համար : Այդպիսի վերաբերմունք ո՛չ միայն լքում է Հայերին, ո՛չ միայն պատասխարտում է Հարիւր Հայարասը պաղթականներին մնալ անտուն, անակր, — այլ և ցայց է տայիս, որ Դաշնակիցները չեն կատարել իրենց ազնիւ խօսքը և պատճառն էլ են իրենց խօստումներին» : — Ռուսրոյը պատասխանել է, թէ Անգլիական Պատուիրակութիւնը առաջաց զճակ էր պաշտպանել Հայկական Հարցը բարբ խաղաղ միջոցներով, և իր սրտումը իրապարծել է, բայց գրական հետեւանքի չի հասել : Կորդ Քրդընը սպառնացել է, խնդրել է, համոզել է, բայց ո՛չ մի արդիւնքի չի հասել : Դա ճիշտ է : Պարզ էր որ առանց պատերազմի Թուրքերը չեն գիժում Հայերին, իսկ պատերազմ յայտարարել Հայերի համար ո՛չ ոք (և ո՛չ Անգլիա) չի ուզում : Անկ նոր յայտարարութիւններ, անկ նոր խտտումներ Հայերին, Անգլիան չի կարող, որովհետեւ նա չի ուզում ստանձնել նոր յանձնարարութիւններ, ներշնչել նոր խարստիկ յոյսեր, չդիտենալով թէ Ե՞րբ և ի՞նչպէս նա պիտի իրապարծի գրանց : Միտամանակ ասում է թէ իրենք Կոնֆերանսի մէջ այլ ևս չեն կարող գրադուել Հայկական Հարցով, որովհետեւ այժմ սեղանի վրայ դրուած է պաղթականներին ակադարելու հարց, այսինքն մի մարդասիրական հարց, որ պիտի անցնի կա՛մ կառավարութիւններին, կա՛մ Աղլերի Լիկային : «Դիմեցէք Լիկային կամ կառավարութիւններին, վերջացրեց Ռուսրոյը, — Լիկայի մէջ դուք շատ բարեկամներ ունէք» : — «Եւ յազդիտեմ, պատասխանել է Պ. Ստախեան, թէ ո՛ր պիտի գիմել Կոնֆերանսից յետոյ, խօսքը այսօր Կոնֆերանսի մասին է : Չեմ կարող թողցնել Ձեզանից, որ երբ Թուրքերը ջարդում էին միլիոնասր Հայերին, մենք վրդալովում էինք, սարսափում էինք, բայց այնպիսի դատն և ծանր պրացմունք չունէինք, ինչպէս այսօր ունենք. Թուրքերը բարբարոս էին և նրանց գործերակերպը պոտիլի էր, ինչպէս բարբարոսական մի ակա, բայց սակ, որ ևս բազան, անպիական կառավարութիւնը, օգտապործել է Հայերին, որ տուել է ազնիւ խօսք, որ անքան ճատեր է արտասանել, այսօր դատաճանում է իր խօսքին, դա մի շատ ծանր երևոյթ է որ կարող է առաջ բերել կատարել արհամարհանք և տեղութիւն վէպի Լեւոպական խօսքը, խտտումը և քաղաքակրթութիւնը» : — «Դուք կատարեալ իրաւունք

ունէք սոյդպէս ստեղծու, եւ Հատկանում եմ Ձեզ, եւ կարող էք Հասկանայ եւ իմ տրամադրութիւնը, ինչպէս Անդրիոյ ներկայացուցչի, որ չի կարողացել իրազործել իր խոստումը: Բայց մի կորսնցնէք ձեր կորստիւր, — Հայ ժողովուրդը շատ բաջ է (courageux) . . . : — Գ. Պատիսեան պատասխանել է. «Քաջութիւնը այս դէպքում, ինչպէս եւ միշտ, Հայերին չի պակսի, մենք կը գտնենք մեր ճանապարհը, բայց դուք ինձ յիշեցնում էք այն բժշկին, որ թողնելով տանը մի ծանր Հիւանդի, որին նա չի կարող բժշկել, ծնողներին ինզրում է բաջ լինել: Մենք կ'ունենանք բաջութիւն, — դա մեր դործն է. բայց մենք կ'ուզենք իմանայ, թէ Դուք ի՞նչ պիտի անէք այն ծանր Հիւանդի Համար, որի բժշկութիւնը դուք վերցրել էիք ձեզ վրայ»: «Մենք Լօզանում այլ եւս ոչինչ չենք կարող անել: Բայց դա չի նշանակի, որ մենք Լօզանից դուրս չենք Հետաքրքրում Հայերով: Լորդ Քրքրընը, որը իբրև Լօզանի Կոնֆերանսի Բրիտանական Պատուիրակութեան պետ, այսօր ձեզ ասում է «ոչինչ չեմ կարող անել», — վաղը իբրև կառավարութեան արտաքին գործերի նախարար, կարող է գտնել միջոցներ դրադուելու ձեր հարցով, եթէ հանդամանքները թոյլ կը տան: — Տեսնելով որ նիւթը սպառուած էր, պ. Պատիսեանը ասաց. «Մենք բաժանում ենք եւ տեսնում ենք վերջին անգամ, Ձեր անձնական վերաբերմունքը Կզել է միշտ բարեացակամ, բայց իմացէք, որ մենք ձեզ զգում ենք շափազանց վիրաւորուած, որ լորդ Քրքրընը անձամբ ձեզ ոչ մի անգամ չի ընդունել, որ դուք Մոսուլի եւ Արաբներէ շահերի Համար պատրաստ էք պատերազմել, իսկ Հայերի շահերը լքեցիք Թուրքերի պահանջներէ ստաջ, — եւ դա Հայ ժողովուրդը երբեք չի մոռանայ: Դուք լքեցիք այն դատը, որ դուք ինքներդ գտնում էիք այնքան արդար, որ մինչեւ անգամ ձեր պիտուրական դատարանը արդարացնել է այն Հային Պուլում, որը սպանել էր մի նախկին ջարդարու նախարար, որ շատ հաղուպիտ է անդրիտիան գատարանի Համար, եւ դուք ինքներդ կը Հասկանաք այն բուռն եւ ծանր արամադրութիւնը եւ բողոքը, որ մեր ժողովուրդը զգում է»: — «Այո՛, պատասխանել է Մուսթոլը, եւ զգում եմ այդ, եւ հաւատացէք, որ մեր ամբողջ Պատուիրակութիւնը գտնում է բոլորովին արդար Ձեր բոլոր նկատողութիւնները»: — «Ճտեսութիւն», ասել է Պատիսեան: Մուսթոլը հարցրել է. «Ո՞ր էք գնում, եւ ի՞նչ պիտի անէք»: Պատիսեան պատասխանել է. «Քրքրնում եմ Փարիզ, նորից աշխատելու մեր գտտի Համար Ազգերի Լիկայի մէջ»: — «Ճտեսութիւն եւ յաջողութիւն. հաւատացէք, որ մենք եւ շատ ծանր դրութեան մէջ ենք գտնում Լօզանում»:



Դուրս գալով պանդոկ Պօ Ռիվաժի սրահը, պ. Խատիսեանը հանդիպել է պ. Չխենկելիին, որը նոր դուրս էր եկել պ. Տորրս Աղամսի (Լորդ Քրրզրնի քարտուղարի) սենեակից: Նա գնացել էր իմանալու, թէ հնարաւո՞ր է սպասել խղում և պատերազմ Անգլիայի եւ Թիւրքիայի մէջ: Տորրս Աղամս պատասխանել է. «Այո, կարող է պատահել, որ պատերազմ վերսկսուի, և այդ դէպքում մենք կ'ունենանք երկու պատրաստ դաշնակիցներ՝ Յոյները և Հայերը...»:

Բ Ո Վ Ա Ն Կ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ներածական — ՇԱԻԱՐՇ ԹՈՐԻԿԵԱՆ	5
Ա. Խատիսեան — Ս. ՎՐԱՑԵԱՆ	11
Յառաջարանի տեղ	15
Ա. ԳԼՈՒԽ . . . . .	17
Ռուսաստանի ժամանակաւոր կառավարութիւնը եւ Հայերը	
Բ. ԳԼՈՒԽ . . . . .	25
Անդրկովկասեան կոմիսարիատը եւ բանակցութիւնները Թուրքիայ հետ	
Գ. ԳԼՈՒԽ . . . . .	41
Տրպալիզոնի խորհրդաժողովը (1918 Փետրուար 23—Ապրիլ 1)	
Դ. ԳԼՈՒԽ . . . . .	51
Թուրք-Անդրկովկասեան պատերազմը եւ Պարտիզ բանակցութիւնները (1918 Ապրիլ 1—Մայիս 28)	
Ե. ԳԼՈՒԽ . . . . .	83
Անդրկովկասի միութեան քայքայումը եւ Հայաստանի Անկախութեան հռչակումը	
Զ. ԳԼՈՒԽ . . . . .	97
Չորս ամիս Կ. Պոլսոյ մէջ (1918 Յունիս 15—Նոյեմբեր 1)	
Է. ԳԼՈՒԽ . . . . .	115
Իմ մասնակցութիւնը Քաջագնացի դահլիճին	
Ը. ԳԼՈՒԽ . . . . .	133
Իմ վարչապետութեան շրջանը	
Թ. ԳԼՈՒԽ . . . . .	149
Հայաստանի սահմաններու ընդարձակումը եւ 1919 Մայիս 28ի ահտը	
Ժ. ԳԼՈՒԽ . . . . .	171
«Դաշնակիցները» Կովկասի եւ Հայաստանի մէջ	
ԺԱ. ԳԼՈՒԽ . . . . .	195
1920 թ. գարունը եւ Մայիսեան Ապստամբութիւնը	

ԺԲ. ԳԼՈՒԽ . . . . .	223
Ուղեւորութիւն Եւրոպա, Եգիպտոս եւ Իզմիր (19 Յունիս—23 Հոկտեմբեր 1920 թ.)	
ԺԳ. ԳԼՈՒԽ . . . . .	249
Պատերազմ Քուրբիոյ հետ, բաղշեիկեան յարձակումը եւ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան անկումը (1920 թ. Աշունը մինչեւ 2 Գեկտեմբեր)	
ԺԿ. ԳԼՈՒԽ . . . . .	299
Այեփանդրապոլի բռնակցութիւնը եւ ղաշնագրի կնքումը	
ԺԸ. ԳԼՈՒԽ . . . . .	315
Խորհրդային իշխանութիւնը Հայաստանի մէջ (2 Գեկտեմբեր 1920— 16 Փետրուար 1921)	
ԺԹ. ԳԼՈՒԽ . . . . .	327
Ուղեւորութիւն Փարիզ եւ Լոնտոն	
ԺԿ. ԳԼՈՒԽ . . . . .	337
Լոնտոնի խորհրդածոյսը (21 Փետրուար—13 Մարտ 1921 թ.) եւ Մասկաւայի քաւթ-բաղշեիկեան ղաշնագիրը (16 Մարտ 1921 թ.)	
ԺԸ. ԳԼՈՒԽ . . . . .	347
Էնկիւրիի Գաշնագիրը (20 Հոկտեմբեր 1921 թ.) Փարիզի խորհրդածոյսը (Մարտ 1922 թ.) եւ Յոյներու խորսակումը (25 Օգոստոս—9 Սեպտեմբեր 1922 թ.)	
ԺԻ. ԳԼՈՒԽ . . . . .	355
Լօզանի խորհրդածոյսը (Նոյեմբեր 1922—24 Յուլիս 1923)	
Ի. ԳԼՈՒԽ . . . . .	411
Հայկական հարցը Լօզանի խորհրդածոյսովէն յետոյ մինչեւ մեր օրերը	

### ՅԱԻՆԵԼՈՒԱՆԾ

Ա. ԳԼՈՒԽ . . . . .	425
Լօզանի ժողովը եւ մեր երկու պատուիրակու յիւններու ջանքերը	
Բ. ԳԼՈՒԽ . . . . .	449
Մեր իննները ղեռ Լօզան կը սպասեն...	
Գ. ԳԼՈՒԽ . . . . .	481
Ֆիլարմէններու աշխատանքը Լօզանի մէջ	

Գեղարուեստական ձեռագրում  
ԳՈՒՐԳԷՆ ԳԱՍԱՊԵԱՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ  
Ընդհանուր կարգաթիւ 303

Տպարան ՀԱՄԱԶԳԱՅԻՆ

Պատուէր	305
Տպագրանակ	2000
Պրակ	301½
Աւարտում	2/12/68

Կազմատուն ՖԵՆՒՍԻԱ

ԳԻՆ

Լիբանան

Արտասահման

10.1. ռսկի

4 տոլար

Կեդրոնատեղի

**LIBRAIRIE HAMASKATNE**  
**10, Rue Hussein Beyhoum**  
**Bejruth — LIBAN**

**Հ Ա Մ Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն  
Մ Ա Տ Ե Ն Ա Շ Ա Ր**

- 1.— ՄՕՏԻԿ ԱՆՑԵԱԼԻՑ, Յ․ Իրազեկ, 1956:
- 2.— ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Հրանդ Պատրմանեան,  
Ա․ հատոր, 1954:
- 3.— ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ, Հրանդ Պատրմանեան,  
Բ․ հատոր, 1958:
- 4.— ԿՏԱԿՆ ԷՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ, Արշաւիր Շիրակեան, 1965:
- 5.— ՅԵՏ ՄԱՀՈՒ, Յովհաննէս Քաջազունի, 1965:
- 6.— ՅԵՂԱՍՊԱՆ ԹՈՒՐՔԸ, Հայկազ Գ․ Ղազարեան, 1968:
- 7.— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԳՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱ-  
ՑՈՒՄԸ, Ա․ Խաւիսեան, 1968: